



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

WIDENER LIBRARY



HX 7U95 F

The gift of

Percival Bailey, M. D.

HARVARD COLLEGE LIBRARY

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Յ Ա Ռ Ա Ջ Ք Ա Ն Զ Լ Ի Ն Ե Լ Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Վ Ե Ն Ե Տ Ի Կ — Ս. Գ. Ա. Զ. Ա. Ր.

1904

ՄԵԾ. ԳՐԻԳՈՐ ԱՂԱ
ՔԷՕՐՕՂԼԵԱՆ
Ս Ա Տ Ա Ր Ե Ա Ց Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ք Ե Ա Ն
Մ Ա Տ Ե Ն Ի Ս

Հ. ՂԵՒՈՆԴ Կ. Ա. ԱԼԻՇԱՆ


Alishan

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԼԻՆԵԼՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Armenia Before it became Armenia



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1904

2-10-66

EXHIBIT
PROPERTY
FEB 6 1966
60*76

*
* *

Նորագոյն գիւտերու և ուսումնասիրութեանց վրայ ալ յատակ գաղափար մը տալու համար՝ հարկ տեսնուեցաւ գրքին ետեւը մի քանի նոր ծանօթութիւններ աւելցնել՝ մեր կողմանէ:

Այսպէս կարելի չէ այժմ Հայոց ծագման վրայ խօսիլ՝ առանց Հայաստանի հնագոյն բնակիչները—Ուրարտացիները—յիշելու: Հայկազունեաց պատմութիւնը մասամբ կը գտնուի անոնցմէ մնացած արձանագրութեանց մէջ. այսպէս Մենուտս = Մանաւազ, Արամիս = Արամ, Էրիմէնա = Արմե՛նակ, և այլն:

Ելենսըն գերմանացիին Հայերը կը նոյնացնէր Հատ (= Հայ) կամ Հիտտիտ կամ Քետացի ազգին հետ: Կարելի չէր այս տեսութիւնն առանց յիշելու անցնիլ: Կը թողունք ուրիշ ստուգաբանական, աշխարհագրական, մատենագրական կէտեր՝ ուր ստիպուեցանք զարտուղութիւն կամ դիտողութիւն մ'ընել:

Վերջին տեսակէն է, օրինակ իմն, Կեդծ—Սերեոսի նուիրուած քննութիւնը, զոր Բուզանդէ գրուած կ'ենթադրենք: Այս կարծիքը, զոր առաջին անգամ հոս տախթ կ'ունենանք ներկայացնելու, յուսանք զուրկ չի մնար գիտական ուշագրութենէ:

*
* *

Քանի մ'օրէն՝ Նոյեմբերի 21ը պիտի գայ, Հ. Ալիշանի մահուան երրորդ տարեգարձը:..

Ազգային սօն մ'է ան, որ թրթուուն յիշատակներ կը զուգէ անոյշ ըզգացումներու հետ:

Այդ օրը, սոյն գիրքը պիտի տանինք իր դամբանին վրայ զետեղելու համար: Այն տանն աւելի խաղաղ պիտի ըլլայ իր նիրհը գրախտի չորս գետերէն օրօրուած, աւելի հմայիչ՝ երբ գրախտի վարդերն և անտառները՝ իրենց հովանին ձգեն իր երազաւէտ ճակատին վրայ:..

8 Նոյեմբեր 1904

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ինչ էր հայ բնաշխարհը՝ երբ գեռ հիւրասիրուած չէինք իր վսեմ լեռներուն, բեղնաւոր հովիտներուն մէջ:

Ըստ Ալիշանի՝ դրախտ մ'էր...:

Այս մտածութիւնն ինքնին քնարերգութիւն մ'է: Բայց նա չուզեր որ միայն բանաստեղծական ենթադրութիւն մ'ըլլայ այս, այլ գիտնական ճշմարտութիւն մը, կրօնական գաւանանք մը՝ որուն հսկանակողը՝ Աստուածաշունչի թշնամին համարուի:

Եւ, այս գտողափարով վառուած, պատանեկան հասակի բոլոր ոգեւորութեանը մէջ, Հ. Ալիշան ձեռք կ'առնու գրիչը՝ մարդկութեան և հայ ազգի սկզբնաւորիլը երգելու համար. Ալամէն՝ Հայկ, Հայկէն մինչեւ Տիգրան Ա. որուն հետ կը սկսի ազգային անկախ թագաւորութիւն. տհաւառիկ Հայաստան ետի քան զՀայաստան:

Հ. Ալիշանի այս գործը խառնուրդ մ'է երգի և քննութեան, օփերէր մը, ինչպէս են ընդհանրապէս իր մանր երկեր: Աւարայրի սոխակն է՝ որ դրախտի մէջ պիտի երգէ: Հոս է գիտնական Ալիշանը՝ բանաստեղծ Նահապետին հետ, հոս են իրարու քով իր գրիչն ու տաւիղը: Վերը կը սաւառնի իր հաւատացեալի խորհրդապաշտ հոգին, որու մէջ կը տեսնենք, անուղղակի, բոլոր կտաւորդանքներն ապագայ աշխարհի մը՝ զոր երբեմն Հայաստանէն անցած կ'ենթադրէ:

Ո՛հ ինչ նկարչական է այն վայրկենին՝ երբ դրախտի սահմանները պիտի գծէ. իր գրիչը կը սահի երեւակայական քարտէսի մը վրայ ուր քաղաքներու անդ ցանուած են լեռներ, լճակներ, անասո՞նի՞ր՝ հրեշտակաց երգերովը սարսուռն:

Ինչ խնամքով կը շարժէ գրիչը, յախնալով մի գուցէ Հայաստանի բոլոր մը, բուրաստան մը, տուռակ մը, աղբիւրիկ մը՝ սխալմամբ դրախտի սահմանէն դուրս մնայ:

Անզգայ պէտք է ըլլալ՝ յիշելու համար այդ վայրկենին, թէ դրախտի

քննութիւնը դադարած է հետաքրքրական ըլլալէ, թէ այդ բանը աւելի Ս. Գրոց մեկնութեան կը վերաբերի քան հայկական գիտութեան, կամ թէ վերջապէս կորուսեալ գրախտ մը՝ ո՛ր և է օգուտ չունի մեր ներկայ գրութեան համար:

*
**

Հ. Ալիշան սոյն գործը սկսած է շատ կանուխ պատանեկան հասակի մէջ, ինչպէս ըսինք:

Հեռի զայն հրատարակելու գիտումէն, անինամ թողուցած էր իր անտըպագրելի գործոց շարքին մէջ:

Զարմանալի չէ ուրեմն՝ եթէ բոլոր հին կարծիքներ կը գտնուին հոս, նորագոյնները կը պակսին: Ո՞վ որ տեսած է անձեւ կմախքները, որոցմէ Արարատի, Սիսուանի, Սիսականի պէս հոյակապ գործեր ելան, պիտի կարենայ գուշակել թէ Ալիշանի սոյն երկը որքան պիտի զեղեցկանար՝ եթէ իր գրիչը անգամ մ'ալ անոր վրայէն սահելով՝ նորութիւններով զայն սուկեզօծէր:

Իւր անունը—արդէն նուիրական և որոագործուած—փառաց հաստատուն կէտի մը վրայ է, և սչ մէկ նոր գործ պիտի կարենայ այդ փառքը նուագեցնել կամ աճեցնել:

Եւ սակայն, նոյն իսկ այս գործին մէջ, կը գտնուին այնպիսի հմտական հատուածներ, որոց նմանը հազիւ թէ կարելի ըլլայ այլուր գտնել: Համեմատուին, օրինակ իմն, այն գլուխներն, յորում ազգաց բաժանման և հայ ազգի ծագման վրայ կը խօսուի. այնքան ճշիւ, մանրակրկիտ, հմտակուտ մատենախօսութիւն մը պիտի գտնուի հոն՝ որուն նմանը Հայոց ծագման վրայ խօսող բանասիրական ոչ մէկ գործ ունի թերեւ:

Գիտնական մը, այդ ցուցմունքներէն առաջնորդուած, աւելցնելով անոնց վրայ քննադատական դժուարահաս ռգի, պիտի կարենայ այդ ինչքի աստիճանաբար զարգացման խորագոյն ուսումնասիրութիւնը գրել:

Ուրեմն այս երկը, Հ. Ալիշանի հոգեբանութիւնը ամբողջացուցած ժամանակ, եթէ ոչ նոր՝ գոնէ թաղուած գանձեր պիտի յայտնէ գիտնոց: Եւ գովելի է յոյժ Մեծապ. ԳՐԻԳՈՐ ԱՂԱ ՔԵՐԵՂԱԿԱՆ ազգասէրն՝ որ պատճառ եղաւ անոր հրատարակուելուն, ինչպէս նաեւ հայկական երախտագիտութիւնը՝ որ իր մեծ ջահին ամենէն աղօտ նշոյլն ալ կը պահանջէ մեզմէ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԶԱՌԱՋ ՔԱՆ ԶԼԻՆԵԼՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Մ Ե Ր Ս Կ Զ Բ Ե Ա Վ Ա Յ Ր Մ Ա Ր Դ Կ Ո Ւ Թ Ե Ա Ն

Դ Ր Ա Ի Տ Ե Ա Դ Ի Ե Ա Յ



Ն Զ Ո Ւ Ա Ն հիմայ տեսանք՝ Հայաստանեայց Հանդիսա-
տեղիս նկատելով զդիրս և զբնութիւն երկրին. մնայ
այսուհետեւ տեսանել զհանդիսականս. և ի բնականէն
անցանել ի բանականն, և քննել որ ինչ յրնթացս ժա-
մանակի գործեցաւ հոն և յիշատակեցաւ վկայութեամբ
մարդկան: — Եթէ բնաւ գրաւոր կամ աւանդական
վկայութիւն մը մնացած չըլլար մեր և կամ որ և է
աշխարհի վրայօք, և միայն ձեռագործ յիշատակարանք
մնացած ըլլային, անոնցմէ պիտի գուշակէինք երկրին բնակչաց պատ-
մութիւնը. և եթէ այն յիշատակարանք ալ պակասէին բայց նախուստ գիտ-
նայինք թէ հոն ժամանակաւ ազգ մը բնակել և հանդիսացել է, ինքն
երկիրն իր հանգամանօքն՝ այսինքն կազմութեամբն, դրիւքն, զանազան
ձեւերով, բարձրութեամբ և ցածութեամբ, կլիմայովն՝ միանգամայն ասել՝
ամենայն բնական երեւութիւք պիտի ծանուցանէր փոքր ի շատէ իր բնակ-
չաց պատմութիւնը կամ բարբը, անոր՝ որ ուրիշ աշխարհաց ներկայ
և անցեալ ազգաց պատմութիւնը գիտէ կամ կու տեսնայ, և կրնայ բազ-
դատել զերկիր ընդ երկրի և բնակիչ ընդ բնակչի:

Քանի որ ներկայէս ի վեր ելլանք զարեբով և քանի ժամանակին

սկիզբներուն մօտենամք, երկրիս վրայի ազգք և ժողովուրդք սկսեալ ի նորագունից կամաց կամաց կու սկսին ալօտանալ, մթանալ, ծածկուիլ անբերեցի ըլլալ, և երկիրս շորս կողմերնիս կ'անապատանայ ի մարդկանէ. յանկարծ առաջ անապատ անքնակ մնացած մասերն կու սկսին բնականալ, հին մոռացեալ և հիմայ ջնջեալ ազգեր յերեւան կ'ելլան ժամակի սկզբանց մօտ, ինչուան որ աւելի վեր ելլալով անոնք ալ անյայտ կ'ըլլան, և հազիւ քանի մը ազգք ներկայէս սկսեալ ինչուան խորագոյն հնութիւն ժամանակի միշտ տեսանելի կու մնան ի վերայ երկրի, և գրեթէ ժամանակի ծայրերուն կը հասնին, որ է ըսել թէ պատմական ժամանակն կու սկսի անոցմէ: Մինչգետ ի վերայ մէկ այլ ազգաց, աշխարհաց՝ խոր խաւար և լուութիւն տարածեալ է. ասոնց վրայ գոնեայ աղօտ նշոյլ մը կու փայլի, որով կու նշմարին շարժմունք և հին կենդանութիւն: Ընդ հանրապէս հիմկու ծաղկեալ և պայծառ ազգաց սկիզբը ժամանակի սկիզբներուն չեն հասնիր, այլ գրեթէ անթափանցելի մթութեան մէջ են. գիտելի չէ թէ քանի մը (2 կամ 3) հազար տարի առաջ ինչ հանդիպած է այն աշխարհաց վրայ. ընդհակառակն կան քանի սը ազգեր ալ որ գրեթէ տեղերնուն պէս անշարժ մնացած անոր նման ալ հնութիւն մը և յիշատակներ ունին. կան ալ որ եթէ նոյնպիսի անփոփոխութեան բազըլը չեն ունեցեր, այլ շատ յեղափոխութեամբ և տեղաշարժութեամբ դեռ նոյնպէս և թերեւս աւելի հնութիւն մ'ալ ցուցանեն. և ասոնք կրնան կոչիլ անդրանիկ որդիք ժամանակի:

Յայսպիսեաց մէկն է և Հայոց ազգն, յայժմուս մեծաւ մասամբ բնականալ ի Հայաստան և ի Փոքր Ասիա, ի Միջագետս և յԱսորիս, և յարեւելեանն Եւրոպա, և մասամբ ալ ցրուեալ ի զանազան կողմանս Ասիոյ, Եւրոպայ և յեզերս Ափրիկիոյ. ոչ իւր բնական երկիրն քաջ և աղէկ քննուած ու ծանօթ է այժմ, ոչ շատ հին յիշատակարանք կու տեսնին հոն և ոչ շատ պատմութիւնք աւանդեն անոր երկայն կենաց գէպքերը՝ սակայն և երկիրն և մնացեալ յիշատակարանք և պատմութիւնք՝ դեռ բաւական ցոյց և վկայութիւն կու տան թէ հնութեանը, և թէ զանազան անցեալ դիպուածոց: Եթէ հասարակաց և արտաքին վկայութիւն չունենայինք թերեւս պէտք էր մեզի վախել որ ազգային եռանդով մը չմոլորէինք մեր ազգին և երկրին խոր հնութիւնը տեսնալովս. սակայն բազաւոր եմք բաւական լոյս ունենալովս տեսնելու առանց խաբէութեան մեր աշխարհին հնագոյն դարերն ալ, շատերէ և թերեւս ամէն աշխարհէ աւելի. և այսքան լոյսը անտես ընելով ուրիշ ազգաց պէս մեր երկրին պատմութեան սկիզբն

ալ խաւարապատ և աննշոյլ ըսելն՝ կամաւոր կուրուիլուն և յամառստ ապիտուութիւն սեպեմք:

Եթէ Հայոց ազգն ճանաչուած է իբրև մի ի հնագոյն ազանց յաւուրց անտի առաջին պատմչաց և աշխարհագրաց Յունաց (Եկադ. Երոզ. Եփոր) Քաղզէից (Բերսոսս Աբիւղենոս), և Հրէից (Տովբիթ, Երեմիա³), Հայաստան ճանաչի հնագոյն մասն քաղաքապատում երկրի և առաջին աշխարհ մարդաբնակ, վկայութեամբ հնագունին և ճմարտագունին գրոց և հաւանու թեամբ ամենայն ողջախոհ բունասիրաց: — Աւանդամոռաց և բանագիւտ իմաստասէրք ժամանակիս քննելով զլեզուս և զգիրս երկրի ուզեն հասնիլ ի բնավայրն մարդկութեան. գեղեցիկ հնարք, այլ պակասաւոր, վասն զանց առնելոյ զաւանդութիւն իրաւացի. իրենց գիւտն կ'առաջնորդէ ի բարձրաւանդակ աշխարհս Հնդկաց և Դիպեթաց, ուր թէ լեզուաց հնութիւն և թէ երկրի բարձրութիւն կու գանեն իբրև յարմար ի տարածել սփռել մարդկան ընդ չորս կողմանս. սակայն նոյն իսկ չափազանց բարձրութիւն երկրի՝ մեզ անյարմար երեւի ի նախնի բնակութիւն և ի սփիւռս մարդկան. և լեզուաց հնութիւն ալ ըստ հմտագոյն քննաբանից նախերիցութիւն կամ ազդեր մը չեցոյց, այլ հաւասար հարազատութիւն մը⁴. և ամէնէն կատարեալ և ճոխ հին լեզուն՝ Հնդկաց՝ այսօր ոչ մայր այլ քոյր ճանաչի զանդկին Պարսից և մեր հայկականին: Քան զբարձրութիւնն յարմարագոյն է ի սփիւռ մարդկութեան այնպիսի աշխարհ մը որ երկրիս մեծամեծ և ծովազտառոյց մասանց ալ հաղորդելի և միջագիր ըլլայ. և այս գիրքս շատ աւելի քան զՀնդկաց բարձրաւանդակս ունի Հայոց բարձրաւանդակն, և աւելի քան զամենայն աշխարհս: Դրիցն օժանդակ հաստատութեան են աւանդութիւն և հաւանութիւն և մանաւանդ նախայիշեալ հնագոյն պատմութիւնն, որ է Մովսիսի գիրք, աստուածային ազդմամբ գրեալ աստի 3500 տարի առաջ, որ է յառաջ քան զողջոյն կէս պատմական ժամանակի: Հարկ է մեզ ընթեռնուլ այս նախապատիւ և նախաժէք գրոց սկիզբն որ զամենայն ազգաց սկիզբը յանդաման բերէ, և ամենուն նախահօր բնավայրը ի վերայ երկրի, զոր մեք իբրև առակ սովորեալ, կ'ըսեմք թէ էր ի Հայաստան, և ցուցանել թէ արդարեւ էր հոն, թէ և հեղինակն աշխարհին անունը չիտար, և անոր համար այնքան խնդիրք և վէճք եղած են վասն տեղւոյ զրախտին և առաջին բնակութեան մարդոյն: Արդ Ս. Գիրք Մովսիսի այսպէս կ'ըսեն վասն տեղւոյ զրախտին ըստ գեղեցիկ հայ թարգմանութեան գրոցն յեթմանասնից յունական թարգմանութենէ. «Տնկեաց Աստուած զԴրախտն » յեղեմ ընդ արեւելս... Եւ գետ ելանէր յեղեմայ ոռոգանել զզրախտն.

» և անտի բաժանի ի շորս առաջս. անուն միումն փիտոֆ. նա է որ
 » պատէ զամենայն երկիրն Եւրասայ, անդ ուր ոսկին է, և սակի երկրին
 » այնորիկ աղնիւ. և անդ է սուտակն և ակն դահանակ: Եւ անուն գետոյն
 » երկրորդի Գեհնֆ. նա պատէ զամենայն երկիրն Եթովպացոց: Եւ գետն
 » երրորդ Տիգրիս, նա է որ երթայ յանդիման Ասորեստանի: Եւ գետն չոր-
 » բորդ Եփրատէս:» — Երեք նշան կամ տեղացոյց տայ Դրախտին նկարա-
 գրութիւնս այս. նախ՝ տեղւոյն անունն Եղեմ, երկրորդ՝ արեւելեան գիւրջ և
 երրորդ՝ գետերն. և այս եւքինս է ամէնէն զլիւսուորն և հետաքննելին: Առաջ-
 նոյն համար գիտելի է որ Եղեմ անուամբ տեղ կամ տեղիք կու յիշուին
 ի Ս. Գիրս, և միշտ անորոշ է գիրքն, բայց միայն Եղեմ քաղաք մը ի Լի-
 բանան. մեր, ինչպէս ուրիշ թարգմանութեանց մէջ ալ, փոխանակ Եղեմայ,
 Եղում՝ կամ Եմաթ կամ ուրիշ անուանք կու գրուին: Աւելի կարեւորն
 այս է որ Եղեմ անունն ոչ այնքան բնական անուն է տեղւոյն, որքան
 անոր նշանակութիւնն, որ է փափկոտիտ, և այսպէս իսկ անուանի
 (Մննգ. Գ. 24) կամ բարձրոտիտ, և շատք Բարձրասեղակ խմանան
 Եղեմ անուամբ. և նոյն իսկ Պարտեզ բանն, որով օտարք (Հրեայք) Յոյնք
 և Լատինք կ'անուանեն զԴրախտն, (Բարատիզուս Paradisus) ըստ ստու-
 գրիտ լեզուի նշանակէ Բարձրատեղ՝: Ուրեմն այսու նշանաւ այոչափ ստու-
 գուի որ դրախտն ցած երկրի մի վերայ չէր, որպէս Ասորիք, այլ բարձրա-
 գիր, որպէս էր և Հայաստան՝:

Երկրորդ նշանն ալ, այսինքն յարեւելեան կողմն ըլլալու գրախտին,
 շատ ընդարձակ կրնայ ձգուիլ, որ և է երկիր Պաղեստինու արեւելակողսը.
 բայց սկսեալ ի մօտէն՝ Արաբիոյ և Քաղղէսացոց և Միջագետաց չի յար-
 մարիբ, անոնց ցածութեանն համար, այլ անոնցմէ անդին Հայոց և Մա-
 րաց կողմերուն. ճշգրտի նայելով Հայաստան աւելի Պաղեստինոյ հիւսի-
 սային կողմն է քան յարեւելս. սակայն իր մեծագոյն տարածութիւնն գար-
 ձեալ յարեւելս է. մանաւանդ եթէ Մովսէս նկատմամբ Եփրատայ և Տի-
 գրիսի կու նկարագրէր՝ արեւելք կ'անուանէր զերկիրը յորմէ գային գետերն
 և յարեւելից Պաղեստինոյ անցանէին՝:

Բայց Դրախտին երկրին կարեւոր նշանքն են գետերն. սակայն ասոնք
 իրենց երկուքին անուան և անցած երկիրներուն վերայ եղած պէսպէս
 կարծեօքն բոլոր Եղեմայ գրից վերայ ալ տարակոյս և մթութիւն ծագեր
 են. մէկ այլ երկուքին, այսինքն Եփրատայ և Տիգրիսի վերայ բնաւ տարա-
 կոյս չէ եղած. այլ մանաւանդ անոնցմով առաջիններն ալ գուշակեն սղջա-
 միտք: — Ըստ նկարագրութեան Մովսիսի յԵղեմայ մեծ գետ մը կ'ելլար

և անոր չորս առաջին կամ թեւերն էին այս չորսերս և իրենք ալ գետ կ'ըսուին: Ի գետոյ միոյ չորս մեծ գետ ելլալ և զանազան կողմ երթալ՝ ոչ միայն չի տեսնուիլ հիմայ երկրիս ոչ մէկ կողմը, ուր կրնայ դրախտ կարծուիլ, այլ և ոչ կու հասկըցուի թէ ինչպէս կրնայ ըլլալ այս բանս. արդ նոյն Ս. Գրքը քիչ մը յառաջ նոյն բանը յիշելով աւելի պարզ կ'ըսէ. «Աղբիոր ելանէր յերկրէ և ոռոգանէր զամենայն երեսս երկրի»: Այս աղբիւրս կ'ամ ըստ սովորական նշանակութեան ջրարձակ կամ ջրամբար անզ մ'էր ուսկից չորս գետերն ալ իրենց սնունդը կ'աճնուին, և կամ որ աւելի հաւանական է քաղցր ջրոյ ծովակ մը կամ լիճ մ'էր ի մէջ Եդեմայ, ուսկից կ'ելլային չորեքին գետերն: Արդ յայտ է որ այս դիրքս ալ հիմայ չերեւար. կան լճեր ուսկից քանի մը գետք կ'ելլեն, բայց չկայ մէկ սը ուսկից Եփրատ և Տիգրիս ելլեն. հարկ է ըսել որ ջրհեղեղին մեծ երկրափոխութիւնն այն եդեմական աղբիւրը կամ գետը խորատուելով անզը կտմ ջրալողակ պարահովիտ մը, բարձրաւանդակ մը թողուց և կամ լեանակոյտ մը կանգնեց, որոյ եզերքէն կամ ծածուկ ծոցերէն կու բղխեն գետ այն քառաուղ գետերն. որոնց ակնաղբերքն միայն այլափոխած են, իսկ ընթացքն քիչ մը միայն: — Որոնք են այս գետերս:

Մովռէս որ այնչափ մօտ կամ հեռու էր ի ժամանակէ դրախտին կամ ջրհեղեղին որչափ հիմայ մենք, աստուածային և աւանդութեան լուսով մեզմէ աղէկ գիտէր զանոնք և կարգաւ մը կու նշանակէ, որ յարեւելից և հիւսիսոյ կու գան յարեմսուտս հարաւոյ. մենք հակառակ կարգաւ սկսիմք քննել, վասնզի մեզի վերջիններն ծանօթագոյն են քան զառաջինս: Արդ Գետն չորրորդ ըստ կարգի Ս. Գրոց և առաջինն ըստ մեզ, որ և ըստ բնութեան այսինքն է ըստ կարեւորութեան՝ է Եփրատ, յառաջակողման Ասիոյ մեծագոյն և հոշակագոյն և գրեթէ սրբազան գետն. որովք, միանգամայն և մերձաւորութեամբն ի Պաղեստին՝ անկարօտ կը համարուէր բացատրութեան յիշատակելու և սահմանադրութեան. այս գետոյս վերայ բնաւ տարակոյս չէ եղած առ քննիչս Եդեմայ. բայց մենք որ գիտեմք թէ հիմայ յերկուց օժանդակաց միութեամբ է Եփրատ, այսինքն Արածանոյ և Վտնակայ, կրնամք հարցընել, թէ ո՞ր առաջն էր եդեմարուին. և պատասխանը թողումք յետոյ: Երկրորդ ըստ մեզ և երրորդ ի կարգիս ջրոց՝ է Տիգրիս, զոր եբրայեցին Հիտտե քէլ կոչէ, և Դիլրաք ձայնը կամ դիքքէ լսեցընէ, որով հիմայ ալ կ'անուանի գետն, և գրեթէ Տիգրիսն ալ նոյն ձայնն է (թ և շ լծորդ ըլլալով). այսոր համար կ'ըսէ Սրբազան պատմիչն, թէ «Երթայ» յանգիման Ասորեստանի», որով կ'իմացուի Ասորեստան աշխարհին

յառաջակողմը կամ վերնակողմը, որ է Կորճայից սահմանակից. ապա ինչպէս անտարակոյս է այս գետն այլ, այսպէս և անտարակոյս է Երթալ նորա ի Հայոց աշխարհէ յանդիման Ասորեսաանի, որպէս և մինչև ցայժմ տեսանի: Երրորդ գետն ըստ մեզ և երկրորդ ըստ կարգի գրոց Գեհնվճ հարկ է որ ըլլայ յելից Տիգրիսի, և (նկատմամբ գրից Եփրատայ) նաև ընդ հիւսիսոյ նորա. միանգամայն և շատ հեռի չըլլայ այն երկուքէն, մանաւանդ աղբիւրն՝ նոցա աղբերակնէն. վասն զի քառառոջ աղբեր կամ գետոյն յիշատակն քաջայայտ նշանակէ թէ չափաւոր էր տարածութեամբ թէ՛ ինքն և թէ Երեմայ երկիրն, յորմէ դուրս կ'ելլային գետքն. և ոչ թէ անհուն տարածութիւն մը երկրի, ինչպէս շատք կարծեն, շմտածելով զայս իրաւացի տեսութիւնս, այլ միայն կ'ամ գետոց անուան նմանութիւնը և նոյնութիւնը պիտելով, կամ անոնց անցած և պատած երկիրն անունը և բերպերը. և այսու ինչպէս Եփրատայ և Տիգրիսի վերայ՝ ամէնքն միաբան են, Գեհնի և Փիսոփի վերայ գրեթէ ամէնքն տարածայնք, և ոչ այսչափ միայն, այլ և հեռաւոր աշխարհներ դնեն զանոնք: ԶԳեհնի՞ որոյ համար Ս. Գրքը կ'ըսեն թէ «պատէ զամենայն երկիրն Եթովպացոց», ոմանք ըստ անուան գետոյն համարին զՃիկուս մեծ գետն արեւելից և խոր Ասիոյ, որ և Ոքսոս. որ թափի ի ծոփն Կասպից. ոմանք ալ համարին զԻնգոս մեծ գետն Հնդկաց, զայս աշխարհ համարելով Եթովպիա կամ Քուշ (ըստ Եբրայականին). վասն սեռութեան բնակչացն և վասն Քուշ—Կանտաւա կամ Քուշա երկիրն՝ որ ի միջին ընթացս ինգոսի. իսկ ոմանք բուն Եթովպիոյ աշխարհը նկատելով զՆեղոս համարին. մանաւանդ զի և Գեհնի իսկ կոչուած է գետս այս մեծ և աշխարհահոյսակ: Սակայն ոչ միայն նա և Ոքսոս, այլ և շատ գետեր՝ որք նեղ ձորերէ և յորձանօք և հերձմամբ կ'անցնին՝ նոյն անունը առած են, որպէս և Ճիկունն Կիլիկիոյ, ըստ մեզ Զահան և Պիւտամիս ըստ Յունաց. ի Պաղեստին անգամ պզտի գետակ մի կայ Գեհնի անուամբ: Այլ այսքան հեռաւորութիւնն անտեղի և հակառակ իսկ է կարգի գետազրութեան Ս. Գրոց. և հարկ է թէ ըլլայ Գեհնի, որպէս ըսինք, ի հիւսիսոյ արեւելից Տիգրիսի, միանգամայն և ակունքն մօտ տկանց նախայիշեալ երկուց գետոց. և արդ մերձագոյն գետ նշանաւոր Տիգրիսի և Եփրատայ է Երասխ սեփական Գետ Հայաստանեայց, և հաւանին այսմ բազումք յողջամտաց: Իսկ անհաւանք՞, թէ և դրից համար չունին ինչ ասել, գոնէ զանունն և զերկիրն զոր զատէ՝ կրնան ընդդիմադրել. — Այլ ոչ միայն դրից յամարութիւնն յաղթէ ընդդիմադրութեանն, այլ և զանունն և զերկիրն անգամ կարեսք ստուգել հաւանօրէն, և նախ ինչպէս ծանուցինք՝ Գեհնի նշանակէ

ըստ Երրայեցի բնագրին յախուռն և երազ ընթացք մը, նոյնը ճշմարտեալ և վկայեալ է վասն Երասխայ ի հնագոյն նախնեաց օտարաց և մերոց, և անունն իսկ Երասխ՝ Երազս կամ հերձուձն նշանակէ, ըստ նոցին իսկ օտարաց (Յունաց)։ Այս չէ շատ գծուար ընդունելի անհաւանից, վասն զի գետոց անուանքն շատ փոփոխութիւն կրած են, և Եփրատ ու Տիգրիս իրենց մեծութեամբն և շատ ծանօթ աշխարհներէ անցնելով աշխարհածածոթ և անփոփոխ մնացեր են. այլ աւելի գծուարին է Եթովպացոց երկիրն Երասխայ ընթացից տակ. — սակայն որք զԵթովպիա կամ Քուշ բնառեն յամենայն Սեւաքնակ աշխարհս, կրնան ի Հայաստան ալ բնտուել թէ կա՞ր արդեօք այնու անուամբ աշխարհ¹⁰ մանաւանդ Քրիստոսէ 1600 տարի կամ աւելի՝ առաջ, ըստ ժամանակին յորում գրէր Մովսէս. և կ'ասէ վասն գետոյն թէ «պատէ զամենայն երկիրն Եթովպացոց»։ արդ ոչ Նեղոս և ոչ Ուրոս և ոչ Ջահան՝ եթէ և Եթովպիոյ երկրէ մը անցնին՝ բայց կատարելապէս չեն պատեր երկիր մը. իսկ Երասխ՝ բաւական է որ աշխարհացոցի վերայ նայիմք և կու տեսնեմք որ նեղ Քարաձորէն ելլալով յԱլբարտառեան դաշտն՝ ընդ հարաւ և ընդ արեւելս պատի զԱռան աշխարհաւ որ շատ յառաջ քան զՄովսէս, ըստ պատմչաց մերոց կոչուէր և կոչի իսկ Սիւնիք կամ Սիսական. և յետոյ երկու աշխարհ բաժնուեցաւ ի մեծ և ի փոքր, որոց երկրորդն կոչեցաւ. և Արցախ։ Գետոյն պատուածք յարեւմտից, ի հարաւոյ և յարեւելից ակն յայտնի և անտարակոյս է, այլ երկրին անունն։ Եթէ յառաջ քան զՀայկն Քուշացի սերունդք բնակեալ էին ի Սիսական, չեմք գիտեր, թէ և ոմանք գաւառաց Արցախոյ Քասստի մականունն ունին մօտ Քուշ անուան. այլ բուն անունն ըստ մերոց պատմըչաց առեալ է յորդոյն Գեղամայ նահապետի ի Սիսակայ (Խոր. Ա. ԺԲ) բայց զի Սիւնիք կոչի ի մերոցս և չէ նման և չի կրնար ծագիլ ի Սիսակ անունէն, պէտք է ըսել թէ այդ նահապետին կոչումն նուազական կամ փաղաքշական է (որպէս և Աղու կոչումն նորա) իբր Սիսակ. ապա բուն անունն էր Սիս կամ ասոր նման. ի Սիսայ ալ Սիւնիք չի ծագիր, հաւանական է թէ էր Սեաւ կամ Սեաւ¹¹ կամ Սի յորմէ Սիւնիք իբր Սեւունիք¹²։ Պէտք է յիշել որ Երասխայ և Կուրի միջոց ուրիշ նշանաւոր տեղ մ'ալ կայ Սեւանուն մարդկան, Սեւորդեաց աշխարհ կամ Չորն, անմիջապէս Արցախոյ և Ուտիոյ սահմանամէջ, Կուրի պարահովտին սեփական, բայց հին ատեն ընդարձակ ըլլալով մինչեւ աշխարհ կոչուէր և իբր զատ թագաւորութիւն կամ երկիր մը յիշուէր յԱլբարացի պատմչաց ալ, և մինչեւ ի Սիւնիս կու ձգէր, հնագոյն ատեն թերեւս աւելի ալ ընդարձակ էր. և

անունն առած էր ի Սեւուկ նահապետէ, որոյ ժամանակն առյայտ, նոյնպէս նոյն կամ օտար ըլլալն ի Սիստկայ:

Եթէ յետ այսքան նշանաց Սեւանայ, Սիւնեաց և Սեւորդեաց շատանայ եթովպախնդիրն և եբրայական Քուշն ալ պահանջէ, զայն ալ կու գտնեմք հոս ի հայկազնն Գուշար սր էր յորդոց Շարայի Թոռնորդոյն Հայկայ ըստ պատմչին մերոյ, և բնակէր Սեւանայ ծովուն մօտերը¹⁵. ապա եթէ ոչ ի Հայկայ՝ այլ ի Քամայ պահանջուին Քուշացիք՝ ահաւորիկ և Քանանացիքն բնակեալք ի նոյն ծովեզերս Սեւանայ, յիշեալ ի պատմչէն մերմէ¹⁴: Այս ամէն փաստքս միտքան առնլով, չափ մի հաւաստիք տան Գիհուն համարելու զԵրասխ, և Քուշ՝ զՍիւնիս, կամ զմիջագետս Երասխայ և Կուրի:

Մնայ արդ գետն չորրորդ, որ է առաջին ըստ Գրոց, Փիսոֆն. և ըստ դրիցն պիտի ըլլայ ի հիւսիսոյ Երասխայ և մերձաւոր աղբերականց նորա և Եփրատայ. և անշուշտ ոչ միայն ի Ս. Գրոց այլ և յարտաքնոցն Փասիս կոչեալ պիտի ըլլայ. որով անուամբ ոչ մի՝ այլ քանի մի գետք կան ընդ մէջ Հայոց և Վրաց. նախ հիւսիսագոյնն բուն Փասիս, որ հեռաւորութեամբն անյարմար է Ս. Գրոցն Փիսոֆն ըլլալու. երկրորդ՝ Ճորոխ կամ Ակամսիս, երրորդ՝ Կուր գետն մեծ, որք ի Փասիս կոչմանէ ազատ չեն մնացեր. ինչուան ոմանք¹⁵ զԵրասխն իսկ ի սկզբանն նոյնպէս կոչուած համարին, հաւանօրէն Բառեան գաւառին համար ուսկից որ կը բղէ ստուգիւ: Արդ որ յայս գետոցս է «որ պատէ զամենայն երկիրն Եւրատայ»: Հոս այլ դժուարութիւնն Եւրատայ երկրին գիւտն է. զոր ոմանք ի բերոցն գատելով, (որ է սկի ազնիւ, ակն սուտակ [զոր հիմայ կ'իմանան Rubis¹⁶] և դահանակ, տեհեհե ըստ պարսկին), ոսկիբեր և գոհարաբեր երկիր մը կու բնտոնն, և դարձեալ ի հարուստ Հնդկաստան խոտորելով զԳանգէս համարին Փասիս, կամ զՀիփասս որ և Հիփասս, յետ Գանգիսի և Ինդոսի մեծագոյն գետ Հնդկաց. սակայն այնչափ անհաւական և անտեղի է այս՝ որքան Գեհնֆի Ինդոս կամ Նեղոս լինելն: Ապա թէ ըստ բնական երեւութին ի հիւսիսոյ Երասխայ խնդրելու է ոսկիբեր գետն և երկիրն, երեք վերոյիշեալ գետերն ալ այնպիսի երկիր կ'օռոգեն կամ կու պատեն. Փասիս, գետն Կողքեաց՝ որ յԱրգոնաւորդաց ժամանակէ ի վեր հոչակեալ է ոսկեբեր աւազոֆն կամ բովուքն. Կուր, իր ընդարձակ պարահովտին պէսպէս հանքերոֆն, յորս ոսկւոյ հեաք ալ յայտնուած են նաեւ ի մօտ ժամանակս¹⁷. Ճորոխ արծաթաբեր բովուքն Սպերոյ ինչուան հիմայ հոչակեալ է, և ոսկի ալ ունենալն ալ վկայուած է¹⁸ զսա կարծեմք Փիսոֆն սուրբ գրոց, և հօս

գրական ազնիւ, որ անշուշտ հին ատեն աւելի հոչակեալ և հարուստ էր, ապա ուրեմն և երկիրն Եւրլաթայ որ է Խառիւրս ըստ Եբրայեցոց՝ է Խաղտիք աշխարհ, ուր և Խոսրադ լեառն և Խայր ժողովուրդ մինչև ցայժմ պահեն զհին անունն, զոր և հին Հելլէնք կոչէին Խալիարս և Հայասխալիարս և Քաղզեայս այսինքն Խաղտիս. եթէ գիտէին զայսոսիկ քաջ բնաբանք¹⁹ կարծեմ զիջանէին թէ Խաղտիք ունին հաւանականութիւն Եւրլաթայ առաւել քան զԿողքիս՝ և առաւել քան զԽոսայիսի Ուրալ լեռանց և վալկայ գետոյ մօտ՝ յորոյ անուն Ռուսք զկասպից Մով կոչեն Խուալիսեան ծով. Ճորոխ՝ պատէ զերկիրն Խաղտեաց, յայտնագոյն եւս քան Երասխ գլխնեաց, իսկ այլք ի կարծեցեալ գետոցն՝ ոչ նոյնպէս զմերձակայ երկիրս: Չատ յոսկւոյն երկու բերքն երկիրն Եւրլաթայ, այսինքն Սուսական ըստ մեզ, որ է խնկախէժ ծառոյ մը ծորուած (պտոյախ ըստ եբրայեցոց, Պտեչիոն ըստ Յունաց) և Գանահակն²⁰ որ ծովագոյն բերեղ կարծի, հիմայ ծանօթ չեն ոչ ի Խաղտիս, ոչ ի Կողքիս և ոչ ի Խուալիս:

Գեհնի և Փիսոփի կամ Երասխայ և Ճորոխի վերայ առանց այսչափ անդեկութիւն ունենալու այժմեան քննիչք և մեկնիչք²¹ չեն տարակուսիր որ դրախան ալ իր չորս գետերն ալ ի Հայս էին, և որք շատ բնդարձակ համարին զերկիրն Երեմայ՝ անհրատեշտ զՀայաստան ալ ի մէջն բովանդակեն:

Հետաքննելի է թէ արդեօք և նախնիք մեր ունէին այս հաւանութիւնս և պարծէին ի վերայ դրախան, որպէս անշուշտ կ'ընէր որ և է ազգ և կ'ընեն իսկ շառք առանց այսքան հաւանութիւն ունենալու. — Հասգոյն և հեթանոս նախնեաց աւանդութիւն չունիմք. իսկ քրիստոնեայ նախնիք մեր ըստ հասարակաց կարծեաց Ս. Հարց՝ զԳեհնի և զՓիսոփ հետու աշխարհներ կու տեսնային, և երկու գետն միայն իրենց սեփական գրէին, որպէս ասէ Եղիշէ հեզարան պարծանօք. «Երկու գետովքս և տա» պանաւն գեր ի վերոյ եմք քան զյուրովս». ուրիշ ոմն²² կ'ընդունի երեք գետ և զողջոյն դրախան, «Յայսմ կողման (ի Հայս) աստուածատունկ» դրախան... և եղեմաբուխ երից գետոցն հոսումն»: Ուրիշ մ'այլ ողբալով հայրենեաց անշքութիւնը գոչէ «Աւաղ երկիր Հայոց գաւառ գեղեցիկ, աշխարհ արեւելեան, հուպ առ Երեմ»:

Հիմայ անտարակոյսք Երեմայ ի Հայաստան ըլլալուն, կու մնայ տեսնել թէ յոր կողմն է. ոմանք յայժմու բանասիրաց յարեւելեան կողմն համարին, վանայ Մովսէս եզերքն, ի մէջ փակելով զնոյն ինքն ծովակն, թերեւ Երեմայ գետարձակ աղբիւրը սեպելով, որուն արգարեւ մօտ են

ինչուան հիմայ Տիգրիսի արեւելեան աղբերակն և ոչ հեռի Արածանոյն. բայց հեռագոյն մէկ այլ գետքն որոց ամենուն աղբերականց միջոցը կու վայլէ որ ըլլար Եգեմե, և էր ըստ իս ի Բարձր Հայս, և թերեւս յանուն բարձրաւանդակ դրախտին այս աշխարհս ի վաղուց կոչեցաւ այսպէս, այլ և կատար երկրի. կամ լաւ եւս բարձր և Դ Հայոց միջոցն, գլխաւոր մասն կամ կեդրոնն էր Եգեմայ, իբրու թէ ի սահման հիւսիսոյ ունելով զՏա- յախաղտեաց լերինս մասամբ փորակացն Տայոց, յորս և Պարաիզացիոր յարեւելից զԱլբարատեան²⁵ և (մասամբ Բասենոյ) զՏուրուզերան աշխարհս, ի հարաւոյ զբազուկ Հայաստաւրոս լերանց զանջրպետ Տիգրիսի և Արածանոյ, յարեւմտից զԱնտիտաւրոս առ Եփրատաւ. ի գետոց երեքին ինչուան հիմայ ակունքն կարնոյ գաշտին մէջը և երկու կողմերը՝ յայտնի են. չորսորդն Տիգրիս հիմայ հեռու մնայ և իր և անոնց միջէն կ'անցնի Արածանի յԵփրատ գիւմելովը. սակայն յառաջ քան զՂրհեղեղն՝ եթէ ծովակ մը ծածկէր զմասն մի եգեմական երկրիս, հարկ է որ դիրքն ալ այլակերպ էր. և շատ հաւանելի է, նաեւ երկրաբանական դիւմամբք, որ այն ատեն Արածանի չկար, կամ թէ հիմկու ճամբան չունէր, այլ թերեւս ի վանայ ծոփ կամ յայն կողմն իջնար. բարձր և Դ Հայոց բարձրաւանդակը միակիցք էին տաշ- տաձեւ, և Սրմանց ջրաբուխ լճաշատ լեռնատափքն (Պինկէօլ) կարնոյ գաշ- տէն սկսեալ երկայնաձիգ ծովակին կամ աղբերն յատակն էին, որք յեա ջրհեղեղին ամբարձան, և նախնի յուռթի գետնէն բղինն այժմու լճակ- ներն. այն ատեն Տիգրիս ալ այն ծովաղբեր հարաւային եզերքէն կ'իջնար ընդ հարաւ, որպէս Եփրատ ընդ արեւմուտս, ճորոխ ընդ հիւսիս և Երասխ ընդ արեւելս:

Ոչ ծովաղբերն, ոչ լերանց և ձորոց դիրքն, և ոչ փափկութեան պար- տիզին տնկաբերութիւն մնացին նշան Եգեմայ, որ անշուշտ և յառաջ իսկ քան զՂրհեղեղն անշքացաւ և թերեւս մեծամեծ սասանութեամբ և հրաբղխիւք այլայլեցաւ, և այնուհետեւ կարօտ չէր բոցասուր սերովբէից պահպանու- թեանը՝ որ անարժանք չմտնեն ի ներս: Յետ ջրհեղեղին այլ աւելի կեր- պարանափոխ եղաւ երկիրն և բտրեխառն կլիմայն մեծապէս ցրտացաւ. բայց ի վերայ այսր ամենայնի ինչպէս գետոց հին նշանքն մնացին, այս- պէս և եգեմաշունչ օդոց նշան է բարձր Հայոց և Սրմանց բարձրաւանդա- կաց գտրնանային և ամարային օդոց պարզութիւնն և քաղցրութիւնն և անապակ շունչն, հանդերձ պայծառութեամբ և քաղցրութեամբ ջրոց, որոնց միայն պակասութիւն է մշտատեւ չըլլալն, այսինքն երկայն ձմերով մը խափանութիւնը որ ամէն տարի դրախտին կորուստը կու կրկնէ բայց դար-

ձեռք կու նորոգէ ամենազուարճ գարունով, և պայծառ արեգակամբ. որուն ամառն ալ որչափ կարճ՝ այնչափ ալ բարկ և բեղմնաբեր և եթէ կարճու-թեամբն՝ ջերասէր բուսոց բարգաւաճանաց անբուական է, բայց ոչ սակաւ պաղոց և մանաւնդ արմատաց, եւս առաւել բանջարոց, և առաւել եւս ալպեան կամ լեռնական բուսոց այնքան գեղեցիկ աճուած և զանազանու-թիւն կու առայ, որ և բազմատես բուսարանից ոչ միայն զմայլումն բերաւ. այլ և համարձակ ըսել տուաւ որ անշուշտ հոս եղած պիտի ըլլայ փափ-կութեան դրախան:

Ո՛րքան ախորժելի և միանգամայն տիրաբեր յիշատակք և զրոյցք եղած պիտի ըլլան մեր ազգին նախահարց մէջ և մեր երկրին առաջին բնակչաց մէջ, սրբ ի հարկէ ոչ միայն զդրախտին յիշատակն կենդանի ունէին այլ և դիրքն լաւ քան զմեզ ճանչնային. անկարելի էր Նոյի և իր սրբուցը որ նախաջրհեղեղեան անձը ճանչցեր էին և ազամարնակ տե-զուանք տեսած էին, շատ հաւանութեամբ, յետ ջրհեղեղին այն տեղուանց հետքը չի բնտնել, և իրենց որդւոց ալ չաւանդել. և այսպէս շարունակել այն յիշատակը տա որ կու ձկտի ամենայն ազգ. մինչեւ կրօնից փոփո-խութիւն և օտար ժողովրդոց բռնի բնակութիւն՝ փոխեցին, այլայլեցին, լռեցուցին այն յիշատակները. բայց իսպառ մոռնալ անհնար էր, նաեւ յետ հազարաց ամաց. և եթէ հեռաւոր արեւելեայք իրենց սահմանները գեւ կու բնառն և պատմեն դրախտի յիշատակ կամ գեղեցկութիւն, աւելի իրաւացի չէ անոնց լսել սրոնց երկիրը կ'ոռոգեն անտարակուսելի գետքն Եդեմայ. ախորժելի ըլլայ ուրեմն լսել զրոյց մը, զոր Գերմանացի ճանա-պարհորդ²⁵ մը լսեց շատերէ, ջրառատ Պինկէօլի լեռանց բնակող հին Հայոց սերունդներէ, մանաւանդ ի Պասքամ գիւղ վարդոյ վիճակին, որ հին Հայ նահապետի մը անուն կրէ ցարդ²⁶: Այն յուրթի և պարարտարօտ լեռանց բարձրաւանդակի մը վերայ դրախտին ծովակն կու տարածուէր իր շորս գետերը բղխելով²⁷: Ամենայն աւանդութիւնք ալ միարանին ընդ մեկնը-չաց Ս. Գրոց թէ դրախտն ի բարձրաւանդակի կամ ի լեռնավայրի էր. Զանդիկք յէլլսորճ կամ ի Դէրէզադ սրբազան լեռին համարին, մերձ յէրիմէնէ-վէճոյ, և ունէր ծովակ մը զոր Զարեհ կոչեն, և առանձին անուամբ Զէրահքանտ. առատ ջրարձակութեան համար կոչէր և Նա-գետհրոյ (պորտ), յորմէ ստուգաբանի և Նպատ լեռին անուն, որ ըստ մեզ Արածն աղբերականց մօտիկ է, և ըստ Հեյլենաց բոլոր Հայասաւ-րոս լեռինք Նպատք կոչին. միայն թէ Զանդիկք երկու իրեք վիճակ կ'ըն-ծայն այս տեղերու. մէկ մը բուն եղեմական կամ նախաստեղծ մարդկան

երկիր. մէկ մ'ալ բուն երանելեաց գրգարան, և դադար Որմզգի, և ըստ այսմ՝ Էլպորճ անհուն բարձրութիւն ունի արեգակնաչափ, 800 տարի երկրիս ծոցէն գէպ ի վեր բարձրացեալ: Ասոր նման կարծիք մը ունէին նաև Հայք և մեկնիչք Ս. Գրոց, զգրախտն երկրիս արեւելեան ծայրերը և լուսնի չափ բարձր լերան մը վերայ համարելով³⁸. բայց յետ արտասահմանութեանն նախածնողացն այսպէս տարապայման բարձրացեալ, իսկ յառաջն չափաւոր բարձր, և միշտ ի լերին. այս կարծիս հաստատէ մեր նախնի վարդապետ մ'ալ «Որհնեաց Աստուած զնախասեղծնն ի լերինն» յԱլլին ընդ արեւելս». որ և որոշ լեռ մը կ'իմանայ յեղեմ, մանաւանդ զնոյն իսկ Ալլին կ'իմանայ անուն լերին և անդոյ Գրախտին: — Այսպիսի տեսութիւն մի կ'ընծայէ և Եղիկիէլ մարգարէ (ԼԱ. 8) անասառային և լեռնային ծառեր յիշելով ի գրախտին սարդ և սարոյ նոճ մայր և սօսի:

Արդ այս լեռնավայր բարձրաւանդակին վերայ պատրաստեց Արարչապետն զգրախտն փափկութեան հանդերձեալ մարդոյն, ամենատունկ, ամենապաուղ ամենահոտ, ամենազուարճ երկիր մը, քաղցր աղբրածովուն եզերք, բարձրաբերձ և հովանաւոր ծառօք պարսպեալ. վասն այնորիկ և Պարտեզ կոչեցաւ, որ է շրջափակ կամ մացառապատ դրախտ, որչափ Ս. Գիրք և անհրովիւն միաբանին յաւանդել. «Տնկեաց Աստուած զգրախտն յեղեմ» ընդ արեւելս... և բուսոյց եւս տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ» զեղեցիկ ի տեսանել և քաղցր ի կերակուր. և զծառն կենաց ի մէջ» գրախտին. և զծառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ և չարի»: Յետ այսպիսի պատրաստութեան (որոյ վերայ խորհրդածել կամ շատ յերկարել՝ մեր նպատակէն դուրս է) «Ասաց (Ս. Երրորդութեան Անձինք յանգիման) ամենայն հրեշտակաց) արասցուք Մարդ ըստ պատկերի մերում և ըստ» նմանութեան, և իշխեսցեն ձկանց ծովու և թռչնոց երկնից և անասնոց,» և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի:» (ԴՄ. Ա. 26). Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և» փշեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի:» (Բ. 7). Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկեր» Աստուծոյ արար զնա: (Ա. 27). Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր» արար, և եղ զնա ի գրախտին փափկութեան գործել զնա և պահել»: (Բ. 15): Մարդոյն հրաշալի և ամենաստուածեան ստեղծումն, արժանի զմայլական խորհրդածութեանց, ընդհանուր պատմութեան մարդկութեան կամ կրօնից վերաբերելով՝ քան ազգային պատմութեան՝ թողումք ի հաճոյս իմաստասիրաց. իսկ այդ ի մէջ բերեալ Ս. Գրոց վերջին տունն՝ ազգային

պատմութեան կամ աշխարհագրութեան պատմութիւնը դարձեալ ի յուշ բերէ, Եղեմայ զուար բանալով առ նորաստեղծ մարդն. որ որպէս Ս. Գիրք ցուցանեն ստեղծաւ արատարոյ գրախտին, և յետոյ գրուեցաւ հոն. և թե-
 բեւ, դարձեալ ըստ նոյն Ս. Գրոց ցուցակութեան, նախ ստեղծաւ, ապա
 գրախտան պատրաստեցաւ և յետոյ մուծաւ հոն: Գրախտին առաջ կամ
 յետոյ պատրաստուելուն որն ալ ըլլայ, ստոյգ է որ Աղամայ ստեղծման և
 ի գրախտ մանելուն մէջ ժամանակ անցաւ քիչ կամ շատ: Ո՛ր ստեղծաւ
 Աղամ, կամ յետ սրբան ժամանակի մուծաւ ի գրախտն, Ս. Գիրք չըսեր.
 միայն տայ զուշակել թէ ոչ տեղն հեռի էր և ոչ ժամանակն ուշ²⁹: Մեկ-
 նիչք զանազան կարծիք ունին, որ մեզ աւելորդ է յիշել, բայց միայն
 զմէկն, ոչ իբրև ընդունելի, այլ իբրև ազգայնաբանական. և է յանուն Ս.
 Եպիփանու ասացեալ Արարածոց մեկնութիւն, և գրեալ վասն բարեկամին
 իւրոյ հայկազն Եպիփանու իմաստասիրի և ճարտասանի Եղեսաացոյ. որ և
 առէ ի Սիոն լերին Երուսաղեմի ստեղծեալ բանին Աստուծոյ զԱղամ, ա-
 ռեալ հող ի լեանէն և ջուր յաղբերէն որ ընդ գեթսեմանի իջանէր ի ձորն
 Կեղրոնի, և յետ ստեղծմանն իջուցեալ յաղբիւրն սելուլամայ և յաւացեալ,
 և օրհնեալ. և բերեալ ի Գողգոթայ լեռնակն և ի սահմանս տեղեացն՝
 զոր ինքն Աստուած մարդացեալ յետոյ սրբացոյց անօրէնութեամբ իւրով.
 և հոն ստեղծեալ զԵւա, (որում բնաւ ոչ հաւանիմք) և վեց օր այն ստե-
 ղնութեան տեղուանքը շրջեցընելով, ի վեցերորդ աւուր ստեղծմանն որ
 է երկրորդ հինգշաբթին « Հանէ զնոսա ի սուրբ լեան Զիթենեաց. և յերրորդ
 » ժամէն մինչև ի վեցերորդ ժամն աստուածային զօրութեամբ առանց աշ-
 » խառութեան հասուցանէր զնոսա յԱրարատեան Գաւառն միջամուխ
 » Հայաստանեայց աշխարհին, յարեւելս կոյս, ի լեանն յորում տապան
 » Նոյի այժմ հանգուցեալ կայ: Նաեւ զամենայն թուշունս և զգազանս և
 » զանասունս և զսողունս ընդ նոսա. ուստի և յերկրորդում ուրբաթուն ընդ
 » մերկանալ լուսոյն յառաւօտէն փոխեաց զնախաստեղծ կուստնսն զԱղամ
 » և զԵւա մեծապայծառ փառօք, և երկուստս ի մէջ իւրաստեղծ սուրբ և
 » լուսազարդ անապական գրախտին, որպէս փեսայ և հարսն ի մէջ ա-
 » ռագաստի» և այլն: Բայց մեք զԱղամ գիտեմք նախ միայնակ եղած ի
 Դրախտին. ուսկից ալ հոն մտած ըլլայ ի միայնութեանն ճանչցաւ զԱս-
 տուած, զինքն և զշրջակայ արարածս, զկենդանիս և զանկենդանս. և թէ
 սրպէս կամ զի՛նչ զգաց, թողումք պերճաբան Պիֆոնի կամ վսեմախոհ Միլ-
 տոնի նկարագրել³⁰: ի միայնութեան նախ « Պատուիրեաց Տէր Աստուած
 » Աղամայ և առէ, Յամենայն ծառոց որ է ի գրախտի ուսելով կերիցես,

» բայց ի ծառայն գիտութեան բարւոյ և չարի՝ մի՛ ուտիցէք. զի յորում
 » աւուր ուտիցէք ի նմանէ՛ մահու մեռանիցիք»: (Մտնդ. Բ. 16-17): Այն
 բազմավտակ հայկական բարձրաւանդակները զոր այսօր Գուրգը և Թուրք
 իրենց հօտերովը ծածկեն, և որոյ եզերքը մնացորդը հին ժողովրդեան Հայ-
 կոյ իրենց կէս ստորերկրեայ գիւղից մէջ ապաստանին, այս առաւուածային
 առաջին պատգամները և առաջին գրոյցք մարտոյ լսուեցան, որուն սովրե-
 ցընէր արարիչն գործել զգրտխան, այսինքն զարմանել զծառսն գեղեցիկս
 ի տեսանել և զքաղցունս ի կերակուր, որք են զբօսանաց տունկը և ծաղ-
 կունք և պտղատու ծառք և պահել, զվայելչութիւն տեղւոյն, զգուշանալով
 կամ նորոգելով զմէաս որ ի տարերաց կամ յանասնոց և կամ ի նա-
 խաչարէն, որուն թշնամութիւնը կ'իմացընէր Աստուած պատուիրանան
 զգուշութեան արդիւնալ ծառայն և մահուն սպառնալեօք: — Այսպիսի է
 վիճակ մարդկան ի վերայ երկրի յառաջին վայրկենէ անտի լինելութեան
 նախահօրն մինչև ի վախճան. ընդարձակութիւն ըզձից և ազատաձգութիւն
 մինչև յերկինս, չյազենալ բոլոր զգալի աշխարհաւս, և անձեանհասութիւն,
 չափաւորութիւն կարողութեան, նա մանաւանդ անբաւ տկարութիւն. այլ
 նշան և գուշակ ամենամեծ կարողութեան և կատարելութեան զոր ի յու-
 սացեալ և ի հանդերձեալ կեանս պիտի ստանայ, եթէ գոհանայ յայսմ
 վիճակի ըստ կամաց նախախնամող Արարչին: Սակայն եթէ այսպէս մէկէն
 ի մէկ հրաման և պատուէր մը կու տեսնամք մեր նախահօր չորս գին,
 չի զարհուրինք չի տրտմինք. այն պատուէրն բարոյապէս աւելի բան չէր
 քան զբնական դրախտին շրջապատ հովանաւոր ծառերն, որ կ'ամփոփէին
 զԵդեմայ ազատ տարածութիւնն. և եթէ Ազամ այն պատուիրանաւ կ'ի-
 մանար իր չափաւորութիւն և կախումն յԱստուծոյ և վտանգն ի շար սգոց,
 կ'իմանար իր գերազոյն բնութիւնն ալ ի վեր քան զամենայն երկրաւոր
 արարածս, և իւր իշխանութիւնն ի վերայ նոցա. վասն այսորիկ
 «Ստեղծ եւս Տէր Աստուած զամենայն զազանս վայրի և զամենայն
 » թոշունս երկնից, և ամ զնոսա առ Ազամ տեսանել զԲնչ կոչեցէ զնո-
 » սա. Եւ ամենայն շնչոյ կենդանոյ՝ զԻնչ և անուանեաց Ազամ՝ այն ա-
 » նուն է նորա: Եւ կոչեաց Ազամ անուանս ամենայն անասնոց և ամե-
 » նայն թռչնոց երկնից և ամենայն զազանաց վայրի»: — Ս. Գրոց մեկնը-
 չաց և բանասիրաց կը թողումք զքննութիւն կենդանեաց ազամադիր ա-
 նուանցն, թէ ըստ բնութեան նոցա յարմարցուց Ազամ եթէ ըստ ար-
 տաքին երեւութիւն միայն. և աւելի կարեւոր խնդիրը թէ Բնչ բառերով
 զանազանեց անոնց անուանքը, և կամ թէ արդեօք այն բառերը, միով

բանիւ Ազամայ խօսած լեզուն՝ անց արդեօք քիչ շատ հիմակուան լեզուաց մէջ. և թէ կարելի՞ էր լեզուաց մէջ առաջնութեան խնդիրը հանել մինչեւ ցԱզամ³¹: Շատ ըլլայ մեզի նկատել զհայրն մարդկան և զիշխան երկրի, նստեալ ի մենաւոր իշխանութեան իւրում յԱդին, որ ապա մեր ազգային հայրենիքն եղաւ և ի հանդիտի անցնելով զանառունս երկրի և օդոց՝ անուանել և հրամայել նոցա. և միանգամայն քննել զանբան կենդանեաց բնութիւն և ընկերութիւնն. և զինքն արտաքին մասամբ մի նման անոնց և միայն անընկեր կամ աննման ի բովանդակ բնութեան. « Բայց Ազամայ » ոչ գաւա օգնական նման նմա ». (Ծննդ. Բ. 20). և առ անծանօթ ընկերն ձկաիլ, կամ ըզձալ յԱրարչէն, որ և ասաց. « Ոչ է բարւոք մտրոգոյ միայն » լինել, արասցուք զմա օգնական ըստ զմա: (Ծննդ. Բ. 18). Եւ արկ Տէր » Աստուած թմբրութիւն ի վերայ Ազամայ և ննջեաց. և առ մի կողից նորա » և ելից ընդ այնր մարմին. և շինեաց Տէր Աստուած զկողն զոր առ յԱ- » զամայ ի կին, և ած զնա առ Ալամ: Եւ ասէ Ալամ. Այս այժմիկ ոսկր » յոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմոյ, սա կոչեսցի կի՛ն, զի յառնէ » իւրմէ առաւ վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր և երթիցէ » զհետ կնոջ իւրոյ»: Ոչ ի հեռուստ ընդ Ազամայ մտաւ նախամայրն ի զրախան. այլ ի զրախտին ստեղծաւ, և միայն արարած որ ի փափկութեան և յերջանկութեան տեղոջն ստեղծաւ, միայնակ գեղեցիկ յինուած Աստուծոյ, զի զայլ ամենայն արարածս կամ ըսաւ և եղեն, կամ ստեղծեց, կամ արար որպէս զմարմն, իսկ զկինն յինեաց, իբրեւ ճարտարագոյն արուեստաւորութեամբ, վասն զի յարզէն գեղարուեստ և կենդանի նիւթոյ առաւ անոր նիւթը: Եղեմայ ի Հայաստան ըլլալուն փափկագոյն պարծանաց զլուին անշուշտ Եւայի հոն շինուին է, և միանգամայն մարդկան նախածնաց ընդունարան ըլլալն. զորս « Օրհնեաց Աստուած և ասէ. Աճեցէք և բազմա » ցարուք և լցէք զերկիր և տիրեցէք զմա, և իշխեսցէ... » (Ծննդ. Ա. 28-30):

Ո՛րչափ ժամանակ տեւեց նախածնողաց երանական անարատ կեանքն ի փափկութեան Եղեմայ³². Ո՛րչափ ժամանակ մեր երկրին նախաջրհեղեղեան հօգն մշակեցաւ անոնցմէ և սնոյց իր անմահունակ մշակները, քանի՞ առաւօտ արեգակն յարեւելեան դրունս գրախտին բարձր ծառակամարաց վրայէն իր ոսկեծիրանի նշոյլը վառեց անոնց հեշտալի հովանոցին վերայ, և կամ քանի՞ իբրկուն յետ օրուան զուարճախառն վաստակոյ քառասոյլ գետոց մէկու աղբերահոսանց եզերք նստած՝ նորահրաշ արարչութեան վերայ կամ իրենց ապագայի ծննդոց և երկրիս բաղդին վերայ կու խօսէին, ոչ գիտեմք, ոչ

քննեմք. և ոչ իսկ այն սրբազան և խորհրդաւոր միայնութեան կամ միազուգութեան մերձենայինք, եթէ հայրենական երկրին յիշատակը չի համարձակեցընէր պահ մը կանգ առնելով հոս՝ մտածել ոչ միայն նախածնողացս այլ և մեր իսկ նախ սահմանեալ վիճակը, որուն Արարչապետն բնութեանս մերոյ նոյնպէս նախասահմաներ է պահարան տեղի զՀայաստան, իբրև սեամ՝ և դուռն մարդկութեան ի մուտս ընդարձակութեան երկրի: Եթէ չեք հնար նորէն յետս դառնալ և մտնել այն փակեալ դուռը, յետս դարձնել զերանութիւն, մեզի որ ոչ միայն ի նախածնողաց ժառանգեալ աղէտքը ունինք այլ և ի դարուց կուտակեալ բիւր չարիք, գոնեայ քիչ մ'ալ ուշանամք նախածնողաց և մեր երջանիկ վիճակին տեսարանօք. թարգման և առաջնորդ ընարելով, փոխանակ մեր հին և կորուսեալ Եղեմահաշակ երգչաց, զԱլպիոփէի երգչին գրուագը

Արդ երեկոյն խաղաղասիք տակաւ գալով գեռ եւջ գայր,
 Եւ իւր լուրթն ազօտալոյս զտարերս ի զգօնն համակեր թոյր.
 Ընկեր էր իւր՝ լըռութիւն, զեռունք և հաւք մեկնեալ կային՝
 Ի կանաչ նոքա խըշտիս մորեաց իւրեանց, սորս ի բոյնս:
 Երիծեռնիկ եւեթ ըսկեր՝ գեղգեղելով զգիշերն ի բուն
 Զդաւալսիկսն սիրայինս. զբարճացեալ կայր լըռութիւն:
 Նոյնժամն ի կենդանի շափիզս երկինք շողշողեցան.
 Գիշերավարն որ անէր զաստղականա բանակաց բոլան՝
 Ընթանալոյր բոլորափայլ, մինչ ամպաշուք ծագեալ լուսին
 Բամբիշն յայտնատեսիլ՝ զանհամեմատ լոյնն հոլանեաց,
 Ըզըջաշն արծաթափայլ արկեալ ի ստուերսն խաւարի:
 « Գեղեցիկդ իմ ամուսին, ասէ յայնժամ Ադամ ցԵւս,
 Վիշերաժամս և ամենայն ինչ ի հանգիստ իւր փութացեալ՝
 Ըզմեզ ի նոյն հրաւիրեն. առ յԱստուծոյ փոխանակաւ
 Կարգեալ վաստակ և հանգիստ մարդոյ՝ ստ տունջեան և գիշերոյ,
 Շաղ քընոյ ի գէպ անկեալ անոյշ և թանձըր թըմբբութեամբ
 Հակէ զարսեւանունս: Ա՛յլ արարածք զօրքն ցերեկ
 Սահեալ զատարկ և անգործ, շեն հանգըստեան ինչ շատ կարօտ.
 Մարդոյս մարմնոյ կամ հոգւոյ սակեալ է գործ օր ըստ օրէ,
 Նըջան պատուոյն, և յամենայն ի գնացըս իւր երկնի ինամոցն:
 Իսկ անասունք վայրապար շըրջին անգործ վարատական,
 Եւ Աստուած ոչ ունի զվարկպարազի գործոցն համար:
 Այգուց, շեւ գուարթարար առաւօտուն յեկեց մարդէ
 Զառաջինն ազգ արարեալ ըզնորամուտ լուսոյն գալուստ,
 Պարտ է մեզ վաղալարոյց ի հեշտակիւր կանխել վաստակս:
 Մեզ մընան անդ հովանոցքըզ ծաղկավարս առ ի սըրբէլ,
 Եւ փողոցքըզ գալարուտք՝ միջօրէի մեր ճեմարանք,
 Զորս ոտոցն անտառամուք ի խեղդ արկեալ հեղձուցանեն.
 Երիծաղին զանբաւական մըշակութեամբս, և ըզձանան
 Զեռս առաւել քան ըզմեր՝ քըշտել զմոլին շըռայլութիւն:

Երգիչներդ իսկ այդպիսի և հոյսք կաթեալ՝ հոգեալ զընիս
Երբորքարէք, գեանաթաւալք, զընկատեոիւք և խորտարորք:
Հարկ է քաղել ըզգոսին, թէ սիրիցեմք հեշտի՛ սեմել:

Այժմ՝ ըստ կամքս բնութեան՝ զիշեր հրաման սայ մեզ զհանգիստ: »

Եւայն ամենազեղ շնորհազարգեալ՝ հըրկնեաց անգրէն.
« Կտխտեղիլքն իմ և իշեան, քո հրամայեալ՝ հնազանդիմ ես.

Առաւած այսպէս պատուիրէ, նա քեզ օրէնք է և գու ինձ:

Չըզիտել ինչ աւելի՛ փառք են կընօջ, ուղիղ հանճար:

Խօսակէց ընդ քեզ եղեալ՝ ըզմամանակըն մոռանամ,

Յեղանակք և յեղյեղմունք նոցին համակ ինձ քաղցրանան:

Քաղցր է շունչ առաւօտին, քաղցր է ծագուն առաւօտու

Ուրտխարար նըւագօք առաւօտեալ հաւուց պարուն.

Հէշտ է արեւ ի սըփռելն ի ըլյս գալար փափուկ գրտխախ

Ի սունկոս ի միբզս և ի ծաղկունքս փայլ ի փայլ ցօղով լըցեալս.

Յեւ կակուզ շուրջ անձրեւաց երկիր պարարտ է քաղցրաշունչ.

Քաղցրք գալուստ է խաղաղ և շնորհաշուք երեկորայ,

Եւ անդ զիշեր լըռատեր՝ հըռչակելի թըռչնով իւրով,

Եւ լուսնիւն գեղեցկաւ և գոհարօքն երկնաւորք

Որ կազմեալ զիւրան յօրինեն զաստեղախուռն յուզարկաւորս:

Բայց ոչ շունչ առաւօտին մինչդեռ ծագեալ ելանիցէ

Ուրտխարար նըւագօք առաւօտեալ հաւուց պարուն,

Ոչ արեւ ի սըփռելն ի փափուկութեան գարսասանին,

Ոչ գալարիք, ոչ պըսուզք և ոչ ծաղկիքն ցօղափայլք,

Ոչ բուրսե՞ յեւ անձրեւաց, ոչ շնորհաշուք հանգարտ երեկ,

Ոչ զիշեր լըռատեր հըռչակաւոր իւրով թըռչնօք,

Ոչ սեմելիք ի լուսնակի կամ ի գողգող փայլս աստեղաց,

Չանին ամենեւին ինչ քաղցրութիւն... առանց քո:

« Բայց ազէ առ ինչ աստեղքըդ փայլակեն զգիշերն ի գլուխ:

Ո՛ւմ իցէ շըքեղ սեսիլդ՝ ուր կափայց քո՛ն զաշս ամենայն: »

Կտխտեղստ հտարակաց գարնայց անգրէն պատասխանի.

« Դուտար Աստուծայ և մարգղան, ամենազեղդ իմ կատարեալ,

Յերեկորեայ այսք լընուն աստեղք զընթացս իւրեանց զերկըստ,

Ի ծագաց մինչեւ ի ծագըս մըտանեն և ելանեն՝

Բաշխել ըզլլայն ի պատրաստի ազանց որ չեւ են ծընեալ գեւ.

Չի մի խոր կալցի խաւար զհին տերութիւնն ի զիշերայ,

Եւ շիջուցէ կենազրաւ ըզհամագոյս և ըզընութիւն:

Չափաւոր և մեղմախառըն բոցքըդ ոչ լոյս տան եւեթ,

Այլ յամբք ի քաղմագօք շողինս սասնեն, ջեռուցանեն,

Անուշեն, մնուցանեն. կամ զարփայլինն ազգեցութեան

Արկանեն մասն յամենայն ի զարմազան էից բնութիւնս՝

Որ անեն յերեսս երկրի, և պատրաստեն առ ընգունել

Ըզբուն իսկ կատարուն յարեգականն ի բարկ շողից:

Լըդ ոչ ընդ վայր փայլեն գոքս՝ թէ և չտեսեալք ի խոր զիշեր:

Մի՛ ատեր ընդ միւրսս քո, զի թէ բնաւ չէր մարդ ի միջի,

Պակասէր երկնի նկատող և օրհնութիւնք Աստուծութեան:

Բիւրք բիւրուց հոգեզիմաց շըրլին՝ 'զ աշխարհս աներեւոյթք

Յարթմընի մեր և ի քուն, անլըսելի օրհներգութեամբք

Գովեն զգործս իւր ի զընին կացեալ ըզցայտ և ըզցերեկ:

Չեցի՛ մեր յանառառ յանախ կամ ձայնատու բըրտոցն յեմախ
 Երկնաւոր լըւեալ բարբառս ըզգիշերոյն հասարակաւ,
 Որ երգեն զմեծն Արարիչ մէն մի միայն կամ փոխ առ փոխ:
 Բազում անգամ գունդ առ գունդ ճըսկոզ զուարթունք կամ ջոյլապապէ՛
 Ի նուագերգոզ աղեբախս երկնահանգէս կըտընդոցաց
 Խառնեն ի մի յարմարութիւն հրեշտակերամ՝ զերգոցնն ձայն՝
 Որ զցոյցն ի պահս հասանեն, կամ ամբառնան ըզմիտս յերկինս: »

Չայս խօսեալ, և ձեռն ի ձեռն մըտանեն մէն միայնուկ
 Յերջանիկ տաղաւարն իւրեանց, որ էր ընտրեալ տեղի
 Ի վեհէ տընկազործէն՝ յորտէ հետէ սակզծազործեաց
 Զմաննայն ինչ յորինեալ ի զուարճութեան մարդոյն ի պէտս:
 Կամար նորին թաւախիտ յարկածանուկ հովանաւոր
 Էր հիւսկէն մանուածոյ ի սարկենեաց և մըրտենեաց,
 Եւ որ եւս առնուահելզ՝ ի խընկենեաց թանձըր կողերց:
 Աստի անտի ահանթ և թուփք անուշահոտք և ոտաախիտք
 Պարիսպ ամբարձեալք զաւրաբգեզ կանաչազարգ:

Ետզկին հոյլ վայելչավառ, երին երփն հիրիկ, վարդ և յամիկ,
 Եիւ ծիւ ի վեր փըթթիմազարգ՝ պէսպէս ճամուկ նըկարակերտ:
 Առ ոտս յակինթ մանիշակ՝ քըքըւմ՝ ի հախ նարտաներկ
 Կըզէին զերկիր գունեզ քան զմեծագին քարանց զբրուազ:

Այլ ինչ արարած, շորքատանի՛ հաւ՝ ըզիզ՝ զեռուն,
 Չիշիէր մուտ անգր ունել՝ առ ի մարդոյն մեծարանաց:
 Ոչ ուրեք, և ոչ ի կեզծս առասպելեաց պահուհելոց
 Յառաւել նախրական և զերծ խորան ինչ հովանուտ
 Նընջեցին Պան և Սիլուան կամ օթեցան պայք և Հարունք:
 Ի որընկապան ծաղկապատ ծաղկալըսակ՝ ի բոյր բուսոց
 Հարննացեալն Եւս պընէր նախ զանկողինն ամուսնական,
 Եւ երկնաւոր պարերգակք զառաքատի նուագեցին երգս:
 Այն օր Հրեշտակն հարանեաց առեալ առ հոյր մեր ած զԵւս
 Ի մերկիկ զեղեցկութեան անգ զարգարեալ և ցանկալի
 Քան զՊանգորա զոր օտտեցին գիք պարզեւօք ամենաշնորհ, —
 Աւազ, յոյժ նըմանակիր նըմին՝ ողորմ պատահարան, —
 Երբ ի ձեռն Հեթմեայ տարեալ առ Յապետի պանգոյր սրգին՝
 Վարանեաց զազըս մարդկան ի լար աշտըն զեղեցկաց,
 Առ ի զԴիսյ վրէժ հանել՝ յորտէ խորեաց զախրականն հուր:

Հասեալ այսպէս յիւրեանց ի տաղաւարն հովանաւոր
 Երկոցուն ի միտին, և անգանոր զտեղի առեալ՝
 Դարձան կացին՝ դ բացօթեայ երկնիւք՝ պագին Էին երկիր,
 Արարչին երկնից, օգոյ, երկրի, արփւոյն յոր հոյեխն,
 Լուսանեմ լուսնին զընտի և աստեղեայ վեհ կամարաց:
 « Դու հաստեցեր և զգիշեր, Արարչապետդ ամենակալ,
 Դու և զտիւ՝ զոր ի զլուխ հանաք ի սպաս սակեալ գործոցս,
 Երանիք յընթերակալ միմեանց նըպաստ, ի սեր միմեանց՝
 Որ պըսակ երկանկութեանս է առ ի քէն հրամայելալ:
 Դու և զայս՝ մեծ յոյժ ըստ մեզ՝ ըզգըրզարանս յորինեցեր,
 Ուր պակասն լիութեանն հազորքք, ընդ վայր թափեալ յամպէս:
 Բայց դու մեզ խոտաացար սերունդ ի մէնջ զարմ և զաւակ,
 Որ զերկիր լընուցու, և զանըսպառ քո բարութիւնդ

Ընդ մեզ փառաւորէ և ի զարթնուլս և ի խընդրել :
 Արդէն և արդ ի ժամուս, զհանգիստ քընայ՝ զքոյին պարզեալս :
 Միտքան զայս սասցեալ՝ շարկին օրէնս ինչ ալ ի գործ,
 Բայց երկիր եւեթ պագին՝ Տեանն ի պաշտօն հանդարդին :
 Ջճեառնէ միտեանց առեալ՝ մըտին յալուց հովանոցին,
 Եւ անաշխատք ի թօթափել զոր մեքըս կրեմք ծանր այլակերպս :
 Աս իրեարքս կողմեցան : Կարծեմ թէ ոչ գարնաւ Ադամ
 ի զեղեցիկ ամուսնոյն, և ոչ Եւս ինչ զըլացաւ :
 Ջխորըրդակիր կրօնից օրէնս հարանականի սիրոյն սըրբոյ,
 Որ զինչ և բանք պատճառելեացըն բարրեսցեն զսըրբութենէ,
 Ըղտեղւոյն, զանմեղ կենաց, պիղծ բարեւոյ զսըրբութի Էին,
 Ջոր կիսոց և հրամայէ, զոր և սալ թոյլ ամենեցուն :
 Արարիչըն մեր հրաման սալ մեզ անել և բազմանալ :
 Ո՛վ այն խափան, բայց մարդատեացն՝ սոսի մարդոյն և Աստուծոյ :
 Ռբախ լեր, Սէր հարանագեղ, խորըրդական օրէնք և կարգ,
 Սեան սղբիւր սերընդոցըս մարդկոյնոյ, ստացուած յատուկ
 ի գրաստին՝ ուր ամենայն հասարակաց էին բարիք :
 Քեւ յոնական վարար մուլուցք հալածեցան ի մարդկանէ
 Տարագիր վըտարանդեալք ի պահարացն անասուն շոկս :
 Քեւ հիմեալ ի մտերմութիւն սուրբ և արդար՝ սիրոյն կապանք :
 Եւ հօր, սրբոյ և եղբօր աղապատանք գործազուծ
 ի լոյս և ի ծանօթս եկին անգէն նախ զառաջինն :
 Քաւ յինչն ընդ մեզս երբեք զըրել ըզքեղ կամ ընդ ամօթ,
 Կամ ընդ միտ անել թէ չես ինչ վայելուչ վայրի սըրբում :
 Ալքերակնըզ մըշտարուղի ընտանեսուն անսլուծեանց,
 Որ մահիւնըզ յս պարկշտ քարոզեցաւ և անարատ
 Աս պիտուս և ի հուսն, յոր էլին սուրբք և հայրապետք :
 Աստ Սէր զսոկեղէնան արկանէ զնեալս իւր ի կիր,
 Աստ ըզլանն անշէլ վառեալ և սաւառնի ծիրանաթեւ,
 Աստ սիրէ և զուարնանայ, չիք ի ժամիս վարձկան բողից՝
 Յօր չիք սէր, ոչ խընդութիւն, ոչ փարելի լինել իւրիք :
 Ի հասեւխած չիք վայելն, ոչ յարըունեացըն սիրուհիս,
 Ոչ ի խառն կաքաւս ոչ ի խենչ խաբեայ գիմակս,
 Ոչ ի մենջ զիշերի պար, ոչ ի ցոյզերգըս առափստի
 Ջոր նուագէ անսըւազ առ տարփածուն իւր զեղապանծ,
 Ջոր լաւ եւս էր՝ ընդ վայր թէ հարկաներ քամահարար :
 Արդ սոքա երկաքին ի սոխակաց երգս սրորեալ՝
 Քունէին միտեանց ի զիրկս, յորոց մարմինըն մերկանդամս
 Մազկալից զըմբեթն հոսեր վարզս սրոյ զտոյժ նորոզեր այլ :
 Կընջեցէք, ամուք օրհնեալ, ս՛վ յամենայն ժամ երանեակք,
 Թէ չիւնդրէք երջանկագոյն կեանս և գիտէք չգիտել ինչ ալ :
 Գիշեր զընթացն հասարակեալ էր կոնաճեւ մըթին ստուերուն
 Ի կուկըն բարձրածայր՝ լայն կամարին որ ընդ լուսնով :
 Քերտուրէք ի փղտուրէիցն ելեալ զըրանց յօրինի ժամ :
 Ի ակապ մարտի կարգեալ՝ վառեալ կային ի ցոյզապալան :

Բ

Յ Ա Յ Գ

Ա Ր Տ Ա Դ Ր Ա Խ Տ Ի Կ Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ք

Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԻՐԱԽՏԻՆ յիշատակը և դիպուկածք դարձեալ մեր ուշը գրաւեն, բայց այդերնիս ի ցայգ փոխուի. փոխուի մեր եղանակն ալ, և կարճատեւ երա- նութեան վիճակիս կու յաջորդէ թշուառութիւն անվերջ.

Ու եւս մարդ ընդ Աստուծոյ կամ հրեշտակի կենցաղակէց՝
 Ընդ հիւրս իւր, որ ընտանիք և մարդասէրք էին սովոր
 Գալ բազմել ընդ իւր հանգոյն ընդ մըտերի՛մ բարեկամի,
 Եւ լինել վայրի հաշոյն իւրում հազարդ սեզանակէց,
 Անպարսաւ շնորհելով անզէն նըմին խօսել անմեղս:
 Հարկ է ինձ պտուհետեւ փոխել ի ձայն սղբերգական
 Ի մարդոյն կողմանէ՝ նախաստակոծ խէթ եւ կասկած,
 Հետտանք ուխտանենդ և խեռութիւն վըտարանջող:
 Իսկ յերկնից ի կողմանէն՝ աստ առ տեղեաւ խորթացելո՛յ՝
 Օտարութիւն, գանձութիւն, ցառուք արգար և պատուհաս,
 Եւ գատակնիք՝ որ զազեւից խուռն խուժան եմոյն յաշխարհ,
 ԸզՄեզս և զչարաշուք ըստուեր նորա մըթին՝ ըզՄահ,
 Եւ զազցաւոր տառապանս՝ ըզկարապետը ժանս մահուն:

Մեր նախածնողաց երջանկութեան վերայ վաւեր և անվաւեր քիչ յիշատակք, իսկ դժբաղդութեանն վերայ կան շատ աւելի յորոց իբրեւ ազգային զնախ յիշեալ Եպիփանու զրոյցն ի մէջ առնումք. «Յերրորդում» ժամու չորեքշաբաթին երրորդի, եկեալ առանց իբիք պատճառի սաստա-» նայ... և գտեալ զԵւա յեզր գրախտին և յարտաքին բոլորին, և սկսաւ» պատերազմել... Եւ շրջէր Եւա փառաւորելով զԱստուած յեթնեբորդ» եզր պարունակին աստուածատունկ ազգի ազգի ծառոցն գեղեցկատեսիլ» քաղցրաճաշակ և բարեհամ, այլ և եթնագոյն վայելուչ շարամանեալ» առ տեսութիւն հայեցողացն... Եւ գտեալ զնա թշնամին միայնակ՝» խօսի ընդ նմա միայն բերանով օձին անիծելոյ... Իբրեւ լուաւ նախա-» մայրն զնենգաւոր և զմահացու բանս, որ ծածկեալ էր աստուածային

» անուամբն՝ լինիջիք իբրև զԱստուած ճանաչել զբարի և զչար, աստուա-
 » ծութեան փառաց ցանկանալով առ ժամայն՝ որպէս ի մտաց անկեալ
 » եղև այլ յայնչափ խնդութենէն հատեալ եղև սիրտն զհետ անհաս
 » խորհրդոյն. ուստի և ամենայն բնութիւն արարածոց զիտացեալ թէ հա-
 » ւանեցաւ տանել զկամս խարողին, (վասն զի զեռ եւս միաւորէր Արա-
 » բիչն ընդ արարածս, զի չեւ էր տակաւին անիծեալ առ ի նամանէ). և
 » ամենեքեան տահասարակ հեծեծելով երկնեցին՝ հոռուչս ի վեր առ արա-
 » բիչն առաքելով... Լուսինն որ լի էր լրմամբ ի լոյս... ունայնացեալ
 » եղև առ ժամայն ի քաղցրահայեաց լուսոյն և նսեմացաւ, սակայն զբո-
 » լորակն ամբողջ պահելով, և այն էր փուլ առաջին...»³⁵ » :

Երանազուրկ նախածնողաց առաջին զգալի փոփոխութիւնն ըստ բազ-
 մաց կարծեաց է զրկուած յարտաքին լուսափայլութենէ մը որ իւրեանց ան-
 մեղութեան զգեստն էր. յայս միտս ասէ մեր շնորհալի հոգեբազում վասն
 նոցա

Յորում ցընծայր զուարևացեալ անտիրական խնդութեամբ,
 Քանզի զԱստուած տեսներ ժիշտ խոնարհեալ ի գրախտին,
 Յորմէ՛ զլուսոյն ճոռագոյր տըզուորէր ի յինքեան:
 ... ի տիգ պատմունանին առաջնոյ
 Որով պճեալ զարգարիւր ի փառքս մարզն առաջին

Դարձեալ հնազոյն երգիչն. « Լոյսն ի հօրէ լուսոյ ծագեալ Լուսախօյն
 ցարդարեաց զԱզամ ի դրախտին եղեալ անմահ անկոցն երկրագործ :

... Իսկ պատանօք բանարկուին ի գրախտէն արտաքս անկեալ
 ի յուէժ կենդանութենէն, մահաւիթ պազով մեռեալն
 Մեթկացաւ ըզփառս անըսուուեր լուսոյն:

Փոխանակ փառապանծ լուսոյ՝ ամօթոյ սեւութիւն կու պատէ զմեղու-
 ցեալ նախածնողս. փոխանակ երանական զգացմանց խիղճ և երկիւղ տազ-
 նապեն զյանցաւոր սիրասն. արտաքին կերպարանաց ծածկոյթ առնուն
 կարելով զտերևս թզենուոյ, (որ և ցուցանէ զբարեխառնութիւն կլիմայի
 երկրին յայնժամ, ուր հիմայ չի գտուիր այս ծառս) իսկ ներքնոյն ոչ ինչ
 դասնեն պաշտպանութիւն, մինչեւ ինքնին Տէրն, ըստ սովորութեան իւ-
 բում, որպէս իմանան մեկնիչք, երեկոյեան հովուն ատեն կու գայ ի
 գրախտն. յանցաւորքն սոսկալով ի հեզաձայն զգնալոյ նորա փախչին
 և և թաքեան Ազամ և կինն իւր յերեսաց Տեառն Աստուծոյ ի մէջ ծառոց
 » գրախտին: Եւ կոչեաց Տէր զԱզամ, և ասէ ցնա, ո՛ր ես: Եւ ասէ լուսայ

» զձայն քո ի դրախտի ասա՝ և երկեայ. քանզի մերկ էի և թաքեայ: Եւ
 » ասէ ցնա. ո՞ սպտմեաց քեզ թէ մերկ ես. բայց եթէ ի ծառայն յորմէ
 » պատուիրեցի քեզ՝ անտի եւեթ չուտել, կերա՞ր արդեօք ի նմանէ: Եւ
 » ասէ Ադամ. կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառայ անտի և կե-
 » րայ: Եւ ասէ Տէր Աստուած ցկինն. զի՞նչ գործեցեր զայդ. և ասէ կինն.
 » օձն խաբեաց զիս, և կերայ: Եւ ասէ Տէր Աստուած ցօձն. փոխանակ
 » զի արարեր դու զայն, անիծեալ լիջիր դու յամենայն անասնոց և յա-
 » մենայն գազանաց երկրի. ի վերայ լանջաց և որովայնի քո գնացես,
 » և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. և եղից թշնամութիւն ի
 » մէջ քո և ի մէջ կնոջդ, և ի մէջ զաւակի քո և ի մէջ զաւակի գորս.
 » նա սպասեսցէ քում զլիտոյ, և դու սպասեսցես նորա գարշապարի: Եւ
 » ցկինն ասէ. բազմացուցանելով բազմացուցից զտրամութիւնս քո և զհե-
 » ծութիւնս քո. տրամութեամբ ծնցես որդիս, և առ այր քո դարձ քո, և
 » նա տիրեսցէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. փոխանակ զի լուար ձայնի կնոջդ
 » քոյ և կերար ի ծառայ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն
 » չուտել, և կերար ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ի զործս քո. տրամու-
 » թեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց. փուշ և տատտակ
 » բուսուսցէ քեզ. և կերիցես զբանջար վայրի. քրտամբք երեսաց քոց
 » կերիցես զհաց քո, մինչեւ զարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր
 » և ի հող դարձցիս: Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի
 » նա է մայր ամենայն կենդանեաց: Եւ արար Տէր Աստուած Ադամայ և
 » կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս, և զգեցոյց զնոսա. և ասէ Տէր Աս-
 » տուած. ահա Ադամ եղեւ իբրեւ զմի ի մէնջ գիտել զբարի և զչար:
 » Եւ արդ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու ի ծառայն կենաց, ուտիցէ և
 » կեցցէ յաւիտեան: Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէ
 » անտի փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ. և եհան զԱդամ և
 » բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան. և հրամայեաց քերորէից
 » բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառայն կենաց»: (Մինդ. Գ. 8-24):

Այս ծանրակշիռ պատմութիւն որ բոլոր մարդկային կենաց գատա-
 պարտութեան և փրկագործութեան վիճակն յայտնէ, համաշխարհական
 մտածութեանց նիւթ թողլով, միայն մեր պատմութեան վերաբերեալքը
 յուշ ածեմք: — Յետ յանդիմանութեան և վճռայն Աստուծոյ որ այս սրբ-
 տասարուու խօսքով կու լմընայ «հող էիր և ի հող դարձցիս», Ադամ
 կ'անուանէ իւր կողակիցը կեանս. բայց այս երկու գիպուածին մէջ հաւա-

Նօրէն միջոց մը անցաւ, զի չէր իսկ կարելի որ այնպիսի սոսկալի դատապարտութեանն արհաւիրքը մէկէն մոռնալով կամ անփութալով Ազամ իւր շարեաց պատճառ սիրելին ստածէր. և զարմանք չերեւայ ումանց եթէ յետ մեղաց և զատապարտութեան՝ մէկէն ի մէկ դրախտէն դուրս չեմք հաներ մեր նախահայրը, վասն զի Աստուծոյ իսկ դիտումը կու նկատեմք ոչ այնքան զանոնք ի գրախտէն մերժելն, որքան յաշխատութիւն և ի մահ զատապարտելն. զի և զայս ի սկզբանէ սպառնացեր էր և ոչ ի գրախտէն վճռուելն. ապա թէ ոչ ի նմին իսկ վայրկեանի մեղացն պէտք էր վճռուելին. իսկ Աստուած հաւանօրէն յետ բազում ժամուց երեկոյեան այցելութեան սովորական ժամը ընտրեց նաեւ զատաստանին: Յայսմ միջոցի Ազամ որ մարդ նշանակէ յերբայական³⁴ որպէս և ի թուրք լեզու, կամ ըստ սմանց հոգեփեհ կամ կարմիր հոգ (աստմա)՝ անուանէ զկողակիցն Հեւա կամ Եւա, ըստ մեզ կեանս, որ երբայերէն նշանակէ կեանք. և հոս մեք պէտք է գիտեմք որ մեր լեզուին մէջ համածագ են կիս և կեանք բառք, և երկրորդն անեզակի է, տուջնոյն ալ յոգնականն՝ անսովոր ձեւով:

Յետ այս տիրական և իմաստասիրական գործոյ Ազամայ, որ իր երկրորդ մարգարէութիւն կրնայ կոչուիլ, Աստուած իբրև գթած և խնամող հայր՝ կու պատրաստէ մեր նախածնողաց հասաատուն զգեստ մը մաշկեղէն, յապաւէն մերկութեան և օդոց փեսու: Եւ զարձեալ կ'երեւի միջոց մը ինչուան յետ իբր ծաղրտրանութիւն մը Աստուծոյ ըսելուն «Ահա Ազամ» եղև իբրև զմի ի մէնջ» և զանոնք արձրկելուն արտաքս ի դրախտէն. և հոս ալ յայանի կ'երեւայ վերը ըսածնիս թէ դրախտէն դուրս հանելն չէր Աստուծոյ գլխաւոր նպատակը, այլ զի չուան կենաց ծառոյն պողէն՝ որով և չապրին յաւիտեան, այլ ըստ զատապարտութեան մեռնին ի ժամանակին:

Մինչև արտասահմանելոց հետքը բռնելու և նոր բնակութիւնը բընտանելու, յետին աչք սը տոնք մենք ալ դրախտին, թէ ի՞նչ եղաւ իր ծաւերոփ. — Աստուծոյ կարգեալ զգուշութեան քերովբէն կամ քերովբէք և բոցեղէն սուրն կ'իմացընեն որ չաւրուեցաւ շուտով³⁵, այլ և բնական մեծ արգելք սը չկար ներս մանելու, ոչ երկրի բարձրանալով և ոչ տակն ու վրայ բլլալով, բայց թէ ինչուան ջրհեղեղ անաղարտ և անմուտ մնաց, յայանի չէ բայց հաւանական է թէ այնչափ երկար ժամանակի մէջ երկրաբանական փոփոխութեամբք այլայլեցաւ. յառաջ քան զըրոց ներգործութիւն հրաբուլխից սաստկութիւնն կրեց³⁶. Թերեւս զանդկաց աւանգած կլի-

մայի փոփոխութիւնն ալ կամաց կամաց պարարտ և ջերասէր անկաբերութիւնը խանդարեց, վերջապէս կենաց ծառն ալ (որպիսի և ըլլայ, բայց միշտ սովորական պաղատու ծառ մը) իր զօրութիւնը կամ՝ բուսական կեանքը կորոյս կամ կորաւ. և զի բուն ասոր մօտենալն էր արգիլելալն, այնուհետեւ գրախտն ալ իր շրջակայ երկրին նմանելով՝ կրնար մարդկանց հաւասար բնակութիւն ըլլալ: Կու ըոնմբ հոս շատ մը արեւելեան աւանդութիւններ³⁷ և բանասիրաց վէճեր զբնութենէ այն երկու զարմանալի ծառոց և անոնց վախճանին, և այն բարեպաշտ կարծիքը թէ կենաց ծառոյն փայտէն կամ անոր ճիւղէն կազմեցաւ Փրկչին խաչն որ ջրհեղեղի տեղափոխութեամբ ի Պաղեստին կամ ի Լիբանան տարուեր էր ի նահապետաց Եբրայեցւոց. և զայս կարծիս երգէ մեր սրբազան շարականն ալ.

- « Արեւելք ի գրախտին ընծայեցին զփոյտ խաչին .
- » Եւ եկեալ կատարիւր ի տեղւոյ կառափման ,
- » Բարձրանայր ի դիտին տարբեղէն փայտակերտն՝
- » Սուրբ քառաթեւն պահապան անձանց մերոց :

Դարձեալ միւսն.

- » Ո՛վ պահապան որ ծագեցար յԵզեմայ
- » Նըշան յազթութեան ընդգէմ աներեւոյթ թշնամւոյն » :

Թողլով ծանր և վսեմ վկայութիւններ, յիշենք կամ աւարտեսք ուսկական և տխորժական աւանդութիւն Սրմանց լեռանց դրախտասահման բնակչացն Հայոց, որք դեռ ի բարձրատափս բլերադեր լեռանցն կու ճանչնան զյատակ դրախտին: Յետ արտասահմանութեան նախածնողաց՝ կ'ըսեն³⁸, Աստուած պահապան մը գրեք էր գրախտին որ արգելու զմարդիկ ի ներս մտնելէ. ուր անմեղ կենդանիք թաղատ կենային, և ծովադեր մէջ պայծառ կարապներ կու լուզային: Բայց զիսուածով օր մը պահապանին հետու գտուած ատեն որսորդ մը ելլալով բարձրաւանդակին վերայ կու մտնէ ի գրախտն. կու զարմանայ բնականապէս թէ տեղոյն գեղեցկութեանը և թէ կենդանեաց վերայ և աւելի այն սպիտակ կարապներուն վերայ, որոնց վերայ կու հասցընէ իր աղեղան զիպաձիգ նետերը. և ուրիշներէն զատ պահապանին սիրական կարապն ալ կու զարնէ և որսերը առած կ'իջնայ իր խորանիստ հովիտը ուր կու բնակէր: Քիչ ատենէն պահապանն կու հասնի կ'իմանայ եղածը, և կոկծալով մանաւանդ իր սիրական կարապին վերայ կու լայ կու պաղատի երկնից որ պարգեւեն իրեն կորուսեալ մտե.

րիմը: Իր առաջին հաւատարմութեան համար Աստուած կու լսէ ազաշա- նացն, և մինչդեռ որսորդն ուրախութեամբ և պարծանօք որսերը իր ըն- տանեաց զիմացը կու գնէր, սիրելի կարապն կենդանացեալ կու թռչի դառնալու յիւր ծովակը. բայց դարձեալ մահացու նետ սր կու հասնի և օգուն մէջ կու վիրաւորէ զնա: Այս բանիս Աստուած ալ բարկանալով կու ցամբեցընէ զծովադրերն, քառասոջ գեաերը կու դադրին գետինը կու չոր- նայ, բոյսերն կու նուաղին, սուլ կ'ըլլայ. շատ մարդ և անասուն կու մեռնին, վայրենի որսորդն ալ անոնց հետ. Աստուած զըրախան իր բնակչօքն կու փոխադրէ անմարդաբնակ տեղ մը. բայց մնացեալ մարդկան ազաշանաց ալ լսելով՝ զրախտին հին լերան վերայ ուր որ այն սրբազան կարապին արիւնէն կաթիլ մը ընկեր էր աղբիւր մը կու բղխէ, և նորէն զերկիրը կու գալարացընէ. ասկէ կու ձեւանան Պինկեօլի լճակներն և այդ անունը կ'առնուն. և ոչ միայն այդ լճակը այլ և դարձեալ չորս գետեր կու բղխեն անկից և երկրիս չորս կողմը կու դիմեն, թէ և յետոյ քիչ մը կու փո- խուի ընթացքնին և այս գետերս են Երասիս ընդ հիւսիս, Դուզլա շայ յա- րևելս, Լեչիկ ընդ հարաւ, Դերջանայ ջուրն ընդ արեւմուսս:

Դասնամբ հիմայ մեր ի դրախտէն արտաքսեալ նախածնողաց երկրորդ առաջնական տեղը տեսնելու յաշխարհի մերում, որպէս և բազմաց ընդու- նելի է հոն ըլլալն³⁹: Սուրբ Գիրք յայտնապէս կ'ըսեն թէ Աստուած բնա- կեցոյց զանոնք յանդիման դրախտին. և զի արգելք դրած էր հոն մտնե- լու, յայտ է որ դրախտէն հեռու չէր իրենց առաջին բնակութեան տեղը. և ոչ միայն մերձաւորութիւնը այլ և կողմը կու նշանակուի ըստ ոմանց թարգմանութեան, յարեւելս Եդեմայ ըլլալ. որ է ըստ իս ի գետահով- տին Երասիայ, թերեւս ի հարաւակողմն գաշտին Բասենու: Որք զգրախտը աւելի ընդարձակ կամ աւելի դէպ յարեւելս կու համարին Ազամայ բնա- կութեան տեղն ալ Մարաց կամ Ատրպատականի կողմը կու գրեն⁴⁰. Թե- րեւս աւելի պիտի հաստատուէին յայս կարծիս՝ եթէ գիտնային որ մերձ յԱտրպատական ի մեծն Աղբակ գաւառի Հաղամակերտ քաղաքն կայր, իշխանանիստ Վասպուրականի նախարարաց, Նախայիշեալն Եպիփան օրուան սը ճանապարհաւ հեռու կ'ըսէ զբնակութեան տեղին յԵդեմայ, և նոյն կու համարի ընդ Նայիդայ կամ Նոդայ ուր բնակեցաւ և կային յետ սպանու- թեան եղբօրն, յանդիման Եդեմայ, և հաւանական է երկուքին բնակու- թիւնն ալ նոյն ըլլալ: Իսկ այս Նայիդս⁴¹ ոմանք ըստ Եբրայական նշա- նակութեան թափառիկ կամ երերուն կայքնի համար կ'իմանան, որպէս թէ երերական կենօք բնակեցաւ յանդիման Եդեմայ, բայց հասարակաց

կարծիք է թէ յատուկ անուն է տեղւոյն, որ թերեւս նոյն պատճառաւ տառապեալ և աստանական կենաց նախահարցն՝ կամ կայէնի, այնպէս ըսուեցաւ, և այնպէս թարգմանեցաւ ի Մսլխիսէ յԵրբայականն. որ ըստ մեզ կրնայ ըսուիլ Երեբիւն, որով անուամբ զանազան տեղիք կան ի Գեղարունի, ի Սոթ և ի վայոց ձոր Սիւնեաց, և մօտագոյն եւս Երեբունքն ի Շիրակ գաշտակից Բասենոյ: Քիչ մ'աւելի կամ պակաս մօտ՝ սակայն այս ստիճաններէն հեռու չէր Աղամայ տունն, և ոչ մինչեւ ի Սէյլան կղզին բացաձգեալ, որպէս ասեն արեւելեայք և մահմետականք, և ի մերոցս իսկ ոմանք⁴² ուր և ի միջալայր կղզւոյն ամբառնայ քարալեռոն, յորոյ գագաթան ցուցանեն ստից կնիք մը. զոր ասեն Աղամայ ըլլալ՝ երբ ի դրախտէն կամ յերկնից անկաւ հոն. և ոտից կնքոյ մեծութիւնն 70 կանգնաչափ, այնքան մեծ հսկայ սեպելով զԱղամ թէ և երկու ոտնաչափէն աւելի մեծ չըսեր ականատես մը⁴³. այս առասպելի սկիզբը ուստից գալն յայտ չէ, բայց բաւական հին է, և մինչեւ հիմայ Աղամայ Սար կ'անուանի տեղին, El Pico d'Adam ըստ Բորդոզալաց:

Աղամայ հասակին, գեղեցկութեան, գիտութեան, մարգարէութեանց, լեզուին, գրուածոց, գիտից և այլն վրայ եղած աւանդութիւնները կամ առասպելները՝ կը թողումը մեզմէ հեռու. ճշմարիտ և հաւանական եղածները յիշեմք. որոց առաջինն է Աղամայ ապաշխարութիւնն իր յանցանաց վերայ, և զղջական կեանք մը անցընելն, որ թէ Ս. Գրոց և թէ Ս. Հարց վկայութեամբք և եկեղեցւոյ հաւանութեամբ ընդունելի է, մանաւանդ յարեւելեան եկեղեցւոյ և ի մեզ, որք Ս. Նախահարց պարագլուխ կարգեն և տօնեն զԱղամ: Այս ապաշխարութեան ոգևոլ զգուանօք, կ'աւանդեն գրեթէ ամենեքեան, որ Աղամ չէր մօտենար տա Եւս, մինչեւ Աստուծոյ հրամանաւ կամ իր կամօք յանձն առաւ մահկանացուաց հայր ըլլալ: Այս հրաժարման և կուսական միջոցը ոմանք 5 օր միայն կու դնեն, սմանք շատ տարիներ, ինչպէս 15 կամ 30 կամ 70 և մինչեւ 100⁴⁴. հաւանական է դրախտէն ելլալուն և կայէնի ծննդեան միջոց ժամանակ մը գնելն. և այդկէ ետեւ կամ կայէնի ծնունդէն կու սկսի պատմական ժամանակն և ամենայն ժամանակագրութիւնք. անկէ առաջ թէ դրախտին մէջ և թէ անկէ դուրս եղած ժամանակ, թէ օր թէ տարի յայտնի չէ. Աղամայ 930 ասարուան կեանքն ալ այդկէ կու սկսի համրուիլ⁴⁵:

Ուրեմն ի սկիզբն կամ յառաջնում ամի ընդհանուր պատմութեան և ժամանակագրութեան՝ եղաւ առաջին ծնունդ նախահարցն, կային որ նշանակէ յերբայեցին Ստացուած. և այդպէս անուանեց Աղամ ըսելով «Ստացալ

» մտրդ Աստուծով» և երանի թէ Աստուծով ալ պահեալ ըլլար նախածին մարդն այն. որ մարդկութեան գուռը բանալով անոր ամենայն գտան և անարդ կրից սկզբնաւորն ալ եղաւ. թէ և զղջացեալ Աղամ, այլ ընդ անի-ծիւք էր, և ապականեալ բնութեամբ ծնաւ իր անպրանիկը: Շատք կ'աւան-զեն թէ իրեն կին եղած քոյրն ալ իրեն արզանդակից էր և կոչէր ըստ զանազանից կամաս, կայմանա կամ Քուդրանան կամ կլիմա, Ղերտոյա, կամ Ազուրա կամ Ազրուհ, Ապուզա կամ Առատ կայմանի. այսպէս և վասն Աբելի և ուրիշ զաւակաց կ'ըսեն ջուխտակ ծնած⁴⁶. սակայն մեզի հաւանելի չերեւար, այլ նախ և միայն ծնած կային, և յետոյ այլք: Անոր և Աբելայ Մննդեան միջոց տարի մը կ'իմանան մեկնիչք հասարակօրէն. բայց որովհետեւ Ս. Գիբք Աբելի ազգաբանութիւն չեն ընել, յայտ չէ ծննդեան ժամանակն. զոր աւանդօղք 30 տարի յետ կայէնի համարին⁴⁷. և իրեն ալ ծննդակից քոյր և կինը անուանեն Աբելուհի, կամ Եմա, Ել-մուզրա, Ազետովբա, Դիլորա կամ Ղեպորա կամ Ղերտոյա կամ Ղեսու-րա, Ուվեն կամ Աւվիկա, Դեկրա կամ Երոկրա և այլն:

Հարկն և Աստուծոյ հրամանն իսկ կամ վճիռն ստիպել էր զԱղամ երկրագործութեամբ իր կենաց ապրուստն ճարելու. երկրագործութեան անբաժան ընկեր է անասնադարմանութիւնն, զոր նոյնպէս հոգայր Աղամ քանի որ ուրիշ օգնական չունէր. մեր աւանդասիրաց մէկն յայտ ալ Աստուծոյ խնամքը ցուցանէ. «Եւ բերեալ (հրեշտակի) եզն՝ հնազանդեցոյց » նմա, նովաւ վարել և վաստակել, գործել զերկիր, և ի պաղոյ նորա » ուտել և լիանալ. և հրամայեաց ի պաղոյ անտի բաժին հանել Ասաու-» ծոյ»: — Ասոնք էին Ալամայ սովրեցուցած արուեստքն առ որդիս իւր, որոց անգրանկանն՝ կայէնի՝ երկրագործութիւն յանձնեցաւ, Աբելի՝ հո-վուութիւն: 30 տարուան էին, ըստ Եպիփանու, երբ աշխատիլ սկսան ի դաշտի և յարօտս. իսկ ըստ այլում 20 տարուան էր Աբէլ առաջին հո-վիւն և անմեղ ու ցանկալի հովուութեան նախատիպն, երբ հօտը սարաւ արածելու: Երկուքին ալ ազդած էր հայրն մարդկութեան երախտապարտ զգացմունք և պաշտօն առ տուիչն ամենայն բարեաց. և որպէս առաջին յանցաւոր, տրդպէս ալ առաջին քուարար կամ քահանայ եղած էր, պա-տարազաւ պաշտելու զԱստուած: Ըստ այսմ և որդիքն յանպիման պախ-տին իրենց վաստակոց արգասիքէն մասն կամ ողջակէզ հանէին Աստու-ծոյ. բայց իւրաքանչիւր ըստ սրտի իւրում, կայէն ակամայ և ազահօրէն, Աբէլ առատապէս և կամովի. վասն այնորիկ Աբէլ հաճոյ և սիրելի էր Աստուծոյ և ծնողացն, կայէն ոչ նոյնպէս: Աստի նախանձն նորա և եղ-

բայրասպանութիւն որում ուրիշ և աւելի զգայական պատճառ մը կ'աւանդէ Եպիփան և այլք. այսինքն զնախանձ կայէնի ընդ քոյրահարսն Աբելի ընդ Աբելուհին Ելմուզպա, զոր փոխանակ Մննդակցին իւրոյ կ'ուզէր առնուլ յեղբորէն, և Ազամ ոչ թողոյր: Եւ վասն այսորիկ, ասեն, ուզեցին զոհ մ'ալ մատուցանել և յԱստուծոյ նշանով մը խմանալ իր կամքը: Այս պատարագն է զոր Ս. Գիրք այլ յիշեն, միանգամայն և զնախ պատարագի և զընտրութիւն Աբելի յանդրանկաց և ի պարարտաց հօտին, զհանելին Աստուծոյ ընդ պատարագ նորա և զհանելին ընդ պատարագ կայէնի. բայց զնշան հաճութեանն կամ տհաճութեանն ոչ յիշեն. որ ըստ աւանդողոց էր հողմն և հուր: Կայէնի զոհն կամ նուէր էր հասկ ցորենոյ, այլ վտիտ, և փուշ. իսկ Աբելին՝ ըստ Եպիփանու ընտիր « գառն մի տարեւոր » արու սպիտակ որպէս զձիւն նորաբեր, ամենեւին ոչ ունելով արատ » ինչ... յեղջերացն մինչեւ ցոտս և ցծայրս կնդտկացն»: Կամ ըստ այլոյ վարդապետի մերոյ գառն մի՝ որ « հազար և մէկ պուտ ունէր », զոր վաղուց պատրաստել էր Աստուծոյ նուէր բայց սպասէր որ եղբօր հունձքն հասնին և միաբան մատուցանեն: Մատուցարան կամ սեղանն էր ըստ Եպիփանու մօտ ի դրախտն երեք ասպարիզօք, « տեղի լալոյ և ազօթե- » լոյ առ Աստուած... Եւ էր անդ բնաբար վէմ հաստտեալ իբր քաւա- » ռաջ... բարձրագոյն իբրեւ երեք կանգնաւ»: Շատ հուանելի է այդպէս բարձրացեալ քարի սը վերայ պատարագեալ նախահարցն, վասն զի ամենէն հին սեղանքն, յաւուրց Արահամու, այդպիսիք են առ ամենայն ազգս: Կայէնի նուէրքն սեաւ ամպով և մրկոց ցրուեցան ըստ աւանդութեան, Աբելին պայծառ կրակով մը յնդունելի եղաւ և լոյսն իջաւ Աբելի վերայ⁴⁸: « Եւ տրտմեցաւ Կայէն յոյժ. և խոնարհեցան անկան երեսք իւր: Եւ ասէ » Տէր Աստուած ցկային. Ընդէր տրտմեցար կամ ընդէր խոնարհեցան » անկան երեսք. քո. ո՛չ ապաքէն եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ » բաժանես մեղար: Լուռ լեր, առ քեզ լիցի դարձ նորա, և դու տիրես- » ցես նմա »: (Մն. Գ. 67): Յետին խօսքով կ'իմացընէ Աստուած որ Կային իբրեւ անդրանիկ ունէր իրաւունք սը եղբօրը վերայ, և աստի այլ գուշակուի որ ոչ տարւով մի՝ այլ տարեօք մեծ էր քան զնա: Բայց և աստուածային յանդիմանութիւնն և մխիթարութիւնն անգամ չազդեց ռեսակալ սրտին. որ ատելութիւն և վրէժ մտածէր եղբօրը և անտի բերաւ ի խորհուրդ սպանութեան՝ առաջին և սրտառուչ սպանութեան յանդիման անմահ հունտին Եպիփան, արժանի քան զամէն առիթ սղբերգութեան, որպէս և զբազումս յորպորեաց եղբերոցել զնոյն, յորս վեհագոյն կեանք Գերմա-

նացի: Ս. Գիրք Համառուտի կու նշանակին այս առաջին մարդագրուելի գիտութեամբը՝ « Եւ սուէ կային, ջհարել եղբայր իւր « Եկ երթիցուք ի գաշա: » Եւ եղև իրբև չոգան ի գաշա անգր, յարեաւ կային ի վերայ Աբելի » եղբոր իւրոյ և սպան զնա »: (Ծնն. Գ. 8):

Աբելի կենաց կամ սպանման տարին ալ յայտնի չէ, իսկ կարծիքն են թէ էր 20 կամ 30 կամ 34 կամ 40 կամ 129 տարուան: Իսկ սպանման տեղն կոչեցաւ Բերան երկրի, ըստ պատմչի միոյ՝ մերոյ անշուշտ Առաւմտայ առ կային ըսածէն Հեաեցընելով, թէ « Գոռուա՞ն արեան եղբոր » քո բողոքէ առ իս յերկրէ և արդ անիծեալ լիջիր զու ի վերայ երկրի, » որ երաց գրեթե իւր ընդունել զարեւն եղբոր քո ի ձեռաց քոց »: Այս առաջին անպարտ արեան Համար կ'տւանգէ վարդապետ մ'ալ, թէ և յետ Թագելոյն ի ծնողացն չէր դադարէր ի բղխելէն, այլ հսկէն զուրս կ'իլլար ինչուան որ Ալամ ալ մեռաւ և ի հոգ մտաւ, տպա Աբելի մարմինն ալ հանդարտեցաւ իր հօրը քով:

Այս առաջին և պփփալի սպանութեան, որուն թատր եղաւ մեր աշխարհը, Առաւուած եղաւ գատաւոր և վրէժխնդիր. և անզեղջ ու լիրբ սպանողը անիծեց, տառապանօք տշխատիլ գործել զերկիր, և չգտնալ անկէ ապրելու բաւակտն զօրութիւն, վասն այնորիկ երերեալ և տատանեալ կեանք մը անցընել տեղէ տեղ: Իմացաւ կայէն պատժիցն սաստկութիւնը, և յուսահատ և զզուելի կենաց գառնութիւնը. վասն այնորիկ լաւագոյն Համարէր զմահ, փոխանակ մահու եղբորն, և սպանուիլ փոխարէն սպանմանն. սակայն Առաւուած սպանչին խիղճն իրեն կենդանի դահիճ թողուց, գոնէ շատ երկայն տտեն, ի սսկուա՞ն տեսողաց և տպագայից. և սպանացաւ ալ եօթնպատիկ պատուհաս տնոր՝ որ զկային սպաննէ. նշան մ'ալ դրաւ վրան. զոր տեսնելով չսպաննեն զնա: — Այս նշանն շատք կարծեն սեւութիւն մը երեսաց, կամ ճակատն վերայ սեւ պիսակ մը կամ բոր մը. և ոմանք ռամկարար՝ կոտոր մը, որով անասնոց նմանութիւն մ'ալ կ'ընծայեն. և ոչ միայն կոտոր՝ այլ և կ'ըսեն ոմանք (ի մերոցս) ձայնաւոր կոտոր որ միշտ գոչէր « կային եղբայրտոպան » այսպէս և ուր անցնէր « տար ու քար » ձայնէր և ասէր կային եղբայրասպան⁵¹ »:

Յետ անիծիցն կային բնակեցաւ ի Նայիգ (Երերօնք) որ էր ըստ Մեթոթոսի՝ « ի դաշտին ուր սպանաւ Աբէլ »: Եւ յետ այնորիկ ըստ Ս. Գրոց ծնաւ իր որդին Ենոզը, որ նշանակէ յերբայեցին Նոթիբաւ. և այս անուամբ քաղաք մ'ալ շինեց. որ է առաջին քաղաք շինեալ ի վերայ երկրի. որոյ տեղն ոմանք հեռու աշխարհներ կու բնտնեն ուր որ զԵդեմ

ալ կու տանին. իսկ սմանք Հեկիոփքի կոչեալ ժողովրդեան երկրին մէջ, որ էր ի Հ. Մ. Մայր Պոնտոսի ընդ մէջ Ճորոխի և Փասիսի գետաբերանոց. այլ տեղն պէտք էր ըլլաւ ի Նայիդ յարեւելս Երեւոյ, և ոչ յարեւմուտս⁵³ : Տեղէն աւելի նշանելի է շէնքն, քաղաք կոչմամբ, որ ցուցանէ բաւանդակ ընդարձակ և ամուր շինուած մը. զոր կ'երեւայ թէ շինեց Կային երբ բաւական շատցեր էին Ալամայ որդիքն և Թոռունք և զինքն ատողք, որոց թշնամութենէ վախնալով գուցէ այդ պատասպարանը կանգնեց : Կայինի կ'ընծայուի (Յովսեպոսէ) զիւտ կամ հնարք չափուց և կշռոց, սահման բաժնելու, և աղեղն որսորդութեան, թերեւ և գործի պատերազմի. որուն այլեւայլ զէնքերն ալ նոյնպէս Կայինի կամ որսուց Կայինի կ'ընծայեն : Եւ զնոյն ինքն Կային հասարակաց աւանդութիւնն իւրահնար զինուն զոհ եղած կու ճանչնայ, սպաննալ ի Ղամեքայ ի Թոռնորդոյ Թոռան իւրոյ, այսինքն իր վեցերորդ ազգի սերունդէն. որուն համար կ'ըսեն Ս. Գիրք յեա աւարտելոյ զազգաբանութիւն Կայինի, թէ Ղամէք երկու կին ունէր Ազգա և Սելլա որոց ըսաւ օր մը. « Լուարուք ձայնի իմում կանայք Ղամեքայ և » ունկն զիք բանից իմաց. զի այլ սպանի ի վերս ինձ և երիտասարդ ի » հարուածս ինձ. զի եթէ եթն անգամ վրէժք խորեցցին ի Կայինէ, » ապա և ի Ղամեքայ եթանասնեկին եթն⁵⁴ » : Ասոր վերայ կ'աւելցընէ աւանդութիւնն, թէ Կային անասնոց մորթ հազած անտառաց մէջ թափառէր. օր մը Ղամէք ալ որսի ելած՝ անասուն կարծեց կնա (մանաւանդ որ աւանդութիւնն կոտորաւոր համարի զԿային) և նետահար սպանեց. յետոյ իմացաւ որ իր թշուառ նախահան էր և ցաւելով պատմեց իր կանանցը. որք և աղօթիւք հաշտեցուցին զԱստուած և Ղամեքայ վերայ պատիժ չեկաւ : – Կայինի մահուան⁵⁴ տարւոյն վերայ ալ զանազան կարծիք և ինդիր եղած է. շատք 860 տարի ապրած կ'ըսեն. իսկ ոմն ի մերոց⁵⁵ ասէ. « Չկայինի ամքն հաւաստեալ գտի ի պատմագրի իմն, որ 870 ամաց » սպանաւ, ասէ » : Այսչափ երկար կենաց ատեն Կայինի միշտ յերերքս ի Նայիդ մնալն հաւաստի չէ, բայց թէ և հեռացեալ՝ ոչ աւելի քան զՀայաստան : Սեւանայ ծովուն արեւելեան հիւսիսային ծայրը, Ուսիոյ սահմանակցութեան գլուխը կ'ըսուի Կայնեոյ ձոր կամ աշխարհ, ուր և Կային բերդն անուանի յաւուրս Բագրատունեաց հարստութեան. եղբայրասպանին անուամբ և յիշատակաւ՝ թէ ուրիշ պատճառաւ այսպէս կոչուած, չէ յայտ : Դառնանք հիմայ առ կրկնակի սգաւոր նախահարս մեր, որոց ցաւք և տրտմութիւն սաստկացան սպանմամբ արդարոյն Աբելի. և ըստ ոմանց 100 տարի սգով և հրաժարմամբ ապրեցան, և յետոյ հրամանաւ Աստու-

ծայ ծնան զՍէթ 230 տարի յեա ծննդեան կայէնի, վասն այնորիկ և այլպէս անուանեց զնա Աղամ որ թարգմանի Տորք կամ Մխիթար. «Չի» յարոյց ինչ Աստուած զաւակ այլ փոխանակ Հաբելի զոր սպան կային»։ Մեծ եղաւ նախահօրն խնդութիւնը ի վերայ Սեթայ, զի ոչ միայն փոխանակ սիրելոյն և արգարոյն ընծայեցաւ, այլ և նման նմա եղաւ վարուք, և կերպարանօք նման Հօրն աստուածաստեղծ նախամտորոյն. վասն զի առէ Գիրքն «Ծնաւ ըստ կերպարանաց իւրոց և ըստ պատկերի իւրում, և» անուանեաց զանուն նորա Սէթ» (Ծննդ. Գ. 25). Սէթ եղաւ բնիկ ժառանգ և յաջորդ Աղամայ, և Աստուծոյ դիտումն և օրհնութիւնը դարձուց իւր և իւր ցեղին վերոյ։ Թէ յառաջ քան զնա զատ ի կայինէ և յԱրելայ ուրիշ որդիք ալ ունէին նախաստեղծքն՝ Ս. Գիրք չեն ըսեր, նոյնպէս թէ Աբէլ զաւակ թողուց. առաջինն շատ հաւանական՝ երկրորդն ոչ. նոյնպէս յայտ չէ թէ կայէն յառաջ քան զԵնոյք կամ յետոյ ունէր ուրիշ զաւակներ. մեր աւանդապատում վարդապետաց մէկն կ'ըսէ թէ Սեթայ ծնած ժամանակ՝ կայենի ցեղէն 380 կին կար, 24 մարդ։

Յեա Սեթայ՝ Աղամ «Ծնաւ ուստերս և դասերս», և ապրեցաւ 700 տարի ալ. այս որդւոց մէջ մէկն կ'անուանէր⁵⁶, ըստ աւանդութեան ոմանց Մամփիթս և քոյրն Գալմաս կամ Խելմանա, եթէ չեն շփոթեր ընդ քեռ կայէնի⁵⁷. Կու յիշուին ի մերոցս և երեք դասերք Աղամայ, Կամաս, Զամբարա, Ամովկա։ — Բոլոր կեանքն Աղամայ 930 տարի տեւեց ի կայէնի ծննդենէն սկսեալ. և հաւանօրէն չհետոցաւ իր առաջին բնակութենէ Եղեմայ գիմացէն, լեռնակողմ մը, որուն արեւելքն էր կայէնի բնակութիւնն, և շորս զին իր միւս որդւոց և Սեթայ բնակարանքն։ Ասոր անդրանիկն Ենոյս (որ նշտնակէ Մարդ ծնեալ յամի 335) նմանաբարոյ հօրն՝ սիրելի և հաճոյ եղաւ Աղամայ և Աստուծոյ. և «նա յուսացաւ կոչել զանուն» Տեառն Աստուծոյ, ըստ Գրոց՝ որ հաւտնօրէն նշտնակէ թէ Ենոյս նախ սկսաւ աստուածային պաշտաման մէջ ծէս և հանդէս մտցընել⁵⁸ և համարձակ հոչակել կայենեան ամբարիշտ ցեղին առջեւ. և իբրեւ քահանայապետ մը եղաւ, և իր որդւոց թողուց այս պատիւը. որով անոնք ըսուեցան Որդիք Աստուծոյ, իսկ կայինեանք Որդիք մարդկան. և այս խարութեան ականատես էր նախահայրն, որ և ինչուան իր թոռանը թողը Մաղաղայէլը տեսաւ ըստ Եթթանասնից թարգմանութեան Ս. Գրոց, իսկ ըստ Հրէից՝ ինչուան ութերորդ ազգը, այսինքն տեսաւ զՂամէք ալ զհայրն Նոյի։ Մեր նախամօր Եւայի վերայ բան մը չեն գրուցեր Ս. Գիրք, բայց միայն կանանց առաջին պաշտօնը յիշեն, որ է մայրութիւն. հասարակաց կարծիք

է թէ մեռաւ յառաջ քան զԱղամբ. ըստ Եպիփանու Յ ժամ միայն յառաջ քան զայրն, որ և լալով կնոջ մահուանն վերայ՝ աւանդեց Հոգին, երկուքն ալ առանց հիւանդութեան: Յառաջ քան զիրենք՝ անշուշա իրենց զաւակաց և թոռանց շատի մահը տեսեր էին, յետ Աբելին, և հաւանօրէն նաեւ զԿայէնի. բայց Ս. Գիրք, որ զԱբելի սպանումն պատմէ, նախ նոյն իսկ Ալամայ աստուածաստեղծ և անմահովիճակ մարդուն համար ասէ այն բառը՝ որ զամէն սիրտ խոցէ, Մեռաւ: — Անվրէպ սահման արդարութեան Աստուծոյ:

Գերեզման նախահօրն հաւանօրէն իր ապաշխարութեան վայրէն հեռու չէր, յանդիման Եղեմայ, ուր և Եպիփանեանն⁵⁹ աւանդութիւն կու գնէ ազօթից սեղանոյն քով թաղած, Աբելի աջ կողմը, զԵւա ալ յաջմէ Ալամայ. ուրիշ հնաւանդ մ'ալ, Ալքանուզ կոչէ զԼեառն որոյ քարայրին մէջ կու թաղուէին առաջին նահապետքն, և տեղին սրբազան կու համարէր. Նոյ յառաջ քան զմտնելն ի տապան, կ'ասեն, հանեց զմարմին Ալամայ և Եւայի և լալով վերջին ողջոյն տալով հանդիպակաց զրախտին՝ զբաւ ի տապանին. յետոյ աւանդեց Սեմայ կամ Մեւլքիսեղեկի որ տարաւ և ի Գողգոթա թաղեց, ի տեղին ուր կանգնեցաւ Խաչն Քրիստոսի. այս կարծիք էր շատ Ս. Հորց և հին Քրիստոնէից, որք մատուռ մ'ալ շինեցին Ալամայ կարծեալ թաղման տեղւոյն վերայ. և ինչպէս նախ յիշեցինք՝ յիշատակն այլ կատարեն արեւելեայք. արեւմտեան սօնացուցաց ոմանց մէջ ալ զրուած է յիշատակն Ալամայ ի 24 ապրիլի կամ 24 դեկտ: — Մահմետականք ինչուան ի Մէքքէ կու ձգեն Ալամայ Գերեզմանը, ուրիշներն ի Սերանտիպ կամ Չերանտի Սէյլանայ⁶⁰: — Ալքանուզայ քարածերպ գերեզմանաց մէջ թաղեցան ըստ Եպիփանայ՝ յետ նախածնողացն Աբելուհի կուսահարսն որ իր մաքուր փեսային և ծնողաց գերեզմանացը սպասաւորէր, իբրեւ առաջին սգաւոր կուսան և անաղտ այրիացեալ, նախօրինակ եկեղեցւոյ ինքն ալ 930 տարի ապրեցաւ ըստ աւանդութեանն, և թաղեցաւ ընդ մէջ Ալամայ և Աբելի. ապա և Սէթ և ամենայն գլխաւոր նահապետքն մինչեւ ի Ղամէք, 20 ոգիք:

Գ

ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՈՐԴԻՔ ՄԱՐԴԿԱՆ

ԲՈՒՄ պատմութեան հիմն կամ նպատակն է բարոյականն գործոց մարդկան, բարոյականն ալ հիմնեալ է ի զանազանութեան բարուց կամ գործոց նսցա. որ եթէ չըլլար՝ պատմութիւնն ալ հաւաձեւ գիպուածոց շարունակութիւն կու լինէր: Բարուց և գործոց զանազանութիւնն ալ երկու գլխաւոր և էական կերպարանաց վերայ է, որ են բարին և չարն: — Մարզն բարի ոտեղծաւ և էր յառաջին վիճակին. յանցանօքն չարացաւ, զզմամբ ի բարութիւն վերադարձաւ, առանց ի սպառ տգատելու ի շարութեան վատնդէն. իր ծնունդքն ալ այս բարուց խառնութիւնը յայտնապէս ցուցին, և զնոյն շարունակէ մարդկութիւն բովանդակ: Յաւուրց կայենի և Աբելի եղաւ այս զանազանութիւնս, այս մեծ և ցաւալի հերձուած մարդկութեան չարաց և բարեաց, որ միայն մարդկային սեռին սպառելոյն պիտի վերջանայ. և միշտ պիտի ըսուին և ըլլան մարդիկ ոմանք չարք և ոմանք բարիք, թէ և ամէն գատաստան չըլլայ ճշմարիտ, այլ և հակառակ ալ գտասուին: Այս զանազանութիւնը նախահայրն մարդկութեան նախ Աբելի և կայենի, և տպա ասոր և Սեթայ զաւակացը մէջ տեսաւ և իր մահուրնէն ետեւ այլ աւելի գատուեցան երկու խումբքն կամ ցեղք, և աշխարհիս ամենէն հին հերձուածն կամ բաժինքն ձեւացուցին. Սեթայ ցեղն ըսուեցան Որդիք Աստուծոյ, աստուածապաշտութեան և հայրենի աւանդութեան հեռեւելուն համար, կայէնի ցեղն Որդիք մարդկան, Աստուծոյ պաշտօնը կամաց կամաց թողլով և բնութեանն և մտաց ուժի միայն հետեւելով. — առաջինն կրօնական պաշտամունք և ծէս, պարզութիւն, միաբանակեաց օրէնք, և սգաւոր կեանք մը ընտրելով. երկրորդն՝ կենաց դիւրութեան ջանալով արուեստից և զբօսանաց հնարք ընտրեցին, և նախագաւեք եղան այս երկու կենաց հայթայթանաց՝ առանց որոց հիմայ քաղտքաւորութիւնն չի կրնար կենալ: Ինչպէս կենաց սկիզբն այսպէս և անոր վտայելութեան և դիւրութեան պէտքն հնարեցան յաշխարհի մերում և սրբուեցան յօտար աշխարհս: Նախաշրհեղեղեան աշխարհ ըստ Եօթնանանից և հաւանագոյն հաշուի 2242 տարի տեւեց. այսչափ երկար ժամանակ

ի հարկէ մարդիկ բազմացեր և Հայաստանէն դուրս ալ ելեր էին, աւելի գէպ յարեւմուտս և մանաւանդ ընդ հարաւ ձգուեցան՝ Հայոց բարձրաւանդ դակին իջած գետերուն հետ: Այս միջոց ժամանակի մարդկան մեծ մասն մի, գոնէ կէսն՝ Հայաստան էր, և անկէ ետեւ ալ այս աշխարհս միշտ բազմաբնակ եղաւ. և Ս. Գրոց յիշեալ գէպքն անսր պատշաճին: — Սեթ և իւր նմանաբարոյ պայազատքն չհեռացան իրենց նախահօր բնակած տեղէն և Եդեմայ սահմանէն: Թէ ասոնց և թէ կայենեանց վերայ աւանդողք ոչ սակաւ զրոյց ունին, յորոց զյարմարագոյնս ընդ Ս. Գրոց միայն կրնամք յիշել:

Յետ մահուան Նախահօրն՝ Սեթ որ 700 տարուան էր՝ ժողովեց իր հաւատարիմ ազգաստոհմն աղամաքնակ լեռնակողմն և բուրդովին զատուեցաւ ի կայինեանց⁶¹, Կ'աւանդեն Սեթայ համար թէ շատ փափագանօք ընդունեցաւ ի պահապանէ՛ զրախտին ճիւղ սը ի կենաց ծառոյն. և թերեւ այն ճիւղէն համարին այլք «զգաւագանն Սեթայ», որ նշանագործ գաւազանաց առաջինն է, և ի հայերէն ախտարաց գիրս այլ յիշուի:

Սեթայ կինն որ անշուշտ և իր քոյրն էր, կոչեն Ազովրս կամ Ազրա.

իսկ իւր բարեպաշտ որդւոյն Ենուխայ կինն՝ Նուենա, կամ Նուան.

Ենուխայ որդւոյն կայնանայ՝ Մալեդայ, կամ Մաղաղեդա.

կայնանայ որդւոյ Մաղաղիէլի՝ Դինա, կամ Դենար.

Մաղաղիէլի որդւոյ Յարեգի՝ Բառաղ, Բարաք

Յարեգի որդւոյ Ենուլքայ՝ Աղերլան, կամ Աղներ. Յտներ

Ենուլքայ որդւոյ Մաթուսաղայի՝ Աղենա, կամ Եդնա.

Մաթուսաղայի որդւոյ Ղամեքայ՝ Բեզնա կամ Գեթնա. Բեզնա

Նոյի՝ որդւոյ նորա՝ Նեմիա կամ Նոյեմզարա:

Ասոնց մէջ նշանաւորք ի Ս. Գիրս են Մաթուսաղա երկարակեցութեամբ քան զամենայն մարդ յիշատակեալ, վասն զի 969 տարի ապրեցաւ. և իւր հայրն Ենուլք, որ յետ 365 տարի ապրելոյ աստուածաճանոյ կենօք փոխեցաւ յԱստուծոյ ի լաւագոյն վիճակ, և ըստ հարց աւանդութեանն ի գրախտն. և ըստ հասարակաց՝ մինչեւ ցորդ անմահ մնայ ընդ Եդիայի մարգարէի, ընդ որում մերձ ի կատարած աշխարհիս պիտի գայ յերկիր վկայութիւն տալու աստուածամտաց մարդկան և ի սոցանէ նահասակուելու: Ըստ աւանդապատմից Ենուլք լսելով ի նախահարցն թէ Աղամ վասն ուտելոյ զարգելեալ պտուղն մերժեցաւ ի գրախտէն՝ ուխտ ըրաւ ամենեւին պտուղ չուտելու, և թէև պարտէզ մը տնկած զարմանէր և թողոյր որ ուզողն առնու ի պտղոցն, բայց ինքն բնաւ չէր ուտեր, վասն այսորիկ արժանի եղաւ

դրախտին կենսապաշտ ծառայն վայելման: Այս զարմանալի նախապետիս կ'ընծային գիրք մը մարգարէութեանց, որ անվաւեր Ս. Գրոց կարգն անցած է, և կու գտուի Հին Թարգմանութեամբք. և զի Յուդա առաքեալն իսկ հասուած մը կու բերէ ի մարգարէութենէ Ենովքայ (14. 15) յորում կ'իմացընէ զտհաւոր գալուստն Աստուծոյ ի գատաստան, անտարակոյս է Ենովքայ գրութիւնն, բայց շատ տարակուսակտն և անընդունելի Հիմկու գիրքն յանուն Ենովքայ⁶²: — Իսկ գրոյ գիւտն ոչ միայն Հին է ցտամանակ Ենովքայ, այլ սմանք և Ենովքայ կ'ընծային Թոռին Աղամայ, և կ'ասեն թէ մարգարէանալով որ աշխարհս վասն բազմանալոյ մեղաց մարդկան՝ պիտի աւերի առ ժամանակ մի ի սպանումն մեղաւորացն, նախահարց աւանդութիւնները և զիտերը ուզեց յիշատակ թողուլ սակաւ ապրողաց յաւերածէն. և գրեց երկու բրգանց կամ արձանաց վերայ, որոց մէկն քարէ կամ պղնձէ էր, միւսն յաղիւսոյ կամ կաւոյ. որպէս զի եթէ ջրով ջնջուելու ըլլայ աշխարհ՝ անեղծ մնայ քարն կամ պղինձն. իսկ եթէ կրակով աղիւսն ամբանալով մնայ, մինչդեռ պղինձն հալի և քարն ի կիր գտնուելով փշրի⁶³: Ոմանք համարին թէ աստեղական զննութիւններ էր գրածն Ենովքայ, վասն զի և զինքն սեպին առաջին ճանչցող մուրակաց, և նշանագրաց գաող քան հոտարակ առից գրութեան. ասոնց գտիչ կու համարի զԵնովք սմն ի մերոց վարդապետ⁶⁴, և ասէ. «Ենովք արար նշանա» ՝ գիրս կարճասրունս և բազմատառս. և այնու եթող զկեանս վարուց » առջնոցն և զմարգարէութիւն իւր, զոր գտեալ Արփաքսադ յիս ջրոյն»:

Ենովս և Ենովք պարագլուխ եղան Որդուցն Աստուծոյ և աւելի զասեցին իրենց սերունդը յորդաց մարդկան. իրենց մասնաւոր հետեւողաց խումբ սը բաշտեցան ի լեռները իրրեւ միանձնակեացք աստուածախոհք և կուսակրօնք, և թերեւ աւելի ասոր համար Որդիք Աստուծոյ ըսուեցան. իսկ զարը մնացողք ալ որ ի կայինեանց կու նեղուէին՝ սկսան իրենց բնակարանները ամբացընել. որով միւսոց հակառակութիւնը աւելի զբրգոցին, և պատերազմք սկսան (ըստ աւանդողաց): Առանձնացելոց լեռն կոչեն Աննամե, որոյ անուամբ ծանօթ է լեռոն, ի լիրանան. բայց հնագոյն աւանդութիւն որ Ենովքայ ասացեալ գիրքն է, Երմոն և Երմոնիմ կոչէ զլեռոն. այս անունս բիշ այլայլութեամբ՝ կու յիշեցընէ զԵրթեմեկոյ զանդկին, որով նշանակէր զՀայաստան, և զառաջին բնակութիւն մարդկան: — Բայց շատ երկայն տարիներ չիբքեց, ըստ աւանդութեան՝ այս ճգնազգեցից մենակեցութիւնը. գոնէ ոմանք ձանձրանալով վար իջան լեռներէն, և առջի բերան իրենց ցածարնակ եղբայրներէն ալ ընդունելի չեղան. սրոնց մէջ

քիչ շատ թուլութիւն մտեր էր, մտերմանալով ընդ Որդւոց մտադկան, որոնք պատերազմական զէնքով չի կրցածնին յաջողեցան շոպլութեան կազուղ զինուք ներգործել:

Արուեստից գիւտն և բարդաւաճանքն իրենց ցեղին սեփական եղած էր, ինչպէս Վերը յիշեցինք. և յետ կայէնի քաղաքաշինութեանց և սահմանաչափութեանց, իր վեցերորդ սերունդն և սպանինչն Ղամէք աղեղնաւորն, որ և իբրև ձիււոր կու յիշուի, բազմարուեստ սուն մը ունէր. իր առաջին կնոջ՝ Ազրայի՝ որդւոց անդրանիկն Յովբէլ եղաւ «Հայր այնոցիկ» որ բնակեալ են ի վրանս խաշնարածաց», (ըստ Ս. Գրոց. Ծ՛. Դ. 21) անշուշտ վրանը Հնարեց չուաբակ խաշնարածաց՝ որք ի պարտաբար բարձրատափս նախաջրհեղեղեան Հայաստանի կ'արածէին, որ և յետ ջրհեղեղի մինչև ցայսօր արեւմտեան Ասիոյ ամենէն նշանաւոր արօտից մէկն ճանաչի. — երկրորդ որդին Յովբալ «է Հայր որ եցոյց զերգս և զքնարս». կատարեալ երաժիշտ ձայնական և գործիական, հեղինակ այն գերազոյն և կէս աննիւթ արուեստին, որ քան զամենայն արուեստ ազգողագոյն է սրտի, սակայն սկիզբն, որպէս երեւի, անբարի անձնէ և անբարի վախճանաւ, վասն զի որդւոց մտադկան թուլակենցաղ վարուց քաղցրացուցիչ էր, վասն այսորիկ ի սրբոց հարց և ի մեկնչաց ընդ շարահնար գիւտս կարգեցաւ. և ամենուն յայտնի են անոր բարի և շար ազգեցութիւնն ալ: Ղամէքայ երկրորդ կնկան Սելլայի որդին թովբել «էր ճարտարապետ դար» բին՝ պղնձոյ և երկաթոյ». — Գուգարաց հանքերն էին այս առաջին դարնին պղինձ և երկաթ հայթայթողք եթէ Երասխայ հովտին հիմայ անձանօթ բովք. ո՞ գիտէ. բայց Ս. Գրոց վկայութիւնն անտարակոյս կ'ընէ այս պիտանի արուեստին հնութիւնն և գիւտն ի հնագոյն մասին երկրի: «Եւ քոյր թովբելայ Նոյեմա». որուն արուեստագիտութիւնը չյիշեր Ս. Գիրք. բայց հասարակաց աւանդութիւն մ'է թէ սա գտաւ ոստայնանկութիւնը կամ ասուեղէն զգեստ շինել, և հնարեց զարդու զգեստներ. ոչ միայն ինքն այլ և մայրն Սելլա թելադրութեամբ Ղամէքայ կու համարին հնարիչք ամենայն կանացի պշրանաց, մազի հիւսուածոց, ծամակալաց, սնգուրի և ծարուրի: Այս գաբուց և պշրանաց հայթայթանքն աւելի զօրաւոր զէնք եղան յաղթելու զՍեթեանս քան կայէնի և Ղամէքայ սպանութեան գործիքն. որոց բաւական դէմ դրին որդիքն Աստուծոյ, թէ և ըստ աւանդութեան մարմնով տկարք և պզտիկ⁶⁵ էին քան զորդիս Մարդկան. զեղծուեալ բարուց մտաւ և յորդիս Աստուծոյ, և ջանացին երկուցեղքն հակառակ իրերաց մրցիլ երկրաւոր յաջողութեամբք. և այն ատենէն

սկսան այնպիսի գործքեր որ յետոյ բաջուլթիւն և գիւցազնութիւնք ըսուեցան, կրթել և պատուել զոյժ և զճարտարութիւն մարմնոյ, և զյաջողոյ մեծ անուանել: Պատկառիլ և վախնալ ի նոցանէ, որք ոչ միայն զօրութեամբ մարմնոյ այլ և շարութեամբ և բնութեամբ իշխէին ի վերայ տկարագունից. սոսնց համար ասէ Ս. Գիրքն թէ «Սկայք էին ի վերայ երկրի յաւուրսն յայնսսիկ»:

Այս սկոյից մէջ յորդիս մարդկան տնուանի ասի յաւանդողաց Սամիրոս ոմն զար և թագաւոր զրին, այսինքն առաջնորդ կամ բռնաւոր որ իր հակառակորդն ունեցաւ ի Սեթեանս զԱղոյճոս ոմն, որ թագաւորեց ի 1053 կամ 1062 թուին մարդկութեան, և 9 յաջորդ ունեցաւ մինչև ի Ղրհեղեղ, Քաղզէացիք կամ Ասորես սնեայք զասոնք իրենց նախաջրհեղեղեան թագաւորներն անուանեն. և ըստ բազմաց կարծեաց նոյն իսկ 10 նահապետք են յԱղսամայ ցՆոյ. սակայն հաւանագոյն է թէ թէպէտ և Քոփոաւթոս տասներորդ թագաւորն և Նոյ տասներորդ նահապետն համարին մի և նոյն անձն, այլքն զատ անձինք և բռնաւորք էին, կամ ի վերայ բոլոր երկրի և կամ ի վերայ Սեթեանց որք Հայաստանէն զէպ ի հարաւ յԱսորեստան տարածեալ էին: Հնագոյն պատմիչն Քաղզէացւոց Բերոսոս կամ Պիւտոս այսպէս կ'անուանէ 710 թագաւորսն և իւրեանց թագաւորութեան ժամանակը՝ շարի վերածելով, և մէկ շար 3600 տարի հաշուելով որով բոլոր թագաւորութեան միջոցը կ'ըլլայ 432000 տարի:

Աղսուրոս	շար. 10
Աղսպարոս կամ Եղփարոս	» 3
Աղմեղոն կամ Ալմիոն	» 13
Ամենոֆե, Ամանոն	» 12
Ամեգաղարոս, Ամակարոս	» 18
Դաւոնոս, Դինոս հովիւ	» 10
Եգուլանքոս, Եւտուրինքոս	» 18
Ամնփսինոս, Մամփսիոս	» 10
Ոտիարտէս, Օտիարտոս	» 8
Քսիսութրոս	» 18

120

Արդ այս 432000 անբաւ տարիներն ուրիշ բան չեն, բայց միայն օրեր⁶⁶, որոնց զումարն կ'ընէ 1200 տարի 360 օրեայ, և 1183 1/2 արեւ-

գահնային հասարակ տարի. զոր գումարելով ընդ 1058 տարեաց որք ի սկզբանէ մինչեւ ի սկիզբն թագաւորութեան նոցա՝ կ'ըլլան 2242 տարի. և ահա այս է ջրհեղեղին տարին ու Եգիպտացիք ալ կ'աւանդէին, թէ յառաջ քան զՄենէս հին թագաւոր իւրեանց թագաւորէին ⁷/₆ գիւրք և 9 գիւցազունք, որոց հազարաւոր տարիներ կ'ընծայեն, այլ օրուան վերածելով անոնք ալ գումարին ի 1183 տարի: — Պիլոսի պատմութիւնք Սուրբ Գրոց հետ ոչ սակաւ համաձայնութիւն⁶⁷ ունին, անոր համար կրնանք հաւանական սեպել այս նախաջրհեղեղեան թագաւորաց հարստութիւնն և ժամանակ. բայց յազգային յիշատակաց հետու ըլլալով՝ թողումք ի քննութեանէ. նոյնպէս և անոնց քաղաքները, որպէս Ամեհամատեան (Քանդակիվլոն ըստ Յունաց) վասն զի հոն համարէր նախաջրհեղեղեան գիւնատունն, Սիրսրացուց քաղաքն ուր գրեանքն գտան յետ ջրհեղեղին, Լահքար, ուստից յետին երեք թագաւորքն էին, վասն զի եթէ ստոյգ ալ ըլլան ասոնք՝ ի Միջագետաց և Բարելացուց կողմն ինկրելի են: Ոչ միայն ի հարաւակողմն Հայոց, այլ և յարեմոնտս աւանդին նախաջրհեղեղեան քաղաք որպէս Ապամէա, Լոկոն⁶⁸, Կիստոս (այսինքն Քիվոլոս ըստ Յունաց որ նշանակէ զտեղի տապանին շինութեան) յորոց գոնեա հաւաստի կարծիքն շինութեամբ ծածկուած ըլլալուն Հայաստան աշխարհին. և բնակութիւն՝ թէ ոչ Քաղդէացի թագաւորաց՝ գոնեա Ս. Գրոց նահապետաց, և սմանց ի հսկայիցն, և ծնելոցն ի խառնրոյ երկուց ցեղիցն Սեթեանց և Կայինեանց: Վասն զի ըստ Ս. Գրոց, « Իբրեւ սկսան մարդիկն բազմանալ ի վերայ երկրի, » և դստերք ծնան նոցա տեսեալ որդւոցն Աստուծոյ զգտերս մարդկան » զի գեղեցիկ էին, աոին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին... » և ծնան իւրեանց որդիս. և նոքա էին սկայքն որ յաւիտենից արքա » նուանիք: Եւ իբրեւ ետես Տէր Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, և ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով » չարիս զամենայն աւուրս, և սարջացաւ Աստուած զի արար զմարդն ի » վերայ երկրի. և մտախորհ եղեւ ի սրտի իւրում և ասէ Տէր Աստուած. » Ջնջեցից զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրէ, ի մարդոյ » մինչեւ ցանասուն, և ի սողնոց մինչեւ ի թռչունս երկնից. զի բարկա » ցայ զի արարի զնոսա: (Մն. Զ. 1. 2. 4=7) Մի մնասցէ ոգի իմ ի » մարդկանդ յայրմիկ յաւիտեան, վասն լինելոյ զոցա մարմին: Եւ եղիցին » աւուրք զոցա ամբ հարիւր և քսան »:

Որդւոց Աստուծոյ խնամութիւնն ընդ որդւոց մարդկան ջրհեղեղէն առաջ և անոր պատճառ նշանաւոր պէպք մ'է, և պէսպէս կարծեաց և աւան-

զուժեանց առիթ եղած. սկսեալ ի հեղինակէն գրոց Նոյնուքայ մինչեւ ի Մուր անզդեացի բանաստեղծն եղած են կարծողք կամ ուզած են կարծել թէ այդ խնամութիւնն ընդ գասերաց մարդկան ընող որդիքն Աստուծոյ՝ ոչ Սէթեանք այլ հրեշտակք էին, զորս Զուարթունս կոչէ գրիչն Նոյնուքայ. փոխանակ ըսելու թէ Սէթեանք վասն առաջին մաքուր կենացն զուարթունք և հրեշտակք կոչէին : Արդ այս որպիսի և է խնամութիւնն և անկէ առաջ եկած հսկայից ծնունդն և անոնցմէ չարիքն տարածեալ էր և ի վրայ երկրի Հայաստան աշխարհիս. և որպէս մարմնով վիթխարիք էին հսկայքն, թէ և ոչ ըստ կարծեաց ոմանց քանապատիկ կամ եռապատիկ մեծք քան զայժմեան մարդիկ, նոյնպէս և զօրաւորք ի կիրս, ի բոնութիւն, ի կոխս, ի ցանկութեան, յերկարատեւեան և յամենայն հետրագիտութեան փափկութեանց, հրապուրանաց և պշրանաց. և որքան մեծ չարիք նոցա այնքան և երազ և ահաւոր վրէժն յԱստուծոյ. որոյ սահմանած 120 տարին ոչ տինքան մարդկան կենաց սահման համարուի որքան միջոց ժամանակի ինչուան ի պատուհասն. ըսել է թէ յ'2122 ամի մտրկութեան յայտնապէս սպանացաւ Աստուած զՂրհեղեղն. մինչդեռ արդարն Նոյ, տասներորդ յԱդամայ, զոր քաղզէացիք համարին Քսիաւթրոս կամ զոս ընդ Նոյի շփոթին, 480 տարուան էր, և յետ 20 ամի ծնաւ զերիս որդիս Սեմ, Քամ, Յաբեթ. յորոց ըստ բազմաց կարծեաց Սեմ վասն նահապետութեան ընտրեալ ազգին (Հրէից) նախազասի, բայց Յաբեթ է անդրանիկն⁶⁹, և հուանական է թէ (քանի մը տարի առաջ ծնած էր քան զՍեմ որ 98 տարուան էր Ղրհեղեղի առնն). իսկ Քամ երրորդ կամ կրսերագոյն է : Նոյ մօտ ց'500 տարի ըստ աւանդողաց՝ կուսութիւն պահած էր. կնոջ անունն որպէս յառաջ յիշեցաք էր Նոյեմի կամ Նոյեմգորա. և ըստ այլոց Նորիա, փիրրա, Էսաւթ, ի Սեթայ ցեղէն կուսութեամբ ապրած. իսկ անուանք նուոցն, Սեմայ կիին Դիկզիկզիբապ կամ Ժեդեկան, կամ Պանդորա, Սալիա, Նահալաթ Մահնուկ, — Քամայն՝ Ռաքսիա, Նոյելա, Նաքլատ, Զեդքաթ — Նապու. — Յաբեթայն⁷⁰ Նոյեկլա, Արիզիսահ, Արաթքա. ըստ մերոց վարդապետաց՝ Զանազան, Զարմենազան, Արեզազան կոչէին, ի ցեղէն Սեթայ, աղջկունք կոչաք :

Դ

ԶՐՀԵՂԵՂ - ՏԱՊԱՆՆ - ՆՈՅ

ԵՐԿՐԱԳՈՒՆՏՍՍ յորմէ հետէ արձրկեցաւ յարարչէն յտնհուն տա-
րածութեան եթերաց, անդտղար փոփոխութեան կամ յեղանակելու մէջ է.
Թէ ուրիշ եթերական մարմնոց ազդեցութիւնք և թէ իւր սեփական տարերքն՝
զինքն բաղադրեն և լուծանեն, շինեն և քակեն. թէպէտ այս փոփոխութիւնքս
իրրու ոչինչ մի են բաղդատութեամբ մեզի անծանօթ իրաց որ բոլոր հաս-
տատութեան մէջ կ'ըլլան, բայց մեզի որ բնակիմք յերկրի և ակար զօրու-
թիւն մը ունիմք ճանշնալու և գիտելու զեղեալս ի նմա, մեծամեծ երևոյթ-
ներ են անոնք, զոր քիչ անգամ մէկէն կու ճանշնամք և շատ հեղ պէտք
ունիմք երկայն տարիներու և դարերու իսկ քննութեանց: Ամենէն զգալի և
զարմանալի փոփոխութիւն կ'երեւի մեզի ջրոյն և ցամաքին իրարու ազդե-
ցութիւնն կամ կռիւր, իրարու բաժին գրաւելն, որ և ընդարձակ նշաններ
թողուն ի վերայ երկրի. այս նշանաց, եւս առաւել յեղափոխութեանց՝ մե-
ծագոյն ի յիշատակս և ի զարմանս մարդկան է համաշխարհական ԶՐՀԵ-
ՂԵՂՆ:

Բանախոյզք կու հարցընեն թէ յիրաւի՝ համաշխարհական էր Զրհեղեղն
Նոյեան, թէ մասնական, որպէս եգիպտական և յունական Զրհեղեղքն. —
Թէ և մեր նպատակէն զուրս են այդպիսի քննութիւնք, սակայն մէկ երկու
բան ըսել հարկաւոր ճանաչեմք. և նախ համաշխարհական ըսելով կ'իմա-
նամք զրեթէ ամենայն հին ազգաց մէջ աւանդութիւն, ի Հայոց մինչեւ յԱ-
մերիկա և ի կղզիս Ուիկիանու, որք կ'ընդունին թէ ի հնագոյն ժամանակս
մեծ ողողումն ջրոց եղեր է ի վերայ ամենայն երկրի. երկրորդ, Ս. Գրոց
և հնագոյն պատմչաց ասանդութիւնք ալ ընդհանուր երկրի ողողումն կու
նշանակեն. երրորդ երկրաբանական զանազան նշանք ալ ընդհանրութիւն
մը ցուցընեն. չորրորդ թէ և մասնական եղած ըլլար նոյական ջրհեղեղն,
երկրիս այն մասին մէջն էր Հայաստան, մեր աշխարհն ալ ողողուած է
ի ջուրց որ զհին մարդկան սերունդն և զբնակութիւնս ջնջեցին, և այս է
մեր պատմութեան համար կարեւոր գիտելիքն. որ և այնքան ընդունելի է
օտարաց և օտարամտաց անգամ, մինչեւ ոմն զՋրհեղեղն չընդունելով ջրհե-

զեղ՝ գեռ կարծէ որ իբր այլարանօրէն իմն նշանակէ Սիւրբացոց արշաւանք սը ի Հայաստան:

Ջրհեղեղն տիեզերական կանոնաւոր օրինաց արգասիք մը չէր, այլ արտականոն յեղափոխութիւն մը երկրի աստուածային կտմօք, առ ի ջնջել յերեսաց նորա զամենայն մարդիկ և զյիշատակս նոցա. յորոց միայն տուն մը կամ ազգատուն մը միայն պիտի ապրէր՝ նորէն զերկիր մարդաբնակ ընելու համար. և էր այս ասանս տէրն Նոյ տասներորդ յԱզգամայ, Քսիսաւթրոս Քաղզէացոց, ըստ յունական արտաբերութեան, սր ի հարկէ ի բնականէն փոխուած է. Նոյ, իւր կիներն, երեք արու զաւակքն և անոնց կանայքն միայն զերծան ի ջրհեղեղէն, ըստ Ս. Գրոց հաւաստի պատմութեան, աշխարհածանօթ տապանան՝ որ էր մեծատարած⁷¹ նաւ մը եռոյարկ, յորում ապտտանեցան ցամաքային կենդանիք և թռչունք: Դիպուածէն 100 կտմ 120 տարի առաջ հռչակեցաւ ջրոզող պատուհասն, որ ոմանց, իբրև զրոյց և սնտի կարծիք սկսուէր, ոմանց հաւաստի գուշակութիւն և սակաւք կամ ոչ ոք անկէց օգուտ քողեց: Թէ և ընդհանուր բնականաւ երկրի վերայ տարածած էր ջրհեղեղին համբաւն այլ ի հարկէ աւելի հոն ուր կ'ենթադրուէր և բնազայր մարդկութեան. և անշուշտ այս միջոցն էր մեր Հայոց աշխարհն և հաւանօրէն հոն ալ էր բնակութիւն Նոյի և տեղի շինութեան Տապանին, զոր ոմանք ինչուան ի Փոփոքիս կու տանին և Քաղզէացիք ի կողմանս Բաբելոնի⁷²: Եթէ հետու ալ էր բնակութիւնն գոնէ, ըստ աւանդութեան, եկաւ հոն Ազգամայ և Եւայի սկզբները հետն առնուլ ի տապանն: — Ըստ եօթանասնից ժամանակագրութեան յամի աշխարհի մարդկութեան 2242, և հաւանօրէն նոր տումարի ապրիլի վերջն⁷³ մտաւ Նոյ ի տապանն իր ընտանեօք որոց հետ կ'աւանդեն ոմանք ի մերոցս թէ էր նաեւ ճարտարապետ տապանին Սնաուիս⁷⁴ իր ընտանեօք, նաեւ Նոյի ազջիկն, և ուրիշ մերձաւոր անձինք, որք հաւատացին քարոզութեան Նոյի: Յետ եօթն աւարց ի 6 մայիսի, սկսաւ ջրոց ոզողութիւն թէ երկնատեղաց անձրևօք և թէ անդնդաբուխ ողազանօք, որք 40 օր անդադար բղիկելով լցին գձորս և զղաշտս և բարձրացան քան զլերինս 15 կանգուն⁷⁵ ջնջելով զամենայն ցամաքաբնակ կենդանիս, և առուել զմարդիկ, և զանուանեալ հսկայս յառիտեհից. ամենայն հասակ և կերպարան և կենանք միօրինակ թուլատարր ալեաց յարգութեամբ և ծփանօքն ծաւալեցան երկրի և երկնից մէջ բռնող աշխարհակալ բնութեան վերայ. մարդկութիւն քան զայս մեծ կամ նման հարուած չէր և չէ ընդունած երբեք 150 օր պատժեալ և լլկեալ մեաց երկիր ջրեղէն ծանր ծածկութիւն տակ. յորոց վերայ տապանն տատանեալ երթայր և գայր կրելով զապագայ յոյս

նորա գսերմն մարդկութեան : Յետ 5 ամսոց յ'Յ հոկտ. հողմն (հարաւաշունչ) սկսաւ ջրերը ծեծել և ցածցընել. և յետ 10 աւուրց (13 հոկտ.) ջուրք բաւական քաշուած ըլլալով՝ սապանն նսաւաւ Հայոց աշխարհիս բարձր լեւանց մէկուն վերայ, որք գեռ ջրով պատած էին, և զի տապանն 30 կանգուն էր բարձրութեամբ յայտ է թէ քանի մը կանգուն միտյն տապանն միեալ էր ի ջուր. բայց ինչուան որ լեւանց գլուխք ի ջրէն դուրս ելան գեռ երեք ամիս ալ անցաւ. ասել է որ ջրերն խիստ կտմաց կ'իջնային, կամ տապանակիր լեռն անհամեմատ բարձր էր քան զայլս, զորոյ գլուխն չէին կարող սեսնել որք ի տապանին, այլ ի 15 յունուարի տեստն մերձագոյն բարձր բարձր երկրի կաաարներն, իրեռւ խեղդած կարծեալ երկրի կենդանութեան նշան : Եւ յետ 40 աւուրց (24 փետր.) բացաւ Նոյ զպտտուհան տապանին, և երկրիս վերայ ողողման մեծամեծ նշանները սեսնալով ուզեց իմանալ թէ ո՞ր աստիճանի ցամքած է. և արձակեց ազոտաւ ⁷⁶ մը, որ երթալով գալով վերջապէս իր ոտից դադար մը գտաւ. բայց Նոյ չսպահովելով տղանի մ'ալ արձակեց՝ որ տմենեւին իր մաքուր բնութեան յարմար տեղ մը չի գտնելով՝ մէկէն առ սապանն դարձաւ և Նոյ ձեռքը երկրոցուց և ներս առաւ : Եւ այն օրէն ի վեր ազոտան և աղանին խորհրդական բաներ եղան մանաւանդ բրիտանէական եկեղեցւոյ մէջ : Յետ 7 աւուր (3 մարտ) դարձեալ արձակեց զաղանին որ բաւական պարտելու տեղ գտաւ բայց ոչ գիշերօթի, և դարձաւ իրիկուն իր ինամողին ընծայիկ մի բերելով զշիղ ձիթենոյ, որ եղաւ այնուհետեւ նշանակ հաշաութեան. իսկ երբ երրորդ անգամ արձակեցաւ Հեղաթեիկ, երկիր թոնոց համար բաւականապէս ցամքեր և տաքցեր էր. աղանին իր ընկերին սպասեց և ալ չդարձաւ ի տապանն, իմացուեցաւ որ բաւական ցամքեր և պատրաստեր է երկիր ի նորէն հիւրընկալութիւն մարդկան : Յառաջնում աւուր տարեգլխին և գարնանամտին (21 մարտ) քակեց բացաւ Նոյ զձեղուն ապանին, և գեռ երկու ամսի չափ մէջը մնալով կը դիտէր օրէ օր երկրիս ցամաքիլը և բուսական կենօք զարդարիլը. մինչև արեւն զօրացաւ, զարունը տիրեց, և ի 16 մայիսի իր ընտանեօքն ելաւ երկրորդ անգամ կոխելու զերկիր, զերկիր նորագեալ :

Եթէ նախկին նահապետաց երկիրն ի Հայս ըլլալուն վերայ կար տարակոյս առ ոմոնս, վասն իջման տապանին կամ Նոյի ի Հայս՝ ոչ նոյնպէս ⁷⁷. վասն զի Ս. Գիրք և հնագոյն պատմիչք արեւելեաց (Քերոսոս-Արիւզենոս) յայտնապէս ասեն թէ Նոյ նաւեց և ինչաւ ի լերինս Հայոց, միայն լեւանց անուան և զրից վերայ է վէճ և տարակոյս. վասն զի զսր

Երբայական բնագիրն կոչէ Այրարատայ լերինս, Ասորոց և քաղղէից Թարգմանութիւնն Կորդուաց լերինք ասեն. և ի Ս. Հարց, որպէս և ի մերոցս, ոմանք յայտ կարծիս են և ոմանք յայն. կէսք Աբարատ անուամբ զաշխարհն Հայոց կ'իմանան կամ զմասն մի և կէսք բուն լերանց անունը կամ մասնուար լեռ մը յորոց վերայ նստաւ տապանն, և յայտ կարծիս են այժմ մեր ազգին հետ զբեռնէ ամենայն մերձակայ արեւելեան ժողովուրդք և շատք յերոստական գիտնոց, որք հայկական լերանց արարտահան պտրն, և ի մասնուարի զբարձրագոգաթ Մասիս ցուցանեն և պատուեն իբրեւ հանգիստ տապանին և Նոյի, և Պարսք Նոյայ լեռն իսկ անուանն զայն⁷⁶. և իբրեւ այնպիսի սրբազան տեղի պատուեն ի հին ժամանակաց հետէ: Սակայն մեր հարուային զբացի ժողովուրդք քրիստոնեայք և հեթանոսք, որպէս և շատք ի Ս. Հարց նախնեաց⁷⁷ Կորդուաց լերանց կ'ընծայեն տապանին ասպնջականութեան պատիւն, և շատք զանոնք ալ Արարատեան լերանց անուամբ իմանան. և որս/վետեւ Կորդուաց լերինք առաւել քան զայրարատեանս բաղմանահակ և բազմակայտ են, և վասն այսորիկ ի թուրքաց Պարմագ տաղ կոչին ոմանք ճիւղատի լերանց վերայ սեպն իջած զտապանն, որ թերեւ էր ըստ Հայոց կոչեցեալն Սարատագ⁷⁸. որ ըստ Խորոնեցոյ է կոչեցեալն Ասորոց Սողոփի յարեւմտակողմն Կորդուաց և Տիգրիսի մօտ, և որոյ ստորտը աւանդն շինեալ զԹըմնիս կամ Թէմանիմ քաղաք որ նշանակէ Ռեթից կամ Ութոնից անդի բնակութեան, իջելոցն ի տապանէն և որոյ քրիստոնէական յիշատակք թերեւ հնագոյն են քան զԱկոսոյ մասեաց: Ս. Եպիփան Լուպար կամ Լուլար կոչէ զտապանակիր լեռնն Արարայ զոր և ասէ ի մէջ Հայոց և Կորդուաց: Իսկ հին հեթանոս պատմիչ մը ոչ զԱրարազ և ոչ զԿորդուս յիշէ, այլ ի վերոյ քան զՄիկիաս զաւառ կամ աշխարհ զՊարիս կամ Բարիս լեռնն Հայոց, այլ ոմն Ոկիլա կոչէ. ոմն՝ կերոն և ոմն Կուադրատ իբր քառակուսի թերեւ բրգաձեւ. և շատք առանց յատուկ անուան միայն յերկր Հայոց⁸¹:

Ըստ նախնեաց ոմանց տապանն յարեւելից կողմանէ սահեալ եկաւ ի լեռն հանգստեանն ի Հայտ որպէս և Խորոնեցի մեր յիշէ յաշխարհագրութեանն⁸². նոյն դարձեալ և վասն Ասորոց ասէ աւանդել թէ ի նուազել ջուրցն և ի հառանել տապանին ի գլուխ Սարարազայ (Սողոփի) սղոցաձուկն մէջ անցնելով արգիլեց և հոն դպրեցոց զտապանն: Աւելի անհեթեթ զբուցն Սընտրայ հեթանոս բնակիչք թէ տապանն անցնելու տանն զարնուեր է ի Մնար լեռն և ծակոտեր, իսկ օձն հնարագէտ՝ խոստացեր է առ Նոյ խցել զծակն եթէ խոստանայ կերակրել զինքն արեամբ.

և ի հաւանել Նոյի, կլորելով խրեր մտեր և ծածկեր է զծակն. բայց Նոյ հրամանաւ Աստուծոյ ոսկաններ զնա և այրեր և զմոխիրն ցնդեր, ուտի գոյանան միջատք և զեռունք, զորս պաշտէն հեթանոսքդ ցուրա տուտայելաբանք: — Մեր ազգային զրուցաց մէջ ալ յիշուի տապանին հանդիպելն առ Գրգուռ լեանն յեզր պաշտին Մշոյ և ազաչել զնա ասելով

Գրգուռ, առ զիս:

և նորա պատասխանեալ առ տապանն թէ

Գընա՛ ի Մատն

Ձի բարձր է քան զիս:

Անտարակոյս է որ առ հին նախնիս մեր շատ և շատ աւանդութիւնք է զրոյցք կային այսպիսիք, զոր քրիստոնէութիւնն լոցեցուց. յորոց մի է անշուշտ և վրաց պատմութեան մէջ յիշեալն այլաբանօրէն վասն Ղրհեղեղին, թէ ընդ մէջ Քաղզկացուց թրուջան աստուծոյն և Արամազայ (որ է Արամազդ ըստ Հայոց) պատերազմ և թշնամութիւն կար. և Արամազդ յաղթող գառնելով Ղրախեղդ ըրաւ զթրուջան:

Այսչափ կարծեաց և զրուցուածոց միաբանութիւնն այս է նախ թէ տապանն և Նոյ իջան Հայոց երկիրը բարձր լեռան մը վերայ. և երկրորդ որ այս լեռն կամ հիմակու հռչակեալ Այրարտայ պարուն մէջ էր և կամ ի կորդուացն⁸³:

Այս երկուքէն մէկն անտարակոյս ըսելու համար պէտք էր Այրարտա անուան միտքն և սահմանն լաւ նանչեալ. որ շատ դժար է, և անուան ստուգաբանութիւնն ալ շատ կերպ մեկնութեամբ և պատճառօք գեռ անըստոյդ կու մնայ. և մեր հնախօս պատմչին (Խորոնեցոյ) աւանդութիւնն այլ թէ Արայի մահուանէն կամ ընկած դաշտէն առուած է Այրարտա կամ Արարդ անունն՝ հաւանական չերեւիր մեզ, թէ և չեմք այլ գիտել ի՞նչ մտօք ստուգաբանէր զայն պատմիչն, Արայի — արատ իմանալով, իբր թէ Արայի վիրաւորելու, ֆեսսուելու տեղն, թէ արաբիկ Բեա բառէն իբր վանուան Արայի. (դժար էր Հայոց այս անունը ընդունիլը): Աւելի նուազ ընդունելի են երրայական ստուգաբանութիւնն Անէթք—սասանման, և կամ լաւ ևս չեքանց չերիքք, շատ տարակուսական Հոռք—արտա⁸⁴ անուանն ընթերցումն ի բեւեռաքանդակ արձանս, աստուածային հուր՝ իբր նշանակելով հրարուի. և հաճոյագոյն է մեզ Արեւաց երկիր թարգմանութիւնն, ըստ արիական լեզուաց կամ Բարձր երկիր ըստ սեմական լեզուաց⁸⁵: Հրէական բնա-

գիրն այս անունը ի դորժ ածէ, որ է ասել Մոզէս, 1600 տարի յառաջ բան զՔրիստոս, և իբր Յ կամ 400 տարի յիս Արայի. թուի մեզ թէ և Արայի կենդանութեան ատենն ալ կայր այս անունն, և այսպէս անուանէր Հայաստան, զէթ ի հարաւարեակ ազանց, մասնաւորապէս ի հեղինակաց աստուածաշունչ գրոց, յորս Հայաստան կամ Արմենիա ամենեւին չի յիշուիր, այլ Արարատ՝ զնոյն իմանալով:

Բայց և սահման Արարատ անուան և լերանցն անորոշ և ընդարձակ է. ըստ ազգային ստոյգ աշխարհագրութեան և պատմութեանց բնիկն Արարատ՝ գաւառ մ'է ամփոփ, կամ գաշա մը սահմանաւոր Երասխայ հիւսիսագոյն օժանդակներովը ուղղեալ և Արայի լերան սլորաւը. յորմէ և զանունն անուին հաւանագոյն է մեղի՞ն. անոր պէս՝ աւելի կամ պակաս ընդարձակ 20 զաւտոք ալ անոր չորսդին մէկտեղ մէկ նահանգ կամ աշխարհ մը ձեւացուցած՝ Արարատ կոչուին, որ Հայոց թագաւորին սեփական կալուածն էր, և իբր կենդրոն թագաւորութեանն այս գաւառներուն մէկն է Մասեացոսն, յորում է Մասիս մը որ է բարձրագոյն գագաթն Արարատեան լերանց, և ոչ սակաւ հեռի ի բնիկ Արարատ գաւառէ, վասն զի մէկն Երասխայ մէկ կողմն է միւսն մէկ այլ կողմը. և սակայն երկուքն ալ Արարատ կ'ըսուին. և այս ոչ այնքան յԱրարատ նահանգին մէջ ըլլալուն համար, որքան Արարատայ տէրութեան մէջ, այսինքն Հայոց թագաւորութեան սահմանին կամ երկրին. տէրութեանն և անունն հաւանորէն ըստ մտաց կամ հեղինակաց Ս. Գրոց ընդարձակէր մինչև ի սահմանածայրս տէրութեանն որով որ և է լեւոն Հայոց կրնար ըսուիլ լեւոն Արարատայ (երկրի) և ահա այսպէս կ'անուանէ Եսայի մարգարէն այլ Սիմ լեւոնըր Աղձնեաց յոր փախան որդիք Սենեքերիմայ ապաւինելով ի Հայս: Ապա սերմն կորուաց լերինքն ալ կրնային ըսուիլ լերինք Արարատայ՝ եթէ Արարատեան թագաւորութեան տակն ըլլային, որպէս և էին իսկ շատ անգամ, բայց ոչ միշտ. և վասն այնորիկ ընդ 15 աշխարհս Հայոց Մեծաց համարին և կործայք, յորում են գաւառք և լերինք կորուաց:

Քաղզէացիք և Ասորիք անլեոն անբարձր երկրի մէջ բնակած, բնական էր որ իրենց սահմանակից ամէնէն մօտ և բարձր լեռը համարէին տապանահանդիստ, և զարմանք չէ որ Ս. Գրոց երկիւղած թարգմանիչք ալ կորուաց լերինք անուանեն փոխանակ Արարատայ վասն զի փոխադարձօրէն, ինչպէս որ Արարատայ անունը անսահման և ընդարձակ առնուած է, կորուաց անունն և սահմանն այլ անյայտ և ընդարձակ է, և

ինչուան յարեմտեան Մեծ Հայոց սահմանածայրն ալ կորզուաց գաւառ կու յիշուի, (ընդ մէջ Երզնկայ և Գերշանայ). եթէ կովկասայինք իրաւապարծութիւն մը ունէին իրենց Էլպրուզը վասն բարձրութեանն (որով առաւելու քան զՄասիս⁸⁷) ասպանակիր սեպելու, այսպէս կրնային մեր հարաւային դրացիք ալ այնպիսի մը բնտուել կորճայից լեռանց մէջ, որոնք գետ չափեալ չեն և ինչուան 15000 բարձր կատարք կարծուին, թէ ոչ և աւելի եւս: Ուրեմն անաշտապէս խօսելով դրական և աներկբայ փաստ մը չունիմք զՄասիս համարելու բուն ասպանակիր լեռան, և ոչ բաւական հաստատութիւն մը կրնան բնծայել տեղական աւանդութիւնք կամ ստուգաբանութիւնք, ինչպէս են այն հասարակօրէն ծաւալեալ զրոյցքն և անուանք Նախիջեւանի և Արկուռոյ. առջինոք իմանալով այն տեղն ուր Նոյ նախ իջաւ ի սասպանէն և բնակութիւն հաստատեց, և այսպիսի տեղ մը կար ի Հայս, ըստ վկայութեան Յովսեփոսի պատմչի, զոր և յունական բառով արտփոյնիտեմ կ'անուանէ և կու թարգմանի ստուգապէս Յետ չրոց. և ազգային աւանդութիւն հիմայ կու ճանաչէ զայն ի Նախիջեւան⁸⁸ քաղաք հին, ուր և հին աղիւսակերտ կիսաւեր շինուածք մը Նոյի գերեզման անուանէ. որ է թուրք աթաբէկաց ժամանակի շինուած կամ գերեզման. քաղաքն ալ Յովսեփոսի յիշած տեղն չի կրնար ըլլալ. վասն զի, նախ անմիջապէս Մասեաց լեռանց մօտ չէ, և երկրորդ որ քաղաքին բուն անունն ըստ հնագոյն հեղինակաց մերոց ոչ է Նախ-իչեվան, այլ Նախաւան, իբր Աւան Նախնոյ: Նոյնպէս երկրորդ անունն ալ Արկուռի, իբր թէ Նոյի ուռ այսինքն որթ անկած տեղը՝ բնազբօսեալ և անհիմն է. վասն զի տեղւոյն բուն անունն է Ակոռի, յորմէ թերեւս հիմկու այլազգական լեռան անունն ալ Աղբր տաղը: Աւելի ստուգաբանական մերձաւորութիւն ունի ուրիշ անուն մը, զոր ազգային աւանդութիւնն մոռացեր է, և է Գիւնոյ րյուրե. և Գիւնեղոյն գետն որ յԱկուռոյ կ'ելլայ, և յիշուի յառաջ քան զԱկոռի: Քանի որ այս գեղս շէն էր (յառաջ քան զկործանումն ի 1840) իրմէ վեր լեռան վերայ տափ մը կու ցուցուէր իբրեւ տեղի այգեաց Նոյի, և գետ այգի մշակուէր հոն ի յիշատակ գինեհնար նահապետին. ինչպէս որ Ս. Յակոբայ վանքն ալ քիչ մ'աւելի վեր ուրիշ յիշատակ մը կու պահէր ասպանին, այսինքն Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին ի Գ պարու ուղեւորութիւնն գէպի լեռն վեր առ ի գիւտ Նոյեան սապանին: Սակայն այդ երկուքն և այլ ասոնց նմանիքն ոչ աւելի քան զաւանդութիւն և զզրոյցս ստուգութիւն ունին. և այդպիսի զրոյցք կրնան գտուիլ կամ տրուիլ ուրիշ բարձր լեռանց այլ, առանց մէկուն վերայ ստուգուելու. և թերեւս ինչպ'ս

գրութաին տեղն աւերած և փոխուած է և չի կրնար նշան մը գտուիլ, բաց ի շորից գետոց աղբերնեբէն, այսպէս ասպտնին լեռն ալ փոխեալ և աննշան եղած ըլլայ երկրաշարժ զօրութեամբք: Մասին՝ որ աւելի քան զամենայն լեռինս հաւանականութիւն ունի՝ գեո նոր (1840) սասանութեամբ մը՝ փլաւ մասամբ, և հնազոյն փլածոյ և պատառման անխար նշան ունի կողին վերայ մղոնաչափ հերձուածը, որ և կարծէր յիշեալ ի խորոնեցւոյն. (Ա. Լ.) ոսկայն մեր պատմահօր յիշեալն ուրիշ լեռ մ'է մօտազոյն ի Նախիջեւան Մեծ կոչեցեալ, որպէս թուի վասն մեծութեանն և բարձրութեանն, որ և հնազոյն բազմաշրջիկ աշխարհագրաց վկայութեամբ ահագին երկրաշարժէ մը փլած էր, այսպէս մասամբ ընկած, և Երասխայ ընթացքը փոխած գէպ ի հարաւ, որուն նշանը հիմայ ստուգեն երկրագնին գիտունք. այս լեռն որ Առանայ լեռանց մէկն է և Գուպուճազ կ'ըսուի հիմայ, արգեօք պատմութեան առաջին և անյիշատակ դարերուն մէջ քան զՄասին վեհազոյն և հսկայակերպ չէր ամբառնար, մինչև և մեծ կոչուիլ ի լեռինս. և եթէ առաջին անփուլ հասական մնացեալ ըլլար ցայսօր, արգեօք բոլոր Մասեաց ջրհեղեղեան աւանդութիւններն իր վերայ պիտի չգանէրնք աւելի հասաատութեամբ մը վասն Նախիջեւանի մերձաւորութեան: Եւ եթէ բարձրն Մասին յառաջ իսկ քան զմեր քրիստոնէական աւանդութիւնս ի հեթանոս նախնեաց մերոց զիւցազնական առասպելապաշտութեամբք և պանծանօք պատկեալ էր, որպէս յայտ առնեն գէպք Արտաւազդայ ի սկիզբն Բ գարու, այդ վկայէ միայն թէ Մեծ լեռին փլածն հնազոյն է քան զառասպելս և զպատիւ Մասեաց, որ կրնայ ժառանգած ըլլալ զայն ի Մեծէն, որպէս կրնար և յետ այսորիկ ուրիշ լեռ մը ժառանգել ի Մասեաց, եթէ 1840ին փոխան քիչ մը փլածին՝ քանի մը հազար ութ վար իջնէր զագաթն և քան զՍիփան, զՃիւտի և զՃեափուր լեռնեաց ցածագոյն երեւար, և քանի մը երկայն դար անցնելով մոռցուեր իր հիմկու եղական և անմտն բարձրութիւնն. անշուշտ այն ժամանակին բարձրագոյն լեռն՝ պիտի ցուցուէր իբրու ասպանակիր: Զարմանանք եթէ և յայժմու վիճակին կորդուաց լեռներն այս պարծանքը կ'ուզեն յափշտակել, մինչդեռ ասոնց բարձրութեան չափը չեմք գիտել. և ինչուան որ այս չի սառուցուի՝ պէտք չէ Մասեաց վերայ յամառիլ ըստ բարձրութեան յարմարութեանն. իսկ ըստ այլ պատճառոց, որպէս և նախ ըսինք, կորդուաց լեռնք ալ հաւասար աւանդութիւններ և փաստեր ունին. և մեզի իսկ (որ զանոնք այլ հաւասարապէս կու ճանչնամք ի Հայաստան) ասոնք յարմարագոյն կ'երեւան թէ ոչ տապանին՝ զոնէ Նոյայ ընակութեանն քան թէ Մասիքն:

Եւ նախ Յովսէպոս, որ Նախիջիվանի առաջին զրոյցն աւանդած է, տապանին լեռը և մնացորդքը կու յիշէ Ազիաբեն նահանգին մէջ որ կորուցուաց հարաւակողմն է: Հոն յիշուի Թմանիմ քաղաքն ութից յառաջ քան զՀինութիւն Ակուոյ եկեղեցւոյն և Ս. Յակոբայ վանացն. նոյնպէս և քրիստոնէից եկեղեցին, և Քիպրոս այսինքն տապանին վանքն, ի Ե դարու. ուր և ի սկիզբն է դարու ասեն եկաւ Հերակլ կայսր, և քիչ մը վերջը Իճաստ—պեն—դանէմ առաջին զօրավար Արարաց եկաւ պատուելոյ զմնացորդ տապանին, զոր և Էօմէր ամիրապետ ժողովել տուաւ և շինել մզկիթ մի ի Գզիրէ. և յամին 766 եկեղեցի տապանին շանթահար այրեցաւ: Տապանի լերին դիմացը, որ մօտ ի Գզիրէ վկայի, կայր Նահրեվան գիւղն այսպէս անուանեալ յիշատակաւ Նոյեանց, որ մեր Նախիջիվանի կու համամատի, և մինչև հիմայ ընդ մէջ Գզիրայ և Ջախուի կայ Նահրեվան գիւղ քաղղէմբակ: Ինչուան անցեալ դարուն վերջերը անդղիացի ճանապարհորդ⁹⁹ մը տեսաւ ի Թմանիմ տապանին մզկիթը, զոր կանթեղավառութեամբ պատուէին մահմետականք ուրաթ օրեր. և այս դարուս սկիզբը անդացի Քուրդ պէկից մէկն պատմեց Ռիչ ուղեւորի թէ ինքնին ելեր է լերան գագաթն և տեսեր տապանին մնացորդներէն հին փայտեր ոտնաչափ երկայն գամերով:

Որչափ այլ անստոյգ ըլլան զրոյցքս ցուցանեն աւելի քան զՄասիս պահել ղ յիշատակ և զկարծիս տապանին⁹⁹: Այլ հաւանագոյն փաստ է մեզի Նոյեանց բնակութիւնն յայս կողմանս, վկայութեամբ մերոց իսկ պատմըչաց, որպէս քիչ մը վերջը տեսնանք: Իսկ Արարատ անուան համար ալ փաստ մի ընծայէ վրաց պատմութիւնն, որ սահմանածայր Թորոսայ ի հարաւոյ կողմանէ դնէ զՍՌԷԹ լեան յերկրին Քրոպաց հանդէպ Մարաց, որով մարթ է իմանալ զմերս Ջարասպ անջրպես կորճայից և Պորսկահայոց, զորս և Յոյնք պարսիկ անուամբ կոչէին Քուարթաս, իբր Քուր — ի — ասէր (լերինք հրոյ):

Սակայն մի կարծեր (ուշիմ ընթերցող) թէ մեր ազնիւ և բարձր Մասեաց շնորհքն և ազգային համարմունքն կ'ուզեմ նուազեցընել և ջնջել Քիւրախտանու անծանօթ լեռ մը քան զաշխարհածանօթ Արարատին գագաթն ի վեր մղելով: Մասիս և հայրենի պատմական սրբազնութիւն մը ստացեալ է, զոր այսուհետեւ ժամանակն չէ կարող ջնջել և այնքան հին է իր պարծն՝ որքան իր գագաթն ընդ մէջ կովկասեան և Տարսուսեան պարուց լերանց. և չեմք գիտեր թէ ջրհեղեղան յիշատակքն եթէ Հայկազանց դիցական կարծիքն հնագոյն են իր յիշատակարանաց մէջ. հին պատմաց և Հարց առանց անուան միայն Հայոց լեռ ըսելովն այս խնդիրս անստոյգ մնայ. թէ

և մեր հնագոյն Հարց և պատմաց կարծիքն այլ Մտտեաց մօտ չէ, ոչ Լուսաւորիչ, որ պատմէր ազգին զգէպս ջրհեղեղին, ոչ Ազաթանգեղ որ յիշէ զՄասիս, և ոչ իսկ սահի դարուն գրիչք Խորօնեցի և Եզիշէ, և թէ և յեւտինս վկայէ յԱլլարարտեան լերինս Հայոց լինել, բայց և այնպէս շատեր Մասիս. իսկ Բուզանդ ի պատմութեան Ս. Յակոբայ Մծբ. Սարարազ կուչելով զլեւն՝ նոյնպէս ի կարգուս գնէ. հին պատմիչ՝ վարուց Սրբոյն ի յիշել զինգիւր փայտից ասպանին՝ ծանուցանէ զի տարակոյս կայր վասն լերինն և ոմանք զկորդուացն ասէին, ոմանք զՄասեաց, բայց յիշէ զի կայր ի սմա աղբիւր և եկեղեցի յանուն Ս. Յակոբայ՝, և մինչև ցայսօր ժամանակի ասելով՝ ցուցանէ զի հնուց շինեալ էր. նորագոյն պատմիչք համարձակ զՍարարազն կամ զլեւոնն ելից Սրբոյն՝ Մասիս կոչեն. — Ս. Յակոբայ վանաց և Աղիուոյ եկեղեցւոյն շինութիւնն յԱնտասասայ կաթողիկոսէ՝ 1200 տարուան հնութիւն ունի, և որովհետև հիշարանց ալ շինեց հոն, յայտ է որ անկէ առաջ այլ ոչ թէ միայն յաշխարհի մերում հոչակեալ էր, այլ ի յոյժ հետուար աշխարհս, յորոց և յուխա գային՝, և աւանդէին թէ գետ ասպանն կամ մեծ մասն մի կայր ի լերինն. մանաւանդ ի ԺԴ դարու յաւուրս աշխարհակալութեան Թաթարաց առաջին ճանապարհորդք արեւմտեայք սկսան համբաւել զտյո յԵւրոպա և շարժել ի հետաքննութիւն զԹափառուէրն՝. յորոց նշանաւոր ճանաչի Սյրիւս Հոլանտացի որ յամին 1670 պատմէ ելեալ յԱլլարարտեան լեւանն եօթնօրեայ ճանապարհաւ (5 փարսախ ելլալով յաւար), և հոն գտանէ ճղնաւոր մի Հոմայեցի Դոմինիկոս Աղեքսանդր, որ 25 տարիէ վեր բնակէր ի քարայրի, և մտեր էր ի տապանն և ամբողջ գտեր զայն, որոյ փայտէն իաչ մ'ալ տուաւ հրաշապատում ճանապարհորդին: Յաջորդ գարուն սկիզբը (1702) անուանի բուսարան ճանապարհորդ Դուանրֆոր ելաւ ի Մասիս, բայց ոչ մինչ ի գագաթն, վասն որոյ և ասպանէն տեղեկութիւն չի տար, այլ մեծ պատտառածին եզերքը ճամբայ մը գտաւ՝ ուսկից ոեպէ իջած զՆոյ և զընտանիոն: Քանի մը տարի վերջ (1720) Մեծն Պետրոս Ռուսաց ինքնակալ մարդիկ զրկեց՝ որ ելան, փնտոնեցին և բան չի գտան ի տապանէն, որպէս և ոչ յետին ելլողք յայսմ գարուս. երեւելին Բառոզ և որք յետ նորա երկրաբանք, որ պէսպէս քննութիւն ըրին և շափեցին զլեւն. այլ տապանին հետք մ'ալ չի գտան, որ թէ մնացեալ ըլլար՝ բազմադարեան և կէս մղոնաչափ բարձր սառանց տակ ծածկեալ պիտի ըլլար:

Ոչ այնքան այս նշանք և աւանդութիւնք և երեւոյթք առ հաւատացողս, որքան սքանչելի և կեզրոնական գիրքն Արարատեան Մասեաց և քիչ ընդհատ

միւս բարձր Լերանց Հայոց՝ յորս կարծիք տտպանին, հիմկու հմտագոյն աշխարհագրիացի՝ միաքն և զարմանքն գրաւեն, և աստուածային խնամոց ընտրութեան յարմարագոյն մարդասփիւռ կէտ ճանաչեն զայն՝ քան զբարձրաբերձ լերինս Հնչկաց և Դիպեթաց։ — Այրարատեան Մասիք Հայոց Մեծաց կենդրոնն է, և իր զանգուածոփն բոլոր հին աշխարհին կեդրոն ծանրութեան ծանուցեալ։ Այրարատեան աշխարհն ալ բազմապատիկ տեսութեամբք կայ ի կեդրոնի բնական և քաղաքական երկրիս։ — հոն աշխարհի երկարագոյն գծին որ ի Պէհրինկայ մինչ ի գլուխ Բարեյուսոյ՝ միջավայր է Այրարատ։ — Ատլանդականէն Խաղաղական ովկիանոսին ծովուց միջոցն է Այրարատ։ — Իսլանտիոյ որ ի Հ. Մ. ծայր Եւրոպիոյ և Հնդկաց հարաւագոյն ծայրին միջավայրն է Այրարատ։ — Ափրիկիոյ Սենեկալի սահմանէն սկսեալ անապատաց որ յԱրաբիոյ կ'անցնին յԱսիա և մինչև ի Փէքին ձգուին՝ միջատեղն է Այրարատ։ — Ճիպրաղբարէն մինչև ի Պայքալ տարածեալ ճահճաց միջատեղն գտուի Այրարատ, իբրև ուլտիս մեծի ծովու ցամաքելոյ և ցամաքաց լճացելոց։ — Կովկասեան և Հնդկագերման ցեղից, Մոզոլեան և Եթովպական ցեղից միջասահմանն է Այրարատ. և բարձրութեամբ երկրին առուելեալ քան զմերձաւոր շրջակայ աշխարհս, յորս իջուցանէ տաննիւ չափ չափաւոր մեծութեամբ գետեր, կլիմային ընդ ազնուագոյն աշխարհաց դասակից (թէ և հիմայ քան զնոսա ցրտագոյն), մարդկային քաջահար միաք իսկ չեն կարող լաւագոյն տեղ մը ցուցանել յերկրագնտիս ի սփիւռ և ի ծաւալումն մարդկութեան յես ջրհեղեղին։

Այսպիսի բարեղէպ տեղւոյ մը զազաթ իջուց Նախախնամութիւնն երկրորդ մարդկութեան նահապետը իր պատասպարան նաւափն և ընտանեօք. և այնպիսի բարձր կէտէ բարձրագոյն և հրաշխստոն տեսութեամբ ցոյց տուաւ երկրիս շուրջ ոլորաւ՝ ուր իր սերունդը բազմանալով պիտի ծաւալէին, ինչպէս այն բոլորածիր և մի ըստ միջէ հեռաձիգ ծիրքն ալիաց որ լայնաբաց հեռանային ի լեռնէն յիջանել և ի նստել տապանին հոն։ —

Առաջին գործ երկրորդն և հմտագոյն Աղամայ յելանելն ի փրկուէտ արգելանէն՝ եղաւ դաւանութիւն և պաշտօն անզուգական երախտեաց Արարչին որ առ ինքն և առ տուն իւր, սրոյ հրամանաւ մտաւ և ելաւ ի միակ ճշմարիտ ոլորտապատ նաւէն. և հազիւ կոխելով՝ այն նոր ցամբած բարձր նաւահանգիստը՞, սեղան մը կանգնեց Աստուծոյ, և իր խնամօք տարի մը սնած սուրբ չորքոտանի և թեւաւոր կենդանիներէն ողջակէզ պատարագ հանեց, իր ընտանեօքը սեղանին չորս բոլորը առած ընդ շնորհակալեաց՝ մտղթելով ի Տեառնէ գթութիւն ի վերայ ասպագայ զարմին և խնայել յայնպիսի ա-

հազին բարկութենէն, եթէ դարձեալ երբեք յանցաւոր գտուի սխալուտ մարդկութիւնն : Պատմութեանց և մանաւանդ Ս. Գրոց մէջ քանի մը սիրալի պատարագք կամ զոհք յիշուին որպէս Աբելին, Աբրահամուն, Ահարոնի և Սաղմոմնի, և այլն, բայց Նոյայ պատարագն ամենէն վսեմագոյն և բազմագէժ՝ և աննման կ'երեւայ մեզ. սեղանն 15—6000', բարձր լերան մը ոտրատափ որ երկրիս համաշխարհական վտանգին ազատութեան առաջիննշանն եղաւ. զօհն ամենայն ցամաքային կենդանեաց ազնուագոյն սեսակներէն ընարուած, քահանայն 600 տարուան ծերունի մը որ միակ վկայ է 2000 տարուան մարդկութեան յիշատակաց, զոր ջնջեցին անդնոց և երկնից հեղեղքն. այն հին աշխարհին և նորասկիզբն աշխարհի մէջ իբրև կենդանի ներկայ մը կեցած, աւելի քան զանժանօթ ապագայն որոյ սկիզբն պիտի ըլլայ, կու մտածէ զանցեալն որոյ կատարածն եղաւ. և անոր վրայ 600 անգամ արեւուն շրջանը դիտող աչքերն կու ծածկին արտասուօք երբ Այրութեան լերանց շուրջին տարածուած հովիտներն և դաշտերն կու դիտէ, որ երբեմն հսկայից շինութեամբ և բնակարանօք լցեալ, հիմայ անոնց յղփացեալ մարմնոց նշխարօքն, տեղ տեղ դիզուած անշարժ ոսկերտեան միտն կու յայտնին, թէ այդ անհուն անշունչ անապատ երկիրն երբեմն մարդկան և կենդանեաց անդրանիկն կրելով ոգեւորել էր. — կանգնեալ ընդ մէջ աշխարհի մեռելոյ և նորածին աշխարհի, մէկուն քաւութիւն՝ մէկայլին բարգաւաճումն կու խնդրէ իր ջերմոտանդագին ընսանեօքն. որոց յօժար ունկնդիր Քարձրեալն՝ երկիցս և երիցս խոսամամբ, օրհնութեամբ և պատուիրօք հրամայէ նոցա աճումն և բարգաւաճումն, սերիլ, ընուլ գերկիր աւելի քան զառաջինն, և իշխել ամենայն անբան բնութեանց. չունենալով այնուհետեւ կասկած և հրկիւղ նորէն համաշխարհական ջրհեղեղի մը, և յառհաւատ շեայ խոստման իւրոյ և յուսոյ մարդկան, քաջալիբերելով ասէ Աստուած. « Զաղեղն իմ եղից յամպս, և եղիցի ի նշանակ յաւիտենական ուխտին » ընդ իս և ընդ ամենայն երկիր: Եւ եղիցի ի գումարել ինձ զամպս ի վերայ երկրի, երեւեսցի աղեղն իմ յամպս, և յիշեցից զուխտ իմ . . . » և ոչ եւս եղիցի ջրհեղեղ ի սատակել զամենայն մարմին » : Անձրեւն միշտ իբրև սկար յիշատակ մի կ'ընծայէ ջրհեղեղի. ծիրանի գօտին այլ նորօգէ անոր վախէն փրկութիւնն և Աստուծոյ խոստումն. անոնցմէ հաստատա և հզօրնշան դաշտնց Աստուծոյ և մարդկան՝ ուխտից արձան՝ լեանն արարատեան ընդ մէջ երկնից և երկրի կսթողեալ՝ կայ և մնայ ի վկայութիւն անցեալ և ներկայ աշխարհաց, և ի յիշատակ մեծագոյն անցից մարդկութեան և երկրի³⁷ :

Այս ուխտից լերան վրայ մեծ նորութիւն կամ փոփոխութիւն մ'ալ
 Հաստատեցաւ մարդկան բարոյական և բնական կենաց. հրամայեց բնու-
 թեան հաստիչն որ անբան կենդանիք ոչ միայն ծառայ ըլլան մարդկան՝
 այլ և սնունդ. որպէս անոնք զիրար ուտէին, մարդ ալ կարենայ ուտել
 զմիս անասնոց: Այս դիպուածն միայն իբրև մեր հայրենեաց երկրին վը-
 րայ հանդիպեալ յիշեմք, իսկ խորհրդածեւիչն այս ծանր նիւթոյն վրայ թո-
 զումք ընդհանուր մարդկային անտեսութիւնը քննող իմաստասիրաց:

Ե

ՆՈՅԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ՄԻՆՉԵՒ Ի ԲԱԺԱՆՈՒՄՆ ՍԵՐՆԴՈՑՆ

Ոչ միայն Այրարատեան երկիրն ուր իջաւ Նոյ ստսպանան, և ոչ Պաղեստին միայն ուսկից հոչակեցան հնազոյն ոսուզութիւնք, այլ մինչեւ արեւելից ծայրքն Չինք, և արեւմտից ծայրքն Մեքսիկացիք Ամերիկոյ կաւանդին շատ կամ նուազ աղաւաղ ջրհեղեղին և Նոյի յիշատակը, որպէս անուամբ կոչելով այս զարմանալի անձը. բայց աւելի Այրարատոյ շորս դին շրջանակեալ աշխարհաց մէջ կու յաճախեն զրոյցքն. մերձաւոր ազգք և աշխարհք, ինչպէս Հայք Ասորիք, Քաղզէացիք, Պարսք, Կովկասեանք. Ս. Գրոց հիմնական պատմութենէն շատ շեն հեռանար. իսկ Յոյնք որ երկրիս շատ մեծամեծ դիպուածներ իրենց փոքրիկ աշխարհին մէջ կամ ի սահմանս փոխադրեն ճարտար գրչաւ և հաճոյալուր առասպելեօք, ոչ մէկ՝ այլ քանի մը ջրհեղեղ պատմեն, և զլիաւոր երկուք Ովկիդեան և Դեւկալիոնեան. այս եաքինս հնազոյնն և հոչակագոյն է և համարի Նոյեան կամ արարատեան ջրհեղեղին անդրայիշատակն: Երբ քրիստոնէութեան առաջին ճառագայթքն զարնուեցան հեթանոսութեան վրայ, առասպելահրաշ Յոյնք և հեռեւուզք յերկու կրօնից ալ խառնուրդ ընելով, ըստ ախարժակաց իւրեանց Ս. Գրոց յիշատակները առին կէս քրիստոնեայ և կէս հեթանոս մաօք, և Սիրիլլայից տաղք հրատարակեցին, յորս ընթեռնամբ հրամայեալ Նոյի նաւել

« Ի ... Փռիւզիոյ լեռն մբռանայ ի սահմանս
 Բարբազիտակ իրախառնան, կոչեալ անուն Արարատ
 Բա՛ս՝ անարին Մարտիոս աղբերանոյ զաւաղին »:

և զարձեալ.

« Ով Փռիւզիո, ի բարբազիտո ալեաց գու նախ մբարձքես զլուխ
 » Ըզվերանեալ մարդկութեան զարժ սանելով մեծ գրեցիս զայեակ »:

Անշուշտ Գնտասիկեան հեղինակք տաղիցս Փռիւզացիք էին և Փռիւ-

դիա փոխադրեցին զՆոյ. և հին Հայոց և Փոխդացոց յարակցութիւնն այլ օգնական էր կարծեացն, որ այնքան զօրացաւ մինչև զրամք Ապամէոյ քաղաքին Փոխգիոյ՝ քրիստոնէութեան առաջին (Բ?) դարուն դրոշմեալք, ներկայացունեն զառպանն հանդերձ երկու հաւուք և ձիթենեայ շիւղին, և տապանէն ելլող անձամբք. որ են ըստ հեթանոս մտաց Դեւկալիոն և Փիրրա: Այսչափ օտարք մտահնալով Ս. Գրոց պատմութեան տակաւին հին և ստոյգ աւանդութիւն մը չեն ընծայեր Նոյի և իր ընտանեաց վրայօք, այլ դարձեալ հեռանան յառասպելս. որով միայն ի Ս. Գիրս գտանի ստոյգ այլ սակաւ յիշատակ Նոյեանց յիս ջրհեղեղին և անստուգից մէջ հաւանագոյն՝ Այրարատայ մերձագոյն աշխարհաց աւանդութիւնք:

Սուրբ գիրք ամենեւին չեն յիշեր Նոյայ բնակութեան, ճամբորդութեան, որդէծնութեան և մահուան տեղն. այլ միայն զի 350 տարի այլ ապրեցաւ յիս ջրհեղեղին և մեռաւ 950 տարուան. և մէկ կամ երկու գէպք ալ այսինքն հողագործութիւնն, այգի անկելն, և անոր արդիւնքով գինոփառն և գինոլութեան արդասիքն, ծիծաղելի ըլլալն ի Քամայ, և սուր ցեղը անիծանելն, օրհնելով զՍեմ և զՅաբեթ ընդ նմա: Այսչափ է Ս. Գրոց յիշատակն այս մեծ նահապետին երկրորդ կենաց վրայ:

Ջրոց կամաց կամաց ցածնալ և ցառքիւն և Նոյի ալ նոյնպէս շարժիւն ի բանալ զպատուհան և զձեղուն տապանին և յելանելն անտի, տան գուշակել, որ մէկէն չ'իջաւ ի լեռնէն, այլ առ ժամանակ մը բնակեցաւ անոր վերայ անքոյթ տեղ մը. և ամենայն աւանդիչք⁹⁹ միաբանին թէ առաջ ժամանակ մը լերանց վրայ բնակեցաւ Նոյ: Ի մերայոց ոմն 50 տարի առէ բնակեալ յԱլուի. եթէ այնպէս էր՝ Նոյի Նախ-իջեւանն ալ հոն մօտ բնտեղու էր. և ուր ալ որ ըլլայ տապանակիր լեռն՝ իր ստորոտը պիտի ըլլար այդ Նախիջեւանն կամ Նահրեման կամ Թմանիմն: — Ըստ Աննեան Բերոսի՝ Նոյ լեռնէն իջաւ ի մօտակայ հովիտ մը¹⁰⁰, որ գեռ ջրախեղդ մարդկան դիակամբք ծածկեալ էր, վասն որոյ և անուանեց զայն Միթրատամ, այսինքն աղէթափ մարդկան տեղի. և հոն քարերու վերայ արձանագրեց եղած դիպուածքն: Իսկ բուն Բերոսն քաղզէացի և հետեւող հին պատմիչքն ասեն երբ Քսիտութի (Նոյ) նաւէն ելաւ՝ յետ պատարագին անյայտ եղաւ, աստուածներն զինքն առին կամ փոխադրեցին ուրիշ տեղ. իսկ անոր ընտանեացը իմացուցին որ նաւուն իջած տեղն է Հայաստան, և պատուիրեցին որ երթան յԱրեգ կամ Սիբարացւոց քաղաքն և հոն ջրհեղեղէն առաջ թողած գրքերն հանեն: Պատուէրն առասպել ալ ըլլայ քաղաքն իրական է. բայց ո՞ր արդեօք: — Մեր հնախօսն համարի զՍպերն Բարձր

Հայոց, որ հնազոյն ժամանակ աւելի նշանաւոր տեղ էր քան յետոյ. իսկ յարաաքնոց ոմանք համարին զկարիսթ Սեֆեր որ թարգմանի Քաղաք Նամակաց ի սահմանս Պաղեստինոյ և յիշի ի Սուրբ Գիրս, և ոմանք ըստ Քաղզէացոց ի սահմանս Բաբելոնի, ընդ մէջ Նինուէի և Բաբելոն քաղաքի, յեզերս Եփրատայ. և մեզ այլ այս եւրքի գրութիւնս քան զառաջինս հաւանագոյն երեւայ, բայց աւելի եւս հաւանագոյնս՝ աւելի այլ գէտ ի հիւսիս կարծեմք, և տեղը յետոյ յիշենք (61): Նոյն քաղաքն էր Ամենամատեան անուանեալն, Պանապոլիլոն ըստ յունականին, յորմէ էին ոմանք ի նախորդաց Քախութրեայ, ըստ Քաղզէացոց: Այսպէս սոքա իրենց հայրենեաց մէջ կու գնեն թէ՛ Նոյի (Քախութր.) ջրհեղեղէն առաջ բնակութիւնն, և թէ իրեն ընտանեաց անկէ վերջի բնակութիւնն¹⁰¹. իսկ տապանէն ելլալն ի Հայս կու խոստովանին, որով մակարեւել տան թէ բնակութիւնն այլ հոն եղած պիտի ըլլայ: Իսկ Հրէից աւանդաբանք¹⁰² ինչուան ի Դամասկոս կու տանին Նոյայ բնակութիւնն, ուր ընդ Սեմայ և ընդ Մելքիտեղեկի ասեն ձեացեալ: Հրէից գէմ գրող հին հեղինակ մ'ալ, Մոլոն, (Եւսեբ. Պորոստ. Աւետ. Թ. ԺԹ.) կ'ասէ, թէ ջրհեղեղէն ազատողն Հայաստանէն եկաւ առջի երկիրը. բայց ան տեղէն ալ հալածուելով գնաց Ասորոց անապատ լեռնակողմը: Ասորիք ի Միջագետս և Արարք յԱրարիս (յԱրա-Նուհ) համարին զգերեզման նորա: -- Աւելի զարմանալի է Նոր Բերոսեան զրոյցն որ զՆոյ յիտալիա կու տանի և հոն աշխարհաշէն կ'ընծայէ. ջրհեղեղէն ետեւ, կ'ասէ, Նոյեանք միշտ երկուորեակ ծնանելով, շուտով բազմացաւ մարդկութիւնն և Հայաստանէն դուրս ելաւ. Նոյ ալ յիտալիա գնաց Յաբեթ սրբուհի, բայց մինչդեռ ի Հայաստան էր սովորեցուց և աւանդեց սրբազան գիտութիւններ և մանաւանդ աստեղաբաշխական և սումարական բաներ և նշանագրելով թողուց սրբազան պաշտօնէից՝ որք Սակա անուանեցան, այսինքն քահանայք զոհագործ, և իրենք միայն կրնային կարգալ և իրենց յաջորդացն աւանդել այն գրուածքը: Հասարակ ժողովրդեան ալ սովորեցուց երկրագործութիւն և այգեգործութիւն. բայց դեռ գինեոյն զօրութեան փորձ չըլլալով ինքն իր արուեստէն խաբուեցաւ, որպէս և Ս. Գիրք պատմեն. բայց Անիոս յաւելու պատմել վասն Քամայ զոր արտաքինքն ասեն ինչ որ բրաւ Սատուանոս իր հօրն Ուրանոսի, կամ Արամազդ Սատուանոսի: Իսկ Հայք վասն երախտեաց Նոյի կոչեցին և պատուեցին զնա իբրեւ ատուածային զօրութիւն և սերմն աշխարհի, (երկինք և արեգակն) Ոլիպամա և Արսո, և այս անուամբք քաղաքներ շինեցին և նուիրեցին նմա¹⁰³. Թէ և այժմու Հայքս ոչ այսպիսի քաղաք ճանաչեմք և ոչ այսպիսի բառեր: Թէ

Հայք և թէ Խոալացիք, ըստ Բերոսի կամ Անիոսի, նկարէին զՆոյ իբր լարիչ արեգական և լուսնի և ուղղիչ պետութեանց : Նոյնպէս Նոյայ կնոջն ալ որ կոչէր Դիւթէա (Դիւթ?) կամ Տիւէա¹⁰⁴ և յետ մահուան Արեւտիա (երկիր) և Երասա (կուր) աստուածական պատիւ ընծայեցին : — Մինչդեռ ի Հայս էր Նոյ՝ ծնաւ շատ զաւակներ, յորոց Արազա¹⁰⁵ զուարն՝ (յորմէ կոչեցաւ Երաստի գետ) ծնաւ զՍկիտա, որոյ անուամբ Հայաստան կոչեցաւ Սկիտիա կամ Սկիւթիա. և Սկիտա ծնաւ զՆապոս և զՊրուատոս կամ Բրուտոն : Նոյայ որդւոց մէկն այլ կոչէր Հերմինոս, անշուշտ ասկից այլ Արմենիա կոչուա՞ն յսելու է : Իսկ ուրիշ հնախոյզ պատմիչ մ'ալ¹⁰⁶ զԱրաշա ինքն անուանէ մայր Բրիտանի, յորմէ Բրիտանացիք. այս ավանդութեանս կերպով մը զուգաձայնի Հայոցն Մանիսան զոր քիչ մը վարբ պիտի յիշեմք :

Նոյ յետ 260 տարւոյ ջրհեղեղին եկաւ յԵրասուրիա Խոալիսյ, յետ հաստատելոյ զանազան գաղթականս յԱսիա. Հայաստանէն կըլալու ատեն հոն թողուց Նոյ զԱրաշա և զՍկիտա, և իր տեղ քահանայապետ դրաւ զՍապաթէոս—Սակա : Ո՛ղ էր Սապաթ. — ի Ս. Գէրս յիշի Սարաթա (Մինդ. ԺԱ. 7) որդի Գուշայ : Դիոդ. Սիկիւլիացի (Գ. Կ) յիշէ հնապսն Բաքոս մի՛ սրդի Արամազդայ և Պրոսերպեանայ, որ կոչէր և Սարաս կամ Սարազ, և նախ զեղինս լծեց յարօրադրութիւն սերմեացանութեան, վասն այսորիկ և եղջերաւոր նկարի : Յիշէ զսա Անիոս, բայց որդի Սարայ որդւոյ Քամայ անուանելով : Կորնայից և Պարսկահայոց և Քաղզէստանի մէջ ծանօթ է Զաւ կամ Զապոս և Զապաթոս գետք, և շատ հաւանական է որ խոստ հին ատեն յայն կողմանս բնակած է նահապետ ոմն համանուն, թէ և ոչ Անիոսեանն, որոյ համար ասէ՛ թէ յ'300 ամի ջրհեղեղին, յետ Հայոց ստահանակից զանազան աշխարհաց մէջ յածելու՝ Պոնտոսէն անցնելով եկաւ յԽոալիա առ Նոյ, և թագաւոր կարգեցաւ Օտարածնաց կամ Գաղթականաց. որոց վրայ իրեն յաջորդ դրաւ զորդի իւր Սարաս, յորմէ Սարանացիք, և Սարաս քաղաք Տոսկանայ, որ յիշի և ի Սարաբոնէ : Սարատէոս մեռաւ յամի 341 ջրհեղեղին, և իր տեղ դրաւ Նոյ զորդին զԿրաւնոս. որում յաջորդեց յետ մահուան Նոյի՝ Արանոս. առ որ եկան գաղթականք ի Հայոց և ընդունելութիւն գտան : Այս Սարատէոս ատի հեղինակ հոշակեալ Ենկուպեան տախտակացն¹⁰⁷, կամ անոնց նախագաղափարաց՝ զորս գրեբ էր ի կրոյսէս (Աղուիլլարիա) դաստակերա քաղաք իւր : Ասոնց նման գտուեցան ուրիշ տախտակներ ալ ի վիթերպոյ՝ որք Արարարեան կ'ըսուէին, ըստ Անիոսի : Յանուն Հայոց կամ Սակաց, զի այսպէս անուա-

նէին Հայք յայնժամ, եկելոց ընդ Նոյի և Սարատայ, Սակց կամ Սակնի կոչեցաւ ազգ մի Տափանաց. յարակից Սարքինաց, և յանսն նոցա բերան Պաղոս գետոյ Սակա կոչեցաւ:

Այս աւանդութեանց մէջ մբբան հաւանական կամ ընդունելի բան ըլլալն գտար է ստազել. միայն յիշեմք որ Նոյի այնքան հետու տեղ երթալն մեզ բարբառին տնընդունելի է. և երկրորդ որ Սակայ վրայ աւանդութիւնն ըննութեան արժան է. այսինքն այսպիսի տնուամբ հնազոյն ազգի մը ըլլալն, և անկէ սերերն Սկիւթաց: Ս. Եպիփան և այլք կու պնդեն թէ պատմական ժամանակաց սկիզբն Սակ ազգ մը կայր անուանի և աշխարհածանօթ, որ Եգիպտացոց հետ կը վիճէր հնութեան կամ ասաջնութեան վրայօք և երբ Եգիպտացիք իրենց երկիրը նախազատին վասն շերմ և բարեխառն կլիմային խրեանց յարմարագոյն բնակութեան մարդկան. Սկիւթացիք ասէին թէ իրենցն ալ այնպէս էր յառաջ և յետոյ փոխուեցաւ կլիմայն. ինչպէս որ հին Պարսից աւանդութեան մէջ ալ կայր այս: Պարզապէս ասելով շրհհեղեղն ինչուան Բարեշունի միջոց, մարդկութիւն կամ ժողովուրդ Սակ և Սկիւթ անուանէր ըստ մտաց Եպիփանու և հետեւողոցն, և կրնը իսկ նոցա Սկիւթութիւն: Ստուգագոյն պատմիչք ալ հաւանին հնութեան Սակաց, թէ և ոչ այսքան հետու ասնին զայն, այլ և ոչ կարեն ասել անոնց ծագումը կամ նախահայրը: Ազգին հին ծագման նման հին է և Սակեան ասնը կամ բարեկենդանը, որ յամենայն Ասիա և ինչուան ի Յունաստան կատարուէր այսու անուամբ. թէ սմանք ասնին ծագումը Քրիստոսէ 6 կամ 7 դար ասալ միայն կու գնեն:

Այս խոր հնութիւնները թողլով, աւելի խորագունին բայց պարզագունին ելլանք, մեր ազգային յիշատակարանաց և հաւատարմագոյն պատմըչաց մէջ բնութելով զՆոյ ի Հայաստան. սրան և իր որդոց հսն բնակութեան և գործոց յիշատակները գրի անցած էր, ըստ նախնեաց աւանդից, և երգովք եւ նաւագարանօք ալ յեղյեղէին մեր հին հարքն. բայց արդէն քրիստոսնէութեան ասաջին զարեբուն մէջ ալ կորսուած էր այս մասանս. միայն քանի մը աւանդութիւն ձեացեր էր¹⁰⁰ զար և յիշէին ի մէջ իմաստասիրաց Յունաց՝ վարժակիցք նոցին Հայք յԱթէնս կամ յԱլեքսանդրիա. և զլիաւար ի նոսա Ոլումպիոզոր՝ յունանուն բայց հայազգի, որ թէ այս գրոց և թէ երգոց ձեացորդ յիշատակներուն համաձայնութեանն վկայ եղած էր իր հայրենեաց մէջ կու հաստատէր ըստ Բերսեայ աւանդութեանն թէ Քաթաւթրոս—Նոյ տապանէն իջած էր ի Հայս. և որպէս կարգ

բանիցն ցուցանէ՝ ի կործայս և ոչ ի Մասիս. վասնզի յեա քիչ կամ շատ ժամանակ կենալու ի Նախիջեւանի անդ ուր բնակեցան յելաններն ի տապանէն, Սիմ որդի Նոյի, որ է Սեմն Ս. Գրոց, ելաւ մտաակայ երկիրը դիտելու, կամ յարմարագոյն բնակութիւն մը բնտուելով, կամ ջրհեղեղէ առաջ ծանօթ տեղի մը յիշատակ և կամ թերևս ջրհեղեղին թողած նշանները, և իր ելած տեղէն դէպ յարեմուտս հիւսիսոյ գնաց, անշուշտ գետոյ մը ընթացք բռնելով և լեռներէ ու կրճերէ անցնելով, մինչև հասաւ երկայնաձիգ լեռնապարու մը, որուն ստորոտը չափաւոր կամ սլաքի դաշտ մը կար և մէջէն գետեր կ'անցնէին: Երկու (լուսնական) ամսոյ չափ ժամանակ հոն բնակեցաւ, և այլ լեռանց պարուն իր անունը առաւ. այս առաջին անգամ է ի պատմութեան յիշուած տեղոյ՝ անուանադրութիւն. և ինքն նորէն դարձաւ դէպ յարեւելս հարաւոյ՝ իր ելած տեղը: Սիմ լեռները մինչև հիմայ նոյն անուամբ ծանօթ են ի Հայոց, Արածանոյ և Տիգրիսի ջրոց անջրպետ ընդ մէջ Տուրուբերանի և Աղձնեաց. այս յետին նահանգն հնագոյն ժամանակ Հայկազանց չէր, անոր համար այս զիպաց հին պատմիչ կամ երգիչն Ասորեստանի մօտ առէ Սիմայ գնացած երկիրը, որ առաջին նահանգին նախապատիւ գաւառն եղաւ իշխանութեան Հայոց. և զանունն ալ առաւ ի նոյն ի Սիմայ կրօնի որդւոց մէկէն. զոր պատմիչս անուանէ Տարբան, յորմէ կսչեցաւ տեղին Տարբան կամ Տարօն, մինչև ցայսօր¹⁰⁹: Պէտք չէ այս Սիմայ որդւոց անունը բնտուել ի Ս. Գիրոս, ուր միայն անոր հինգ որդւոց անուանք կան, և անաբարակոյս է թէ ուրիշ շատ որդիք ալ ունեցեր է, մանաւանդ եթէ սառլք է Տարբանայ համար զրուցածն Ոլումպիոզորի, թէ ՅՍ մանչ զաւակօք և 15 աղջիօք և անոնց արամբքն, հաւանօրէն և մանչերուն կանամբք բաժնուցաւ հօրմէն, և անոր պտած դաշար եկաւ բնակելու, ուր, ինչպէս կ'երեւայ, առաջ ալ իր հետ եկած էր տղայութեանը ատեն. կամ լսեր էր հօրմէն և երիցագոյն եղբայրներէն, և իր անուամբն անուանեց զպաշտն, որ թէ՛ հնութեամբ թէ բնութեամբ, և թէ կրօնից և ուսմանց և քաջագործութեանց հանդիսիւք անուանի եղաւ Հայոց պատմութեան մէջ: Դաշտին մէջէն անցնող գետերն են Մեղ կամ Մեղրի և Արածանին յոր նա թափի, որոց ափունքը ծածկեցան շինութեամբք և մշակութեամբ. և եթէ ստոյգ է պատմութիւնս՝ անոր հարիւրաւոր շինից անուանց մէկ մասն, որ ինչուան հիմայ կու լուսի, Տարբանայ որդւոց և թոռանց անուանքն է. իսկ իւր բնակութեան տեղն ալ, ուսկից նախ սկսան որդիքն իրմէ զատուիլ՝ կսչեց և կոչի մինչև ցայժմ Տրօնք, իբր տեղի ցրուելու, և է Մեղ գետոյն աջակողմն, և դաշ-

տին արեւելեան հիւսակողմն. իսկ Տարբանայ կամ Տարուանայ սասանն գաշտին արեւմտեան հիւսիսակողմն Արածանայ եղերքն համարի, որ է բուլ գաշտին վերջին սահմանները, ուր Տաղօնք անուն աւերակ կար մեծ շէնքի նաեւ ի սկիզբն դարուս, որ զՏարօնայ անուն բերէ, եթէ չըլլայ Աստղօնից¹¹⁰ բերդն: Բայց այս սունս որ Սիմայ որդւոյն անունէն անուած է, և ոչ միայն գաշտին և գաւառին այլ և բոլոր նահանգին կամ Հայոց 15 աշխարհաց մէկուն արուեցաւ, ստուգութեան կարօտ է. վասն զի նահանգն կոչի Տարուսիք¹¹¹, և հարկ է որ այս իրեք անուանքն ալ Տարբան, Տարօն, Տուրուբերան համաձայն կամ լծորդ ըլլան:

Տարբանայ բնակութիւնն և ցրօնքն անշուշտ յառաջ է քան զընդհանուր կամ զԲաբելոնեան ցրօնս ազգաց. և իր որդւոց մէկ մասն մնացեալ է հոս և հնագանդեալ Հայկայ, յետ քաջաբար դարձի նորս և ժառանգելոյ զաշխարհս. և այսու յիշատակու Տարբանեան և Սիմեան բնակութիւնն Տարօն՝ կոչեցաւ «Առաջին տուն Հայոց»¹¹². և առաջնագոյն տան գիւտին պատճառ պիտի ըլլայ մեզի, այսինքն՝ Սիմեան և Նոյեան առաջին բնակութեանն, որ ըստ նշանակելոյ պատմութեանս էր յարեւելեան հարաւային կողման Տարօնայ, ուրեմն յաշխարհին Կործայից և ի գաւառս Կորդուաց, ուր զհանդիստ տապանին կամ զէջս Նոյայ տեսանք աւանդեալ ի նախնեաց բազմաց: Եւ հարկ է որ հիմայ հոս ի սկզբանէ պատմութեան մինչեւ ցայժմ ծածկեալ և դժուարացեալ վայրենի լերանց մէջ բնտոնեք զբնավայր Նոյի՝ և՛ որդւոցն, և ոչ ի կողմանս բնիկ Ալորատայ կամ ի Նախիջեան. վասն զի նախ, եթէ անտի ելած ըլլար Սիմ՝ ի Տարօն գալու համար պէտք էր ընդ արեւմուտս հարաւայ իջնալ և ոչ թէ ընդ արեւմ. հիւսիսայ. և երկրորդ ի Մասեաց ոսնէն մինչեւ ի Տարօն շեկած՝ ուրիշ յարմարագոյն գաշտեր կու գտնէր բնակութեան, ինչպէս Կոգայովիտ, Բագրեւանդ, Հարք և այլն, իսկ հոս Տարօն իբրեւ առաջին դուրան տեղի գտեալ կը ցուցուի. և Հայկ (որ եկաւ և նախ բնակեցաւ յառաջին տունն Սիմայ) և իր որդիք միշտ ի յարեւելից հարաւայ գէպ յարեւմուտս հիւսիսոյ խաղային ինչուան ի Գուգարս:

Արդ, Սիմայ և Տարբանայ բռնած ճամբան անշուշտ է Տարօնոյ գաշտին Աղձնեաց արեւելագոյն ծայրի ձորերուն միջոցը, Թուխայ կամ Բաղիշոյ ճամբան, ուսկից միշտ լերանց մէջ Կորդուաց գետոյն և կամ Պօհգանայ եղերքը բռնելով Կործայից խորելը կ'ելլայ. եթէ Նոյայ բնակած տեղն չէր Թմանիմ կամ Թմիխն (որ է հաւանօրէն Տմորիք ըստ Հայոց), անկէ շատ հեռու չէր, գէպ ի հիւսիս արեւելից. այսինքն Մոկաց, Ճուլամերկոյ և

Աղձնեաց հարուստին արեւելեան գաւառաց միջոց: Արփաքաղայ՝ Սիմայ անգրանկան բնակութիւնն անոր մօտ ճանչցուած է ի հասարակաց. հարկաւ հան կամ անոր մօտ էր Սիմայ բնակութիւնն, կամ Տոսե Զրուանայ, ինչպէս որ հին պատմիչ մի Հայոցս (Սեբեոս) նշանակէ յասելն զասն Հայկայ թէ շուեալ ի Բաբելոնէ եկաւ բնակեցաւ « յերկիրն Արարատայ ի ասնն որ » ի Լեւոտոյն, որ զառջինն շինեալ էր Զրուանայ, հօրն և եղբարքն » հանգրծ. և ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան Կազմեայ » Թոսին խրում»: Կազմեայ ասն գիրքն ալ յուրիշ յիշատակաց ստուգի որ էր ի հարաւակողմանս Կորճայից, և ոչ ի Տարօն. ապա հան էր և ասն Սիմայ և Նոյի. զոր և աւելի ստուգէ ուրիշ հին պատմիչ մ'այլ նոյն գիտուածն յիշելով, թէ Բել գիմելով ի վերայ Հայկայ « հասանէ յերկիրն » Արարատայ ի Տոսե՝ որ էր նոցա հայրենի, զոր շինեալն էր ի Լեւոտոյն, և Կազմոս փախտական գնաց»: Խորօնեցի (Ա. Ժ) վկայէ թէ այսպիսի աւանդութիւններ անգիր կու լսուէին գեո իր ժամանակը կամ իրմէ առջի պատմչաց ատեն¹¹³, և թէ Մարիբոսայ պատմածն այլ համաձայն է անոնց որ առէ զասն Հայկայ « գնայ յերկիրն Արարատայ. . բնակէ ի » Լեւոտոս զաշտովայրի » կամ « ի Լեւոտոյն միում զաշտովայրի » . որ զանելով առաջուց բնակեալ մարդիկ, չէնք չինէ և Թողու ի Կազմոս: Այս ամենայն պատմչաց աւանդութենէն հետեի՝ նախ որ Կազմեայ ասնն, Հայկայ առաջին բնակութիւնն յերկիրն Արարատայ, Զրուանայ կամ Սիմայ առաջին ասնն, և իր հօր ասնն՝ մի և նոյն տեղն են, և հասարակաց հայրենի ճանաչին. և երկրորդ՝ այս տեղս Լեւոտոս կամ Լեւոտոս տեղ մ'է, և Թերեւս յասուկ անուամբ ալ այնպէս կոչի, և երրորդ՝ հաւանօրէն հնագոյն Արարատայ բնակայրն հոս է¹¹⁴. որ նախ ամենայն մարդկութեան խանձարուրք կամ հայրենիք եղաւ, և յետայ Հայոց սեփական նախարուն, Հայկայ զալստեամբն և շինութեամբ. և վայել էր որ իբրև զՀարք և զՀայոց Չոր ժառանգէր մեր գիւցաղին անունն յառաջ քան զնոսա. և եթէ ցարդ չէ գիտուած այս բանս, սակայն բոլորովին անշշան՝ այլ չէ մնացած. բազմերախա Խորօնեցւոյն մասնաւոր գրուածի մը մէջ կու կարգամք ՀԱՅԱՍՏԱՆ գաւառի անուն ընդ որ անցին Ս. Հօրփոխմեանք ի Տմարեաց (որ են Կորգուք) երթալով ի Բժունիս և յԱնձնեացիս վաստուրականի. և թէ Հայաստան գաւառի մէջ կամ մօտ էր Մշկունեաց լեռն, որ Թերեւս ըլլայ հիմկու Մեքսահա լեռն յարեմուսս ճուլամերկայ: Վերջ յիշած Թմանիք (ուժից) քաղաքն, անոր մօտ Սոգոփիկ (հիմայ Սիւլիվէ), ուր Ասորիք աւանդէին զնոս տապանին, անոր մօտ Ճիւտտի լերինքն,

զոր հիմայ անդացիք ճանչնան տապանակիր լեանն, Նաճրեան գեղն, ամէնքն այլ այս կոզմերս են. ուր հարկ էր բնառել և Ս. Եպիփանայ յանուանէ յիշեալ տապանին լեռը Լուվար, և ահա մինչև ցայսօր ծանօթ է ԼԱԻՍՐ գեօզն Հայոց ի ՍՊԱՐՍԵՐՏ վիճակի, որ է ի հիւսիսայ Սողոփեայ և հար. յարեւմտից Մոկաց, և թերեւս պահէ ցարդ վերոյնդրեալ Սիրարացոց քաղաքին անունն, ուր ըստ Քաղզէացոց գնաց Նոյ տապանէն իշնալէն եանւ. — Արդ, եթէ հաւանագոյն տեղ մը կրնայ գտուիլ Նոյի տապանին և առաջին բնակութեանն՝ ըստ մեզ այս տեղս է, ընդ մէջ Մոկաց, Խիզանայ, Սղերաու, Ճէղիրէի, Ամետիոյ և Ճուլամերկոյ: Եթէ կ'ուզես յիշենք և զՆորաբղ վիճակ ընդ մէջ սորա (Ճուլամերկոյ) և Մոկաց, ուր ծանօթ է հիմայ Հայկան կամ Հէքան աւանն, որ Հայկայ աւանին և Հայաստան գաւառի անունները յիշեցունէ: Իսկ Նորաբղ քաղաքակ և հայախառն գաւառակ, ի միջին նախնեաց մերոց յիշատակեալ Նօսրդ անուամբ, արեօք չի նշանակեր ՆԱՅԵԱՆՐԻ, որովհետեւ Տըզ՝ հիմայ բերդ ըսել է ի քուրդ և պարսիկ լեզու:

Արդ հոս, հիմայ երկրիս ծանօթագոյն բաժնին անծանօթագոյն փացեալ մասանց մէկուն մէջ կ'երևին ինձ ջրհեղեղեան լերինքն Արարատայ, նախ իջեղանն Նոյի և տուն բնակութեանն, զոր Սեմ շինեց և հաստատեց, ուսկից եկաւ ինքն ալ իր Տարբան որդին ալ ի Տարօն երթալու. ուր գործաւ Հայկն և Հայաստան կոչեց, զոր թողուց կաղմեայ՝ յերթալն ի Հարք. զոր գրուեց Բել առ ժամանակ մի, և դարձեալ թափեց Հայկն, և հաստատեց ի ժառանգութիւն կաղմոսի, որս անուամբ այնուհետեւ Տոսկ կաղմեայ կոչելով հին անուանք մուսացան¹¹⁵:

Եթէ հոս էր Նոյայ բնակութիւնն, և ոչ ի Նախնաւան, իր գերեզմանն ալ հոն բնառելու չէ. և թէ բոլորովին մեզ անյայտ է Նոյայ մահուան տեղն և գէղք, բայց նոյնպէս ալ անընդունելի է Նախիջիւան գերեզմանին աւանդութիւնն, ինչպէս Մարանդայ ստուգաբանութիւնն ալ, որպէս թէ Նոյայ կնոջն գերեզմանն հոն ըլլայ, և վասն այն անուանի Մայր-անդ. միայն հաւանական երևի թէ Նոյ իր բնակած սահմաններէն շատ չհեռացաւ և ոչ հեռու տեղ մեռաւ: Իսկ իր երկրորդ կենաց 350 տարեաց մէջ Բնջ ըրաւ, կամ Բնջ յիշատակ և աւանդութիւն կայ յազգիս հաւանական կամ ընդունելի եղած: — Միայն երկու որդւոց ծնող ըլլալն կու յիշեն ոմանք ի պատմաց և յաւանդողաց. որոց մէկն մանչ էր և Մանիսն կամ Մանեանն, (եւս և Բանեանն) անուն, ծնեալ յ'200 ամի ջրհեղեղին որ է յ'800 ամի կենաց Նոյի. միւսն աղջիկ Ասաղիկ անուն¹¹⁶: Առաջնայս

Համար ասի, թէ հայրն իր նախաջրհեղեղեան որդւոց հաւասար սեպեց, և ի բաժանելն զերկիր անոր մասն տուաւ յարեւմտակողմն երկրի յայնկոյս ծովուն, և ըստ վարդանայ պատմչի Եւրոպիոյ արեւմտագոյն¹¹⁷ մասին ժառանգ եղաւ, որ է Անգղիա. և ըստ այսմ Ման կղզին յանուն նորա կոչուած է, ինչպէս որ ուրիշներն ալ Նոյի յետ ջրհեղեղեան թոռանց մէկուն, Բրուտոնի կ'ընծայեն Բրիտանիոյ անունն¹¹⁸: Այս զիպուածիս մէջ՝ մեզի Նոյի յետ ջրհեղեղին զաւակ ունենալն ալ տարակուսական կ'երևայ, զի Ս. Գիրք նշան մը չեն տար գոնէ ի բաժանման ազգաց. թէ և անկարելի և բողոքովին անհաւան չըլլայ, այնպիսի ատեն մը, որ մարդկութեան աճման մեծ հարկ և պատուէր կայր: Բայց թէ Նոյեմզարա այլ բաւական էր ի ծննդաբերութիւն, այն ատենի մարդկան կազմուածը և բարեխառնութիւնը քննելու է. և Արրահամու և Սառայի փորձն ունենալով յետ 100 տարւոյ, կրնանք ընդունիլ Նոյի և Նոյեմզարայ ծնող ըլլալն ալ: — Մանիտոնի¹¹⁹ Համար կ'աւանդեն, թէ Աստուծոյ սիրելի եղաւ և իմաստութեան շնորհք տուաւ. և թէ նա գտաւ կամ յայտնեց մուրակաց և կենդանակերպից թիւն և կարգն. և միով բանիւ ըստ Մեթոսեայ՝ ինքն գտաւ կամ վարդապետեց զաստեղաբաշխութիւն, զթիւս և զբժշկութիւն. և ըստ ոմանց զխարութիւնս աստեղաց՝ այսինքն աստղահամայութիւն և հաւահըմայութիւն. և Համբաւ իմաստութեանն հոչակէր ի բաժանել և ի ցրուել ազգաց. մինչև Ներքովի եկաւ իրմէ իմաստութիւն սովորելու և իր խրատովն թագաւորեց ի Բաբելոն: Եւ յետ 3 կամ 9 տարւոյ իրբեւ ի շնորհակալութիւն երախտեաց իմաստուն խրատատուին, Յաբեթի որդւոցմէ ճարտար և հմուտ արուեստաւոր մը գտնելով՝ իրեն գործաւորներովն հանդերձ եկաւ և քաղաք մը շինեց Մանիտոնի, և անոր անուամբն կոչեց¹²⁰, և հետը զաշինք զնելով դարձաւ իր երկիրը և հոն շինեց զԲաբելոն և զայն հին քաղաքները զոր յիշեն Ս. Գիրք (Մննգ. Ժ. 10): Քանանացւոց հետ հաւատակեցու ատեն Բել թուղթ ընդունեցաւ ի Մանեսոնէ որ գուշակէր թէ « թագաւորութիւն Յաբեթի խորտակէ զթագաւորութիւն Քանանու »: Հօրմէն (ի Նոյէ) բաժնելու ատեն, ասնն, խնդրեց և ընկալաւ յոսկերաց Աղամայ զծնագաց լսուունսն և տարաւ ուր և գնաց:

Իսկ Մանիտոնի քեռ Աստղկան էութիւնն այնքան հաւանելի և ստոյգ համարեալ երեւի նախնեաց մերոց, մինչև խոհական և հմուտ օրէնսգիր հեղինակ մի, Մխիթար Գոշ յԺԲ դարու ի գիրո զաստատանացն ի խօսելն զժառանգութեանց իրբեւ վկայութիւն բերէ թէ « Նահապետն Նոյ » ընդ որդիսն և դստերն ետ մասն վիճակի, զկողմն հարաւոյ, ըստ

» որում և կանայք թագաւորեն կողմանցն»¹²¹։ Այս հարաւային կողմն իմանան այլք զԱրարիա, զինկարեր մասն նորա, կամ զերկիրն ուստի եկն Սարա թագուհի առ Սողոմոն, լինելով յաջորդ Աստղկան։ Բայց յառաջ քան զհեռանալն մինչեւ հոն՝ պէտք էր ի հայրենի երկրին ի Հայս յիշատակ մը թողուլ։ Մեր հեթանոս նախնեաց կրօնից մէջ յետ Անահտայ առաջին դիցուհի ճանաչի Աստղիկ, և թարգմանի փոխանակ Յունաց Ափրոդիտէ և Լատինաց Վենուս կամ Վեներէ հեշտաբեր շաստուածուհոյն. սակայն երեւի թէ գէթ առ հնագոյն նախահարս մեր Աստղկայ համբաւն մաքուր էր, և իբրեւ խնամակալ և կուսաշնորհ՝ որով և սրբազան օրիորդ մը պատուէր¹²²։ Այս ինչ անստորակոյտ է, որ եթէ Նոյի զուտար այլ չէր՝ սակայն եղած է ի Հայս հնագոյն ժամանակ Աստղիկ ոմն կամ գեղով կամ վարուք կամ ճարտարութեամբ զարմանալի. որ ապա ի պաշտօն առնուած է որպէս աստուած։ Մեր երկրին հնագոյն դիցարանն ի Տարօն է. ուր որ տեսանք զՍիմ և զՏարբան եկեալ ջրհեղեղէն քիչ վերջը. հոն և Աստղկան դագարն ճանաչի, ոչ հեռի յաթոռոյ Անահտայ աշխարհամօրէն Հայսց. որ ի զուրկ Տիրինկատար լերին. Մուշ քաղաքէն ժամաւ հեռի ընդ արեւելս է Ասղնբերդ կամ Աստղնբերդ աւերակ, և միւս կողմէն հեռագոյն Տաղօնք, որ եթէ չէ Տարօն, Աստղօնք կոչեցեալ բերլի մը մնացորդ է. առանց մէկն է ըստ աւանդութեան Աստղկան բնակալանն։ Այս Աստղկան համար կու պատմէր Բիւռոսեանն Սիբիլլա¹²³, արդարախօսն քան զշաստ ի սիրիլլայց և հնապատմաց, ըստ Խորօնեցոյն, վասն որոյ և սիրելի նորա, թէ ի բաժանել զերկիր երեք որդւոցն Քսիսութրեայ Նոյի, զորս կոչէ Չրուան, Տիտան, Յապեա, առաջինն իբրեւ անդրանիկ ջանայր ձեռներէց ըլլալ և միւս երկուքին վրայ իշխանութիւն բանեցընել, անոր համար մէջերնին պատերազմ և կռիւ կ'ըլլար. մանաւանդ որ Չրուան կ'ուզէր իր որդւոց թողուլ պայազատութեամբ նախիշխանութիւնը, իբրեւ անդրանիկ սերընդեան. և այս շփոթութեանց մէջ Տիտան յաջողելով Չրուանայ երկրին մէկ մասը յափշտակեց, որով աւելի զօրացաւ կռիւն։ Յայնժամ Աստղիկ քոյր նսցաւ մէջ մտաւ և համոզեց հաւանեցուց երգամբք որ Չրուան տիրէ նախապատուաբար, բայց ոչ յաջողութեամբ զաւակացն. և առ ապահովութեան պահանջեցին եղբարքն որ անոր արու զաւակները սպանուին. և Տիտանայ ցեղէն կտրիճ մարդիկներ պէտ գրին Չրուանայ կանանց. և նորածին զաւկըններէն մէկ երկուք մը սպաննեցին, բայց Աստղիկ հոս ալ հնարք գանձելով Չրուանայ կանանց և Տիտանայ միջնորդ եղաւ և հաւանեցուց զասոնք՝ որ տղայքը փոխանակ սպաննելու զրկեն զէպ յարեմուտս

լերան մը վերայ ձգեն, որ և այս պատճառաւ Գիւցընկէց անուանեցաւ : Առասպելաքաղ Յոյնք այսպիսի գիպուած մը իրենց աստուածաբանութեանց յարմարցուցին, զՋրուանն ի Սասուննոս, զԱսաղիկ ի Ռէա, և զԳիւցընկէց լեանն յՈլիւմպոս, յաթառն Արամազդայ :

Ուրիշ յիշատակ չկայ Մանիականի և Ասաղկան վրայ առ մերայինս, բայց ի միայ ասացուածոյ թէ այդ եղբայրն և քոյր կուստկրօնք Ճացին և Թմրկօք և պարուք յօդս ժուռ դային, զեղեցիկ վարձ իրենց անարատ կենցաղավարութեանն : Այսպիսի ասանդութենէ օծանդակեալ մեր նոր Քերդազահայնն Բագրատունի իւր Հայկ վիպագն մէջ կարեւոր դրուագներ ընծայէ Մանիականի և Ասաղկան :

Նոյի Մննդոց ասանդութիւնը շատարած յիշեմք որ օմանք, սկսեալ ի Բերոսէ Գողգէացոյ, համարին թէ իր գօտերաց մէկն հեան էր ի ասպանին, յեւլալն իր հետ աներեւոյթ եղաւ կամ փոխեցաւ առ աստուածս : այս դուստրը ոմանք նոյն իսկ Յարեթայ կիւնը համարին՝ Սամրէր, կոչեցեալ, և առջինն ի Սիբիլայոս : և զանունն ալ ոմանք մեկնեն նշանակել քոյր Սեմայ և Յարեթի : և նոյն համարին զսա ընդ Երիտրեան կամ ընդ Պարսկային կամ քաղգէացի Սիբիլային : և կերպով մի նոյնանայ ընդ Ասաղկան : Սամրեթայ կ'ընծայուի ջրհեղեղի վրայ գրուածն որ ի Սիբիլական մատեանս : Յայտնի է որ անհիմ ասանդութիւնք են ասոնք, բայց հնախոյզք միայն հաւանին թէ Սամրեթ հնագոյն է ի Սիբիլայոս, և ըստ ոմանց շատ գարեբով նախ քան զՄովսէս :

Յետ ծննդաբանութեան Նոյի կարեւոր ասանդութիւն է իր կտակն և բաժանումն երկրի առ որդիսն : Եբրայեցիք յիշեն գրով ալ 6 կամ 7 զլուսի բան պատուիրանի նման ասանաբանեայ օրինաց ի Նոյէ ասանդեալ առ որդիսն : բայց հնագոյն պատմիչք նոցա և Ս. Հարք՝ ամենեւին ոչ յիշին զայսպիսի բանս, վասն որոյ և շինծու են : Բայց և շտաք ի հարց հաւանին և առնն թէ Նոյ բազում ինչ ասանդեց և պատուիրեց որդւոցը, և մասնաւորապէս խաղաղութեամբ կենալ և չի զրկել զերար, թերեւ իր ասանն իսկ տեսնելով անոնց հակառակութիւնը վասն արապետութեան ի վերայ երկրի կամ ընտիր մասանց նորին : և ասոր համար ինքնին բաժանեց նոցա զերկիր, կամ սահմանեց իրենց երթալու կողմերը, իր մահուրնէ 20 կամ 16 տարի ատաջ : և երգմանք պահանջեց իրենցմէ այս բանին : Այս բանս այնքան ստոյգ համարէին նախնիք, մինչեւ ո՞նք ի Ս. Հարք¹³⁴ ընդ հերետիկոսս դասէ զչհաւանողսն : Յերից որդւոց Նոյի ծագեալ ազգաց բարբը նկատելով հետեցուցած են ասանդաբանք

Թէ Նոյ յանձնեց Սեմայ մասնաւորապէս սրբազան կամ քահանայական պաշտամունք և զրքերը. Գամայ յանձնեց ծառայական աշխատութիւն և երկրագործութիւն, իսկ Յարեթի՝ զինուորութիւն և պաշտպան կալ իրաւանց արիութեամբ ընդդէմ բռնութեանց¹³⁶. Իսկ ըստ ժառանգութեան կամ աշխարհակալութեան՝ Սեմայ բաժին ընկաւ արեւելք կամ մեծ մասն Ասիոյ. Գամայ՝ հարաւ կամ Ափրիկէ. Յարեթի՝ հիւսիս և արեւմուտք, կամ արեւմտեան հիւսիս, Ասիա և Եւրոպա. ինչպէս որ պիտի տեսնեմք իրենց որդւոց և թոռանց ազգաբաժնէն՝ ստուգեալ ըստ Ս. Գրոց. Բայց և յառաջ քան զմեծ և զաշխարհահռչակ բաժանումն և սփռիլն ազգաց և լեզուաց, ի Բարելոնէ, մտանական բաժանմունք և սփիւռք եղած պիտի ըլլան յես մահուան Նոյի, և թերեւս յառաջ իսկ քան զայն. և նոյն իսկ երեքինց ցեղապետքն Սեմ, Գամ, Յարեթ, որք հաւանօրէն հօրերնուն մահուան ներկայ գառեցան, ասկէ տուալ ալ զանազան կողմեր գնացեր և տուն հաստատեր էին, ինչպէս Սեմն ի Սիմ և ի Չարուանդ որ ի Պարսկահայս, և ի կողմանս Բակտրիոյ, ըստ աւանդութեան հին պատմչաց մերոց. և ճանապարհագիրք ամանք Եւրոպացիք¹³⁶ ԺԷ. դարու աւանդեն Սեմայ շինել զվիճագործ ազգիւքն Գարապաղ գեղջ ի Հին Նախիջեւանու, որոյ ջուրք քարացուցիչ զօրութիւն ունին, և նոյն ինքն Սեմայ աղօթիւք կամ զօրութեամբ ասնն բղիւկաւ: — Հոս Սեմայ վրայ խօսքերնիս վերջացնելով՝ յիշենք մեր զխաւոր պատմչաց մէկուն¹³⁷ աւանդածն, թէ արաքիներն (Թնւի թէ Քաղզացիք) Քանդախս կոչէին զնա, ինչպէս սերիշներն այլ՝ Չրուան: — Աւանդութիւն տեղացեաց՝ զՔանդախս գեօղ Երեւանայ, Գամայ քոջ յիշատակու ճանաչէ. որ թէ ոչ այնքան հին, այլ զարձեալ Գամայ զարմէն կրնայ շինուած կամ բնակեալ սեպուիլ, ի Քանանացւոց սերնդոց որք փախան ի Հայս յաւուրս Յեսուայ: Նոյնպէս կ'ըրուի, և թերեւս աւելի հաւանօրէն, թէ և Քուշ՝ անդրանիկն Գամայ՝ յառաջ քան զերթալն յԱփրիկէ, Հոս Եթովպացւոց հայր եղաւ, բնակելով նախ յափունս Երասխայ, յԱռանն Սիսակեան, որ է Եթովպացւոց երկիրն ըստ Ս. Գրոց, զորով պատի Գեհոֆն — Երասխ: Յիշեմք այս գետոյս անուան զանազան պատճառաց կամ յարմարութեանց մէջ և Ռաքսիա անուան նմանութիւնն, որպէս կոչէր յոմանց կիսն Գամայ: — Իսկ Յարեթայ համար մասնաւոր բնակարան կամ շինութիւն մը չեն աւանդեր ի Հայս. թէ և ասոր բնակութիւնն և ժառանգութիւն ստուգագոյն է քան զեղբարցն կալուածս:

Զ

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱԶԳԱՑ ԵՒ ԼԵԶՈՒԱՑ

ՀԱՅԱՍՏԱՆ ՎԻՃԱԿ ՅԱՐԵԹԵԱՆՑ ՄԻՆՉԵՒ Ի ԹՈՐԳՈՄ

ԱԶԳԱՑ պատմութեան ամենէն հետաքննելի և քննադրելու խնդիրն՝ է իրենց ծագման և ցեղապետին գիտն, և հնութեամբն ի հարկէ ամենէն մութ և երկբայական խնդիրն այլ է. բայց քանի որ յիշատակարանաց մնացորդք կամ նշաններ գտուին, հետևողք և մարդապատումք ոչ երբեք պիտի գտորին այդ քննութենէն և ի նորանոր կարծեաց, որք եթէ տեղ տեղ քիչ մը լոյս ծագեն, մթութիւնն ալ աւելցընեն ուրիշ մասանց վրայ այդ ընդարձակ ասպարիզին մէջ: Լեզուաքննութիւնն որ հիմայ խմաստասիրաց գլխաւոր մտադրութեանց մէկն է, և պատմական ու տրուեստական յիշատակարանաց պակասութիւնը լրացընէ, ազգաց ծագման և յարակցութեան յայտարար ծանուցեալ է, արժանապէս. սակայն այդ լեզուաց գիտութիւնն կամ քննութիւնն ալ այնքան բազմակնճիոն և դիւրութաբ է՝ որ աւելի շատ տարակոյսներ և վիճմունք հաներ է այս խնդրոյս մէջ, քան իրական ապացոյց: Եւ հարկ է խոստովանիլ որ, ի վերայ ամենայն ջանից և հետաքննութեանց հնարաց երկու դարէ ի վեր, դեռ սակաւածանօթ և զգուշահաւատ է ազգաց ծագման և առաջին բնակութեանց և գաղթականաց խնդիրն. և ալ աւելի տարակուսական և անընդունելի կ'ըլլար՝ եթէ չունենայինք ամենահին Սուրբ Գրոց մէջ գլուխ մը բանի համառօտ, այլ կարեւոր և բաւական լուսացայտ ժամանակաց և երկրի մթութեան վրայ. զոր ամէն հին պատմիչ առաջնորդ կ'առնու, այլ ըստ չափու հմտութեան և հաստատութեան մտոց մերձենայ կամ հեռանայ ի ճշմարտութենէ: Մեկնըչաց և պատմչաց ամենարժեայ գանձ մ'է Մինչդոց ժ գլուխն, միանգամայն և զանազանութեան կարծեաց արձակարան մի, յոր հարկ է հիմայ մեզի այլ մանեղ, ոչ միայն մեր ազգին ցեղապետն և ոկիզքն գտնելու համար, այլ և առ ի տեսանել ուրիշ շատ ազգաց ծագումն և սփիւռն այլ յայն երկրէն՝ որ մեր նահապետին և մեզի սեփական եղաւ. զգուշանալով

ըստ կարի այսպիսի խնդրոյ մէջ զանազանելու ինչ որ ստոյգ համարիմք ի հաւանականէն և ի կարծիականէն:

Այս կարեւոր խնդիրս իր անհրաժեշտ խնդիրներովը գլխաւորապէս կու գիտէ քննել, թէ արդեօք ամենայն ազգք յերկեց որդւոց Նոյի սերած են. ո՞րք յազգաց աւելի կամ պակաս տեղածինք կրնան ըսուիլ, և ո՞րք գաղթականք. ո՞ր յորմէ ծագեր է. ինչպէս կրնան զանազան ազգք և լեզուք քանի մը գլխաւոր ցեղի կամ տոհմի վերածիլ. այս ցեղապետքս ուսկից ելեր են իրենց զանազան առհմերուն երկիրը երթալու. ե՞րբ ելեր են իրենց առաջին երկրէն կամ բնավայրէն. միանգամայն թէ այլեւայլ ատեն եղած է ազգաց և ցեղապետաց շուկն և բաժանիլն. և այլ այսպիսի խնդիրներ, որոց շատն մեր նպատակէն հեռացընեն զմեզ, եթէ ուզեմք քննել. այլ մենք բաւական սեպեաք Ս. Գրոց պատմութեան կարգին հետեւելով նկատել զտեղի, զժամանակ և զհնագոյն ցեղապետս ազգաց բաժանելոց և զայնարհս նոցա:

Նոյեան ընտանեաց նախկին բնակարանը տեսանք հաստատ վկայութեամբ Ս. Գրոց որ էր յԱրարատեան երկրին, ի ստորոտս լեռանց Կորգուաց, ուսկից հաւանօրէն շատ չհեռացաւ մեծ նահապեան, և ոչ իւր նախաջրհեղեղեան որդիքն իւր կենդանութեան ատեն. անտարակոյս է որ անկից ցրուեցան առաջին առհմք և գաղթականք ազգաց. բայց ե՞րբ և ո՞ր ատրի եղաւ առաջին ցրուիլն ազգաց՝ Ս. Գրքը յայտնապէս չեն ըսեր, այլ գլխաւոր բաժանման ժամանակը նշանակեն, Սեմայ թոռն թոռնորդւայն Փաղեկայ ծննդեամբ. «Եբրայ ծնան երկու որդիք. անուն միոյն» Փաղէկ, զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր»: Այս ժամանակը գլխանելու համար ուրիշ բան պէտք չէ ընել, բայց եթէ գումարել ի Սեմայ մինչև Եբրայ նահապետաց տարիքն յառաջ քան զարդէծնութիւնն, որպէս և ընեն ամենայն ժամանակագիրք, և սակայն ամենեւին աննման և անօտ գումար մը կու հանեն, հետեւելով այլեւայլ թարգմանութեանց և օրինակաց Ս. Գրոց, յորս շատ տարբերութիւն կան. մինչև հնգապատիկ զանազանել միջոցին ի ջրհեղեղէն ցՓաղէկ. որ ըստ այժմու Եբրայերէն բնագրին 100 տարի միայն է, իսկ ըստ Եթովպոսից որ զկայնան նահապետ ալ ընդունին թոռն Սեմայ, 525 կամ 531 տարի է. և ըստ այսմ ազգաց և լեզուաց բաժանումն ոմանք միայն 120 կամ 135 տարի յետ ջրհեղեղին կու գնեն, իսկ այլք ինչուան 660 տարի: Կարճ միջոց գնողք՝ որ ի ժամանակս կենաց Նոյի համարին զմեծ բաժանումն մարդկան և երկրի, ի հարկէ կը գտնարին այնքան բազմացընելու զմարդիկ՝ մինչև եթովպոսի չափ ազգ

և երկիր բաժանուին, ի վերայ այս ամենայնի ոմանք նսեւ 120 տարուան միջոց 700,000էն աւելի ծնունդ գումարեն և 60 գունդ կամ տոհմ կրնան բաժնել, իւրաքանչիւր 12000 ոգւով: Բայց որչափ ալ հաշուի՝ հաւանական չերեւար այդչափ կարճ միջոցի մէջ դնել մարդկան մեծ բաժանումն և Բաբելոնի խոնականութիւնն, և ազգաց սփռիլն յաշխարհս՝ զորս նշանակէ Մովսէս (Մ'նդ Ժ). Թէ և այս այլ խոստովանելու է որ պէտք չէ ենթադրել թէ մեծ մարդարէին յիշեալ ազգերն ալ միանգամայն մէկ սարույ կամ մօտ տարիներու մէջ բաժնուած և ցրուած ըլլան. այլ ընդունելի է թէ քիչ կամ շատ տարի առաջ և ետեւ ցրուած են: Մենք Եթթանասնից հաշուին հետեւելով մարդկան մեծ ցրուիլն և լեզուաց բաժանումն ջրհեղեղէն 5-6դար յետոյ կը դնեմք. բայց կ'ընդունինք որ և յառաջ քան զայն գաղթականներ ելած էին ի Նոյեան սահմանաց և հեռու երկիրներ ալ գնացած, թէպէտեւ հաստատութեամբ չեմք կրնար ցուցնել: Եթէ ստոյգ են Սեմայ և Տարբանայ աւանդութիւնքն՝ հետեւի որ Նոյի կենդանութեան ատեն ուրիշ թոռներն ալ ցրուեցան կամ ընդարձակեցին բնակութիւնն իր բնակած տեղւոյն շրջանակները և ալ հեռու: Իոկ յետ իւր մահուան առաջին մեծ բաժանում մը եղած է երկրի, որպէս յառաջ յիշեցինք, և հաւանական է որ այն ատեն երեք ցեղապետքն մարդկութեան Յարեթ, Սեմ և Քամ, իրենց որդիքը և թոռուքը զրկեցին կամ տարին երկրիս իրենց ընկած կողմին զանազան աշխարհները. միշտ անդրաշիկներն յառաջագէտ կամ հեռագնաց ըլլալով, այնպէս որ յաջորդաբար կրոնք եղբարք կամ որդիք առաջնոց տեղը բռնեցին. և այս կարգը դիտելու բան է, որ մեր առանձին պատմութեան մէջ ալ յետոյ պիտի տեսնուի Հայկայ սերնդոց ժամանակ: Այս կամ ասկէ ետեւ եղած բաժանումն է Փաղեկայ ծննդեան ատեն յիշածն ի Ս. Գրոց, որ է ըստ մեզ յետ իբր 525-530 ամի ջրհեղեղին, և իբր 2620 տարի Ն. — Քրիստոս. յորում մարդիկ այնքան բազմացեալ և լցեալ էին արարատեան երկիրը և անոր մերձակայ և դիւրաբնակ արեւելեան, արեւմտեան և հիւսիսային սահմանները, որ ուզեցին բազմութեամբ երթալ դէպ ի հարաւակողման ընդարձակ դաշտերը ծաւալիլ, և իջան ի Սենասար կամ Բաբելոնի դաշտագետինը: Մեր պատմը չաց մէկն (Վարդան) ասէ Փաղեկի ատեն բաժանման համար. «անհաւան» լեալ վիճակացն տուելոցն ի Նոյ՝ վիճէին. մինչեւ դորձեալ բաժանեցին» ըստ բազմին և ըստ սակաւուն տնման տպի մարդկան: Եւ ապա միտ» բանեալք ընդ միմեանս սիրով խորհեցան գնալ ընդ արեւելս»:

Ս. Գիրք եւս յառաջ քան զԲաբելոնեան խոնակութիւնն պատմել,

գտոնն զբաժանումն կամ զցեղապետութիւն ազգաց ըստ երից որդւոց Նոյի. յորմէ իմանասք թէ անոնցմէ շասն արդէն ցրուեալ և սփռեալ էին հեռաւոր աշխարհներ, և ոմանք ի մնացորդացն յԱյրարատ էին գնացողք ի Սենաար. թէ սոքա և թէ առաջինք միանգամայն այդ երից մեծ նահապետաց և իրենց որդւոց և թոռանց և թոռնորդեաց տոհմաթուօք 72 համրուին. և այս է ռամկօրէն 72 ազգ և լեզու ըսելն երկրիս բնակչաց: Այս թուին տոհմնէին համարոյն մէջ ալ զանազանութիւն գտուի ըստ օրինակաց Ս. Գրոց. այլ մեծագոյն մասն գրոց և մեկնչաց միաբանին թուելու 15 ազգ կամ ասոհմ Յարեթի, 25 Սեմայ, 32 Քամայ. ըստ ոմանց ցեղապետներն ալ մեկտեղ համրելով, այսինքն զՅարեթ, զՍեմ և զՔամ, և ըստ այլոց անոնցմէ զտա. ըսել է որ որդւոց թուոյն մէջ զանազանութիւն կայ ըստ օրինակաց և գրոց, և գլխաւորապէս Յարեթի որդւոց, որ ընդհանրապէս 7 կու համարուի, Գոմեր, Մագուլզ, Մայայ, Յաւան, Թարել, Մոսոք, Թիրաս. բայց ոմանք յաւելուն և զՔետիմ և զԵլիսա. այս ետքինս մեր թարգմանութեան մէջ այլ կայ, իսկ առաջինն մեր պատմչաց մէջ. որք երեւի թէ Յաւանայ որդւոց հետ շփոթեն. վասն զի Յաւանայ շորս որդիք յիշին՝ Ելիոս, Թարսիս, Քետիմ կամ Կիսացիք, և Դողանիմ: Այս յարեթական ցեղս մեր պատմութեան կարեւոր գիտելիք է, վասն որոյ պէտք է քիչ մը վերջը նորէն դառնասք ի քննութիւն: Իսկ Սեմայ ցեղն երկրորդաբար հարկաւոր է. ասոր ազգապետքն են Սեմայ 5 որդիքն Ելամ, Ասուր, Արփաքսագ, Լուլ, Արամ. Արամայ 4 որդիքն, Արփաքսագայ թոռան կամ թոռնորդոյն երկու որդիքն, և անոնցմէ կրտսերոյն 13 որդիքն, որք Սեմաւ հանգերձ կ'ըլլան 25: Ասոնց վրայ այլ յետոյ աեսութեան դառնասք. — իսկ Քամայ ցեղն որ հեռագոյն և օտարագոյն է ի մէջ, բազմաթիւ եւս է քան զեղբարցն՝ գէթ ի ժամանակի բաժանմանն. և են տոհմապետքն 4 որդիքն Քամայ, Քուշ, յորմէ Եթովպացիք, Մեսարիմ՝ յորմէ Եգիպտացիք, Փուզ՝ յորմէ Լիբիացիք կամ մասն մի Եգիպտացւոց, և Քանան՝ յորմէ Քանանացիք. 6 որդիք Քուշայ, Սարա, Եւիլա, Սարաթա, Հոնգամ, որք ի կողմանս Արաբիոյ և Պարսից ծոցոյ բնակեցան, Սարակաթա և Նեբրովթ. որք յիշելի են յետոյ ի պատմութեան մերում. 2 որդիք Հոնգամայ՝ Սարա և Դեդան կամ Յուզազան, որք յԵրջանիկն Արաբիա ասին բնակեալ. — 7 որդիք Մեսարեմայ և թոռն մի կամ ծագումն միոյ յորդւոցն, որք բոլոր Եթովպիոյ, Եգիպտոսի, Կարմիր ծովու եզերքն բնակեցան. միայն երկու յետինքն ի նոցանէ Քասղոն և Կափթոր մեզ քննելիք են. — և 11 որդիք Քանանու. որք Քամաւ

Հանդերձ կ'ըլլան 32. և այսպէս ազգք երից ցեղապետութեանց միանգամայն 72:

Յարեթի ցեղէն միայն երկու տոհմապետի ծնունդք յիշուին, և երկուքն ալ որդիք են նորա. Քամայ ցեղէն Հինգ տոհմապետի ծնունդք յիշուին մինչև ցշորորդ պորտ ի Քամայ. Սեմայ ցեղէն երեք տոհմապետի ծնունդք յիշուին յորոց մին իջնայ մինչև ի վեցերորդ կամ եօթներորդ ազգ ի Սեմայ: Այսու վկայի պատճառ սակաւութեան Յարեթայ ցեղին տոհմապետաց, և Քամայ բազմութեանն. այսինքն Մովսէս լռեր և չէ յիշեր Յարեթայ և Սեմայ որդւոց այն սերունդքը որ շատ հետու էին ի սահմանաց Պաղեստինայ, այլ երկուքին ալ միայն երկու որդւոց ազգերն յիշեր է, որք մերձաւորացոյն և ծանօթագոյն էին կամ պիտի ըլլային Հրէից. իսկ Քամայ ցեղէն աւելի շատ յիշեր է, վասն զի մերձագոյնք և սահմանակիցք էին Հրէաստանի. այսու պատճառու Սեմայ ցեղէն ինչուան եօթներորդ ազգը իջեր է, յորդիս Յեկտանայ որդւոյ Եբերայ, վասն զի յԱրարիա բնակէին նման Քուշայ որդւոց, և ազգականութեամբ խնամի էին Հրէից, յԱրարիազայ տոհմէն և յԵբերայ շառուիղեալ երկուքն ալ: — Առտի հետեւի որ ազգաց բաժանման ցուցակն երկրիս շափաւար մասին ցուցակն է, և ամէն տոհմապետաց մանր ազգաբանութիւնն յիշեալ չէ. և ոչ միայն երից ցեղապետաց ամէն թոռունքն յիշեալ չեն, այլ և ոչ յիշեալ թոռունքն միայն են անոնց թոռունք, և ոչ իսկ բովանդակ որդիքն. գրեթէ անտարակոյս է որ ոչ միայն Յարեթ, Սեմ և Քամ միանգամայն 16-17 որդիէ աւելի, Հարիւրաւոր որդիք ունէին, այլ և անոնցմէ շատն հաւատար յիշելոցն՝ յառաջ կամ յետոյ երկրիս զանազան մասանց մէջ տոհմապետ եղան իրենց եղբարց հետ կամ առանձինն: Բայց աւելորդ է մեզ քննել և յիշել հնախոյզ պատմութեանց կամ աւանդութեանց մէջ արտաքոյ Ս. Գրոց յիշեալ որդիքը երից նահապետաց, բայց եթէ մեր պատմութեանն կարեւոր ըլլայ¹²⁸:

Դառնանք Հիմայ երից ցեղապետութեանց ազգաբաժնին և ազգատոհմին, և անոնց բաժանման կենդրոնին: — Ազգքն Քամայ Ափրիկիոյ հիւսիսային և արեւելեան եզերքէն ինչուան անոր խորագոյն և անծանօթ կողմերն կ'երթան, բայց Ափրիկոյ սահմանակից Ասիոյ երկիրն ալ տարածուած են ի սկզբան, այսինքն Արարիոյ արեւմտակողմն ի Պաղեստին, ի կղզիս ինչ Միջերկրականի Ափրիկիոյ մերձաւորս. Մեսարեմայ երկու յետին որդիքը պիտի յիշէինք, Քասդոն և Կափթոր. առջինին համար բնթեոնուք ի Մովսէս «յորմէ ելին Փղշտացիք», որ վերջինին համար

ընթեանը չէ. վասն զի ուրիշ շատ անգ Ս. Գիրք (Բ Օրէնք, Բ. 23. — Երեմիա ԽԷ. 4. — Ամսվս Թ. 7.) վասն Փղշտացոց, որ նոյն են ընդ Ալլազգեաց, ասեն թէ ելին ի Կափթորայ. իսկ Կափթոր որ ի մերում թարգմանութեան ի նշանակեալ տեղիսդ Գամիրք թարգմանի, վասն այսորիկ և ի բազմաց ըստ ձայնին եւս Կապպադովկիա ճանաչի, յայլոց նախագասի լինել Կիւպրոս կղզի: Եւ հաւանելի է թէ նախ ազգասպետք Յարեթայ ի առհմէն Գամերայ բնակեցան և ի Կիւպրոս¹²⁹, որպէս Կիտացիք որդիք Յաւանայ ի Հոսոս, յետոյ Կափթոր որդի Մեսարեմայ նաւեց և տիրեց Կիւպրոսի, որպէս եղբայր իւր Պատրոսոն՝ Կրեաէի. այն ատեն Կիւպրոսի հին բնակիչք «Գամիրք որ ելեալ էին ի Գամրաց» (ըստ Բ Օրինաց) անցան գիւմացի յԱսիոյ արեւմտակողմեան հարաւային ափունքն ուր Քանանու խեւ որդւոյն ազգը աիբէր, և հալածելով և ջարդելով զանոնք բնակեցան հան. և սրովհետեւ իրենք միայն էին օտար ազգ մը ի մէջ 11 ազգաց որդւոյն Քանանու՝ կոչեցան Ալլազգիք կամ Փղշտացիք¹³⁰. այս եաքի աւսունէն ինչուան հիմայ Պաղեստին կոչի Հրէաստան. վասն զի բուն այն երկիրը Սեմայ ցեղին բաժին էր և Քամեանք բռնութեամբ տիրեր էին, վասն որոյ Հրեայք առաջնորդութեամբ Մովսիսի և Յեսուայ եկան մտան հոն և իբր 1000 տարի բռնացեալ և յափշտակող ազգերը ջարդելով ջնջեցին. միայն զայլազգիս, զյարեթեան Փղշտացիները չի կըրցան ջնջելու, այլ և շատ հեղ անոնց իշխանութեան տակ ընկան. և յայտմ եւս կատարուեցաւ նախագուշակութիւն Նոյի թէ «Ընդարձակեսցէ Աստուած Յարեթի, և բնակեսցէ ի տան Սեմայ, և եղիցի Քանան ծառայ նորա¹³¹» (Մհ. Թ. 27): Թերեւս աւելորդ էր զայս յիշել ի խնդիրս Հայոց պատմութեան, բայց երկու մեծ նշանաւոր և դիտելի բան կար, մէկ մը երից ցեղապետութեանց այլ այն օրհնեալ Պաղեստինու երկրին վերայ գումարիլն և զիճիլն, որ ըստ կրօնական տեսութեան այնքան վեհագոյն և աննման երկիր եղաւ, մէկ մ'այլ Յարեթայ ցեղին հորուագոյն և գրեթէ անբնական սահմանն ըլլալն: — Քասողոնն կամ Քասողոնիմ կափթորայ ազգագաւառն ալ ոմանք (Տէլիլ) ընդհակառակն ինչուան ի կողքիս տանին, որ մեզ և բազմաց չէ բնաւ հաւանելի, այլ ըստ ոմանց է յարեւմտակողմանս կարմիր ծովու, կամ ի Կիւրենեան երկիր Ափրիկոյ, կամ թէ շատ՝ Լիւկիա¹³² հարաւագոյն եզր Փոքր Ասիոյ և բաժին Յարեթայ: — Քամայ ցեղին հիւսիսագոյն երկիրն այլ բռնասահմանն եղաւ. Բարեղոն, զոր նուաճեց Ներրովթ և շատ քաղաքներ շինեց անոր սահմանները, յԱսորեստոն և ի Միջագետս, որք բնական բաժին էին Ասորայ որդւոյ Սեմայ և քեուոյ Ներրովթայ, զոր և յետոյ պիտի

յիշեմք: Հոս նշանակել միայն ուղեմք որ Սեմայ ցեղին այլ հիւսիսագոյն կալուածն Ասորեստանի, Միջագետաց և Կորդուաց գիծն է: Նոյն ինքն Սեմ ըստ աւանդութեան մեր նախնեաց (Խոր. Ա. 2) և արեւելեաց, բնակեցաւ ի Զարեանդ գաւառի Պարսկահայոց, որ և իր անուամբն (Զրուան) կոչեցաւ. և է գրեթէ անմիջապէս հիւսիսոյ յարեւելից տաղին բնակութեան Նոյեանց և մօտագոյն քան զՏարօն, ուր նախ բնակեցաւ ընդ արեւմուտս հիւսիսոյ: Այս այլ կու ստուգէ այն հին նահապետական բնավայրին տեղն, և երից ցեղապետաց արձակարանն: Իսկ հարաւագոյն գիծ Սեմեանց ինչուան Արաբիոյ հարաւակողմն և Պարսից ծոցոյն եզերքն կ'երթայ, ուր որ Ելամ ազգապետեց. անոր բաժնէն ինչուան Տարոս և Կորդուաց լեռները՝ Եփրատայ և Տիգրիսի ցած և ընդարձակ հովտաց մէջ ծաւալեցաւ Ասուր բռնաբարեալ ի Գուշայ տոհմից. իսկ Արփաքսատը տոհմապետ Գաղգէացոց և Հրէից՝ Նոյեան տան բնիկ սահմաններն ժառանգեր էր, իբրեւ ուղիղ կամ ընտրեալ պայազատ Սեմեան. — միւս եղբայրին Արամ՝ Միջագետաց վերին կողմն և յերկիրն Ասորոց սփռեցաւ իր շորս որդւովքն, մինչև ի կողմանս Արաբիոյ և Պաղեստինեայ. հիւսիսագոյն սահման որդւոցն է ի Մոսոքայն կամ Մէշայ Մասիոս լեւանց կողմերն, որ է Գարանա տաղար Տիարպէքիբու մօտ. իսկ Եմուղ կամ Հուլ որդին Արամոյ ըստ Յովսեփոսի աւելի վեր գէպ հիւսիս բնակեցաւ ի Հայաստան^{13a}: — Սեմայ հինգերորդ որդին Լուլ, ինչուան Փոքր Ասիոյ Լիւդիոյ կողմերը տարածեցաւ հաւանօրէն. և անշուշտ անոր սերունդքն են Սպիտակ-Ասորիք Լեւոսիբիի անուանեալքն ի հին աշխարհագրոց Յունաց ի Փոքր Ասիա. Թէպէտ ոմանք Մեծրեմայ Լուլեմ որդւոյն համարին զԼիւդիա, բայց հաւանագոյն է թէ նա զկողմանս Եթովպիոյ ժառանգեց: Ի վերայ այսր ամենայնի կ'երեւայ թէ երից նահապետաց տոհմերէն ոմանք յարեւելից յարեւմուտս խաղալով, ըստ Ս. Գրոց յառաջեր են Փոքր Ասիոյ հարաւակողմերը իբրեւ իրենց բաժնին վերջին սահմանածայր, Քամայ ընդ հիւսիս, Սեմայ ընդ արեւմուտս, Յաբեթայ ընդ հարաւ — արեւելս:

Քամայ և Սեմայ սահմանաբաժին գիծը ցոյց տայ Յաբեթայ բաժնին այլ հարաւային գծին, որուն արեւմտեանը ինչուան Ասիոյ և Եւրոպիոյ արեւմտագոյն եզերքը, և Միջերկրական և Ատլանտեան համաստարած ծովուց մէջ անհետանան, հիւսիսայինն Եւրոպիոյ և Ասիոյ Սարմատական և Սկիւթական անապատաց մէջ կորսուին, իսկ արեւելեանն ալ նոյն Սկիւթիոյ և Թաթարոց ընդարձակ խոպաններուն մէջ ծածկին. ծանօթագոյն Ծառլով միայն հարաւամասնն, որ անմիջապէս Քամայ և Սեմայ բաժնին

հպելով ցուցանել մեզ նախ զՀայաստան արձակարան ազգաց երկց ցեղապետութեանց, և ապա սեփականութիւն Յաբեթեան. որոյ հարուազոյն արեւելեանն ծանօթ և յիշեալ ազգաբաժինն է Մարաց աշխարհն կամ կալուածն Մագալի երրորդ որդւոյ ցեղապետին, որ հնագոյն ժամանակէ ի վեր գրակից և գիտակից եղած է Հայոց աշխարհին. Մարաց աշխարհէն անշուշտ անցած են սերունդք տոհմապետին յաշխարհս Պարսից և Պարթեւաց և վերին Հնգկաց, մինչ սաորին Հնգիկք կրնան ի Սեմեանց այլ սերիլ. — Մագովզ որդին ճանաչի տոհմապետ Կովկասեանց և Սկիւթացւոց յայնկոյս Կովկասու. ըստ ոմանց և Սարմատացւոց և Գաթաց և նաեւ Գաղատաց. բայց իր նախաբնակ երկիրն համարի Հայոց և Վրաց մէջ Գուգարաց նահանգն: Յիշելու է որ յազգաթուին Գովզ առանձին չի գրուիր այլ Մագովզ միայն, բայց մարգարէք Գովզ և Մագովզ միտքան յիշեն, և ըստ Եզեկիէլի Գովզ անուանի իշխանն և Մագովզ երկիր նորա. արեւելեայք Աճուճ Մածուճ անուանեն զսոսա և համարին յայնկոյս Տէրպէնտի. — Թորէլի — որդի Յաբեթայ — ազգն և գաւառն շատ կարծեօք զանազանի, մինչեւ յԻսրայիլ և ի Սպանիա ձգելով, և յիտալիտ. ըստ ոմանց է Պննտոսի եզերքը Տիբարեան ժողովրդեան անդն. ըստ մերոց պատմչաց Թորել Թեառալաց նախահայր է, որ է սկիւթական կամ Թաթար ժողովուրդ մը, և Մովսէս Կաղանկատուեցի Թորելական ազգ և իշխան կոչէ զՀննս կամ զազգակիցս նոցա. ըստ ոմանց եւս Վրաց մայրաքաղաք Տփղիս, Թպիլիսի, (հաւանօրէն ջերմաշրոց համար) ի Թորելայ անուանեալ է. գուցէ այն կողմերը նախ բնակելն անհաւան չէ, եթէ Մագովզ բնակեցաւ ի Գուգարս, և միւս եղբայր նոցա Մոսոք նախ ի Մեօխս կամ ի Սամցիէ և ի Մոսքիկեան լեռնակողմանս. և ապա ի սահմանս Մոսկովաց, որը նշանակին յանուն Ռովս—Մոսոքեան իշխանին զոր Եզեկիէլ մարգարէ յիշէ ըստ վերոգրելոցդ. (ԼԲ. 26) իսկ ոմանք յարեւելից յարեւմուտս դարձուցեալ զՄոսոք համարին հայր Լիւրիկեցոց, Թերեւս լաւ եւս՝ Միւսացոց. վասն զի և միւս եղբայր որպէս Թիրաս տոհմապետ ճանաչի Թրակացւոց որք յարեւելեան հարաւային ծայր Եւրոպիոյ. որոց մերձուոր Մակեդոնացիք սերունդք ասին Քեսիմայ միւս եղբօրն. բայց լաւ եւս որդւոյ եղբօր նորա Յաւանայ, որոյ ազգք Կիտացի կոչի ի Ս. Գիրս մեր, և ազգահայրն անշուշտ Կիտ անուանելի. ըստ ոմանց ի սմանէ են և Լաւինք և Կիւպրացիք. իսկ ի Դոդանայ միւս որդւոյ Յաւանայ՝ ըստ ոմանց Հոդացիք ըստ այլոց Դոդոն Յունաց, կամ Դարդանենք¹³⁴. — Թարսիս եղբայր նոցա հաւանօրէն հայր է Տարսոնացւոց Կիւլիկիոյ, և ըստ ոմանց Տիւանեացւոց և Եարուրաց իսկ. միւս երէց եղբայր նոցա Ելիսա՝ հայր

Հիլենաց կամ Ելիտացուց Յունաստանի, ըստ մերոց ոմանց՝ և Սիկիլիացուց. և ինքն Յասակ կամ Յոն, որպէս և միջին սրբի Յարեթի՝ հայր Յոնիացուց Փոքր Ասիայ և Յունաց որք անցան ի կղզիս: Յորպէս Յուլանայ «մեկնեցան կղզիք ազգաց յերկրի իւրեանց», ըստ Ս. Գրոց. (Ծն. Ժ. 5): — Յետ ամենեցուն թողուցինք զյառաջագէձ ամենեցուն և զնախակարգեալ ի Ս. Գրոց զԳամեր անդրանիկ Յարեթի անդրանկան Նոյի, որոյ նախապէս բնակութեան պէտք էր ըլլալ ընդդիմակողմ բնակութեան Արփաքոտայ ընդ հիւսիս որպէս և Քամայ յանդուզն պայազատն անոր հարաւային ընդդիմակողմ զբունց. արդ Արփաքոտայ կամ Եորդուաց հիւսիսակողմն է Մոկաց երկիրն մինչեւ ի վանայ Մով. և յերկրի անդ Մոկաց ծանօթ է մինչեւ ցայժմ Գոմեր գիւղ. որ թէ և չըլլայ յանուն ազգապետին Գոմերայ յարեթեան, անտարակոյս է անոր նախ ի Հայս բնակելն և ի միջնաշխարհին Հայոց, և կամաց կամաց ընդ արեւմուտս հիւսիսայ երթալն. Դարանաղեաց և Բաքերդու կողմերն ալ կան Գոմեր անուն անդիք¹³⁵ և վտակք. յորոց անշուշտ անցաւ նա ի Փոքր Ասիա, և յերկար բնակութեամբն Գամիրք անունանեցաւ և միջնաշխարհ նորին որ յարաւաքնոց Կապպադոկիա կոչի: Ի Գոմերայ են և Փոխագցիք, որք և յԵրոզոսէ ազգակիցք համարելին Հայոց. զարձեալ ի Գոմերայ ճանաչին և Գաղտոք, ոչ սախցիքն միայն, այլ և Երուպէացիք Կելաք և Կիմբրոցիք, կամ Կիււրիք, որք մինչեւ ցայժմ ճանաչին յՈւէյլ կղզի Անգղիոյ. ընդ Սեա ծով նուելնով թէ եզերքը սլորելով հասաւ Գոմեր մինչեւ ի սիրտ Երոպիոյ, աւելորդ է մեզի քննել: Իւր ճամբան բռնեց բնաբար և իր անդրանիկն Աւքաւնազ, որ նախ իր հօրը տունը բռնեց ի միջին Հայս. վասն որոյ ոչ միայն Քրիստոսէ վեց զար առաջ մարգարէն Երեմիա ընդ Արարատեան գնդին և Մինեայ յիշէ զԱւքանաղեան թագաւորութիւնս, այլ և անկէ 1000 տարի վերջը ընդ աւագագահ բարձս Հայոց դասէր Աւքանաղեան¹³⁶ տոհմին պայազատն, և պատմիչք մեր իբրեւ համտնիչն, Հայաստանեայց տան զայս անուն. և ըստ վկայութեան Յովհ. կաթողիկոսի «Նախ Աւքանազ» իսկ էր յիւր անուն սահմանեալ զմերազնեայս»: յետոյ հօրը հեռեւելով Պոնտոսի կողմերը գնաց և հաւանօրէն այն խեռ ծովուն ձգեց իր անունը, զոր Յոյնք ծոնելով և ըստ կամի ստուգարանելով Եւքսինոս և Աքսինոս կոչեցին իբրեւ հիւրընկալ և անհիւրընկալ. զինքն այլ ոմանք Փոխագացոց¹³⁷ նախահայր համարին, ըսել է որ հոն ալ հօրը տեղը բռնած ըլլաւ. և բազումք՝ հայր Գերմանացուց և Սարմատացուց, և բնակչաց յեզերս Ալախու. Սաքոնացիք այլ հին երգոց մէջ իրենց առաջին թագաւորն

անուանեն Ասիական¹⁵⁰։ Սակայն ինչպէս Գոմերայ անունն ձեաց Գամրաց վրայ, Առքանազայ այլ բնագաւառ սեպելու է անոր արեւմտակողմը և հիւսիսակողմը։ — Բիֆար եղբայր Առքանազայ ըստ ոմանց (Փրեկուլի) հայր է Պափլագանաքաց, որ են մերձակիցք Փախագաց և Գամրաց, և յետոյ հայր Սաւրմառաց, և Բիֆեանց, և Փռանկաց անգամ կ'անուանի. զոր թողող է քննութիւն անկացեաց, հաւանական սեպեմք որ ինքն ալ զհետ հօրն և երիցու եղբօրն երթալով առ ժամանակ մի ի Հայոս բնակած պիտի ըլլայ, թէ և բնու շիշուիբ անունը ի Հայոս, բայց եթէ պահանջող մը ըլլայ՝ տաճը իրեն Նարատ անունը որ Նիֆատ անունի յառարաց, եթէ ընդունի ԲՆ տառից հին թորդութիւնը¹⁵¹։ — Հուոկ յետոյ գայ Թորգոմա կրտսեր որդի Գոմերայ, Թուկարմա կոչեցեալ ըստ Հրէից և այլոց ազգաց, զոր Յովսեպոս և այլք ոմանք ասեն հայր Փախագաց և Կապպադոնիկացաց, Հրեայք և Քաղկեդոնաց՝ հայր Գեթմանացաց, և ոմանք Թուրքաց, իսկ բազմազոյնք Հայոց. Եղեկիէլ մարգարէ յիշէ « զտունն Թորգոմայ ի » ծագաց հիւսիսայ » զոյր ընդ Գոմերայ և որ շուրջ են գնալու. իսկ մեր հեղինակաց և հին պատմաց մէջ Տուն Թորգոմայ կամ Արտմայ և Հայոսասան ըսելն անգոնազան է, և տւելի բան զԱռքանազ սուէպ յիշատակեալ. յայտ ուրեմն է զի Թորգոմ յետ նորա և յետ Գոմերայ բնակեցաւ ի Հայոս ընդերկար. և թերևս յետոյ գնաց ընդ հարցն կամ յարեւմուտս ի Փոքր Հայոս, և կամ յարեւելս յայնկոյս Կաղբից ծովու, և հայր եղաւ Թիւրքմանաց. վասն զի իրենք ալ զյարեթեանն Թորգոմ ճանաչեն նախա. հայր իւրեանց, և անունն իսկ այնպէս լոկ տայ. և իբր հին աւանդութեամբ զՀայոս անուանեն հօրեղբօրորդիս իւրեանց։ Իսկ Աֆղանք, զորս ոմանք յԱղուանից կարծեցին ծագեալ, համառօտելով զազգաբանութիւնն ասեն, Յարեթի երեք որդիք էին, Արմէն, Աֆղան և Կարդուէլ. յառաջնոյն զՀայոս, յերկրորդէն զինքեանս, յերրորդէն զՎիրս ցուցանելով¹⁵²։ Հաւանական նաեւ ի պատմութեանց մերոց և Վրաց վկայեալ է որ Թորգոմ այլ յետ ընդ երկար բնակութեան ի Հայոս, թողուց զայն անգրանկանն իւրում Հայկայ ժառանգութիւնն, և մէկայլ եօթն որդւոցն ժառանգեցուց զեղովկաս և զարեւելս մինչև ի Կաղբից ծով և ի ոսկմանս որդւոց Մաղայի, այսինքն Մարոց։ — Այս բաներս թողումք քննել յետոյ, վասն զի հոս վերջանայ Ս. Գրոց ազգաթիւն և բաժանումն աշխարհաց։

Ս. Գիրք յետ թուելոյ առանձինն երեք ցեղապետաց ազգահամարն այլ՝ տսէ իւրաքանչիւրոյ համար թէ սոքա են սերունդք նոցա զանազանեալք կամ բաժանեալք յազգս, յաշխարհս, ի տոհմս և ի լեզուս. և

դարձեալ յեա ամենեցուն միանգամայն վկայէ թէ « ի ոսցանէ սփռեցան » կղզիք ազգաց ի վերայ երկրի յեա ջրհեղեղին » . որպէս թէ ցրելով զկարծիս և զտարակոյս նոցա՝ որք համարին թէ հեաւոր կղզեաց և ուկիական կողմանց բնակիչքն նախաջրհեղեղեան մարդկան սերունդք ըլլան : Լեզուօք զանագանութիւնն յայտնապէս ցուցանէ զի յեա Բաբելոնեան չուսն և խոսնակութեանն եղաւ զլիաւոր բաժանումն ազգացս . սակայն որպէս յառաջ ըսինք հաւանական է որ անոնցմէ զառ անյիշատակ տոհմապետք այլ ելեր և հեռացեր էին ընդ արեւելս և ընդ հիւսիս, յորպէս Սեմայ և Յարեթի : Բայց մեծագոյն կամ զլիաւոր մասն պայտազատաց երից նոհապետացն պեռ մէկմեկէ քիչ հեռի սփռած բնակէին անոնց նախկին բնակարանին և թերեւս յետին քնարանին ալ մօտ, Հայաստաւրոս լերանց երկու կողմը, և որպէս թուի Պարսկահայոց և Արարատականի կողմերն ալ, մինչև նախաջրհեղեղեան տունն ալ անհետացաւ մահուամբ, յորոց միայն Սեմայ կենաց թիւն յիշի 502 տարի ձգեալ յեա ջրհեղեղին . իսկ ի ծննդոց նոցա երկարագոյն կեանք յիշի Արփաքսաղայ որպէս Նոյի 535 տարի : Այս տոհմապետս Սեմայ և հաւանօրէն Նոյեան բնաակիցն ժառանգեր էր, վասն զի Սեմայ ուղիղ նուիրական պայտազատն ճանաչի ի Ս. Գրոց, և հայր Քաղզէացոց, որոց բնաշխարհն հիմայ վկայի և ի գիտնոց լինել ի սահմանս անդ Կորճայից, ուր և արտաքին հեղինակք (Յոյնք) զնեն զաւառ մի Առապաքիդիս անուն, զոր այժմեան քննիչք¹¹¹ մերձաձայն գտանեն անուան Արփաքսաղայ, որպէս և Քաստիմայ՝ որ է ըստ Եբրայեցոց անուն Քաղզէացոց . Արփաքսաղայ կենաց յետին տարիներն և իր թոռան թոռին առաջին տարիներն՝ հանդիպեցաւ մարդկութեան նշանագոյն գիպուածոց մէկն, և թերեւս առաջինն յեա ջրհեղեղին, այսինքն անոնց մեծ բազմութեամբ ելլալն յիշեալ նախաբնակութենէ և խաղալն զէպ յարեմուտս և ի հարաւ՝ բնգարձակ սահմաններ բնտոելու և բնակելու մինչ զեռ եւս ըստ Ս. Գրոց վկայութեան, « էր ամենայն երկիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն » : Ի՞նչ էր պատճառ չուսյ այս համաշխարհական գաղթականին և ուսկից ուր գիմած և դիտած, չըսեր Ս. Գիրք . բայց միայն զի « Եւ եղև ի խաղալն նոցա » յարեւելից՝ գտին դաշտ մի յերկրին Սենաար, և բնակեցան անդ » : Բնակած տեղերնին յայտնի ըլլալով ի սահմանս Բաբելոնի, ելած կողմերնին ալ՝ ոմանք անոր արեւելքէն կու բնտոեն, Ս. Գրոց ըսածին յարմարագոյն սեպելով . սակայն մեք յառաջագոյն ալ տեսանք՝ որ արեւելք ի Դիրս Մովսիսի ի սկզբան պատմութեանց իմացուի ամենայն Եփրատայ արեւելակողմն, նկատմամբ Պաղեստինեայ, որով Կորճայից երկրին նշա-

նակութիւնն ամենեւին չի փոստիր. մանաւանդ թէ բազմութեան ազգաց զնացած և բնակած կողմերը դիտելու ըլլանք՝ ամենայն հարկաւ պէտք է ըսել վասն մեծ գաղթականին խաղալ յարեւելից յարեւմուտս: Վասն զի ազգաց հաստատուն ետըր բաժանման գիծը դիտելով և անոնց զանազան ընտրած կողմերը քննելով, կու տեսնեմք յայսնապէս որ յիշեալ 72 ազգաց երեք քառորդէն աւելին այն տեղւոյն արեւմուտքը գացիր են, և միայն սակաւթիւ տոհմք ընդ հարաւ կամ ընդ հիւսիս. և ասով միանգամ եւս հաստատի Հայաստանի ազգաց նախալայր և արձակարանն ըլլալն. և բնական հաւաքարան և կենդրոն, յորմէ շտաւիղեցան ամենայն նահապետք ազգաց և հին ժողովուրդք, որք յետոյ և այլուր բաժանեցան յազգս և լեզուս բազմապատիկս, և գլխաւորապէս ի Բաբելոն, որ է ամենայնիւ հակառակն Հայաստանի, արտակենդրոն, բաժանարան և խառնակարան: — Հայաստանէն ի Բաբելոն գալու համար շիտակ դէպ ի հարաւ իջնալու է. բայց կորդուաց ահեղ լեռներն ի հարկէ այդ ուղղութիւնը չէին թողուր այնպիսի բազմախումբ կտրուանի մը, որ ընդարձակութեան և դիւրութեան կարօտէր. և հաւանօրէն նախ արեւելեան Տիգրիսի առաջը բռնած ապա բուն գլխաւոր ընթացքին եզերքը առած իջան ի Սենաար. և ըստ այսմ հւս ի դէպ գայ անոնց յարեւելից խաղալուն յարեւմուտս, և անտի դարձեալ գաննալն և ընդ հարաւ — արեւելք:

Սենաարայ գաշտին մէջ մարդկան բնակութիւնն, որ հաւանօրէն երկայն աարիներ տեսց, և հոն տուջին մեծագործ շինութիւնն, Բաբելոնի քաղաքն և աշտարակն, և անոր կործանումն աստուածային զօրութեամբ, և պատուհաս մեծամիտ ձեռնարկութեան մարդկանն՝ լեզուաց խառնակմամբ, ընդհանուր պատմութեան յատաջաբանութեան մէջ ծանրակշիռ նիւթ մ'են իմաստասէր քննութեան, սակայն մասնաւոր ազգային պատմութեան չեն վերաբերիր: Շատ ըլլայ մեզի միանգամ եւս բնթեոնուլն զյետին տուն այնր պատմութեան Ս. Գրոց, որով աւարտէ հրաշագոյնն վիպագրաց մեծն Մովսէս զհամառօտութիւն ընդհանուր պատմութեան սկզբան մարդկան և ազանց, և անցնի ի մասնաւոր պատմութիւն Փաղեկայ տոհմին: « Անդ » խառնակեաց աէր Աստուած զլեզուս ամենայն երկրի, և անտի ցրուեաց » զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի »:

Այսպէս ուրեմն ազգաց պատմութիւն, որ է ըսել սկիզբն քաղաքական կենաց նոցա սկսի խառնակութեամբ, անհամաձայնութեամբ, բաժանմամբք, կռուօք և պատերազմօք, իրենց առաջին իջեւանին մէջ (Բաբելոն) յետ ելլալու ի նահապետական երկրէն Արարազայ, որ մարդկութեան կրկին երջանկա-

գոյն ժամանակաց ասպնջական եղած էր, այն զոր բանաստեղծք ոսկեղէն և արծաթեղէն դարուց անուամբք նշանակեցին, և որովք եզեմական և Նոյեան դարերն պէտք է իմանալ. այս երկրորդ գարն Նոյեան, իրաւամբք կրնայ ըսուիլ արծաթի և գեռ երջանիկ, վասն զի ընդհանրապէս խաղաղութիւն և համաձայնութիւն տիրած երևայ, տանուտիրական իշխանութեամբ նահապետական պայտաւատաց, որուն վկայութիւնն այլ կարեմք համարիլ Ս. Գրոց ըսելն, թէ էր ամենայն երկիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն, ցորչափ ի կենդրոնի անդ բնակութեան նահապետացն կէին, որ յետ բաժանմանն սեփականեցաւ թորգոմայ և Հայոց:

Է

ԾԱԳՈՒՄՆ ՀԱՅ ԱԶԳԻ ԵՒ ԼԵԶՈՒԻ

ՆԱԻԸՆԹԱՑ գլխուն մէջ յառաջ բերինք ի հարեանցի Ս. Գրոց ընծայած ազգաբանական պատկերը, և տեսանք որ յանուանէ նշանակեալ չէ հոն մեր Հայ ազգն. այլ ազգաբաժնին գիծը գիտելով իմացանք որ Հայոց աշխարհս վիճակ եղած պիտի ըլլայ Յարեթի ցեղին, և հաւատօրէն Գոմերեանն թորգոմայ, որովհետեւ այս սոհմապետին երկու երէց եղբարց և հօր կամ նախահօր այլ սահմաններն անսխալապէս գէտ ի Հայաստանի արեւմուտք կ'ինկնայ, իսկ յարեւելս՝ և ի հիւսիս՝ Յարեթի միւս որդոց բաժինն է: Գարձեալ Ս. Գրոց ուրիշ հեղինակաց (Երեմիա և Եղեկիէլ մարգարէից) վկայութիւնքն ալ երեւցընեն որ Հայաստան վիճակ և բաժին եղած է թորգոմայ և Աքքանազայ: Այս վկայութիւնն կէս յայտնաբան և կէս լռելիայն գրեթէ ուրիշ հաւաստեաց կարօտ չէր ընել մեր ազգին ծագումն ստուգելու, եթէ զոտրք Գրոց վկայութիւնն ալ մենք չկարօտէինք հաստատելու երկբայողաց արտաքին վկայութեամբք. և ունիմք այսմ բաւական վկայութիւն. նախ մեր ազգին և մեր գրացի վրաց վկայութիւնն, որք ի թորգոմայ ճանաչեն և ազգաբանեն իրենց ազգին սերումը. երկրորդ հին արեւելեան պատմաց վկայութիւնն, որք են Մար Իբաս և Աբիզենոս, կամ Քաղզէացիք և Ասորիք՝ համաձայնք Ս. Գրոց. երրորդ հին Հայոց հաւանութիւնն, որպիսիք են Եւսեբիոս, Թէոդորեոս, Իսիդոր Սիւրիացի, և այլն. չորրորդ բազմաց այժմեան քննչաց այլ ընդունին զայս: — Բայց միւս կողմէն այլ քննելու և լուսայայտելու իրաւունք և հարկ կայ, նախ Սուրբ Գրոց վկայութիւնն բացարձակ չըլլալուն համար, որ թորգոմէն զսա ուրիշ սոհմապետաց վրայ այլ կարծիք ձգելն չի վերցընել, որով և սմանց ի Հայոց և մեկնչաց այն օտար սոհմապետաց սեփականեն զՀայս. երկրորդ՝ ոմանց ալ բողոքովին աարբեր ծագումն գնելն Հայոց ազգին. երրորդ՝ լեզուաբանական քննութեանց այլեւայլ սկզբունք կտմ ազգակցութիւն ցուցանեն. չորրորդ մեր իսկ պատմչաց զանազան աշխարհ և ազգ կամ սոհմեր յիշելն ի նոյն ի բնիկ Հայոց աշխարհիս, որոց չէ անգէտ և զանազան աղբիւր ունենալն:

Ազգին ազդիւրներն կամ սոցիալականներն ստուգելու համար ալ հարկ է նախ անոր հայրենիքը լաւ ճանչնալ, այսինքն աշխարհին սոցիալական, որով շատ տարակոյտք պարզին: Արդ մեր աշխարհն, թերեւս քան զբազում աշխարհս աւելի՝ զանազան չափով տարածուած կամ ամփոփուած է զանազան ժամանակ, զանազան մասեր ունեցեր է որ երբեմն առանձին աշխարհք և կառավարութիւն եղած են, որք տարբեր ծագումն կամ ժողովուրդ ալ ունեցած կրնան ըլլալ. միջին կամ սովորական չափն առնելով բուն հայրենիք ազգիս պէտք է սեպենք զՄեծ—Հայս, բաժանեալ ի 15 առանձին աշխարհս կամ ի 20, խաղտեօք և Փոքր Հայովք: Այս աշխարհներէն յիրաւի մեծագոյն մասն զուս աշխարհագրական և շինուածական կամ տեղացոյց անուններ կ'ընծայէ, որոնց ծագումն և ստուգաբանութիւնն անծանօթ է, սակայն ոմանք այլ որոշ սոցիալական կամ ազգանիշ անուննք են հաւասար գրեաթէ Հայ անունն՝ որով բոլոր Հայաստանի, այսինքն 15 աշխարհաց ժողովուրդն կ'իմացուի. այսպիսի անուն և աշխարհք են Տայք¹⁴⁸, Գուգարք. (Մեհսեք), Մոկք, Կորձայք կամ Կորդոք, թերեւս և Ռատիք և Խաղտիք այլ ըլլան ասոնց կարգէն, որք անձի մը այսինքն նահապետի մը անունէն կոչուած կ'երեւան քան շինուածոյ մը: — Գարձեալ մերային Ե զարու հեղինակաց վկայութեամբ իսկ գիտեմք որ Հայաստանի կամ Հայոց մէջ զանազան բարբառներ կային, թէ և ոչ բոլորովին օտար, այլ գէթ եզերական համարեալ, և են ըստ նախնեաց յիշատակելոյ Կորձայն, Խորային, Դ Հայնցի, Սպերացի, Տայնցի, Սիւնիկ և Արցախայինն. այս ետքի երկուքն թերեւս մէկ սեպուի. և բոլորն ալ Մեծ Հայոց եզերական աշխարհներ են բաց ի Սիւնեաց, և շրջապատեն զմիջնաշխարհ. շրջանակին երկու մնացեալ բաց կողմէն, ի հիւսիսոյ, Գուգարք են, և անտարակոյս է որ անոնց բարբառն այլ մէջերկրայ չէր, այլ վրախառն. մէկ մ'այլ ի հարաւոյ արեւելից, Փայտակարան ընդարձակ և Պարսկահայք աշխարհքն. և յետոյս անունն իսկ յայս աննէ՝ որ բնակիչքն զուս Հայ չէին. իսկ Փայտակարանն արդ կազբք ալ կոչուելով, յայտնէ անհայ տղգ մը. յորոց և յի գարու յետ Գրիստոսի այրաքաջն Սմբատ շատ գերի բերու բնակեցուց յԱլկի ի կողմանս Կորձայից, զասոնք համարիմք՝ կոչէ Կորիւն՝ Մարաց կողմանք և զլեզուին խեցքեկագոյն և խոշորագոյն, այնքան օտար ի սեփական հայոյն որ դժոյրամատոյցք էին, այսինքն, վասն դժար հասկացուելուն զժուարահաղորդք: Նոյնպէս սեպելու է և զՌատի, վասն զի թէ և ընդ եզերականս չի գասիր, այլ միւնչև ցարդ մնացեալ է սւտէացի լեզու, շատ տարբեր ի բնիկ հայկականէս, և է անշուշտ Գարգտ.

բացոց խեցքեկազոյն լեզուն, որ Ռատի աշխարհին մէջն էր, և նոյն ինքն Աղուանից լեզուն է¹⁴⁵։ Եւ ահա տասն եզերական լեզուք կամ հայկական բարբառք լսին ի Հայաստան ի Եզարու, և զուտ ազգային երկիր և լեզու մասն աշխարհքն Ալբարաս, Տուրուբերան, Վասպուրական, (բայց ասոր ալ արեւելեան մասն երկբայական է)։ Իսկ բարձր Հայոց և Սիւնեաց այլ յԱլբարաս նայող կողմերն. աւելի պարզագոյն ըսելով, բնավայր Հայոց ազգի և լեզուի երեւին հովիտն Երասխայ, հովիտն Արածանոյ և պարաստփն Վանայ. և ի պատմութեանց այլ գիտեմք որ այս հովիտներու և այս մէջերկրեայցս մէջ նախ սփռած է սերունդն Հայկայ ազգահօր մերոյ, նոյնպէս և իր հօրն Թորգոմայ համար այլ՝ թէ բնակեցաւ ի նոյն հովիտն Երասխայ ի միջոցս Արարատ աշխարհի։ Դարձեալ հին պատմութիւն մեր վկայէ թէ, Հայկն ի տարածանելն գիշխանութիւն և զբնակութիւն իւր յերկրին Ալբարասայ (որ էր հին անուն աշխարհիս) ի տեղիս տեղիս գտաւ նախաբնակ մարդիկ, որոց ծագումն անյայտ մնայ։ Դարձեալ և մինչև Արշակունեաց տէրութեան վերջի ժամակներ մնացեալ Հայոց 400 իշխանական և առհմային բարձքն, և 600 մեծ ու փոքր գաւառքն (որոց մեծ կիսոյն անունն զեռ մնացեալ է) յայտ առնեն հին և զանազան և անստաց ծագմունք։ Եւ յայս ամենայն յիշատակութեանց և նշանաց երեւի, որ Հայաստանի ամենայն ժողովուրդն և տոհմքն ի Հայկայ ծագեալ չեն, և ոչ իսկ ի Թորգոմայ՝ ընդունելով առ ալժամ առանց երկրայելոյ, թէ Թորգոմ էր հայր Հայկին։

Տեսնանք ուրեմն հիմայ թէ ոչք են կամ կարծին կամ կարծեցան առհմայեառք և նախահարք ժողովրդոց Հայաստանի, որ յետոյ միով անուամբ Հայք ըսուեցան, ընդ իշխանութեամբ Հայկայ և որպէս նորա։ — Եւ նախ յիշեմք (թողլով զգաղթականս և զեկս յետ ձեւացման Հայ ազգի և տէրութեան), զի որպէս Հայաստան ցուցաւ բնավայր Նոյեան տան և կենդրոն նահապետաց, հարկ էր որ ոչ միայն ի Յարեթայ այլ և յեզրարցն առհմք և սերունդք մնային ի նմա։ Յիշատակեցաք ի վեր անդր (էջ 70) զասն Քամայ ցեղին սերնդեան աւանդութիւնն, զոր և առանց կարելու հաստատապէս ցուցանել, հաւանիմք թէ ի միջնակողմանս հովիտն Երասխայ և ի կողմանս Սիւնեաց՝ թողած ըլլայ զաւակներ յառաջ իսկ քան զերբական և զբարեկական բաժանմունս։ Յետ բազում ժամանակաց, ի Քամայ ցեղապետութենէ զաղթականք եկան ի Հայս, Քուսուտոցիք ոմանք հալածեալք ի Յեռուայ, իրր 1600 տարի նախ քան զՔրիստոս, և 900 կամ 1000 տարի յետ խառնակութեան լեզուաց, և խառնեալ ընդ Հայս Գերունեաց

ազգն կազմեցին: — Յովհ. կաթող. պատմիչ մեր յիշէ իր ժամանակը ի Հայո գրիարարականացիս, որք թէ արլարեւ սերունդք էին Գարբաւոնացւոց՝ ընդ Քանանիդայ նախահօր Գնթունեաց կրնան եկած սեպուիլ ի Հայո, և խեւացոց ազգէն, որք էին ի համանուն որպէս Քանանու. բայց երեւին մեզ նշանակել զգնչուաս կամ զծինկեանս ի Հայո, որոց ծագումն անտառց կամ հետաքննելի: Ուրիշ պատմիչ մ'այլ (կաղկանդ.) յիշէ իշխան մի Մադիանացի ի կողմանս Աղուանից յէ դարու. այս անուամբ կրկին ժողովուրդ ճանաչի, մին ի Մադիանայ որպէս Աբրահամն, զոր ջնջեցին Հրեայք ի ձեռն ֆենեհեոի, միւսին հայր կարծի որդի մի Քուշայ Քամեան. եթէ այս երկուքին մէկէն է յիշեալ իշխանս՝ հաւանօրէն երկրորդն կ'ըլլայ:

Սեմայ ցեղէն բազմաթիւ քան զՔամեան բնիկք և բնակք յիշատակին ի Հայո. նախ Տարբանէ ի Տարօն, որպէս թուի յառաջ քան զԵբեր բնակեալ հօն: — Արփաքոսայ նախահայր Քաղդէացւոց և Հրէից, որոյ պայազառք բնակեցան ի կործայս և ի հարաւակից գաւառս նորին. որք ի սկզբանէ սեփական էին Սեմայ և յետոյ նուաճեցան ի Հայկայ և ի զարմից նարա. բայց վարձեալ շատ ժամանակ զատուցեալ ի Հայոց կամ ինքնազուի եղան կամ հարաւային աիեզերակալ պետութեանց մարդ. մինչև ցայժմ բնակիչք երկրին են անկայք, Քուրդք և Քաղդեայք: Բուն սերունդն Արփաքոսայոց աստի քիչ մը ընդ հարաւ խաղաց մինչև ի սահմանս Բաբելոնի. իսկ իր թոռնաթոռնին Եբերայ ազգն որ եղաւ Հրէից ազգ, ինչուան Աբրահամու ատեն մնաց հօն, և անկից վերջ ալ, վասն զի Աբրահամ միայն ելաւ յերկրէն Քաղդէացւոց իր հօրը հետ. իսկ մնացեալքն անշուշտ կամաց կամաց կամ գաղթեցան ընդ հարաւ, կամ ընդ Հայոց խառնեցան, և կործայից ժողովրդեան զլիաւոր տարերց մէկն եղան: ՅԵբրայեցւոց թէև տոհմապետ մի չի յիշուի ի Հայո, բայց իր ազգէն զանազան ատեն գաղթականք հիան հօն. և նախ Աբրահամեան հին տոհմն Հայոց՝ թուի ի մեծէ նահապետէն Հրէից, բայց ի քեսուրածին որպէսցն եթէ յիտահակեան՝ չէ յայտ. իր հաւատարիմ գործակալին Եղիազարայ որդւոյն համար այլ աւանդութիւն կայ առ մերքս՝ բնակեալ ի կողմանս Մասեաց յԱյրարատ. որ եթէ սառց լինի՝ արամացի գաղթականութեան հայր մի սեպուելու է: Իսկ անստարակոյս գաղթականք Հրէից, ի զանազան ժամանակս են պերութիւնք նոցա, նախ իրենց թագաւորութեան վերջանալու ատեններն Ասորեստանեայց թակալածփաղսար և Սաղմանասար թագաւորաց ձեռօք, որք ի սփոռն ի կողմանս Մարաց զգերեալսն, և մասն մի ի Հայոց սահմանս թողին, ըստ ոմանց ի կործայս, ըստ այլոց ի կողմանս կուրայ. երկրորդ առ Նաբուգոդոնոսորիւ, որոյ

Նիզակակից գուլով թագաւորն Հայկազանց, պատուով բերաւ ի Հայո արքունի գաբմէն իշխան մը և ուրիշ մարդիկ, որք անուանեցան Բագրատունիք ի Հայս և ի Վիրս, և ի միջին դարո թագաւորութեան պատիւ այլ սատցան այս երկու աշխարհաց մէջ այլ: — Դարձեալ յառման Երուսաղեմի, զօրավարք Տիգրանայ Արշակունւոյ Հիւրկանոս քահանայապետին հետ գունդ մը գերեաց բերին ի Հայս: — Եւ յԲ դարու Քրիստոսի յաւուրս Արտաշիսի Բ. ի Պարթեւաց եկին Մանուկայ գերելոյ Հրէի մը սերունդք և Ամատունի տոհմը կազմեցին ի Հայս: — Սեմայ ուրիշ որդիք այլ սերունդ թողած են ի Հայս, յԱսուրայ ցեղէն համարին Սենեքերիմեանք, որդիք գոռոզ թագաւորին Սենեքերիմայ և անոնց հետ եկողքն, յորոց կազմեցան ի Հայս մեծապատիւ և իշխանական տոհմք Արծրանեաց, Աղճնեաց և Սասունք, Խոռոսցիք և Գհունիք: Բայց թէ ասոնք և թէ Երրայեցիք գաղթականք համարելիք են ի Հայս, և ոչ ազգին ծագման կամ ազգերաց պատճառք. թէ և քիչ շատ լեզուին և սովորութեանց վրայ ազդեցութիւն բրած ըլլան: Նոյնպէս Սեմայ Ելամ որդւոյն շտաւիղքն այլ սր ի Պարսից, երբեք երբեք ի Պարթեւաց կամ Ստանեանց ժամանակ եկեալ և խոսնեալ ընդ Հայս՝ գաղթական կամ հատուած համարին: Իսկ ի Լուղայ միւս որդւոյ Սեմայ ոմանք ասեն բնակեալ Հայոց սահմանակից Միջագետաց մասն Քորար գետոյն քով, բայց այս երկբայական է, եւս առաւել նոր հեղինակի մը (Տիւպուս) կարծիք, սր զԼուգ ասէ բնակեալ ի կողմանս Կոստայից Արարատայ, որպէս և զԵլամ ի կողմանս Խլաթայ, զԱսուր՝ Վասպուրականի, զԱրփաքսայ՝ Որմիս, զԱրամ՝ ի փոքր Հայս: — զԱրամ յանկակից Արմէն անուան ազգիս, Հրետյք և ոմանք ի քննչաց (Քիրիէլը-Վիւլ. Ս. Մարգէն-Առիաս-Պանրէր). համարին Հայոց ազգահայր. որպէս և զՄոսոր կամ զՄէս կրտսր որդին ալ Հայոց արեւմտեան հարաւային սահմանաց բնակիչ ի Մասիոս լերինս. իսկ իւր եղբայրն Եմուղ, որ և Հուլ կամ Խուլ, ըստ Յովսեպոսի կոչէր Ոգրոս, և էր հայր Հայոց. թերեւս Հայկայ և Կարգոսի աղաւաղ յիշատակօք այսպէս կարծեց Երրայեցի հեղինակն. յորմէ առնլով ոմն ի նորոց՝ (Պոշար) գանունն Ոգուս ընթեանու և համարի հայր Ուտեացոց, այլ ոմն (կալմեթ) Գոգրեանց կամ Կոչրատեան գաւառի, և միւս ոմն (Լնդ. պամ. Անդղ.) գոս ինքն համարի Սկիտա, որ զխարզ և է, բոլորովին անհիմն պէտք չէ համարիլ Հայոց աշխարհին մասի մը մէջ բնակիլն առհմապետիս, գէթ առ ժամանակ մի: — Իսկ զԳազեր եղբայր նորա թերեւս ասէ ոմն (Ֆլորիտի) հայր բնակչաց Կենդրիտայ որ ընդ մէջ Հայոց և Կորդուաց: — Դարձեալ Երբայ Յեկտան որդւոյն ազգածին որդիքն զոր ի հարաւային Արարիա հաւանիմք սփռեալ ի

Մէջայ մինչեւ ի Սաֆար, ոմանք (կալմեթ) համարին Մասեաց կամ ի Մասիոսէ մինչեւ ի Սպեր. և զանուն գառափոս (որ յիրաւի շատ հին և մեծ տոհմապետ մը ունեցել է) ընծայեն (Պոշար, կալմեթ. B. de Vence. Պառքալ) Ուփիրայ որդւոյ Յեկտանայ. այսպէս և զեղբարս նորա Յարաք Եզել, Արիմիէլ, Սարա, Եփրա, համարին ի զանազան կողմանս Հայոց. և զյեախնն անշուշտ յԵրլաթն Փիսոփի, որ է Խաղտիք: — Յայսքան Սեմեան տոհմապետաց անշուշտ ոմանք ստուգապէս բնակեալ են յաշխարհիս Հայոց և մեր ազգահարց կարգն կրնան անցնիլ. բայց մեզ ստուգելն և ճշգելն ոչ է դիւրին, որպէս օտարաց ոմանց (Վոլնէյ, — Վիլիեն Ս. Մարգէն), որք առաւել քան Յարեթի՝ Սեմական զիմակ և բաժին համարին զՀայս. լաւ եւս առնէ խղճաւոր քննադատ նորագոյն Սեմ-արիական կամ Արի-սեմական ժողովուրդ անուանել զՀայս, բայց Թաթարաց ազգակից կամ արաւ-ժագունն ասելով՝ մերձենայ թերեւս յարեւելեան ազգաց կործին, որք ըզ-Թորքս և զՀայս միոյ հօր Թորգոմայ որդւոյ սերունդս համարին:

Պալով առ Յարեթ, յայտնի և հաւանական եւս է, որպէս և յիշեցաք ի վերոյ (էջ 72) զի յառաջ քան զԹորգոմ՝ երիցագոյն եղբարք նորա և հօրեղբարք բնակեցան ի Հայս, և թէ և հեռացան անտի՝ այլ թողին զպա-յազատս և սերունդս, զորս նուաճեցին Թորգոմն և Հայկն: Առաջին և զլուսն սոցա արժան է համարիլ զինքն Յարեթ նահապետ, որոյ անուամբ հոչակեալ յատուկ ազգ և երկիր չկայ ծանօթապէս. և եթէ ոմանք կ'ուզեն զՅոպպէ Պաղեստինոյ ասել ձեռակերտ նորա, զուցէ լաւ եւս առնէին զՅիպպ քաղաք Մասիենաց (Մէս) մերձաւոր կորդեաց (բնասանն Նոյեանց), զոր յիշէ հնագոյնն պատմչաց Յունաց, Եկապէս, համարեալ ոստան Յարեթի կամ իջևան, որպէս Սեմայն զՍիմ: Բայց ոյք են այո յիշեցեալ Մասեանքը կամ Մասիենացիք, զոր ոչ միայն պատմիչք այլ՝ այլ և Երողոտ և Սարաբոն, և այլք յիշեն, և զսահման նոցա ցուցանեն ընդարձակ յոյժ, և զի Եկապէս որ զքաղաք մի նոցա մերձ կորդեաց գասէ, զՄեսա կոչէ ժողովուրդ կորդեաց և մերձակից Մասենից. Երողոտ ի միջին Հայս և ի կողմանս վանայ թուի ցուցանել. Սարաբոն յիշէ զմեղրածոր ծառս Մասենից, զոր մարթ է համարիլ զգազպէն Տարօնոյ և զսահմանակից գաւառաց. այլք զԱռան համարին Մատինն, կամ զմէջս Երասխայ և Ատրպատականի, և զսա ինքնին. որոյ սահմանակից Մարք յայտնապէս իսկ համարեալ են որդիք Մաղայի որդւոյ Յարեթի: Հաւանելի ուրեմն է զի սա յետ Գոմբայ կամ ընդ նմին իսկ Հայաստանի միջակողմն և հարաւակողմն բռնեք էր, նախ քան թէ զբուն Մարս: Եթէ և չընդունի ոք զայս կարծիս, հարկ

է բնզունիլ որ ուրիշ նահապետ մի կամ ազգ մի տիրած պիտի ըլլայ յերկրի մերում, զառ ի Հայոց և ի Մարաց, որոյ անուն հոշակեալ ըլլայ առ Հելլէնս 5-6 դար նախ քան զՔրիստոս. իսկ ի Հայս այժմ ոչ յիշի այդ անունն, բայց Թերեւս Մոդոպոսք երկրայտկան անունն կործայից գաւառի: Ընդունիմք եւս մեք զի Մարք որ Մեդք կոչին ի Յունաց, տիրէին երբեմն և Հայոց, մանաւանդ կողմանց վանայ, և ոչ հոռի ժամանակաւ յԵկատեայ, սակայն աչազգ գրեն զանուն Մարաց և զՄասիենաց հեղինակըդ հելլէնք. և տեղի ազգիդ անտարակոյս է ի Հայս ըլլալն: Արդեօք վերոյիշեալ Մարգիանացի իշխանն ալ ի մնացորդ ազգիս էր թէ յայլոցն, չեմք կարող հաւատաւել, բայց աւելի կարծեմք ի Սեմեանց: — Բուն Մարաց կամ Մեդացւոց խանուրդ և զաղթականութիւն ալ ընդ Հայս եղած է զանազան ժամանակ. որոց զլխաւորն է Ա. Տիգրանայ և Աժդահակայ ասեմն, երբ բազմաթիւ գերութիւն մը եկաւ ի Հայս և բնակեցաւ Երասխայ արեւելեան ձախ կողմը, Նախշեւանայ սահմաները, որոց շէնքն Մարաց իրաւունք ըսուեցան, և Մուրացոս մեծապատիւ առհմե ձեւացաւ, որ հազար տարի յետոյ ալ յիշուի: Տրպատունեաց առհմե ալ թուի յԱսորպատականէ Մարաց եկեալ, Թերեւս ի հնագոյն ժամանակէ:

Յարեթի միւս որդւոցն ալ ի Հայաստանէ անցնիլն և ոմանց քիչ շատ հոն կամ ի սահմանոն բնակելն անտարակոյս է. որպէս և նախ յիշեցինք Մագոսիդ շատ հաւանորէն Գուգարաց հայր եղած է նախ, յետոյ Սկիւթաց: Այս մեծ և հին ազգն որ անուանի եղած է իր արշաւանօքն յարեւմտեան Ասիա, ամենէն աւելի ի Հայս թողած է յիշատակ բնակութեամբն ի Շակոպէն գաւառ Ուտիոյ, մեծահոշակ արշաւանօքն ի միջոցի 630 կամ 680 ամաց յառաջ քան զՔրիստոս, բայց ըստ ոմանց անկից իբր 1000 կամ աւելի տարի առաջ ալ մեծ յարձակումնք բրած են ի Հայս, և վանեալ ի Հայոց և վրաց: Սկիւթաց հետ իմանալու. է որիշ հիւսիսային կովիասեան ազգեր ալ, որ շատ անգամ արշաւեցին ի Հայս, և երբեմն գաղթականներ թողին: Այսպիսի ազգք են Խազիրք, որ թէ ի հնագոյն ժամանակս յիշուին բնդ Սկիւթաց, և նաեւ յետ Քրիստոսի ց'Ո՛ դար. Հոնք, որոց բազմազէմ և բազմապատիկ արշաւանքն ծանօթ է յընդհանուր պատմութեան, երբեմն գերեցին ի Հայոց և երբեմն գերի վարեալ ինչուան 60,000 բազմութեաբ ի կողմանս Գունայ բնակեցան հրամանաւ քաջին Տրդատայ. Բադարք, ազգ անուանի մինչեւ ցայժմ, որ նախ ի պատմութեան ազգիս մերոյ յիշին, և հատուած մի ի նոցանէ յԲ. դարու նախ քան զՔրիստոս բնակելով ի վանանդ իւր առաջնորդին անունն (վունդ) թողուց ի նմա. Ալանք¹⁴⁴,

որ յԱ և յԲ դարու յես Քրիստոսի հատուած և գերի եկեալ խառնեցան ընդ Հայս, և կազմեցին Առաւելեան և Արտազեան տոհմն և զաւանն. Բասիլք, յորոց հատուած եկաւ ի Հայս յառաջին կէս Գ դարու Քրիստոսի: — Ասոնց հետ յիշեմք և մէկ երկու հեռաւոր տոհմեր որոց ծագումն իսկ անյայտ է. և են Ճենք, յորոց երկու հատուած յիշուի ի մեր և ի վրաց պատմութեան, մի Որսկ կամ Օսպել յորմէ Ուսպելեանց տոհմն մեծապատիւ յոյժ ի վիրս, որ Քրիստոսէ Դ-Ե դար առաջ եկած է ի մեր կողմանս. և Մամկոս կամ Մամ և Կոն յորոց Մամիկոնեան քաջամարտիկ և առաքինի տոհմն ի Տարօն՝ յաւուրս մեծին Տրպտոսայ եկեալ: — Երկրորդ Հրեղիկք Արիականք, որոց լեզուին և կրօնից հետ սերտ յարաբերութիւն ունին մերքս ալ, ժամանակ կամ սկիզբն յարաբերութեանցն անյայտ, այլ շատ հին պէտք է ըլլալ և շատ յառաջ քան զԱրշակունեաց թագաւորութիւնն, յորոյ սկզբանն եկին Դեմետր և Գիսանէս անուանեալ քուրմք հատուածաւ, և բնակեցան ի Տարօն, և աւելի քան 400 տարի իւրեանց հայրենի սովորութիւնները և կրօնը պաշտեցին խառնելով ընդ հայկականաց:

Յարեթի միւս որդին Մոսոք հայր է Մեւխաց, որոց երկիր է այժմեան Ախալցիխէ զաւանն և նահանգն Սա-Մցիսէ կոչեցեալ ի վրաց, որ նշանակէ երկիր Մեւխաց կամ Մոսոքաց. Յոյնք ալ յայս անուն Մոսքիքեան լերինս անուանեցին՝ Հայոց և Պոնտոսի անջրպես լեռները: Այս ազգս քիչ կամ հին ժամանակ միայն առանձին իշխանութիւն ունեցեր է, այլ ի հառարակի բաժանեալ էր ընդ իշխանութեամբ Կողքեաց, վրաց և Հայոց. և թերեւս ի Մոսոքայ ծագած են Տայք, որ Հայաստանի արեւմտեան հիւսիսային անկիւնը ամուր զաւաններ և խորափոր հովիտներ գրաւեցին Ճորսիսի և Կրի վրասկաց եզերք: Դարձեալ և Կղարչք զոր Յոյնք Քորաքս կոչեցին, ընդ մէջ Տայոց և Գուգարաց, Մոսոքայ սերունդ թուին ինձ. որպէս և ոմանք ի առհմից և յազգաց Կողքեաց և Պոնտոսի:

Թորնել որդի Յարեթի ի Հայս կամ ի սահմանս Յարեթի որպէս ի նախընթաց գլխի նշանակեցաք, զՏփիսեաց և աւելի զՏիրարեանց տոհմն ընդ մէջ Հայոց և Պոնտոսի, թողած համարի: — Ի Թիրակայ որդւոյ նահապետիս մերոյ չիք այլ յիշատակ բայց զոր Մտրարօնն ասէ, թէ ի Թրակացւոց հատուած մի է ի Հայս, սահմանակից Մարաց Սարապար կոչեցեալ, որպէս թէ Գլխահատ, բարրարիկ և կտրիճ ժողովուրդ, որ երբեմն օգնական եղեալ Գարգարացւոց (Ուտիոյ) և վանեցին զԱմազոնս, զայն Ամազոնս որ կովկասայ ստորոտքը բնակէին կազբից ծովուն եզերքը: —

Իսկ Յաւանայ հեռագնաց և ժրագոյն որպէս Յարեթի աշխարհազրուական կամ ազգագրական յիշատակ չկայ ի մեզ, բայց առասպելախոսն աւանդութիւն նորին որպէս, Յունաց, որք յասպատակութեան Արգոնաւորաց ասնն զԱրմեն սմե թեասազացի¹⁴⁵ յԱրմենիոն քաղաքէ եկեալ ընդ Յասոնի ի Հայս և ի Մարս, և թողեալ յընկերացն յԵփեփաց, ի Սպեր, ի Կալարքան և յԱղիարեն որք ի կողմանս Կործայից և Քաղզէացաց. և յիւր անուն անուս. նեալ զաշխարհս մեր Արմենիա: Եւ փաստս տան լայն զգեստուց թեասաղացուց Արմենի կոչել, և Պենէոս գետոյ երկրին՝ Երասի: Սակայն նոյն իսկ փաստքն առաւել ցուցնեն զթեասաղացուց ծագումն ի Հայոց, միջնորպութեամբ Պե. զասպեանց և Գամբաց և Փոբագաց, քան Հայոց ի թեասաղաց:

Գարձեալ ասնն վասն Գորգեայ որպէս Տրիպաղոմեայ հեղինակին երկրագործութեան՝ եկեալ ի Կորդուս և հաստատեալ բնակութիւն, ուր յետոյ, յաւելուն¹⁴⁶, Պարսք բնակեցուցին զԵրեւորեանս, այսինքն զգերութիւն Յունաց զոր հանին յԵրեւորիոյ քաղաքէ Եւրիու կղզույ, 490 ամաւ նախ քան զՔրիստոս, թէ և Երողոս Շոշայ մօտ ի Կիս կամ Կոս գաւառի ստէ բնակեցուցեալ զսոսա: Արգոնաւորաց զէպքն, եթէ ոտոյզ համարուի, Քրիստոսէ ԺԴ զար առաջ է. Տրիպաղոմեայն ի հարկէ հնագոյն եւս:

Ասոնց նման ուրիշ գողթականներ ալ կրնան յիշուիլ եկեալք ի Հայս զանազան ժամանակ, բայց Հայոց ծագման կամ սկզբանց պատճառք չեն կրնար ասիլ, որպէս և ոչ շատք ի յիշելոցս, բայց եթէ տարիս ինչ յաւելեալ ի նոյն որպէս և ի կրօնս և ի լեզու Հայոց. իսկ երկից նահապետաց որդիքն և թոռունք հաւասար թորպոմայ և Հայկայ Հայաստանեայց ժողովրդեանս ազգահարք սեպուելու են. և զսոսա ոչ այնքան սերնդեամբ՝ սրբան իշխողութեամբ ազգապետս մեր և աշխարհիս մերոյ, որպէս և պատմութիւն իսկ վկայէ թէ Հայկն ի նուաճելն զաշխարհս գտաւ ի զանազան կողմանս նախարանակ մարդիկ և հնազանդեցուց իրեն: Ռարեյունէն ելած ասնն իր բնաանիքն 300 ոգի կ'ըսուին, որոնց հետ կային բնոյժինք և յարեալք կամ միարանք և հաւանութեամբ հնազանդք քաջին. բայց որքան այլ ըլլան, հագիւ քանի սը հազար ոգի կրնանք համարիլ. մինչեւ իր դարձն յԱրարազ ջրհեղեղէն ի վայր 600 կամ 650 տարի անցեր էր, և հարկաւ Հայաստանի շատ կողմերը բնակուած էին, մանաւանդ ի թորգոմեանց և յԱրքանազեանց, հարաւակողմն ի Սեմեանց, արեւմտակողմն յորդուց Յարեթի, հիւսիսակողմն յայլ որպէս նորա. որոց ամենուն վրայ Հայկազանց ձեռքն տարածեցաւ մօտ կամ հեռու ժամանակաւ. բայց տոհմիւ և ազգաւ յայտնապէս զանազանեալք էին և մնացին եւս այսպէս ի պատ-

ճառս տանուտիրական պայազատութեան նախնեաց և երկրագործական ձեռակերպութեան աշխարհիս մերոյ կամ բնական զրից և բաժանմանց, մինչև 2 և 3 հազար տարի յետոյ այլ յիշուիլ ամենահին առհմից և պայազատութեանց, որպէս Ազքանազեանքն, Հայկազեանք, Գուգարք, Գամրեանք, Արրահամեանք, ևն. անշուշտ այլ աւելի պիտի զանազանէին եթէ հայկական լեզուն առհասարակ չծաւալէր, և եզերական բարբառներ ունենալովն այլ, բոլոր մէկ ազգ և մէկ երկիր չի գործընէր: — Բայց պէտք է այս լեզուի օրէնքն ալ քննել, և աւելի ստուգել մեր ազգին ծագումը, և յարարերութիւնը կամ տարբերութիւնը յայլոց:

Ինչպէս ազգիս այսպէս և լեզուիս հեղինակ ճանաչեմք զՀային. սակայն ինչպէս որ ասեանք Հայաստանի ժողովրդոց զանազան ազգահարք կամ տոհմապետք եղած են, արդեօք ի հնումն ընդ առհմիցն զանազանեմը էին և լեզուօք: — Մինչև ցարեհլոնեան խառնակութիւնն՝ յայտ է ի սուրբ Գրոց վկայութենէ թէ ամենայն մարդկան մի լեզու և մի բարբառ էր. թէ ոչ նոյնպէս յայտնի՝ գոնէ շատ հաւանական այլ է որ Բարեհլոնէն յառաջ այլ, մասն մի մարդկան սփռեալ էր ի զանազան կողմանս Նոյեան բնատանն, և աւելի յԱրարատեան երկրին. արդ խառնակութիւնն լեզուաց եղաւ ի Բարեհլոն, որպէս որոշակի ասէ Ս. Գիրքն, « անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի, և անտի ցրուեաց զնոսա Տէր ընդ ամենայն երեսս երկրի », այսինքն զմիաբանեալ տոհմս և տոհմապետս ի չուելն յարեւելից ի Սենաար. ուրեմն նախարարեղեան լեզուն յայնժամ անխառն մնաց Սենաարէն գուրս եղած տոհմից մէջ, որոնց ծանօթագոյնքն են Արարատեան կամ Նոյեան երկրին բնակիչքն, և ըստ այսմ կրնամք ստուգ համարիլ մեր ազգային աւանդութիւնն կամ պարծանքն թէ առաջին լեզուն ի Հայաստան խօսուէր և պահէր (ընդ երկար): — Բայց ո՞ր և ի՞նչ լեզու էր այն: Հօս պէտք է ազգային աւանդութիւնն կամ պարծասիրութիւնն գտել. եթէ չէր այն մեր հայկական լեզուն՝ ապա ի զուր է պարծանքն, վասն զի օտարաց քով կըրնայ բնտուիլ և թերեւս գտուիլ. իսկ եթէ հայկականն ասուի՝ ի՞նչպէս կարելի է այս բանս՝ մինչ մեր պատմութեան հիմն է Հայկայ ի Բարեհլոնէ գալն կամ դառնալն յերկիրն Արարադայ, և հարկ էր որ ընդ այլոցն իւր նախնի լեզուն այլ խառնեալ ըլլար հոն ի Բարեհլոն, և նորով լեզուաւ գայր յԱրարադ. և եթէ պահեց և աւանդեց այդ բարեբաժին լեզուն ի սերունդս իւր և նաև տարածեց Հայաստանի մէջ իրմէ առաջ բնակչաց, ապա հայերէնն չէ նախկին նոյեան լեզուն: Իսկ եթէ ինքն և իրեններն սակաւաթիւ ըլլալով նորէն ստացան Արարադայ նախ-

կին բնակչաց լեզուն, յորմէ նաեւ ի խառնակութեան անդ խիտա շատ հե-
ռացած չէին ասհմապեաք (որք և լեզուապեաք եղան), դեռ կրնայ Հայոց
լեզուն առաջնութեան կամ հնութեան վրայ վիճել, և այս եաքի կարծիքն
աւելի հաւանական կ'ըլլար, եթէ համարէր, ըստ մեր պատմութեան, Հային
միայն իր բնաանեօք եկեալ ի Հայս. բայց վրաց պատմութիւնը զթորոզմ
եւս համարի եկեալ ի Քարելոնէ, յեա խառնակութեանն, բազմութեամբ որդ-
ւաց, յորս գլխաւօր Հային, և թուանց և թոռնորդեաց, «և յբաւէր երկիրն
բազմութեան ախի նորա», վասն որոյ և ցրուեց զորդիսն ի Պանասսէ
ցկազբք, ի Կովկասայ ցկորճայս, և վկայէ եւս թէ ամենեքին ութ տոհմ
բաժանեալ խօսէին զմի լեզու՝ զՀայերէնն, որով և յետոյ ասէ վասն վրաց
թէ վարէին մինչև ի ժամանակս Նաբուզդոնոսարայ, և յայն ժամանակս խառ-
նեալ ձեւացաւ վրաց լեզուն: Արդ եթէ ամենայն ասան թորոզմայ մի լեզու
էր, և բազմութիւն ասհմոց նորա խօսէր զայն, և եկեալ էին նոքա ի Քա-
րելոնէ, հաւանական է որ լեզուինն այլ պահեցին, և Արարազայ առաջին
բնակչաց լեզուն խափանեցաւ կամ խառնեցաւ իրենց հետ: — Այս այլ
ոտոյք է, որ Հայկայ լեզուն թէ բարելածին ըլլար և թէ արարաանեան կամ
Նոյեան, ինչուան ի մեզ 4400 տարուան միջոց շատ փոփոխութիւն կրած
պիտի ըլլար, ժամանակաւ և խառնութեամբ զաղթականաց լեզուներու.
որով չէ մարթ մեր այժմու և մեր նախահօր այն ժամու լեզուն նման
համարիլ, եւս առաւել մեր կամ ո՞ր և է լեզու՝ ընդ նոյեան լեզուի:
վասն այնորիկ թէ և ընդունիմք հաստատապէս զՆոյայ բնակութիւնն ի
Հայս, որպէս և զնախաջրհեղեան նահապետաց, սակայն չեմք կարող
իմաստասիրապէս հետեւընել թէ յերաւի իր նախաշէն բնակութիւնն յայն-
ժամ այլ Նախիջհան անուանէր՝ այս հայերէն բառերով, (մանաւանդ որ
ցուցինք թէ Նոյ այդ հիմակուան Նախիջհանէն հեռու էր). կամ իր բնա-
կած գաւառն Աս-Նոյ-ոսն, (որ ստուգաբանի Ոսն-Անոյ, տեղւոյն բնական
անունն Արին ըլլալով). այսպէս ո՞ր և է հին շինից անուանք որ հայերէն
ստուգաբանութիւն ունին, և Հայկէն առաջ են, կամ երկրայելիք են, կամ
հայերէն թարգմանութիւնք, որպէս և ի Ս. Գիրս, Հայաստանի՝ այսինքն
Երեմայ և Նոյեան երկիրն և ուրիշ աշխարհաց շատ անուանքն այլ երբա-
յերէն թարգմանութիւնք են բնիկ լեզուաց: Նոյնպէս և բնական իրաց կամ
կենդանեաց անուանքն որ բնութեան թարգմանութիւն սեպուելու են, ըստ
խրաբանչիւր զգացման և լսելեաց, որով ամենայն ազգք և լեզուք այլ ունին
այսպիսի անուանակոչութիւններ, և սակայն այդոր համար չեն ըսուիր

առաջին ազգ և լեզու¹⁴⁷։ Ի վերայ այս ամենայնի պէտք չէ զլանալ կամ խլանալ որ արդարեւ մեր հարուստ լեզուին մէջ այսպիսի յարմարութիւնք իրաց և ձայնից շատ և առատ են, և թերեւս ուրիշ սր և է լեզուէ վար չեն մնար, վասն այնորիկ և արժանիք մտապրութեան։

Արդ եթէ զհայերէն կամ զհայկայ լեզուն բարելաժին համարիմք, զոր լեզու պէտք է նոյնան համարիլ. (վասն զի կարգ բանիս հարկապէ համա-
ուօտիւ քննել). — բնօրէն միաքերնիս պառնայ հօն՝ ուր զսուն Նոյայ նկա-
տեցինք. և զի զայն սեփականագոյն տեսանք Արփաքսաղայ կամ Սեմայ
քան Յարեթի, հին կարծիք Ս. Հարց կրնայ աւելի փաստ առնուլ, որք
զերբայական կամ զքաղզէական լեզուն առաջին համարին. յայտ կարծիս
էին, սկսեալ ի Ս. Լուսաւորչէ և Հարք մեր, և ոմանք արաբացոյն տուն
զառաջնութիւն. և երեքեանն եւս մի աղբրէ զան, և սեմական կ'ըստին։
Եւ եթէ ի խառնակութեան լեզուաց, Արարպեան կողմանց բնակչաց լեզուն
անխառն մնաց, եւս առաւել բնիկ Նոյեայ սանն։ — Սակայն յիշելի է,
զի և Հայկն ի Բաբելոնէ նախ յայս Նոյեան ոստանն եկաւ, բնակեցաւ և
թողուց զայն կարպոսի. և զի ի նմին ժամանակի Երբրայ որպին Յեկաան
գնացեր էր ի Բաբելոն և անտի յԱրարիա. և յետ քանի մի հարիւր ամաց՝
Թարա պայազասն Փաղեկայ, Երբրայ, Արփաքսաղայ և Սեմայ՝ իւր Արա-
համ որպոյն հետ ելաւ անտի կամ յերկրէն Քաղզէացոց, և իր լեզուն
այլ այլայեցաւ. իսկ այն Նոյեան երկրին լեզուն Բնչ եղաւ. հաւանօրէն
խառնուեցաւ ընդ հայկականին և ընդ քաղզէացոյն. վասն զի այս երկու
լեզուները խօսող ազգաց մէջն էր, այսինքն Հայոց և Քաղզէից, — Նոյնպէս
և Արարպեան երկրին արեւմտեան հիւսիսային կողմի, այսինքն արեւմտեան
Հայաստանի բնակչաց նախնական լեզուն՝ այլայեալ միացաւ կամ ընդ
հայկականին և կամ այլ տոհմական լեզուաց, որք ընդ Հայիայ ելան ի
Բաբելոնէ, և ընդ արեւմուտս խաղացին ի փոքր Ասիա։

Հիմայ այս ծանր, բազմակնճիոն և անվերջանալի խնդրոյն վրայ, և
Հայոց լեզուին ծագման կամ հնութեան վրայ, թէ հարցանես զիմ կար-
ծիս, այս է. Ընդունիմ զի առաջին՝ Ալլամեան և Նոյեան լեզուն խօ-
սուեցաւ ի Հայս. երկրորդ, զի այն լեզուն լսուէր յամենայն երկրի մինչեւ
ի խառնակութիւն Բաբելեան. և երրորդ, ի խառնակութեան անդ՝ անխառն
մնաց ի Հայաստան, որպէս և յայլ մերձակայ աշխարհս, ուր և սփռեալ
էին մարդիկ. բայց չորրորդ, զի մեծ մասն մարդկութեան տոհմապետօք ի
Բաբելոն գնաց և հօն նոր լեզուներ ստացաւ, նախնի լեզուն առ ոսկաւո
մնալով չէր կրնար տիրել ի վերայ նորոցն, այլ ինքն նուաճեցաւ, այլայ-

լեցաւ, և անկարելի է գաանել զայն. բայց հինգերորդ, ամենայն նորածին լեզուք այլ բոլորովին տարբերք չէին, որպէս յետոյ եղան, այլ և մերձագոյնք նախնոյ լեզուին, վասն որոյ ուր հանգիպեցան այնոր՝ դիւրաւ միացան. որով, վեցերորդ, և հայերէն լեզուն, թէ և բաբելածին, այլ ի կենդրոն անդր Նոյեան երկրին խօսուելով՝ աւելի քան զշատս ի լեզուաց՝ ստացաւ նախնական կերպարանքը, և ըստ այսմ թէ ոչ առաջին լեզու, այլ ընդ առաջինն ասելի և ոչ ումեք երկրորդ. սակայն, եօթներորդ, որպէս և այլքն, փոփոխութիւն կրեալ և խառնեալ ընդ նորագունից. որով ոչ աւելի քան զայլ հին լեզուս նախնական կերպարանը պահած. այլ, ութերորդ, հաւանօրէն շատ հին և սեփական բառեր պահած, որ նմա միայն յատուկք են և կրնան առաջնոյ լեզուին ժառանգութիւն ասիլ: Մեր ազգին հնութիւնն բաւական ապացոյց է լեզուին հնութեան, այլ և այսով կրնամք բաւական նանսել, առանց իսկ այժմու լեզուիս անդրանկութիւնն ալ անհրաժեշտ պահանջելու: Աւելի իմաստասիրական, հետաքննելի և թերեւս դիւրագոյն ինզիր է՝ քննելն կամ յառաջ բերել զկարծիս գիտնոց և լեզուաբանից թէ զհայերէն լեզու ուստի՞ ծագեալ և որու ցեղակից ասեն, որով ազգիս ծագումն կամ խնամութիւնն ալ հաւաստի ըստ նոցա:

Ա. Մեր հայկական լեզուին սեփականութիւնն առաջին անգամ յիշատակեալ է ի պատմութեան մերում իբր 2000 ամօք նախ քան զՔրիստոսս, ի գործս Աբամայ, որ նուաճելով զԳամիրս կամ զԿապպադոկիա՝ (Կապպուսապէ) պատուիրեց բնակչացն հայերէն ոսիրիլ և խօսիլ. այս զիպուածս, (ստոյգ համարելով), Բաբելոնեան խառնակութենէ 500 տարի ետք է, և յայտ աննէ զի այս ատենուան փոքր Հայոց բնակիչք տարացեղ առհմայեաի մը ժողովուրդ և տարալեզու էին, որ թերեւս Հայկայ պէս ի Բաբելոնէ խաղացեալ եկեալ էր հօն, ըստ անուանակոչութեան աշխարհին՝ (որ պահի ի մեզ), յայտնապէս Գոմերայ սերունդք էին, որպէս և Արամ իւր հայկազամբքն, ըստ ոմանց՝ ի Մոսորայ են սերեալք: Բայց ըստ նախայիշեալ բանից Ս. Գրոց որ զԱյլազգիս կամ զՓղշտացիս ասեն ելեալ ի Գամրաց, և դարձեալ ըստ պատմութեան մերոյ որ զհակառակորդն Արամայ և զբռնակալ վայրացն, կոչէ Տիտանեան և Քասդեան, նշանակի քուշացի սերունդ կամ խառնուրդ մը ի Գամիրս. իսկ Յունաց հեղինակք (Էրոզոս, Ստրաբոն) Ասորիս կամ Սպիտակ – Ասորիս անուանեն զբնակիչս Կապպադոկիոյ, և սմանք արդի գիտնոց ալ ընդունին զսեմական ծագումն կամ խառնուրդ Կապպադոկաց. բայց ընդ մէջ նոցա և Արամայ ժամանակին՝ 1500 տարի կայ: Զիարդ և իցէ, թուի մեզ թէ մեր աշխարհակալ

նախարարին ժամանակ, Հայոց և Գամբրաց լեզուք տարբեր՝ այլ ոչ շատ հեռի էին յերարժէ. անուանք ամսոց նոցա, գաւառաց և քաղաքաց, հայկական անուանոց ձայնակից են, բայց այս բանս թերեւս յետ Արամայ նուաճմանն եղաւ:

Բ. Հնագոյն բանասիրական ցոյց ազգակցութեան Հայոց եղած է ընդ Փոփուգացոց¹⁴⁸. Երոզոտոս ի նկարագրի բանակին Քսերքսեայ, զՀայս և զՓոփուգս ընդ միով վարչաւ կամ զօրավարաւ¹⁴⁹ կարգէ, և զերկուսին եւս նոյնակերպ սպառազինեալ, և թերեւս այսոր համար այլ մի վարիչ ունէին, քան թէ վասն մերձաւորութեանն, զի ընդ մէջ երկուցն կային Կապպադոկացիք. պարձեալ ուրիշ անդ (Է. 73) յայտնապէս ասէ թէ Հայք ի Փոփուգաց ծագեալ են, և ըստ ստարագու նոցա զգնեսն¹⁵⁰. զնոյն յիշելով և Եւզոքսոս, յաւելու թէ Հայոց և Փոփուգաց լեզուք նմանք են միմեանց. ուրիշ հեղինակ մ'այլ աւելի եւս ասէ թէ, հոմանիշ են անուանք երկուց ազգաց¹⁵¹. Քսենոփոն, Գիպոր Սիկիլիացի, վիտրուլիոս վկայեն վասն Հայոց և Փոփուգաց նմանակերպ գեանափոր և վիմափոր բնակարանս շինել. — մնացորդն Փոփուգաց շինածոց (որ յայտ՛ բողբուսարագոյն գտանին քան զՀայս), ցուցանեն ճարտարապետութիւն մի օտար ի յունականէն և ի հռոմէականէն¹⁵². — փոփուգացի և հայկական գաւակաց նոյնութիւն, որ ի մետալս և ի քանդակս երեւի՝ աշխարհածանօթ է. — իսկ փոփուգացի սակաւ արձանագրութեանց լեզուն և յատուկ անուանք, ցուցանեն յունականէն հեռաւորութիւն: Իսկ վասն ծագմանն Փոփուգաց, Հելլենք ասեն ի Թրակաց սերեալ. և ոմն (Կսենոս առ Փոսայ) յԵւրոպիայ՝ ի կողմանց Մակեդոնիոյ ասէ զազթական եկեալ, յետ Տրոյիոյ պատերազմին. բայց զի Հոմերոս յիշէ զնոսա ի պատերազմին՝ այլ ոմն (Քսանթոն) 90 ամաւ յառաջ քան զայն մարտ՝ ասէ եկեալ. զոր ոչ վասն բոլոր ազգին իմանալու է, այլ զպարձ հին պազթականին որ ի Փոփուգիոյ անցեր էր յԵւրոպ. զի Փոփուգք ճանաչին հասարակաց հնագոյն կամ մի ի հնագոյն ազգաց Փոքր Ասիայ, որոյ բոլոր միջոցն ծաւալեալ էին ի հնումն գրեթէ քիչ հեռու անոր եզերքներէն, իսկ արեւելքէն սահմանակից Հայոց էին, ի սոցանէ իսկ ծագեալ ըլլալով, և ոչ թէ Հայք ի Փոփուգաց¹⁵³, որպէս և հաւանին հմուտ բանագատք, և զԵրոզոտի խօսքն հակառակ իմանալու է ասեն: Ըստ Հոմերի Փոփուգք և Տրոյացիք գրեալթէ համացեղք էին, լեզունին նոյն՝ այլ տարբեր բարբառով մը զանազանէր, Յունաց ալ մերձաւոր ըլլալնին վկայի ի Հոմերոսէ և յայլոց, որով կրնան Թրակացոց մերձասկիզբն ըսուիլ իրր ծագեալք ի Թիրասայ. մանաւանդ եթէ Թիրաս հայրն Թորգոմայ իցէ. այլ աւելի մերձաւոր Հայոց ցուցանէ ֆուլսեպոս, որ զԹորգոմ

ինքն ասէ հայր Փոխւոցաց. իսկ այլք (Անգղ. Ընդհր. Պամ.), զԱռքանազ ասեն հայր Փոխւոցաց, որ և Հայաստանի տանուաէր էր նախ քան զՔորդոմ զեզրայր իւր: Այս ազգին անունն պէսպէս գրեալ Փոխոց, Բրոսց, Բրիգ, Բրեւկ, Վրիկ, Բեքրուկ, Վրեկուեր, հնագոյն թուի Վրիկ կամ Պոիկ, որ ի բարբառ Մէննեանց՝ ազգակցաց Փոխւոցաց, նշանակէր ազատ այր. (Frey, Free գերմանաց). և անշուշտ Քորդոմայ անէն ոմն էր, կամ իրմէ հին և կամ կրտեր. Թերեւս որդի մի Առքանազայ, վասն զի գլխաւոր գաւառ մի Փոխւոցաց անուանէր Առկանիա. յորմէ Փոռկիւս կամ «Փոռկիւս և » դիւցակերպն Ասկանիոս ասեն զքաջազէնս » յօգնութիւն Տրուլացւոց, ըստ Հովերի. որ յիշէ (Պ. 185) նա և զՄիւզգոն զօրավար նոցա, և իբր հոմանուն երբեմն կոչին Միւզգոնացիք — Փոխւոցացիք. Թերեւս ընդ Փոխուս և Ասկանեանս ճանաչէր Հովեր և զՀայո: Իսկ մեք ի Փոխուիա գաանեմք ոչ սակաւ անուանս անդեաց հայանմանս, զոր օրինակ գաւառքն Աժան կամ Ալան, (որ և նշանակէ համաձայնապէս Ողնի), Պարոյր, որ զի ի Տաւրոսեան լեռանց շուրջ պարուրեալ էր այսպէս կոչեցաւ, քաղաքք Ահան, Երիզա, Բրոսց կամ Բուրց, Դեղուս, Կարոսրա, սահմանակից Կարիոյ, ուր ջերմուկք էին (Ստր. ԺԲ. Ը. 18), Սիսեոս, Լուսիք կամ Լսիս (Լուսիսա), Հրոնդակ կամ Հոնդակ գետ անջրպետ Միւզգոնաց և Դողիոնաց (կամ Դողք). և անուանք մարդկան Մանեա որ նահապետ կամ առաջին թագաւոր և զիւցազն համարի Փոխւոցաց, Ակմոն¹⁶⁴ որդի նորա. Ուրան—ոս որդի Ակմոնի, իսկ ըստ ոմանց, Ակմոն (Թերեւս Մանէա) որդի է Գոմերի. Միդաս, Ադրասա (Երոզ. Ա. ԽԱ), Ասեգասա, Կորդ—իոս, Ացտիս, Ստրեւս, (Կիւբելէ) զիցուհի, Սարագ (Բաքոս), Մարսիաս սրնգահարն կամ Մարտուազ, Լիտուերսես զիք, զիւցազունք, Մեն—Կարոս զիք, որոյ մեհեան մերձ ի Կարուրա: (Ստր. ԺԲ. Ը. 21): Հայրն Մարտուազայ, հնարողն թուոց և երկձայն նուագաց և եռաթել քնարաց, կոչի Հայակն (Hyagnis) կամ Հայագնիս, յոր անուն փորձակրիմք ճանաչել զՀայկն և զորդին Մանուազ: — Հայոց և Փոխւոցաց սկզբնակցութեան հոշակագոյն փաստ մի եւս է ջրհեղեղեան պատմութիւնն, զոր անանգն մաստանք Սիբիլեայց ըստ Փոխւոցաց, իբր զի ջրհեղեղն զուշակեցաւ Նանեակ կամ Անեակ կամ Ինեակ (Նոսքոս, Նոյ) թագաւորի ժամանակ, և իբրիւ մեռաւ նա 300ամեայ, եղաւ ջրհեղեղն, և նախ Փոխուիա զերծաւ ի շուրց, և տապանն նոսաւ յԱրարատ լեռին նորա, մերձ ի Կեյկեկ քաղաք, որ յետոյ կոչեցաւ Ալպա մէա—Կիւպոզոս՝ ի նշանակ տապանին, զի անուկ այդ նշանակէ Տուփ կամ Տապան:

Եւ արդ այս ամենայն յարմարութիւնք տաւել քան զհաւանական հաստատեն զհին և զշատ հին ազգակցութիւն Փոխզաց և Հայոց, զորս զէպք և ժամանակ հեռացուցին, զի կապպագոյլկացիք — Սպիտակ Ասորիք անուանեալք ի Յունաց՝ երկու ազգաց մէջ խարոց ընկան¹⁵⁵, իբր ոանակոխ եղեալ ի սեմական և յարեթեան հեռուոր տոհմից, ակար և արհամարհ ազգ մի եղան, բայց թէ՛ լեզուաւ, թէ՛ սովորութեամբք այնպիսի նշաններ թոյլին, որովք հաւաստի մնաց թէ՛ Հայոց հետ խնամութիւնին և թէ՛ Հայոց և Յունաց մէջ շողկապ կամ միջանցք մը ըլլալնին:

Գ. Այս շողկապը գիտելով կամ չգիտելով այլ, ոմանք (Ռընան) մեր լեզուն հին հելլենին¹⁵⁶ ազգակից ըսին, որ և Փոխզացոց մերձակից ըլլալով, վերի գրութենէն չի տարբերիր. իսկ ոմանք (Պոռէ) պարզապէս յունական լեզուին յարակից սեպեցին, աւելի քերականական կազմութիւնը և մասն մի բառից նմանութիւնը գիտելով¹⁵⁷, և յերաւի մեր այժմու գրաբար լեզուին շարադրութեան և հելլէն հեղինակաց շարադրութեան մէջ՝ ամենամեծ է նմանութիւնն, այնպէս որ գրեթէ բառ առ բառ կրնամք գոյնն փոխել ի հայ բան. սակայն պէտք է յիշել որ այս մեծ նմանութիւնը մեր քրիստոնեայ նախնի հեղինակաց թարգմանութեան ատենէն մտած է, որք զսուրբ Գիրս և զՀարս և շատ ուրիշ գրքեր ի յունականէ թարգմանեցին, հայերէն գրերն անգամ յունականին կարդին և քանակին յարմարեցին, այսպէս և զքերականն փոքր ի շատէ. վասն այսորիկ չեմք կրնար ըսել թէ հին հայկական լեզուին շարաբանութիւնն ալ նման էր այլ հելլենականին: Ի վերայ այսր ամենայնի ոչ միայն յունական բառերու հազարութիւն գտնեմք ի լեզուի մերում, այլ և գիտելով ի Յարեթայ հին ազգակցութիւնն, և մանաւանդ եթէ արդարեւ ըստ վրաց՝ Թորգոմ որդի էր Յաւանայ, հօրն Յունաց, բաւական հաւանական կ'ըլլայ այս ազգակցութիւնն. և գրեթէ անտարակոյս այլ է աշխարհադրապէս, երբ ընդ մէջ Հայաստանի և Յոնիոյ, որ է բնավայրն Յունաց՝ ուրիշ անջրպես շտեանանք բաց ի վերոյիշեալ Փոխզացոց, սրոց մէջ յետոյ մտան կապպագոյլկացիք, որոց լեզուքն ալ արդէն յայսնի են կէս յոյն ըլլալ և կէս հայ: Յունաց զաղթականներուն ալ որ ի Պոնտոս՝ սահմանակիցք էին Հայք:

Դ. Այս կողմանէն Յունաց և Հայոց շողկապ և միջնորդ են Խազտիք և պէսպէս փոքր ժողովուրդք Պոնտացիք, ընդ մէջ բերանոց Ճորսխի և Ալիւսայ, որոց շատերուն գրացի էին Փոքր Հայք, և անոնց մէջ անուանի էին բովազործ Խայիփք կամ Ալիփք, զորս յիշէ նախ Հոմերոս, և զԱլիփոն նախնի երկիր նոցա, զոր ոմանք ի բանասիրաց համարին Ալազան գետ

օժանդակ կուր գետոյ, և ոմանք (Տիւպուա) զխալիբս եկս կողբայ Այրա-
րասայ. խալիբաց արեւելեան մասն կամ առհմն անուանէր Արմեհոխայիք
ի Հելլենաց, որ ըսելի է Հայախալիբք կամ Հայախաղաք ըստ մեզ. այս
ժողովուրդս հնազոյն ասան կ'երեւի թէ Տրապիզոնէն ինչուան ի Սպեր
աարածուած էր, և Բարերդու նահանգին վրայ թողած իր խաղտիք անունը,
ինչուան միջին գարերու ասան մեր պատմութեան մէջ, զոր և Եւիլաթ
կամ Խաւիլաթ Ս. Գրոց ճանչցանք ի նկարագրութեան Աղինայ: Եւ ին-
չուան հիմայ Տրապիզոնի և Կիւմիւշխանէի միջոց ժողովուրդ մը կայ, խալտ
հին անուամբն, որ ճանապարհորդաց և բանասիրաց աչքէն վրիպած է, և
հետաքննին մատրութեան արժանի է. իր բնակած գեղերուն անուանքն ալ¹⁵⁸
ճիշտ գողափար մը կրնան առլ յունահայ լեզուի մը: Անշուշտ այս լեզուն
կամ անկէ քիչ շատ փոխուածն էր նախնեաց յիշատակեալ եզերական
Սպերացի բարբառն:

Ե. Խաղաեաց և Պոնտացուց հասնելով, լեզուաքնին յառաջագնացու-
թիւնս դառնայ բնօրէն ի հիւսիս, ի կովկասայիճ ժողովուրդս. յորս նա-
խապառի են Այրք. այս ազգս իրեն հին խոստովանութեամբն, զոր ի վեր
անդր յիշեցաք, ոչ միայն Հայկայ երկրորդ եղբօրմէն սերեալ է, այլ և
անոր լեզուան վարեալ շատ երկայն գարեր, զրեթէ ինչուան ի գերութիւն
Հրէից սր գողթեցան ի վիրս. և ի սոսոյգ պատմութեանց այլ գիտեմք որ
Վիրք գրեթէ միշտ լծակիցք Լին Հայոց, և հետեւոյք կարգաց նոցա և
կրօնից, թէ հեթանոսական և թէ քրիստոնէական հաւատոց մէջ. իրենց
սուրբ և գիտնական գրոց մեծ մասն այլ ի Հայոց թարգմանեալ են: Իսկ
լեզուին ձայներն կամ տառից յուղութիւնն և շատ բառից նմանութիւնն
աներկրայ ցուցանեն հին և մերձաւոր առնչութիւն մի, կամ սկզբնակցու-
թիւն. վասն այսօրիկ ոմանք ընդհանուր ցեղ մի լեզուաց անուանեն կովկա-
սեան, և առաջին ազգ զհայերէն գնելով, երկրորդ զվրացին, և յետոյս
ազգակից գրեթէ զամենայն հարաւահայեաց կովկասայ ժողովրդոց լեզուս:

Զ. Յայնկոյս անցնելով պահակին ճսրայ և գրանց կովկասայ ընդ
արեւելս հիւսիսի առաջին մեծ և հին ազգ հանգիպին Խաղտիք, անուանիք
արշաւանօքն ի պատմութեան, որոց սկիզբն ի վրաց պատմութեան 1600
և աւելի առօք յառաջ ասի քան զՔրիստոս, նոյն ընդ Սկիւթաց համարե-
լով, իսկ ըստ ոմանց Սկիւթաց ծանօթագոյն արշաւանքը սեպելով 630
տարի միայն նախ քան զՔրիստոս. նոյնքան և աւելի տարի յետ Քրիստոսի
յիշին յարձակմունք նոցա մինչեւ ի Հայս: Բայց թողլով իշխամութիւնը,
գամք իրենց ընտանութեանը. այս ազգին ծագումն քաջայայտ չէ, այլ միջ-

նորդ և շաղկապ կրնայ համարուիլ Թուրք և Ֆիննան ցեղից, և ոմանք այսոր ոմանք այնոր ազգակցեն լեզուաց յարաբերութեամբ. իոկ արեւելեայք՝ ոմանք Թրքաց և այլք կոչկասայնաց. Էպն-Էլ-Աթիր վրաց ազգակից համարի զթաղիրս, իոկ Շէմս-Իւտ-Տին աշխարհազիր պամակացի սխալ է ասէ այլ, այլ Խազիրք՝ Հայ ևն¹⁵⁹: Այս Հին ազգակցութիւնը խոստովանի ինքնին Խազրաց Թագաւորն Յսլուէփ ի Թղթին զոր յառաջին կէս Ժ դարու գրեց առ Խաստայի Հրեայ պաշտօնեայ Սպանիոյ Խալիֆային. ստոյգ է նամակն և եթէ ոչ¹⁶⁰ զեռ իրեւ աւանդութիւն և կարծիք արժէք ունի մեր ինչպոյն մէջ. զասն զի առի թէ Հին ազգաբանութեան գրոց մէջ զասն Խազիրք՝ զի ինքեանք ի Յարեթէ և ի Թորգոմայ սերեալ են. այս Թորգոմա 10 որպի ունէր, առաջին Ակիյոր որ է անշուշտ Հայկն, եօթներորդն Գոգար, յորմէ սերեցան Խազիրք: Այս ազգին Թորգոմայ մեզի ծանօթ որուոց սահմանակից ըլլալուն փաստ ընծայէ և կազրից ծովուն մէկ անունն այլ որ Խազրաց ծով կոչէր, որպէս և կասպից յանուն կասպայ միւս որպոյ Թորգոմայ, զոր յիշէ վրացն պատմիչ:

Է. Աշխարհազարական զիրքը զիտելով կամ այսպիսի աւանդութեան և լեզուին քանի մը յատկութիւնները՝ Պալլաս լեզուաբանն զհայերէնն համարի միջազատ ընդ մէջ կովկասային և Թուրք լեզուաց: — Իսկ Նիպուր (Մարկոս) նորագոյն բանագատ, զՀայս Սեմ-արիական կամ Արի-սեմական ազգ մը սեպելով, այդ երկու մեծ տոհմապետ ցեղից ալ հաւասար իմն նմանութիւն կամ յարակցութիւն տեսնելով,

Ը. Թարար տոհմին ազգակից կամ արասածաղումն առէ զՀայս¹⁶¹:

Թ. Թուրք և Թաթար տոհմից և Պարսկականաց միջազատ աշխարհ և ազգ են Պարբէք, ծանօթը Քրիստոսէ 5-6 զար առաջ այդու անուամբ, այլ յես Աղեքտանգրի հոչակեալք ի Պարսկաստան և ի Հայաստան ցամա 700. այս ազգն աւելի Սկիւթաց և Ֆինաց մերձատոհմն է, յորոց և Թաթարք և Թուրք, քան պարսկականքն, ընդ որում խոսնեցաւ աշխարհակալութեամբն և ստացաւ զպահլաւիկ լեզուն: Այս սկիւթական լեզուաց աղբիւրը ըլլալով ոմանք ուղղակի անախ յառաջաբերեն զհայ լեզուս, և

Ժ. համարին (Լեւի. կապերէր) տոհմակից Ֆին և Սիպերացի լեզուի, որ Ասիոյ և Եւրոպիոյ հիւսիսագոյն ծայրերուն կու տանի զմեզ. բայց Խազրաց աւանդութեանն մերձենայ և այսու, զի զյետին տասն որուոց Թորգոմայ կոչեն Սալիթ, որ է անշուշտ աանուաւր սառամանտան Սիպերիոյ, թէ ոչ միւրոյս Սպերոյ: — Ֆին ցեղին ազգ մը ճանաչի յԵւրոպէ անհահազորդ մնացեալ ի շրջակայից

ԺԱ. Պիսգայեան լեզուն զոր խօսին Պասաք Պիւրենեայց ընդ մէջ Գաղղիոյ և Սպանիոյ. այս լեզունն ազգակից կարծեց զհայերէնն նախ Լայպնից գերմանացի փիլիսոփայն, որ շատ տարիներ լեզուաց քննութիւն ըրած է, և յարոյի լեզուաքննաց ոմանք (Կապգերէր) ալ ի նոյն կարծիս են, որ է բանը նախնեաց գրութիւնն:

ԺԲ. Այս լեզունն պէս անհաղորդ լեզու մ'այլ կայ յԵւրոպայ՝ Անգղիոյ Ռէյլլ նահանգին լեոնաբնակ և ծովափնեայ բնակչաց բերանը միայն պահուած. զոր իրենք կոչեն Ռեյլլ, Կայլ կամ Կակիթք, կոչի եւս Կիմբի կամ Կիմբերեան որ է Գոմերեան կամ Գամբացի ըստ նախնեաց բարբառոյ, և անշուշտ նախնի Գոմերեական տոհմին հետագոյն գալթականք և մնացորդք են. զայս լեզու ալ մերձաւոր հայկականին ճանաչեց ոմն լեզուաքննին (Կապգերէր):

ԺԳ. Այս լեզունն ազգակից է կամ անգրանիկ հին լեզուն Կելտաց, որոյ բարբառք են Բրեւտոնն կամ Աւսօրիկն, որ մինչև ցարդ Գաղղիոյ Բրեւտոն նահանգին մէջ ըստի, այն որ ի հնումն կոչէր Աւսօրիկ և Ակուիտանիա. այս լեզունն մէջ այնքան հայերէն բառեր և մասնիկներ գտուին, որ ոչ միայն ի հնումն մերձաւոր և ազգակից երեւցած է, այլ և յոմանց (Լը Պրիկան) յայտնապէս վկայի ծագեալ ի հայկականէն¹⁶²: Բառից զաագոյն նմանակցութիւնն կրնար կարծեցընել թէ Կելտք համեմատաբար նորագոյն ժամանակ մը գաղթած պիտի ըլլան ի Հայաստանէ կամ ի հայաստան աշխարհէ մը, սակայն Եւրոպէացիք ճանաչեն զնոսա իրենց երկրին ամենահին ժողովրդներէն մէկն, թէ ոչ և առաջինն¹⁶³. ուրեմն իրենց լեզուն զուտ պահելուն պատճառն ոչ ծագման նորութիւնն է, այլ երկրին զիրքն. ուր որ բաց և յօտարաց շրջափակ է՝ հոն խառնուեր են ընդ նոսա և լեզունն այլայլեալ, իսկ ուր լերինք ի թիկանց և ծովն յառաջոյ՝ զիրենք ապահով և քիչ հաղորդ պահեր են, լեզունն այլ աւելի անայլայլակ մնացեր է:

ԺԴ. Յետ Կելտաց կամ Գաղատաց, Եւրոպիոյ արեւմտեան և միջին ժողովրդոց հնագոյն տոհմն և հայր այժմեան ազգաց և լեզուաց է Սարաոնն, զոր ոմանք (Թուոնէր Ա. — Քէրբել) ստուգարանն Sakai-sons, Սակաց — որդիք, և բազումք են հաւանողք թէ ի Սակաց — Սկիթաց են ծագեալ. իսկ թէ նրպէս, ասն յետ արշաւանին Սակաց ի Հայս, ի Շակաչէն գաւառէ կեկեալ գաղթական յԵւրոպայ. որ հաւանագոյն է քան զԼայպնիցայ յիշածն, զոր ի ժամանակագրութեան Հոլլդայնայ ընթերցաւ, թէ Մեծն Աղեքսանդր գտաւ ի Հայս կտրիճ և ուժեղ ժողովուրդ մը զոր և օգնական տաւ:

իրեն արշաւանացը ուր որ երթայր, և վասն քաջութեան նոցա անուանեց քար (saxum ի լատին), յորմէ անուանեցան Սաքսոնք. որ եթէ ստոյգ ըլլար՝ Սասնեցոց համար ըստած պիտի ըլլար, վասն զի այսոր յարմարի և մեր Արծրունեաց պատմչին յիշածն այլ՝ իւր ցեղին իշխանին վրայ, զոր Աղեքսանդր գերելով ծառայեցուց ի պատերազմի: — Ուրիշ աւանդարան Եւրոպէացի պատմիչ մի (Will Malmsbury), հայր Սաքսոնաց համարի զՍեսքեֆ ոմն ի զարմից Յարեթի (Սիսակ?): այլք (Թուոնէր) նոյն իսկ Յարեթի որդի համարին գնա. և այլ ոմն (Վիլ. Ս. Մարզէն), անդրազոյն եւս տանի զզրոյցն և ասէ զՍաքսոնս սերեալ ի Ստրեփիոսս որդւոյ Նոյի, ծնելոյ ի տապանին?: Եւ ինքեանք Սաքսոնացիք հնաւանդ երգերէն աննելով, ասեն իրենց առաջին թագաւորն Ասկանիոս կոչեցեալ, որ Աքքանազ անունը կը ճշգրտէ: Իսկ Հայոց լեզուին ազգակցութիւնն որոշակի չեն յիշեր ոչ սոքա և ոչ լեզուաբնինք, այլ յաճախութիւն հայաձայն բռնոց և սաքսոն լեզուի հնութիւնն ի գերմանական լեզուս՝ որք ցեղակից վկային հայոյն, զնոյն հաստատեն լռելիայն:

ԺԾ. Գալով Գերմանացոց՝ սաքսոնին նման ըլլալովն, հարկաւ նման այլ պիտի ըլլայ հայոյս. և արդէն ոչ միայն պարզ բռնոց՝ այլ և յատուկ անուանց նմանութիւնն թէ ձայնական թէ իմացական՝ նշանաւոր եղած է. (յորս զլիւսուոր Արմէն — կամ Արմին — Հարման գիւցազին անունն). և աւանդութիւնք հին պատմաց Գերմանացոց, որք զՊաւսարթուցիս նախ բան զամենայն Եւրոպէացիս ասեն եկեալ յայս աշխարհ՝ ի Հայաստանէ, առաջ նորոգութեամբ Պաւսարթուց ուրումն, նոյնպէս և զԱւստրիացիս ազգակիցս նոցին. և ասեն ըստ հին ժամանակագրութեան գտելոյ ի վերջ. Լազիոսէ, թէ «մեք Բոյարք (Պաւարք) և Աւստրալք ի Հայոց ունիմք զսերունդ և զբարբառ»: Ուրիշ մասնենագիր մ'այլ ասէ գտեալ յայլում հին մասննի թէ Բոյոգեր հսկայ Խնդիրմանաւ որպէս իւրով յետ ջրհեղեղին անցնելով ընդ Սկիթիա և ընդ Հայաստան եկան յափտինս Գանուբայ, և առ խառնրդովք էնս գետոյ շինեցին Բոյոգուոն քաղաքը որ յետոյ կոչեցաւ Պաղաւիա. և զԲոյոսման՝ առ Լւլպայ և Մուլպաւայ, որ յետոյ կոչեցաւ Մարսբոս և այժմ Բրակա:

ԺԶ. Գերմանական լեզուն ընդարձակ ասպարէզ մը բանայ լեզուաբանական քննութեանց, իր հարստութեամբն և կազմութեամբ և ձայնիւքն իսկ մեծ նմանութիւն ցուցնելով ընդ ճոխագունին ասիական հին մշակեալ լեզուի, որ է սանսկրիտն Հնդկաց, վասն այնորիկ և ի գիտնոց Հնդկա-Գերման բարդութեամբ մեծ ալբիւր կամ ցեղապետութիւն մը լեզուաց ճանաչի, յոր

պատշաճին գրեթե ամենայն յարեթական տոհմից լեզուք: Ոմանք ի լեզուարանից սանուրիտ լեզուին հին յիշատակարաններն, հարստութիւնն, քերականական և գրասորական կատարելութիւնն զիտելով և շատ օտար լեզուաց բառեր ի նմա գտնելով՝ թէ ոչ մայր ամենայն լեզուաց՝ գէթ ամենէն հին և պատկառելի բռին. այլք քննելով անոր վերաբերութիւնները ընդ իրանեան լեզուաց և ընդ գերմանականին և կելտի, և տարբերութիւնն ի սեմականաց, ոչ մայր՝ այլ քոյր և հասարակից բռին այդոց. և ի բազմաթիւն ընդ նմա, մեր հայկական լեզուին բառից և կազմութեան շատ նմանութիւն գտնելով, ճանչցան զազգակցութիւն նոցա. և հիմայ ընդհանուր հնդկա-գերման ցեղին ազգակից սեպն զհայերէնն շատք ի բանասիրաց (Գլարբութ - Նայման - Բեդերման): Ի սանուրիտ լեզուի ոչ միայն պարզ բառք գտնուին հասարակք երկու լեզուացս, այլ և մասնիկք և շղկապք և հնագոյն յատուկ կամ մասնատու անուանք (ինչպէս Նաւասարպ - նաւա - ոտարատա, նոր տարի. Զարմայր - սարվայր, զօրուոր): մասնաւոր կերպն ընթերցման բաղաձայնից, կամ ա տառին ստէպ գործածութիւնն, ի սանուրիտ և ի հայումո, նոյն իսկ իրենց զիցազնական տաղից չափն 160-անեայ, նշանակութեան արժանի են: - Թէ ոչ ուղղակի ոտնագրիտի՝ այլ այնոր լծակից լեզուաց ընկեր համարողք զհայն՝ բազմութիւ ևս են. Հնդկաց արեւմտեան աշխարհէ մինչեւ ի Հայաստան՝ համանունաբար Արիք կամ արեաց աշխարհք կոչին, բնավայր գնակտրիա համարելով:

ԺԷ. Յայումանէ Արիական տոհմն լեզուաց, որոց բարբառ մի է հայկականն, ըստ ոչ սակաւ լեզուարանից (Կոչ - Վինաիշման): Անգրթիւ առաջին հետամուտ և ծանուցող Զանդիկ լեզուի՝ թէ զգիրս և թէ զլեզուն հայոց նման գտնէր զանգիկի, թէ և ոչ պակաս բան զՎրացին. Ճոնս Ուիլիեմ այլ յայր կարծիս է Հին պարսկիւն ազգակից կամ յարանման զինելոսն զհայկականս. գրեթէ զնոյն ասեն և որք Մարապարացի լեզուաց լծակից ասեն զհայս (Ալիսոն - Տիֆէնպախ), զի գտնուին էր տիրող և նուիրական լեզուայն կողմանց. իսկ Բող մերձաւոր ասէ այլ ոչ համազգի անոնց:

ԺԸ. Ոմանք ալ (Լագրոզ - Վիսպոն - Նայման - Պլոնէ յիսուսեան) պարզ Մարաց լեզուին ազգակից ասեն զհայն, որ գարձեալ նոյն ցեղին վերաբերի, զի Փեհլէի լեզուն համարուի լեզու Մարաց: - Հիմակուան լեզուիս վիճակին նայելով, հայերէնը աւելի Բազիլետի նման է¹⁶⁴ քան բուն զանգիկի, որ նշանակէ թէ զանգիկ գրուածքն (զենտ-աւեստայն) հնագոյն կերպարանք ունին քան զմեր լեզուին մնացեալ գրաւոր յիշատակարանքն¹⁶⁵:

Յարեթական լեզուները թողլով, գտնանք ի Սեմականս, յորմէ ըստ

հասարակաց կործնաց հետի է հայկականս, սակայն հնազոյն և նորազոյն ժամանակ ալ եղան բանասէրք որ այս լեզուաց մէջ ալ նմանակցութիւն գտան. որպէս վերոյիշեալն Նիպուր միջպաս իմն ընդ երկուսին ցեղապետութիւնս դասէր Սեմ արիսկուս կամ Արի-սեմական կոչելովն, և Թաթարաց մերձաւոր:

ԺԹ. Իսկ այս Թաթարներն այլ հնազոյն բարեւական ազգ մը, որոյ լեզուաւ համարին հնախոյզք ոմանք զբեւոաքանպակ զրուածս Ասորեստանի: — Հայաստանի աշխարհազրական գրիցը նայելով որ Ասորեստանի սահմանակից էր ի հարաւոյ, և հին ժամանակէ բազմաթիւ Ասուրացի գաղթական ընդունող (ինչպէս Սենեքերիմեանք), բնական իմն էր գոնեա այն կողմի բնակչաց լեզուն խառնուրդ մը սեպել. և թերեւս զայս նշանակէ Կորձայ հայկական բարբառն:

Ի. Նախընթաց գլխոյն մէջ տեսանք յարեթական և սեմական ժողովրդոց բաժանման գիծը, և երկուքին այլ բնաւայրն ընդ մէջ Կորձայից և Ալիարեանայ, ուր Քաղդէական ազգին տոհմապետն Արփաքսատգ իր պայազատօքն յերկար մնաց, և ուսկից Սրբահամ լեզուաց խառնակութենէ 4-500 տարի ետքը ելաւ. և կրնար Քաղդէարէնն այլ հայկականին հետ խառնել այն կողմերը: Այս խառնուրդը աւելի իրական համարելով՝ եղան հայերէնը քաղդէարէնին ազգակից ըսողք այլ (B. de Vence), կամ աւելի չափաւորելով մեր առջի ըսածին համեմատ Կիսաքաղդէայ անուանել զհայն (Պոշար):

ԻԱ. Քաղդէարէնէն յԵբրայականն անցնելու համար գրեթէ անջրպես չկայ. ամէնուն յայտ է մեր զեռ իսկ հիմայ յիշածն, Աբրահամու ելքն յերկրէն Քաղդէացոց, որով և զնոյն լեզուն խօսիլն, ուսկից յայտնի այլ է որ յետոյ ուրեմն այլափոխեցաւ խառնելով ընդ լեզուաց Ասուրոց և Քանանացոց և ձեւացաւ Հրէից լեզուն. զոր հին Հարք և բազում մեկնիչք առաջին լեզու մարդկան համարեցան. արդ Հայոց և Հրէից լեզուն ազգակից կամ առինչ ըսողք ալ գտուեցան, գիտութեամբ նշանաւոր հեղինակք (Կլամեթ — Վիսդոնդի):

Քաղդէից և Հրէից լեզուին բոյր է արամականն կամ սասորիւն. և հարկ էր ասոր հետ այլ ազնուութիւն ունենալ Հայոց, որոց արեւմտեան հարաւային սահմանն իսան էր. Հայք յառաջիցին յԱսորիս աշխարհակալութեամբ, և մինչեւ ցայժմ գաղթական բնակութիւն ունին. Ասորիք այլ Հայաստանի Աղձնեաց և Դ. Հայոց նահանգաց մէջ շատ հուսց բնակեր և մնացեր են մինչեւ ցայժմ. և հաւանորէն իրենց սեփական էին այն կող-

մանքն , և ժառանգութիւն որդւոց Արամայ որդւոյ Սիմայ , և յետոյ Հայք Տարսու լեռներէն իջնելով գրաւեցին անոնց երկիրը , և լեզուին այլ խառնուեցաւ հօն . և թերեւս անտի ծագեց Գ . Հայեցի բարբառն մեր : Աստի թերեւս ոմանք (Պոնֆրէր — Արիաս — Տէպորրֆ) գԱրամ՝ Սիմայ որդին՝ համարին հայր Հայոց անտարակուսարար , մանաւանդ վասն մեր ձաւորութեան Արմենիա անուան :

Ի՞՞՞ Ասորոց և Հայոց լեզուին ազգակցութեան կարծիքը նախ Սարարան (Ա . ԽԱ .) հին աշխարհագիրն հրատարակեց , որ մեծ նմանութիւն կու գտնէր Հայոց , Ասորոց և Արարացոց լեզուաց , բարուց և կերպարանաց մէջ , և հոմացեղս կամ հոմասկիզբն կարծէր¹⁰⁶ : Այս բազմահմուտ հեղինակին զրոյցն արժանի է կշռութեան , վասն զի Հայոց և Ասորոց մերձաւոր էր ծննդեամբ և անձամբ շրջադայելով յաշխարհս նոցին , բայց ի վերայ այսր ամենայնի մեք չեմք կրնար մեկնել իր ըսածը , բայց եիէ նշանակելով իր առննի վերաբերութիւնը ընդ մէջ կրկին ազգացս , որ Ասորոց թագաւորութեան նուազելու առննն էր , և Հայոց աիրապեսութեան ի վերայ Ասորոց , սկսեալ ի Տիգրանայ մինչև ի Սանատրուկ , իրր զար մը ժամանակի միջոց . որոյ համար ասէ Եպիփան պատմիչ դաստառակին բերելոյ յԵղիսիա , թէ վաճառականութիւնն և հարկահանութիւն Ասորոց ձեռքն էր և ամենայն ինչ Ասորոց լեզուաւ վճարէր . « Այսու պատճառաւ հայօրէնն » ամենայն և մեծամեծ աւագանին ամենայն... ի սուր և յառ , զն իսկ և » զօրքն ամենայն... ի խօսս և ի գիրս ասորի հարկէին , և անպէն ի նոյն » կրթեալ և ուսեալ եւս լինէին . որպէս և Խորայլ ի Բարեկոն մոռացաւ » զիւր սեփհականն , և ամենեքեան զՔաղթիացիոյն ուսեալ խօսէին , մնա » լով ի հաւատ և ի յազգ երբայեցի . իսկապէս և Հայկազունքն Քնացին » յազգ իւրեանց . և սովորական գտանի լեզուս ասորի » :

Գրեալթէ ամենայն յարեթական և սեմական լեզուաց ծնունդ կամ ծնող կամ համածին տեսանք զՀայն , ըսաւ կարծեաց զանազան գիտնոց և քննչաց . մնայ անցանել անյոր քան զսահմանս Սիմայ և ի բաժին Քամայ , տեղոց թէ հօն ալ նմանութիւն գտնեն բանասէրքդ : Այս երկու բաժնից անջրպետն և երկոցուն լեզուաց (սեմականին և քամականին) միջնորդն է փիւնիկէ և Քանաան . Հայոց լեզուն ասոնց ազգակից զնոյ չեմք յիշեր , բայց իրարու հետ վերաբերութիւն ունենային , զէթ իրբու վաճառականք՝ ամենահին ժամանակ անտարակոյս է : Դարձեալ ասանդեն պատմիչք մեր թէ Հայոց Գնթունեաց ցեղն ի Քանանացոց սերեալ է , երբ զաղթական եկաւ անտի փախտաւեամբ ի կոտորածէն Յետուայ , որ է ասել ժՉ զար նախ

քան զԲրիտանոս, և յետ 2000 ամաց Մ. Խորոնեցի ասէ սակաւին զբարս նախնեաց իւրեանց ունել նոցա: Իսկ Եգիպտացոց և Հայոց լեզուին ազգակցութեան կարծիքն հրատարակեց նախ (1680) բազմալեզուագէտն Անգրէաս Աքոլութ, և իրեն հետեւող ալ գտաւ (զՃուարց):

ԻԳ. Երկու ազգաց ալ հնութեանն նայելով, և սահմանաց ոչ շատ հեռաւորութեան, զՓիւնիկէ կամ զՊարթեալիս և զԱսորիս միջնորդ ունենալով, ուսկից անշուշտ մեր վաճառական հարց կարաւանքն երթեւեկէին, կրնար հին առնչութիւն մ'ալ փնտռուիլ լեզուաց մէջ, թերեւս կրօնական կամ գիցարանական քննութիւնք այլ այս բանիս աւելի փաստ կամ ոյժ մը տան: Քանի մը եգիպտական սրբագիր ընթերցուածոց մէջ նշանակեալ բառերու հանդիպեցանք, յորս ոչ սակաւ հայանմանք կային նոյն իմաստիւք, որ յիրաւի գիտման արժանի երեւցան. (զոր օրինակ Սհուէ-Չու. Երբ-Երբար. Հոֆֆ-Աւ. Ուէճուէճ-Սրոճ. Գրանգրան-կրճել ատամանց. Մուլաճ-Բուէճ. Թոթ-Թաթ. Թոռէ-Բնդիւն, և այլն):

ԻԿ. Նոյնպէս և ի Ղիտի լեզու, որ է նոր Եգիպտացին, ոչ սակաւ հայկական բառք գտանին. (զոր օրինակ ալոզ-սլոզն. ալոլի-խազոդ. արիւ-արա. ճոզ-ժազ. սրի-սպի. վէրվէր-վաուառ. պինան-պնակ. պորկ-բարկութիւն. իերզ-ահսանել. եօրազ-երես. թառին-տոռն. ետոնմ-յառիլ. ետոո-առու, դեա): Ղիտեաց և Հայոց լեզուին ազգակցութեան կարծիքը Լայպնից գիտողաց յանձնէր քննել. զոր անտարակուսաբար ընդունեցաւ Երնկ: Աքոլութի կարծիքն է թէ Հայոց լեզուն յառաջ քան զՄովսէս մարգարէ՝ էր Եգիպտացոց հին լեզուն. բայց շատ բնապարտութեամբ կը նմանցընէ Եգիպտացի բառեր կամ անունները՝ հայկականաց. ինչպէս Պետափրէս = փութափառք. Ասեղեկ քաղաք = Ասողաքաղաք. Ամենեմա = Ամենամեծ. Սասուռնսո = Սատր, Սակր. Բաքոս(դիք) = Բահ(բրիչ). Լինոս (դիք) = Լինել (բայ). Պան (դիք) = բան:

Յետ Եգիպտացոց բնականապէս Եթովպացիք յառաջ գան, որոց անունն ամենահին ժամանակ յիշի ի Հայս իբրեւ սեւաղմ՝ ժողովուրդ նշանակելով. նշանաւոր է և աւանդութիւնն՝ Տրովացոց օժանդակաց մէջ Եթովպացոց, Փոլիզացոց և Հայոց զօրակցութիւնը առաջնորդութեամբ Մեմնոնի և Չարմայրայ: Յետ քրիստոնէութեան նշանաւոր է Եթովպացոց Հայոց հետ հաւատակցութիւնն, և երբեմն ի Հայոց ընդունին իրենց Եկեղեցւոյ գլուխն. նաեւ իրենց հին զրերուն նմանութիւնն ընդ հայկական տառից, ի վերայ այսր ամենայնի չեմք յիշեր որ ասոնց ազգին կամ լեզուին մէջ ալ լծակցութիւն մը գտնող եղած ըլլայ:

Բաւոր Ասիոյ, Եւրոպոյ եւ Ափրիկոյ գլխաւոր ազգերուն հետ Հայոց ծագման վերաբերութիւնը գտնելէն ետեւ, ըստ զանազան հեղինակաց կարծեաց, կու մնայ թերեւս Ամերիկա այլ անցնիլ. և կը գտտի լեզուաքնին հեղինակ մը (Հերլաս) որ Վիսիկոսիցիս, հնութեամբ և յիշատակարանօք նշանագայն ի ժողովուրդս Նորոյ աշխարհի, և զՌայոմիկոսիցիս, գաղթականս համարի ի Հայաստանէ եկեալ՝ յանյիշատակ ժամանակս, ընդ արեւմտեան Ասիա ճանապարհորդելով:

Յետ այսքան յիշատակաց՝ ծագման ազգաց և լեզուաց Հայոց և ի Հայոց, եթէ միայն գիտէինք զօտար ազգաց ծագումն յաշխարհէս մերոյ, կրնայինք զեռ քանի մը ուրիշ ազգաց համար այլ ըսուած աւանդութիւն կամ կարծիքն յիշել. ըստ որոց՝ (Վալլէնսէյ առ Հերլասայ) ի զանազան ժամանակս ելած են ի Հայաստանէ, Իսրահայցիք՝ առաջնորդութեամբ Փիւնիկոյ կամ Փենիոյ-Փարզայ՝ որ թագաւորէր ընդ մէջ Պոնտոսի և Կարթից ի Բարձա կամ Պարտա, որով իմացեալ լինի Հայաստան. — Բրիտանացիք, հատուած Կիմերեանց (Պոմերեանք) և Կիլասց, որոց առհմ մի Ատրպատ (Attrepates) անուն ճանաչուէր ի ժամանակս Յ. Կեսարու, ընդ մէջ Քէնզայ և Քոռնուայլայ. — Տոսկանացիք կամ Ետրուրացիք, հին և զարմանալի ազգ իտալիոյ, զոր մօտերս Անգլիացի հեղինակ մի (Էյլիս Ռոպերդ) ամբողջ գիրք մը գրելով կը ցուցունէ ծագեալ ի Հայոց. (The Armenian Origin of Etrurians). — Սարթիւնացիք և այլ ժողովուրդք ոմանք իտալիոյ, ըստ աւանդութեանց Աննեան Բերոսի. — Դարձատացիք¹⁶⁷. — Պաննոնիացիք, զորս անտարակուսաբար Հայոց սերունդ առէ Հոննիոս. — Ռուսք և Մոսկովք, սերունդք Ռոմի Մեսովբայ Եզեկիէլի, որոց առաջին բնակութիւն յափունս Երասխայ էր, ըստ ազգագրի ուրումն (Matthieu. La Turquie):

Այս ամենայն դրութիւնը՝ ազգակցութեան կամ ծագման հայ լեզուին բնգունելի և բաւական չհամարելով՝ հայազէս Եւրոպէացիք ոմանք (Վիլլուր — Շրոտէր — Ատելունկ), և ոչ մի լեզուի ածանց կամ կցորդ ճանչցան զհայկականն, այլ անազգական, անհաղորդ, ինքնազլուխ, ի բարեւական խոսնակութենէն զատուցեալ. որ է ըսել նախնական լեզուին այլայլութիւն, որպիսիք էին և ուրիշ գլխաւոր սոհմապետաց լեզուք:

Եւ արդ ո՞ր կամ ի՞նչ հետեւութիւն և բովանդակութիւն այսքան կարծեաց և դրութեանց. ուստի՞ կամ յորմէ՞ ծագումն լեզուիս Հայոց որով և ազգիս: — Եթէ արժան է զասել առոնցմէ, ահա կու տեսնեմք բաժանեալ յոյժ յոյժ զկարծիս գիտնոց և քննըչաց, մինչեւ նոր լմն բարել համարել

զՀայաստան, և հարկ կու լինի և յակամայս անգամ ի վերայ բերել թէ ոչ աստուտ կամ անտուտ ծագեալ է Հայն, այլ և՛ այս և՛ այդ և ամենայն ի հայկականէն, ըստ որում կը վկայի ասընչութիւն և լծակցութիւն գրեալի մանայն սոհմական լեզուաց երից մասանց աշխարհի, կամ երից նահապետութեանց ջրհեղեղեան գերդաստանին : Չկայ և ոչ մի աշխարհ կամ ազգ, ոչ Հնդկաստան, ոչ Բաղարիա, ոչ Պարսիստան և ոչ Բարբրոն անգամ, յոր այսքան հեղինակաց և գիտնոց այլակարծեաց և այլակրից դասնան ուշադրութիւն և յառին աչք, որպէս Հայաստան, յորմէ խոստովանին կամ զծագումն ազգաց զանազանից և հեռուորաց, կամ զազգակցութիւն և զածանցումն լեզուի նոցա. և եթէ քերականական առեղծուածք և վերլուծութիւնք զսանսկրիտ կամ վայլ մեծ և հարուստ լեզու կու ճգնին ցուցանել՝ մայր և ծագող կամ զանձարան յոգունց այլոց, պատմական և աշխարհագրական աւանդութիւնք և զրոյցք՝ ի Հայաստան կը հաւաքեն զհաւանութիւն և գերեւոյթ. և կենդանի յիշատակարան և փորձք իսկ իրացն անկ և անոր շուրջը կը ճշգրտին՝ նոքին իսկ լեզուք սոհմականք: Բարբրոն զսեմականս միայն ունի իր շուրջը և զարիականս ի միոյ կուսէ. Հնդկաստան՝ զարիականս աստի և զանձանօթ Սինէացին անտի և զկղզիո. իսկ Հայաստան որպէս բաժանման և սփռման սոհմից՝ այսպէս և լեզուաց կենդրոն երեւի շառաւեղարձակ. անընդմէջ ի հարաւոյ ունենալով սահմանակից զսեմականսն, զԲարդուցին և զԱրամացին և զԱսորեստանեայն, յորոց հարաւագոյն եւս Արարացին և Հերրայեցին. և յելից հարաւոյ զարիականս, զՄարաց և զՊարսից հին լեզուս, որոց անդրագոյն Հնդկին հարուստ, յարեւմտից հարաւոյ Ասորւոյն բով՝ Բամականք, Փիւնիկականն և Փանանացին, և անդրագոյն Եգիպտացին. իսկ յարեւմտակողմն բարբառք մերձաւորք Գամիրք և Փոլիդացի խոսնեալք ընդ հինն Հելլէն՝ որ անդրագոյն փոխի ի Յոյն նոր, մինչեւ ի կղզիս Ելլադայ. ընդ հիւսիսի արեւմտից՝ Խաղտեաց և Կողքեաց բարբառք, և ընդ հիւսիսի՝ Մետաաց, Վրաց և Կովկասայնոց. իսկ ընդ արեւելս հիւսիսի՝ Սկիթական և Սարմատական լեզուք. և արեւմտից և հիւսիսոյ՝ այս երկու կողմերէն կու սփռին ամենայն սոհմական և այժմու բարգաւաճ լեզուք Եւրոպիոյ, Յոյն, Լատին, Կելթա, Էլիմերեան, Գերմանացի, և Սլաւեանն ցեղ բազմազան ազգօքն: Առոնք ի բնութենէ իսկ, որ է ասել, ի զրից աշխարհիս մերոյ և ի շրջակայիցն ազգաց և լեզուաց ակներեւ կը վկային. իսկ աւանդութիւնք և կարծիք գիտնոց և բանասիրաց է ինչ՝ որ բնաւ չունին կամ չեն ցուցաներ հաստատութեան փաստեր, և է որ շատ կամ սակաւ հաւանելիք են և մեզ, թէ և

ուչ մեծապէս կարեւորք. բաւ է որ օտարք և ոչ համազգիք մեր են աւանդողքն. ոչ եւս Հայք բաս ինքնասէր պանծանաց զօտարս իրենց երկրէն և լեզուէն կ'ըսեն ելեալ, այլ օտարք ինքնին կը խոստովանին զինքեանս կամ զընկերոն ծագեալ ի Հայոց կամ գէթ ինամիտ սոցա: Եւ եթէ այսու հանգերձ չարաչար անձնատեսութիւն համարուի պարծել Հայոց ընդ երիցսութիւն իւրեանց և ընդ կենդրոնականութիւնն, թերեւս ոչ փոքրագոյն վատութիւն և կուրսութիւն պիտի ըլլայ այսքան վկայութիւններ և աւանդութիւններ շտեմանելը, և զարմանալի կազմութիւնը և ճոխութիւնը սեփական լեզուին, որ պիտի յսգնեցնէ միշտ և պիտի տանջէ զկարծիս տարախոհից բանասիրաց ցորչափ կենայ հայ լեզուս ի գրի, և հայ աշխարհս՝ յերկրի:

Իսկ մեք ի թողուլն հօս զինդիր լեզուաց նշանակենք անոնց խուսն բազմութեան մէջ, որոնցմէ երեանիւ չափ վերագոյն յիշատակեցինք, զվեցեալն մեծամեծս, և ախրողս և հարուստս, զպելասոսեանն յարեմուտս, այսինքն զյունալատին, զգերմանացին յարեմուտս հիւսիսոյ, զալուեանն ընդ հիւսիսի, զսկիւթական կամ զթուրք ընդ արեւելս հիւսիսոյ, զհնդկապարտիկն կամ զարիական յարեւելս հարաւախաոն, և զարաբացին ընդ հարաւ, և ի միջակի սոցա զհայկականս, որ թէ ոչ հոծութեամբ ծաւալած է այսօր բնդարձակ երկրի և ազգաց մէջ, բայց պահէ զարմանալի միութիւն և ամփոփութիւն իւր սեփական ազգին բերնին մէջ, և իր հետ ոփոռուած է երկրիս ամեն կողմը. և զարմանալի քան զայն՝ սնի ի ներքս յինքեան ընդարձակութիւն և ճոխութիւն, որով սակաւք քան զնա կը գերազանցեն, իսկ շտեմարանութեամբ բառից զանազան առացեալ լեզուաց, թերեւս ոչ սանկրիտս և ոչ այլ ոք ի լեզուաց կը հաւասարի իրեն:

Յուշ առնել կարեւոր կը համարիմք և զայս, զի Հայաստան որպէս երբեմն կենդրոն և յետոյ չուարան, և յետոյ անցարան եղաւ ազանց վասն զի ցրուեալքն ի Բաբելոնէ ոչ պէպի հարաւ միայն կ'երթային, այլ և պէպ հիւսիս, որպէս ինքն Հայկն, ապա անցան և ընդ Հայաստան աշխարհ մանաւանդ ընդ արեւմտեան Հայս, որ 500 տարի յետ զալստեան Հայկին գեո չէր նուաճուած ի Հայկազանց, և ոչ գիտեմք ստուգիւ թէ յորմէ՞ սոհմից բնակեալ էր: Եւ ոչ անցարան միայն եղաւ սոհմից և գնդից աշխարհս մեր, գիմելոց ընդ հիւսիս և ընդ արեւմուտս, այլ և ասպնջական սոհմից և զազթից բողոմ՝ անդամ յօժարութեամբ և երբեմն բոնութեամբ, որպէս և ի վերջ նշանակեցինք, և այս գրեալմէ մինչեւ ցկատարած միապետութեան ազգիս, այսինքն ցվերջ Արշակունեաց հարստութեան. ինչպէս և անկէ վերջ բոնաբարեալ և բնակեալ ի հիւսիսայնոց, յարեւելեայց Սկիւթաց

և ի հարաւայնոց Արարկաց, և եկք և խառնուրդք այնքան այլատոհմ և այլաձայն խմբից, (որոց սերունդք միանալով Հայոց նախարարութեանց հետ, ցեղեր հաստատեցին յաշխարհի մերում), ի հարկէ մեծապէս այլալեցին կամ յեղանակեցին հին հայկական լեզուն. անոր համար առաւել քան ի սմա՝ ի հեռաւոր առնչակիցս իւր պէտք է գանել նմանութիւններ հոմացեղ լեզուաց, զոր օրինակ սանսկրիտ լեզուի ընդ հելլեն և ընդ գերմանացի, որոց սեփական աշխարհք առաւել անխառն մնացին. և կամ ուրիշ խօսքով աւելի հեռաւոր ազգաց լեզուաց հետ կը գտնուի նմանութիւն ընդ հայկականին, քան ընդ մերձաւորաց կամ միջագասից. վասն զի հեռաւորքը հնագոյն հասուածք կամ անցորդք են ի Հայաստանեայց, որոց լեզուն զտազոյն էր, և տակաւ նոր գաղթականութիւններէն կամ ազգերէն մղուելով և քշուելով գամ քան զգամ հեռացան, և կենդանագոյնս պահեցին զախպս կամ զբառս ի Հայս խօսուած լեզուին. այսպէս ի սանսկրիտ՝ յարեւելս, կելտաց լեզուին մէջ՝ ի ծագ արեւմտից, և ի սակսոնն՝ ընդ հիւսիսի արեւմտից, որոշագոյն կ'երեւին հայկական նիշք և մերձաւորութիւնք յայժմուս. որպէս շատ հին առեն ընդ անընդմէջ դրացիս մեր, ընդ Մարապարսո՝ յարեւելից կուսէ, ընդ Փոռիզացիս կամ Գամիրս՝ յարեւմտից, և ընդ Վրացիս՝ ի հիւսիսոյ, և ընդ Խաղոս կամ Պանսացիս՝ յարեւմտից հիւսիսոյ:

Ը

ԱՆՈՒՆ ՄԵՐՈՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ՈՐՔԱՆ և ընդունայն համարուի ըստ ինքեան ձայն մը, բացա-
արելու համար իրի մը իսկութիւնը, այնքան և կարելոր է անոր յիշատակը.
մինչեւ ասել թէ առանց անոր կարելի չէ բան մը ճանտել. և ոչ միայն
միտք կը պահանջեն զանուն, այլ թուի թէ և սիրտն անգամ կը ինդրէ զայն.
առաջին գրեթէ հարցումն իրարու հանդիպող անձանքից՝ է ինչիւր իրենց
անուանց. առանց անոր միշտ թերի կը համարուի ծանօթութիւնն, իսկ զայն
գիտելով կը համարինք ծածկել ծանօթութեան պակասութիւնքը: Եւ ո՞ր
որտարուի բարբառ առաջին ծանօթից հանդիպելոց՝ թէ ոչ միմեանց
անունը. կամ ինչ աւելի ախորժելի յիշատակ հեռացելոյն, թէ ոչ իւր
անունն գրոշմեալ իր ձեռամբ: Պատուականագոյն և սրբազնագոյն ժառան-
գութիւն են մեզի ազգարանութիւն հաւուց և նախնեաց մերոց, և աւելի
զգուշութեամբ քան զազամանդ և զգոհար կը պահեմք յապահովի լոկ
անանց անուններն իսկ. և որոնք որ ունին պատմութիւն ազգային, դեռ
գինքեանս սխալած չեն համարիր, եթէ ունենան միայն իրենց նահապե-
տաց իշխանաց անունները: Ասորեստանեայց երկայն ինքնակալութեան
երկոտասան գարերը կը պատկերացնեն իրենց թագաւորաց շարանուն
գաւազանը, և մեր ազգին այն ժամանակի կեանքը և կացութիւնը՝ ՅՅի
չափ լոկ անուանք Արարատայ ասնուտեարց. զորս հասոյց մեզ բազմ-
երախան խորոնեցի, և այն միայն ցամաք անուններով անրնդհատ կը պա-
հուի թէ պատմութեանս, մանաւանդ թէ ազգութեանս ի սկզբանցն մինչեւ
ցայժմ: Եւ որովհետեւ նշանական ինչ են անունները, իղձ է հնասիրաց
ճանաչել կոչման պատճառները, զոր սակայն չկարեն ստուգել յիշատա-
կարանաց լուսութեամբ. ո՞րքան եւս առաւել ցանկալի է գիտել զոկիզբն և
զողտածառ պէսպէս անուանց՝ որովք կոչուեցան մեր հայրիկիք ի զանազան
ժամանակս կամ ի զանազան ազգաց: Արդէն իսկ յատուցութեաց քննութիւն
ժազման ազգիս և լեզուիս, ծանոյց մեզ զկարեւոր անուանսն, բայց զի կան
ուրիշներ այլ, կարեւոր համարիմ դեռ չմխուած ի ճառս պատմութեան անցից
աշխարհին. քննել և կարգել անոր պէսպէս յորջորջումները, ըստ գրոց և
ըստ լեզուաց ազգաց. կամ գասելով ըստ հնութեան ժամանակի կոչմանցն,

որովք և պատմական կերպարանք կամ յեղափոխութիւնք աշխարհին յան-
 դիման կը լինին:

Ա. Հնազոյն անուանք մեր Հայրենեաց կը գտնուին ի հարկէ ի հնա-
 գոյն և ի սրբազան մատեանս Երրայեցոց. յորս նախ առաջին կ'ընծայի
 Եղեմ կամ ԱԳԻՆ և յարաւուրն Հեղեմ կամ Հեղեմէ պարսկական, ինչպէս
 ցուցուեցաւ յառաջնում՝ պրակի:

Բ. Եւ երկրորդ ընդ նմին՝ Արեւելից անուն, ըստ կողման գրեցն, և
 ասոր վրայ եւս հոն ճառեցինք, և յաւելունք աստ զի ոմն մեր հեղինակ
 միջնադարեան (Ոսկփ. ԺԴ), ընդ պարծանս կամ սեփական շնորհս ազգիս
 կը համարի թէ «Արեւելեանք կոչին Հայք». և այլ ոմն (Ոսկփ. Ա) ի բան
 մարգարէին Դաւթի. (Սղմ. ՀԳ. 7.) «Ձի ոչ յարեւելից և ոչ յարեւմտից,
 » և ոչ յանապատէ լեռանց » և այլն. «Յարեւելից Հայոց թագաւորքն են,
 » կ'ըսէ, և յարեւմտից Հոմայն, և յանապատէ Բարեւունին»: Եւ թագաւոր
 մեր Լեւոն Գ «Արեւելեան տուն» կը կոչէ զՄեծ Հայս ի պարզեւազիր
 յիշատակարանի Սաղմոսամեկնչին՝ զոր կ'առաքէ անգր:

Գ. Համեմատութեամբ աշխարհագրաց գրից և նկատմամբ արիական
 ինքնակալ պետութեանց, մեր Հայրենիք կոչին և Հիւսիսական, մանաւանդ
 թէ մեր պատմահօր հետ «Հանուրց հիւսիսականաց վեհազոյն». այս մակ-
 դիրը թուի ինչ թէ և հազար տարի առաջ կը գործածէ մարգարէն Եղե-
 կիէլ ի զկծանեւն զազոս յարուցեալս ի վերայ Երուսողեմի, և Աստուծոյ
 արդար դատաստանէն հարուածեալները, յետ յիշելոյ զԱսուր, զԵլամ,
 զՄոսոք և զԹորեւ, և զԵղամ, ամենէն վերջ կ'ըսէ (ԼԲ. 30.). «Անդ
 » ամենայն իշխանք հիւսիսոյ, և ամենեքեան նորա զօրովարք Ասորեստան-
 » ւոյն, իջեալք վիրաւորք հանգերձ ահիւն զօրութեամբ խրեանց » և այլն:
 Միայն Հայոց և Քաղզէացոց համար կրնար այսպէս ըսել մարգարէն:

Դ. Իսկ Երեմիա մարգարէ որ գրեթէ նոյնպէս գնոյն հարուած կը
 սպաննայ և զբաժակ ցասման արբուցանել ողբացն, այլուստ սկսելով կարգը,
 ճշգրտագոյնս կը սահմանէ մեր աշխարհը բոտ գրեցն, յետ Ելտմայ և
 Պարսից (ԻԵ. 25.). «Եւ ամենայն թագաւորացն Հիւսիսոյ արեւելից, մեր-
 » ձաւորաց և հեռուորաց... և թագաւորն Սիւակ արբոցէ յետ ամենեցուն »:
 Միակաւ ոչ Սիւակը այլ Քաղզէացիք կը ճանաչին յանուն գից նոցա, և
 նախնիթացին անշուշտ Հայք և կոփկասեանք:

Ե. Յայտնագոյն, իսկական և սրբազանեալ հին անուն մեր Հայրենեաց
 ի բնապիրս սուրբ Գրոց է ԱՅՐԱՐԱՏ, որ և 4-5000 տարիէ հետէ ոչ միայն
 կը ճանաչի այլ և կը ըսուի իսկ ի վերայ լեռանցն և այժմեան նահանգին

Երեւանայ, անուանս հնութեան և պատճառներուն և պէսպէս ստուգարանութեանց վրայ ժանօթութիւն տուինք շորորոյ պրակին մէջ: Մինչեւ ցէ և Զ դար նախ բան զՔրիստոսս, այս անուն սեփական կը պահուի ի Ս. Գիրս. Եւսայի, Երեմիա և Տալիթայ գրոց հեղինակը, երկիր ի լերինս և ի թագաւորութիւնս Արարատայ կը կոչեն մեր աշխարհը և ազգը. ոչ թէ հասարակ էր և յայնժամ այդ անունը մեր հայրենեաց վրայ, այլ վասն զի այնպէս էր ճանչցուած յերիցագոյն սրբազան գրչաց, և իբր վսեմական, բերդազական և նսիրական իրեն անուն: Բայց նոյն անուամբ կ'անուանեն նաեւ հնագոյնք բազմազանց պատմչաց, ինչպէս կը տեսնենք ի Մարիբաւ (առ Խորոնեցոյ). իսկ մերայինքս սեփականելով Արարող անունը աշխարհիս մեծ և միջին նահանգի մը վրայ, նոյնպէս կը կոչեն ամենեքին մինչեւ մեր յետին պատմիչը, Առաքէլ և Զաքարիա: Նոյն անունը Հարարող¹⁶⁹, կ'ըսուի թէ կը կարդացուի նաեւ ի բեւեռաքանդակ արձանոց, որ մեզ երկրայելի է, մանաւանդ զի ոմանք կ'ընթեռնուն Հորարատս, այլք Հորատատս: (ԺԹ Ասիակ. ()րդ. Լոնտ.):

Զ. Դարձեալ ի նոյն արձանս կ'ըսուի թէ կարդացուի և Ասեհիա փոխանակ Հայաստանեայցս, որուն ընթերցուածը հիմէ երկրայութեան սակ շրջար, կ'ըսէինք թէ Յաւանայ՝ Յարեթի որդոյ անուամբ է, որ ըստ վրաց հաւ է թորդոմայ:

Է. Թէ մեր աշխարհը Նոյ նահապետի անուամբ ալ ստուգիւ կոչուած է վասն բնակութեան յետ ջրհեղեղի, ոչ գիտեմ, այլ կ'ըսեն ոմանք¹⁶⁹ այն պատճառաւ անուանել զայն Պարսից Արամ-Նոյե, կամ Թուրս էմնոկ:

Ը. Յերից շառաւեղաց Նոյի՝ Յարեթի վիճակելով աշխարհս Հայոց և իրեն ժառանգութեան սկիզբն ըլլալով, իրաւամբք կը կոչուի Յարեթական Նահանգ ի բանասեր Մադիսարոսէ մերմէ. որպէս և զցեղապեան այն սեփականելով պատմիչք մեր (Յովհ. կաթ. — Խորոնեցի) կոչեն Մերս Յարեթ. իսկ յանուն Գամբրի կամ Գամբրայ, առաջնոյ պայազատի Յարեթայ, և անոր թիրաւ որդոյ անուամբ կոչել երկրիս Հայոց՝ թէ ոչ առանց հաւանութեան, այլ ոչ ուրեք կը գտնեմք յիշեալ:

Թ. Առաջին ընդի ժառանգ մեր հայրենեաց երկրին յորդոց Յարեթի ըլլալով Արքանազն Դամբրեան կամ Թիրասեան, իւր անուամբ ծանոյց զաշխարհն ի վաղ ժամանակաց¹⁷⁰, և ոչ հարեւանցի կամ բիչ մը ժամանակ այլ բովանդակ գարեր, սո մերս և առ օտարս. սրբազանն Երեմիաս նախ կը հնչեցնէ զանունս, հրաւիրանաւ ընդէմ Բարեղոնի « Պատուէր տուք յինէն » Այրարատեան թագաւորութեանց և Աւրսնագեան զեղին », որով հարկ է

Թէ ոչ զՄեծն՝ զՓոքը Հայս իմանալ, գուցէ և զՓոխաբացիս: Երիցագոյնք ի պատմչաց մերոց և ի մատենագրաց (կորիւն), անխտիր իբր սեփական և ընտանի սաքսնագեան սոգ կը կոչեն զՀայս . . .

Ժ. Բայց աւելի յաճախագոյն յանուն Թորգոմայ Հարազատին Ասքանազայ կը ճանաչի մեր սոգը, Տոն Թորգոմայ, որպէս կը յիշէ նոյն ինքն Եզեկիէլ յոյր.ն ի վերայ Տիւրոսի, զոր յուշագոյնք ի մեկնչաց վասն Հայոցս իմանան և սմանք ի վերայ Կապպապոլկեցոց. և ինչպէս Ասքանազայ Համար ըսուեցաւ, նոյնպէս և այս սոհմապետի անուամբ ընտանեւոր կը կոչեն Հնագոյնք ի պատմչաց մերոց (Ազաթ. — Բուզանդ) մեր Հայրենիքը՝ Թորգոմայ սոգ, Թորգոմական աշխարհ և յայտ է ուրեմ թէ ի Հնագոյն (կորուսեալ) յիշատակարանս այս անունները իբր աշխարհածանօթք կը գործածուէին:

ԺԱ. Ի նախայիշեալ կոչման մարդարէին Երեմիայ, Երբոյնցի բնագիրն և Լուսին և նոր թարգմանութիւնք կ'ըսեն. «Պատուէր տուք յինէն Թագաւո» ռութեանց Արարասայ, Միկենայ և Ասքանազայ». Նիկողայոս Դամասկացի Հին պատմիչ, վասն տապանին կ'ըսէ նստեալ ի Պարիս լերին ի սահմանս Միկիայ, որով կ'իմանան բանաբնիւնք (կալմէթ — Ս. Մարդէն) մասն մի աշխարհիս, զՓոքը Հայս, կամ ստուգարանն զՄանաւազեանն Հայկայ սրբոյն անուամբ, մեր ծանօթ պատմութեան մէջ, շատ չեն յիշատակուիր Մանաւազեանք ընդ բարդաւած սոհմս, այլ ոչ անշանք կը Համարուին և ի սակաւ յիշատակէն, զի ոչ ընդ յետեալսն կը դասուին ի գահամակին Նիրսիսի. և յետ նուագման սոհմին և անճեա ըլլալուն Հակառակամարտութեամբ յետ Տրդատայ մահուան. և ի զօրաբաժնին 1000 հոգի կը գումարի իրենց վաշտուն. և Թովմաս Արծրունի ընդարձակագոյն կը կարծեցնէ անոնց երկիրը Մանաւազեան Եանանգ կոչելով, յորոց յամենայնէ անհաւան չթուիր շատ Հին աստի նշանագոյն և Հարստագոյն ըլլալը Հայկարուն սոհմիդ. բայց թէ արդարեւ միջակողմն Հայաստանեայց աշխարհիս առոր անուամբ կոչուեցաւ Միկիաս կամ Մեննի, որոշ չենք կրնար ըսել:

ԺԲ. Այս Մեննի կամ Մին անունը կը Համարին ոմանք զլիւսւոր տարր ԱՄՄԷՆԻԱ անուան, որով գրեթէ ամենայն աշխարհ արգ մեր Հայրենիքը կը ճանաչէ, օրինակագիր յոյն մատենագրաց օրերէն սկսեալ. և ինչպէս առ մեզ Հայ անունը՝ օտարաց մէջ դա հոչակագոյն և իսկագոյն է. վասն որոյ և պատճառ կոչմանն քննեալ ի բազմաց և պէսպէս մեկնաբանեալ և յորջորջեալ. շատք ի մեկնչաց յերբայտականէն ստուգարանելով, կ'ըսեն Հար-Միկենի կամ Ար-Միկի ալիքն Լեան Լուսնի, կամ Ար-Միկի,

Լեւոնն Ռուլուց, կամ Ար-Միկէի, լերինք Մինեայց վերայիչեցելոց. բայց Ս. Գրոց երբայական բնագրի մէջ չի գտնուիր այս անունը, այլ ի քաղ-
 գէական հին թարգմանութեան, յորում Հոբովիկէ կը կոչուի աշխարհս մեր.
 նոյն և յայլ թարգմանութիւնս, որք փոխանակ Արարապայ իբրև հոմանիշ
 կը գործածեն այս անունը: Եւ սմանք յերբայասիրացո (Յէյէրլինկ —
 Տէպորթ — Գիրիէր) ի սեմականն Արամայ կը պնդեն ծագեալ գտնուն
 աշխարհիս. բայց այլք ի յարեթական լեզուէ կը վիճին լինել արում անու-
 նը: Ոմն (Րոմմել) ստուգարանէ Ար-մոն-այա, Լեոն ի վայր մահկի (չուսնի).
 և այլ ոմն (Յապէր) զԹորգոմայ իսկ անուն աստի կը համարի կերպացեալ
 Թոն-Արմա, չառլով ինչ իմաստ Թոն մասնկան, այլ Արմա և Թոկարմա
 նոյն համարելով, որպէս Գովգ և Մագովգ: Զհնութիւն անուանոց Յոյնք,
 ինչպէս տեսանք ի նախընթաց պրակի, կը հանեն ի խումբ արգոնաւոր-
 ացոց, Արմինիոս անուամբ մէկէ մը կամելով կոչել մեր աշխարհը. և ոմանք
 ի բուհոսքանդակ արձանս իսկ կ'ընթեռնուն Արմիկա անունը:

Կը հաւատասեն մեր պատմիչք յԱրամայ ի վեցերորդէ պայազատէն
 Հայկայ հոչակեալ անուանն՝ Հայաստան աշխարհի վրայ, զոր ընդարձակեց
 և հոչակեցոյց նա աշխարհակալութեամբք, և նուաճելով մաս մը Փոքր
 Ասիայ՝ Յարեթական տեղւոյն կամ Յաւանեանք, այսպէս այնուհետև կոչե-
 ցին զաշխարհն, և մեր ազգը Արմէն: Բայց որովհետև Հայկայ որպիսի ալ
 Արմենակ կը կոչի, որ է Արամ անուն նուազականաւ հանդերձ, թուեցաւ
 ի մերոցս ոմանց իսկ՝ իրմով սկզբնաւորիլ կոչմանդ, որ և մեզ անհաւան
 չթուիր. վասն զի և ոչ նորա միայն՝ այլ և որդւոյ և թոռին անուանք Արա-
 մայիս և Հարմաս նմանաձայնք կը յառաջին քան զԱրամոյ քաջ. և որպէս
 մի ըստ միոջէ յանուն Աքքանազայ, Թորգոմայ և Հայկայ կոչեցաւ աշխարհս՝
 պէտք էր որ իրմէ վերջ ալ յանուն անպրանկանն կոչիլ՝ Արմենակայ.
 Բայց դիպողագոյն է և ի քաջութենէն Արամայ բարգաւաճել և ծանօթանալ
 անուանն ընդ ամենայն աշխարհ: Այլ թէ յԱրամայ և թէ յԱրամենակայ և
 թէ ի Սեմեանն Արամայ՝ նշանակ ձայնիւ թուի արութեան և քաջութեան
 ցոյց, զոր արդ ի յարեթական լեզուաց մարթ է ածանցել. — Թէպէտ
 և առ մեզ բնական անուն ազգիս չէ պա, այլ կը վարի իսկ երբեմն ի
 նախնեաց (Խոր. Բ.), և կը կոչի ազգս և աշխարհ, Արամեանք, Տուն
 Արամայ, Արամեան ազգ. Արամագնեայք, Արամեան ետնանգ: Պէտպէս
 յեղյեղմամբք և ծեքանօք կը կոչին զմեզ Յոյնք և Հոռոմք Արմենիա և
 Արմենիի, Պարսք՝ Արմենիք ըստ Խորոնեցոյ, կամ Էրմին ارمين. Արաբք՝
 Արման կամ Արմայ ارمال Թուրքք՝ Էրմենի ارميني. կովկասեանք՝ Էրմէյի կամ

Էրմինյ . Խտալացիք և Գաղղլացիք միջին գարուց՝ Էրմինյա Erminia, Հերմինի Herminie. և նոր ազինք Եւրոպիոյ իւրաքանչիւր ըստ ցանկութեան իւր լեզուին և արտաձայնութեան: — Արդ հնագոյն յիշատակագիր Արմենիա անուան կը գտնուի առ պատմիչս Յունաց, Եկատէոս, Քսանթոս, Երոզոս և այլք, թէ ստույգ չեն ընթերցուածք բեւեռաքանդակացն, այլ հնագոյն և սրբագոյն եւս յիշատակ կը համարին ոմանք գտնել և ի բնագիրս Ս. Գրոց ի մտրգարելութեանն Ամսիսայ (Գ. Յ.), սպառնալեաց խօսքն առ Հրեայս թէ «անկանիջիք ի լերինն Ռեմանայ». որ ի բնագրին և յայլ թարգմանութիւնս է Արմոն. և զՀայաստան կ'իմանան անուամբ: Ռեմանայ մերձաձայն կը գտնուի եգիպտական կոչումն ազգիս Ռեմենեն, որպէս կ'ընթեանուն յարձանս Սեսոսարի յԵգիպտոս:

ԺԳ. Անծանօթ կամ տնտուր առ օտարս և սեփական բնկացս Հայ և ՀԱՅԱՍՏԱՆ անունը, նախապատիւ բնաւից և ցանկալի մեզ քան զամենայն կոչմունս որուն պատճառն է Հայկ ազգապետ մեր, առ որ ընդ հուպ պիտի գտնայ խօսքս և պիտի ցուցանէ որ անուան բնիկ կոչումն է Հայ և ոչ ինչպէս հիմակ սովոր եմք երկար և նայ Յ տառիւ յօգել և հնչել: Եւ կարելի է կարծել թէ թորգոմածին քաջ ազգապետս ունէր այլ անուն ծնելական, և յարութեանն սեփականեց զ'Հայ մականուն, յորմէ Հայկ և Հայկն կոչուեցաւ, և իրեն վիճակեալ աշխարհը Հայաստան, որպէս թէ հսկայից կամ արիաց ոստան. և անկից թերեւս յարակոչութիւն Մեծն անուան, Մեծ Հայք, Հայոց Մեծաց, որ առ օտարս կը գործածուի ի խտրութիւն երկու մեծամեծ բաժնից աշխարհիս, զոր Մեծ և Փոքր Հայք կ'անուանեն, այլ առ բնիկ նախնիս մեր ծանօթ չէ այսպիսի ինչ, այլ իբր պարծանաց և արութեան անուն կը գործածուի Մեծաց Հայոց կոչումն, որպէս Պարսիցն՝ Արեաց:

ԺԿ. Հին բառագրոց մէջ յիշուած կը գտնեմք և այլ կոչումն Հայոց, Գղնի կամ Գղնի, որ այլուստ ամենեւին անծանօթ է մեզ, և կը թողումք ի հետաքննութիւն բանախուզից:

ԺԵ. Կը թողումք հօս յիշել կամ կրկնել զվարկպարտոյի զրոյցս Աննեանն Բերոսոսի և պէսպէս իրմէ յորջորջումները Հայաստան աշխարհիս, միայն հաւաստագոյն զՍկիւրիոյ կամ զՍակեան կոչումն կը համարեմք, վասն զի և ցարդ Շակաչէն գաւառ Ուտիոյ վկայ է ոչ միայն հօս բնակելուն հինահար ազգիս, այլ և իրեն ընդհանուր ծաւալման և ասպատակին ընդ Հայս ի Փոքր Ասիա: Եւ կարծեմ թէ Սկիւրական կրօն՝ առաջին ի հերձուածս, յիշեալ յԵգիպտանեայ, մեր աշխարհը կ'ակնարկէ. և կը

Համարիմ թէ հեռագոյն ազգը, ինչպէս Եդիպտացիք, շատ հին ժամանակ Սկիւթս կամ Սակս կը կոչէին զՀայս :

ԺԶ. Ի հնագոյն պարսիկ կամ զանգիկ գիրս, ինչպէս առաջին պրակներուն մէջ ըսինք Սէրիենոյ կը կոչուի մեր աշխարհը, կամ այս նախաբնակ երկիրը կը կարծուի ի բազմաց մերը նշանակել :

ԺԷ. Յոյնք արդոնաւորաց առասպելը յառաջ մղելով ոչ միայն զԱրմինիոս Թեսաղացի ըսին (Սարբ. ԺԱ. ԺԴ. 10) նախահայր ոմանց ի մերազնեայցս, այլ և ելուզակաց առաջնորդէն՝ կոչուած մեր աշխարհը Յասուհիս, թերեւս զՀայագոսն կամ զՀայոց տուն անունը այդպէս լսեցին և յեղյեղեցին Յոյնք ձեքարանք :

ԺԸ. Վիբք մինչև ցայժմ Սամիէր կը կոչեն զՀայաստան և Սամիէի զՀայս. Սամիէթոյ անուն կը պահուի ցարդ Գուգարաց գաւառի մասի մը վրայ, որ անանջրպետ սահմանախառն էր վրաց աշխարհին հետ. աստի և բոլոր աշխարհը նոյնպէս կոչեցին, իսկ անուան պատճառը պէսպէս կարծեցին. ոմն կը թարգմանէ զանունը Հայոց արժանիս շահրից կոյտակահեց. բայց հասարակաց հաւանելի է վասն հարուակոզմն բնակութեան ազգիս առ զրիւք վրաց՝ այս անունը առած էին ի նոցանէ, ինչպէս և մերքս հիւսիսայինս կամ ծմակայինս կը կոչէին զՎիրս և զԵրվկասեանս :

ԺԹ. Առ հինս Հիլլենաց կը թուի ոչ զանազանել ի Փոխդիոյ զՀայաստան և Փոխդս կոչել զՀայս. ինչպէս որ ասոր համար վերը ըսինք ազգաց ծագման վրայ ճառելով, թուի թէ և Համեր ասորքեր անուամբ չէր ճանաչէր զՀայս՝ զէթ զարեմտեայս : Զնոյն կը թուի նշանակել լսելեայն և Երիպիլէս. իրեն Բաքոսը կ'ըսէ, անցեալ ընդ Լիւզիա, Փոխդիա, ընդ Պարսս, Բակարիա, ընդ սառնապատ Մարս, և ընդ համօրէն Ասիա (Փոքր), և Հայաստան չի լսուիր :

Ի. Աշխարհագիր ոմն (Պտորան) ժէ վարու, կ'ըսէ, Նեստորական Ասորիք Զարթքոտիպէս? կը կոչէին զՀայաստան, իբր թէ Գայլոց Լերինս. թերեւս յանուն Զաւ կամ Զարզ գետոց, որոց հովիտը սահմանակից են Ասորեստանեայց. այլ ոչ գիտեմ սրբան է սասուգութիւն վկայութեանս :

ԻԱ. Արշակունեաց հարստութեան ասեն չէր անճազ կոչուիլ Հայաստանեայց նաեւ անոնց անուամբ, և տա մերոն իսկ կը զաննիք (Ազաթ.) կոչել զաշխարհս Արշակունեաց երկիր կամ Դոռան :

ԻԲ. Նոյնպէս և յանուն Պարթևաց կը կոչեն երբեմն մեր աշխարհը օտարք, ինչպէս Սարբան իսկ երբեմն, Ափրիկանոս, Կիպրենոս և այլն : Բայց զասոնք աւելի տիրապետական կոչումն անուանելու է քան բնական :

Թ

ԹՈՐԳՈՄ - ՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԱՅ

ՆԱԽԱՐԱՔԵԼԵԱՆ և Բարեխական ցեղապետաց միջնորդ, և աւելի քան զայլ ցեղապետս հայր ազգաց ճանչցուած՝ հսկայ նահապետ մը կու յիշեն սուրբ և արտաքին գիրք և կենդանի ամանդութիւնք շատ ազգաց, որ մեր առանձին պատմութեան մէջ այլ առաջին կամ սկզբնական տեղն ունի, և որոյ անուամբ կոչուէր մեր հայրենի երկիրն և ազգ, նախ քան զՀայ կոչուիլն, և կոչուի եւս մսեմական զրուցուածոց մէջ, և եթէ նախաքրիստոսեան կամ առաջին դարուց ազգային պատմութիւնք գտուին՝ հաւանական է որ մեր աշխարհն և ազգ հիմկու անունէն աւելի գրուած ըլլայ Տուն Թորգոմայ, կամ Ազգ տանն Թորգոմայ. որոյ հաւաստիք են մեր մնացեալ հնագոյն քրիստոնեայ հեղինակք. որոց յամենայնի պարագլուխն Ս. Գր. Լուսաւորիչ իր մէկ կոնդակին մէջ (թէ և յաւարենէ թարգմանած) կ'ըսէ իրեն համար «Կացի յաթոռ եպիսկոպոսապետութեան տանն Թոր» զոմայ և Ասքանագեան ազինն»: Իր ժամանակակից կենսագիրն և առաջին պատմիչն մեր Ազաթանդեղոս՝ գրեթէ միշտ Հայոց հետ Թորգոմայ անունն այլ յիշէ, և աւելի ասով կու նշանակէ մեր աշխարհը. «Ընթերցեալ «զԹորգոմայ ազգին զՀայաստան աշխարհիս զաստուածապարզել աւետեաց» աւետարանին քարոզելոյ բանին կենաց». — «Այս իշխանք և բիւրաւորք» ի մէջ Հայաստան աշխարհի Տանն Թորգոմայ». — «Բղիւնցին Հայոց Տանն Թորգոմայ՝ շնորհք քարոզութեան աւետարանին». և այնն՝ Նոյն (Գ) դարուն յունահայ պատմիչ մ'այլ (Փաւս. Բուզ.) նոյնպէս կ'անուանէ. «Յիշեցուցիչք» պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին Որդոց Թորգոմայ». — «Սահմանաց երկրին Հայոց ամենայն բնակիչք Տանն Թորգոմայ, Հայ լեզուն» առհասարակ». — և յատկաբար եւս «Երկիրն լեզուին Թորգոմական» աշխարհին»: Այսպէս և Ե սկեղէն դարու հեղինակք մեր, որոց յառաջադէմն Խորենացի¹⁷¹, վասն Հայկայ պատմէ թէ իր ընտրած հաստատ բնակութեան տեղն անուանեց Հարք, այսինքն թէ «Հարք են ասա բնա» կեալք ազգի տանն Թորգոմայ». որով յայսնէ մեր ազգապետն թէ ինքն զինքն ճանչնար պետ և նախարար ազգի տանն Թորգոմայ. իսկ ազգն իր

երտխտեաց համար յեայ անոր անուամբն վարեցաւ . զոր և վարեցին ամենայն վսեմագիր և հնաշնորհ հեղինակք մեր, որ ժԲ դարով կու վերջանան . այոպէս Յովհ. Կաթ. ի սկիզբն ժ գարու . « վաղարշակ Պարթև » թագաւորէ Տանն Թորգոմայ » : Գր. Մաղիատրոս ի ժԱ դարու . իր թոնն Ներսէս Շնորհալի ի ժԲ դարու երգէ զՀոնիսիմէ .

- « Մովսէս շուշան ծագիկ բուսեալ ի սուքս Թորգոմի .
- » Ոռոզեալ արեամբ սրբոցն Պետրոսի և Պողոսի » :

Հայաստանի երեք կողմերու՝ հիւսիսայ , արեւելից և արեւմտից շատ ազգերն , ինչուան ուր որ հին պատմութեան ծանօթութիւն հասնի , զիրենք խոստովանին սերունդք Թորգոմայ , բայց ոչ մի ոք այսպէս իբրև զմերայինս զՀայո՝ հազարամեայ վիպտութեամբ գրոց հեղինակացն զնոյն սեփականէ և հաւաստէ պատմութեամբն , վասն որոյ և հաւանազոյն քան զայլս նովին անուամբ հաշտի և ի Ս . Գրոց 1000 տարի յառաջ քան զիւր հայկաբան գրիչս . Քրիստոսէ առաջ Է դարուն մէջ աւելի ծանօթացան Հայք Հրէից , որոց ինչուան այն ատեն մեր աշխարհն սովորաբար Արարայայ անուամբ յիշուէր . յեա առման Երուսաղեմի Նաբուգոդոնոսորէ , նիզակակիցք սորա Հայք՝ աւելի եւս ճանաչուեցան . այն ատեն յետինն մեծ և աստուածարեալ մարգարէից Եզեկիէլ , մեր աշխարհին սահմանապարիսպ լեռնհրէն իջած գետոյ մը եզերք գերի բերուած նսանելով « առ ափն Քորար գետոյ » , ընդ մէջ Ասորոց և Հայոց , ճանչցաւ ասոնց վաճառականները՝ որք « ի » Տանէն Թորգոմայ » ձիովք և հեծելովք լնուին զհրապարակս վաճառուց Տիւրոսի (Եզեկ . ԻԷ . 14.) ճանչցաւ և անոր կտրիճերը՝ որք իր Հայրենեաց գերութեան գործակից ելան թէ և ստիպմամբ քան կամաւ¹⁷⁹ , վասն այնորիկ և բուն իր ազգին թշնամեաց պէմ՝ ոչ իբրև Երեմիա հրաւիրէր զԱլորատեանս գունդն և զԱքքանազեան թագաւորութիւնս (Մեծ և Փոքր Հայք) , այլ և անոր հետ ասոնց այլ սպանայ՝ մեր հիմայ ինկրեալ անուամբ . « Ժողովեցից զքեզ և զամենայն զօրութիւնս քո... Գոմեր և ամեն » նեքին որ շուրջ են զնովաւ . և Տանն Թորգոմայ ի ծագաց հիւսիսոյ , և » ամենեքին որ շուրջ զնովաւ . » (Եզեկ . ԼԳ . 6.) : Մեր պատմութեան հմուտքն այս Թորգոմայ տունը՝ որ ի ծագս հիւսիսոյ , հիմայ գրեթէ ամէնքն իմանան զՀայո և զսահմանակիցս , « որ շուրջ զնովաւ » , կովկասեանս . ինչպէս և քաջահմուտք ի հին օտար Հարս՝ Եւսերիոս կիսարացի , Թէոփոբետոս , Խոիզոր Սելեւիացին . բայց ոմանք ի նախնեաց զանազան և հեռուոր կարծիք ունեցան . Քաղզկացի թարգմանիչք Ս . Գրոց և Թալմուտք

Հրէից՝ ինչուան զԳերմանացիս իմանան այդ հիւսիսային թորգոմանները. Արարացոց թարգմանութիւնն աւելի ստուգիւ զՎրացիս. յԵրուսաղէմեան մեկնութիւնն՝ զԲարբարոսս, որով անուամբ ոմանք (Փրեկուլփ) իմանան զՓոլեզացիս, վասն զի ասոնց հայր համարի թորգոմ ի Յովսեպոսէ, Հերոնիմոսէ. իսկ յոմանց՝ (Պոշար) Կապպովկացոց հայր, որ և շեն հեռի ի ստուգութենէ: Իսկ այլք զՍկիւթացիս իմանան տուն թորգոմայ և թորգոմանս¹⁷³, և գեո զանուն նորա ըսնն ի թիրք կամ թիրքմէն և ի թաթար ժողովարդս. զայս այսպէս համարին և ոմանք ի վարդապետաց մերոց¹⁷⁴ և պատմաց թաթարաց իշխանութեան տակ, որպէս Մաղաքիա աբեղայ, որ զՍկիւթս գրէ ի Գոլգայ և զԳոլգ ի թորգոմայ, հանդերձ խառնարկով Հազարացի սերնդիան և յառաջ քան զնա անտարակուսաբար իմն Միխայէլ Ասորի, « Յայս է թէ յազգէ թորգոմայ ն » (թորքք): Այս յայտութեան ապահովութիւնը քննելու կամ հաւանելու համար, նոյնպէս ուրիշ ազգաց այլ թորգոմական ըսուելու պատճառն իմանալու, եւս առաւել մեր Հայոց բնիկ տուն թորգոմայ ըլլալն հաւաստելու համար՝ պէտք է արդ քննել տեսնել թէ ո՞ր է այդ ցեղապետն ազգաց թորգոմ, որոյ անուամբ նշանակին ժողովուրդք Ասիոյ, արեւմտեան ծայրիւնն ինչուան գրեթէ Չինաց սահմանները, և ընդ հիւսիսի մինչեւ ի Սիպերիոյ սառնապատ անապատները:

Թորգոմայ գրայ մեծ խնդիր մը կայ. վասն զի Ս. Գիրք մեր զթորգոմ որդի ասեն Գոմերայ. ոմանք ի հարց և պատմաց (Սիւնկելոս — Յովհ. Կաթող.) զթորգոմ և զԵրարուն փոխանակ Գոմերայ՝ ասեն որդի թիրասայ որդոյ Յաբելի. իսկ Քաղղէայիք (Աբիպենոս. Մարիրաս) ըստ վկայութեան Մով. Խորոնեցոյ, յորոց և ինքն և ամենայն հետեւող պատմիչք մեր, զթորգոմ ասեն որդի թիրասայ, և զթիրաս որդի Գոմերայ¹⁷⁵. որով կրկին են թիրասք և թորգոմք, մին՝ յիշեալ ի Ս. Գրոց որդի Յաբելի և Գոմերայ, միւսք անյիշատակք՝ որդի և թոռն Գոմերայ: — Հոս պարզ շփոթութիւն մը կամ սխալ մը չերեւար, որպէս ոմանք ըսին և մեղադրեցին զպատմահայր մեր Խորոնեցի, որպէս թէ Ս. Գրոց ըսածը թողլով հեթանոսացը նախապատէ, այլ կամ տարբեր է Ս. Գրոց թորգոմն ի մերոյս թորգոմայ, ու ազգակից և տեղակից, և երկուքն ալ զիրար յաջորդած, և կամ զարմանալի առակ մը կայ Նոյի սերնդեան չորրորդ ազգին վրայ. վասն զի երեք որդոց թոռներուն վրայ այլ նոյն տարակոյսը կայ, ինչպէս մասնաւորապէս գիտեր է մեր պատմահայրն այլ. զՍեմայն՝ ի Ս. Գրոց իսկ գիտեմք, այսինքն զԿաֆան որդի Արփաքսապայ, զոր բազումք չեն ընդունիր, և զՍաղայ անմիջապէս Արփաքսապայ որդի ասեն և ոչ թոռն. այսպէս և

զՆերբովթ՝ Ս. Գիրք գնեն երրորդ ի Նոյէ, որդի անուանելով Քուշայ, բայց գիտելու է որ նախ Քուշայ Հինգ որդիքը և երկու թոռունքը կու համրէ, յետոյ զաս կերպով մը կ'ըլտէ. «Եւ Քուշ ծնաւ զՆերբովթ»։ (Մն. Ժ. 8. Ա. Մնաց. Ա. 10.) Խորոնեցի ուշմագոյն ասորի Հեղինակի քննութեամբ զՆերբովթ զասէ որդի Միսարեմայ որդւոյ Քուշայ. նման նոցին և թորգոմ որ երրորդ է ի Նոյէ ըստ գրոց՝ ըստ Հին պատմչաց ազգաբանութեան որ ի նմին ազգերէ առած են, չորրորդ է, որդի գոյով թիրասայ ուրումն չյիշելոյ, զոր օրինակ կայնանն. արդ եթէ Հարկ է բնգտնել կամ չընդունել զկայնան, նոյնպէս և զթիրասան կրնամք թորգոմայ Հայր ճանաչել կամ ոչ. շատ թէ ճանաչուի նահապետան մեր Հայկն որդի թորգոմայ, և թորգոմ սերունդ Յարեթի և ժառանգորդ Հայաստան աշխարհի։

Ս. Գիրք, ինչպէս ասեանք, Յարեթայ անդրանկան ցեղապետութիւնը հասցրնէ մինչև ի թորգոմ, նշանակելով զնա երրորդ որդի Գամբայ՝ որ քան զերէցսն և զնախնիս ծանօթագոյն է արտաքին պատմչաց և ժողովրդոց, որք թէ՛ անուամբ թէ ազգակարգութեամբ քիչ մը օտարանան յերբայական գրոցն. զինքն յիշատակողաց մէջ առաջինն է մեր ազգային պատմութիւնն, առեալ ի Մարիբասայ կամ ի Հնագոյն եւս աւանդութենէ. Մարիբաս ըստ Քաղզէացի գրոց կարգէ զազգաբանութիւնն, Յայտոսթէ, Մերոս, Սիրթթ, Թակլթթ, որ են ըստ Խորենացոյն մերոյ՝ Յարեթ, Գամբ, Թիրաս, Թորգոմ. որով ուս ոչ չորրորդ կ'ըլլայ ի Նոյէ ըստ Ս. Գրոց, այլ Հինգերորդ. ըստ այսմ մեր ուրիշ պատմիչք այլ կարգեն. միայն Յոհ. կաթ. և վարդան ըստ Սիւնկելոսի Բիզանդացոյ կարգեն Յարեթ, Թիրաս, Թորգոմ. նոյնպէս չորրորդ ի Նոյէ, այլ փոխանակ Գամբի՝ Թիրասայ (որդւոյ Յարեթի) որդի համարելով. իսկ վրաց պատմիչն¹⁷⁶ ի Յաւանայ որդւոյ Յարեթի կ'իջեցնէ զմեր նահապետն, կարգելով Յարեթ, Յաւան, Թարշիշ, Թորգոմ¹⁷⁷. Ահա չորս Հինգ տեսակ ազգաբանութիւն, քիչ զանազանութեամբ, որոյ մէջ նշանաւորն է ազգակարգութեան թիւն, այսինքն փոխանակ չորրորդ ի Նոյէ ըսուելու Հինգերորդ ըսուիլն¹⁷⁸, որ ուղղակի հակառակ կ'ելլէ Ս. Գրոց, սակայն գիտելու արժանի է որ, Նոյի երեք որդւոց այլ թոռնորդոյն վրայ այսպիսի տարաձայնութիւն մը կայ, և մէկն (Սեմայն) նոյն իսկ Ս. Գրոց մէջ, տեղ մը Սեմայ որդւոյն Աբփաքսաղայ և Սազայի մէջ գնելով (մէկուն որդի միւսոյն Հայր) զկայնան և տեղ մը ոչ, չորրորդ ի Նոյէ. նոյնպէս Քամայ ցեղին մէջ այլ մեր պատմաչայրն կու յիշէ, հետեւելով Հմուտ Ասորոյ մը, զՄիսարեմ չորրորդ ի Նոյէ, որ ըստ Ս. Գրոց երրորդ է, որդի գոյով Քամայ, իսկ ըստ մերոյ՝ որդի Քուշայ

սրբույ Գամայ : Այսպէս ժամանակագիրք կարգեն և և զԹիրաս չորրորդ ի » Նոյէ , իսկ Յարեթ երրորդ , թէպէտ ըստ մերում թարգմանութեանս ոչ » ուրեք ի բնագրի գտանի » : Կայնանայ համար ոմանք ի մեկնչաց (մերոց) աւանդեն (երկիւղածաբար) , թէ գիտութեամբ անունը դուրս ձգուած ըլլայ ի Ս . Գրոց , իբրու զի նա եղաւ առաջին կուռք շինող . թերեւս իր սերնդակիցք կամ հասակակիցք հօրեղբորորդիք այլ նոյն կամ նման ամպարշառութեան մը համար վատանուն և անանուն սեպուեցան իրենց պապէն կամ ի մեծ նահապետէն Նոյէ : Թողլով այս կարծիքս , Ս . Գրոց ազգաբանութեան չհակոտակելու համար , դարձեալ երկու ճամբայ կայ մեզի . կամ Մարիբաս և օտար պատմիչք շփոթած կրնան ըլլալ , կամ իրենց Թորգոմն ոչ է որպիսի Գոմերայ յիշեալն ի Ս . Գրոց , այլ եղբորորդի այն յիշեալ Թորգոմին . վասն զի հաւանական է որ Գոմեր զառ յերկից յիշելոց (Ասքանազ , Թիփաթ , Թորգոմ) , ուրիշ շատ որդիք այլ ունեցած պիտի ըլլայ , անոնցմէ մէկն այլ կրնայ ըլլալ Թիրաս՝ անուանակից իր եղբորը (Թիրասայ որդույ Յարեթի) , ինչպէս որ իր մէկ ուրիշ եղբայրն այլ՝ Յաւան՝ գրեթէ նոյն անուամբ որպի մ'ունէր զԹարշիշ : Գարձեալ կրնայ այլ ըսուիլ թէ մեր հին պատմիչքն ի շարեւն Յարեթ , Գոմեր , Թիրաս , Թորգոմ , ոչ ազգաբանութիւնն ուզեն իմացնել , այլ Հայաստանի նահապետքն կամ նախնիքն , իբրու թէ յետ Յարեթի իր անդրանիկն Գոմեր գրաւեց զՀայաստան , յետոյ Թիրաս (իր եղբայրն կամ որդին) , յետոյ Թորգոմ : Առդ ասոնցմէ որն այլ ըլլայ՝ միշտ օտոյդ է որ Թորգոմ թոռն կամ թոռնորդի էր Յարեթայ , և հաւանօրէն որպի կամ թոռն Գամերի քան թէ Յաւանայ . և այս մեզի բաւական ըլլայ :

Գալով Թորգոմայ անուան վրայ , այսպէս կոչեն պատմիչք մեր և Ս . Գիրք ըստ Եթեանասնից թարգմանութեան , իսկ հրէարէն բնագիրն և անոր հետեւողքն գրեն Թոգորմա կամ Թոգորմա որ և Թոռնէրմա . Յովսեպոս՝ Թռնիրամ , վերք Թարգամոս կամ Թորգամոս , Մարիբաս թակրազ , ուրիշ մը (Փրեկուլի) Տիգրաս և անոր սերունդքն այլ Տիգրասեանք որ են Փոիւզացիք ըստ մտաց յիշողացն . անվաւեր պատմիչ մը կոչէ Թակետան , և Սկիւթացիք ըստ Երոզոտի իրենց ցեղապետը անուանէին Տարգիտասու , և շատոնց հաւանական երեւեցաւ ի Թորգոմայ ըլլալ նոցա . արզէն թակլազ կոչմանն այլ հեռու չէ այդ . ինչպէս ուրիշ կողմանն այլ Տիգրաս անուան մօտենայ Թիդրամմիս , որ է հեռագոյն նմանութիւն Թորգոմայ կամ Թորգարմայ : Երբայագէտք այս անունս թարգմանեն Ուզգուարիս կամ զօրուիւն , և կամ Եկ , այսինքն օտար սեղէ եկած . ոմանք յերկու զաանելով

Թուրք-Արմա զառաջինն աւելորդ իմն սեպեն, և Արմեան կամ Արմեն (զուցէ լաւ եւս Հարմա) համարին զրուն անունն, կամ զառաջինն ըսա հին սանսկրիտ լեզուի Դուք, Դուգա իմանան Տղայ կամ Սերուհդ-Արմայ այս մեկնութեան (եթէ սասոյք ըլլայ) կրնար յարաբերիլ Աֆղաններուն աւանգուութեանն այլ, որք յիշեն Յաբեթի երեք որդիք, Արմէն, Աֆղան, Կարգուլ, և համարին յառաջնոյն զՀայս, ի վերջնոյն զՎիրս, ի միջնոյն զԻրինք (Պրոտէ): Ի Գալեասն հին լեզու Բրիտանաց այլ Թուկարմա ասեն թարգմանի Կոպրատայիք-կղզի: Խոկ նկատմամբ մեր լեզուին և բնիկ անուանց, նշանակելի է վերջաուրութիւնը ոմ կամ ամ, որ մեր շատ հին անուանց յանկակից է, ինչպէս Ար-ամ-ենակ, Հար-մա, Գեդ-ամ, Բիւրամ, Բադ-ամ, Պաուք-ամ, Զար 'մայր, Կադ-ամ կամ Կադմոս, և այլն. յորոց յայտ է թէ ամ մասնաւոր և հայրանունական իմաստ մը պիտի ունենայ: – Այսչափ այլ այս ցեղապետիս անուան համար, գանք հիմայ պատմութեանն:

Ս. Գրոց բրած Սեմայ ազգաբանութեան նայելով, մեր Թորդոմէ եթէ անմիջապէս Գոմերայ որդի է՝ իբրեւ 130-50 տարի շրհեղեղէն ետեւ ծնած կ'ըլլայ, ըստ Եթթանասնից, իսկ եթէ թոռն է նորա կամ՝ թոռնորդի Յարեթի՝ իբր 250 տարի ետեւ. և ապրած է 600 տարի, ըստ ատանդութեան պատմչաց վրաց¹⁷⁹. և ինչ որ մեր պատմիչք իր որդւոյն՝ մեր Հայկ նահապետին համար վկայեն, զնոյն իրեն համար այլ բուն՝ թէ «էր նա » այր քաջ և հսկայ... որոյ էին բազում կանայք, և ծնան նմա ուստերք » և գոտերք, (և) որդւոց և գտերաց նորա... և չբաւէր երկիրն բազմութեան աթի նորա»: Եւ այս ոչ միայն յառաջ, այլ և յետ բաժանման և սփռելոյ ազգաց և լեզուաց. վասն զի ինքն Թորդում այլ արեւելքէն կամ Նոյաբնակ երկրէն գէպ ի Սենասար գացող ձեռներէց կտրիճներէն մէկն էր, ուր ասորեր էր և որդւոց առջինեկներն, և անշուշտ զոմանս այլ հոն ծներ էր, ուր և որդիքն այլ որդւոց և թոռանց տէր եղած էին, ինչպէս մեր պատմութեանն յայտնապէս յիշէ որ Հայկն ի Բաբելոն ծնաւ զԽոր անպրանիկ Արամենակ, և նա զԻւրն Կադմոս: Բաբելոնէն պարձող նահապետաց մէկն այլ ինքն էր, բայց թուի թէ (իբր 50 տարի) յառաջ քան զիր և իրմէ յանգուզն որդին՝ զՀայկն. ինչպէս վկայէ պատմիչն և յաւելու, թէ «Եկն բնա » կեցաւ ի մէջ լեռանց Մասեաց և Արագածու ». կամ լաւ եւս ըստ վրացի բնագրին ընդ մէջ Արարաղայ և Մասեաց, առջինով իմանալով զհին երկիրն Արարատեան, զտուն Նոյի, զոր և հաւաստէ պատմիչն Թորդում ազանց բնակութեան երկրին հարաւային սահման գնելով « զՈրէթ լեառն (որ » թուի նոյն ինքն Արարաղ) յերկրին Կորդուաց, հանդէպ Մարաստանի » .

և դարձեալ մեր հին և կորուսեալ պատմւոց մէկուն մնացեալ հասարած բանքն վասն Հայկայ, թէ յետ դարձին ի Բաբելոնէ նախ բնակեցաւ այն տեղն՝ որ էր տուն նոցա նախնի, շինեալ ի Զրուանայ, այսինքն ի Սեմայ, « հօրն և եղբարքն հանդերձ ». այս խօսքս որ երկամութեան առիթ կրնայ ըլլալ, աւելի երեւի յարմարիլ Հայկայ հօրն և եղբարց համար՝ քան Սեմայ. այսինքն թէ, այն տեղ Զրուան շիներ էր բնակարան, ուր և Հայկն բնակեցաւ իր հօր և եղբարքն հանդերձ:

Բայց եթէ արդարեւ թորզում բնակեցաւ այլ հօս՝ ոչ երկար տարիներ. այլ զի շատ կտրիճ զաւակներ և թոռներ ունէր, « և չբաւէր երկիրն » բազմութեան ախի նոցա ». բաժնեց անոնց սահմանները, նախ ինքնին աւիրելով և շատերը ինքնին ստանելով և տեղաւորելով. և բոլոր այն ժառանգած երկիրն, ըստ պատմութեան վրաց՝ հարաւին ի հիւսիս կարգուաց և կովիսս լերանց միջոցն, արեւելքէն յարեւմուտք այլ՝ կասպից և Սեաւ ծոցուն միջոց. ուր նախ իր անդրանիկ եղբարքն, հարքն և հօրեղբարք տիրէին, ըստ աւանդութեան մերոց իսկ պատմւոց, ինչպէս որ յիշեցինք մենք այլ ազգարածանման մէջ (66). նախ Գոմեր, յետոյ թիրատ իր որդին (կամ եղբայրն). որոյ համար կ'ըսէ Յովհ. Կոթղ. « Եւ վասն զի զթրատ » կացիս ինքեան անձին առանձին թիրատ պայազատէր, պարտ վարկաւ » զի զայլ եւս վիճակեալն իւր սահմանո՝ յերիս հատուածս բաժանեալ » սայցէ ի կալուածս որդւոց իւրոց: Ուստի... և Ասքանազայ որ նախ » զմերազնեայս յիւր անուն Ազքանազաւ անուանեաց, զՍարմատս նմա » պայազատէր. իսկ թիրատայ զՍարմասայ. իսկ թորզոմայ զմերազնեայս » սեպհականել. որում տիրեալ՝ զԱքանազեանն նախ անուանեալ՝ յիւր » անուն նուանէր Տոս թորզոմայ: Արդ այսպէս իմա Աքանազեան զմեզ » և տուն թորզոմայ. և այսպէս քեզ հաւատարմացին որ վասն նահապե » սութեան ազգիս մերոյ է բան, թէպէտ և ոմանք աչազգարար և ոմանք » այլաբանաբար գրուցաց վէպս տան »:

Աքանազ, կ'երեւի որ երկար տան բնակեցաւ յերկրի մերում, թորզոմայ և Ներրովթայ և այլոց ի Բաբելոն գնացած և բնակած ժամանակ, մինչև ի դարձն անտի, հարիւրաւոր տարի: Այս պատճառաւ է որ յառաջ քան զթորզում և յետոյ՝ երկար տան յանուն Աքանազայ կոչեցաւ մեր երկիրն և ազգն. և ինչպէս վերը թորզոմայ համար բոխնք՝ թէ հին տան և բնտիր և վսեմեկան հեղինակաց մէջ ասոր անուամբ քան Հայկայ՝ անուանի մեր ազգն, այսպէս այլ Աքանազայ էր. զոր օրինակ տեսանք Երեմիայ մարգարէին վկայութիւնն յառաջ քան զԵղեկիէլէին, « Պատուէր

» ասւր յինչն Այրարատեան գնդին և Ասքանագեան Թաղաւորութեանցն » . և Գր. Լուսաւորչայ ինքնագրութիւնն եպիսկոպոսապետ « ասնա Թորգոմայ » և Ասքանագեանս աղիւն » . որոյ հետեւող և համանուն և համարիւն . Գր. վկայատէր ի ԺԱ գարու նման ձեւով մը զինքն անուանէ , և սկզբնագիր Թարգոմանիչ վարդապետ մեր կորիւն սկսանի զպատմութիւնն ասելով . « Չաս- » քանագեան աղին և զՀայաստան աշխարհին » և այլն , այսպէս և այլք : Բայց որպէս Հայկայ անունն առաւել ընդարձակելով խափանեց զհօրն՝ զԹորգոմայն , այսպէս ասորն այլ զիւր եզրօրն (կամ զհօրեղբօր) զԱսքա- նապայ : Թեթեւ ասելի քան զհիմկու աշխարհակալս , այն հին հսկայ երկրակալաց հպարտութիւնն էր իրենց բնակած տեղւոյն վրայ անուննին Թաղուլ , ինչպէս մեր Հայկայ և իրենց զարմից վրայ մինչև ցԱրամ պատ- մեն մեր պատմիչք . այսպէս անոր նախնիքն այլ ըրին . և մանաւանդ Թորգոմ , որ ոչ իբրև զԱսքանազ հայրենի ժառանգութեամբ և խաղաղու- թեամբ ախրած կ'երեւայ , այլ քիչ մը բռնութեամբ այլ , և բոլոր իր որդոց ժառանգեցուցած ընդարձակ երկիրն այլ իր անուամբն Տուն Թորգոմայ անուանած , զոր ահա գրեթէ իբր 2000 ատրի վերջ նայնպէս անուանէր Եղեկիէլ մարգարէ , և յետ նորա այլք . և վրաց պատմիչն՝ միշտ կոչու- կառայ և Հայաստանի երկիրն և ազգերն նովին անուամբ կ'անուանէ , Թոր- գոմեանք և սուն Թորգոմայ , գրեթէ ինչուան Քաղղէացոց ինքնակալութեան ասեն կամ Սկիւթաց մեծ արշաւանաց :

Թորգոմայ ասուն կամ երկիրն , նախ (րաս վերագրելոցս) հայկական ընձնապարուն (Մանեաց) և Հայաստարոսի միջոցն էր . որ նեղ գալով իր բազմածին սերնդոցն , թողուց զանիկա իր անգրանկան և մեր նախահօր Հայկայ , և անոր եղբարց սուտ անոր հիւսիսակողմը ինչուան կոսկասու ընձնախութը , բնո մէջ Պոնասսի և Սեաւ ծովուց : Այս միջոց երկիրս Հայ- կայ եօթն քաջ և հսկայ եղբարցն ժառանգութիւնն եղաւ ըստ վրաց , որոց անուանք են ըստ երիցութեան Քարբրու կամ կարդոյ , Բարդոս , Մովս- կան կամ Մովկան , Լեկան կամ Լեկոս , Հերոս , կոսկաս , Եգրոս կամ Եգրէս , որք թուի թէ իրենց նախկին և հայկական հնչմամբ կոչէին կարդ , Պարա , Մուսկ , Լեակ , Հեր , կուակ , Եգեր :

Կարդ կամ Քարթլոս որ երկրորդ ի հսկայից թորգոմազանց , ժառան- գեց իր երէց եղբօր՝ Հայկայ երկիրն անմիջապէս հիւսիսակողմ երկիրը , զոր և իր անուամբ մինչև հիմայ վիրք կոչեն Քարբրոյի , և զիրենք այլ Քարբրոյի , իսկ մեք վիրք և վրաստան կոչեմք՝ յետոյ և օտար ծագմամբ առաջ եկած անունով . այն հին ասեններն մեր Տայոց և Գուգարաց նա-

հանգքն այլ վրաց կամ Գարթլեաց ժառանգութիւն էին. որոց երկրին սահմանքն, ինչպէս մեր Հայոց՝ ատեն ատեն շատ փոփոխեցան և ընդարձակեցան: — Պարտայ վիճակեցաւ Գուգարաց արեւելեան ծայրէն Կուր գետոյ և Հոյկայ բաժնին մէջ եղած երկիրն, ինչուան Կուրի և Երասխայ խոռոնուրդ և ի ծով թափած տեղն, որ յետոյ Հայոց Ուաի և Փայտակարան նահանգքն եղան. և միով անուամբ Առան կամ Ռան ըսուեցաւ. իսկ հոկային անունն այլ ինչուան հիմայ մնայ Պարաւ քաղաքին աւերակօք, որ յետ Հայոց իշխանութեան՝ Աղուանից մայրաքաղաքն էր: — Մուակայ կամ Մովկանայ ժառանգութիւնն եղաւ Կարդայ և Պարտայ երկրին հիւսիսային արեւելակողմը՝ իոտ կամ Փոքր Ալազան գետոյն հովիտը, կամ թէ ասոր և կուր գետոյն միջոցը. ուր և իր անուամբ քաղաք մը շինեց, որ ցարդ կ'երեւի Մուզան աւանաւ: — Իսկ երկու Արազանից գետամէջքն տուաւ բաժին Հերայ, և անոր անուամբ կոչեցաւ երկիրն այլ քաղաք մ'այլ Հէրեր, որ և Խորուերաւ: Ասոր սահմանն արեւելքէն կ'երթար ինչուան Կովկասայ լեռնապարիսպը, որ ինչուան այն ատեն « էր անմարդաձայն » (Վրդ. Պամ.), այսինքն անբնակ. այն միայնութեան և դժարութեանց մէջ բնակեցան Լեկ, ի հարաւային արեւելս Հերայ և Մուակայ բաժիներուն արեւելակողմը, որոյ անունը ցարդ կու հոչակեն քաջակոխ Լեկդիք, ինչուան մեր օրերս իրենց ազատութեան վրայ կոռելով ընդ Ռուսաց. — և Կովկաս կամ Կուակ՝ որ հիւսիսային և արեւմտեան կողմերը տարածուեցաւ, և իր անուամբ բոլոր երկայնանիստ լեռնապարն և երկու ստորոտքն այլ ինչուան այսօր աշխարհածառիթ են Կովկաս կոչմամբ, և հիմայ զանազան ցեղեր բնակին հոն: — Կուակայ և Կարդայ սահմանաց արեւմտակողմն ինչուան ի Սեաւ ծով (կամ յԱքանաղեան) բաժին հղաւ Եգերայ, և անոր անուամբ կոչեցաւ առ ամենայն աշխարհագիրս և պատմիչս, և հիմայ այլ նոյնպէս ծանօթ է Աճարա ըսուելով:

Որչափ որ մեր Հայաստան աշխարհին անունն և պատճառն ստուգութիւն ունի մեր առջեւ, նոյնչափ այլ կ'երեւայ այս Հայկայ եղբորց և իրենց աշխարհաց անուանքն. զոր ոչ միայն մեր և վրաց պատմիչք յիշեն, այլ այս հիմայ մեզի ծանօթ հեղինակներէն հին Հրեայք, և ըստ ոմանց նաեւ Խազիրք ի ժ. պարու¹⁸⁰. որք ոչ միայն 8 այլ և 10 որդիս համբն թորգոմայ, յորոց ոմանք զեռ անուամբ այլ նոյնանման են, ինչպէս առաջինն Ագիտր կամ Այցիտր, որ է Հայկն, երկրորդն Տիրուս, որ թերեւս ըլլար Վիրուս. երրորդն Ուվար (Բարդուս). չորրորդն Ուկիւ (Մովկան). մնացեալքն նման չեն մեր նախայիշելոցն, այլ ուրիշ կովկասեան ազգեր

յիշեցնեն, և են հինգերորդ՝ Պիգայ. վեցերորդ՝ Դասնա. եօթներորդ՝ Գոգար, յորմէ խաղրաց թագաւորն կ'ըսէր իր ազգին ծագումն և անուանէր զինքն թագաւոր թողարմանց. Արարացիք այլ յիշեն զիտզար իբր որդի Յարեթի. ութերորդ՝ Մանուր, յորմէ մեր պատմչաց ծանօթ ազգն Մանարաց. իննե-
 րորդ՝ Բուչկար, յորմէ Բուլղարքն՝ յիշեալ նախ քան զամենայն պատմիչս ի Մ. Խորենացւոյ. ասաներորդ՝ Սառի, յորմէ Սարիւր Հոնք, թերեւս և Սիպերիացիք: Այս ետքի վեց որչոց անուանքն տարբեր սեպելով մեր պատմչաց յիշած ետքի շարուն, փոխանակ ութի կամ աստին՝ 14 որդիք յիշուած կ'ըլլան թորգոմայ, կամ 14 ցեղք և աշխարհք: (Վիլ. Սէն Մարտ. Բ. 22): Այս միտարանութիւն մեր և վրաց պատմութեան՝ կամ աւանդութեան կողմասայնոց ընդ աւանդութեան Հրէից կամ խաղրաց, գոնէ կու ցուցնէ թէ շատ հին և ընդարձակ է կարծիքն թորգոմայ զաւակաց տարածուելու Տաւրոսի լեռներէն ինչուան կողմասայ հիւսիսային ստորոտքը և անկէ այլ անդին ասիական Ռուսաստանի մէջ. և կրնայ ըսուիլ թէ կող-
 կասայ զանազան ցեղերու շատն սերունդք են այս բազմածին և մեծազօր նահապետին որչոց և թսոանց: Եւ ոչ միայն ընդ հիւսիս տարածուած վկային թորգոմազունք, այլ և ընդ արեւելս և արեւմուտս. յարեւելս Սկիւ-
 թաց, թաթարաց և թիւրքմէնից հայր անուանելով զնա, սրպէս առաջ յիշեցինք. և ցայսօր այս ետքիներս (թիւրքմէնք) ճանաչեն և ասեն զիրենք հօրեղբորորդի Հայոց (Էմ—օղլու). և որչափ այլ օտարալեզու ըլլան, ինչ այլ որ ըլլան, միշտ իրենց թիւրք կամ թիւրքմէն անունն այս աւան-
 դութեան անժխտելի պաշտպան մը պիտի ըլլայ: — Իսկ թորգոմայ յա-
 րեւմուտս այլ ծաւալելն կ'ընդունին ոմանք ի Հարց և ի մեկնչաց, ան-
 կից սեպելով զծագումն ազգաց կամ առհմից Փոխպացուոց, կապաղովկաց-
 ւոց և Գաղատացւոց, ինչուան ոմանք (Փրեկուլի — Պոշար — Ֆլորիտի) անոր անուամբ ճանաչեն զՏրոքմի ցեղ կապաղովկիոյ կամ Պոնտոսի: Իսկ ոմանք ի մեր պատմչաց (Միխայէլ Ասորի. վարլան. Մի. Այրիվ.) զԱմազոնս այլ ի թորգոմայ համարին, և ցուցնեն թորգոմայ քաղաւ-
 րոսիւն մը ինչուան Փոքր Ասիոյ արեւմտեան ծայրերը, որոյ թագակալ արու ժառանգը պակսած ըլլալով, կանայք ձեռք ձգած ըլլան իշխանու-
 թիւնը, և իլիոն քաղաքը շինեն ի Տրովադա¹⁸¹: Ուր յայտնի կ'երեւի առաս-
 պել առասպելի, աւանդութիւն աւանդութեան կցած, սակայն և այնպէս կ'ընդարձակի թէ ստոյգ և անստոյգ տարածումն թորգոմական ճիւղերու,
 որոյ արմատն հաստատուած է ի Հայաստան. և գոնէ հաւանական է թէ իր որդիքն և թոռունքն միայն միակողմեան ընթացք մը չընենցին ի բա-

ժանման և ի ցրման խրեանց, ինչպէս այլ նաՀապետք, այլ իրեք կողմ այլ գացին, յարեւելք, յարեւմուտք և աւելի ի հիւսիս:

Այս իրեք կողմերուն դէպ ի յմր գնաց ինքն թորգում, ուր հաստատեց իր վերջին բնակութիւնն և ուր հանգչեցուց իր 600ամեան գլուխն, ոչ ստոյգ բան մը գիտեմք և ոչ աւանդութիւն. նոյնպէս և ոչ այլ ինչ իր կենաց կամ գործոց մըայ. և աչ այլ որոշ հասկընամ Գր. Մազիսորոսի ուղորական մթարանութիւններէն մէկը, զոր կու գրէր ահեկի ամսեան 23ին պատահած որոտման և ձեռն մըայոք. « կամ եթէ ի թորգումեան երկց » եօթնանկեանցն եռակի բարդեցելայ Ահեկան. որում Արտաշէսն Պարթեա » բաղձայր » և այլն, և յետոյ այս թագաւորի մեռնելու ասան ըտած նշանաւոր խօսքը կը յիշէ ըստ աւանդութեան միպատանից:

Թորգումայ որդուց և թոռանց այլ գործքերը (զատ ի Հայկէն) միայն ի վրաց պատմութեան յիշուին համառօտի. յօտարաց միայն քանի մը հին ծանօթարարք և մեկնիչք (Սուիպոս — Յոհ. Մնատրեացի) յիշեն զկովկաս ի սերնդոց Յարեթի, իրրեւ պատերազմով հալածուած ի թուրասայ, զոր համարին յաջորդ կամ թոռն Նիհոսի. որ հաւանօրէն նշանակէ Ասուրի՝ տյսինքն զԱսորեստանեայց կոիւն ընդ կովկասայնոց և թորգումեանց, ինչպէս որ վրաց պատմիչք այլ յիշեն: Իսկ կովկասայ համար մեր պատմիչն վարդան այլ մկայէ, որ մի էր յերկց քաջագունից ի մէջ ութ եղբարցն, « Երեք յորդոց նորա (Թորգումայ) նախագահք եղին, Հաթան, » Քարթլոսն և կովկասոսն, և ախրեցին ի ծովէն Պոնտոսի մինչեւ ցծափ » կազրից »:

Ժ

Յ Ա Յ Կ Ն

ՍՐԲԱԶԱՆ կամ համաշխարհային պատմութիւնն և ազգային պատմութիւնն ի սկզբանէ միախառն կու գան ինչուան ի Թորգոմ նահապետանոր զիմաց քաշուի աստուածահիւս լարագոյրն, գրեթէ ամենայն ազգաց համար, բաց ի Հրէից. բայց մինչդեռ այլք ի մեծ և յերկար միութեան մեան, մեր պատմութիւնն կամ ազգային ասանդութիւնն կու սկսի անմիջապէս Սուրբ Գրոց՝ Յարեթի ազգաբանութեան լրած սեղէն, ի նոյն ինքն ի Թորգոմայ անդրանիկ որդւոյն, որ ժառանգելով անոր յարեթաբաժին երկիրը, փոխանակ նորին և անոր նախնեացն կու թողու հոն և իրմէ սերեալ ցեղին զրայ իւր անունը. և մինչդեռ առաջին անուանքն հետ զհեռէ կու քաշուին, կու ծածկուին կամ քիչ քիչ յիշուին, այնուհետեւ մնայ իր անունն երկրին բնիկ ժողովրդեան մէջ, որ անով կոչեն զիրար Հայ և զաշխարհն իւրեանց Հայաստան. և անշուշտ այս և այսպէս ըսուած և լսուած է (գոնէ հոն) 4400 տարիէ ի վեր: Այսչափ երկայն դարեր (որ խիստ քիչ ազգաց ժամանակագրութեան մէջ գտուին) չի կրցան մոռացնել կամ նուազել զանուն Ազգապետին մերոյ Հայկոյ. 44 դար առաջ իր որդիքն և անոնց ապաւինած անձինք ի զանազան սուհմից՝ զՀայկն հռչակէին իրրեւ ազատարար և պաշտպան իւրեանց ի բռնաւորութենէն Բելայ, յետ այնքան պարուց այսօր այլ ի բերան և ի սիրտ իր սերնդոց քաղցր և գրեթէ պաշտելի է այլ անունս յետ անուան Աստուծոյ: Քրիստոնէութիւնն և անկէ առաջ այլ ճշմարիտ աստուածապաշտութիւնն օտար և մուրթ ազգաց զտոածմունքէն զգուշացունելով մեր նախնիքը՝ չի դրաւ ի կորգի աստուածոց, այլ իրրեւ աստուածամերձ և վեհագործ անձն զասեց ի պարս համաստեղութեանց, և հոն ընդ մէջ Երեղանոսի և Երկուորեակի տեսանէ և ճանաչէ ցայսօր իւր պայծառանձմ Հայկն:

Սուրբ զիրքն, ինչպէս ըսինք, մինչեւ ցինքն ազգաբանեն զՅարեթեանս, և անմիջապէս իր հօրն անուամբ լռելով՝ Հայկն մնայ ընդ մէջ անժիտելի պատմութեան և ընդ մէջ ասանդութեան. որով և երկրայութեան և հակառակութեան ենթակայ կրնայ ըլլալ և եղած է. կենդանի կամ շօշափելի

արձանաց պահասութիւնն, օտար ազգաց լուծիւնն, զարուց հնութիւնն, և զիցազանց մերձաւոր ըլլալն՝ թէ ժամանակաւ և թէ գործովք, կ'աւելցընեն այս ստարակոյս, մանաւանդ ի միաս օտարազգեաց, ուր մեր հայրենական սիրան կանխելով, բաւական կու սեպէ ի հաւատս, մերազգի պատմչաց և Հարց միաձայն վկայութիւնը, պատմութեան անառասպիւ ճշմարտանմանութիւնը, այն մեծ անձին անուան յարատեւ մնալն թէ ի վերայ ազգին և թէ ի զանազան տեղիս աշխարհին իւրայ: Այս ետքի փաստս հասարակաց մտաց այլ պէտք է մեծ հաւաստիք մ'ընծայել թէ եղած է Հայկն, զորոյ անունը կրէ ազգ մը յառաջ քան զժամանակս իւր Արմէն կոչուելուն յօտարաց, որ և ինքնին ըստ գրաւոր յիշատակաց 2500 ասրուան՝ և ըստ աւանդութեան պատմչաց 4000 տարուան հնութիւն մ'ունի. և զարձեալ ինչուան հիմայ մեր աշխարհին մէջ մեզի ծանօթ 10 կամ 15ի չափ Հայկ անուն տեղուանք, աւելի ի հարաւային կողմանս աշխարհին, զամէն երկչոտ և երկմիտ պիտի ստիպեն կանգ առնուլ և այլ անսւան հնութեան և կրկնութեանց պատճառը պահանջել: Ուրիշ արձան չունենալով պէտք է այս փաստս ուժով բռնել և ասկէ սկսանիլ Հայկայ և մեր բնիկ պատմութիւնը: Մանաւանդ որ մինչ հին մատենագրութիւն չունելով, կու ստիպուիմք յօտար ազգաց մեր հնութիւնները քննել, այս բանիս նկատմամբ՝ անոնցմէ այլ զուրկ եմք, այսինքն, ոչ թէ միայն զՀայկն չեն յիշեր, այլ և ոչ Հայ անուամբ զազգ նորա, այլ նախայիշեալ անուամբք (Քորդոմ, Արարատ, Արմէն և այլն). որով Հայ անունն գրուածով այլ գտնեմք նախ ի մեր ընտիր հեղինակս Դ-Ե զարուց: Լսեցինք երբեմն թէ բեւեռաքանդակ արձանաց վրայ կարգացուեր է Հայ կամ Հայկայ անունն, այլ մեզ անստոյգ է և տեղին և բնթերցուածն: Հայկայ անունն և պատմութիւնը գիտեմք, որ գրուած էր յունարէն և ասորերէն գոնէ Քրիստոսէ զար մը առաջ ի ձեռն Մար Աբասայ. բայց հիմայ ասոր ոչ բնագիւրը և ոչ լիակատար թարգմանութիւնը ունենալով, հնագոյն պատմիչք մեր մնան ի Դ-Ե վարէ յետ Քրիստոսի: Իսկ մնացեալ արձանագրութիւնք ազգայինք անոնցմէ այլ նոր են, թէպէտեւ ըստ որում նութական արձան՝ հնագոյնք քան զՉեռագիր գաղափարս պատմութեանցն: Սակայն որպէս քան զպատմիչքն հին են պատմութիւնքն, հնագոյն են և հայակիր անուանք տեղեաց. մանաւանդ որ յոմանս ի տեղեացն հիմայ Հայ բնակիչ այլ չիգտուելով հին ատեն անոր հոն բնակիլը յայտնի է: Այոպիսիք սեպելու է Հայք գեղը ի ստորոտ Զարասպեն Քէլի-յիւ (Կապոյտ-օիւն) լերին, յորոյ վրայ բեւեռաքանդակ արձանագիր կայ յ'9000՝ բարձրութեան. — Հայկ, ի

Պէրվորի վիճակի Հէքարեայ գաւառի կամ նահանգի Կործայից, թէ նոյն իսկ այս հիմկու նահանգին անունն այլ չէ ծագած ի Հայք—արք անունէ կամ յԱյգտաք գաւառէ Կործայից. — որոյ մօտ ծանօթ է և Հայկան կամ Հէքան գեօղ ի Եօտըզ. որպէս ի հնուսն յիշեալ (Պատմ. Հոփսիսիմ.) Հայաստան գաւառ ի նոյն կոչմանս. — և անկէ ոչ շատ հեռի յարեւելից հիւսիսոյ հիմկու վան գաւառին ոահմանաց մէջ զանազան սեղիք ամէնուն ծանօթք, Հայոց ձոր գաւառակն, յորում պատմութիւնն յիշէ զՀայք, որ թուի հիմայ թեք կոչուիլ. Հայկա—րեղեհ, Թոցեալ աւերակ հին և մամոսս քարերով. Հայկաւանս, մօտ ի վան քաղաք. — միւս կողմէն՝ ի հիւսիսի արեւմտից՝ պատմութիւնն յիշէ զՀայկաշէն ի Հարք, և ճանապարհորդն կամ անդացին ցուցնէ զՀայք (կամ Փայք) ի Խնուս, զՀայք աւան յԱւաշկերտ, և ինչուան յերկրին Կոտորայ այլ, ի ստորոսս Չիմէնտաղ լերին՝ Հայք գեղ մը, որք ամենեքին արձագանգ տան մեր ազգին անժխտելի ընդհանուր կոչմանն Հայ՝ և աշխարհիս Հայաստան:

Օտարաց անձանթ ըլլալովն՝ անոնց ստուգարանութեան տակն այլ չէ ընկած այս անունն, ինչպէս Արմէնն և Արարադն. իսկ ըստ մերոցս անտարակոյտ է որ ծագած է յանուանէ մեր ազգապետին Հայկայ. իսկ իր անունն ուստի ծագել է կամ ինչ նշանակէ, շատ գծար է գուշակելն, իր կարճ և գրեթէ վանկ մ'ըլլալուն համար: Ազգերնուս կոչումն զոր հիմայ Հայ գրեմք և վերջին գիրն այլ հնչեմք որպէս Y գիրն յունական կամ անգղիական, ստուգապէս է ՀԱ, ինչպէս ցարդ բնիկ երկրցիք կ'անուանեն զիրենք, և հոլովելով այլ Հա—ոց կ'ըսեն, մինչև Հաոց այլ լսուիլ, զոր օրինակ Հասո ձոր վիճակն, որ է Հայոց ձոր ըստ նախնի գրչաց, այսպէս թուի և Հաուց թառ = Հայոց — թառ, փոխաձայն գրուած ի նախնեաց իսկ: Արդ այս հնչումնս և նոյն ինքն մեր ազգապետին անուան նուազական վերջաւորութիւնն Հայկ, յայտնէ թէ իր բնիկ կոչումն էր Հա, ինչպէս որ և վրաց հին պատմիչն կոչէ զնա Հա—ոս, որ է ըսել Հա¹⁸⁵. և այս ձայնին յարմարի պատմութիւնն այլ, սր վկայէ թէ Հայկ զազգ իւր ինքնին անուանեց յոգնաբար Հայք: Այս փոքրիկ և հագագային հնչումն իրր յատուկ անուն մեր նախահօրն, շատ խոր հնութիւն և իսկական բան մը ցուցնէ, և աւելի զարմանալի է երբ յիշենք մէկ մը իր հօր և նախնեաց աւելի երկայն և յօգեալ անուանքը, Թորգոմ, Թիրաս, Գոմեր, մէկ մ'այլ իր որպէս և թոռանց անուանքը, որ ամենեւին իրենին չեն նմանիր և ընդհանրապէս Ար ու ամ վանգովք յօգեալ են, ինչպէս Արամեանկ, Արամայիս, Ամ—ասիա, Գեղ—ամ, Ար—ամ, Արա և այլն¹⁸⁵: Թէ հարց և թէ որպոյց

անուանքն՝ Արիական լեզուի յատկութիւն յայտնեն, իսկ իրենն կարծես թէ սեմական զազախար մ'ընծայէ, կամ թէ սկզբնական լեզուին և ժամանակին նահապետաց յարմարի, ինչպէս Նոյ, Սեմ, Քամ, Ռար եթ (վասն զի մեզի յաւելուած մ'երեւի այս եր վերջաւորութիւնն մեր Նոյեան նահապետին անուան)։ Եւ այս անուան աննմանութիւնն ու եզականութիւնն այլ կրնար բիշ մը զօրացընել անոնց կարծիքը, որ առասպելեալ կամ գիտական անձ մը համարին զՀայկն։ Բայց ինձ երեւի թէ Հա մեր ազգապետին երկրորդական կամ մակ-անսն մ'է, և գուցէ ոմանք նոյն իսկ մեր լեզուէն ստուգարանէին Հի-անալ կամ Հայ-իլ բառերէն, որպէս թէ հիա-նալի կամ հայելի, հոյակապ, երեւելի անձն. իսկ ես կ'ընարեմ մեր Հատէն և ձայնէն առնուլ իրր ոյժ և զօրութիւն նշանակութեամբ. որով կազմած կամ բաղադրած են Հ-զօր, Հասակ, Հսկայ, Հ-ոգի և այլն բառերն. և մեր նախայիշեալ հին բառագրոց մեկնութեանն հաւանիմ որ զՀայք — Հսկայք թարգմանէ. և թուի թէ ի Բարեղոն աշտարակաշինութենէ ետեւ հսկայամարտութեանց ասան առած ըլլայ Հա (կամ անկէ ծագած Հայկ) կոչումը։ Յայտնի է որ անգղ-գերման լեզուաց մէջ համաձայն բառն այլ High կամ Heag (Հայ — Հիկ) նշանակէ Բարձր։

Ոչ միայն նուազարար և փաղաքշարար անուանած է Հայկ իբր Հայակ, այլ իբրեւ այդ նշանական անունն իրեն սեփական, (զոր օրինակ և ախոյնինն Ներսիսի իսկայ կոչուիլն ի Ս. Գիրս), սովորութիւն եղած է ի հնուց անուան ծայրը աւելցնել անձնորոշ մասնիկը Ն, և իբր բնիկ անուանել Հայկն, մանաւանդ երբ այդ անուամբ նշանակուի մեր նահապետին նուիրեալ աստղն, զոր Յոյնք և Լատինք կոչեն Որիոն, յանուն առասպելեալ գիւցազի միայ. որպէս բնութեանումք ի Ս. Գիրս Յովրայ, « Քճ բա » ցեալ իցէ զպատրուակ Հայկին » . և յԵսայի « Աստեղք երկնից Հայկիոն » հանդերձ » . — « Ի վերայ եօթնաստեղաց Հայկիոն » . և ի վարս Ս. Գիւնիսիոսի Արիստագացուոյ շատ անգամ, « Ուսոյց ինձ զկարգաւորութիւն Հայկինն... և յսթամ բանին գրունք Հայկինն » : — Թողուլ առ այժմ Հայկին աստեղազարդ երկնակամարին մէջ բռնած անզն, միայն անուանուլ զնենք, որ թուի ինձ թէ այսու որոշեալ հնչմամբ Հայկն ծանօթ էր ի հնումն և մերձաւորաց ազգիս, յորս ամենամօտքն էին ֆուլգացիք, որպէս սեսանք (92), և սոքա ճանաչեն իրենց գիւցախառն ներգաշնակ երգահնար մը Հայկիոն կամ Հիակիւն անուն Կայրոս, ի Լատինաց Hyagnes կոչեցեալ¹⁶⁴։ Անուանց նմանաձայնութիւնն երբեմն պատմութեան այլ նմանութիւն կու գտնէ. այսպէս թուի հնատէր և բնասէր Հելուստիացուոյ

մը (Տիւպուա, Բ. 16.) կարծիքն այլ, որ Յունաց առասպելաց յիշեալ Ալեքսան Թագաւորը կոլքեաց՝ նոյն համարի ընդ Հայկայ. Հայկն առէ ի Բաբելոնէ՝ եկաւ ըստ ազգային և Քաղզէացի աւանդութեանց. այն քաղաքն Արեւու նաւիրական քաղաք էր. արդ Յոյնք այլ Ալեքսեայ համար առնն թէ էր որդի արեւու և Պերսեայ գստեր արեւու¹⁸⁵ :

Ուրիշ փիլիսոփայ հեղինակ մ'այլ (Վելնէյ), պատմութեան հեռաւոր և բռնադրօսեալ նմանութիւն մը կու գանէ՝ զՀայկ գիւցային կամ առասպել ջանալով ցուցնել, և անոր հալածուիլն ի Բեկայ կամ ի Բաբելոնէ՝ համարի Յունաց առասպելը իրենց Ալպոլոն շառաուածոյն վրայօք, որ ի դից և ի գիւցարնակ Ոլիմպոսէ հալածուելով՝ իջաւ յերկիր ի Թեսաղիա և անոր Աղմեայ Թագաւորի հովուաց երգ և երաժշտութիւն սովորեցնէր: Երաժշտապետի պառասով կու սիրեմ զՀայկ Ալպոլոնի նմանցնել, որուն փոխգական Հայակնի աւանդութիւնն այլ միտարնի, բայց ուրիշ կողմանէ հաւանականութիւն չեմ գաններ: Զարմանք չէ օտարաց և նորոց տարակուսելն կամ այլաբանելն զՀայկայ, երբ մեր հնագոյն պատմաց և աւանդաբանից մէջ այլ անտեղի գրոյցներ ըլլալն կ'իմացնէ մեզի Խօրենացին, զգուշացնելով հաւատալ անոր կամ անոնց՝ սրբ « Անս իմն յաղագո Հայկայ և նմանեացն կակազել » էին: Իսկ իր պատմութիւնն զոր ի Մարիրասայ, յԱրիզենեայ և յազգային գրուցաց հաւաստեր էր, քիչ ալլալութեամբ և յաւելուածով քանի մ'ուրիշ պատմաց և աւանդաբանից՝ մեր պատմելեացն նիւթն է, և կ'ընծայէ մեզի նախ գիւցակերպ հսկայ կարիճ մը, վարպետ աղեղնաւոր և զինաշարժ, հակառակորդ երկրիս առաջին բոնաւորին (Բեկայ), յարմէ գոնէ իր հայրենի առհմը և երկիրը կ'ազատէ, և քաջութեամբ վճռտելով գրոնութիւնը, կ'ապահովէ զազատութիւն երկրին իւրոյ, զոր և շինութեամբք և քաղաքական կարգօք և իմաստութեամբն յարդարելով կու թողու իր որդոցն:

Թորգոմայ որուց անդրանիկն է Հայկ կամ ամենէն քաջն, ըստ վկայութեան մերոց և օտարաց, որպէս սեսանք, այն հին նահապետաց ազգաբանութեան համեմատութեամբ՝ իր հօր կենաց իրը 100որդ տարին ծնած կրնայ սեպուիլ, կամ իրը 350-400 տարի յետ ջրհեղեղի, յԱրարատեան կամ ի Նոյաբնակ երկրին, ջրհեղեղին վկայ և ազգահայր նահապետաց քով, Յարեթի ընտանեաց և Ժառանգութեան մէջ, որոյ և յետին թոռն կամ պայազատ կրնայ ըսուիլ, հոն ի հասարակաց հայրենիսն ի ըսյս գալով, և որոյ անունն այլ կրէ իբրև սեփական իւր առհմին կամ իբրև ուղիղ պայազատ. մեր հին պատմաց¹⁸⁶, թերեւ և վիպասանից մէջ. կոչելով Հայկն յարեթեան կամ յարեթսոսիկ, մանաւանդ ուր Բեկայ

և Տիտանայ դեմ յիշուի : Հին նահապետաց մէջ սնած՝ անոնց նոյեան աւանդութիւններն այլ ընդունած էր : Բայց ոչ երկար սարիներ հոն ձեռք-այլ երբ միաբանեցան շատք ի նահապետաց երթալ ի Սենաար, Թորգոմ այլ այն յանդուպն և ձեռնարկող սանուտեարց մէկն ըլլալով, զՀայկ այլ մէկտեղ տարաւ հոն, մինչ սա գեռ նորահաս երիտասարդ կ'ըսուէր ըստ այն ժամանակին . վասն զի պատմութիւնն վկայէ թէ ինքն զԱրմենակ (իր անդրանիկը) ծնաւ ի Բաբելոն . և ըստ այսմ տանուտեարց ցրուիին այլ յԱրարատայ, գոնէ Թորգոմայ հետ ելլողներուն, պէտք է ըլլայ յառաջ քան զսովորական նշանակեալ թուական ազգաց բաժանման (525 տարի յետ ջրհեղեղի), կամ թէ առաջին ցրուելու ատեն ելած ըլլայ, զոր յիշեցինք (75) . դարձեալ պէտք է հաւանիլ որ հարիւրաւոր տարի բնակած ըլլայ Հայկն ի Բաբելոնի, որովհետեւ ոչ միայն որդիք ունեցաւ հոն, այլ և որդեց որդիս, որք արդէն չափահաս կտրիճք էին՝ անկէ ելած և յԱրարատ դարձած ատեն : Նոյնն զուշակուի և ընդհանուր պատմութեան և Ս. Գրոց ոճէն, թէ ելեալքն յԱրարատայ ոչ կարճ ժամանակ բնակեցան ի Սենաար, հաւանօրէն իրենց առաջին նահապետական կամ տանուտիրական օրինօք . և որովհետեւ երկիրն դաշտ էր ընդարձակ, և ոչ լեռինք կային և ոչ քարինք ու քարայրք, անոնց մէջ ապաւինելու, կամ անոնցմով իրենց բնակարան շինելու, ինչպէս սովոր էին յերկրին Արարատայ, պէտքն և միտքն իրենց նոր ճար ցրցուց . « Ասեն այր ցընկեր իւր, եկայք արկցուք » աղիւս, և թրծեցուք զայն հրով, և եղեւ նոցա աղիւսն ի տեղի քարի, » և կուպր ի տեղի շաղախոյ » : Այս նիւթերով ընդարձակ քաղաքներ կամ պարսպապատ բնակութեան տեղուանք շինեցին, որք յետոյ Բաբելոնացոց և Քաղզկացոց թագաւորներէն նորոգուելով և դարձեալ աւրուելով, մինչեւ ցայսօր կու թողուն աւերակներ վանազան դարուց խառնուող : Այս շէնքերուն մէջ Ս. Գիրք կու յիշեն ութ մեծամեծ քաղաքներ Ասորեստանի և Բաբելոնի և Տիրիսի ու Եփրատայ միջոց, և ասոնցմէ վատ Բաբելոնի մեծ աշտարակը, որ այն ահեղ և մեծագոր հսկայից արժանի մեծագործ շէնք մը պիտի ըլլար և յիշատակ ապագայ դարուց . եթէ ոչ ցրուէր Աստուած անոնց մեծամտութիւնն այլ իրենց շինուածին հետ մէկտեղ, և զիրենք այլ մէկմէկէ զատէր աշխարհաքարոզ լեզուաց խառնակութեամբն, զոր յիշեցինք ի սկզբան պատմութեանս :

Հստ կ'ուզեմք նկատել որ այս շինութեանց ձեռներէց առաջնորդ կու ցուցընեն մեզի Ս. Գիրք զՆերքովթ . որ է Բէլ ըստ արտաքնոց . և ըստ ոմանց թարգմանութեան կամ իմացուածոյ նաեւ Ասուր որդին Սիմայ¹⁸⁷ . Իսկ

մեր աւանդաբան պատմիչք երեք գլխաւոր ասեն և շինարար, զԲէլ, զՀամ- սուր և զՀայկն։ Երկրորդն՝ եթէ սչ նսյն ինքն Ասուր է, ու ըլլալն յայտնի չէ . բայց ոմանք փոխանակ նորա՝ զՓաղէկն ասեն առաջնորդ Սեմեանց . իսկ երրորդին՝ այոխնքն մեր ազգապետին ձեռնբրիցութիւնն վկայեալ է և յօրինակագիր պատմահարց մերոց . որոց հայրն և ազբւրն Մարիրաս¹⁰⁰ ի Քաղզէացոց հին պատմաց լսեմ՝ և վայելուչ օրինակաւ կարգէ իր և մեր և Հայկայ պատմութեան սկիզբն . զոր և տրժան է ընդ վաղարշակայ ամե- նայն ազգասիրի արձանագրել իր գիւանաց մէջ . « Ահեղք և երեւելիք » առաջինքն ի գից , և մեծամեծաց աշխարհի բարեաց պատճառք , որ » սկիզբն աշխարհի և բազմամարդութեան... : Յորոց մի էր և Յապետոս . » թեանն Հոյկ , անուանի և քաչ նախարար , կորովաձիգ և հաստադիգն... » զեղապատշաձ և անձնեայ , քաչագանգուր , խայտակն և հաստաբազուկ : Սա » ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ » : Այս մեր ազգապետին բարե- մասնութիւնքը ուրիշ ազգային հին պատմիչ մ'այլ՝ կամ նոյն առաջին պատմիչն ուրիշ թարգմանք այլ (Սերիոս . Մովս . Կաղանկ .) յիշեն , կոչելով զնա Սկայազօր կամ Հօր զօրորեաւոր , Արի , մարտիկ յոյժ , զեղեցիկ , բարի անձամբ և այլն . յորս գլխաւոր գիտելի յատկութիւնքն են նախ հսկայա- րիւնն , որով կ'իմացընեն հինքն զմեծութիւն և զոյժ մարմնոյ . որոյ հետ իմանալու է և բռնութիւնն ու բռնաւորութիւնն . աւելի այս յետինս՝ ըստ Սուրբ Գրոց . բայց արտաքինք և ուսմիկը ըստ երեւակայութեան հաճոյից աւելի մարմնոյ յաղթանդամութիւն իմանալով , անճոռնի հասակներ և չափեր կու ստեղծեն , ինչպէս Բելայ համար այլ կ'ըսեն թէ 60 կանգուն հասակ ունէր , իսկ Հայկին համար 36 կանգուն . անշուշտ առաջնոյն չափն Նարուզագանոսորայ կանգնած անդրոյն չափէն առած է . երկրորդն այլ զուցէ տնդրիէ մը զոր Հայք կանգներ կին ի պատիւ իրենց նախահօր , որպէս յետայ կանգնեցին վահագնի և Գիսանեայ և այլն : Բայց հսկայութենէն աւելի յաւակացընեն պատմիչք զգեղեցկութիւն կամ զվայելչութիւն մարմնոյ և կերպարանաց ազգապետին մերոյ . որով կ'իմացուի այլ թէ ազգերնիս ի վաղուց կու յարգէր և սիրէր այս անձնական ձիրքը , և ընդ ուժոյ պա- հանջէր շնորհք և զարդ կերպարանաց իր կարիճներէն և գովելիներէն . որոյ մեծ հաւատարիքն է և Արայի պատմութիւնն . իսկ հոս մեր զիւցադին ընծայուած մասնաւոր շնորհքն են խայտակն ըլլալն , որ թուի վառվռուն նայուածքն , և քաչագանգուր , որով կ'իմանամ երկայն և հիւսուած խոպու- պիքներն , ինչպէս Ասորեստանեայց անդրեաց վրայ սեսնեմք . այս երկու մասնաւոր յատկութիւնքն այլ իրրեւ սեփականք Հայոց արդէն զիստուած են

յօտարաց իսկ . հին Հոռվմայեցիք յիշեն և կոչեն վարսագեղ զՀայս , իսկ հիմայ շատոնց ծանօթ է Հայոց աշեղութիւնն : Մեր զիցագլին երբորդ և մեծ ձիրք եւս վկայի քաջութիւնն , և իբրեւ սեփական ընծայուի իրեն մակգիր Արի այր , ինչպէս Բեւայ Անեղ արքայ . և մարտիկ յոյժ բացատրութիւնն այլ յիշեցընէ այն հսկայից կոխներն որ Բարեւոնի խառնակութեան տտեն եղան , և որոց մէջ անուանի հանդիսացաւ մեր նահապետն : Բայց իր ամենէն յատուկ և եղական և գրեթէ սրբազնացեալ տուրքն է աղեղնաորոտարինն , որոյ համար զանազան բացատրութեամբ կոչի Աղեղնաոր , կամ լաւ եւս յոյժ աղեղնաոր , կամ կորովի աղեղամբ , հաստաղեղն և կորովաձիգ , և կրնամք թերեւս անուանել զՀայկն մեր հեղինակ աղեղան . եթէ ոչ իբրեւ հնարողութեամբ՝ անշուշտ գործածութեամբ առաջին աղեղնաւոր աշխարհի . թէպէտ հոս ազգազրոյց և գրաւոր անանդութիւն մը (Դիւանք Աղթամարայ), զգիտն լարաշարժ գործոյս այլ ընծայէ Հայկայ , և կերպով մը սրբազանէ այլ . վասն զի յերազի երեցաւ նմա կ'ըսէ աղեղն և նեա , զոր շինելով և ի գործ ածելով , հարուածեց այնով իր թշնամիները . և այս պիպուածս , լսա զրուցաբանութեանն , եղաւ յետ գարձի Հայկին ի Բարեւոնէ և ի բնակութեան ի Հայոց Ձոր . բայց ստուպագոյն է թէ և ի գաշտին Սենաարայ ցուցեր էր Հայկն իր կորովաձգութիւնը հաստ աղեղամբն , որով մրցէր ընդ Ներքովթայ կամ Բեւայ , այն որ անուանէր որսորդ հսկայ առաջի Աստուծոյ (Ծն . Ժ . 9) :

Յառաջ քան զաշտարակաշինութիւնն՝ որոյ վախճանն էր , ըստ Սուրբ Գրոց , յիշատակ մարդկան թողուլ յերկրի , անոր հեռաւոր կողմերը ցրուելէն առաջ , Սենաարայ մէջ բազմացեալ նահապետական օրինօք տարէին և միարանութեամբ և միով լեզուաւ . իսկ երբ դարձեալ շատցան և այն ընկարձակ դաշտն այլ իրենց նեղ եկաւ . և ձեռք վարկին շինութեան աշտարակին , արդէն ներքին շփոթութիւններն սկսեր էին նահապետաց մէջ , և իշխանասիրութեան կամ բռնութեան ոգին կու զօրանայր . փոխանակ բնական օրինաց բռնութիւն կամաց և ձեռաց երեցաւ . յորում յաջողագոյն կամ յանդգնագոյն գտուելով Ներքովթ որդին Քուշայ Քամեան , և ըստ աննդարանից ոմանց՝ (վարդան) քաջորսորդութեամբն կերակուր ճարելով աշխատողաց աշտարակին , զոմանս սիրով շահեցաւ , զայլս բռնութեամբ և բազմութեամբ իր կուսակցացն և ամէնուն վրայ կ'ուզէր իշխել . հարկ էր կամ շատ հեռանալ այն կողմերէն , կամ զինքը ճանչնալ տէր և իշխող , հակառակ տանուտիրական օրինաց նահապետացն՝ որք ստիպուեցան այս երկու հնարից մէկը բռնել : Բայց մէջերնին զօրագոյնքն՝

Թէպէս քիչք՝ երբորդ ճամբայ մ'այլ փորձեցին, բոնութեամբ բոնասորին զէմ կենալ. կամ նուաճել զնա և Նոյեան հրամանաց և կարգաց հաւանեցնել, կամ իրենց ցեղը և աունը անոր բռնարարութենէն ազատ պահել: Հոս ուրիշ արեւելեան աւանդութիւն կամ առասպել մ'այլ (զոր յիշէ պատմահայր մեր Խորենացի) աւանդէ թէ ոմանք այլ այս շփոթիցս մէջ ջանային խաղաղել զամենքը հասասար իրաւանց աէր և անատրբեր ցուցրնելով, յորոց էր և Էփեսոսոս Պիսիդիոսյ բոնած մէկն (որոյ անունն յայտնապէս այլ-այլեալ է ի Յունաց), և զոր Պարսք նոյնացուցին ընդ առասպելեալ զիւցազինն Բիսրասպի Աժդահակայ. որ և հնազանդելով Ներքովթայ՝ իր ցեղին աւանտարարութիւնը ժառանգեց, և սկսաւ հասարակայնութիւն մը քարոզել (communisme), որ ինչպէս հիմկու ատեն շատերը գլխէ կու հանէ և հաստատ գլխոց անընդունելի է, այն ատեն այլ նոյնպէս եղաւ. ոմանք հետեւեցան իրեն, մանաւանդ որ, կ'ըսեն, աստեղազմայութեամբ և կախարդութեամբ այլ խաբխրէր զիրենք, իսկ ոմանք այնով աւելի ճանչնալով անոր խաբէութիւնը՝ հալածեցին իրենցմէ:

Ահա այս ատեն կ'երեւի թորգոմայ դառնալն յերկիրն նահապետական. իսկ Հայկն զեռ ձեւալով ի Բարելուն, անդրանկութեամբ Յարեթեան ցեղին պայազաան ճանաչուէր, և քաջութեամբ ու իմաստութեամբ նշանաւոր ի մէջ հսկայիցն. որով « և ընդգլխակաց ամենեցուն որք ամբառնային զձեռն » միապեալ ի վերայ ամենայն սկայիցն և զիւցազանց »: Ուրիշ իրաւախոհից նման կ'ուզէր որ ամէն աւանուէր իր վիճակին տիրէ, բայց շատերէն այլ զօրաւոր ըլլալով, ոչ միայն բանիւ, այլ և ուժով զէմ կենար անոնց բռնարարութեանը, և պաշտպանէր զտկարս: Այսպէս պատմութիւնն ընծայէ մեզի զազգապեան մեր նախ և առաջ արդար և հզօր պաշտպան իրաւանց, նեղելոց և նուաճեալ ազատութեան. ինչպէս որ զԲէլ ցուցանէ առաջին բռնաւոր և անիրաւ նուաճող օտարաց ազատութեանն: Հարկ էր որ այս կրկին ոգիք միանգամայն և կրկին հսկայք քաջք, իրարու զէմ գային. Բէլ արդէն ոչ միայն իր Քամեան ցեղին նահապետաց բազմութիւնը հնազանդեցուցեր էր, այլ և Սեմական ցեղը, ասոր վիճակեալ երկիրներուն մէջ բնակելով և քաղաքաշինելով. կարգն եկաւ Յարեթեանց այլ, որոց առաջնորդ և պաշտպան կեցաւ Հայկն, և « Խորխաացեալ ամբարձ » զձեռն իւր ընդզէմ բռնաւորութեանն Բեղայ, ի սարածանել ազգի մարդկան » ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն » խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ մոլեղնեալ այր իւրաքանչիւր զսուր » ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր

» պատահմունք ի գէպ ելանէին Բելայ բռնանալ ունել զամենայն երկիր » : Բէլ ոչ միայն մերձաւորաց , այլ և բաւական հեռաւորաց վրայ այլ իր իշխանութիւնը տարածեր էր . թէ և յայտնի չէ թէ այն հին ասեւն Խնչ էր հնազանդելոց պտրաքն կամ հրամայողին իրաւունքն . ըստ աւանդաբանից՝ Բէլ ոչ տանուաէր՝ այլ թագաւոր անուաներ էր զինքն՝ թագով այլ պատկելով և չէր թողուր ուրիշներու այդ պատիւը , և ուզէր որ զինքը ամէնքն ճանչնան գերագոյն սէր , և ինչուան , աստուած մը յերկրի , զոր և ջանայր հաւասացընել Բիւրասպեան կախարչանօք , ըստ հին պատմչին մերոյ¹⁸⁹ . իր պատկերն այլ փորագրելով խաւրէր ի պաշտօն ազգաց և լեզուաց : Հայկն արհամարհելով այս բաներս , բայց յետ երկար կռուոյ և փորձոյ (իրր 50 տարիներու) , չկարենալով այլ քիչերով Բելայ միաբանից բազմութեան գէմ կենալ , իր հօրը և եղբարցն ճամբան բռնել ուզեց . ժողովեց իր սերունդքը , որդիք և թոռունք , որոց թիւն կու հասնէր մինչև 302 կարիճ մարդ¹⁹⁰ , զատ ի կանանց և ի սկար հասակաց . անոնց հետ՝ առաջուց իրեն իրեւ ծառայող անձինք և կամու իրեն ապաւինեալք , որք հարկ է թէ միանգամայն քանի մը հազար պիտի ըլլային . ասոնց ամէն ստացուածքն այլ մէկտեղ տանելով Բելայ ուրիշ տեղ զբաղած ասեւն , կամ զէնքով ճամբայ բանալով , իր հարց և յետոյ մեր հայրենեաց երկրին բղխած գետերուն ընթացքը բռնելով՝ գէպ ի վեր ելաւ՝ երթալու յԱրարատեան և ի նոյեան քնաշխարհն . և անցնելով Ասուրայ (Սեմայ անգրանկան) սեփականեալ սահմաններէն , և կարելով անոր և Յաբեթական ցեղապետութեան անջրպետ կորճայից լեռներն՝ մտաւ ի նոյաքնակն Արարատ : Ահա այս փախուսան է Հայկին ի Բաբելոնէ , զոր վոշնէյ համեմատէ կամ համարի Ապողոն յԱրամազդայ հալածեալ¹⁹¹ :

Հայկայ դարձն յերկիր նախնեացն եղաւ իրր 2500 տարի յառաջ քան զԹուական Փրկչին . և իր նահապետական տունը մտած օրը՝ ըստ աւանդութեան տօմարագրաց և տօնագրաց մերոց՝ կարգեց զխաւոր օր տօնի տարւոյն կամ տարեգլուխ . վասն զի , կ'ըսեն , այսպէս ըրին ամէն ցեղապետք այլ , իրենց երկիրը մտած օրերնին . իսկ Հայկայ մտած օրն էր ըստ յուլեան (հին) տօմարի , օգոստոս 11 կամ ըստ ալլոց՝ 13 (23-25 ըստ նոր տօմարի) . և մինչև ցայժմ այս է հաստատուն տարեմուտ հին Հայ տօմարին կամ Յայմատուրաց և Սարկաւազի ըսուածին . բայց այն օրէն սկզբնաւորեալ Թուականն , որ և Հայկայ Շրչան կ'ըսուի , սկսած է քանի մը տարի ետեւ , 2492 տարի յառաջ քան զծնունդ Փրկչին , երբ Հայկն յաղթելով իր հակառակորդին՝ բոլորովին ազատեց զտունն թորգոմայ ի

բռնութենէ Բելայ : վասն զի այսօր իշխանութիւնն ոչ միայն Սենաարայ վրայ, այլ և հետաւոր աշխարհներ սփռած էր, և նոյն ինքն թորգոմ իր մէկայլ զաւակօքն անկէ ազատ չէր, նաեւ Արարայկ և Կովկասեան երկիրները անոնց բաժնելէն վերջն այլ. ինչուան որ Հայկն հաստատուելով իր տարաւան բաժնին մէջ և նուաճելով շորս բաւորը, յայտնապէս գլուխ քաշեց և ինքնազուի ազգապետ եղաւ :

Հայկ քիչ ատեն բնակեցաւ ի Լեոնտոս Արարատ, ի հին նահապետական ասան, որ հաւանօրէն կային ի Բարելոն չգացող կամ անկէ շուտ դարձող բնակիչք. որոց մէջ անշուշտ մնացեր էր հին նոյական լեզուն. և հարկ էր որ Հայկայ լեզուն այլ (եթէ նոր էր Բարելոնէն բերածն) խառնուէր հնոյն հետ, մինչդեռ զատուելուն վրայ շատ տարիներ չէին անցեր¹⁰² : Նահապետական շինուածոց վրայ ինքն այլ քիչ մ'աւելցուց, և բոլորն այլ թողուց իր թոռոնը՝ Կոպմեայ. որոյ անուամբ յետոյ տեղն՝ մերձակայ սահմանափն՝ Կոպմեայ տուն բնուեցաւ, և Հայոց տէրութեան աստին հարաւային արեւելեան սահմանակալ կու սեպուէր այդ տան իշխանն, և մեծաթիւ զօրաց բանակ ունէր : Այսպէս Հայկայ առաջին բռնած տեղն ի հայրենիո մեր, յետին սահմանածայր եղաւ իր որդոց պայազատութեան ասան. վասն զի հարաւէն դէպ հիւսիս տարածեցաւ իր ազգն և տէրութիւնն : Ինչպէս որ նախ ինքն այլ ելնելով ալսկէ իր բնտանօքն՝ դէպ յարեւմտեան հիւսիս գնաց Տիգրիսի հստանաց դէմ, և հաւանօրէն անցաւ Բաղիշու գետոյն ձորէն, կամ վանայ ծովուն արեւմտեան եզերքէն, որ այն ասան այսքան յառաջ եկած չէր յայս կողմս. և զանալով այլ աւելի յարեւմուտք՝ Արածանի գետոյն հովիտները մտաւ, թէպէտ այն ասանուան ընթացքն յայտնի չէ, և հաւանօրէն շատ տարրեր էր հիմրկուրնէն. բայց գրեթէ անտարակոյս է որ այժմեան Արածանոյ արեւմտեան ազերիականց մօտ հասաւ՝ որք ի Սրմանց լեռանց կ'իջնեն ի վաշտն Խնուսայ, լեռանց միւս կողմը թողով Երասխայ ազերիակունքը : Այս է այն բարձրաւանդակ դաշտն, որ դրաւ Հայկն իր հաստատ բնակութեան տունն, « և անուանէ » զանուն լեոնապաշտին ՀԱՌՔ, այսինքն թէ Հարք են աստ բնակեալք՝ » ազգի տան թորգոմայ : Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն » ՀԱՅԿԱՇԷՆ » :

Հարք կոչուամբ երկրին աներկրայելի է, թերեւս ոչ նոյնքան մեր պատմահօր առած հաճոյական և նոյնանիշ մեկնութիւնն՝ (ազգին) Հայրերն իմանալով նախ հոս բնակած. թերեւս Հա-արք լինի բնիկ կոչուամբ՝ ըստ Հա անուան ազգին և ազգապետին, յաւելմամբ արք (մարդիկ) բառին, որ-

պէս և Գուգ-արք: Սակայն ստոյգ և իրաւ է որ մեր ազգին Հարանց բնա-
վայրն եղաւ այս տեղս, որ յետոյ Տուրուբերան աշխարհին գաւառաց մէկն
սեպեցաւ. և թերեւս ոչ միայն Հայկն իր սերնդեամբն՝ այլ նաեւ իր հայրն
Թորոզոմ գտնէ մէկ քանի որդւովքն հոն բնակած ըլլայ ատեն մը. յորոց
թերեւս Հեր կամ Հերոս իր անունն թողած է Հերեան կամ Հերեր գեղջ
վրայ, որպէս կոչեցաւ և կոչի իսկ ի վրաց՝ իւր աշխարհն Հերթ. իսկ
այս պիւղս որ յաւուրս թարգմանչաց մերոց ընծայեց մեզի մեր ազգին
նրբագոյն իմաստասէր հանճարը, զԱնյազթ Դաւիթ, հիմայ այլ նոյն
անունը պահէ քրդաձայն կոչմամբն խըրդ և նշանակէ գաւառին զլուխը
Երասխայ և Արածանոյ անջրպետ լերին լանջակողմը: Իսկ Հայկաշենն
պանծալի և փափագելի Հերթթէն իջած վտակին վարերը, զաշաին արեւե-
լեան կողմերը նշանակուած է, իրեն մօտ այլ Հարամիկ ւանն, որ կրնայ
Հարանց նման հին անուան մնացորդ մ'ըլլալ: Այս կողմերս քրդաբնակ
ըլլալով լաւ քննուած չեն, գուցէ որիչ և աւելի ստոյգ նշաններ այլ ու-
նենան մեր Հարց և ազգասպետին բնակութեանն. որոցմէ մէկն այլ սեպուի
կարծեօք՝ Էլիփիս կոչեցեալ գիւղն՝ ընդ մէջ Հերթթայ և Հայկաշենի, որ
յիշեցնէ մեր հին աշխարհագրական բառագրին ըսածն թէ « Հայկն զԱրփի-
» սոն շինեաց »: Պէտք չէ մոռնալ նաեւ Հերթթէն քիչ հեռու և լեռան
մը անդիի կողմը, հիմկու վարդոյ վիճակին մէջ Պասքամ գիւղաւանն
այլ, որ կրէ զանուն Հայկայ թոռանց մէկուն: Այսքան մեզի կիսածանօթ
տեղանշանքս այլ բաւական են հաւաստելու թէ ստուգիւ ազգասպետն մեր
Հայկն բնակեր է այս լեռնազաշախ մէջ: Աոոր հարուակողմը երկայ-
նաձիգ լերան մը ստորոտ (թերեւս Զեսնագ Լ.) դէպի Տարօնու կողմը,
Հայկէն առաջ եկած բնակած էին քիչուոր մարդիկ. ասոնք մէկէն Հայկայ
իշխանութիւնն յանձն առին, վտինալով որ չըլլայ թէ Բեւայ կողմակից
երեւնան և ֆեաս կրեն: Այս վիպուածս՝ զոր յիշած են թէ հին քաղղէացի
պատմիչն Հայոց (առ Մարիբասայ), և թէ մեր հնագոյն նախնեաց վիպա-
սանքն և զրոյցքն, գուշակել տայ որ կարելոր պարագաներ այլ ունեցած
պիտի ըլլայ:

Այն ատեն որ Հայկն ի Հարք և ի շրջակայ կողմանս իր հօրը սեփա-
կան բաժնին մէջ իշխանութիւնը և տունը կու հաստատէր, եղբարքն այլ
իրենց տունը տեղը կու շինէին. բայց, եթէ հաւատանք վրաց պատմու-
թեան, ամէնքն այլ վտինալով ի Բեւայ՝ անոր գերագոյն իշխանութիւնը
կու ճանչէին. թերեւս Թորոզոմ հայրերնին խոհեմագոյն սեպէր զայր՝ որ-
պէքը մեծագոր հսկային բոնութենէն անկասկած պահելու համար. և Հայկն

առ ակնածութեան ծեր նահապետին՝ կու լուր : Իսկ երբ յեա մահուան նորա ինքն անցաւ ի նահապետութիւն բոլոր թորգոմազանց, ամէն յարաբերութիւն կարեց ընդ Բելայ . և կանչելով եղբայրները, իբրև իրենց վիճակները հաստատելու համար, և ուրիշ իրեն հպատակ տոհմապետներ, ամէնուն իմացուց որ Բէլ ոչ միայն անիրաւ բռնաւոր մ'է ի վերայ երկրի, այլ և աստուածուրաց, ոչ միայն հնազանդութիւն՝ այլ և աստուածային պաշտօն կու պահանջէ ի մարդկանց, որով իրեն հնազանդիչն անգամ իրենց և իրենց հարց պաշտած միայն Աստուծոյ հակառակիլ պիտի սեպուի : Նահապետաց օրհնութիւնն մեր վրայ է, ըսաւ, Աստուած մեզի ընդարձակ երկիր և բազմասերունդ զաւակներ և ընդոժիններ տուաւ . ինչո՞ւ վախնանք ի Ներքովթայ . մենք մեզի բաւական ենք, Աստուած այլ օգնական : Ամէնքն հաւանեցան և հնազանդեցան Հայկայ, իբրև տանուտեան թորգոմայ ցեղին : Մեր ազգին ընդունելի աւանդութիւն եղած է թէ Հայկայ զլուսի քաշելուն զլիաւոր պատճառն էր Բելայ անաստուածութիւնն . և ընդունելի է թէ Հայկն և թոռունքն ճշմարիտ աստուածապաշտք էին, ինչպէս ուրիշ ցեղապետաց մէջ այլ կային յառաջ քան զԱրարհամ . և թիրեւս աստուածապաշտութեան ու նահապետաց երկիւղածութեան մէկ նշան մ'այլ սեպուի միակնութիւնն . Վիրք թորգոմայ համար կ'ըսեն թէ շատ կանայք ունէր, բայց մեր գիտնագոյն պատմիչք՝ թէ Հայկայ և թէ իր թոռանց միշտ կին մը յիշեն և ոչ կանայք : Եւ այս հին և միին ժամանակ, գրեթէ ինչուան Ասորեստանեայց տէրութիւնն ի Հայս (առ Շամիրամաւ), մեր պատմութեան մէջ ամենեւին գիցարանական յիշատակ մը չկայ . որով և շատ հաւանական կ'երեւի մեր բարեպաշտ նախնեաց կարծիքն այլ զՀայկայ, որ ոչ միայն անձնական այլ և կրօնական ոգւով հակառակէր Բելայ : Այս երկու հակառակորդքն յամենայնի մէկմէկու ընդդիմակ ներկայանան մեզի . և թիրեւս միակ ընդդիմակք . քանզի Սեմայ տոհմապետքն նուաճեալք էին ի քամածին Ներքովթէն, և մեր յարեթածին ազգապետն միայն մտաց պաշտպան հայրենի և աստուածային իրաւանց :

Արդ երբ երկու հակառակորդքն այլ իրենց իշխանութիւնը ամրացուցին և ապահովեցին, մէկն (Հայկ) նահապետական պարզութեամբ, միւսն աշխարհակալաց նախօրինակ խորխտանօք, հարկ էր որ գործով այլ յայտնուէին . բայց մեր նահապետն ոչ Բելայ զէմ երթալու միտք ունէր և ոչ բաւական զօրութիւն . իսկ սա զանէ բոլոր Սինաարայ և Միջագետաց մէջ սփռեալ տոհմերէն կտրիճները ժողոված էր քովը՝ իր հակառակները նուաճելու համար, յեա ամենեցուն և տկարաց՝ կտորը հասած սեպեց Հայկայ :

Այս մեծ գիպուածն աւանդող պատմչաց սակաւ մնացեալ զրօյցքն այլ մեզի բաւական քաղաքական կրթութեան և հրահանդաց գաղափարներ կ'ընծայեն, որ թիրեւս ոմանց նոր փիլիսոփայից անհաւատալի երեւայ. այոպէս են նախ Բելայ և Հայկայ պատգամաւորութիւնքն: Բէլ իր որդոց մէկն դեռ պանութեան զլուխ դնելով՝ հաւատարիմ և կտրիճ մարդիկներով խաւրեց առ Հայկին, որք խաղաղութեան ձեռով գալով՝ կրցան հասնիլ առ սա և բռնաւորին պատգամը տալ, որոյ իմաստն այս էր. « Ամէն ցեղ և ընդունոր ցրուեցան երկրիս վրայ՝ ինձի հնազանդին և պատշաճ պատիւը տան, ես այլ զիրենք խնամեմ և պաշտպանեմ. դու միայն ինքնազլուխ մնացիր, և քեզի հետ քու ցեղակիցքդ մոլորցուցիր. որոնք կենաց օգուտն անգամ յամաստութեամբ մտնալով՝ քեզի հետ ելան գնացին դէպ ի հիւսիս, սառնապատ անրնակելի լեռանց մէջ պահուեցան: Թողէք այդ անյարմար մտածութիւնն այլ բնակութիւնն այլ. եկէք նորէն ի Սննաւ, բնակեցէք մեր ջիրմիկ և բարեբեր պաշտերուն մէջ, վայլեցէք երկրին բարութիւնը: Եւ եթէ դու Հայկ՝ քու աղեղանդ փորձերը կու սիրես, ե՛կ և Բելայ որսապետն եղիր. իրեն որսական բարակները վազցուր սիրած Հրէնցդ ետե՛ն: Զայս խոստանայ Բէլ. իսկ եթէ դեռ յամաստեալ մնաս այս անգոս, ինքնին Բէլ կու գայ զքեզ որսալու »: — Այս պատգամն կ'երեւի թէ ոչ բերան առ բերան խօսեցաւ որպիսի Բելայ ընդ Հայկայ, այլ ինքն այլ ուրիշ բերնով իմացոց Հայկայ, զորցէ վախնալով առկէ, կամ մեծութիւն սեպելով անոր չիրեւալ ինչուան որ միտքը չիմանայ: Իսկ Հայկին պատգամին սպառնալիքն այլ լսելով՝ բոլորովին մերժեց առաջարկութիւնը, մտնաւանգ թէ խստութեան խստութեամբ այլ պատասխանեց, կ'ըսեն. « Գիտեմ որ Բէլ շան պէտ հաջէ, շան պէտ որոսայ, իր հետեւողքն այլ նոյնպիսի են: Իսկ եթէ կ'ուզէ՝ գայ մեր վրայ և տեսնէ մեր ճարտարութիւնն այլ »:

Բելայ որպիսի և պատգամաւորքն դարձան առ նա ի Բաբելոն. յորոց իմանալով Հայկայ վստահութիւնն՝ Բէլ հարկաւոր սեպեց ժողովելու մեծ բազմութիւն զօրաց հետեւակաց հանդերձ իր փորձած կտրիճներու, որոց մէջ կային 60 անուանի հոկայք անճոռնի զէմքով հասակով և ուժով, որոց ամէն մէկն առասպելեալ զիւցազանց կարգ կրնար բռնել: Հոս մեր պատմիչն (Խորենացի) թուի պիտմամբ յիշել որ բազմութիւն զօրացն Բելայ հետեւակ էր. բայց ուրիշ կորուսեալ պատմիչի (Ստեփ. Ռոշք.) մնացեալ տող մը « Հիծելոցն սրաթեւութեամբ առ Բէլն հասին », կրնայ թէ՛ անոր կողմէն թէ՛ գիմացիներն կարծել տալ այս հեծեալները. թէ և ուրիշ պատմիչ այլ կ'իմացընէ յետ պատերազմին, որ զոնէ իբրևս գրասա կային

ձիանք այլ ի բանակին Բելայ : Այս բանս կարեւոր սեպեցի յիշել վասն մեծ խնդրոյն, թէ սրբան Հին է ձիաց գործածութիւնն ի պատերազմի : Թէ ոչ զօրքը կրելու՝ անսնց բեռները և պաշարը կրելու համար հարկ էր գրաստ վարել. և ասնց հետ վերջին յիշեալ պատմիչն յիշէ նաև ուղտեր ի բանակի Բաբելոնացոյն . և այս այլ առաջին յիշատակն է այդ հարաւասէր անասպատի անդրուզարին ի Հայաստան մանեղուն, որ կարաւանաց պատահառու մինչև հիմայ գտուի մեր ցրտակլիմ հայրենեաց մէջ :

Ներքովք Մարաց և Արարատականի միջոց լերանց ոտորոքը պատեղով (ըստ վրաց պատմութեան), ի հարաւային արեւելքէն դէպ յարեւմուտս հիւսիսայ գիմեց, ի ասունն նահապետաց, յերկիրն Արարայայ, որ եղեր էր ասուն կազմեայ : Սա բոնաւորին մօտենալլու իմանալով և յառաջապահքը անսնկլով թողուց անդր և ընտանեօքը փախու ի Հարք առ Հայկ, և մեծ վախով ըւր տուաւ . « Գիտեա, ըսելով (ըստ Հին պատմ. » մրչին) սի մեծդ գիւցազանց, զի գիմեալ գայ ի վերայ քո Բէլ, յա » ւերժիւք քաջօք և երկայնապիզօք հասակօք . կայիւք մրցողօք : Եւ իմա » ցեալ իմ զմերձ լինելն նորա ի ասուն իմ, փախեայ . և զամ աւասիկ » տագնապաւ : Այդ անասպարեա խորհել զոր ինչ գործելոց ես » : Ներքովք անաշխատ արեւց կազմեայ տանն, ուր թերեւս ինքն այլ ծներ էր ի միջի նահապետաց . և փութացաւ Հայկայ վրայ երթալու, անոր բոնած ճամբէն, Հողոսայ պահակէն, կամ հիմկու Ռահվայի և Բաղիշու ճամբէն : Այս ճամբուն գլուխը, Մշոյ գաշտին և վանայ արեւմտեան այս պարատափին միջոց և անջրպեա ծանօթ է մինչև հիմայ Ներքովքայ լեռն, Նաւրուտ կամ Մամրուտ կոչուած, յանսն բոնաւորին, որ հաւանօրէն հոս կեցած կամ յիշատակի արժանի բան մը բրած պիտի ըլլայ . զոր ոչ յիշէ գրաստ պատմութիւնն . իսկ աւանդութիւն տեղացեաց մինչև . ցայժմ առասպելախառն զրուցէ, թէ Ներքովք բոնաւորն եկեր էր ի հարաւոյ այս կողմերուն այլ արեւելու, և այս լերանս վրայ կու շինէր իրեն բերդ և բնակարան մը . և երբ աւարտեց բարձրակառուց շինուածը, սանեաց վրայ ելնելով և իր ժողովրդեան հաւատացրնել ուզելով որ ինքն ամենակարող է՝ լարեց զաղեղն յերկինք ի վեր, սրպէս թէ անոր իշխողն այլ (զԱստուած) զարնէ և վար ձգէ . իսկ Աստուած ծովէն մեծ ձուկ մ'առած՝ նետին գիմաց դրաւ . որոյ արիւնն վար վազելով՝ Ներքովք կարծեցուց թէ իր ուզածն էր զարկածը . այն ատեն Աստուած վերէն կայծակներ թափելով՝ կործանեց Ներքովքայ շինածը, և զինքն իրեններովն շէնքին հետ մէկտեղ լերան անգունդքը իջուց, և անկէ ըւր բղիտեցնելով ծածկեց աննշան բրաւ տեղը .

միայն այն բղիճած ջրէն են ինչուան հիմայ լերան վրայ եղած լճերն : Նոյն ասան, կ'ըսեն, Ներքովթայ ուղտերն այլ որ Դատուանայ ծովեղերքէն աւազ բերէին շէնքին համար , քարտցեալ մնացին հոն . և առնք են ինչուան հիմայ լիդուա քարեր ըսուած մեծամեծ ապառաժի կտորքն՝ որ Նամրուսայ և Դատուանայ միջոց իբրեւ շարեալ կան 60իւ չափ : Վանայ ծովուն եզերքն ուրիշ տեղուանք այլ կան որ Բելայ առասպելախառն ատնպութիւններ պահեն, ինչպէս քիչ մ'ետեւ տեսնենք . և գոնէ զայն կու հաւասան թէ Ներքովթայ դիպուածն այս կողմերս եղած է :

Գլխաւոր դիպուածն որ է Ներքովթայ և Հայկայ պատերազմն, ասոր յաղթելն և անոր սպանուիլն, հիմայ մեզի մնացեալ պատմիչք՝ երեք քիչ շատ զանազանութեամբ պատմեն և կրնան երեք աղբիւրք ըսուիլ (որ են Խորենացի, Վլրաց պատմիչն, և Սերիոսի սկիզբն եղած հատուածքն) . բայց ամէնքն այլ մէկ մեծ դիւցազնական վիպասանութենէ մ'առաջ եկած կ'երևին , կամ շատ հին պատմութենէ մը՝ որ ժամանակին վսեմութեամբը և ծանրութեամբը պատմուած է , և երեքին յիշածն այլ ըստ մեզ այսպէս միաբանին : Ներքովթ՝ զեսպանագնացութեան օրինակին համեմատ՝ ծանրէն քաշելով մէկէն անձամբ չելաւ թորդոմազանց վրայ , մանաւանդ որ դեռ բոլոր զօրաց բազմութիւնն այլ հասած չէր . այլ կ'աղմոսի տան և Հարքայ միջոց տեղ մը դադրելով (թէ ոչ յիւր անուն լերինն) յառաջամարտ գունդը դրկեց 60 հսկայիքն : Հայկն այլ նոյնպէս յառաջ շնետուելով, այլ զինքն պահելով Ներքովթայ դիմամարտելու , ընդդէմ անոր հսկայիցն հանեց իր հսկայ եղբարքն և որդիքն . ինքն այլ ետեւնին կեցաւ իբր վերջապահ և ապաւէն . երկար և զանազան կուոյ գործեր եղած են , և ոչ մէկ պատեարազմ միայն, ինչպէս կրնայ կարծել մէկն միայն Խորենացոյ պատմածը յիշելով . և երկու կողմին այլ տագնապ և դժարութիւն հասած : Առաջին պատերազմն կ'երևի Բզնունեաց և Խոռխոռունեաց զաւառին կողմերը եղած , ի ստորոտս Մասիք (Սիփան) լերին , ուր կեցած էր և Հայկն : Ներքովթեանց ինչուան հոն մօտենալուն շսպասելով թորդոմազունքն յարձակեցան անոնց վրայ , և հսկայից անուան և գործոց արժանի եղաւ պատերազմն ահաւոր , « խառնեալք ի միմեանս ահաղին և սաստիկ բախմամբ իբրեւ » զձայն սրտման ամպոց . և հողն որ վերանայր ի ներքոյ ոսից նոցա » թանձրանայր որպէս զամպս . փայլատակունք զինուոց նոցա որպէս յերկ » նից հատանէին, ձայնք նոցա որպէս զգոռալոյ շանթից , և նետք և քա » ռինք որպէս տեղատարափ թօթափեալք , և արիւն որպէս զհեղեղս գետոց » յորպեալ ընթանայր » : « Եւ եղին կոտորածք յերկոցունց կողմանց անթիւ

» և անհամար: Եւ Հայկն կայր յետուսա կողմանէ իւրոցն և սրտապնդեալ
 » քաջալերէր զնոսա ահեղագոչ ձայնին, և ինքն իրրեւ զկայծակն աս-
 » պատակէր շուրջանակի, և բնկենոյր զվտթսուն հսկայքն ձեռամբ քաջաց
 » հարազատացն», որք բուր թշնամի գունդն այլ վանտելով յաղթական
 խնդութեամբ ժողովեցան սո Հայկն, ոչ այնքան իրրեւ իրենց այլ Ասասու-
 ժոյ թշնամիներուն յաղթողք սեպուելով:

Ներքովթ այս անկարծելի գործը տեսնելով և թերեւ չի լմեցած՝ փու-
 թացաւ յանկարծոյն Հայկեանց վրայ հասնիլ՝ հակառակ կողմէն, այսինքն
 վանայ ծովուն հարաւային արեւելեան եզերքը պատելով: Հոս Ռշտունեաց
 գաւառն գլուխը՝ Բեկոս անուամբ գեղ մը կայ, որոյ համար մինչեւ ցայժմ
 սամիկն զրուցէ թէ Բելայ յիշատակաւն է, անոր սպանուելէն ետեւ հոս
 բերուած և գաղարած ըլլալով: Հայկն որ իր հակառակորդը կու գիտէր,
 ինչպէս նա զոտ, փութացաւ իր կողմանէն Բելայ առջեւ ելնել, ծովուն
 հիւսիսային կողմէն պատելով, և աւելի շուտ հասնելով յետոյ Երուանդու-
 նեաց ըսուած գաւառը, հոն շորս զին լեռնապատ ձոր մը իջաւ, որ իր և
 իրեններուն անուամբ Հայոց ձոր ըսուեցաւ և ըսուի մինչեւ հիմայ, որոյ
 արեւելքէն գայ Հորգոմայ գետն և թափի ի ծովն՝ այդ անուն գիւղին ըով,
 որ գեւ Ժէ պարուն մէջ շէն էր, հիմայ չյիշուիր. իոկ գետն հիմայ Խօ-
 շուպոյ անուամբ ճանաչի: Ասոր աջ կողմը բարձրկեկ և ամուր տեղ մը
 կեցաւ Հայկ, տեսնելով հեռուանց Բելայ զօրաց յառաջահասները. միան-
 գամայն գուշակելով որ շատ մեծ բազմութիւն պիտի հասնի, փութացաւ
 ինքն իր քիչուոր գունդը բանակեցնել ամուր և ճարտար գիրքով, երեք-
 անկիւնի ձեւով մը, որուն ծայրը ինքն կեցած էր. աջ թեւը՝ որ վանայ
 ծովուն կու նայէր՝ յաճնեց իր երեք որդւոց՝ զանգրանիկն Արմենակ առաջ-
 նորդ գնելով. ձախ թեւն այլ սուաւ ուրիշ երկու որդւոցն, զԼիաւոր գնելով
 զԿազմոս որդի Արմենակայ, զոր իրրեւ անգրանկածին պայազատ, միանգա-
 մայն և կարիճ՝ նախապատուել կ'երեւի. մնացեալ որդիքն և թոռունքն և իր
 եօթն զատերոց որդիքն այլ (Սերիոս պամ.) անոնց օգնական սուաւ, զամանս
 այլ վերջապահ թեւին սուաւ. հաւանօրէն իր եղբարքն այլ հոս հոն բաժնուած
 էին: Հայկայ գիտածն էր, ինչպէս ըսաւ այլ իրեններուն, փութալ շապա-
 սել բարձր թշնամեաց հաւաքելուն, այլ դիտել գանել թէ ո՞ր կողմն է լեւ,
 և հոն յարձակիլ. կամ ուժով յարձակմամբ մը յանկարծ վրան հասնելով
 և զնա սպաննելով՝ բարձր բանակը վախով ցրուել, կամ գոնէ այն ահեղ
 բանաւորին և իր հսկայից հետ կոտելով՝ բաջութեամբ մեռնիլ՝ քիչեր
 շատերէն:

Նոյնպէս Բէլ այլ զՀայկն դիտելով, իր յառաջահաս զօրքերը շապեցնելով հասաւ Հորդամայ գետոյն ձախ եզրը և Հայկայ դիմաց բարձրագոյն բլրակի մը վրայ կեցաւ. որ՝ ժամանակ շտալով անոր զօրաց գումարելուն ու շարուելուն, իր բանակը յառաջ շարժեց զգուշութեամբ. Ներրովթ այլ իրենները առաջ քշեց. «Եւ հասեալ երկոցունց կողմանց հրս» կայիցն ի միմեանս՝ ահագին զորպիւն ի վերայ երկրի տռնէին շահատակելով, և ահա պակուցանողս տարագուք յարձակմանցն սկսյալ զունքն զմիմեամբք հարկանէին : Անո ոչ սակաւք յերկոցունց կողմանց արք յովթանպամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի : Այս անգամ այլ Ներրովթ իր յուսոյն վրիպելով սկսաւ յետ քաշուիլ իր բուրբ, սպասելու յետամնաց զօրաց բազմութեան հասնելուն. Հայկն այլ նոյնպէս իր տեղը քաշուեցաւ. թերեւս գիշերն և յոգնութիւնն այլ կօ ստիպէին : Եւ թէպէտ այս դիպուածին մէջ այլ ինքն աւելի յաղթող սեպուեցաւ՝ ուշ ետ քաշուելով, բայց սպառաջն կու դժուարանայր. վասն զի իր նուազած գնդին նոր օգնական չկայր, իսկ Բելայ ետեւէ ետեւ կու հասնէին զօրքն. սրով սա աւելի վստահագոյն նորոգեց պատերազմը, Հայկն հարկաւ և իր սովորական սրտոտութեամբք յանձն առաւ. մանաւանդ որ հիմայ ինքնին Ներրովթ իր հսկայից զլուխ կեցած յառաջ կու յարձակէր : Հայկն այլ ուժով զէմ յարձակեցաւ բայց չկարցաւ. քշել այնքան բազմութիւնը, որ երթալով այլ կ'աւելնար և կու մօտենար իր բանակին. պէտք եղաւ որ շուտ շուտ յետ քաշուի, և տեսնելով հակառակորդը մօտեցած՝ նորէն դառնայ զէմ յարձրկի : Այս կերպ կռուին երկու կողմին այլ օգտակար կ'երեւար. Հայկիանց՝ ժամանակ շահելու և դիրքերնին փոխելու. իսկ Բելանց՝ երթալով մօտենալու անոնց. և թերեւս ասոնց աւելի շահաւոր կ'ըլլար, եթէ իրենք այլ նոյնպէս կանոնաւոր յառաջ երթային, և ոչ խառն ի խուռն արշաւանօք՝ որոյ օրինակն այլ անզգ սաստութեամբ տուաւ ինքն Բէլն Ներրովթ. որ Հայկայ իրաւ կամ կեղծ փախչիլը տեսնելով իր զօրացմէ յառաջ անցաւ իրեն զինակրան և քիչ մարդով, և կու ջանայր որ զՀայկն պաշարէ և ի ձեռք ձգէ : Հայկն այլ նախատեսութեամբ իրեններուն տպապրեց որ յետք կենան և զինքն ետեւէն պաշտպանեն, իր վրայ յանձն առնելով զէմ առ զէմ կռուին. որոյ ժամանակն այլ շատ չուշացաւ : Այնքան իրարու մօտեցեր էին երկու հսկայապետքն՝ որ երես դարձնեն՝ յաղթուիլ և կեանքը վտանգել էր. թէ և հիմակուան զրից մէջ այլ աւելի Հայկն վտանգեալ կ'երեւար, սակայն կանգ առաւ և կանչեց ահեղ հակառակորդին.

« Ի՞նչ կ'ուզես , ինչու ետեւէս ետ անկեր . շնա տեսներ որ ես այն »
 » Հայկն եմ աղեղնաւոր . միթէ կ'ուզես որ անսխալ նետերս թափեմ »
 » վրայդ » : — « Ջրեզ բռնելու եմ եկեր , կանչեց Ներսիսիթ այլ խրոխտա- »
 » նօք , բռնել , որպէս զի շրջայ թէ իմ կտրիճներս զքեզ սպաննեն : Իսկ »
 » քու աղեղդ ու նետերդ պահէ ' , որ երբ տանիմ զքեզ ի Բարեղուն հոն իմ »
 » շանցս հետ աղացս որոտրգութիւն ընես » : — « Բու բրածդ է շան գործ , »
 » կրկնեց , կ'ըսեն Հայկն , և քու ետեւէդ եկաղներուն . ուրեմն պէտք է որ »
 » կտայարճս պարզեմ վրանիդ » : Այս ըսելով սկսաւ հսկայաքայլ յառաջ գալ ,
 « և ունէր ի ձեռին իւրում զաղեղն որպէս հեծան հզօր մայրափայտեայ » :
 Մէկ մեծ և ծանրակշիռ գործողութեան մը որոշիչ վայրկեանը հասեր էր .
 Բէլ յաղթութեամբն գօցէ կեանքէն մեծ բան չէր վասարկէր , բայց Հայ-
 կայ յաղթուելուին թերես աշխարհիս հնագոյն ազգաց մէկն պիտի չի մնար .
 ուրեմն այս գործս ոչ երկու գիմամարտից կենաց և մահու խնդիր էր , այլ
 ազգի մը և ազատութեան , և այն ազգն էր մերն . եթէ մէկ կետի կամ
 մէկ թելի վրայ էր այն ատեն ազգիս բազին , այն կէտն լաւ գիտեր մեր
 ազգահայրն այլ , և իր երեքթեւեան նեախն ծայրը զրեր էր վստահու-
 թեամբ : Վստահ էր Բէլ այլ , բաց իրեն հսկայներէն , նաեւ իր ամուր
 սպասողինութեան վրայ այլ , զոր անթափանց սեպէր ի զինուց . վասն զի
 ունէր « ինքն գլխանոց ազուցեալ երկաթի , նշանաւորօք վերջիւք , և տախ- »
 » տակս պղնձիս թիկանց և միջաց և լանջաց , և պահպանակս բարձից »
 » և բազկաց . գօտեւորեալ զմէջսն , և յահեկէ գասին՝ երկայայրի , և նիզակ »
 » անարի ի ձեռին իւրում աջոյ , և յահեկումն վահան » պղնձի : Հայկայ
 սպասողինութիւնն չի պատմուի . աղեղնաւոր էր , ինչպէս իր որդիքն այլ
 միշտ անուանի աղեղամբ հազարաւոր տարիներ . և աղեղնաւորաց չէր
 վայլեր ծանր սպասողինութիւն . միայն կամար գօտին յիշուի հանդերձ
 օգտեալն՝ յոր կախէր իր վրիժուց և քաջութեան գործաւորները , իր մահ-
 արձակ կտայարճը : Այսպէս այլ բրաւ հիմայ՝ երբ բաւական մօտեցաւ
 Ներսիսիթայ գիմաց . ինք զինքն աղէկ զիրք մը գնելով , « գտեղի կալեալ »
 » պտարտասի ընդդէմ նորա (Բելայ) աղեղամբ , և կանգնէ զկտայարճսն »
 » ընդ գեանոյ ընդ ինքեան յօղս սկայօրէն կամարին . և ընդ գիրկս »
 » մտեալ զօրութեամբ , լի քարչէ պինդ զլայնալիճն , զիպոցանէ զերեք- »
 » թեւեանն կրծից տախտակին , ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ »
 » ընդ մտեղէն արձանն ի լուսանցոյցս արեգակնացայսս , և շեշտ ընդ »
 » մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի վտարեալ նեան . և »
 » այսպէս ճոխացեալն Տիտանեան՝ զաստուածակարծեալ հսկայն յերկիր

» զարկուցեալ փչէ զողին: Իսկ ամբոխն (նորա) անեալ զայսպիսի ահագին
 » գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր գէպ երեսաց իւրեանց» (Խո-
 թնացի — Սերիոս — Վրդ. Պամ.)¹⁹³:

Այսպէս բովանդակեն հին պատմիչք մեր Հայկայ գիւցազնական և ըստ
 մեզ՝ անգին գործն, վասն զի անոյ մեր ազգութեան ծնունդ եղաւ, և Բե-
 լայ այն հպարտ որսորդին և առաջին աստուածընդդէմ մարդոյ և զրկա-
 հար բոնաւորին կտաւրածք, որ ի հարկէ իր ազգայնոց կամ հետեւողաց
 պատմութեան մէջ լուռ և անյիշատակ է. ինչպէս Հոռովմայնացոց մէջ Հոռ-
 մուլոսի շարաշար մահը, զոր ծածկելով համբաւեցին յերկինս յաստուածո
 յափշտակեալ: Նոյնպէս ըրին և Բաբելացիք իրենց վեհագոյն առաջնոր-
 ւին, նախնիքն ընդ համաստեղութիւնս դասեալ, որպէս և մերք իրենց
 Հայկն, և յետ մահուան նոցա նախանձընդդէմք զնոյն աստղն իւրա-
 քանչիւր իւր զիւցազին անուամբ կոչելով, և անոր որսորդական ճար-
 տարութեան նշան գրելով մօտի շուն համաստեղութեան նշանն. իսկ յե-
 տին Բաբելացիք յայտնապէս իսկ աստուած ըսելով պաշտէին զՆերբովթ
 յանուն Բէլ կամ Բահալ, որով և մեծագոյն բան զամենայն աստուածո
 կամ բուն իսկ Աստուածն ճանաչէր. և յետ հազարաւոր ամաց նոր նորա-
 գոյն Բաբելոնի և ժառանգ հոգւոյ Ներբովթայ զոռոզն Նարուզդոսնոսոր՝
 կանգնեց անոր անդրին կոթողաձեւ 60 կանգուն բարձրութեամբ և 6 լայ-
 նութեամբ: Բայց ոչ հոն և ոչ յաստեղս, այլ Ներբովթայ ստուգագոյն
 պիրքն եղաւ Հայկայ նեախն սակ Հորգովայ հովտին մէջ, որ այս յիշա-
 տակաւ ըսուեցաւ Հայոց Ձոր. և այն բլրատափն յորոյ վրայ ընկաւ նա՝
 և իրեններէն շատքն, Հայկն անուանեց Գերեզմանակ, որ և մինչեւ նոր
 ատեններ կոչուէր Գերեզմանք: Չաստուածութեան կարծեաց անհաւանք,
 նոյնպէս և մեր պատմութեան, կամ թէ անգէսք՝ կ'ըսէին թէ Բաբելոնի
 աշտարակին կործանման ասեն՝ փլածին սակն ընկած և կորած ըլլայ
 Բէլ. արժանաւայել զրոյց, որ և մեզի այլ ախորժելի կ'ըլլար՝ եթէ մեր
 գեղեցիկ և պանծալի ազգային աւանդութիւնը շունենայինք. որ եթէ չափա-
 զանց այլ հոշակէ իր նախահօր ոյժը կամ ալեղնաւորութեան ճարտարու-
 թիւնը, հսկայի մը պղնձապատ սպառազէն մարմինը կողմէ կողմ ծակելով
 թափանցիկ և հանելով զսլաքն ի գուրս, յիշելու է որ հին ատեն սոյն-
 րական էր պատերազմաց մէջ նետահար մահն, նաեւ զրահազգնոս մարտ-
 կաց. իսկ նետին մատ մը աւելի կամ պակաս ներս մխուելն կամ գուրո
 եղնէն պատմութեան հիմը շաւրեր: Տեղական աւանդութիւն մ'այլ մինչեւ
 ցայսօր կու գրուէ թէ Բելայ մարմինը ի Հայոց ձորէն գէպ ի Բելու առ-

նեղու ատեն՝ Ոստանայ և Նարեկայ միջոց տեղ մը իջուցին, և նետը որ գեւ կրծոց մէջ մխուած էր՝ դուրս քաշեցին կոնկէն, անանկ որ կողմէ կողմ մարմինը ծակուած՝ արեւու լոյսն միջէն շողաց, և անոր համար մինչեւ ցայժմ այն տեղի գեղն կ'տնուանի Տշող: Որչափ այլ անհասարակ կամ ծիծաղելի են այսպիսի ամենաթիւնք, այնքան սիրելի է ազգայնոց հին ժամանակի յիշատակներ կամ ամենաթիւններ պահելն: Իսկ ստուգախնդիր պատմութիւնն Ներքովթայ գիտական համար կ'ըսէ, թէ Հայկն դեղիրով օծել և զմեզ աուաւ, և խաւրից իր բնագաւառը ի Հարբ, « և թագել ի բար- » ձրաւանդակ տեղուջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց»: որք այն տեղ մնացեր էին, մինչդեռ ամենայն կարծեք Հայկայ հետ ի պատերազմ գնացին: Այն՝ և գեւ ետեւի հին ատենուան սովորութիւնն էր մեռեալ- ները (գոնէ նշանաւոր անձինք) բարձր տեղուանք թաղել, թէ շէնքերու և թէ բնական բարձանց. Բելայ բուն թաղուած տեղն անյայտ է, ետքի ատեն սահմանուած բուն Հարբ գաւառին մէջ էր, թէ առաջին ատեն ընդարձակ էր Հարբայ անունն, և գուցէ Ներքովթայ ընտն այլ անոր սահման սեպուէր, և հոն թաղուած ըլլայ. բայց անշուշտ ոչ ի Բելու գիւղն, ըստ նստալիշեալ ամենաթիւնն ուսմիին, այլ հաւանօրէն Հայկայ դաստակերս ատն մօտ ի Հայկաշէն, ուր էին իր ընտանիքն:

Պատերազմէն և Բելայ մեռնելէն ետեւ Հայկեանք ի հարկէ փախուտականաց ետեւէն ընկան, գոնէ ինչուան Արարադայ և Ասորեստանի անջրպետ ընտները, և անոնցմէ աւար առին շատ ձի, ուղտ և ջորի. և ինչուան որ բուրովին Բելեանց վրէժիմագրութեան կասկածն չվերցաւ՝ առաջին բնակութիւնն չպարձան. իսկ այս վրէժիմագրութիւնս տարակուսական է, վասն զի անով հրապարակաւ խոստուլանել մը կ'ըլլար Բելայ խայտառակամահ սպանուելուն և Հայկայ յաղթութեան: Բայց այս այլ ստոյգ է որ Հայկն ժամանակ մը կեցաւ մեծ պատերազմին եղած ձորը, հոն տեղուանքն այլ շէնքընելու և յիշատակարաններ թողլու, որոց գլխաւորն եղաւ իր բանակին ճակատած տեղը դաստակերս մը, զոր և իր ուրիշ ձեռագործաց նման անուանեց ՀԱՅՔ, յանուն իւր և ազգին, որոյ տեղն է անշուշտ Ձորոյն հիւսիսակողմը, և անունն պահուած մինչեւ հիմայ Խեքոց վանքով (Հայք = Խեք). որոյ մօտ է այն երկայնանիստ ընտնաբլուրն այլ՝ յոր հասին նախ Հայկեանք և ուսկից « ի վեր գերեսս ամբարձեալ՝ երեւեցաւ » նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբարձոյն Բելայ, ցան և ցիր յան- » գուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով»: բուր ընտնագազաթն պարտաով պատած է, և մինչեւ հիմայ մնացեր են 3-4 կարգ անհիւսկ

մեծամեծ քարերն, շատն այլ փլած կամ փլուցած լեռնէն վար թափած. քարանց տաշածութիւնն կամ ողորկութիւնն թերեւս կիկլոպեան ըսուած հնութիւնը չի ցուցընէ, բայց տեղացեաց յիշատակն զայս այլ հաստատէ Հայկայ Բերդ ճանչնալով և անուանելով. որ ի հարկէ զանազան ատեն նորոգուած և քակտուած է բնութեամբ կամ բնութեամբ. մէջն միայն քարափոր ջրամբարի նման փոս մը կայ, որ անշուշտ ի Հորդոմայ կ'առնուր իր ոգեպահ ջուրը՝ թշնամեաց վտանգի ատեն, ինչպէս որ ուրիշ շատ հին Հայոց բերդերու մէջ այլ կ'երեւի այս, և ազգային վարդմի և կարեւոր ճարտարապետութեան արձան մ'ըլլալով՝ քննութեան արժանի է. մանաւանդ այս Հայկայ բերդս իր սահմանօքն, որոյ համար արդէն հին գրաւոր աւանդութիւն մ'այլ (Գիւանք Աղթամարայ) կ'ըսէ, թէ ի բնակել Հայկայ հոս՝ « ազդեցութեամբն Աստուծոյ շինեցին զմեծ Բյուրն անառիկ բերդ ի յահէ » թշնամեաց». և կ'աւելցընէ այլ թէ « եկին ի վերայ նոցա այլազգիք », որոց անունն ջնջած է բնագրին մէջ. և այս առթիւս կ'ըսէ աւանդողն, աղեղն երեսցաւ Հայկայ յերազի, և անով հալածեց զթշնամիս:

Ուրեմն կարեւոր էր Հայկայ հոս ուշանալն, միանգամայն և երեւի թէ միայն Բեւայ սպանմամբ չհաստատեց նա իր տունը և ազգը. այլ և ուրիշ հսկայագործ կամ զինուորային քաջանութեամբք, զոր ծածկեց մեզմէ ժամանակն, և թերեւս զեռ յայտնուին: Այո բերդս որ Հայոց Չորոյ շինուածոց զլուխ և սլակն էր, կամ ինքնին Հայկն կամ իր որդիքն ի յիշատակ այն մեծամեծ գործոցն՝ որով իրենք քիչուորք՝ շատերուն և զժուարութեանց յաղթող եղան, գերագոյն նախախնամութեան երախտեօք անուանեցին Աստուածաշէն. վսեմագոյն զրեթէ և հնագոյն անուն շինուածոց յերկրի մերում, բարեբաղդաբար և մնացեալ մինչեւ ցայժմ՝ թէ ոչ բերդին վրայ՝ այլ մօտ անոր յարեւելակողմն գեղին վրայ, որ զեռ շէն է և հայաբնակ. արդեօք և այն Հայկայ ընկերաց ուղղակի սերունդք են, որոց համար ասէ վերոյիշեալ գրաւոր աւանդութիւնն թէ « Եւ յետ նորա (ի) զարմիցն » մնացին ի բերդն Աստուածաշինայ »:

Որքան խոր հնութիւնք և սրբան խորին քննութեանց պէտք, յառաջ քան զստուգել որչափ բան որ կրնանք մեր ազգահօր վրայ ստուգել, և մանաւանդ յառաջ քան զմերթել զամենայն աւանդութիւն քաջահին՝ իբրև զառասպելս զիւցաբանութեան Հելլենաց կամ այլոց: Այսքան յիշատակաց մէջ (թողլով զաղեղան երտգատեսութիւնն), թէ և փիլիսոփայական հաւաստիք մը չըլլայ իրաց, այլ և ոչ փիլիսոփայական անտեղութիւն մը կամ հրաշախառն բաներ կան, ինչպէս շատ հին ազգաց ծագման և պատմու-

Թեան սկզբանց մէջ . և եթէ կային մեր հին հեթանոս նախնեաց մէջ այլ աշխարհի զրոյցք և առասպելք , մեր քրիստոնեայ հարքն զանոնք թօթափեցին և սառցք կամ ճշմարտանմանք զտելով աւանդեցին , զայս այլ խնդութեամբ կ'ընդունիմք , որ այսքան բաներ օտոյգ ճանչցուած են մեզմէ հմտա և բարեպաշտ անձանց գատմամբ : Բայց ունիմք մեծ և ուսումնական փառս մ'այլ , թէ ոչ պատմութեան այս կարեւոր պարագայից , զոնէ անոր ժամանակին կամ տարեթուին . որ և նոյնպէս պանծալի յիշատակ և առաւելաշնորհք մ'է ազգիս , ինչպէս ազատութեան կամ ազգութեան ձեռնաշին : Այս փառս է Հայկոյ Շրջուհե կամ Թուակահե , զոր մենք ուրիշ անդ մանրամասն բացատրեր եմք , բայց հոս իբրև բնիկ աղբրը քով ըլլալով , զոնէ համառօտի պէտք չէ զանց առնեմք ըսելու , որ եթէ Հայկ , ըսա կեդակարծ աւանդութեան իր յԱրարազ հասած օրն տարեգրութի դրաւ , ստուգապէս Բելայ յաղթելով իր Թորգոմազանց ազատութիւնը ապահովելն այլ թուական մ'ըրաւ , ինչպէս որ կու վայլէր այնպիսի մեծ դիպաց . և եթէ ոչ Հային՝ զոնէ իր որդիքն պէտք էր այնով հաշուէին իրենց ազգային տարիքը . և այնպէս այլ ըրին և կ'ընեն մինչև ցայժմ , թէ և չգիտաբար կամ մոռացութեամբ պատճառին : Մեր պատմչաց մէջ միայն Յովհ . Կաթուղիկոս կու յիշէ այս հին գործոյ և ժամանակին թուական մը , որ ըստ մեզ ոչ է ստոյգ , այլ շատ մօտ ի ստոյգն . ի Հայկայ մինչև ի թագաւորելն վաղարշակայ 2297 տարի կու գտնէ , որ է ըսել 2446 տարի մինչև ի Քրիստոս (սեպելսով զվաղարշակ թագաւորեալ 149 տարի նախ քան զՔրիստոսի թուականն) : Եթէ Բելայ մահուանէն վերջի դիպուածէ մը սկսի ոտ Հայկայ թուականն՝ խօսք չունիմ , բայց մեր ազգաւոր թուականն կու վայլէր սկսած ըլլալ այն մեծ գործէն , և է իսկ այնպէս . իսկ այս թուականս է 2492 տարի նախ քան զՔրիստոսի թուականն . որ մեր ազգային ժամանակագրութեան բեւեռն ըլլալով՝ պէտք է լաւ ճանաչել և հաստատա բռնել . և որոյ երկու մեծ հաւաստիք ունիմք՝ մէկն պատմական , միւսն ուսումնական : Պատմականն է Ափրիկանոսի և Եւսեբեայ քաջ ժամանակագրաց հաշիւքն՝ որ նախնի Բարեւացոց և անոնց յաջորդ Ասորեաանեայց , Մարաց և Պարսից թագաւորութեանց տարիները մանր մանր գումարելով , Քրիստոսէ ինչուան Բելայ թագաւորութեան վերջի տարին կու հանեն այս յիշեալ թուականս 2492 տարի : Իսկ ուսումնական կամ շափաբերական փաստերնիս մեր ազգային ծանօթ ժամանակագրութենէն կ'առնուիմք , որ Հայոց բոսական կ'ըսուի . և ամենուն յայսնի է որ հիմայ (1864) անոր 1313-4 թուին մէջ եմք . ըսել է որ սկսեալ է սա յամի

Տեան 552, երբ տօմարի մանաւանդ թէ տօնացուցի նորոգութիւն մ'եղաւ ի Հայս. իսկ այն թուականին առաջին ասուոյն սկիզբն այլ՝ այսինքն առաջին օրն՝ եղբր է յուլիսի 11 (552 ամին Քրիստոսի): Այսպիսի տարեգլուխ՝ անկանոն անյարմար բան մ'է, եթէ կարեւոր պատճառ մը չունենար. պատճառն այլ այս է՝ որ տօմարպիւրքն կամ ժողովն Դունայ՝ միայն նոր թուական մը հաստատեցին, բայց հին տօմարը ասուոյն սկիզբն չփոխեցին, վասն զի ուսկաց մեծ շփոթութիւն կ'ըլլար, որք յանյիշատակ ժամանակաց աննահանջ և փոփոխական արեգակնային տարիներով հաշուէին իրենց ժամանակը. սակայն գիտունք և մանաւանդ կրօնից պաշտօնեայր՝ զոնէ տարւոյն եղանակաց վրայ սահմանեալ տօները ճիշդ կատարելու համար պէտք էր հաստատուն տօմար մ'այլ ունենային. այսպէս մեր ազգն այլ ունէր, և նման Եգիպտացոց, անշուշտ և հին Քաղզէացոց, որք հաստատուն աստեղարաշխական կէտէ մը սկսեալ էին թուականին, այսինքն աստեղ մը, և սովորաբար շնիկ աստեղ բարձրագոյն կէտին վրայ եղած ատեն արեւուն գիրքը և տարեգլուխը զուգելով, ինչուան որ նորէն նոյն բարձրագոյն կէտին զուգէր արեւն և տարեգլուխն՝ մէկ շրջան մը սեպէին, և անտանէին Շեկան շրջան (Սորիական ըստ Եգիպտացոց, կամ Մենոֆրեան տարի)¹⁹⁴. որ է 1460 արեգակնային (այսինքն 365 ¹/₂ օրեայ) տարիներու, և 1461 աննահանջ (365 օրեայ) կամ շարժական տարիներու¹⁹⁵: Այս հաշուով կու գտնեն Եգիպտացոց շրջանաց և թուականաց սկիզբն. այսով այլ մենք զմերս գտնեմք. վասն զի արդէն մեր տօմարին մէջ երկու տեսակ թուական նշանակեմք, մէկն հասարակ և Հայոց թուական ըսելով, զոր ի վերն յիշեցի, միսն Յայսմատարաց կամ Սարկասագայ ըսելով. այս եաքինս է անշարժ արեգակնային տարիներով չափած, և մեր գիտուն տօմարագիտաց ծանօթ է Հիւն Հայ անուամբ: Արդ մեր շարժական թուականն որ անդադար կու համրուի, հարկաւ ժամանակի որոշեալ կէտէ մը սկսած է, զոր ինքն իրեն գտնելն գժուար է. ըսել է որ այն կէտն է նաեւ անշարժ տօմարին սկիզբն, կամ պարզ եւս ըսելով, եղած է ժամանակ մը որ երկու տեսակ տարեաց գլուխքն այլ նոյն մէկ օրը սկսած են, թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական նաւասարգն (տարեգլուխ) մէկ են եղած: Հիմայ մեր երկու տեսակ տարեաց զուգութեան կէտն կամ տարին փնտռելու ըլլանք՝ կու գտնեմք ո՛չ յամի 552 (յորում սովորական թուականս մեր հաստատեցաւ), այլ յամի Տեան 428, ի վերջանալ Արշակունեաց թագաւորութեան և ի ժամանակի Թարգմանչաց մերոց. բայց արդէն ասոնց գրուածներէն յայտնի է որ անկէ առաջ այլ այս շարժական և անհաստատ

տարւոյ կիրառութիւն կար, և այն տակն չէ հաստատուած այս Շնկան շրջանն ի Հայոց, և ոչ շրջան մ'այլ առաջ, որ է ըսել 1032 տարի նախ քան զՔրիստոսի թուականն, զի այս տակն ոչ մեր ազգին և ոչ մեր գրացեաց մէջ նշանաւոր գէպք մի չի յիշուիր. այլ եթէ շրջան մ'այլ ի վեր ելնենք՝ կու հասնիմք Քրիստոսէ առաջ 2492 տարւոյն, որ է վերը պատմութեան ցուցած Բելայ սպանման տարին և մեծի ազատութեանն և ազգութեան Հայոց ի ձեռն քաջին Հայկոյ. որ և թուի թէ ինքնին, որպէս նախ ըսինք, հաստատեց այս տարին թուագրութիւն իր ազգին ժամանակագրութեան, և արեգակնային սասոյդ տարւով կանոնաւորեց. յետն գի հին տօմարն այս կանոնաւոր տարւոյն համար կ'ըռէ Հիւ Հայն. և դարձեալ ուրիշ քաջահմուտ տօմարագիտէ մը (Սարկաւազ վարդապետ) գիտեմք, որ Շնկան շրջանն ծանօթ էր Հին Հայոց և անուանէր Հայկայ շրջան. բայց ինչպէս Եգիպտացիք¹⁰⁰, Քաղպէացիք և Հրեայք և այլք՝ քաղաքական կամ առական օրինօք արեւուն տակերեւոյթ շարժմունքը գիտելով շարժական տարւով հաշուէին հասարակօրէն, այսպէս և մերազգիք (մինչև ցայժմ ըստ Հայ թուականին). իսկ հաստատուն տարին քահանայից և գիտնոց ծանօթ էր, այլ հրապարակաւ չէր ի գործ ածուէր. այսպէս վարուեցան մեր նախնիքն այլ ինչուան Քրիստոսի 122 թուականն, յորում Արտաշէս Բ Հայոց հին տօմարը ուզեց Հռովմայեցոց տօմարին յարմարեցնել և հաստատուն տարիներով վարիլ, և թողուց Հայկայ շրջանը. բայց թէպէտ ուրիշ գրած կարգերէն ոմանք մնացին, այլ տարէթուին հին սովորութիւնն անփոփոխ մնաց հասարակաց մէջ, ինչպէս անկէ ետքն այլ, և դեռ հիմայ այլ այնպէս հաշուի և նշանակի թուականն Հայոց: Արդ Հայկայ շրջանին կամ հին հայ տօմարին տարեգրութիւն կամ նաւասարդն միշտ զուգի ընդ 11—23 օգոստոսի (ըստ Յուլիան և Գրիգորիան տօմարաց), որ է անպատշաճ տեղ մը եղանակաց մէջ, և պատճառն յառաջ նշանակեցինք ըստ անուարանից մերոց՝ թէ Հայկայ յԱրարազ մտած օրն ըլլայ, որ էր ասին 13 օգոստոս. և հանդիպի 2450—2497 տարիներուն միջոց նախ քան զՔրիստոս: Սակայն եթէ լաւ գիտենք մեր հայ ամսոց սկզբնաւորութիւնքն, արեգական ամիսն Արեգ՝ կու հանդիպի ճիշդ և ստոյգ զարնային հասարակածին օրը, մարտի 9 = 21. որ է արդարեւ բնական տարեգրութիւն, ուրից կու ջանային սկսիլ նաև Հրեայք, Պարսք և ամենայն կիրթ և բանգէտ ազգք կամ ազգապետք. և մեր տօմարաց մէջ մինչև ցայժմ նշանակեմք այս գեղեցիկ, ճշմարիտ և հնութեամբ պանծալի կարգաւորութիւնը, զժբարդաբար առանց գործածելու և օգտելու: Գանէ ճանչնանք մեր հին նախնեաց գիտութիւնը և արդիւնքը.

որոց առաջին և հեղինակ ինքնին Հայկն վկայի ի հին սօմարագրաց մե-
րոց. ոչ միայն արեղականային շրջանին իւր անուամբն կոչուելովն Հայկայ
շրջան, այլ և հին աւանդութեամբ ազգայնոց, թէ Հայկն դրած ըլլայ տար-
ւոյ և ամսոց կարգերը և անունները. և ազգիս աստուածաշնորհ պարգեւաց
մէկն այլ ըլլայ այս կարգաւորութիւնս, մինչեւ մեկնիչն հին սօմարագրու-
թեան Հայոց ըսէ. «Չարժուեմ ամսոց Եբրայեցեաց և զանշարժութիւն հայ
» ամսոցդ սահմանեաց Բարձրեալն. զի հաւասա և զիր և տուամար՝ այս
» երկու ազգիս միայն ետ Աստուած, և այլոց ազգացդ մարդկան են արա-
» ռեալ... զՏումարս՝ անդ Մովսէս. աստ՝ Հայկն յառաջ քան զնա»: Նոյն
դարձեալ. «Թառաջ քան զՄովսէս ոչ ուրեք էր գիտութիւն արուեստիս,
» բայց միայն ի Հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս. քանզի ասեն
» թէ ի ձեռն Հոգւոյն որ ազգէր ի նահապետան՝ Հայկն առաջին նահա-
» պետն Հայոց՝ զամիսքդ կարգեաց, և զանուանս ուտտերաց և զստերաց
» իւրոց ամսոցդ կոչեաց»: Առաջին աւանդութիւնն որ և ի հնագոյն
գրուածի է, այլ աւելի հնագոյն և սիրելի կարծիք և համարումն կ'ընծայէ մեր
նախնեաց առ նահապետն իւրեանց Հայկն. իբրեւ ոչ միայն քաջութեամբ՝
այլ և գիտութեամբն և բարեկարգութեամբք հայր և հեղինակ ազգին: Իսկ
երկրորդն, այսինքն ամսոց անուանքն ըստ Հայկայ զաւակաց կոչուած ըլ-
լալուն, աւելի շատոց զրոյց է, ոմանք՝ ինչպէս հոս յիշած հեղինակս (վա-
նական, վարդան), նոյն իսկ Հայկայ կ'ընծայեն այլ անուանադրութիւնը.
Իսկ այլք՝ աւելի պատշաճապէս, թէ «Հայկ ել որդւոց և զստերաց իւրոց
» անուանս, զոր առեալ Հայոց զանուանս ուտտերաց և զստերաց նորա՝
» եղին ի վերայ ամսոցդ, վասն մեծարանաց հօրն, և են այսոքիկ Նա-
» ռասարդ և Հոս և Մաւմ և Մեհեկ և Արեգ և Մարեդ, զստերք էին Հայ-
» կին. իսկ Տրե և Քաղոց և Արաց և Հրոտից որդիք էին Հայկին. իսկ
» Մարգաց և Հարոսան՝ զոր այժմ Անկի կոչեն, զայսոցիկ ի գործոյ առին
» զանուանս»: Ուրիշներն օտարեր կերպով կ'ըսեն. ինչպէս վանական
սոռաջին եօթն ամսոց անուններն Հայկայ արու զաւակացն սեպէ, յետոյ
երեքն՝ զստերաց, իսկ Մարգաց և Հրոտից ըստ եղանակաց սարուոյ. բայց
իւր կարծիքն է թէ «Ստուգապէս ամենայնով ի վերայ յեղանակացդ» տարւոյն
յարմարեալ է: Այսպիսի քննութեան տեղն հոս չէ, բայց ի հարկէն բե-
րուած մեր կարծիքն այլ ըսեմք համառօտիւ, թէ անհաւանական չէ որ ի
սկզբան Հայկայ զաւակաց և ուրիշ գիւցազանց անուանքն գրուած ըլլան
մեր ամսոց վրայ, բայց հիմայ յիշուած անուններն չեմ կարծեր նոյն.
բայց գուցէ Հոս ըլլայ խոս ծանօթ որպիսի Հայկայ, այլ հաւանագոյն երեւի
յետոյ գիցաբանական և աստղաբաշխական սկզբամբք գրուած ըլլալ:

Իսկ իօսք մ'այլ Հայկայ որդոց թույն վրայ բռնելով, պատմիչք եօթն գուտար յիշեն առանց անուտն, հինգ այլ արու. Բեկայ գէմ ճակատամարտին մէջ այլ յիշուեցան հինգ որդիք Հայկայ, յանուանէ Արմենական միայն. իսկ պատմութեան մէջ յետոյ յիշուին և Խոս և Մահաւազ : Թերեւս այս յիշեալ երկուստանից թույն յարմարցուցին աւանդաբանք և ամարագիրք երկուստան ամոց անուանին :

Այս ամէն միջանկեալ զրոյցներէս մեր բնդունած հետեւանքն է նախ, որ Հայկն որպէս ազգապետ և կարգապիր, միանգամայն և հմուտ նահապետական օրինաց, իբրև սրբազան կարգ մը սեպած էր տօնից և յիշատակաց և աւուրց հաստատութիւնն այլ, վասն այնորիկ և առջին Տօմարադիր ըսուեցաւ . որ և պատճառաւ իր ցեղազարմութեանն (ի Յարեմայ) Յարեթական տոմար ըսուեցաւ¹⁹¹, ըստ մերոց տօմարաբանից : Երկրորդ՝ զի Ներքովթայ յաղթելուն աարին թէ ինքն և թէ իր յաջորդն ազգային թուական մը սեպեցին, և զլուս արեգակնային շրջանին, որ նորա անուամբն ըսուեցաւ Հայկայ շրջան, և որոյ սկիզբն է նախայիշեալ 2492 ամն նախքան զՔրիստոսի թուականն . ապա ամենայն իրաւամբք կրնամք և պէտք է մեր ժամանակագրութիւնն և ազգային թուականն սկսանիլ այս տարիէս, որ և յեա Հրէից՝ ամենէն ստուգազոյն, հնագոյն, նուիրական և պանծալին է ի թուականս ազգաց. յիրաւի ուրեմն պարծի հին տօմարագիրն մեր այս հնութեան և առաջնութեան վրայ :

Բայց պէտք է այս խնդիրներէն թօթափիլ և նորէն զՀայկն գտնել, իր յաղթանաց Զորէն գուրս . ուսկից՝ պատմութիւնն կու գրուցէ որ՝ զարձալ յառաջին տուն նահապետաց, ի ժառանգութիւնն կազմուսի, զոր Ներքովթ գրուեր էր, և ուր թերեւս կային բռնացեալ Բարեւաջիք, զորս հաւածեց. և անշուշտ հոն այլ ամրոցներ շինեց, և երկար ատեն այլ բնակեցաւ յապահովութիւն աշխարհին, վասն զի սահմանակից էր թշնամոյն երկրին հետ : Խորհնացին այլ յիշէ այս բանս, բայց վերջը նորէն ի Հարք զարձալ կ'ըսէ, ի բնագաւառն իւր, և հոն այլ կարծեցնէ անոր վախճանն . իսկ միւս հին պատմիչն ընդ հակառակն ի Հարք երթալն ոչ յիշէ, այլ և որոշակի կ'ըսէ թէ հաս յառաջին տունն Արարատեան բնակեցաւ, և մեռնելու ատենը առաւ ի ժառանգութիւն կազմեայ, որպէս յառաջն, իսկ իր անգրանկան՝ Արմենակայ, պատուիրեց որ երթայ իր բնարած և ստանը հաստատած տեղը, ի Հարք գաւառն : Երկուքին ըրածն այլ համաձայնի այսպէս. ի Հայոց Զորոյ եկաւ Հայկն ի տուն կազմեայ, բնակեցաւ որչափ բնակեցաւ, և Բեկայ աւարներէն մեծ մաս մը հոն թողուց՝ կազմեայ,

միանգամայն և կարիճ մարդիկներ « յուրոց ընդոծնացն արս անուանին » . որպէս զի թէ պէտք ըլլայ՝ Բարեւոյնաց զէմ գնէ . և ինքն գնաց իւր տիրական տեղը , ի Հարք : Բայց յետ ժամանակաց որ և է պատճառաւ՝ դարձեալ ի տուն Կապմեայ եկած է (ինչպէս թերեւս շատ հեղ տյլ գայր) , և հոս այս սրբազան և սրբազիր Արարողեան երկիրը , ուր որ ծներ այլ էր ընդ առաջին որպիս և թոռունս Նոյի , ուր թերեւս անոնց շատերն թաղուեր այլ էին , ուր թերեւս ինքն իսկ Նոյ . հոս և ազգահայր մեր Հայկն կնքեց իր նահապետական (իրբ՝ 400ամեայ) կեանքն , իր 50 տարի մը յետ մեծի պատերազմին և սպանման Բեւայ . և եթէ վերոյիշեալ Յովհ . Կաթողիկոսի թուականը սեպեմբ 2446 տարի նախ քան զՔրիստոսի թուական , որ է 477 տարի Շրջանին և թուականին Հայկայ , թերեւս վերջին ըլլալով Նոյեան պայազատաց՝ որ այն երկրորդ մարդկութեան ընդ նաստան բնավայրը՝ յԱրարող բնակեցան ու մնացին . և որոյ մօտ հաւանօրէն կային դեռ իբրևս զբակիցք՝ Սեմայ պայազատքն այլ , մինչև յԱրարահամ նախահայր Հրէից :

Հայկայ այս նահապետաբնակ և յաւերժայիշառակ երկրին մէջ վախճանիլն՝ նոր հաւաստիք մ'այլ կրնայ գրուիլ իրեն ընծայուած ուղիղ աստուածապաշտութեան , որոյ վրէժինդիր և ջատագով կեցաւ ընդդէմ Քամեանց և Բեւեանց . և զոր ազնուագոյն ժառանգութիւն թաղուց իր ազգին , որք ընդ նախահարց Արարահամու՝ Նոյի հաւասարը պահէին , թերեւս մինչև այս մեծ նահապետին տտեն , երբ ասորապաշտական համայութեան շոշորդ մը կու յիշուի Հայկազանց մէջ : Ասոնց աստուածապաշտութեան հոս յիշելու արժանի հաւաստիքն այլ այս է որ ամենեւին Հայկայ պաշտօն մատուցանել կամ աստուած ճանչնալ յիշուած չէ մեր պատմութեան մէջ , ինչպէս որ յետոյ ուրիշ քանի մը զիւցազանց համար յիշուի . իսկ համաստեղութեանց մէջ վասեչն զՀայկն՝ յետ ժամանակաց կ'երեւի , որ թէ և մուր սկզբամբ ըլլայ այն աստեն , կամ ի հակառակութիւն Բարեւոյնաց , հիմայ որ այլ սնոտի կարծիքն հեռացուց մեզմէ ճշմարիտ Աստուած Քրիստոս , կ'ուրախանամք մեր ամենարժեայ ազգապետը երկնից լուսաւորաց մէջ անուանել և տեսնել իւրանուն պայծառ աստղը , և շնորհակալ եմք մեր սրբազան մատենագրաց այլ որ զայլ անկորուստ աւանդեցին ի թարգմանութեան Աստուածաշունչ գրոց մուծանելով : Այս առթիւս յիշեմք որ մեր աստղաշխական կամ տօմարական գրոց մէջ երբեմն Հրատ մուրաբակին տեղ այլ Հայկն ըսուի . կայ նաեւ Կշիս համաստեղութեան տեղ այլ Հայկն ըսուած . ինչպէս երբեմն այլ Հայկն և Շամփոս նոյնանիշ համարի . իսկ

Շամիրով թուի Սայլ համաստեղութեան մօտը կամ մասն իմանալ : Այս ամէնս այլ ցուցքնն որ երբ ախտարաց պաշտօն մտաւ ի Հայս , և ըստ օրինակի այլոց՝ ազգային դիւցազունքը յերկինս դասաւորել ուզեցին մե-
րայինք , նախ և ի վեր քան զամենայն զՀայկն պատշաճեցուցին հոն : Թե-
րևս Հայկայ ըրած սոմարական կամ ասոնական ինչ ինչ կարգաւորութիւնքն
այլ (զոր յերեցինք վերը) այս բանիս աւելի պատճառ սուտած ըլլայ . և
զայս այլ Հայկայ թողած կամ իրեն ընծայուած բարի յիշատակաց մէկն
պէտք է ճանչնամք :

Ամենէն զլիւսուոր յիշատակն և երախտիքն այլ է իր սերնդոց տալ և
տպահովել ազգային ազատութիւն և իրաւունք , զոր նահապետական օրէնքն
և աստուածախառն բաժանումն բարեխական դաշտին տուեր էին մարդկան ,
և զոր Ներսիսի կ'ուզէր վերցնել : Արդ այն ցանկալի իրաւանց և ազա-
տութեան , որոյ վրայ միշտ և առուել եւս մեր ժամանակները խնդիր և
կոխ կ'ըլլայ , առաջին քաջ և յաղթօղ նահապետ պատմութիւնն հոշակէ
զՀայկն , ի մեծ պատիւ իր ազգին , թէ և դժբաղդարար իր յետին սերունդքն
շատ ասնն զրկուեցան ինքնազլխութեան շնորհքն : Ինքնազլխութեան
անհրաժեշտ հարկաւոր է ինքնուրոյն օրէնք և քաղաքական կարգք , մա-
նաւանդ այնպիսի ստիժով ազգ կամ աւերութիւն մը ձեւացնողին պէտք է
որ թէ առանին բարեկարգէ , և թէ զրոհեցոց դէմ զգոյշ և ապահով պա-
հէ . ուստի անտարակոյս է թէ Հայկն այսպիսի կարգեր և զգուշութիւններ
զրու . և պատմութեանս կարգին բերած քիչ շատ յիշատակքն իրեն պա-
տերազմական հմտութեան , բնակութեան և ամրութեան շինուածոց , յիշա-
տակարաններ ամբառնալուսն կրնան վկայ ըլլալ այս բանիս : — Առտնին
վարչութեան կամ պայազատական օրինաց մէջ այլ դիտելու է՝ ժառան-
գութեան ստորքը . որ թէ Հայկայ և թէ իր սերնդոց պատմութեանն կ'ե-
րեւայ , որ նախ անդրանկութեան իրաւանց մեծ պատկառանք ունէին . ա-
նուտէրն կամ նահապետն երբոր որդիքը մեծնային և որդւոց տէր ըլլային ,
իր սահմանաց մօտ տեղուանք կու սփռէր զանոնք , անդրանիկը քովը պա-
հելով . ընդ հակառակն կ'երեւի թէ (շատ հեղ) իր զստերաց ընկերները
իրբեւ տուն—փեւայ իր մօտ կ'առնուր : Երբոր խիտտ բազմանային հայրենի
տան մէջ , նահապետն ինքնին կու հեռանար անկէ՝ նոր տուն մը հաստա-
տելու , որ և իր անդրանկան նոր ժառանգութիւն պիտի ըլլար , իսկ առջի
տունը կրսեր որդւոց կու արուէր . մինչեւ առ յետագայս այլ մնաց այս
սովորութիւնս , ինչպէս յիշէ Մխիթար Գոշ ի դասաստանագիրս իւր . « Զտուն
) հօր՝ կրսեր որդւայն սովոր են տալ » (Գլ. ՃԶ) :

Հայկայ ուրիշ յիշատակ կամ արձան չի գտուիր , որպէս ի սկզբան

ըսինք, բայց քանի մը համառոտաբան պատմչաց աւանդածն. բայց թէ հին ատեն երկայն սեղեկութեամբք գրուած էր իր դիւցազնական քաջագործութիւնն, և թէ անգիր զրոյցներ այլ կային, զայն այլ յիշէ պատմութիւնն. և բառագրոց մէջ մնացեալ քանի մը առողք պատմականք¹⁹⁸ (զոր ի կարգին խաննեցինք) վկայ են թէ նախնիք մեր անտարբեր չէին իրենց արժանաւոր աննման ազգաւորն. և անշուշտ իրենց վիպասանից երգոց մէջ պէսպէս այլաբանութեամբ ստոյգ և սուա զրոյցներ այլ կար Հայկայ վրայ, զոր յետոյ ժամանակին երկարութեամբ իրարմէ ընտրել չկարացին ոմանք, և այնպէս խաննեցին իրենց գրուածոց մէջ, որոց համար ըսէ Խորենացին, « ի բայ բանից և անժճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ »¹⁹⁹ :

Յայտնի է որ ազգն՝ ամէն բանէն աւելի իր նահապետին վրայ մեծօգուտ քաջութիւնը կու գիտէր և հիանայր, իբրև գերմարդկային իմն շնորհք և զաղափար ուժոյ և վայելչութեան, միանգամայն ասել զիւցային աստուածախան իմն անձն և օրինակ. այնպէս որ զրեթէ Հսկայ և Հայկ ըսելն միանայ ի միաս նախնեաց մերոց քաջասիրաց. ըստ այսմ և հին ընտիր գրիչք մեր՝ ազգային ոգւով և լեզուով փոխանակ մեծամարմին հսկայի կ'ընեն Հայկաւսփ (Փիլ. Լին. Ագաթ.). անհնարին ուժով ըրած բանին՝ Հայկաբար, զոր օրինակ Ագաթանգեղոս Տրդատայ համար ասէ. « Առեալ » Հայկաբար զուրթ արձանսն ի վերայ ուսոց ». ուր կրնայ և կարծիս այլ սալ թէ Հայկն այլպիսի գործ մ'այլ ըրած ըլլայ, այսինքն մեծամեծ քորեր շարժած, վերուցած, ձգած, ինչպէս յունական հսկայքն այլ: Անվախ և կտրիճ քաջը կոչեն Հայկասիրտ (Թ. Արծր.). թերեւ Հայկայ վայելչութիւնն այլ իրեն նուիրեալ աստեղ հետ խաննելով, գերազանց իմն յանդգնութեամբ, սրբազան անձն մը՝ որ միայն կրնայ այսպէս անվախ յանդգնել՝ զամենաշնորհ Աստուածածինն իսկ կոչէ Հայկանման ի պատրուակն Հայկին խորհրդարանելով զսորբ և Քրիստոսածին որովայնն: « Գարբիէլ յաւետուտ » թութիւն առաքեալ Հայկանման կուսին, երջանիկ և երանելի տիրուհւ » լոյն, հրեղէն թեւօք սաւառնեալ, ուրախ լեր բերկրեալ և Տէր ընդ քեզ, » ասէր »: Եւ ի վերջոյ. « Լորեւ զՀայկն գեղեցիկ փայլելով զԱստուած » ընդալցուք »: (Ս. Գր. Նարեկ. յՈ՛վ է դայ):

Եթէ այսպիսի դիւցախան միանգամայն և նահապետական անձի մը որ և է յիշատակն ցանկալի է, և կորուստ յիշատակացն ցաւալի, պէտք է միխթարական ըլլան նոր տտենս անոր արժարժմունքն ի բանասէր սերունդս իւր և յօտարս իսկ²⁰⁰. որոց մեծագոյնն և արժանաւորն է հոմերական վիպիկն ի Հայկն որ զրեթէ մեր արդի մասննագրութեան և ազգային պարտուց մէկ պակասութիւնը լեցուց:

Ժ Ա

Հ Ա Յ Կ Ա Զ Ո Ւ Ն Ք Ց՝ Ա Ր Ա Մ

ԱՐՄԵՆԱԿ - ԱՐԱՄԱՅԻՍ - ԱՄԱՍԻԱ - ԳԵՂԱՄ - ՀԱՐՄԱ

Հ Ա Յ Կ Ա Ց տէրութեան երկիրն ըստ աւանդութեան վրաց՝ էր բոլոր Մեծն Հայք, ի Թորգոմայ ժառանգեալ, որոյ վրայ կ'աւելցրնեն ոմանք նաեւ այն երկիրները՝ զոր յետոյ իր յաջորդքն ստացան և ձեւացուցին Հայոց աշխարհը կամ որոյ տիրեցին Արշակունիք. ինչպէս որ ասէ վարդան պատմիչ վաղարշակայ ընդտրձակ տէրութեան համար, թէ ժառանգեց « Զսահմանսն զոր Հայկն ստացաւ զաւակօք իւրովք և որդւովք եօթն » զստերաց իւրոց : Բայց ստոյգ պատմութիւնն, ինչպէս տեսանք, մեզի ցուցընէ Հայկայ ձեռքին ասկ' Հայաստանի միջին հարաւային չորս աշխարհները միայն, այն այլ մասամբ, այսինքն են Կործայք, Մոկք, վասպուրական և Տուրուբերան : Իր երկրակալութեան ընթացից գլխաւոր ուղղութիւնն էր ի հարաւոյ ընդ հիւսիս, ինչպէս նաեւ իր որդւոց և թոռանց. միայն թէ ինքն գէպ յարեւմուտս գնաց, անոնք գէպ յարեւելս : Յիշեալ աշխարհաց առաջինները ինքն կտակաւ կամ հրամանաւ թողեր էր Կազմասի և ուրիշ որդւոց և թոռանց, իսկ ետքինը որ իր բնիկ ստանն էր (Հարք), թողուց իր անդրանկան պայազատին՝ Արմենակայ. որ եթէ առաջ այլ հոն բնակէր կամ չէր, հօրը մահուանն ասին գտուեցաւ իր որդւոյն Կազմեայ տունը. և նոր պատուէր առաւ հօրմէն՝ երթալու ի Հարք, ուր և յետ կտատարելու անոր մահուան և թաղման օրէնքները (որոց վրայ լու պատմութիւնն, որպէս և գերեզմանին տեղը), գնաց ի Հայկաչէն, և բնակեցաւ բաւական ժամանակ իր միւս եղբարքք և որդւովքն, մինչեւ անհլով լցուցին այն սահմանները : Ապա Արմենակ իրիւս տանուտէր և ազգապետ՝ իր երկիրը թողուց և բաժնեց իրմէ ետեւ եկող երկուց եղբարցն թոռայ և Մանաւազայ, և ստոր որդւոյն՝ Բազայ, որք սփռեցան ի Հարքայ գէպ յարեւելք, մինչեւ Աղթամարայ ծովուն արեւմտեան և հիւսիսային եզերքն : Իսկ ինքն բոլոր ընտանեօք՝ որդւովք և թոռամբք և կրտսեր եղբարքք և անոնց ընտանեօք և ընդսնեօք չուեց գնաց գէպ ի հիւսիս արեւելից, Արա-

ծանւոյ հոտանաց զէմ՝ ելնելով, մինչեւ անոր ականց ծաւալեալ գեղեցիկ և ընդարձակ հովիտն Բագրեւանդայ, ուր և ժամանակ մը կ'երեւի բնակած, եթէ այն տեղն հիմկու զիրք և բնութիւնն ունէր, և հոն թողած զմասնս յիւրոցն. և անկից անցնելով Եփրատայ և Երասխայ անջրպետ՝ Հայկական լեռնապարէն, սկսաւ իջնել և կամաց կամաց բնակիլ ի պարահովտին Երասխայ, որ և բուն Հայոց գետահովիտն եղաւ, և Այրարատեան բնաշխարհ. և նոյն ուղղութեամբ յառաջելով հասաւ գրեթէ մինչեւ ի հակակովկաս լեռները, անոնք՝ որ զԱյրարատ աշխարհ բաժնեն ի Գուգարաց ։ Ասոնց ստորստէն քիչ հեռու գեղեցիկ և ընդարձակ դաշտի մէջ հաստատեց իր տանուտիրական բնակութիւնը՝ մօտ բարձր լեռան մը, որ պէտ Հայաստանի մէջ չափեալ լեռանց գրեթէ երկրորդ ճանաչի բարձրութեամբ, և Մասեաց պէս և աւելի իսկ դատուած ուրիշ լեռներէ շեղջածեւ կ'ամբառնայ ։ Այս տեղը և Արմենակայ բնակութիւնը կայտառ գրչով մը նկարագրէ մեր պատմահայրն Խորենացի, անշուշտ իր նախապատմչէն առած, ի Մարիբասայ, զոր և արժան է ընթեռնուլ. « Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն, խաղայ յարեւելս հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին գաշատալայր մի ի բարձրագագաթանց պարսպեալ լեռանց, գետոց կտրկաց ջասահից յարեւմտից ընդ մէջ անցելոց (որ են Երասխ և օժանպակք իւր), և զդաշտն արեւելեայ գոգցես իմն որսայտեալ, ձիգ յարեղակն կոյս գերկայնութիւնն պարզեալ. և (առ) ստորոտովք լեռանցն բազում ակառնակաւ բղիսեալ աղբիւրք, որք ի գետոց հաւաքումն եկեալ՝ հեղարար առ ոահմանօքն նոցա, ծնիւքն լեռամբք և եզերօք դաշտին՝ պատանիք ոմանք իրրեւ առ երիտասարդուհեօք ճեմիցին ։ Այլ հարաւայինն արեգակնաճեմ լեռոն՝ (Մասիս) սպիտակափառ ունելով զգագաթն, ուղղորդ ի յերկրէ բուսեալ, երեքօրէիւ, որպէս ասաց ոմն ի մերոց, քաջագօաւոյ առն շրջապատեալ ճանապարհաւ, և առ փոքր փոքր ի շէշուսն անկեալ, ծեր ոմն արդարեւ լեռան ի մէջ երիտասարդացեալ լեռանցն » ։ Այս երկու լեռանց միջոցն (Մասեաց և Արագածու) բուն Այրարատեան աշխարհ կոչեցաւ յետոյ և ազնուագոյն մասն աշխարհիս Հայոց. այս այն երկու լեռներն են՝ զոր մեծ աշխարհագիրն Բիլգէր նմանեցուց երկուց զրանց պահակաց, յորոց միջէ կ'անցնին խոր արեւելքէն եկողք յարեւմուտք ։ Արմենակ՝ այս լեռանց հիւսիսայնոյն ստորտար, և անոր այլ աւելի հիւսիսագոյն կողմը հաստատեց իր բնակութիւնը, ուրիշ տեղուանք այլ շինելով, յորոց մէկն ըլլայ Թերեւս հիմայ Արամը ըսուած գեղն. ի հարաւակողմն Արագածոտն գաւառի. որ է Արագած լեռան չորս կողմի և մանաւանդ զէպ

ի հարաւ սահմանները. և անուշինն առած են, բոս պատմչին՝ յԱրմենակայ անուանէն. վառն որոյ սասուգարանն հիմայ Արմենակայ-ագած տեղ, գուցէ համառօտեալով զԱրմենագածն, եթէ այսպէս կոչուած էր ի սկզբան. կամ թերեւս լաւ եւս է կարծել որ մեր նահապետին անունն Արմենակ բազա- գրեալ էր յԱր(այր) և Մեն կոչմանց, և առաջինոք միայն կնքեց լերան և գաւառին անունը. որ յետոյ Այրարատայ 20 գաւառաց մէկն գրուեցաւ. իսկ հիմայ գաւառն ուրիշ մանր վիճակներ բաժնուելով (Թալին, Թալիշ, Բիբրական և այլն) լեռն գեռ հին անունը կրէ, փոխեալ յայլազգեաց յԱ- րապէզ, Լեռնէն և գաւառէն աւելի Արմենակայ անունը անմահացեալ է իր սերնդոց և ազգին վրայ, և թէպէտ հասարակօրէն իր թոռան թոռնորդոյն՝ Արամայ՝ անուամբ կ'ըսուի ազգերնիս Արմէն կոչուած, բայց թերեւս հա- ւանագոյն է որ այն երկիրն և ժողովուրդ որ մի ըսա միջէ կրեց զանուն տան Ասբանազայ, Թորգոմայ և Հայկայ, առոր յաջորդին անունն այլ առած ըլլայ, որ է իսկ Արմէն, թողլով զ'Ալկ մասնիկն գգուական. և զայլազգ գրուածս կամ կոչուածս, ինչպէս Արամանեակ, Արմանեկ, Արմանեակս, Արմենիկ²⁰¹.

Յիշեցնէ պատմութիւնն՝ որ Արմենակ յետ ծննդեան և զարգացման իր պայտզատին Արմայիտայ, շատ աարիներ այլ ապրեցաւ, ըսել է որ եր- կար ատեն ազգապետեաց յետ Հայկայ, մինչ յ'220 թուական սորա ։ Իրմէ որդիէ որդի յաջորդարար ութ սոզ՝ Հայոց նահապետ եղան 300 տարւոյ շափ, մինչև Ասորեստանեայց բռնակալութիւնը. յետ որոյ ընդհա- տեցաւ ուղիղ իշխանական ազգասերութիւն Հայկայ, և երբեմն անսր ցեղէն երբեմն յօտարաց կացին Հայպետքն. բայց յետ հազար և աւելի տարիներու, Քրիստոսէ 7 դար առաջ դարձեալ յիշուին ազգապետք Հայոց յԱրմենակայ ցեղէն իջած, որոց սերունդքն այլ Գ Հայոց մէջ կամ Անգեղ տան կող- մանց իշխանք և տանուտեարք, յորոց էր վաղարշակայ ժամանակակից իշ- խան Տորք հսկայն ։

Բ. Արմենակայ եղբարց մէջ աւագագոյնն կ'երեւի Խոս, թերեւս և Հոս, մանաւանդ եթէ իւր անուամբն կոչուած է մեր տոմարին երկրորդ ամիսն Հոսի. այդ անունդ հիմայ աւելի ռամկօրէն ծանօթ է պակաս, ծուռ կամ խոր նշանակութեամբ, թերեւս և խոլոս (նայուածք). դարձեալ Խոսն, և յախառն հոմանիշք լսին. յորմէ կրնայինք կարծել թէ իր ահեղ նայուած- քէն կամ շարժուածքէն Խոս ըսուած ըլլայ, եթէ այդ բառն այլ այրպէս ըսուէր այն ատեն. այս իմաստին կրնայ նպաստաւոր ըլլալ նաեւ Խոսայ եր- կրորդ բնակութեան մէջ (զոր յետոյ պիտի յիշենք) Խոսոսնի անուն տեղն,

որ նոյնպէս խոլոռ նայուածք նշանակէ: Իր անդրանիկ և ազգասպիտ եղբոր ի հիւսիս երթալէն ետև, Խոռ ժառանգեց հօրը՝ Հայկայ դաստակերտ ուստանն և գաւառն Հարք, ընդ Մանաւազայ միւս եղբորն, որոյ յետ զինակից էր Բելայ գէմ պատերազմին մէջ. և յետ ժամանակի ասոր Թաղուց տեղը՝ րոս հայրենի օրինաց, և ինքն քիչ մը յտռաջ քալեց գէպ յարեւելք՝ հիմակուան Աղթամարայ ծովուն արեւմտեան հիւսիսային անկիւնը, ուր որ Արաղածայ նման սրաձեւ բարձր անայր հին Մասիք լեռոն, հիմայ Սիփուս, և անկէ քիչ պակաս բարձր կ'երեւի. այս լեռան բոլորաթիւն մինչև ի ծովեզրն իր անուամբ Խոսխոսունիք³⁰² ըսուեցան, և Տուրուբերանի 16 գաւառաց մէկն են, Հարքայ, Ապահունեաց և Բզնունեաց բով: Այս Արարատեան Մասեաց անուանակիր և նախանձարպ լեռին արեւելեան հարաւային ստորոտը մինչև ցայժմ ճանաչուի Խոսսեց գիւղն, որ այս կտրին գիւցազին դաստակերտ ուստանն ըլլալ իմացընէ: Գեղերուն մէկն այլ յարեւելեան հիւսիսի՝ Արմիզոնք անուանեալ՝ արպեօք Արամազունք գուշակել տայ թէ Արամազայ պէս անուն մը. ինչպէս այլ ըլլայ՝ շատ հին շէնք և անուն մը ցուցընէ, ինչպէս Տարօնք, Ցրօնք, Աստղօնք և այլն: Այս գաւառս այլ շինելով և բնակութեամբ լեցընելով Խոռ՝ Թողուց իր կրտսերաց, եղբարց և որդւոց, և ինքն Արմենակայ պէս շուեց ի հիւսիս, և անոր սահմաններէն այլ անդին անցնելով, այսինքն Վրահայոց կամ հակակովկաս լեռներէն, ինչուան Գուգարաց արեւելեան կողմը գնաց և բնակեցաւ, որուն վկայէ հին պատմիչն թէ, «Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ» զշէնս իւր». և երկու շէնք, զոր մեր միջին գարու պատմիչք ստէպ յիշեն Խոսակերտ և Խոժոռնի, որք և հիմայ այլ ճանաչուին Շուլովէրի վիճակին մէջ (ի հինն Մորոփոր): Այս շուագնացութիւնք նահապետաց մերոց յայտնի նշան են ժամանակին շինութեան, բազմաճնութեան և երկարակեցութեան:

Խոռայ պայազատքն այլ Հայոց մէջ ամենէն հին և նախապատիւ ցեղ մը ձգեցին, «Մեծ նախարարութիւն ազգին Խոռոսոունեաց, արք» թալք և անուանիք»: Հայկեան քաջութիւնն աւելի իմն սեփական սեպուեցաւ իր այս որդւոյն (Խոռայ) և անոր ցեղին. այնպէս որ Վաղարշակ այլ անոնցմէ ընտրեց իր թիկնապահը, որոց զլիաւոր և ցեղապետն ըլլալով այն ատեն Մախրազ կամ Մախրազ ոմն մեծ, թիկնապահութեան պատին այլ Մախրազուրիւն ըսուեցաւ, և երբեմն փոխանակ Խոռոսոունեաց սէր կամ իշխան ըսելու Մալխազ կ'ըսուէր, և Հայոց հարիւրաւոր նախարարաց և պատուաւորաց մէջ շատ հեղ նախապատիւ և նախագահն էր

իշխան կոչմամբ³⁰³, Հայկայ ցեղասերութիւնը յայտնի պահած ըլլալուն համար. ինչպէս որ Սիւնիք այլ այո ցեղապահութեան համար թէ նախապատիւ եղան և թէ Հայկազունք կոչուէին ց'ԺԱ գար: Բայց ինչպէս ուրիշ մեծամեծ և հին Հայ տոհմեր, այսպէս այս այլ շատ հեղ երկու գլխաւոր ճիւղ կամ տէրութիւն ունէր, մէկն կ'ըսուէր բուն Մայիսագ, միւսն Խոռխոռունի: Դ և Ե գարուց մէջ շատ անգամ ի պատմութեան յիշուին Մաղխազք և նահապետք Խոռխոռունեաց, որպէս Գարջոյլ, Խորէն և այլն:

Գ. Երբորդն յանուանէ ծանօթ որդիս է Հայկայ Մանուսագ (և յեղափոխմամբ Մանազաւ) որպին, որոյ անունն այլ նշանական յատուկ իմաստ մը խոստանայ. ի սանօգրիտ լեզու Մանավաս՝ մարդիկ նշանակէ և շատ հաւանական է. Ման, մեկ (յորմէ և Ար-մեկ-ակ) անսամբ սկսեալ և կցեալ է իր որպէսն անուան նման (Բագ) ձայնով: Սա այլ ժառանգեց զՀարք յետ Խոռայ, և անոր երկրորդ բնակութեան (Խոռխոռունեաց) հիւսիսակողմն այլ շէնցուց, որ է Հարքայ արեւելակողմն և Ապահոսեիք գաւառ կոչեալ յետոյ: Այս երկու գաւառաց սահմանամէջն (Հարքայ և Ապահունեաց), Արածանայ վտակաց մօտ՝ հաստատեց իր բնակութիւնը, որ յետոյ ընդարձակելով և ամբանալով մեծ և նշանաւոր քաղաք մ'եղաւ և մինչև ցայժմ կայ և ծանօթ է Մանազկերտ անուամբ, որով և Հայաստանի ամենէն հին և անցեալ քաղաքն է, 4000 սարիէ տեղի ըլլալով սկիզբն, որոյ չափ հին խիստ քիչ քաղաք կայ բոլոր երկրիս վրայ. յայտնի է որ անոնց պէս այս այլ փոփոխեալ է և առաջին շինուածքին հետքն գտնել դժար է, սակայն նոյն անունը և տեղն պահած, և միշտ բնակուած և շինուած է: Հայոց հին ցեղից և գահուց մէջ նախադասներէն մէկն եղան Մանաւագեանք այլ, ինչպէս կ'երեւի գահնամակաց մէջ, ուր անոնցմէ զատ նշանակի և Ապահոսեի, կամ երկու անգամ Ապահունի նշանակի, մէկը և առաջինը՝ բուն Մանաւագեանը ցուցրնելով. երկու տոհմն այլ հայկական զօրահանդիսին մէջ հազարական հոգի կու տային, որ նոյնպէս ցեղին մեծութեանը վկայ է: Միջին դարուց տտեն, կամ Սկիւթացուց և Բիւզանդացուց աշխարհակալութեան՝ Հայաստանի ամուր միանգամայն և վաճառաշահ քաղաքաց մէկն ըլլալով Մանազկերտ՝ բռնաբարութեան և պատերազմի առիթ էր. հիմայ փոքր քաղաքաւան մ'է: Ապահունեաց գաւառին անուան ծագումն յայտնի և ստոյգ չէ. հին բառակարգ աշխարհագիրն Հոսե կամ Հոն կոչէ զշինողն Ապահունեաց, որ գուցէ Մանաւագայ որդի ըլլայ, եթէ ստոյգ է շինող. վասն զի գաւառին անունն կարծեւ տայ թէ շինողն Ապահ պիտի կոչէր. դիտոնց ոմանց և մեկնչաց կարծիք է թէ յանուանէ Ման-աւագայ՝ Հայաստ-

տանի միջնաշխարհը հին ատեն Ման կամ Մին կոչեալ ըլլայ, և այն անունն է Երեմիայ մարգարէութեան մէջ յիշեալն ըստ երբայցեցի և լատին օրինակաց Ս. Գրոց. յայն անուն և Նիկ. Դամասկացի Թուի Լեառն Մինեայ կոչել զասպանակիր լեռը: Անտարակոյտ է որ յետ եղբարցն Արմենակայ և Խոսոյ ի հիւսիս չուելոյ, Մանաւազ ոչ միայն ժառանգեց իր հօր Հայկայ ոստանը, այլ և կ'երեւի թէ անկէ չհեռացաւ. որով իր անունն մնաց այն և մերձակայ գաւառաց վրայ, և հարաւայնոց ծանուցաւ իբրև սունն Մանաւազայ կամ Մինայ:

Դ. Բազ որդին Մանաւազայ՝ բնակութիւնը՝ հասատոց Ալթամարայ ծովուն հիւսիսային արեւմտեան եզերքը, Խոռխոռունեաց, Տարօնոյ և իր հօր Մանաւազայ ոստանի կալուածոց միջոց, և ինչուան ի ծոփ տարածելով շինութիւնը, թէ զերկիրը և թէ զաղի լիճն անուանեց Բզհուհի, ինչպէս գրեն պատմիչք մեր և միշտ նոյնպէս յիշեն զգաւառն զայն. որով իմացուի թէ կամ անունը այլայլեր են յետինք, և կամ նահապետն բուն Բազն՝ անուանէր ինչպէս պատն այլ Հայկն. այս անունն է հնագոյնն որ սրբաւած ըլլայ հիմայ վաճայ ծով կոչուածին: Բազայ զաստակերտն կամ ուսանն ուր էր՝ յայտնի չէ, թերեւ ծովէն կ'ուած ըլլայ, ինչպէս որ յառաջելով և բարձրանալով թէ՛ այս գաւառին և թէ Խոռխոռունեաց մեծ մասեր ծածկած է, ինչպէս գրեթէ զԱրծկէ այլ, որ գաւառիս գլխաւոր քաղաքներն մէկն էր, և մօտեցած ի Խյար՝ մեծազոյն եւս քաղաք, հիմայ երկուքն այլ գրեթէ աւերակ. ուրիշ մեծ քաղաք մ'այլ կայր, կ'ըսեն բնակիչք կողմանն՝ Արծկէի հարաւակողմը, զոր բոլորովին ծածկեր է ծոփ: Բզհունեաց առհմն այլ մեծ և նախագահ տոհմից մէկն էր հին ատեն, ստորեւ քան առաջին յիշեալսն. և իր զօրաբաժինն էր 3000 մարդ, որով շատուր ըլլալն այլ կ'իմացուի, ինչպէս հիմայ մեր լեզուն գուշակէ, նահապետին անուան ստուգաբանութիւնն այլ: Բայց պատմութեան մէջ վերջերն գրեթէ չյիշուիր այս մեծ առհմը, և պատճառն այլ ստույգ նշանակուի, որ է այս: Բազայ գաւառին սահմանակից (չէ յայտ որ կողմն) էր Որդունեաց երկիրն այլ, որք սերեալ էին անշուշտ Որդ կամ Որդի անուանեալ նահապետէն, որ թուի թէ էր եղբայր կամ որդի Բազայ. այս երկու ցեղքն յետ հազարաւոր տարեաց իրենց հին բնակութեան սահմանաց վրայ կուեւելով Հայոց անիշխանութեան միջոց մը, յետ մահուան Ս. Տրդատայ, գիւրար Չարսելով շատ քիչցան. անոր համար Արշակունեաց և Սասանեանց իշխանութենէն ետեւ՝ չի կրցան այլ իրենց նահապետութիւնը քշել, և ընկան ուրիշներու իշխանութեան սակ և անյիշատակ եղան: Այս երկուքին

ասհմայեաքն այլ Ռազ և Որգ՝ իրենց հօրեղբարց պէս՝ կ'երեւին յետ ժաւանակի նոյն հիւսիսային ճամբան բռնած և խոռայ երկրորդ բնակութեան մօտ բնակած. ուր և խոռակերտի մօտ կայ մինչև հիմայ Ռազկերտե կամ Ռազարեբրդ, և Ռազու ձոր՝ անոր մօտ ի Տաշիրս, ինչպէս նաև Ռազում շեան ի նոյն գաւառի. հոն է (Տաշիր) նաև Որդաձորն յիշատակեալ ի պատմչաց. և այս ամէնքն հաստատեն հին պատմչին բաժնն այլ շրջածն այլ. այսինքն թէ խոռայ և թէ իր եղբորսպեաց վերջին բնակութիւնը ի շերինս և սկզբան ի հովիտս Կուր գետոյ, ի սահմանակցութեան Տաշրաց և Գուգարաց:

Ե. Հոս այս հին նահապետաց երկու իրարմէ հեռու բնակարանները յիշեալով, մէկն ի Տաւրուբերան աշխարհի, միւսն ի Գուգարս, զարմանք և դիտելիք կու գայ, թէ ինչո՞ւ անոնց երկուքին միջոց գաւառքն ամենեւին յիշեալ չեն բնակութեամբ, որպէս արժան էր ըլլալ. այսինքն ի Հարքայ և յԱպահունեաց բնական կու գար անցնիլ ի Ռազրեւանդ և ի Կոզովիտ և անտի յԵրասխաձորն կամ հովիտն. լուծիւն հին պատմչին և բնութիւն երկրին գուշակել առայ, որ այն հին աստն գտնէ Ռազրեւանդ և Կոզովիտ ընդարձակ ծովակ մ'էին, որոց եղբակից էր մեծ հրաբուխ շեան Մասիս. և անշուշտ ասոր քովերէն (վանայ ծովուն արեւելեան հիւսիսէն գալով) անցու յետոյ Արմենակ, Խոռ, իր եղբայրն և եղբորսպիք յԱրագածստն և ի Տաշիր երթալու աստն: Այս կարեւոր և մութ ինդիրը թողլով ի քննութիւն երկրաբանից՝ գտնանք ի պատմութիւն Հայկազանց, և յերրորդ ազգապետն մեր,

Զ. ԱՐԱՄԱՅԻՍ, կարծուի 60 տարւոյ չափ և մինչ յ'280 թուականն Հայկայ ազգապետեալ, շինութեամբք և քաջութեամբ գործոց անուանի եղեալ, ըստ ակնարկելոյ պատմչաց, եթէ անուանը ստուգաբանութենէն չեն գուշակեր իր քաջագործութիւնը, վասն զի զ'Արմայիտ՝ Արարիսն իմանան. ինչպէս Մագիսարոս, («Մեր Արմայիտեան արութիւն»): և յառաջ քան զնա՝ Յովհ. Կաթ. գովութեամբ ասէ, թէ «Սորա արիական քաջամասնութեան » հանդէսք՝ բաւական քեզ յառաջնոցն քան զիս մատենագրացն՝ պատմի»): բայց զի չհասան այդ քաջագործ հանդիսից պատմութիւնքն, և ոչ գիտեմք թէ ընդդէմ որո՞ց էր գործածն, Ռաբելայոնց թէ այլ կողմանց³⁰⁴: Իր գլխաւոր և հաւանական թողած յիշատակն է գաստակերտ մը՝ որ հազարաւոր տարի Հայոց տէրութեան մայրաքաղաք եղաւ, այն է Արմաւիր կամ Արամայիր, զոր «և անուանէ յիւր անուն»: ասէ պատմիչն (Խորեն): Արմաւիր անունն ինչուան հիմայ ծանօթ է՝ այդ հին գաստակերտին փլատակաց վրայ:

Հայկայ որդին այլ թոռն այլ Աշում՝ ասոր նման անուամբ կոչուած են՝ սրիշ բառ կամ մասնիկ մ'այլ հետն սեննալով. իսկ ասոր անուան կցորդ բառը, որով քաղաքն անուանի՝ կ'երևի զուգաձայն և զուգանիշ հին Թրակացոց Խրիս կամ Ռրիսս բառը, որ նշանակէ քաղաք²⁰⁵. Ինչպէս են իրենց քաղաքներն Սելիմբրիս, Մեսեմբրիս կամ Մենեբրիս (Մանուիր) և այլն : Այս քաղաքը կամ ուստանը, հաստատեց Երասխ գետոյն եզերքը « ի վերայ սարոյ միոյ », այսինքն բարձրկեկ սեղ մը, հաւանօրէն գետոյն հիւսիսային եզերքը, ինչպէս որ հիմայ այլ է, թէպէտ և բաւական հեռացեալ շէնքէն, ինչպէս որ արդէն Քրիստոսի Ա գարու վերջերն այլ՝ Երուանդայ ատեն՝ այնքան հեռացեր էր, որ դժար կ'ըլլար քաղքէն ջուր առնուլ, և անոր համար թողուց նա զհին զ'2300 տարուան մայրաքաղաքն Հայոց և շինեց զնորն, Երուանդակերտ. բայց Արմաւիր իբրև Թագաւորական կալուածք և ամրոց ճանաչուէր մինչև ի կէս Ե գարու. յետ որոյ աւերեալ անշքացաւ, և հիմայ միայն սեղն յայտնի է, Թեփեախոյ ըսուած գեղին քով, բոլորովին ամայի և խոպան պարձած, ոչ շատ հեռու ի Սարտարապատ քաղաքէ : Արմայիսայ յաջորդ Հայկազունքն մինչև ի բռնակալութիւն Ասորիստանեայց՝ թէ և առանձին դաստակերտներ շինեցին Այրարատ աշխարհին զանազան կողմերն, բայց առաջ կամ վերջը ամէնքն այլ յԱրմաւիր բնակեցան՝ որ արդէն մայրաքաղաք մը ձեւացեր էր հանդերձ ամրութեամբն. որոյ և պարիսպքն և աշտարակք յիշուին Արմայիսայ թոռնորդոցն ատեն, որոց շինող անշուշտ ինքն էր հիմնադիրն. Թերևս նոյն և անկող սօսի ծառերու՝ ի յիշատակ հօր իւրոյ Արմենակայ. յորմէ կրնամք գուշակել թէ հոս փոխադրեց անոր մարմինն այլ, և Թերևս այն սօսիքն իր դերեղմանին շրջապատքն էին, որ սրբազան սեղ մը դառնալով, քիչ ատենէն անոնց տերեւոց ձայնքն այլ հովերուն շատ կամ քիչ փչելուն չափով՝ զանազան հմայից նշանք համարուեցան. և սրբազան կամ կրօնական անձանց կայանք եղաւ, Թերևս և քրմարան և յետոյ մեհեան և վարժարան :

Է. Արմաւրայ շինութենէն կու սկսի անոր մատուակող Երասխ գետոյն հոչակն այլ, որ Հայոց սեփականագոյն գետն եղաւ, ինչպէս իւր հովիտքն այլ ազգերնուս ամենէն հին և մեծ քաղաքաց յատակ և անոր պէսպէս անցից յիշատակարան : Իր անունն այլ գրաւ Արմայիս, յանուն թոռին իւրոյ Երաստայ²⁰⁶ ըստ պատմչին, որոց վերջաւորութիւնքը նման չեն, և հաւանելի է թէ մեր ազգապետին թոռն այլ Երաստ կամ Արաստ կոչէր, Թերևս երկու վսեմական անուանց բարդութեամբ Ար և Ասա, մին Աս-

առեծայ նշանակ, միսն հայկական Արամենանց. մանաւանդ զի օտարաց մէջ Արաքս կամ Արաս և ըստ Պարսից Արագ կոչի գետս : Բայց Բնչ պատճառաւ այս հայկազնոյն անունը գրուեցաւ գետոյն, մեր պատմութիւնն լռէ, այլ հետաքնին և բազմաՀմուտ հելլեն պատմիչն Պլուտարքոս՝ գետոց անուանարանութեան գրոց մէջ պատմէ խառնակ ասանդութեամբ, թէ գետն առաջ Երփոս կամ Ակմոն կ'ըսուէր, և Արաս ո՞նէ Հայոց թակաւոր՝ որդի Պիլոսի՝ նետով զարկաւ սպանեց զիր պապը՝ զԱրբել, և տեղը անցաւ. բայց խզնէն և յարհաւրաց տանջելով և վախնալով ինք զինքը նետեց գետոյն մէջ, և անկէ անուանակոչեցաւ : Ուրիշ պատմիչ մ'այլ (Կտեսիփոն վասն Պարսից առ Պլուտարքոսի) կ'աւանդէր թէ Արաս Պարսից հետ մեծ և զժար պատերազմ ունէր. աստուածոց պատգամներէն իմացաւ որ եթէ իր երկու կոյս աղջկունքը զսէ անոնց՝ կու յաղթէ թշնամեաց. Արաս աղջկանցը արեան չգիմանալով, յաղթութիւնն այլ չուզելով փախցընել, իր մէկ արքունական պաշտօնէին (որոյ անունն էր Մեսալքս) երկու զստերքը զսհեց. նա այլ հայրենի աղէխարչութեամբ և վրէժխնդրութեամբ՝ թագաւորի զստերքը սպանեց, և փախաւ Սկիւթացոց քով. իսկ Արաս յուսահատեալ և չկարենալով վրէժխնդիր այլ ըլլալ՝ ձգեց զինքն ի գետն : Մեր պատմութեան լռութիւնն այլ չարգելուր կարծել թէ այդպիսի զժարող զիպուած մը Հանգիպած ըլլայ, այսինքն Արմայիտայ սիրելի թոռան ողբերգական մահ մը գետափութեամբ. թերեւս ուրիշ նշանական դիպուածովք, զոր այլափոխութեամբ յիշեն օտար պատմիչքդ, և այդ նշանական և եղբրական դիպաց համար համբաւն տարածեալ ըլլայ յարեւելս և առ հելլենս, որպէս յետոյ և համբաւ եղբրական մահուն Արայի և դիականն, այլափոխութեամբ գտանի յիշեալ և ի Պղատոնէ : Այսպէս մարդկային բնութիւնն կամ սիրան ի սկզբանէ հետէ աւելի զգայուն գտուած է առ ցաւալիս քան առ ուրախակտնս. և առ մերս գալով, մինչդեռ մեր պատմութեան յաջողութեանց և զլիաւորագոյն դիպուածոց անգամ տղէս են օտարք, անսոր սրտահար դիպուածները իրենց ողբերգութեան նիւթ առած են. և այս հայկազանց հանգիպածքն կարծես թէ ցուցանեն ողբերգութեանց առաջին նիւթ ըլլալ, պատմական կարգաւ յառաջելով քան զամենայն հելլենական դիւցազանց զէպօ : Իսկ այս անուանակոչութեան զէպքը՝ նման է Հոռփոյեցոց հին պատմութեան յիշածին այլ, (Առ. Ա. Գ.) թէ Տիրերիոս՝ մի ի պայազատաց Ենէասայ, գետափէժ ըլլալով յԱպուլա (Սպիտակ) գետ, սա անկէ ետեւ մինչեւ ցայժմ Տիրերիս կոչի :

Երոտիտայ պատմական ասանդութեանց վրայ խօսելով յիշենք աւելի

անվաներ զրոյց մ'այլ, յԱննիոսեանն Բերոսոսէ, ըստ որում Նոյ յետ ջրհեղեղի ծնած է բաց յայլոց և գուտար մի Արագս անուն, յորմէ կոչեցաւ զեան Երասխ: Առի թէ և Ս. Ճիլտաս Բրիտանիացի որ ի Զ գարու իր խրատական գրոց մէջ Հայրենեաց վրայօք այլ խօսի, յիշած ըլլայ զԱրագս գուտար Նոյի և մայր Բրիտանի, յորմէ Բրիտանիացիք. որով համաձայնի ընդ մերայոցն աւանդութեան զՄանիսոնէ. ըստ Աննեայ՝ Բրուտոս և Նեպոս որդիք են Սկիտայ, որւոյ Արագայ. և տոբր անուամբ կ'ընէ Սկիտայ կոչուեցաւ Հայաստան ի նախնունս. Արագայ համար այլ սօէ թէ նկարէին կէս կին կէս իժ, մարդու հետ պլլուած:

Ը. Երաստ Արմայիսայ սր որդւոյն որդին էր, չըսեր մեր պատմութիւնն, այլ միայն երկու որդի յիշէ մեր երբորդ ազգապետին, զԱմասիա՝ որ իր յաջորդն եղաւ, և զՇարս. սմանք ի յետին գարու զրչաց մերոց (Եղ. Զմիւռն.), այսոր տեղ երկու անուն կու գնեն Շարս և Սագ, և սմանք՝ (Երեմ. Զէլէպ.) այս երկուքը միացնելով Շարագ: Շարս՝ ըստ պարսկականին Շերէ, նշանակէ սրկրամուլ, շտտակեր. արդ պատմութիւնն և աւանդութիւնն վկայեն թէ այսպիսի էր Արմայիսայ երկրորդ որդին, միանգամայն և յորովածին. թերեւ և բազմակին ըլլալով, հակառակ նահապետական օրինաց, աւր եղաւ շատ զաւակաց և թոռանց՝ որք այնքան բազմացան և տարածեցան Արմայիսայ կալուածոց մէջ, մինչև ուրիշ որդւոց բաժինները նեղցրնիլ. անոր համար հայրն խարից զՇարս ամենայն ընտանեօքն իր գաստակիրտին (Արմարայ) և Երանտաձորոյ հիւսիսակողմք, և Արագածոտան արեւմտեան հիւսիսակողմք, ընդարձակ և բարեբեր գաշտ մը, որ թէ յԱրագածայ և թէ ի Գուգարաց լեռանց իջեալ վտակներով ոռոգի և բարգաւաճի, և հոն բնակեցուց. որ և անոր անուամբ Շիրակ կոչեցաւ, և Այրարատայ ընդարձակ և բազմաշէն գաւառաց մէկն եղաւ, և ի միջին գարու արքունիք Բագրատունեաց հարստութեան: Շարայի շտակերութեան կամ շոպլութեան համարը՝ իբրև առակ ազգէ ազգ բերնէ բերան անցաւ, մինչև յետ 2-3000 ամաց ազգային ոսմկական տաածից մէջ կ'ըսուէր շտակիրաց համար, «թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ» համարբն չին». և ըստ համբաւոյն և աւանդութեան գուշակի թէ շոպլ և շուայտ, կերող արբեցող, զրօտասէր կենցաղասէր անձ մ'էր, և այնպիսի անձանց նախատիպ, թերեւ յետոյ և պաշտօնընկալ ի Հայս, որդէս Բագոսն Հոռոմոց: Ըստ այսմ դիտման անյարմար չէ Շարայի եղբայր մ'այլ ունենալն Սագ անուամբ, նոյն պարսկերէն իմաստիւ Նուագարանաց, որ խնջայից և գինարբուաց յորպորակք և ախորժակք են: Շարայի թոռանց

կամ մերձաւոր սերնդոց և պայազատաց մէկն իր անուան մօտ կոչմամբ յիշի Գուշար, որոյ սերունդքն բնակեցան Շիրակայ հիւսիսակողմը և Գուշարաց լեռանց ստորոտը, լեռնահոգիտ և լճոտ երկիր մը, որ կ'երեւի թէ Գուշարայ սերնդոց մէկուն անուամբ կոչեցաւ Աշոցք գաւառ, և Արարատայ հիւսիսագոյն մասն եղաւ . և յետոյ առանձնակ իշխանութիւն կամ պայազատութիւն մը սեպուէր այս գաւառս, իրրեւ սահմանամէջ Հայոց և Վրաց. այս եռքններս փոխանակ Աշոց ըսելու՝ Ապոց կ'անուանեն զգաւառը: Արշակունեաց Թագաւորութեան հիմնողն Վաղարշակ՝ Գուշարայ սերունդքը հաստատակ իշխանական տէրութեան երկրին . և այս երկրին անուամբ միայն կու յիշուին անոր (Գուշարայ) ցեղն՝ Աշոցան²⁰⁷ կոչելով, մինչև ի Ե գար, ընդ բաւական մեծապատիւ ցեղս, որոյ զօրաբաժինն այլ արքունի բանակին մէջ էր 500 ոգի:

Թ. ԱՄԱՍԻԱ Թոննորդի Հայկայ և շորրորդ ազգապետ մեր, երեւի իբր յ'280 Թախն Հայկայ կամ աւելի եաքս տանուտէր նստեալ Հայոց յԱրմաւիր: Իր անունը Մազիստրոս ստուգարանէ Աստանօր տեսութիւն, չգիտեմ քի սկզբամբ կամ լեզուաւ . այս անունս Եգիպտացոց թագաւորաց մէջ այլ գտուի Ամասիս կոչմամբ, և հելլենաց այլ ոչ անծանօթ և ոչ հետաւոր . մանաւանդ ասով նշանաւոր՝ որ աշխարհիս մեծագոյն և հնազոյն մասին անունն Ասիա՝ նախ այս մեր նահապետին անուան մէջ պարունակի. յորմէ Թերեւս խորհրդածին սմանք ի նոր բանասիրաց մերոց՝ թէ սա ինքն ըլլայ նախ հիմնարկող Ամասիս քաղաքին Պոնտոսի, և անկէ նախ այն կողմերն, ապա բոլոր մեծ մասն հին երկրին կոչեալ ըլլայ Ասիա: Ասիկայ շատ մեծ պարծանք կ'ըլլար թէ մեր նահապետին և թէ իր սիրընդօցոս, եթէ բաց յանուան նմանութենէն՝ ուրիշ փաստ մ'այլ ունենայինք. այլ զինչ և ըլլայ՝ նշանական է հնութիւնն՝ որոյ չափ վեր չեն ելներ ուրիշ ազգաց աւանդութիւնքն զԱսիոյ և զԱմասիոյ: Մեր հին պատմիչն Ամասիոյ համար կ'աւանդէ միայն շինութիւնք Այրարատեան գաշտին և աշխարհին հարաւակողմը, և անոր և բոլոր Հայաստանի բարձրագոյն լերին անուանակոչութիւնն յիւրմէն՝ Մասիս կամ Մասիք, որպէս կոչուէր և խոստատունեաց մէջ եղած բարձր լեռն Յիպնայ (Սիփան), և որոց ձայնակից է Մասիս լերինք՝ Միջագետաց և Հայոց սահմանակցութեան վրայ, յորոց զուշակի մասնաւոր նշանակութիւն մը անուան, սեփական լերանց, որ մեզ անծանօթ է:

Արդ Ամասիա յետ երկար ատեն բնակելոյ յԱրմաւիր և ծնանելոյ հոն բաց յայլոց՝ երիտ որդիս՝ Գեղամ, Փատոխ և Յոլակ, առաջինը թողուց հոն

իր տեղ, և մէկայլ երկուքո՞վ անցաւ Երասխ գետը, զէպ յարեւելս հարաւոյ երթալով իբրև աւուր մը ճանապարհ, կամաց կամաց ոկսաւ եննել Այրարատեան բարձրագոյն լերին հիւսիսային տափերուն վրայ. որոյ և բաշտարէն բնակութիւններ հաստատելով այն այլ առանձին գաւառ մ'եղաւ և անուանեցաւ յետոյ Մասեաց-տուն: Գլխաւոր երկու մեծ բնակարան շինեց «մեծապէս ծախիւք» ըստ պատմչին, լերան ամուր և խորունկ տեղուանքը. մէկն անոր հիւսիսային արեւելեան կողմը, լեռնասէն բլիսեալ աղբերականց քով, և տուաւ զայն Փառոխի, որոյ անուամբն այլ Փաստախոտ ըսուեցաւ: Այս անունս և ստուգաբանութիւնն երկբայական է. միջի իս տառը բնիկ հայկազնեան չերելիք այլ Սեմական³⁰⁸. բայց եթէ անունն սեպուէր Փարախ ըստ այժմու նշանակութեան՝ հօտից տեղ, և շէնքն այլ Փարտխոտ. չեմք այլ կարծեր թէ շէնքին վերջանունը պարսկերէն խոստա, աստուած, բառը նշանակէ: Իսկ միւս շէնքը՝ յանուն Յուլակայ կոչեցաւ Յուրակերտ, և առաջինին արեւմտակողմն էր և անկէ հետու իբրև օրումն մը ճամբայ հետեակ գացողի:

Ամասիոյ այս երից որդւոց զրուած պերճ ու պայծառ անուանքն՝ որ գեղեցկութիւն, լոյս և փառք իմացընեն, մեծածախ շինութիւնքն տան գուշակել, իր պերճասէր և բարգաւաճ բարքն ու վիճակն, միանգամայն և հարուստ ու յառաջացեալ քաղաքականութիւն մը, որոց չափն և արգասիքն կամ միջոցքն մեզմէ անծանօթ են, այլ թերեւս սովորաբար կարծուածէն աւելի՝ ժամանակին խաղաղութեամբ և երկարակեցութեամբ: Ամասիա իր անուամբ կոչեալ գաւառին մէջ ասին մը բնակելով իր կրտսեր որդւոց քով նորէն դարձաւ իր հայրենական ոստանը, և քիչ տարիէ վերջ՝ մեռաւ. ինչպէս թուի շատ երկար չապրելով, վասն զի յետ մտհուան ցուցանէ պատմիչն զճնունդ Հարմայի թոռին նորա:

Ժ. ԳԵՂԱՄ հինգերորդ ազգապետ մեր, գեղեցկանուն և գեղեցկաշէն, ըստ հայրենի օրինաց բնակեցաւ յԱրմաիր այնքան ատեն, մինչև իր անդրանիկ և պայազասն Հարմա այլ որդւոց սէր եղաւ, և այն կողմերը նոր տամբք լեցընել սկսաւ. ապա թողուց զնա յԱրմաիր՝ յոստանն տիրական՝ հանվերձ անոր մանր սրբիւօքն, ուզելով որ իր օրինաւոր ժառանգն մնայ պապուն հաստատած տեղը, և անկէ հտեւ ուրիշ տեղ չփոխազրին ազգապետքն³⁰⁹: Իսկ ինքն անոնց կրտսեր եղբարց նոր տեղ և բնակութիւն պատրաստելու համար գնաց զէպ ի հիւսիսային արեւելք, ուր կ'երեւային երկայնաշար լերինք իբրև արեւելեան պատուարք այն երասխեան և արարատեան ընդտրձակ դաշտաց՝ ուր սերունդքն Հայկայ ազգէ յազգ սփռուէին:

Այս լեռանց մէջ քանի մը բարձր գլուխներ և մանաւանդ ամենէն բարձրագոյնն՝ որ հիմայ Նալթէփէ և Ազ ասոյ կ'ըսուին, և յետ Մասեաց և Արագածու բարձրագոյն չափեալ լեռան է Հայոց (12010) Գեղամայ աչքը քաշեց: Այն ատեններ որ դեռ երթեւեկ և բնակութիւն այլ չկայր երկրիս վերայ, գետերն միայն դարձիր ճամբայ էին, և բարձր լեռանց զագաթունքն՝ ուզգեցոյց. այսպէս Արմենակ զԱրագած դիտեց և գնաց ի հիւսիս, խոռ զՅիպոյայ Մասիքն, Ուսսիա զմեծն Մասիս, Գեղամ այլ զսա, որ և յիւր անուն կոչեցաւ Գեղայ կամ Գեղայոյ լեռոն, և իր լծակիցքն այլ մէկտեղ լէրիք Գեղամայ. որոց թերեւս ոչ այնքան ձիւնածոյր զագաթն ի տունջեան, որքան բոցարձակ բաժակքն ի գիշերի իրեւ ցամաքաւար լապտերք ձգէին մեր առաջին երկրաշէն նահապետքը: Գեղայ լեռան մտանալու յարմար ճամբան այլ էր իրմէ իջած գետը՝ (Ազատ) որ դէպ յարեւմուտք երթալով Արմուրէն ոչ շատ հեռու խանէր յԵրասխ. անոր ականց հասնելով Գեղամ՝ կու տեսնէր որ այն լեռն քովիններէն գրեթէ պատուած սրբաբարձր է, և քովերէն տեղ կայ՝ Արարատեան պարահովտին պատուարը անցնելու, ինչպէս որ բրաւ ինքն այլ: Եւ հրը այն կողմը պատուարներէն վար նայեցաւ՝ ոքանչեղի գեղածիծաղ միանգամայն և շարժուն սեսարան մը նկարեցաւ աչացը. բնդարձակ տաշտածեւ հովիտ մը՝ չորս կողմէն բարձր լեռներով պատած, և մէջ տեղը կապոյտ ու պայծառ մեծկակ ծովակ մը իր հովտին ձեւով, որուն երեսն իսկ 6500 ոտք բարձր ըլլալով, մեծ ծովուն երեսէն, տմառ աստի շատ զով և զուարճալի պիտի ըլլար. և այս եղանակին համար՝ թերեւս իր նախորդաց ամէն բնակած տեղերէն վայելուչ և զանազան էր: Ասկէ անդին ի հարկէ չէր ուզեր անցնիլ. այն բարձր լեռը իր անուամբ կ'ընչէն հասեւ, անոր սատրոստքն այլ՝ ծովուն գիւմաց՝ շէնքեր շինեց և անուանեց կամ անուանեցան Գեղարքունի, ինչպէս հիմայ գրուի, պուցէ լաւ եւս Գեղամունի կամ Գեղակունի ըլլար, քան Գեղարքունի, որպէս ոմանք գրեն, բայց ոչ ըստ նախնեաց. պէտք չէ այն հին ժամանակ անուանց ածանցման և բարբոթեանց օրէնքն հիմկու օրինաց հետ նոյն համարիլ: Ոչ միայն Գեղամայ շէնքերն՝ այլ բոլոր իսկ այն ծովուն բոլորտիքն, և մանաւանդ արեւմտեան ու հարաւային կողմանքն ըսուեցան Գեղարքունի գաւառ, և ծովն այլ նոյնպէս. որք դարձեալ նահապետին անուամբ կոչին եւս Գեղամաշէն գաւառ, մանաւանդ հարաւակողմն, և Գեղամայ ծով: Տօնական գրոց ճակատը (մեծանուն Սոյումանի) վասն գաւառին ասի «Գե» զաքունի՝ որ յորջորջեցաւ յանուն Նախարարին Գեղամայ» և վասն ծովակին «Գաշնուոր անուանեալ ծովուն Գեղագունեաց»:

ԺԱ. Արդ Գեղամ իր սիրուն գաստակերտաց մէջ բնակեցաւ երկար ատեն, և հոն ծնաւ զաւակ մ'այլ զոր Սիսակ անուանեց, թերեւս ուրիշներ այլ. բայց սա աւելի սիրուն և յոռաշաղէմ եղաւ շատ բարեմասնութեամբ. վասն զի այն ատեն աւելի յարդի եղած՝ մարմնոյ վայելչութիւն և ճարպկութիւն ունէր, հսկայտկերպ կազմուածք՝ ուժով, բայց պտտշանագեղ, և անոր համեմատ շարժուածք և ընթացք, երգութիւն և յաջողութիւն ի զինաշարժութեան, մանաւանդ աղեղնաւորութեան, յորում Հայկայ սիրելի յիշատակն արթնցրնէր. և ձեռաց ու ոտից շարժման հետ՝ լեզուի այլ վայելուչ շարժուած, զոր կորովաբան կոչէ պտտմիչն. ճարտարաբան և համոզող խօսուածքը գուշակել սալով, կամ թերեւս այն ատենուան յարմար սօնից և հանդիսից մէջ յորպորախօս կամ երգիչ: Այս սիրուն և ճարպիկ որդւոյն թողոց Գեղամ իր Գեղաբունի գաւառը հանդերձ ամենայն շինուածովքն, և իր ստացուածոց մեծ մասն. և ծովակին հարաւակողմէն առաջ անցաւ անոր հետ, Երասխայ ընթացքը բռնելով վէպ յարեւելս հարաւոյ, ինչուան զետոյն քարայրազ հոսանաց տեղն, որ է հիմայ ընդ մէջ Գարաուզ և Գարատազ նահանգաց, իսկ այն ատեն՝ քիչ մը տարբեր ընթացք ունէր. ինչուան այս տեղս Սիսակայ սահման կտրեց, որ զաւերներով շէնցրնէ. արեւելքէն այլ անշուշտ ինչուան առաջին լեռանց կարգը սահման դրաւ, ուսկից յետոյ Սիսակայ սերունդքն առաջ անցնելով ինչուան կուրի և Երասխայ անջրպետ լեռները բռնեցին. և բաւոր այս երկիրներս հանդերձ Գեղամայ ծովուն բոլորով Սիսակայ ցեղին ժառանգութիւն եղաւ. և Հայոց հին ու զլխաւոր նահանգաց մէկն, որ յանուանէ նահապետին Սիսական աշխարհ ըսուեցաւ, զոր և Պարոք և Արարացիք մինչեւ ցԺԱ զար Սիսէճան կոչէին. իսկ մերայինք աւելի շատ անգամ կոչեն Սիսիք, որ կ'երեւի յանուն Սեռան կղզւոյն Գեղամայ ծովուն. և այն այլ անուանեալ թուի ի Սեռակ նահապետէ, որ ի սերնդոց Սիսակայ, եթէ ոչ և ինքն Սիսակ սեւ նշանակէ. և թէ ասոնց թէ թերեւս հնագոյն Գամեան բնակչաց պատճառաւ՝ այս աշխարհս է, բոս իս, նախամարդարէին Երովպիս կոչած երկիրն ի նկարագրութեան զրախտին: — Գեղամ այսքան ընդարձակ բաժին լեցրնելու և շէնցրնելու համար, Սիսակայ առաւ բազմութիւն ծառայից և ընդոճաց, և որպէս թուի այն կողմիրը տեղ տեղ առաջուց ցրուած ու բնակած մարդիկը, զորս իր իշխանութեան տակ առած էր: Այս Գեղամայ մասնաւոր ինամով մեծցուցած ցեղն Սիսական՝ այսպիսի ծագման համար, միանգամայն և պայազատաց քաջութեան և հարազատութեան համար՝ շատ հեղ յետոյ բուն Հայկազունի ըսուեցաւ աւելի քան

զայլ ամենայն ցեղս Հայոց . և ըստ այնմ այլ երբեմն գահազուրի եղաւ ամենայն ցեղից, շատ անգամ այլ միայն բանի մը ցեղէ յետադասս. Հայոց ամենայն հարստութեանց տտեն այլ, մեծազատի և քաջանշան եղաւ ցեղոս, Թագաւորութեան այլ հասաւ ի ժԱ-ժԲ գարս. և թերեւս քան զայլ ամենայն տաճն և տունս Հայոց իր նախնի իշխանական և արիական սեփականու. Թիւնք, թէ և այլափոխեալ և նուազեալ, պահեց մինչև ի յետին գարս, և զեռ հիմայ այլ գտաւին սերունդք նոցա մելիք կոչմամբ պատուեալք:

Միայն Միւնիք չեն ի Սիտակայ յառաջացեալք, այլ և Աղուանք, ըստ աւանգութեան հին պատմչաց մերաց, զանէ կուր գետոյ և Սիւնեաց մէջ եղող Աղուանք, այսինքն են բնակիչք Արցախ և Ուտի նահանգաց. և այդ անունդ (Աղուանք), կ'ըսեն, նայն Սիտակայ ընծայուածէն յառաջ գայ, վասն զի իր անոյշ բարուց համար Աղա անուանէին. և երբ նա իր բնիկ հօրը տուած բաժնէն այլ դուրս ելնելով զէպ յարեւելք բնակութիւն հաստատեց ի լեռնակողմանս Արցախոյ, և անախց ի վայր ի գաշան միջագետաց կրի և Երասխայ, զոր և լցին իր սերունդքն, բոլոր այն միջոցին բնակիչքն Աղուանք կոչեցան. թէ և տառնձնակ զլիաւոր տուհմեր և ցեղեր այլ ունէին, անշուշտ անոր զաւակաց և թոռանց անուամբք, ինչպէս Ուտեացիք, նախապատի քան զայլս, որ և բոլոր նահանգի մը անուն տուին, և երբեմն բոլոր իսկ Աղուանից լեզուին, և թուին յտոաջ եկեալ յՈսա կամ Ուտա անուն անձէ մը, (որպէս և յետոյ գտուի Օտա կամ Ոտա անուն նախարար յաւուրս Ս. Տրդատայ). – Գարգաւանացիք, որ նոյն Ուտեացւոց նահանգին մէկ գաւառը բռնեցին. – Գարգարացիք, որ ի հնումն մեծազօր և մեծատարած ցեղ մ'եղած են, մինչև երբեմն Աղուանից կամ Ուտեից լեզուին տեղ՝ Գարգարացի ըսել, բայց յետոյ նուազեալ՝ չեն յիշուիր, սակայն զեռ անանց անուանակիր գետն ծանօթ է ի գաշան կրի – Երասխայ. – Մօյկացիք, որ կրի յայն կողմն (արեւելեան) բնակէին, և տառնձին ազգ համարէին շատ հեղ անկախ ի Հայոց, և աւելի բնիկ Աղուանից յարակից ։ Բնիկ Աղուանք ըսինք այդ կուրի արեւելեան կամ ձախակողմը և կոյկասայ ողնաշարին միջոց Թորպոմական ազգը, զոր յիշեցինք ի սկզբան Թորգոմայ պայազատութեան մէջ (Էջ 121). որք և միայն կուրի անդժուար ընթացքն ունենալով անջրպետ հարթածաւալ երկրի մը մէջ, շուտով իրարու հաղորդեցան լեզուու և սովորութեամբք, և երբեմն քաղաքական վարչութեամբ²¹⁰։ Օտար պատմչաց այս հոգքի արեւելեան Աղուանքն միայն ծանօթ են, զորս և Alvani կամ Albani կոչեն. սմանք յիշեն նաև զՈւտիացիս (Otene) և զՄառզէացիս (Sodri)։ Հայկազանց ժամանակ բոլոր Երասխ և

կուր գեաոց միջագետաց երկրին (այսինքն Սիւնեոց, Արցախոյ, Ուտիոյ գուցէ և մասին Փայտակարանի) կ'իշխէր Սիսակայ պայազասն . վաղարշակայ ատեն Առան անուամբ մէկն էր ցեղապետն, զոր և հաստատեց նա յիշխանութեան երկրին միանգամայն և զինուորական կողմապիս դրուարեւելից . անկէ ետեւ ասոր անուամբ բոլոր երկրին այլ կոչեցաւ Առան, և այսպէս ծանուցաւ Պարսից մէջ այլ մինչեւ ետքը : Այս Սիսակայ և Աղուանից նկատմամբ ըսածներուս մէջ՝ կան երկբայական և քննութեան խնդիրներ, զոր ուրիշ տեղ լուծելու է : Դառնանք հիմայ մենք մեր ազգապետին, հօրն Սիսակայ, որոյ ուրիշ մեծ շինութիւն մ'այլ յիշէ պատմութիւնը :

Եւ է սա Գեղամի կամ Գեղամե պատակերան, զոր շինեց Գեղամ նորէն Գեղայ լեռանց ստորոտը, բայց ոչ յարեւելակողմն, ի բաժնին Սիսակայ, այլ յընդդիմակողմն Գեղաքունեաց, յարեւմուտս, յԱրարատեան աշխարհի, և ի բաժնի Հարմայի, կամ մանաւանդ անոնց մէկ ուրիշ եղբոր, որոյ անունն ոչ յիշի, այլ անոր որդոյն, որ է Գասն կամ Գասնիկ : Այս պատակերտը, որ թուի յետին բնակութիւն Գեղամայ, շինեց լեռանց ամուր ձորավայր տեղ մը, Ազատ գետոյն ականց մօտ, գեղեցիկ զրիւք, և այլ աւելի գեղեցիկ և տհաւորահայեաց տեսարանօք, զոր աւելի շէնցընելով Գառնիկ՝ իր անունը թողուց վրան, և մինչեւ հիմայ ծանօթ է Գասնի կոչմամբ, թէ և աւեր ամայի . բայց և աւերակաց մէջն այլ ունի զգեղեցկագոյն մնացուած ճարտար շինուածոց, Գեղամէն աւելի մեծ և սիրելի և սրբազան ձեռքի մը, մեծին Տրդատայ, որոյ Թաղտ կամ Ստրատայր կ'ըսուէր առ յետինս, և ի նախնեաց Հովանոց Խոսրովիդիտոյ : Գեղամայ լեռանց և ծովուն պարատափին արեւմտակողմը, այսինքն Արարատեան աշխարհին արեւելեան հիւսիսային մասն, մանր գաւառներ բաժնուած է ըստ օրինակագիր աշխարհաց, որք են սկսեալ ի հարաւոյ Արած և Ոյրծ, Մազազ, Կոտայք, Նիզ, վարսմտոսիք կամ Մաղկունիք . հաւանական է որ ամէնքն այլ Գեղամայ և Գառնիկայ որդւոց և սերնդոց սեփականութիւն ըլլան . ինչպէս ետքինին համար յիշուի որ վաղարշակայ թոռան Ա. Արտաշեսի ատեն վարած անուամբ կտրիճ և վարպետ աղեղնաւորի մը անուամբ կոչեցաւ, որ էր ի սերնդոց Գառնիկայ և ի պայազասաց կողմանցն :

Գեղամ իր երկու աւագ որդւոց բաժինները զատելով յարեւմուտս և յարեւելս, անոնց երկուքին միջ սուահամար բնակելն նշանական բան մը կ'երեւի . գուցէ նախանձու կամ բոնարարութեան արգելք մը պնելու, նոյնպէս և հրամայելն Հարմայի որ Արմաիրը շթողու, կրնայ կարծիք մը տալ ասոր վրայ կասկած կամ նուազ սէր ունենալու : Այս այլ պիտելու է, որ

մեր ազգապետքն Հայկայ ոստանէն ելնելով՝ միշտ դէպ ի հիւսիսային արեւելք կ'երթային . հիմայ Հարմայի հայրենական բնակութեան թէ հիւսիսը թէ արեւելքը բռնուած էր , ինչպէս և հարաւ , անոր համար ի դէպ գայ հօրը պատուէրն Արմաւրէն չեղնելու . բայց եթէ դէպ յարեւմուտս կու մնար սարածուիլ . ուր երթալու ինչ արդեւք կար , շեմք գիտեր , մանաւանդ երբ հիմակուան երկրին դիրքը նկատեմք , վանանդայ և Բասենու ընդարձակ և բարեբեր դաշտերը , նման Շիրակայ . սակայն իրենց բնակազմութիւնն և ձեւն այլ նշտն ասն հին ատեն ջրով բռնուած ըլլալու , ինչպէս որ Բագրեւտնդայ համար ըսինք : Գուցէ եւս այն կողմերը գեռ Հայկայ հօրեղոր՝ Ասքանազայ սերնդոց յետին արեւելեան սահմանքն էին , որոց հետ խնամութեամբ և բարեկամութեամբ ապրէին Հայկազունք : Ասոնք իբրեւ վարկած թողլով յընարութիւն բանասիրաց , ՀԱՐՄԱՑԻ մեր վեցերորդ ազգապետին համար կրնամք ըսել որ վրան պատմութիւն մը չյիշուիր . բայց միայն բտն մը , որ վերը ըսածնուս նպաստ կրնայ ըլլալ . այսինքն ստանուածեաց և տոհմից սոհմանները տարածելուն : Վասն զի հին պատմիչն Հարմայի ազգապետութեան միջոց յիշէ , թէ այս ատենն սկսան Հայկազունք աւելի « բազմանալ և լնուլ զերկիրն » , սփռելով չորս կողմն . անշուշտ ոչ իբրեւ զառաջինն՝ ազգապետին առաջնորդութեամբ նախարակ երկրին եզերքները քշելով և ընդարձակելով , այլ թերեւ (և բռնութեամբ այլ) միջամուտ ըլլալով ի բոսփն օտարաց , կամ անոնց միջէն ճամբայ բանալով ի խնդիր նոր բնակութեանց³¹¹ :

Մինչև հիմայ յիշածնիս ցուցանեն որ յետ Հայկայ հինգ ազգապետք իբրեւ ՅԾՕ տարի , շինեցին և լցուցին Այրարատ աշխարհին մեծ մասը , նոյնպէս զՄիւնիք , զմասն Գուգարաց , անոնց հարաւարակ եղբարքն այլ , այսինքն Հայկայ առաջին բնակութեանց մէջ թողեալքն , անշուշտ լցուցին զՏուրուբերան , և Աղձնեաց , Մոկաց , կարճայից ու վառպուրականի մասերը . հաւանորէն նաեւ Դ Հայոց կամ Մոփաց արեւելեան մասը՝ որ Տարօնոյ սահմանակիցն է . իսկ անոր արեւմտեան և հիւսիսային մասը , Բարձր Հայք և Տայոց աշխարհը , Երբ սկան բնակիլ և շինուիլ ի Հայկազանց՝ անծանօթ է . և երեւի թէ անոնցմէ առաջ բնակեալ էին ի Բարեթական գարմից : Ուրեմն մինչև հիմայ յիշեալ հինգ վեց ազգապետքը կրնանք կոչել աշխարհաշէն , ինչպէս որ կոչին այլ իրաւամբ ազգածիւրք . անոնց յետագայք աւելի աշխարհակալ և ազգավար . ինչպէս որ սիտի տեսնենք ի պատմութեան Արամայ :

Ժ Բ

Ա Ր Ա Մ

ՅԵՏ Հայկայ իր պայազատաց մէջ ամենէն նշանաւորն քաղաքական վարչութեամբ, ազգաշէն ինամքով և պատերազմական քաջութեամբ՝ եղաւ Արամ. ահարկու օտար ազգաց և սիրելի ընտանեաց. մինչեւ ըստ Հին ասանդութեանն, զոր կանխաւ յիշեցինք (էջ 111), ազգերնուս Հայ անունն՝ որ կամ դեռ չէր լսուած կամ խիստ քիչ լսուած, խափանուելով օտարաց մէջ Արմեն հոչակեցաւ յանուն այս նոր նահապետիս. սր զէնքերով ընդարձակեց թէ իր աէրութիւնը և թէ ազգին անունը. միայն թէ զէնքերը փառասիրութեամբ և ազահութեամբ շատու ձեռք, ինչպէս շատ աշխարհակալը, այլ նախ իր ազգապետին Հայկայ՝ և անոր որդւոց սեփական երկիրները նորէն հայկական իշխանութեան ասկ աննելու, սակից քանի մը կողմեր զրկուեր էին, կամ իր նախորդ տանուաւերաց թոյլ և վախկտա կառավարութեամբն, և կամ մանաւանդ յանդուզն յափշտակագաց բռնաւորութեամբ. ինչուան ի նիստս՝ որ ժամանակակից էր Արամայ, վկայնն Հին պատմիչը (Յուստին. — Դիոդ.) թէ ամենայն ազգապետք իրենց երկրին սիրէին. նիստս առաջին եղաւ որ օտար երկիրներու տիրէ. Արամ 30 տարի մը յառաջ քան զնիստս պայազատեց (իրբ 2087 տարի նախ քան զՔրիստոս), երբ դեռ Հին Բարեւաջուց թագաւորութիւն մը կար՝ Արարացի ցեղի մը ձեռք, որ Բելեանց առաջին կտրճութիւնը և բռնութիւնը չունեալով՝ անհոգութեամբ թողին իրենց երկրին չորս գին եղած աւելի մասը ազգաց իշխողներուն զօրտնալ և իրարու սահման կոխել: Այսպէս ըրին Բարեւաջուց և մեր Հայոց երկրին միջոց և սահմանակից եղող քանի մը ուժով կամ յանդուզն իշխողք. որք Հայաստանի երեք կողմէն ալ (բաց ի Հիւսիսոյ) յառաջ գալով, և անոր եզերական գաւառաց տիրելով կը ստիպէին զՀայոս դէպ ի Հիւսիս քշուիլ. և զի այն կողմն ալ արդէն բաւական բնակուած էր այն տունն Հայկայ եղբարց սերնդեամբք, հարկ էր Հայոց կամ նուաճիլ օտարներէ կամ վճնտիլ և նաեւ նուաճել զօտարս: Այսպէս բրաւ Արամ, որ և բնաւորութեամբն աւելի նուաճելու քան նուաճուելու համար եղած էր. ոչ միայն կտրիճ, անվախ և կողուող, այլ և իր ազգին,

նախնեաց և երկրին վրայ մեծ և հաստատուն նախանձ ու սէր ունեղ, սրով և պատրաստ առ ամենայն գործ և ի ջան՝ Հայկայ իրաւունքն և որդւոցը ժառանգութիւնն ապահովելու:

Այս բանն համառօտ՝ այլ ազգու և մեզի պանծալի կերպով կը բացաւարէ մեր պատմութեանց նախապատմին (Մարտիրոս). «Սա այր եղեալ » հայրենասէր և տշխասասէր, լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենաց՝ նեաց՝ քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զաւհմանս հայրենեացն . և հարազատից արեան նորա՝ ախրել արանց օտարածնաց »: Մեր պատմութեան մէջ, և կարծեմ թէ նաեւ ամենայն ազգաց և ժողովրդոց մէջ, առաջին անձն և իշխողն Արամ եղած է՝ որուն հին պատմիչք և երգիչք այս ցանկալի և աշխարհածանօթ, այլ ստուգիւ հազուադիւս Հայրենասէր անունն ընծայած են, և զոր արժանապէս ժառանգեր է այն առաջինութեամբ՝ զոր միտ անունն հաստատէ, աշխատասէր: Աւանց աշխատասիրութեան ընդունայն և ոռւտ է հայրենասիրութիւնն. զուցէ հայրենեաց բարիքը և վայելքը սիրել մ'ըլլայ, բայց բարբարել հայրինեաց և վայելել տալ հայրենակցաց՝ այո է բուն հայրենասիրութիւնն՝ որ անկարելի է յաջողելու առանց մեծ և շատ աշխատութեան: Իր պայազատութեան առջի քանի մը տարիները դժարութեամբ տեսնելով օտարաց բռնւորութիւնը՝ աջլորջութեամբ համբուսեց և պատրաստեցաւ բռնութիւնը բռնութեամբ վանելու . որոյ համար հարկ էր դէնքի և կռուի կրթիւ իր ժողովրդեան երիտասարդները, և յիշեցընել Հայկայ օրերը՝ որոցմէ վերջը 300 ատուայ շտփ կ'երեւի թէ պատերազմ եղած չէր այն կողմերը: Բայց մեր նահապետին հնարած կամ փտոււորած աղեղն՝ թէ պաշտպանութեան թէ որոյ պատճառաւ միշտ Հայկազանց ունն էր . անոր հետ աւգ ու նիզակ շարժող այլ կար. որոնց կրթութիւնն և թիւն աւելցցունելով Արամ՝ քիչ ատուան մէջ ինչուան 50000 ողոյ զօրագունդ մը կազմեց. որոց գեռ հազիւ քսաներորդ մասն ձիաւոր էր. բայց ամենքն այլ կարիճ, յաջող և ճարպիկ երիտասարդներ. միանգամայն և ընտրուած ուժով, հսկայակերպ և ահարկու մարդիկ:

Այս է առաջին թուով յիշուած զօրագունսն Հայոց ի պատմութեան . որոյ և առաջին փորձն գործն և յաջողութիւնն եղաւ ընդդէմ Մարաց: Այս ազգս՝ որ հնազոյն ազգաց մէկն է և ի հոռոմ և յերոպացի լիզուաց՝ Մեդ կոչուի՝ իր նախահօր Մազայի անուամբ, որ էր ի զաւակաց Յարիթի, (և այս ժամանակիս պատմութեան մէջ ալ սովին անուամբ յիշուի ի Խորենացոյ) թէ սահմանակցութեամբ, թէ բարուք և թէ լեզուաւ, (թուի թէ

և կրօնքով) հին ազգաց մէջ տմենէն նմանն և մերձաւորն էր մեր Հայկազանց. երկուքին սոյսրոյթքն այլ ի բաղարական օրէնս և անտեսութեան, եւս և ի զինուորութեան՝ նմանք էին, աղեղնաւորութեան և հեծելութեան մէջ հաւասարապէս վարժք ըլլալով, երկուքին երկիրն ալ աղէկ ձիոց երամակներ բերելով: Անասարակոյս է որ Հայոց պէս ալ իրենց ազգապետներն և թագաւորներ ունեցեր են, և բաւական կրթութիւն և պարզացումք. բայց իրենց հին պատմութիւնն բոլորովին կարած է, և ծանօթն կը սկսի յետ Ասորեստանեայց ինքնակալութեան կործանման և նոր թագաւորութեանց ծագման (Քրիստոսէ ը կամ թ զար առաջ): Գուցէ իրենք ալ ի սկզբան Ռիլայ ընտանութիւնը զգային, և յետոյ թոթուելով Հայոց պէս ազատ էին. Արամայ ատեն իրենց թագաւորն կամ առաջնորդն Նիւքար անուամբ մէկն էր, «Հպարտ և պատերազմասէր». որ իր երկիրն և Հայաստանի անջրպետ սահմանը անցնելով՝ մեր աշխարհքը կոխեր էր. այս սահմանը բնական բաժնող և պարիսպ մ'ունէր երկու ազգաց մէջ՝ այն երկայնաշար լեռանց գօտին՝ որ վանայ և Ուրմիոյ ծովերը և Տիգրիսի ջրերը՝ արեւելքի ուրիշ գետերէն կը զատէ, և հիմայ Քէյի-Շիկ կ'ըսուի, հին ատեն՝ յարեւմտեայց Չարասս կոչուէր, իսկ յարեւելեայց Չարասս: Այս լեռներէն անցնելով Նիւքար բազմութեամբ աւերող զօրաց, և յանկարծ յանկարծ կեղով՝ վերջապէս արեր էր մեր հին Պարսկահայք ըսուած նահանգին, և հաւանօրէն վասպուրականի արեւելեան և հարաւային կողմանց այլ, և երկու տարի էր որ կը ճնշէր անոնց բնակիչը, որք ինչուան այն ատեն Հայկազանց երկիր և ժողովուրդ սեպուէին: Արամ իր հինգ բլուր զօրքն հկաւ առոր դէմ. բայց կամ անոր աւելի բազմաթիւ և զօրաւոր զունդերէն, և կամ աւելի արինն թափելէն զգուշանալով, և կամ՝ որ հաւանազոյն է, այն ատեն դեռ կարգաւորեալ ճակատամարտ չէին ընել, այլ աւելի խարէական յարձակումը, ինքն այլ գիշերուան մութը և կանուխ առաւօտուն հանգիստ քունը հնարք առնլով, դեռ արեւը չծագած յանկարծ վազեց կոխեց կոտորեց Նիւքարայ բանակը, «և զնոյն ինքն զՆիւքարն կոչ» շեցեալ Մապէս՝ ձերբակալ արարեալ», բոլորովին ցրուեց անոր զօրքն այլ տիրապետութիւնն այլ, իր իշխանութեան տակ ձգելով երկիրը ինչուան ի Չարասս լեռը, որ թերեւս Հայկայ իշխանութիւնն ալ հասած էր, ինչպէս որ յիշեցիքն (էջ 126), և ուր իր անուամբ Հայք գեղ մ'այլ ետքի գորհրու մէջ ճանչցուած էր, իսկ այն լեռանց վրայ յարմար անցնելու տեղ մը (9000 ոտք բարձր) հիմայ յայտնի է բեւեռաքանդակ արձան մը, որոյ կանգնող և զրոզն դեռ անձանթ, կրնայ կարծիլ տալ թէ Հայոց սահմանա-

ժայրը նշանակէ, և թէ ստոյգ է (րսա խորենացոյ) վանայ արձանագրու-
թեանց ի Շամիրամայ գրուած ըլլալն, կրնայ Ջարասոպայ արձանն այլ
Արամայ յիշատակն կարծուիլ: Բայց իր ստոյգ կանգնած յիշատակն, թէ
և վայրենի, եղաւ նոյն ինքն բոնուած բոնուորն Նիւքար (որոյ անուան
տառչին մասն հաւանորէն Նոր նշանակէ, իսկ երկրորդն գուցէ զոս կամ
պատերազմն)¹¹³. զոր բռնց տարաւ Արամ՝ մինչև իր մայրաքաղաքը՝ Արմա-
ւիր, և հոն ասոր պարոպաց զլիսաւոր աշտարակին ժայրը հանել տուաւ և
երկաթէ ցից մը զարնելով ճակատին՝¹¹⁴ գամել կախել « ի անոիւ անցաւորացն
» և ամենայն եկելոցն անլը», ինչպէս որ Հայկ այլ բրաւ Բելայ մար-
մնոյն ի Հարբ: Ամ յաղթուց բարբարոս ուժը, կամ յաղթուողաց անի-
բաւութիւնը ցուցնելու համար՝ հին ասին ասանկ պատուհասներ կու-
տային, ինչպէս բիշ մ'հար Նիւքարայ յաջորդին այլ հանդիպած պիտի
տեսնենք: Իսկ անոր բռնութենէն ազատած երկիրը՝ Արամ յանձնեց Սի-
սակայ ցեղին, սրով յայտնի կ'երևի թէ Նիւքար վասպուրականի կողմանց
տիրեր էր, որ և Սիւնեաց սահմանակից է Երասխ գետով բաժնուելով, սրոյ
եղերքը կը տիրէին Սիւնիք. և ահա ինչուան այս (Արամոյ) ատենէն իրենք
եղան մեր աշխարհին արեւելեան կողմին պահապան կամ կողմնակալ, ինչ-
պէս որ յետոյ Արշակունեաց թագաւորութեան կանգնելուն ատեն այլ՝ վա-
ղարշակ զանոնք հաստատեց, նոյնպէս իրմէ վերջն եկողք այլ:

Այս ատեն հաստատուեցաւ Հայաստանի հարաւային կողմին ալ սահ-
մանակալ և պահապան կազմէական ցեղն, որ է սերունդ թոռին Հայկայ, և
նախ այս մեր նահապետէն այնպէս հաստատուած: Վասն զի արեւելքէն
շրջան անընդով Արամ՝ եկաւ իր երկրին հարաւակողմը, որ սահմանակից
է Ասորեստանի, և երկուքին միջոց կան կործայք (Քիւրախստան) որ մեր
հին հայրենեաց 15 աշխարհաց մէկն էր: Արլ այս կողմերուս այլ, որ
Հայկազանց ժառանգութիւն էր՝ ուրիշ բռնաւոր մը տիրեր էր, Սեմական
ցեղէ, Բարշամ անուամբ, որ թուի այն լեզուին մէջ որդի սրհնու նշանա-
կել, և այս անուամբ Ասորոց շատուած մ'ունենալն յայտնի է. նոյնպէս և
անոնց այս Բարշամս այլ աստուծոյ պէս պաշտելն վկայէ մեր հին պատմիչն:
Սակայն իր անոնց մէջ առած պատիւն՝ Արամայ բաջաց ձեռքէն անարգա-
կան մահուամբը գտու: Ինչպէս կ'երևի, Բարշամ Նիւքարէն աւելի քա-
ղաքակիրթ էր, և գուցէ հին Ասորայ ցեղէն պայագատութեամբ կ'իշխեր
Ասորեստանի մէկ մասին, և սահմանն ընդարձակելով տիրեր էր Հայոց
բաժնին ալ. ասոնք իրենց մօտ կործայից լեռներուն ապաւինելով անոր
բռնութենէն կրնային փախչիլ. բայց անով ինքն ալ աւելի խստանալով

գաշտակողները կ'աւրէր և ակամայ նուաճուողներուն զրոյ ծանր հարկ ձգելով սաստիկ կը նեղէր. այնպէս որ Տիգրիս գետոյն այն առաջին տարիակ և բարեբեր եզերքն անապատ դարձուցեր էր. վախ և սպառնալիքն այլ շորս գի տարածեր էր. վասն զի 40000 զինուած զրահուած հեծակ և 5000 այլ հեծեալ զօրք ունէր. ինքն այլ կարծութեամբ տնուանի և հոկայից ցեղէն ինչած կը սեպուէր: Ասոր հետ պէտք եղաւ որ Արամ բուն պատերազմական կարգաւ գէտողէ՛մ կուտի. պատերազմին տեղն կ'երեւի Ալաճնեաց և Մոկաց աշխարհաց միջոցն բլլալ. ուր զարնուեցան ըշուեցան Բարշամայ զօրքն գէպ ի կորդուաց լեռները. Հայք ետեւնուն ընկնալով վանսեցին ինչուան լեռնհրուն անգիի սաքը՝ Ասորեստանի գաշտագետներ: Բարշամ որ իր հսկայական ցեղին և աճուան նախատինք կը սեպէր՝ իրեն հակառակող մ'ունենալն, թուի թէ կ'սւզէր անձամբ Արամոյ հետ զարնուիլ. բայց ասոր քաջ զինակիրքն՝ իրենց աւեր պաշտպանելով զարկին սպանեցին զԲարշամ, զոր իր ազգայինքն Ասորիք՝ ինչպէս Բաբելոնցիք զԲէլ՝ շամրչցան իրենց աստուածներուն դասակից ընել, ի վարձ առջի քաջութիւններուն: Արամ ոչ միայն անոր մահուամբ Հայաստանի սահմաններն ազատեց, այլ և առջիններէն աւելի ընդարձակեց՝ Ասորեստանի հիւսիսային կողմին այլ տիրելով քանի մը տարի, ինչուան որ Նինոս զօրացաւ և աշխարհակալեց: Երկրին հարաւային կողմն այլ ապահովելով և յանձնելով Կազմեայց և կորդուաց, Արամ յառաջ անցաւ գէպ յարեւմտեան հարաւային կողմերն, ինչուան Միջագետաց գլուխը, այսինքն Տիգրիսի արեւմտեան բարձրահովիտը, մինչեւ ցիփրոսա գետ, որ էր բուն սահման Հայոց արեւմտեան կողմէն: Արամ առաջին եղաւ ի Հայկազանց, որ անցաւ այս մեծ գետը և կսիեց արեւմտեան կողմը, որ և իր ափերէնքն եղաւ մասն Հայաստանի, բայց բուն Հայկազանց օրինաւոր երկրէն որոշելով Փոքր Հայք կ'ըսուի: — Մինչեւ հստ Արամ աշխարհապահ էր, այսինքն իր հայրենեաց սահմաններն ազատող, շինող և պահող. ասկէ անպին աշխարհակալ եղաւ. մինչեւ հստ ստոյգ հայրենասէր էր, ասկէ անպին աւելի աշխատասէր և շտափազանց հայրենասէր:

Յայտնի է որ բնիկ Հայաստանի (Մեծ Հայոց) այս արեւմտեան սահմանակից երկիրն սովորական և աւելի ծանօթ անուամբ կապպադոքիոս կ'ըսուի. այս անունն առած է շատ ետքն երբ Պարսիկք ափրեցին, և ասոնց ընդուաւ կ'ըսուի թէ Քարսոս երկիր նշանակէ, որուն կը համաձայնի մեր մէկ հին վարդապետն այլ Երկիր Մրձասարաց թարգմանելով: Հին Յայք (ինչպէս Հոմերոսի ասեն) Սպիտակ — Ասորիք (Լեզոսի) կ'անուանէին այս

աշխարհա, իսկ մերազգիք՝ որ աւելի մերձաւորք և ծանօթք էին՝ Գամիրք կ'անուանեն, յանուն Գոմերայ որդւոյ Յարեթի, որ արգարեւ երկու ըին այլ նախահայրն է, և Հայաստանէն ելնելով՝ բնակեցաւ այդ կողմերը. ուստի մեր թարգմանիչք և առաջին մասենագիրք այս անունը կը պահեն, (որ և կը ստուգուի ինչուան հիմայ կեսարիոյ մօտ կամարակ գեղի անուամբ, և Քեօմիար գեաով): Մէկ հին նահապետի (Գոմերի կամ Գամերի) սերունդք ըլլալով³¹⁴ Հայք իրենցմէ շատ օտար պիտի չսեպէին զԳամիրս, մանաւանդ անանկ հին ժամանակ՝ որ ազգաց բաժանումն և իրարմէ ծագումն շատ մութ բան չէր. ուստի կրնանք ըսել թէ Արամ՝ իրբեւ խնամեաց և մեր-ձաւորաց մէջ մանելով՝ համարձակ կ'երթար այս կողմս:

Բաշոր պատմութեան ծանօթ միջոց՝ Փոքր Ասիա, որուն մէջ է կապագովկիա, միշտ մանր տէրութիւններ և աշխարհներ բաժնուած է. միայն ետքի տոններ օտար հզօր աշխարհակալաց ձեռքի տակ ընկած է բոլորը մէկէն. միայն այս մեր նահապետին ժամանակ, այսինքն Արամայ, մեր պատմութիւնն կը յիշէ՝ որ այս աշխարհին (զոնէ մեծագոյն մասին Փոքր Ասիոյ) զրոյ բռնացեր էր հսկայազօր իշխան մը, զոր և Տիտանեան կոչէ. և կ'իմացուի անուանէն՝ որ էր Պայապիս Քաաղեայ, թէ Բաբելացի պիտի ըլլայ³¹⁵. արդէն նոյն մեր պատմիչն Բաբելոնի առաջին թագաւորաց մէջ կը յիշէ զԲաբ իրբեւ սրբի Ներսիթայ, և զՔաաղայ թոննորդի Բաբայ, նոյն ինքն զՔամ զնախահաւ Ներսիթեանց կամ Բելեանց այլ՝ Տիտան կ'անուանէ. դարձեալ, արտաքին պատմիչք ալ այս կողմերուս հին բնակիչները Տիտանեան կ'անուանեն, յորոց էին ըստ նոցա կոտոս և Արամազդ և Հերմէո կամ Տեւտաա, և առաջին թագաւորքն Մանէս, Ակման, Ուրանոս և այլն. որով մեր պատմիչին ըսածն թէ զԱրամայ՝ « յարեմուտս ընդ Տի- » անեայն է ոտրա գործ քաջութեան », կրնանք իմանալ նաեւ ուղղակի կապագովկիոյ և Փոնդիոյ բնակիչները, ինչպէս նաեւ իրենց տիրապետը Բաբ մը Քաաղայ և Բելայ ցեղէն, « որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծո- » վուց մեծամեծաց, զՊոնդուն և զՈվկիանու », այսինքն զմէջ Սեւ ծովու և Միջերկրականին, որ է ըսել բաշոր Փոքր Ասիայն հիւսիսէն ի հարաւ. որոյ և մեծագոյն աշխարհն էր Գամիրք կամ կապագովկիա: Արդ Արամ երբ իր հորց հին հարուային սահմաններն ազատելով՝ անկից յարեմուտք կու գար՝ կամաց կամաց կոխած երկրին տիրելով, մինչեւ հասաւ անոր ամե-նէն բարձր և նշանաւոր լերան քով, որ կրնայ այն աշխարհին Արարան ըսուիլ, և է Արգէոս (Էրծիլ) լեանն ըստ Յունաց, որ հաւանօրէն Արեգ կամ ասոր նման պէտք էր կոչուիլ. ինչպէս որ այն երկրին մեծագոյն

գեան այլ՝ Ալլուս ըստ Յունաց Արեգան կոչի ի նախնաց Հայոցս : Այս լերան հիւսիսակողմն է արեւմտեան Առիոյ հնագոյն և անուանի քաղաքաց մէկն և մայրաքաղաքն կապադոկիոյ՝ Կեսարիա, որ այն ասէն չէր նշանաւոր ոչ իբրեւ քաղաք և ոչ իբր շէնք, այլ յարմար զիրք մ'ունէր. անոր համար Արամ հոն դարեցաւ և ուզեց քաղաք մը շինել²¹⁶ : Տիտանեանն՝ որոյ ուր նստին յայտնի չէ, (բայց թոյի թէ ի հարաւակողմն էր) լսելով որ ուրիշ զօրաւոր մ'եկիր է իր տիրածին տիրելու՝ փութացաւ վճռակաւ . բայց ինքն հալածուելով յԱրամայ՝ որ հասն 40,000 հետեւակ և 2000 ձիաւոր բերած էր, փախաւ ընկաւ ինչուան Կիլիկիոյ հարաւակողման կրդգեաց մէկուն մէջ, ի Կիպրոս կամ ի Կրետէ²¹⁷, ինչպէս սեղ մը բռինք (Էջ 71) : Ապա Արամ անարպել իշխանարար տիրեց ինչուան Արեգան գետոյն արեւմտեան արմունկը կամ դարձուածը վէպ ի հիւսիս . և իր ընտրած անդր կամ շինել սուած քաղաքը՝ անոր շինող և իր անդակալին անուամբ Մշակ կոչեց, զոր Յսնք չկարենալով արտարելով՝ Մագաք կոչեցին, անկէ յետոյ մեր մէջ այլ Մամակ անուանեցաւ . ահա այս անգս է որ յիշխանութեան Հոովմայեցոց 2000 տարի վերջը Կեսարիա անուանեցաւ ի Տիրերիոս կայսերէ և անկէջ այլ ինչուան հիմա՝ նոյնպէս կոչի (Պայտերի ի Տաճկաց) :

Բոլոր Հայկազանց աւերութեան միջոց որ 2000 տարիէն աւելի տեսց, զրիթէ մինակ այս Արամայ աշխարհակալութիւնն կը յիշուի, որ և ետքի ասեններ եղածներէն աւելի նշանաւոր և հաստատուն և իրական եղաւ . մասն զի անով մեր ազգն և երկիրն ընդարձակեցաւ . և առջի բուն Հայկազանց երկիրն՝ Եփրատայ արեւելակողմը՝ լսուեցաւ Մեծ կամ Արեւելեան Հայք, իսկ գետոյն անդիւի կողմինը և Արամայ տիրածը՝ Փոքր կամ Արեւմտեան Հայք : Եւ ինչպէս Մեծ Հայք՝ Հայկայ որպէս կամ ուրիշ նահապետաց անուամբք զանազան աշխարհներ բաժնուած էր, այսպէս Փոքր կամ Արեւմտեան Հայք այլ բանի մը աշխարհ բաժնուեցան . և նախ Գամրաց արեւմտագոյն մասն՝ որ Մշակն հաստատուեցաւ՝ ըսուեցաւ Ա Հայք, իբր զի յարեւմտից կամ ի Յունաց կողմանէն գալով՝ այն է առաջին երկիր և կուտակալութիւն Հայոց . միանգամայն և առաջին երկիր նուաճուած և շինած ի Հայոց : Անոր հիւսիսային արեւմտեան կողմը՝ մինչեւ Մեծ և Բարձր Հայոց կողմին՝ եղաւ նոր աշխարհ մը և լսուեցաւ Բ Հայք, զանազան գաւառներ բաժնուելով, որոց մէկն էր Կոզոպեան և անոր մէջ Բ Հայոց մայրաքաղաքն ալ՝ յետոյ և հիմայ Սեբաստիա ըսուած : Մատակայ և Սեբաստիոյ կամ Ա և Բ Հայոց արեւելակողմն մինչեւ ցեփրատ և ցՄեծ Հայս՝ լսուեցաւ Գ Հայք, որոյ մայրաքաղաքն այլ եղաւ Մեղիտիկէ, ըստ ոմանց Շամիրամայ

մէկ անուամբը: Ասոր անմիջապէս սահմանակից մասն Մեծ Հայոց Եփրատայ արեւելեան կողմն՝ որ կ'երեւի թէ գեռ բուն Հայոց երկիր չէր սեպուեր, հիմայ այնպէս եղաւ և ըսուեցաւ Դ Հայք, որ և առանձին և հնագոյն եւս անուամբ կ'ըսուի Ծոփք: Կ'երեւի թէ ասոր հիւսիսակողմն եզող Մեծ Հայոց մէկ աշխարհն այլ՝ Կարին՝ ինչուան այն ատեն Հայկազանց երկրին մասն չէր, և հիմայ եղաւ ու ըսուեցաւ իր բնական գրիցն համեմատ Բարձր Հայք: — Թէպէտ և յետ 2000 և աւելի տարիներու Կ. Պօլսոյ կայսերութիւնն հաստատուելէն ետեւ՝ այս հին արարատեան բաժանմունքը փոփոխելով՝ Ա, Բ, Գ և Դ Հայոց անուանքն այլ իրար անցան Յունաց մէջ, բայց մեր պատմիչք գեռ ջանացին հին ազգային բաժանմունքը հաստատա պահել: Այս ամեն աշխարհներն այլ Արամայ ատեն գեռ լաւ բնականա՞ծ կամ մարդաշատ չէին. անոր համար ինքն որ հաւանօրէն Փոքր Ասիոյ ուրիշ կողմերու այլ տիրեր էր, գոնէ Պայպոյիսը հալածելու ատեն, այն անգերէն գերութեամբ և գաղթութեամբ շատ մարդ բերելով՝ բնակեցուց իրեն նուաճած և բաժանած աշխարհաց մէջ. և զանոնք իր ազգին հաւատարեւու համար՝ պատուիրեց և սաիպեց «ուսանել զխօսս և զլեզուս» հայկական»:

Այս հնարքո որ աշխարհակայի և բոնաւորի մը համար զէնքերէն շատ աւելի զօրաւոր է, և ընդարձակիլ սւզող ազգի մը համար՝ յարմարագոյն միջոց, և զրսուանց սաստիկ հայրենասիրութեան մը նշան, առաջին օրինակ է ի պատմութիւնս՝ այս կերպ խիստ և բոնական հնարից՝ օտար ազգեր բաւորովին նուաճելու և իւրացընելու համար, զոր յետոյ շատեր բանեցուցեր են և միշտ պժգալի եղած է. գուցէ անսլ ազգերնիս բան մը շահեցաւ, և նոյն ինքն Արամ այլ, բայց ոչ իր պատին. միայն եթէ չկայ ուրիշ բանաւոր պատճառ մը՝ զոր պատմութիւնն լռէ. ինչպէս կրնայ ըլլալ այն գաղթած ազգերուն անկրթութիւնը կամ անկարելիութիւնը իրենց մայրենի լեզուն պահել՝ նոր և մեծ ազգի մը շրջապատին մէջ, ինչպէս էր Հայոցն, որք ոչ միայն Եփրատայ մէկ կողմէն անոնց սահմանակից էին, այլ և մէկ այլ կողմն այլ անցան, և Արամայ նոր առած աշխարհաց մէջ քիչ շատ սփռեցան. արդէն այն տեղուանքը պահելու համար՝ Արամ 10,000 զօրական թողեր էր Մշակայ քով, որք ի հարկէ սփռեցան այն կողմերը և շարտուն տեղ հաստատեցին: Դարձեալ յիշելու է որ բնիկ Գամիւրք շատ տարբերած չէին ի Հայկազանց, և առաջուց ինչպէս երկրաւ այսպէս և լեզուաւ մօտ էին իրարու, միջասահման մ'ըլլալով Արեաց և Յունաց լեզուներուն: Արդ թէ՛ այս հին և նախնական պատճառուն ըլլայ, թէ՛ Արամայ հնար-

քոֆե՝ կրպակովկացուց մնացեալ յիշատակներէն այլ յայտնի է՝ որ ոչ միայն իրենց անձանց և շինից անուններն՝ մօտ և նման են Հայ անուանց, այլ և սօմարնին գրեթէ նոյն է, այսինքն իրենց ասարոյն չափերը և ամօց անունները²¹⁸։ Մեր նախնիք այլ օտարաց բուն կապաղովկիա ըսածն (զոր Արամ տրոհեց յԱ, Բ, Գ, Հայք) միշտ Գամիրք Հայսց կ'անուանեն, որոշելով անոր հիսիսային մասէն՝ որ ինչուան Սեւ ծովուն եզերքը կը ձգուէր և կ'ըսուէր Պոնտական կապաղովկիա կամ Գամրական Պոնտոս, ըստ մերոցս, որ յետոյ սոսկ Պոնտոս ըսուեցաւ։

Մեր քերպողահայր պատմիչն այս բռնեքս յիշելին ետեւ կ'ըսէ. «Արգ» սա (Արամ) այսպէս հզօր և անսասնի եղեալ, յանուն սորա՝ մինչեւ» ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօք ազգք՝ զաշխարհս» մեր անուանեն»։ կամ ինչպէս առաջուց այլ կ'ըսէ. «Ընդարձակել զուսու-» մանս Հայոց յամենայն կողմանց, յորոյ անուն և զաշխարհս մեր անուա-» նեն ամենայն ազգք. սրպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Ասորիք և Պարսիկք» Արմէնիք (կամ՝ Արմէնիկ)»։ Այսպէս կրնամք ըսել մենք այլ, թէ Հային իր անունը տակեց արարատեան աշխարհին մէջ, իսկ Արամ իրենը սերմանեց՝ անոր եզերքները, ուսկից սփռեցաւ ընդ ամենայն աշխարհ, և միայն մեզմէ զատ, ամեն օտարք այլ մեզի և մեր աշխարհին այս Արմեն անունը տուեր են և կու տան։ Գուցէ այս Արամայ տարած ու բերած գաղթականութենէն մնացած են Գամրաց և Պոնտոսի կողմերը քանի մը Արմեն անուամբ տեղիք, ինչպէս ինչուան Սեւ ծովուն եզերքը և Սինոպի մօտ՝ Արմենե աւանն. իսկ Արմենիակ դաւանն՝ յետոյ Հոռոմ կայսերաց ատեն անուանած է։

Պատմիչն այս խօսքէն ետեւ կ'աւելցընէ «Բագում և այլ գործք արու-» թեան ի սմանէ գտանին կասարեալ. այլ մեզ բաւական լիցի ասացեալ»։ Նոյնպէս և ի սկզբան կ'ըսէ. «Արամայ բագում գործք քաջութեան պատ-» մին մարտից նահատակութեան... զինդարձակութիւն պատմութեան սորա» և զգործս քաջութեան թէ զիսորդ կամ առ սրնոյ ժամանակաւ, թէ կա-» միցիս արտաքոյ այսորիկ գրոց կարգեսցուք և կամ թողցուք. ապա թէ» ոչ՝ ի ոմին»։ Եւ ասով կ'իմացընէ, որ ըստ սովորութեան իւրոյ՝ գործոց մաս մը պատմած է, մաս մ'ալ թողած. և պէտք ալ է թողած ըլլալ, որ կարենայ բագում գործս ըսել։ Արդ այս շատ քաջութեան գործքերը, զոր և Արամայ աշխատասէր կոչումն կը պահանջէ, հաւանօրէն իր տէրութեան այս ասանս բրաւ. երբ ի Նոր և յարեմտեան Հայս էր, վասն զի երկար ատեն այլ հոն կեցաւ կ'ըսէ պատմիչն²¹⁹։ Անշուշտ կապաղովկիայէ դուրս տեղեաց

այլ ախրած պիտի ըլլայ, և պիտի տիրէր՝ զուցէ իր հայրածած Տիտանէն առելի՝ եթէ իրմէ ալ մեծ և զօրաւոր աշխարհակալ մը յերեսան չեղնէր, որ և պատմութեան մէջ առաջին աշխարհակալ և միապետայն է:

Հայկայ քաջութեամբ ստացած երկրին բնական ապահովութիւն և պարտպարան էր Տարոս լեռանց պարն, որ հստ կորզուաց (և հիմայ Քիւրախտան) անուամբ կը յիշուի. այս լեռանց հարուստեղմէն սկսեալ մինչև ի Հնդկաստան սփռանաս կամ անոր զէպ ի հիւսիս երկրնցած ծոցերը (Պարսից ծոց և Կարմիր ծով) կը ձգուի անհուն տարածութեամբ երկիր զաշտ ու անապատ, որուն վարի մասն է Արարիա, վերինն՝ ուստի կ'անցնին Եփրատ և Տիգրիս՝ հին աշխարհի առաջին մեծ և հզօր տէրութեան տեղն էր, Բարեւաքոց և Ասորեստանեայց անուամբ հռչակուած. որուն հիւսիսային սահմանը Հայոց հարուստին սահմանաց կը հասնէր. յիշեալ լեռինքն կորզուաց անջրպետ եղաւ Հայկայ և Բելայ հակասակութեան և տիրապետութեան: Հայկէն մինչև ցԱրամ 400 տարուան միջոց՝ ինչպէս իր յաջորդքն մեր պատմութեան մէջ նշանաւոր մը չեղան, այսպէս այլ Բելայ յաջորդք Բարեւնի առաջին թագաւորաց հարստութիւնն. և ինչպէս մեր մէջ Արամաւ նորոգեցաւ և զօրացաւ տէրութիւնն, այսպէս իր զրացի մեծ տէրութեան մէջ այլ՝ Նիկոսիս, զոր ոմանք Բելայ կամ Ներբողթայ ցեղէն սեպն, ոմանք յԱսորայ. բայց այս և ասոր նման խնդիրները՝ որ այս մեծանշան անձին վրայ եղած են, մեր պատմութենէն դուրս թողլով՝ միայն մեզի հարկաւորագոյնը յիշենք. որ սա եղաւ կանգնող կամ վերականգնող Նիկոսի և Ասորեստանեայց հզօր միապետութեան: Նիկոսէ մայրաքաղաքն՝ Հայկայ օրերէն ի վեր կանգնուած էր՝ (յԱսորայ կամ մանաւանդ) ի Ներբողթայ. Նիկոսս՝ նորոգեց և կամ իր թագաւորութեան ամբողջ հաստատեց ի Նիկոս, (որ թուի թարգմանիլ Նիկոս աասն), որ առաջինն եղաւ երկրիս մեծ և համաշխարհական քաղաքաց, (ինչպէս յետոյ Բարեւն, Աղեքսանդրիա, Հոմո, և այլն) և երկար գարեր այլ, (իրբեւ. 1300 տարի): Նիկոսէ որ յետ այնքան գարերու ալ մէջն միայն 120,000 մանր սողայ սնէր, որոյ պարիսպքն 100 սաք բարձր էին, 1500 աշատարակներն 200՝ կենդրոնն առիական հնագոյն³⁷⁰ և հզօրագոյն իշխանութեան, զօրութեան, բարգաւաճանաց և շոտլութեան, սը բազմաթիւ ազգապետք հարկ տալու և օրէնք առնելու գային, կրնար գրեթէ դրակից բոսիլ Հայոց, այնքան մօտ է մեր հին աշխարհին սահմանաց, հազիւ թէ օրուան մը ճամբայ հեռու Մոկաց կողմէն, և հազիւ 30—40 մղոն յԱմասիէ քաղաքէ՝ որ կորճայից մէջ կամ քոֆէ է: Այսքան կիպ մտաւորութիւն անկարելի էր որ Հայաստանի վրայ

մեծ ազդեցութիւն չունենայ. որուն թէ և մայրաքաղաքն՝ Արմաւիր՝ Երասխայ հիւսիսային եզերքը բաւական հեռու Նինուէէն որ Տիգրիսի վրայ է նստած, բայց Հայկայ և իր եղբարց և թոռանը կաղմոսի բնական տեղիքն՝ ուր և իրենց սիրունւոյքն կը պայազատէին՝ շատ մօտ էին. մանաւանդ որ Արամ ոչ միայն մինչև Հայկայ հին սահմանը կը տիրէր, հապա անկէ այլ անդին՝ լեռանց դաշտակողմը, որ է ըսել ինչուան բուն Նինուէի սահմանները, զոր պահպանելու յանձնել էր կազմեան ցեղին. բայց տարակոյս չկայ որ Նինուէի շինութեան ատեն՝ Հայոց սահմաններն նորէն իրենց լեռներուն քուռեցան: Նինու կը փափագէր բոլոր Ասիոյ տիրել, ի կողկասայ մինչև ի Նեղոս, յԵփրատայ մինչև ի Հնդիկս. բայց շատ հեռու չզացած պէտք էր նախ մօտաւոր և զրակից ազգերը նուաճել. և ասոնց ամենէն մօտն էր Հայոցն, միանգամայն և ամենէն դժուարինն, վասն զի Արամ էր այն ասան Հայոց նահապետ:

Հայոց և իրենց հարաւային գրացւոյն մէջ ի սկզբանէ ի վեր թշնամութիւն կար, պատճառաւ Հայկայ և Բելայ հակառակութեանն. Նինու այլ (որ Բելայ ցեղէն կ'ըսուի) ըստ անուութեան մեր հին պատմիչն՝ (Խոր. Ա. ԺԴ.) այս հակառակութիւնն ունէր և կ'ուզէր հին վրէժն առնուլ. բայց նախ թէ՛ իր աշխարհէն և ազգէն ունեցած իտուութեան վախն, և թէ Արամայ քաջագործութեանց համբաւն՝ արգիլեցին զինքը. և երկայն տարիներ ուրիշ գործոց պարապելով՝ յարմար տեսնին կը սպասէր. « յամա ձիգս, » նկատել որսալ զյաջողութիւն աւուրց, բառնալ ջնջել զամենայն ճեռ » սերմանեալ յարանց քաջին Հայկայ»: Արամ այլ Նինուսի շուտ շուտ աճել զօրանալը կը տեսնէր, և երկուքն ալ կ'սրճայից լեռները իրարու անջրպետ ձգելով՝ զիրար կը դիտէին առանց համարձակելու իրարու դէմ անցնիլ. երկուքն ալ ջանալով իրենց աշխարհը շնցընելու, բայց Նինուս նաեւ իր իշխանութիւնը տարածելու. որոյ համար ընծաներով և դաշնակցութեամբ իրեն ձգեց Արարացւոց (Եմէնի) թագաւորը, զոր Արիէս կամ Արայոս (որ է Արայ) կ'անուանեն պատմիչք, և անոր կտրիճ զօրաց հետ՝ նախ իրենց երկուքին միջոց եղած Բաբելացւոց սկար թագաւորութիւնը վերուց, ապա իր երկրին արեւմտակողման՝ այսինքն Ասորոց տիրեց. և զօրքերն աւելցնելով պարձաւ դէպ ի հիւսիս՝ Հայաստանի վրայ: — Եթէ մեր հին պատմութեանը նայելով և եթէ օտարի մը (Դիոդ. Բ.) որ մինակ կը յիշէ զայս, Արամ այնպիսի բռնութեան և բազմութեան դէմ կենալը խոհեմութիւն չսեպեց, այլ իրմէ զօրաւորին կամ բռնաւորին խոնարհեցաւ.²³¹ Օտար պատմիչն (Դիոդորոս) փոխանակ Արամայ՝ Բարզան կոչէ Հայոց նահապետը և բազաւոր պատուա-

նուամբ: Նինոս Հայաստան մտնելով սկսաւ ասպատակել, և քանի մը քաղաք տարեց. Բարզան՝ որ գուցէ Արամայ մէկ որպիսի էր կամ իր այն կողմը դրած (կազմէական) կողմնապետն, եկաւ խաղաղութեամբ Ասորեստանեայց ինքնակալին տոջեւ, որ մէկէն ետք կեցաւ պատերազմ, անշուշա չյուսալով այլ անսով կարենալու տիրել այնպիսի բնպարձակ և զժուարին երկրի՝ անանկ զօրաւոր առաջնորդի մ'ասեն: Եւ հոս թէ՛ մեր և թէ՛ օտար պատմիչն միարանին թէ թողոց Հայոց տիրապետին իր տէրութիւնը. և ըստ մերոյ պատմիչին՝ թայլ տուաւ անոր կամ իր կողմէն աւելցուց՝ «Վարաւ» կալ ածել մարգարտեայ, և երկրորդ նորա կոչել»: Վարաակալն բուն հին թագաւորական թագն չէր, այլ ճակատին վրայ մագերթ ժողովող պսակ մը, որ մարգարտով բանած էր, և անշուշա այս մարգարտն այլ յԱրարիոյ բերած բնծայ մ'էր Նինոսի առ Արամ. ուսկից ինքն այլ փոխարէն անոր քաջ և վարժ զօրքերէն օգնական զսեղ մը ինպրեց, Մարաց զէմ երթալու, որոց անյարմար էին իր պաշտարնակ զօրքերը: Մարաց թագաւորն այն ատեն կ'անուանէր Փասակ կամ Փասակ (զոր Փանոս կոչեն օտարք). զէմ ելաւ անոնց բայց կարծածէն աւելի զօրաց և զօրովարաց Հանդիպելով յաղթուեցաւ. շատ մարդ կորուսանելով՝ ինքն ալ բռնուեցաւ իր կնաւն և եօթն սրբօքն. զորս անինայութեամբ խաչել տուաւ Նինոս, որ նման պատուհաս մ'էր Արամայ բրածին առ Նիւբար և որոյ թերեւս յաջորդն էր Փանէն, եթէ ինքն Նիւբար օրինաւոր առաջնորդ էր Մարաց:

Նինոս ասանկ ճարտարութեամբ իր սահմանակից չորս մեծ տէրութիւններէն ապահովելով, զերկուքը նուաճելով (զՖարեկացոց և զՄարաց) երկուքին հետ այլ պաշնակցելով (Արարացոց և Հայոց), 17 տարուան մէջ, կ'ըսեն պատմիչք, տիրեց բոլոր արեւմտեան Ասիոյ, ի Պարսից մինչեւ յԵւլեպոնտոս, ի Պոնտոսէ մինչեւ ի Միջերկրականն, և երեսնի շափ աշխարհք կը համրեն, որոց կէսն ի Փոքր Ասիա, կէսն յԱսորիս, ի Միջագետս և յայնկոյս Տիգրիսի մինչ ի Պարսկային ծոցն, ի Մարս և յեզերս կազբից ծովուն. և հոս այլ զՀայաստան բնաւ չյիշելով՝ այլ անոր սահմանակիցները, անսարսկոյս կ'ընեն մեր աշխարհին ազատութիւնը և անոր իշխողին քաջութիւնն և խմաստութիւնն. կ'արդարացընեն և անոր վրայ սքանչացող մեր իրաւասէր պատմիչը, որ Հայկէն ետքը մինչեւ ի Տիգրան Երուանդեան, իրբւ 1800 տարուան միջոց, միայն զԱրամ կը գտնէ արժանի քաջաց և մեծաց անուան, «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ քաջաց ազգք» քաջքն. իոկ միջոցքն՝ որպէս զէպ ումեք թուիցի կոչել»: Թէ՛ այս պատ-

միչս (Խորենացի) և թէ իրմէ ետքն եկողք²³² կ'իմանան՝ թէ Նինոս ակամայ և վախով պատուեց զԱրամ իրեն երկրորդ անուանելով. շատ աւելի անդին կ'անցնի բազմահմուտ Գերմանացի մը (Ռոմմէլ ի Գերմ. Հանրագիտ. Armenien բառ), զԱրամ ոչ միայն հարկատու չէր ըսելով Նինոսի, այլ և անոր յաղթող. թէպէտ և անտարակոյս է որ բարոյապէս յաղթուեցաւ Նինոս յԱրամայ, որոյ քաջութիւնն և խելքն չթողուց անոր որ գէպ ի հիւսիս յառաջ գայ. այլ պարձուց յարեւելք, մինչև ի Բակարիա, որուն տիրեց ճարտարութեամբ կնկան մը՝ (Շամիրամ) որ տիրեց նաև անոր սրտին, և յետոյ թագին այլ:

Գրեթէ բոլոր Նինոսի թագաւորութեան ատեն (52 տարի) ապրեցաւ Արամ՝ իշխելով Հայոց իբր 80 տարի փառօք և բարեօք, զուցէ ծերութեանն ատեն իրեն գործակից ունենալով վերոյիշեալ Բարզանը, թէ ոչ և յաջորդ. վասն զի պատմութիւնն՝ որ իրեն յաջորդ և որդի կ'ընծայէ զԱրայն գեղեցիկ՝ ասոր կենաց պիպուածով և իրեն 12 տարեկան որդի մը (Կարպոս) ժառանգ թողլովն այլ՝ կ'իմացրնէ որ ինքն Արայ այլ երիտասարդ էր Հայոց իշխած ատեն. ապա կամ թոռն և ոչ որդի էր Արամայ, և կամ ասոր ծեր հասակին պտուղ. ինչպէս կրնանք գուշակել պատմչին այս խօսքէն այլ. « Բայց Արամ զկնի ամի կենաց իւրոց՝ ծնաւ զԱրայն, յետ որոց » և այլս բազումս կեցեալ ամաց՝ մեռաւ »:

Կրնամք առանց կողմնասիրութեան ըսել, թէ սառյգ կամ սառուզագոյն երեւցած պատմութեան մէջ հնազոյն և սիրելագոյն և պանծալի կերպարանք մ'է Արամայն. որ Հայկայ նման շատ յիշատակներ թողած էր աշխարհին մէջ. որոց մոռացութեան պատճառ կու տայ մեր պատմահան (Մարիրաս), մէկ մը այն ժամանակ պատմութիւն գրելու սովորութիւն չըլլալն, մէկ մ'այլ Նինոսի նախանձն և իրմէ առջիններուն յիշատակը ջնջելն, որուն հետեւեցան և իր յաջորդքն՝ սրբ տիրեցին այլ Հայաստանի: Ի վերայ այսր ամենայնի, կ'ըսէ նոյն պատմիչն, թէպէտ և բուն թագաւորական պատմութեան գրոց մէջ չգրուեցան այլ, բայց առանձին մանր յիշատակագիրներ և երգիչներ անմոռաց ականգութեամբ թողուցին յետոց արժանաւոր անձին գործերը, ուսկից յետոյ զիտունք քաղելով գրեցին պատմութիւնը²³³:

Ժ Գ

ԱՐԱՅՆ ԳԵՂԵՑԻԿ - ՇԱՄԻՐԱՄ

ԱՐԱՅԵԱՆ ԱՐԱՅ (ԿԱՐԳՈՍ) - ԱՆՈՒՇԱԻԱՆ

ԱՐԱՅԱՅ և Նինոսի յաջորդներուն աանն բոլորովին կերպարանափոխի կ'ըլլայ պատմութիւնն Ասորեստանեայց և մանաւանդ Հայոցս . և անանկ փոփոխ և զգայուն զիպուած մը կը հանդիպի հոս՝ որ շատերուն զօտ վիպասանական և ողբերգական զէպք մը կ'երեւի, սակայն ամենեւին անհաւատալի չէ անոնց՝ որ Շամիրամայ բարուցը հաւասան, որոյ միտքան վրային ամենայն հին պատմիչք: Այս կինս որ և առաջին տիկին այսինքն տիրապետող կին եղաւ ի վերայ Ժողովրդոց՝ հին պատմութեան ամենէն նշանաւոր և տարօրինակ անձանց մէկն է. անոր համար ոմանք բոլորովին առասպելեալ և մտահար մէկ մը համարին զնա. սակայն անաչառ քննիչք խոստովանին՝ որ թէ և շատ առասպել կայ իր պատմութեան մէջ, մանաւանդ իր ծագմանը վրայօք, և թէ շատ ետքի և օտարաց զիպուածք՝ իր վրայ զրուցուած են, ի վերայ այսր ամենայնի ինքն ստոյգ պատմական անձ է, և վրան ըսուածներն մասամբ ճշմարիտ. զորոնք քննել և զատել՝ մեր պատմութեան մասն չէ, բայց այսչափս ըսելս հարկաւոր էր՝ Շամիրամայ մեր պատմութեան մէջ այլ մեծ և նշանաւոր տեղ մը բռնելուն համար, որ և կերպով մը իր պատմութեանն ալ նշանաւորացոյն մասն է, և աւելի մանր պարագաներով պատմուածն, ի Մարիբասայ և մեր նախնի Հայկազանց երգերէն, որոց համաձայնին կոտեսիասայ և Դիոդորի Սիկիլիացոյ մնացորդ յիշատակարանքն:

Արամայ մահուանէն 2 տարի վերջը Թագաւորեց Ասորեստանեայց այս հրէշաւոր կինն, որ բնիկ Ասորի, Սեմայ ցեղէն էր կ'ըսեն, իսկ անունը շատ կերպ կը մեկնեն²³⁴. էրկանը (Նինոսի) մահուանէն կամ փախչելէն ետեւ, որուն արդէն անօրինաբար կին եղեր էր, շուգեց, կ'ըսեն, ուրիշ օրինաւոր ամուսին ունենալ. այլ իր անթիւ հպատակաց և զօրապետաց միջէն հաւնածը կ'ընտրէր ընկեր անտակալութեան, և յետոյ կը թողուր, մանաւանդ թէ սպաննել կու տար, և անոնց մարմնոյն վրայ մեծ հողաբլուր մը կը կան-

գնէր, որ Թիլք բուսեցան. ոմանք կ'ըսեն թէ այս հողաբլուրներն կամ Թիլք իրեն գիտարաններն էին զօրաց բանակը և երկրին գիրքը քննելու համար. ոմանք այլ ուրիշ պատճառ կու սան, բայց կը միաբանին թէ Շամիրամ բարձրացընել սուաւ այն ձեռագործ բլրոց շատերն՝ որ գեռ կ'երեւին Միջագետաց և Ասորոց կողմերը: Իր անկարգ բազմանաց մեծ կրակ եզաւ մեր ազգին Նահապետն այլ, և այնչափ աւելի քան զուրիշներն՝ որչափ որ սա թէ յերաւի բնական շնորհքով կերպարանաց վայելչութեան զարգարուած էր, մինչև Գեղեցիկ մականուանիլ²²⁶, և թէ հոգւոյն ազնուութեամբն, որով կ'ատէր զմելի տիկինը: Արայ պայագրան Արամայ՝ վերը յիշածիս համեմատ անոր կրտսեր որդին էր, և գուցէ առջի Հայկազանց սովորութեան համեմատ՝ նոյն վերջինեկութեանը համար Արամ իրեն թողուց իր սուտանը, Արմաւիրը. անդրանիկ զաւելները զրկելով դէպ յարեւմուտք՝ ուր նոր գաւառաց և աշխարհաց տիրեր էր. գուցէ հոն խաւրեր էր և զԲարզան՝ որ նիզակակից էր Նինոսի: Ասիկայ իր ինքնակալութեան ետքի տարիները պատուեց գերիաասարզ ազգապետն Հայոց զԱրայ՝ թոյլ տալով անոր որ իր հօր պէս մարգարտակապ վարսակալ կապէ նշան իշխանութեան, միանգամայն և նախապատուութեան յիշխանս՝ որք Ասորեստանեայց իշխանութեան մեծութիւնը կը ճանչնային: Արայ իր անձին և սրտին համեմատ վայելուչ կինակից ունէր զՆուարդ, որ յայտնապէս ստուգաբանի Նոր վարդ, և որ մեր պատմութեան մէջ առաջին յանուանէ յիշեալ Հայուհին է, առաջին իգական հայ անուն. իրենց ամուսնութեան պտղոց մէջ կը յիշուի մէկ մը միայն, իրեն յաջորդն և յետոյ անուանակիրն, զոր ծնողքն անուաներ էին Կարդոս, որոյ յունական վերջաւորութիւնը թողլով՝ կրնանք կարծել թէ այլ անունն տրեւ կամ պայծառութիւն նշանակէ՝ ըստ պարսիկ լեզուի²²⁶: Յայտնի է թէ այսպիսի սիրելի, պարկեշտ զակի տէր և ամուսնոյ մը յարգը որչափ աւելի զգուելի և զայրանալի կ'ընէր՝ այնպիսի անառակ անամոթ տիկնոջ մը հրապոյրքը և հրաւէրքը, ինչպիսի էր Շամիրամի շուայս և թանձրամարմին²²⁷: Եթէ մեր պատմչին բաժըր գիտենք՝ Շամիրամ Նինոսի ողջութեան ատենէն լսեր էր Արայի գեղեցիկութիւնը, և շատոնց փափագէր անոր. սակայն առջի տարիները ծածուկ հրեշտակութեամբ սկսաւ հրապուրել գնա, յետոյ երբ ամենուն այլ յայտնի եղաւ իր լրբութիւնն ուրիշ տեղ ըրածներով, աւելի յայտնի պատգամներով և բնծաներով և ինչուան Նինոսի ինքնակալութեան թագը խոստանալով կը յորդորէր շատ տարիներ, մինչ զբազմ էր Բարեւընի շինութեանը և ուրիշ գործերու. բայց Արայ ոչ հրապոյրը յանձն առաւ և ոչ ընծաները, մինչև որ Շամիրամ

պարտադրեալ և յարձար ատեն գտաւ, և Նինոսի աշխարհակալութիւնը ի վրոխ տանել ուզելով, իբր թէ բողոքովին զՀայս նուաճելու համար՝ « առնու » զբազմութիւն զօրաց իւրոց և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի » վերայ Արայի: Բայց որչափ դիմաց էր նշանակել՝ ոչ այնչափ ինչ ի սպա- » նանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ՝ զրոամբ » ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մա- » ընդունութեանն, ի բանսն որ զնումնէ՝ որպէս ի տեսութիւն շամշութեամբ » վառեալ էր »:

Շամիրամայ այլաճակ փափագն առաջնորդ եղաւ առաջին անգամ մեր աշխարհը ստնակոխ բնելու օտար զօրաց՝ որք անկէ ետքը այլ և այլ պատ- ճառաւ բիւր անգամ հոն թափեցան: Հայաստանի հարաւային կողմնակալքն չկրցան զէմ գնել անոր բիրաւոր բանակին, որ հեղեղօրէն վազելով հա- սաւ ինչուան միջին աշխարհը և Հայկազանց ոստանը, յաշխարհն ի գա- ւառն և ի դաշտն Այրարատ, որ ըստ ոմանց այս տտեն և Արայի պատ- ճառաւ այդ անունն առած³²⁸ է, բայց ըստ այլոց անկէ առաջ՝ նոյն դաշտին մէջ շինութիւններուն պատճառաւ³²⁹: Հաւանելի չէ որ Արայ ինչուան իր ոս- տանին սահմանները կոխել թողու Շամիրամայ՝ առանց անոր զօրաց առջեւն ելնելու: Մեր գրաւոր և անգիր ատակութեանց մէջ երկու տեղ յիշուի Արայի և Շամիրամայ պատերազմը. մէկ մը այս յիշեալ Այրարատ գաւառն, մէկ մ'այլ շատ յարեւելեան հարաւ՝ Տոսպայ (վան) գաւառին մէջ, ոչ շատ հեռու Հայկայ և Բիւլայ ճակատամարտին տեղէն. վան քաղքէն քանի մը ժամ հեռու Աւանս ատանին մօտ կայ Լէզք գեղը, ուր մինչեւ հիմայ կ'ա- ւանդեն տեղացիք թէ եղած բլլայ Արայի պատերազմն և մահն և լրութիւն յետ մահուան. զոր և քիչ մը մութ խօսքերով յիշէ Թովմ. Արծրունի պատ- միչն, թէ այն գեղին դիմաց Երիվարաց արձակման դաշտ բուռած տե- դին մօտ կայ գողաձեւ տեղ մը՝ ձեւացած երկու կարդ « արձանաշար քա- » րակարկառ » մեծամեծ քարերով. բայց հոս աւելի Շամիրամայ (յեսապայ) կոտորածն կարծել տայ այս պատմիչս՝ քան Արայի զօրացն: Որչափ այլ անձանօթ է հիմայ մեզի մեր այս քաջ, առաքինի և զեղիցիկ նահապետին գործերն ընդզէմ Շամիրամայ, յայտնի կ'երեւի որ ասեւնօք հոչակուած էր մասնաւոր դիպուածներով ալ, և միայն մէկ իրարու հետ զարնուելով մը լնցած չէ պատերազմն և Արայի մահն: Այս՝ կամ վերջին պատերազմն եղած է բուն Այրարատեան գաւառին և դաշտին մէջ, ուր « գայ հասանէ » տագնապաւ », Շամիրամ, զուցէ Արայի աւելի պատրաստութեան և զօրաց շատնալուն ժամանակ չթողու համար. և ինչպէս կ'աւանդեն մինչեւ հիմայ՝

Շամիրամ բանակեցաւ կոտայից գաւառին եզերքը լերան մը վրայ՝ զոր Հայք զեռ կոչեն Շամիրամայ լեռ, որոյ զիմացն՝ յարեմուստ, է Արայի յեռ, ուր մեր նահապետն բանակած էր, և մէջ տեղն է գաշտ, մասն Այրարատայ, ուր կայ զեղն Արամօն, նոյն Արայի յիշատակաւ մը այսպէս անուանած ըստ ոմանց²³⁰։ Այս լեռնամէջ գաշտիս վրայ եղաւ Հայոց և Ասորեստանեայց պատերազմն. որու յաղթելէն ալ յազթուելէն ալ կը կատկածէր Շամիրամ. և նոյն իսկ իր զորաց բազմութեան վրայ վստահութիւնն կը վախցընէր որ Արայ քաջութեամբ մինչև ի մահ կոռեկով իր բուն փափազը պարապ հանէ. անոր համար « և ի լինել ճակատուն՝ պատուէր տայր » զօրապետաց իւրոց՝ թէ վէպ լինիցի հնարել ապրեցուցանել զԱրայն ». և կ'երեւի այլ թէ զօրապետքն ջանացին այս բանիս, և Արայի հետ նորէն բանադնացութիւնք եղան, ինչպէս կրնանք գուշակել մեր մէկ կորուսեալ պատմչի մը այս կարճ մնացեալ խօսքէն. « Ապա զեղեցիկն Արա պատգաւ » մաւորէ զզօրավարն իւր առ Շամիրամ ». յիշատակ զօրավարաց և ճակատուն նշանակեն երկու կողմէն այլ կարգաւորեալ բանակներ և երկար կռիւ, զոր նախ զօրավարքն ըրին իրարու գէմ. Շամիրամ հաւանօրէն իր անձնապահ գնդովն հեռու կեցած բարձրէն կը դիտէր. նոյնպէս և Արա ի սկզբան. բայց յետոյ անշուշտ թշնամեաց բազմութենէն իրեններուն տկարանալը տեսնելով՝ ինքն այլ նետուեցաւ անոնց մէջ. և ինչպէս նոյն կորուսեալ պատմութեան մէկ մնացորդ կոտորակն այլ կ'ըսէ. « Եւ ի խմբան » պատերազմին քաջն Արա շահատակէր արիաբար ». և նովին արիութեամբ և տոաքինութեամբ զարնուելով ընկաւ հոն՝ ուր իր անունը անմահ և անմոռաց թողուց, և անկից ամենայն ազգաց մէջ այլ, թէ ոչ զեռ իր պատմութեան ծանօթութեամբը՝ գոնէ Ս. Գրոց մէջ մտած Այրարատ կոչմամբ։

Պատերազմն գաւրելէն ետև իմացուեցաւ Արայի սպանութիւն, որ հաւասար թէ և այրօրինակ ցաւ պատճառեց երկու բանակաց այլ, և թէ՛ Նուարդայ թէ՛ Շամիրամայ. որ շատ ջանալ, փնտռել և գտնել սուաւ առաքինի քաջազին և իրեն փափագածին զիակը, զոր և տեսնելով լաւ իմացաւ թէ՛ ըրած կորուստը և թէ իր անարժանութիւնը այնպիսի կտրիճի մը. բայց զեռ կէս մը վայրագին ցանկութեամբը յիմարած կէտ մ'այլ սնտոի հաւատքով, կարծեց կամ կարծել տուաւ թէ կախարչութեան հնարքով պիտի կարենայ որջընցընել զԱրայ, և սէրը կամ վրէժն առնուլ անկէ. պատուիրեց « զնել զնա ի վերնատան ապարտնից ». որ կամ իր սովորական թիւերուն պէս բարձր տեղ մ'էր, կամ թէ իր և կամ Արայի ընակարանին վերնայարկը կամ տանիքը։ Հայք՝ որ ունէին զեռ բաւական զօրք և ուժ՝ Արայի

մտահուան ցաւոփ սաստկացեալ՝ ուղեցին նորէն յարձակիլ Ասորեստանեայց վրայ. բայց Շամիրամ անօգուտ կռիւ մը զարդեցրնել փութալով համբաւել տուաւ թէ իր շաստուածներն Արայի վերքերը լցելով քիչ ատենէն պիտի ողջընցընեն զնա. բայց երբոր զին սկսաւ ապականիլ, հրամեց որ ծածուկ ատանին խոր փռոտի մը մէջ ձգեն. և նորէն ձայն հանել տուաւ որ շաստուածքն լցեր և ողջացուցեր են զԱրա, և նա ալ հաւաներ է իրեն հետ ըլլալու: Ռեստի նախ աստուածոց շնորհակալ ըլլալու համար՝ « կանգնէ նոր » իմ պատկեր յանուն զիւաց (այսինքն զիւակերպ կուռք) և մեծապէս զո- » հիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն՝ իբր թէ այս զօրութիւն աստուա- » ծոց կենդանացուցին զԱրայ. և այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ եր- » կրիտ Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան, դադարեցուցանէ զխաղճն: Իսկ Արային ողջութեանը հաւատացընելու համար՝ իր մարդկանց մէջ անոր նմանազոյն մէկ մը գտնելով և անոր նման հագուեցընելով՝ հետը կը պալա- » ցընէր և հետուէն Արայի կը նմանեցընէր, զգուշանալով մօտէն ցուցընելու²⁵¹. Ինչուան որ իջեցուց Հայոց գրգռութիւնը. յորոց ոմանք հաւատաւորով, ոմանք ատեն անցնելով պաղեղով ի վրէժինգրութենէ, յասն ալ տեսնելով որ պա- » տերազմաւ պիտի չկարենան ի գլուխ ելնել, կամայ տկամայ զարդեցան. մանաւանդ երբ տեսան որ իրենց յափշտակուած զիւցազին սրպին՝ կարգոսն որ զեռ 12 տարուան էր, Շամիրամայ ձեռքն ընկնելով՝ անոր սիրելի և զգուելի եղաւ. որ և յիրաւի անոր հօրը վրայ ունայած սիրով, միանգա- » մայն և Հայոց հակառակութեան վախով զկարգոս հօրն անուամբ կը կան- » չէր, մինչև Հայք այլ այնպէս ըսին Արայ Արայեան. և խստացաւ, ու յետ ժամանակի գրաւ այլ զնա հօրը տեղ Հայոց ազգապետ, որ և հաւա- » տարիմ մնաց զշխոյն, ու յետոյ անոր հետ պատերազմի մէջ մեռաւ: Պատմութիւնն ոչ յիշէ թէ Բնչ եղաւ անոր մայրն Նուարդ. բայց կասկա- » ծել աայ, թէ եղբրական վերջ մ'ունեցաւ կամ թողուց հետացաւ յԱրա- » բատայ, ուր անկէ ետեւ իրեն սրտին անմարելի սիրոյ և վրիժուց հնոցներ կը վառէին. պատմութեան թողածն հոս քերթուցաց յարմար երգոց և ողբոց գրուազ մը կրնայ ըլլալ:

Շամիրամայ պէսպէս գործքերն մեր աշխարհին մէջ, զոր վարը պիտի յիշենք, հոս ալ զինքն անմոռաց բրին՝ ինչպէս ուրիշ շատ աշխարհաց մէջ, և թերեւս ի Հայս աւելի քան թէ ուրիշ տեղ. միայն թէ զժողովաբար իր յիշատակաց ամենէն վտանգաւորն՝ երկար ատեն ամենէն ալ զգալի և ըն- » գունելի մնաց. այն է Արայի կենդանութեան կերպն. որ թէ և մեր հին կրօնական պատմութեան կրնայ վերաբերիլ՝ այլ հոս այսքան հին ժամանակի

Հազուադեպ յիշատակ մ'ըլլալով, հարկաւոր է քիչ քննութեամբ երկրորդել : Այս ասեաններս, որ Աբրահամ Նահապետին կենաց ժամանակն է, շատ տեղ կոսպաշտութեան ծաւալին անտարակոյս է, բայց շատ տեղ այլ աստուածպաշտութեան դեռ մնալն՝ նոյնպէս անտարակոյս է. ասանկ այլ կ'երեւի մեր աշխարհն. ուր այս Արայի սղջնցընելու հնարքն և հաւատքն առաջուց լսուած ըլլալու չէ. վասն զի անոր ստութեան ալ փորձ ըլլալով Հայ գորքն՝ աւելի պիտի զայրանային ընդդէմ Շամիրամայ, ապա նոր բան մ'ըլլալով, և ուրիշ կողմանէ Շամիրամայ վրայ մեծամեծ և հրտալի բաներ լսելով, գուցէ և տեսնելով, անոր ստութեամբք և կախարական հնարքներովն, յիսոյ Արայի նման մէկն այլ տեսնելով իր բով, ոչ միայն մտաւ Հայոց մէջ այս սուտ հաւատքը, այլ գուցէ և ուրիշ ազգացմէ աւելի սեփական եղաւ անոնց, և մինչև իրենց քրիստոնէութեան առաջին գարնարուն (Գ, Խ) մէջն անդամ կային հաւատացողք. յամի (Տեառն) 379 երբ Պապ թագաւոր պատճառութեամբ բաջակորով Մուշեղ Մամիկոնը սպաննել տուաւ՝ և մարմինը տարին բնտանեացը՝ այն թերահաւատք քրիստոնեայքն առին կարած գլուխը վզին կարեցին ու աշտարակի մը ատենաց վրայ դրին՝ յուսալով որ «վասն զի այր քաջ էր՝ Առէզք իջանն և յարուցանն զնա» . ինչուան որ այն այլ Արայի պէս հասելով և ներելով թապուցաւ : Դեռ դար մ'եար այլ՝ մեր թարգմանիչքն (Եղեղիկ, Մովս. Խորենացի) յիշեն զայն. և առաջինն կ'իմացընէ սր այդ առասպելեալ լզող ճիւղն՝ զոր ինքն և Բուզանդ Առջ գ կամ Առջ կոչեն, այլք Արայի գ կամ Արայի գ, կամ Յարայի գ, կամ Արայի անունէն առնուած էր (իբրև զԱրայ լզող), կամ միշտ լզող իմացընելով (Յարայի գ) և կամ ուրիշ սկզբամբ մը. և թէ շան կերդարանքով կամ շնախառն կենդանի կամ հրէշ մը կարծուէր, ինչպէս յայտնապէս կ'ըսէ Եղեղիկ. «զԳովացուն՝ ի կովէ ելեալ ասնն. և զԱռ» լեզն ի շանն... զոր Արայի գ կոչեն» : Բ պարուն սկիզբները մեր Արտաւազ Բ ին մահուանը վրայ հղած առասպելն այլ թէ երկու շունք սեռ ու ճերմակ՝ իր շղթաները կը լզէին որ մաշեցընեն փրցընեն և ազատեն զնա ի մշանջեանաւոր կապանացն՝ նոյն Արայի կենդանիներէն կարծէ մեր միջին հեղինակաց մէկն, (Վանակ. Տարեմա.) «Այս է Յարայի գ առասպելն որ ասնն» : Ուրիշ մ'այլ՝ գուցէ աւելի հին քան զսա, կը յիշէ թէ «ասնն ոմանք թէ գոյ» կենդանի որ յար և հանապազ գերկիր լեզու. և ոչ գոյ. և կամ զոր «Շամիրամ ստարանեաց, այսպէս ասելով թէ առտուածքն շնորհեցին մեզ» կենդանիս ոմանս՝ որ լիզեալ զԱրա կենդանացոցին... Անպուստ սկսել» ասնն գոյ կենդանի Յարայի գ. բայց սուտ և ոչ իրաւ :

Այս առասպելս Հայոց մէջ ամենէն հին անահաւատութիւնն է, որ և Շամիրամայ հետ մասած կ'երեւի մեր աշխարհը, ինչպէս ուրիշ դիպուածէ մ'ալ կը յայանի՝ որ նոյնպէս իր և իր սանտական եղած Արայեանն Արայի տանն կը յիշուի Անուշաւանի վրայօք. ինչպէս պիտի տեսնենք ասոր վրայ խօսած ատեննիս: Իսկ թէ այս Աքալեզաց զրոյցն Արայի համար կամ տանն՝՝ հնարուած է՝ ուրիշ հետաւոր վկայութեամբ մ'ալ հաստատուի, որ և նշանաւոր բան մ'այլ է, թէ՛ յիշատակին և թէ յիշողին համար. միանգամայն և անահաւատութեան հետ կը ցուցնէ Հայոց սուրբ հաւատքն այլ հոգեոց անմահութեան վրայօք: Արամայ անունն բաւական ծանուցած էր իր ազգն և աշխարհն արեւմտեան ազգաց. շատ բնական էր որ իր որպոյն գէպքն այլ հոշակուի անոնց, մանաւանդ որ Շամիրամայ հետ խոսոնուած էր անոր յիշատակն. իր մահուան վրայ առասպելն այլ բերնէ բերան և կարծիքէ կարծիք անցնելով Յունաց մէջ, և (Պլատոնի) անոնց գեղեցկագոյն զրչին ասկ' խորանիշ կերպարանք մ'ալ առաւ: Արդ Պլատոն իր մէկ իմաստասիրական գրոց մէջ (Ժ Գիրք Հատարակագետութեան) կը յիշէ իրրեւմանց ծանօթ զրոյց մը, թէ էր (Արայ) անուամբ քաջ հայկազուն մը, բայց ծննդեամբ Պամփիլիացի՝ պատերազմի մէջ մեռեր է, և տասն օրէն իր դիակը գտեր են անարատ և տարեր են ասունը, երկու օրէն վերջը խաբուկի վրայ զրեր են այրելու. մէկ մ'ալ յանկարծ ողջընցեր ելեր է, և սկսեր է պատմել ինչ որ անդիտ աշխարհին մէջ տեսեր էր արդար և մեզաւոր հոգեոց վարձուց և պատժոց վրայօք. բայց ինքն ամենեւին չէր յիշեր թէ ինչ կերպով հոգին նորէն դարձեր էր ի մարմինը: Պատմածներն յունական առասպելիաց և կարծեաց համեմատ են. բայց բուն իրեն պատմութիւնն անտարակոյս կ'ընէ մեր Արայի յիշատակը կամ աւանդութիւնը, որ ի Յայնս և ինչուան ի Պլատոն հասած էր, որ և յայսմ մասին երկու կամ երեք գար յոռաջ քան զՄարիբաս մեր հին պատմութեան շատ հետաքննական դիպուածոց մէկն աւանդած կ'ըլլայ: Էրայ կամ Արայի ծննդեամբ Պամփիլիացի ըսուիլն այլ՝ եթէ մտադրութեան կամ հաւատալու արժանի սկսուէր՝ կրնայինք ըսել թէ ծնած ըլլայ Արամայ յարեւմտեան Հայս եղած ատեն, և թէ անոր իշխանութիւնն՝ յետ հալածելոյ զՊայապիս՝ հասած ըլլայ մինչև ի Տօրոս և յափունս Միջերկրականին: — Դանձանք հիմայ մեր պատմութեան յետ մահուանն Արայի, և Շամիրամայ շինութեանց:

Իր ստորք կամ անստորք գործոց մէջ ամենէն նշանաւորքն աս շէնքերն կրնան ըսուիլ, անոնց մէջ ալ ստուգագոյնքն են ի Հայաստան, որ իր բնիկ Հայկազուն տէրը կորուսանելով առաջին անգամ օտարի և տիկնոջ

մը հպատակ և հարկատու եղաւ, և այնպէս մնաց բոլոր Ասորեստանեայց ինքնակալութեան ատեն, ինչպէս յետոյ և Պարսից . քանի որ Շամիրամ անձամբ ի Հայս էր՝ ինքնին կ'իշխէր հոն . և առջի գործն եղաւ քննել ճանչնալ այն աշխարհը՝ զոր 4—500 տարի Թորգոմայ որդւոց քաջութիւնն ազատ պահէր էր ի Սեմայ և Քամայ զուակաց բռնաբարութիւնէն : Քիչ մ'ատեն Այրարատայ կողմերը կենալով, և անշուշտ յԱրմաւիր իշխանաբար աիբելով՝ երբ գարնան օրերն անցան և սկսաւ ասքը զօրանալ Այրարատեան ընդարձակ դաշտին մէջ՝ ելաւ զուարճաւէր գշխոյն մեր աշխարհին ամառուան եղանակի յարմար կողմերը երթալու, և գէպ յարեւելեան հարաւ ոլորելով Արածանոյ և Աղթամարայ բարձրաւանդակաց վրայ ելաւ, տափէ տափ լեռնէ լեռ անցնելով, « զբօսնուլ կամելով ի հովիտս և ի դաշտս » ծաղկաւէտս : Եւ ասեսեալ զգեղեցկութիւն երկրին և զօրոցն մաքրութիւն, » և զաղբերացն յստակագոյն բղխունս և զկարկաշուհոտութիւն գեաոց » բարեգնացից, Պարս է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օգոց » և մաքրութեան ջուրց և երկրի՝ քաղաք և արքունիս շինել բնակութեան, » որպէս զի զՆորբորդ մասն ի բոլորմանէ տարւոյն՝ որ է ամառնայինն եղաւ » նակ՝ ըստ ամենայն բարեխառնութեան անցուցանիցեսք ի Հայս . և զայլն » եւս երիս որոշմունս օրոցն զօլութեան՝ տածիցեմք ի Նինուէ » : Եթէ այս ետքի խօսքս պատմողին խորհրդածութիւնն չէ՝ ըսել է որ Շամիրամ ալ կը ճանաչէր տարւոյ չորս եղանակ կամ կլիմայ, և կրնար ալ ճանչնալ իր ախրած տեղեաց ընդարձակութեանը նայելով . ինչպէս որ իր աւերութեան յաջորդող Բարեւացիք և Պարսք այլ նոյն վիճակաւ իւրաքանչիւր եղանակի համեմատ իրենց բնակարան հաստատեցին զանազան աշխարհաց մէջ . իսկ Շամիրամ, ըստ մեր պատմչին, ամառը ի Հայս կ'անցընէր, մէկայլ եղանակներն յԱսորեստան : Դեռ ի Հայո չեկած՝ մեծ Մարաց մէջ Եկրատան մայրաքաղաքին մօտ Բագաստան (Պանիստան, Պիսուգուն) լեռան վրայ զարմանալի շէնքեր, քանդակներ և պարտէզներ շինել տուեր էր . (քանդակներն և բեւեռաձեւ արձաններն ինչուան հիմայ կան և զարմացընեն զհետաքնինս, թէ և գրուածքն և գործքն, ըստ քննութեան գիտնոց՝ Աքեմենեայց Պարսից գործք են.) անսնց նմաններ շինեց նաեւ մեր աշխարհին մէջ . շատ կողմեր ալ լեռանց քարէ կողերը սաշելով բեւեռաքանդակ արձաններ գրել տուաւ . նոյնպէս ալ զաւտոաց և աշխարհաց բաժանմունքը որոշելու համար սահմանաքարեր կանգնել կամ տաշել տալով արձանագրեց . ինչպէս որ յիշէ մեր պատմիչն, առանց ըսելու թէ ո՞ր լեզուաւ . թէ և պէտք չէ ասորակուսիլ՝ թէ իր խօսած աթուրացի լեզուան էր, մասամբ ալ Հայերէն : Հիմայ

Սեպտեմբեր կամ բեկեռաքանդակ արձանագրութիւնք տարուէ ասորի նոր նոր կը յայանուին ի Հայո . հնազէաք ընթերցողք և (որոց ընթերցուածին և հասկացուածին չիք երաշխաւոր) գեա չեն կրնար ըսել թէ Բնչ լեզու է՝ գոր կը թարգմանեն. գտածին վերջին Ասորեստանեայց և Պարսից յիշատակարաններ են , բայց ոմանք չեն տարակուսիր թէ կարելի է Շամիրամայ գրուած ալ գտնել, և թէ այն ատենի Հայերէն լեզուաւ գրուածք այլ պիտի գտուին, մանաւանդ վանայ կողմերը, որ Շամիրամայ գլխաւոր շինութեանց կենդրոնն էր :

Այն ընդարձակ և գեղեցիկ աղի ծովուն եզերքը՝ ուսկից ոչ հեռի Հայկ իր մեծ քաջագործութիւնն կատարեց, և իր որպուց և թոռանց յանձնեց, որոյ մէկուն անուամբ Բզնունեաց Մով ըսուեցաւ , նշանաւոր շէնք և քաղաք հիմայ վրե է, հին ատենն այլ նոյնպէս էր ի մէջ շատ քաղաքաց և աւանաց որ ծովեզերքը շինուեցան . Շամիրամէն առաջ շէն էր թէ չէ՝ յայանի չէ . բայց սա եղաւ իր գլխաւոր շինող և զարդարողն , որոյ և անունն առաւ . Շամիրամակերտ կոչուելով և պաշեց երկար ժամանակ : Շամիրամ անոր հիւսիսային կողմէն եկաւ հոն, և վերայդեալ լէզք գեղին հարաւակողմը բնական քարաբլուր մը գտաւ իր ախորժակին համեմատ , որ միշտ կամ կը փնտռէր կամ կը շինէր աստեկ բարձր գերքեր իր բնակարանաց ըովերը . այս բլուրս որ հիմայ աշխարհածանօթ է վանայ բերդը (վան-Գալէսի) կրելով, ժամաշափ մը երկայնութիւն ունի արեւելքէն գէպ ի մուաք ի ծովակողմն ձգուած . հիւսիսային կողմը քիչ մը դուր և դար տեղուանք ունի, իսկ հարաւակողմը պարսպի պէս շիտակ և իրբեւ կտրուած կը բարձրանայ, և հիմայ կը նայի քաղաքին վրայ, որոյ պարիսպքն այլ անոր կպած են : Այդ Շամիրամ այս քարաբլուրն ստքը շինեց իրեն ամառուան զբօսանաց քաղաքը՝ որ և անոր համար Ամարաստուե ըսուեցաւ, և նախ անոր մօտէն անցնող գետակը որ մինչեւ հիմայ Շամիրամայ չոր կամ Առա կ'ըսուի, քարաշէն ամբարտակներու մէջ առաւ, շատ ծանր աշխատութեամբ, որոյ համար իր մարդիկներէն 42,000²³³ հոգի և 600 վարպեա ծառայեցուց . խիստ ամուր և մեծագործ շէնք մ'եղաւ, քարերն այլ աւազով և կրով անանկ միացուց իրարու՝ որ դրսուանց հալած և կպուցած կարծուէր, և անանկ պնդացուցեր էր՝ որ գրեթէ փրցնել և կոարելն անկարելի էր . բայց ժամանակն, թերեւ ժաժելով՝ խանգարեցին զայն և մեծամեծ պատառուածք բացին, որոց մէջ երբեմն բնակիչքն վախի և պատերազմի ատեն կ'ապահովէին, երբեմն , ալ աւազակներ կը դարանէին, և այս ինչուան հաքի ատեններս . այս գետեզերեայ քարատափը որ

ամբարտակք կ'ըսուին՝ մղաններով երկայնեց հասուց մինչև այն տեղը ուր շինեց զքաղաք և անոր միջէն այլ անցուց մինչև ի ծովեզրն . ինչպէս նաեւ երկու ճիւղ այլ հանելով ի գետոյն քաղքին երկու կողմէն անցուց՝ որ ջուր տան այն տեղի պարտիզաց և այգեաց , վասն զի քաղաքի երեք կողմն ալ անկեց պիտանի և զուարճալի բոյսեր , ի ներս և ի դուրս պարբսպացն , որովք ամբացուց քաղաքը , հանպերձ աշտարակներով և պղնձի գոներով . ընդարձակ և մաքուր փողոցներով բաժնելով զայն թաղ թաղ , և վայելուչ ու բարձր բնակարաններ շինելով զանազան գոյնով քարերով , որ կ'երեւի թէ այն ասան մասնաւոր նշանակութիւն ունէին ոչ թէ միայն վայելչութիւն . շատ այլ լուալիք և բաղանիք շինեց թէ ջրոց առատութեան և թէ իրեն զբօսասէր բարուցը համեմատ : Միով բանիւ ամառուան յարմար և զուարճալից զովագին քաղաք մը ձեւացուց , անոյշ ջրերով և ծովով , ծաղկով և ծառով զարդարած , հանպերձ ամբութեամբ՝ յապահովութիւն թշնամեաց : Եւ աւելի զգուշութեան համար՝ քաղաքին հիւսիսակողմն եղած բնական քարաբլրորն արուեստով այլ աւելի ամրացուց , և շատ տարիներ աշխատել տալով թէ ամբութեան , թէ զանձուց պահպանութեան , և թէ բնակութեան ու պիտարանաց տեղւանք շինեց անոր վրան և մէջերը . քարին երեսն ու մէջն սաշելով ու փորելով ուզածին պէս , թէ վեր երեսլու ճամբայի համար , թէ ջրոց ամբարի համար , և թէ պահուլտեայտ կամ բնակելու համար . մանաւանդ քարաբլրին արեւելեան կողմն որ պէպ ի վարագ կը նայի՝ ձեռագործ քարայրներ բացաւ , բառակուսի սենեակներով և սրահակներով , որոցմէ գեռ ոչ սակաւ կ'երեւին անմաշ կանոնաւոր ուղղագիծ ձեւերով , թէ և մէջի զարդերէն մերկացեր են : Զառոնք պատմիչն մեր կոչէ « պէս պէս տաճարս , սենեակս օթից , սունս զանձուց և վիհս » երկարս » , որոց ոմանց մուտքին կամ դրսի դրան վրայ բեւեռաքանդակ արձանագիրք կան , ինչպէս նաեւ քարաբլրին ուրիշ կողմերն այլ . որք և բոլոր Ասիայ մէջ ամենէն նշանաւոր բեւեռագրութեանց մէկն են , թէ ոչ և առաջին . ոսկայն ինչպէս առաջ այլ ըսինք՝ թէ բոլոր գրուածքն թէ փրուածքն ստուգիւ Շամիրամայ ըլլալն չի կարծուիր հիմայ . այլ հաւանորէն վերջին Ասորեստանեայց , Մարա-Պարսից թագաւորք այլ նոր բաներ աւելցուցեր են հոն . և ըստ ոմանց՝ առանձին թագաւորութիւն մը կար վանայ պարատափին վրայ , որ ժամանակաւ գեռ աւելի ծանօթանայ պիտի մեզի երբ այն զարմանալի գրուածքն (որոց մեծ մասն անմաշ մնացեր է) աւելի հաւանորէն կարգացուին : Այսպիսի գրուածներէն մէկն այլ կայ քաղքէն քառորդ մը հետի Ակոբի (տճկ . Աք-քիփրի) կոչուած քարալեռան մը երես ,

խորանարդ տաշած և փսրագրած. ասիկայ է պատմչին ըստծն, « ի յարեւել- » լից կողմանէ հանեցեալ ըլլոյն (բերդին) Լեւոն մի փոքրագոյն » : — Արդ այս քաղաքս իր շէնքին համեմատ Ամարաստան ըսուեցաւ, և բերդին հետ մէկտեղ Շամիրամակերտ. յետ ժամանակաց Երուանդ Արշակունի թագաւորն քաղաքը նորոգելով իր անուամբ կ'ըսեն Երուանդաւան կոչեց, յետոյ և հիմայ վան կոչի. երկրիս հնագոյն և միշտ շէն ու իշխանանիստ քաղաքաց մէկն մնալով յետ բազմակերպ փոփոխութեանցն իբր 4000 տարիէ վեր : վանայ ծովուն բոլորտիքը Շամիրամ ուրիշ ձեռակերաներ այլ ըրած է, և զեռ իր անուամբն յայտնի տեղիք կան. ինչպէս ծովուն զիմացի (արեւմտեան) կողմը՝ Ներքովթ լերան ստորտար Շամիրամ գեղը և անսր քով բերդը : վասպուրական աշխարհին ուրիշ գաւառաց մէջ ալ, ինչպէս յԱղբակ և ի Ճուաշ, կան Շամիրամայ անուամբ բերդք և գեղքք. ինչուան Արցախ աշխարհին մէջ այլ Շամիրամաձոր և Շամիրամաբերդ անուամբ վիճակք և շէնք յիշուին ժԲ գարուն մէջ. որոց ինչ պատճառաւ այդպէս կոչուիլն անյայտ է, բայց կրնան հաւատաւել պատմչին ըսածը՝ թէ Շամիրամ ամէն տարի ամառները կու գար ի Հայոս, և ի հարկէ պարտելով լեռնային և հովասուն կողմերը՝ նոր նոր բերդեր բնակարաններ շինել կու տար : Մեր աշխարհին մէջ շէնքերուն համար Ասորեստանէն ալ վարպետներ բերաւ. իսկ Հայաստանէն ալ իր աշխարհին և մանաւանդ Բաբելոնի համար՝ հարկաւոր նիւթեր հանեց. որոց մէջ մասնաւորապէս կը յիշուի կոթող մը միակտուր քար, զոր կարել տուաւ Հայոց լեռներէն, 125 ոտք երկայն և 5 ոտք ի լայնութիւն և ի թանձրութիւն, և եզներով ու գրասաներով բաշել տանելով մինչև ի գետեզերս, Եփրատայ վրայով իջուց կանգնեց ի Բաբելոն՝ հրապարակի մէջ, որ և անոր հրաշալի շինուածոց մէկն համարուեցաւ : Շամիրամայ անունն և յիշատակներն շատ ուրիշ աշխարհաց մէջ այլ կան, բայց Հայաստան իրեն եղաւ իբրև երկրորդ հայրենի երկիր սիրական, միանգամայն և գերեզման :

Թողլով իր գործունեայ վարուց մնացորդն՝ մեր պատմութեան հարկաւոր եղածն ըսենք. 42 տարի քշեց իր տիկնութիւնը. և եթէ պատերազմներն և շինութիւններն դադրեցուց, բայց բռնութիւնը, զբռանքն և կախարդութիւններն ո՛չ, ինչպէս կ'աւանդեն. և ասոնց մէջ անզբաղ ըլլալու համար՝ իրեն հաւատարիմները զանազան աշխարհաց վերակացու կը գնէր. որոցմէ մէկն այլ էր կարդոս՝ մեր աշխարհին վրայ, որոյ և օրինաւոր պայագատն էր, և Արայեան Արայ կոչուած. որ պատանեկութիւնը Շամիրամայ արքունեաց մէջ անցընելով՝ անոր զգուանօք և զբռանօք մեղկած և

Թուլցած կ'երեւի. և Ասորեստանեայց՝ մանաւանդ իրեն երկրորդ մտք մ'եղած Շամիրամայ սովորյթքն մտուց ի Հայս. և կարծեմ թէ այն օտարներէն սովրած՝ հմայից և կոոց հաւատքն այլ ինքն նախ համարձակեցուց. և իր իսկ պայազատ որդին՝ Անուշուանը նուիրեց իր արքունեաց մօտ տնկած (Արմաւրայ) սօսեաց անտառին, որք յանուն Արմենակայ կոչուէին. ծառապաշտութեան կարծիք մը տալով: Ամառներն ի Հայաստան եկած ատեն՝ Շամիրամ Մարաց զլխաւորը կամ մեծ օրէնսդիր Զրապաշար, որ և Զրապաշտաց մէջ առաջինն է, բոլոր Ասորեստանի և մերձակայ աշխարհաց վրայ իրեն երեսփոխան և կառավար կը դնէր, իր հարազատ կամ անհարազատ որդիքն զլկելով և զգուշացընելով ամեն իշխանութենէ. ինչուան որ անոնք ալ սկսան հնարք մը մտածել մօրերնուն ձեռքէն ազատելու. բայց այն աշալուրջ ժանտուհին և ոչ անսնց արեւուն և իր արեանը խնայեց, զամենքն այլ սպաննել տուաւ. միայն Նինոսէն ունեցած մէկ զաւակն ապտեցաւ Նիկոնաս կամ Զամեւ ըսուած. որ և ամենեւին վախկոտ և անփառ երեսնալով պահուեցաւ մօրն յաջորդ: Բայց ասիկայ արդէն տարիքն առած երթալով աւելի գարշելի և անտանելի եղաւ. և առթով մը Զրապաշտի հետ այլ արբելով, ուզեց զայն ալ իշխանութենէն ձգել. բայց անիկայ աղէկ ամբացեր և զօրացեր էր. պէտք եղաւ պատարագմով կոտիլ: Շամիրամայ առոյգ հասակին հետ բազմն այլ կամ բազմաւէր ընկերներն այլ պակսեր էին. յաղթուեցաւ Շամիրամ, փախաւ. եկաւ ի Հայս: Վրէժխընդիրն Զրապաշտ յորդորեց թագաւորեցուց զՆինոսաս. որ հրաման տուաւ հաւածել զմայրն մինչեւ ի մահ: Շամիրամ իր սիրական և հաւատարիմ Արայեան Արային հետ զօրք ժողուելով նորէն ուզեց պէմ ելնել ապստամբաց, որք ետեւէն հասան. և նորէն յաղթեցին պատերազմաւ, որ կ'երեւի թէ վերոյիշեալ Շամիրամ գեղի և բերդին մօտ եղաւ. սըր այն գոռոզ և աշխարհազօսս զշոյն ստիպուեցաւ գերի աղախնոյ մը պէս ռաբով փախչիլ. և յոգնած ու սաստիկ ծարուած շուր ուզեց ու խմեց, (զուցէ այն համանուն գեղին քովը ուրիշ գեղ մը՝ որ մինչեւ հիմայ Զրխոր կ'ըսուի). և այս ծարաւը մարելու կարօտն՝ իր կեանքը մարելու պատճառ եղաւ. վասն զի ետեւէն ընկնողներն սուրերնին բաց վրան հասան. տեսաւ որ այլ ամեն բան ըմբռնալու վրայ է, (կ'ըսէ մեր ազգային աւանդութիւնն) հանեց վրէժն իրեն հմայից և յուսուածից առիթ օղամանեակ ուլունքը, զոր գտեր էր կ'ըսեն օր մը Հայ աղոց ձեռք ծովսն եզերքը պտրտելու ատեն, և իրեն հմայեկ բրեր էր, անոր համար յոռոպ-ոռոպ կ'ըսուէին, և հոս՝ առաւ նետեց ի ծոփ, որ չընկնի ուրիշի ձեռք և ուրիշի այլ շանցնի բազդը²⁵⁴:

Ուրիշ աւանդութիւն ուրիշ կերպ կ'ըսէ այս բանիս . ինչ այլ որ ըլլայ՝ հաւանական է թէ Շամիրամ կախարդութեան կամ հմայելի պէս ուլունք մ'ունեցած է, և անկէ ձեացեր էր ի Հայս մինչև քրիստոնէութեան և մեր թարգմանչաց ասեմն այս խօսքս կամ առածս « Ուշուք ի ծով Շամիրամայ³³⁵ », գուցէ հին ազգային երգերէ աճնուած : — Իր հետ Արայեանն Արայի ազգապետութիւնն ալ վերջացաւ . վասն զի նոյն պատարազմին մէջ ինքն այլ սպանուեցաւ իր կենաց իբր ՅՅդ ատրին . և իբր 1964 տարի նախ քան զԲրիտանոս : Շամիրամ՝ յուլթիցն հեա իր կեանքն այլ կորուս . (և փոխանակ ուլանցը՝ անխնայ սուրն պատեց վիզը) : Այս կերպով, ըսա հաւանազոյն կարծեաց, եղաւ այս գերահռչակ աշխարհակալ զշխոյին կատարածն , որ ուրիշ ազգաց պատմութեան մէջ անծանօթ ձեացեր է . և թէպէտ մեր մէջ աւանդածն ալ խառն է առասպելօք, այլ գուցէ աւելի մօս ստուգութեան : Մեր Պատմիչն Յուստիանոսն հեա ուրիշ առասպել մ'այլ կ'աւանդէ առանց բացատրելու « Այլ թէ ախորժեա առասպել , և Շամիրամ քար առաջին » քան զՆիորէ : Գուցէ առով կ'իմանայ մեր քերպողահայրն այս Նիորեայ վրայ ոմանց առասպելածն (որ սովորական կարծիքէն կը տարբերի) թէ Նիորէ էրկանը մահուան ցաւէն խելագարած իր զաւակները սպաննեց , և ինք զինքն այլ ժայտէ մը վար զլորելով՝ մեռաւ . գուցէ Շամիրամ այլ իր ետեւէն ընկողներուն ձեռքէն փախչելով ինք զինքն ժայտէ մը վար զլորելով մեռած կարծուի . կամ թէ մեր նախնիքն Նիորէի միս աւելի հոչակուած առասպելին նման կարծէին՝ թէ ի քար փոխուած ըլլայ . զոր և մեր հեղինակն ժամանակաւ երիցագոյն սեպելով ըսէ, « Եւ շամիրամ քար առաւ » ջին քան զՆիորէ :

Արայեանն Արայի հաւատարմութիւնն առ Շամիրամ՝ յանցանք մ'էր յաչս Նինուասայ , անոր համար անոր որպին Անուշաւան , զոր թերեւ ինքնին Շամիրամ իր արքունիքը տարեր էր ի Նինուէ՝ իբրեւ պատանդ կամ արբանեակ , Նինուաս աւելի խստութեամբ հոն պահեց իբրեւ իրեն թշնամույն որդի . մանաւանդ որ Անուշաւան շատ ձրից տէր և հանճարեղ երիտասարդ մ'էր : Արպէն յիշեցինք՝ որ հայրն զինքը նուիրեր էր Արմաւրայ սօսեաց ծառաստանին , ուր կարծեմ թէ և Ջրապաշտայ նորահռչակ կրօնից համեմատ մոզուց ժողովարան մը հաստատեր էր , որոց յանձնեց իր պայազատին կրթութիւնը . որ և եղաւ իսկ ըստ պատմչին « ամենահարուստ » և շատահանճար յեր և բան » . հարստութեամբն կ'իմանամ իր յաջողութիւնը և զօրութիւնը միանգամայն և գործունէութիւնը՝ զոր յետոյ ցրցուց . իսկ շատահանճարութեամբն՝ իմաստութիւնն և հնարագիտութիւնն , զոր խօս-

քո՞ն ալ յայտնէր, անոր համար գովուի և ի բան: Այս ձրից վրայ ունէր և նուիրական համարում մը ոստեաց մէջ իբրև աստուածութեան բնծայուած ըլլալու, ինչպէս այն հին տտեն Աստուծոյ տղօթից կամ վերարեութեան տեղ անտառը կամ մեծամեծ ծառը ընտրուէին, որպէս և ժամանակակից Արրահամ նահապետին և իր որդւոց պատմութենէն յայտ է ի Ս. Գիրս. իրեն սեփական եղաւ Սօսանուէր կոչումն²⁵⁶. Ըստ միայ հեղինակաց մերոց մասնաւոր սօսի ծառ մը կար Արմաւրայ ապարանից գրան քով որոյ նուիրած էր Անուշաւան, մօտ այն աշտարակին՝ յորոյ վրայ կախեցաւ Նիւքար: Նոյն իսկ Անուշաւան անունն այլ սրբազան նշանակէ ի սանսկրիտ լեզու: Իսկ Գր. Մագիսարոս մեկնարանէ. « Անուշաւան՝ անուշ » շահացն կազմիչ և բարութեան յարդարիչ»:

Նինուաս կարդոսի հետ մօրը սպաննուելէն ետև խաղաղութեամբ տիրեց անոր ընդարձակած իշխանութեանը, և փոխանակ պատերազմաց և նոր աշխահակալութեանց, մօրը ժողուած գանձերը վայելելով շոյալութեամբ, ինչպէս սր իր յաջորդն այլ ըրին: Անուշաւան երկար տարիներ անոր քով մնալով ճարտարութեամբ պալատականներէն մէկ քանին շահեցաւ. և հաւանել տուաւ Նինուասայ որ զինքը խաւրէ ի Հայոս իր նախնեաց աթոռը նստելու հաւատարիմ հարկատու մնալով Ասորեստանեայց. թէպէտ և նախ ոչ բոլոր մեր աշխարհին՝ հասպա մէկ մասին միայն վերակացու դրաւ. զնա Նինուաս, այլ վերջը բոլորն այլ իրեն յանձնեց, զսր և իմաստութեամբ կառավարեց Անուշաւան՝ հպատակութեամբ ինքնակալաց Նինուէի, ինչպէս և իր յաջորդը ըրին, որք և Ասորեստանեայց թագաւորին մէկ կուսակալն սեպուէին ի Հայոս: Պատմութիւնն կը ցուցընէ զԱնուշաւան շատ գովանի և պիտանի անձ, բայց ճարտարութեամբ իր հայրենի աթոռը ժառանգելէն զատ՝ ուրիշ բան չի պատմեր մրան²⁵⁷, և ոչ այլ իր յաջորդաց վրայ երկայն գարեր. որոնց անուանքը, կարգը և մնացեալ հագուագիւտ յիշատակները քննենք յաջորդ գլխով: — Անուշաւանի հետ կը վազրի մեր պատմութեան մէջ Հայկայ սերնդեան պայազատութիւնն, 10 ազգ (պորա) և իրր 550 տարի քշելէն ետև. մասն զի իր յաջորդն և անկէ եաքիններն իրարու որդի ըլլալնին ոչ յայտնի է և ոչ հաւանական:

Ժ Դ

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՔ ԿՈՂՄՆԱԿԱԼՔ ԱՍՈՐԵՍԱՆԵԱՅՑ

Մ Ի Ն Զ Ե Ի Ց Թ Ա Կ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Մ Ա Ր Ա Ց Ե Ի Հ Ա Յ Ո Ց

ՅԱՆՈՒՇԱԻԱՆԱՅ ԵՍԻՆ ազգածին պայազատէն Հայկայ, կամ ի մահուանէ հօր նորա Արայեանն Արայի և Շամիրամայ մինչեւ ի սկիզբն առաջին թագաւորութեան ազգիս ի Պարուրայ Հայկազնոյ՝ և ի սպասուած ինքնակալութեան Ասորեստանեայց իրրեւ 12 դարք ժամանակի (1167 ամբ) համարին ըստ յուլիագունից ըստ մեզ ողջամտաց ժամանակագրաց, զոր այլք հնգիւք կամ վեցիւք դարուք և աւելի եւս համառօտեն, զհետ երթեալ բանի ինչ Երողոտեայ՝ որ յառաջ քան զհարստութիւն Մարաց՝ Ասորեստանեայց ասէ տիեզերակալեալ ամս 5... և զի առաջին ինքնակալ Ասորեստանեայց զՆինոս ասեն ամենեքին՝ ապա որք զայդ բանի Երողոտեայ զհետ երթան՝ կամին զՆինոս 13 դարուք եւեթ կանխել քան զթուական Փրկչին, զոր այլք որպէս և մեք 21 դար յառաջ ասեմք. զբան պատմահօրն Յունաց իմանալով զնորոգութիւն ինչ ինքնակալութեանն. և պինդ ունիմք զԻփոզորայ, զԵսեբեայ և զայլոց ժամանակագրութիւն. ըստ որոց ի Նինոսէ ցՍարգանարաւ յ'12 դարս թագաւորեցին Ասորեստանի և ամենայն յառաջակողման Ասիայ ինքնակալք 30 կամ 35. և ոչ ոք ի նոցանէ ասեն նուազ քան զ'20 ամ թագաւորեաց, քանզի անպատերազմասէր և անխուճապ կենօք՝ հեշտի և զբօսանաց պարապեալ խաղաղութեամբ կեցին զամենայն ժամանակս իւրեանց, բոտ հնարագիտս կարգաց և օրինաց առաջնոյն իւրեանց Զամենեայ ժամանակակցի Անուշաւանայ, որ կարգեաց յամենայն ազգաց նուաճելոց ընդ տիեզերակալ սէրութեամբ իւրով զուճաբել ամի ամի և փոփոխել զսահմանեալ թիւ զօրաց ի պաշտպանութիւն աշխարհին հանդերձ առաջնորդօք նոցին, զի մի ոք յապստամբութիւն մտաբերեցէ. նոյնպէս և կողմնակալաց իւրաքանչիւր աշխարհաց պայմանեցին՝ ժողովել զհարկ աշխարհին իւրեանց և պատարագօք յանդիման լինել սուչպ աշխարհամուտ զբան իւրեանց: Ընդ նսլին օրինօք և կարգօք անկեալ կայր և Հայաստան աշխարհ. և նահապետք նորին կամ ասնուտեարք

Թէպէս և Հայկազունք՝ համարեալք էին ինքնակալացն այնոցիկ ասիական-
 սաց գործակալք և վերակացոք աշխարհիս կամ մեծ կողմնակալք, որպէս
 ասէ Պատմիչն : Եւ ոչ աւելի քան զտերանց իւրեանց ընծայի և մերոցս
 ազգապետաց յիշատակ գործառնութեանց . քանզի անիոյթ արարեալ նոցա,
 ասէ, զյիշողորեան վերակացոռաց՝ որք ի զրան աիեզերակալացն զգործս
 նոցա նշանակէին « մնացին աննշանակելի ի վերջինսն » մերայոցս գործք . և
 եթէ ինչ ինչ եհաս առ մեզ՝ շնորհապարս այնմ գտանիմք « հնոցն զիւանաց
 » Քաղզէացուց , Ասորեստանեայց և Պարսից , վասն մտելոց անուանց և
 » գործոց նոցա (ազգապետաց Հայոց) ի քարտէս արքունիք : Անպուտ և
 զանուանս իսկ ազգապետաց մերոց ասէ Խորենացի գտեալ և ստուգեալ , յայս
 է թէ առաջնոցն քան զինքն , այսինքն Մարիբասոյ և այլոց , նաև որպէս
 հաւանութեան է՝ յանգիր իսկ աւանդութեանց կամ ի մնացորդաց ինչ վի-
 պտսանութեանց . յորոց և յառաջ բերէ զկարգ յաջորդութեան նոցա յԱ-
 նուշաւանայ մինչ ի Պարոյր նորքիմբք հանպերձ՝ 28 կամ 29³⁵⁸ , ըստ սրում
 և այլք ի պատմագրաց մերոց նորին հետեւողաց , բայց միայն ըստ գաղա-
 փարչաց վրիպման յոմանս նուազագոյն գտանի թիւ պետաց³⁵⁹ . որ և ի
 բուն իսկ ի գիրս պատմահօր մերում (Խոր.) կամ յառ մեզ հասեալ յօրի-
 նակն , նուազեալ թուի . քանզի յԱնուշաւանայ ցլմագաւորութիւն Պարուրայ
 1167 ամք բաժանեալ ի 29 պետ՝ մէն միոյ 40 ամ համարի , որ և աւե-
 լազանց երեւի . և հարկ է կամ բազում ամս միջոցի պարուպոյ եղեալ
 ասել , կամ ի բաց անկեալ զանուանս ոմանս պետացն . նա զի և զուգա-
 ժամանակ կարգ թագաւորաց Ասորեստանեայց ի Զամեսեայ ցլմարդանապալ
 35 հաշուի . և գէթ այսչափ և զՀայկազունս մեր արժան էր թուել , մա-
 նաւանդ եթէ յայս միտս կարծիցեմք ասել Խորենացուոյ (Ա-ԺԹ) : « Բայց
 » զուզութիւն բարբառոյ և հաւասարութիւն թուոյ կարգի պատանեաց՝ զճըշ-
 » մարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ » : Դարձեալ համե-
 մատութիւն ժամանակի ծանօթից ոմանց յազգապետացս մերոց ընդ իր-
 րայեցուոցն՝ կամ ընդ այլոց օտարաց որոց ստոյգ է ժամանակ , տկներեւ
 յայտ առնէ զմեծ բացատ ժամանակի ընդ երկուսին ծանօթան , յորում միջոցի
 սակաւք ոմանք նշանակեալ կան ի կարգին . օրինակ իմն . Սուր ժամանա-
 կակից ասի Յեսուայ՝ որ իշխեաց ի 1605 ամի նախ քան զՔրիստոս , իսկ
 Անուշաւան յամի 1964 . ընդ սա և ընդ Սուր 4 ազգապետք միայն կարգին .
 միջոց ժամանակի 360 ամ է , որ բաժանեալ ընդ վեցեանն՝ մէն միոյ 60
 ամ անկանի , և աւելազանց է : Դարձեալ Զարմայր առ իշխական պատերազ-
 մօքն ասի լինել , և առումն Տրոգլազայ հաստատի ի ստուպագոյն քննութեանց

յամն 1184 նախ քան զՔրիստոսս. որդ յաջորդ Չարմայրայ կարգի Պերճ, և վկայի ժամանակակից գոլ Դաւթի սր թագաւորեաց յամի 1056 (կամ 1040) Ն. Քրիստոսս, և թէպէտ բազմակեաց առի լինել Պերճդ, այլ աւելի քան 120 ամք իշխանութեան պիտին առ անմիջոց յաջորդ Չարմայրի և ժամանակակից Դաւթի զնա առել. որ անհաւատալի է: Վասն որոյ հաւանելի է ըստ նորոյ Պատմաւորս (Միք. Չամչ.) զայլս ոմանս միջակարգել զոցա, որպէս և առնն իոկ՝ գտեալ ուստեք ուստեք, որպէս ասէ (Պատմ. Հայ. Ա. 178) և յետ Չարմայրի կարգէ ՂԵՊԱՐԴ Բ, և յետ Արքունի յաջորդին Պերճայ զՊերճ Բ, և Բ իս այսմ ի նահ գոյ ժամանակակցութիւն Դաւթի, քանզի այսու ընդ սա և ընդ Չարմայր Յ եւս պեաք ի մէջ անկանին: Նոյն դարձեալ և յառաջ քան զկարպակ դասէ զԱմբակ Բ. և այնպէս մինչեւ թիւ ազգապետաց բովանդակի յ'Յ2: Այլ տակաւին և այլ անբաւական երեւի առ երկարութեան ժամանակին:

Եւ զի հաւաստեաւ ի կարգէ ազգապետաց մերոց ի բաց անկեալ է ոմանց՝ աներկբայ լինի ի գասակարգէն որ յետ Պարոյրայ ցՀրաչէ. քանզի առ խորենացոյ տատանօր ակններեւ կայ աղաւաղութիւն բանի և հակառութիւն. քանզի անմիջոցս զնէ զգոսա ի կարգին. և ըսա պատմութեան զՊարոյր զուզէ վարբակայ Մարի սկզբնաւորի թագաւորութեան Մարաց, և զՀրաչէ՝ Նաբուքոզնոսորայ որ 40 ամաւ միայն կանիտէ քան զվերջ թագաւորութեան Մարաց, զոր գիտեմք զէթ 200 ամ տեւեալ. դարձեալ զՊարոյր վարբակայ զուզակիցն՝ նոյն և Սենեքերիմայ զոյդ ցուցանէ, մանաւանդ թէ անանկազոյն և անհնարագոյն եւս զնախորդ նորա զՍկայորդի զոյդ Սենեքերիմայ՝ որ այնքան կրսեր է ժամանակաւ քան զվարբակ. և ամենեցուն տատանօր յայտ յանդիման կայ խանգարումն պատմութեանն և անլինելութիւն, գուցէ յորինակողաց կամ յանհմտից ոմանց ձեռնարձակութենէ: Եւ ահա զմիջոց ժամանակիս ի Պարոյրայ ցՀրաչէն կամ ի վարբակայ ցՆարուք. որ ըստ ոմանց ժամանակագրաց 150 ամք են և ըստ այլոց աւելի քան զ'200, որում և մեք հաւանեալս եմք, ըսուն 5 կամ եւս աւելի թագաւորք Հայկազունք՝ զորոց ամենեւմբ զանց առնէ խորենացոյ և այլ ոք երկցազոյն քան զնա ստուգիւ արձանագրեալ և այլք աւանդեալ հասուցին մեզ, որպէս տեոցի ի յետագայ: Եւ ըստ այսոցիկ համագումար թիւ ազգապետաց որ ի Հայկայ մինչեւ ցվճէ՝ 56 համարի առ խորենացոյ, աւելի քան զ66 գտանի հաւաքելով յայլոց պատմչաց և զրչաց. և ամենայն ժամանակ իշխանութեան նոցա յ2492 ամէ ց330 նախ քան զՔրիստոսս (2162 ամք) բաժանեալ ի 66 պետս միոյ միոյ վիճակին իրր 32 ամք. իսկ յԱնուշաւնայ ցվճէ

համարեալ ամս 1634, միոյ միոյ ի 57 պայազաաց՝ ամբ 28. և այսսքիկ ոչ անճահք և անպատշաճք. թէպէտ և ինձ տակաւին ոչ հաւանութեան երեւի, կամ սակաւք են պայազատքն Հայկազունք (66) յ՝2162 ամս իշխանութեան, կամ միջոցք անիշխանութեան եղեալ են երբեք երբեք. ապա թէ ոչ հարկ էր յեղաշրջել և փոփոխել զպատկարգ պայազատացք՝ և ըստ երկարութեան կամ սղութեան միջոցաց ծանօթաժամանակ արանցն յեւ և յառաջ դասակարգել զնոսին. յոր ոչ յանդգնեալ մեր և ոչ իսկ փաստս գտեալ տեղափոխութեան՝ միայն ի կարգ արկանեմք զզանալսս արտաքոյ խորենացելոյ առ այլս ի պատմչաց կամ առ Չամչեանն. և յերկարեալ միջոցան՝ պակասեալ խոստովանիմք զպայազատս մեր, կամ յանիշխանութենէ, կամ յանյիշողութենէ ժամանակագրաց, և կամ ի վրիպմանէ զրչաց: Առ կարի հեռուորութեան և մթութեան ժամանակաց չիշխեմ ստուպապատում ասել և զթիւս ժամանակաց և զազգայեատաց և զաւանդեալն ինչ յիշատակս զնոցանէն կամ զոր նոցին ժամանակ բայց միայն առ ի զումարումն և ի պատմութեանս քննութիւն յեանոց՝ ջան տարայց հաւաքել զսոսին, հանդերձ հետաքննութեամբ ամենայնի՝ որ միանգամ պատշաճեալ բերցի: կամ զործոց անուանց հայկազանցս պետաց, մինչև յառաջագէմ լուսաւորութիւն արեւելեայցն պատմութեանց կամ զիս ինչ անակնկալ՝ փարատեցէ շատ կամ սակաւ զմթութիւն դարուց ժամանակացս այսոցիկ, որ գրեթէ մածեալ ունի զեռ զպատմութեամբ առհասարակ ամենայն ազգաց ժամանակակցաց, բաց յերբայեցելոցն և ի սակաւուց ոմանց այլոց. քան զորս յուրս առաւելաշնորհ զտանիմք գոնեայ և այսու իսկ մնացուածով անուանակարգութեամբ ազգայեատացս, և սուղ ինչ յիշատակօքն, այնքան ևս պատուականագոյնք որքան «կամ հաւաստի կամ» զոյզն ինչ կտեսեալ յարդարոյն», ըստ բերգսդարան պատմահօրս առից:

Յետ սասանց ազգածին նահապետաց՝ որք ի Հայկայ մինչև ցԱնուշաւան որպի ի հօրէ առին զառաջնորդութիւն ազգիս, առաջին յաջորդ նոցա և (ԺԱ) ազգապետ՝ հաստատեալ ի դրանէ Ասորեստանեայց եկաց Պարէտ՝ զոր ոմն ի յեաին պատմչաց մերոց միայն՝ ընթեռնու. Զարէտ. և զի առաջին ոս եկաց զրժող Հայկազանցն ցեղապետութեան յայտ իմն լինի անհաւան եղեալ Անուշաւանայ կամ որպւոց նորին, և հաճոյ ի սպասու ինքնակալացն Նինուէի. կամ թէ շողմութեամբ և կաշառօք զրոամբ ածեալ զառաջնորդութիւնն. յոր միսս մարթ էր համարել զՄագիստրոսի ասացածն «Պարէտ պարառարար պերճացեալն», եթէ ոչ վարկպարագի և ձայնական ինչ յարմարուածք էին բանի նորա. որպէս և զյաջորդէն նորա (ԺԲ) որ

Արբակ կամ Արթակ կոչէր՝ ասէ « Արթակ արբանեակ բարեաց » : Պարէս ամս 21 վարեաց զիշխանութիւն ըստ Զմիւռնացոյն . իսկ Արբակ յալս վագոյնս . և նորին յաջորդի որ է (ԺԿ) Զառէն կամ Զաւան « զօրաւորն » զինու » ըստ Մագիստ . ամս 51. նորուն յաջորդ (ԺԶ) Փաննակ (Ա) « փառացի զեղաշուք » կամ Փառան 80 ամ . իսկ զյաջորդ սորա (ԺԵ) Սուր պատշաճեցուցանէ յառաջին ամն Յեսուայ , որ ըստ մերս ժամանակազրութեան փոխանակեաց զնախամարգարէն Մովսէս յամի 1585 նախ քան զՔրիստոս . ըստ որում և յԱնուշաւանի պայազատութենէն ցայս վայր գումարին ամբ իբր 380, յորս 5 միայն ազգապետք մեր յիշին, իսկ Ասորեստանեայց աւելի քան զ'10 յայնքան ժամանակ (այսինքն յ'380 ամս) . վասն որոյ հարկ է և ի մեզ այլոց ազգապետաց զու կացեալս , մանաւանդ ընդ մէջ Արբակայ և Զաւենայ , եթէ միայն ստոյգ իցեն , որպէս համարիմք , Նինուասայ և Անուշաւանայ ժամանակքն ըստ եղելումս (1964 նախ քան զՔրիստոս) :

Յայս միջոց ժամանակի Գից զարուց (ի ԺԷ նախ քան զՔրիստոս) կամ թէ և սուղ մի յետ և յառաջ գէպք ինչ զանխուրք ի բազմաց և երկբայականք աւանդին ի համար մերոյ աշխարհիս և ազգիս , յորոց է ինչ որ և ի սուրբ Գրոց պատմութեանց , և այսոցիկ առաջին Աբրահամու պատերազմն ընդ չորից թագաւորաց արեւելից , (2046 նախ քան զՔրիստոս) որոյ ժամանակ ըստ մերոյս ընտելոյ ժամանակազրութեան յամս Արամայ քաջի պատահէ , ըստ այլոց՝ յետոյ ուրեմն . ի չորից անտի թագաւորաց Ամարփաշն՝ Սենասարայ՝ զԲարեղացոցն յայս առնէ իբր կողմեակալի կարգելոյ ի Նինուսէ որում և պատշաճի իսկ ժամանակն . Արիսիք արքայ Ելասարայ կամ Թալլասարայ՝ Պոնասի կողմանց իշխեցող կարծի , իսկ Թարգաշն թագաւոր ազգաց կամ Օտարականաց , կամ Սկիւթաց (ըստ Ակիլասայ) յիշեցուցանէ զԹարգամ . և յայս է , որպէս ի սկզբան տեսաք , զի այդ էր առաջին անուն ազգիս և աշխարհիս , որ և Սկիւթք կոչեցեալ . բայց ոչ ի նմանութենէ անուանցն կամ ի սահմանակացութենէ այլոցն երից թագաւորաց յայսպիսի կարծիս բերաք որպէս թէ միոյ ի չորից թագաւորացն նիզակակցաց՝ մերոյ ազգիս նահապետ լինել , այլ զի և պատմիչ ոմն հեթանոս քաջ ի բաց հին , զողջիւր ժամանակակից Մարիբասայ , Եւսլոնմոս , զայլոց ինչ չառնելով զրոյց՝ միայն զմերս ազգ յիշէ . « Մինչդեռ ի Փիւնիկաստան , ասէ , բանակեալ էր Աբրահամ , եկեալ Հայոց մարտի պատերազմաւ հարկանէին զՀահասէրսն Փիւնիկեցիս , ի գերութիւն վարելով և զեզրորոյրին Աբրահամու զՂոլտ . յորոց վերայ ժամանեալ Աբրահամու օգնական Փիւնի-

կեցւոց, ի պարտութիւն մատնէլ զյաղթականսն և թափէ ի նոցանէլ զերի զմանկունս և զկանայս, զորս ապա յաղերսել նոցա արձակէ յազատութիւն, առեալ միայն փրկանս ի թոշակ զօրականին: Եթէ արդարեւ, որպէս թաւի, յԱրամայ ժամանակս լեալ իցէ արշաւան թագաւորացդ արեւելեայց՝ կարի իսկ հաւանութեան է լինել և զօրաց նորին ընդ նոսա, սր և հզօրացոյն էր, որպէս սեսաք յիշխողս ժամանակին և վանիչ բռնաւորաց. և թերեւս առաքեալ էր զմի զօրավարաց իւրոց:

Դէպք իրացս յուշ առնեն մեզ և զաներկրայ բարգաւաճանս Փիւնիկաստան ժողովրդոց ի հնագոյն պարս անդ, մանաւանդ ի վաճառականութեան հայթայթմանս, սրովք ծանուցեալ էին առ ամենայն քաղաքացեալ ազինս ժամանակին, մանաւանդ առ որս շահարեր ինչ արգասիք գտանէին. և ամենեւին հաւանութեան է թէ պոյր նոցա և մերոցս Հայկազանց տուրեւտիկ վաճառուց և երթեւեկք, որում վկայ պարձեալ յետոյ ուրեմն Ս. Գիրք ի ձեռն Եզեկիէլի մարգարէի: Արամ ի հալածելն զՊայապիտ մինչեւ ի կղզիս Միջերկրականին, որպէս սեսաք, և հաս ուրեմն մինչեւ յափունս նորին՝ առ կիլիկիաւ. և Ասորւօք, որոց պզ զրակից իմն էին Դ Հայք և Միջագետք Հայոց՝ զորս կացոյց նա մարդ իշխանութեան իւրում. և երաց կամ գիւրեաց զճանապարհն ընդ աշխարհն Ասորւոց և Քանանացոց, յոր իջուցանէր անդստին յերկրէ իւրմէ Եփրատս պես. և զի մերձաւոր քան զայլս ի շարից ազգացդ յիշխոց Հայք էին յայլմ կողմանէ ի Փիւնիկէ, շիցէ անպէզ յոլովութիւս և առաջնորդս զնոսա կարծել նիզակակցացն, և վասն այսորիկ զմերսս միայն յիշել Եւպոլեմեայ, որ զլթ ճանաչէր զՀայս իրրեւ ազգ հզօր և ինքնակաց և այնպէս իսկ համարէր լինել ի ժամանակս Աբրահամու:

Եւ զի զմեծէ նահապետէս բանք են, թերեւս շիցէ աւելի կանխել յիշել աստանօր զմեծ աւանդութիւն ազգիս, որ վնա ինքն զԱբրահամ հնագոյն և հեռագոյն հաւ ճանաչէ հզօրագունի հարստութեան ազգին, Աբշակունեացն ասեմ կամ Պահլաւաց, իրրեւ սերնդոց քնասւրածին սրբոց նորին, յորոց վաղարշակն, և նայն ինքն Ս. Գրիգոր հայր հոգւոց Հայաստանեայց. որ գերագոյն եւս զոգցես հրաշիւք քան զՄելքիսեղեկն քահանայայեա՝ յայսնեալն յես յազթութեան Աբրահամու ի վերայ արեւելեայցս ազանց, երութանայր վերին անսլութեանն 23 դարուք յառաջ, և առաւել քան զզինուցն՝ զհաւատոցն յազթութիւն եւս գրաւականէր առ յայպա զարմիցն Թորգոմայ և իւրածինն Եմբանայ: Անուն նահապետին Հրէից առանց երկրայութեան՝ յազթական գործոքն հոշակեցաւ յարեւելս

և յաշխարհիս մերում, որպէս զմիայ ի հզօրաց թագաւորաց մանունց կամ ցեղապետաց ցրուելոց յընդարձակութեան աշխարհացն Ասորաց և Արարաց-ւոց: Կարծեմ թէ և յայդ ի գորին անուն կոչեցաւ տոհմ մի պատուական ի Հայս Արրահամանք կոչեցեալ, որաց և բնակութիւն երեւի լինել ի հա-րաւակողմանս աշխարհիս ի սահմանս արեւելեան հարաւային Վասպուրա-կանի, ոչ շատ հեռի ի բուն հայրենեացն Արրահամու (Ուր ֆազդէացոց): այլ թէ երբ գալուստ տոհմապետին առ մեզ, ի գերութեանն Հրէից առ Նաբուզոդոնոսորաւ և Հրաշէի, եթէ վաղապէս կամ յետագայն եւս ժա-մանակաւ, զայն ոչ գիտեմ:

Միւս եւս արրահաման կամ երրայակիր պատմութեանց կցորդութեան աւանդ առ ումեմ հնագոյն պատմչաց մերոց առ սրբով իսկ մեծի Նահա-պետին հանդիպեալ, առ իսահակաւ. յորոյ երեսաց փախտական լեալ առէ ի Դամասկոսէ զՄարտեակն զընդոծինն Արրահամու, և եկեալ բնակեալ ի Հայս «առ սասմբ երկուց լերանցն՝ որ հային հանդէպ մեծի պաշտին» Արայի, յԱրագած կատար և ի Գեղ լեառն. և անուանէ զլերինսն յանուն « իւր: Եւ լինին նորա երեք որդիք (առաջինն) Փառոխ, նա է Եղիազար, » որում Ազատն կոչին լեառն»: այսինքն յանուն Եղիազարու թարգմանո-րէն զմի ի լերանց Դաշտին Արայի կոչեաց Ազատ, յորմէ իջանէ գետակն համանուն և անցեալ առ Գունաւ օժանդակէ զԵրասխ, բայց Փառոխ թուի թէ այլում յորդոցն անուն էր, զորոյ առէ « Փառոխ (Փառախոս?) կոչին » զտեղի բնակութեան, և Փոտակոն՝ զաշա որոց և արշաւանաց նոցին. » որ խանեցան յազգո Արտմենակայ»: Յայտ իսկ ակնարկին անուանքս ի բան Ս. Գրոց « Եւ որդի Մարտեակայ ընդոծնի իմոյ, այն է Եղիազար » Դամասկացի»: (Մնն. ԺԵ. 2). զոր պէսպէս իմանան մեկնիչք, զմա-սեակն ոչ անուն յասուկ՝ այլ վերակացու տան նշանակել, և զԴամաս-կացին Դամասկոս՝ որդի Եղիազարու. այլ աւանդութիւն մերոցս ոչ գիտեմ յորմէ աղբիւրէ կամ ի հին զրուցաց թուի իմն ցուցանել զՄարտեակս զայս ոչ հայր Եղիազարու հաւատարմին Արրահամու, այլ թոն նորին և հայր երկրորդ Եղիազարու և Փառոխայ և միւսում՝ զորս ծնաւ ասաէն. և խառ-նեալ յազգ Հայկազանցս ի մերս լեզու վերածէր վանուանս և զէնս նոցին. որք և ըստ այսմ աւանդութեան որիչ են ի համաձայնիցն որ արսաբոյ զաշտիպ Արայի, այսինքն մեծ Մասիս լեառն որ և Ազատն վերակոչի, և որ ըստ թիկանց նորին Փառախոսն աւան շինեալ յԱմասիայ նահա-պետէ ի սակս որդւոյ իւրոյ Փառոխի, որպէս նշանակեցաք ի կարգին, յորոյ շնորհուկս կամ առ յիշատակէ թերեւս անուանեաց Մարտեակզ գոր-

դին իւր, եթէ արպարեւ ստոյգ իցեն իրքդ . որք ըստ կարգի ժամանակա-
գրութեանս զոր ընտրեցար՝ ի դէպ զան ժամանակի Անուշաւանայ կամ
Պարէտի, իբր ի կէս դարու նախ քան զՔրիստոսս :

Յիշատակք սուրբ գրոց որ հզօրագոյնս գրաւեալ էին զմիտս վարդա-
պետաց ի Հնումն, և մերձաւորութիւն տեղեաց անցիցն պատմելոց ի գիրս
անդ ընդ երկրին Ասորոց և նոցին դրակցաց, անուանակցութիւն տեղեաց
ոմանց, և անժանօթութիւն այլոց տեղեաց կարծեցուցին բազմաց ի նո-
ցանէ՝ մերձ ի սահմանս հայրենի աշխարհին իւրեանց հանդիպեալ զհնա-
պոյն անցսն . և զի զնահապետաց Երրայեցոց գրոյց առնէր աւանդութիւնս
մեր, յիշեցուք աստանօր և զանհաւանագոյնն աւանդութիւն զմիւսոյ նա-
հապետէ և զանդոյք առնէ, զՅոյբայ, զորոյ հայրենիս Առիկ ըստ մե-
րում թարգմանութեան առնն մեր միջին աշխարհագիրք լինել զՔրիս-
տոսն առն ի Միջագետս Ասորոց, և ըստ Յայտմաւորաց (Ահկի ժԹ) .
« ի մէջ երկց բաղաբացն՝ Ամգայ, Մէրսնայ և Ուռհայոյ » : Իսկ այլք
ոմանք օտարք, զԵղիսու բարեկամն Յոյբայ « զԲուզացի յազգականու-
» թենէ Արամայ աշխարհին Աւստացոց », ըստ մերումս թարգմանու-
թեան, զոր ի դէպ է կարծել յորվոց Բուզայ որդւոյն Դաքոյրայ (Մննդ .
ԻԲ), համարին մերձաւոր կարծեցեալ տեղւոյն Ասիգայ, և զԲուծն լինել
Մոսիս կամ Մծբին : Դարձեալ զնոյն ինքն Եղիսու առ Ս . Հիւրնիմս
ոմանց կարծեալ զերկմիտ մարգարէն Բաղասամ, որ իբր երկու դարուք
կրտսր իսկ է քան զՅոսբ, թէ և հայրենեօք զուցէ սչ հեռագոյն ի մերոյ
աշխարհիս սահմանաց, քանզի որպէս և ասէն ինքնին « ի Միջագետաց
» ի լերանցն արեւելից », կոչեցաւ առ Բաղակ . և եթէ բուն ծանօթ Մի-
ջագետք են հայրենիք նորա անդ և ծանօթ լերինք են Մասիոսս, յարեւ-
մուտս հարաւոյ Ամգայ :

Աշխարհս այս մեր որ և Դ Հայք, ի ծայր արեւմտից հարաւոյն Մե-
ծաց Հայոց և երբեմն որիշ իսկ ի Հայոց, գրակից Ասորոց և Միջագե-
տաց, ոչ միայն Մծբնայ, այլ և աշխարհի միոյ Ասորոց յարանուն գտա-
նի, այն է Սոսր . զոր գիրք Թագաւորացն յիշեն և Սաղմոսք, վասն որոյ
և կարծեցաւ ոմանց թէ նա և թագաւորք նորին իցեն ընդ սրս զսրծ
պատերազմի կալան Սաւուլ և Դաւիթ և Սողոմոն . այլ արբ ամենայն գիտ-
նոց ընկալեալ է զՍուրբ մասն մի Խորին Ասորոց լինել ի Հիւսիսոյ Դա-
մասկոսի առ Որոնդէս գետով (զոր Եբրայեցին Արամ-Սոպան կոչէ և Լա-
սինն Սիրիա-Սոպայ) մերձ ի Հէմս (Եմեսիս) և յԵպիփանեա (Էմաթ) :

Ի յայտոսիկ ժամանակս միգամած պատմութեան՝ հանդիպեալ առնն

առերեզրեր վրաց զառաջին արշաւան հիւսիսային կամ սկիւթական ազանց յերկիր Թորոզմեանց, ի կովկաս, ի վիրս և ի Հայս. արշաւանք՝ որ բազում անգամ կրկնեցան ի դարս յեախնս ց'3000 և աւելի ամա՝ ի զանազան ցեղից չուսմանակ ազգաց հիւսիսոյ կովկասու և արեւելից կասպիականին մինչև ցաշխարհակեր և յեախն արշաւանս Լէնկիթիմուրայ յերո ժԴ և ի սկիզբն ժԵ գարու: Իսկ զառաջինս զայս հանէ ժամանակագրութիւն վրաց յժԷ դար նախ քան զՔրիստոս. և Խազդիս ասէ զասպատակողան, ազգ որ այդու անուամբ անագան ուրեմն ծանօթանան ի պատմութեան յետ Քրիստոսեան թուականին. թէպէտ և յանհնարիցն է գոզցես որոշել զատհմն և զանուանս ժողովրդոցն այնոցիկ՝ զորս հինքն միով անուամբ առ հասարակ կոչեն Սարմատացիս և Սկիւթս, սովաւ զարեւելարնական ծանուցեալ, յորոց յետոյ Քուշանք և Հոնք, Թուրք և Թաթարք. իսկ առաջնոքն զհիւսիսայինս, յորոց ցուցանէ պատմութիւնս և զասպատակն առաջին որ անցեալ ընդ կիրճս բարձրաբերձ լերանցն սփռեցաւ նախ ի սահմանս Լեկաց և կովկասու. նահապետ որա Դուրծակ սրղի Տիրայ կամ Տիրիթայ, որպէս կոչէ պատմիչն, յօդուութիւն կոչեաց զազգակիցան զԹորոզմեանս, « որք ի խնդութեան և ի խաղաղութեան կային յաւուրսն յայնոսիկ. որք » և չոգան իսկ յօժարութեամբ և կազմն պատրաստութեամբ, և անցին ընդ » լեանն կովկասու, և գերեցին գերկիրն Խազրաց »: Բայց սոցս վերստին և հզօրագոյն գումարեալ հրոս « եղեն բանակ մեծ և ելին ընդ դուռն Դար » բանաու ի վերայ Թորոզմայ մինչև ցԱրարատու պաշտն և Մասեաց. և » կոտորեցին և գերեցին զնոսա, զի էին անբաւք. և մեացին միայն բեր » դաքաղաքքն ծմակայինք, և Մոխրաբերդն, Խունան և Սամշոյլտէ և Դարի » և Եզրիս: Եւ գտին Խազդիքն դուռն մի այլ, որ ասի Դարիալայ (Ալա » նաց), և յաճախեցին զպաշն ասպատակաւ ի վերայ Թորոզմայ, և արա » բին ընդ հարկաւ: Եւ զառաջին գերեալսն ի Հայոց և ի վրաց ետ թա » գաւորն Խազրաց որդոյ իւրոյ Ուուբոսի, և մասն ինչ ի կովկասու, ի » Լուսեկայ գեաոյն մինչև ցսպատումն լերինն առ արեւմտիւք: Եւ շինեաց » Ուուբոսս ազգաւն իւրով գերկիրն, որ կոչի Օսէթ »: Եթէ ստոյգ իցէ այդ ամենայն՝ զայս օրինակ սկիզբն ընծայի Ալանաց ազգի, որ որպէս յայտ է բնակէին յերկրին որ ցայժմ, յանուն Օսաց ճանաչի, և կարգ բանիցդ ցուցանէ զգոսա խանուրդ Արեաց Թորոզմազանց և Սարմատացոց: Մեր ձաւորքն բնակութեամբ կովկասեանք և Լեկք՝ և այլք և հիւսիսականք հնազանդեալ մեացին « ընդ հարկաւ Խազրաց », ժամանակս բազումս. որք հաւանութեան է թէ և ոչ սակաւ անգամ զնոյն օրինակ արշաւանս փոր-

ձեցին յերկիր հարաւոյ. այլ պատմութիւնք ոչինչ ստուգիլու ցուցանեն ցհազար ամ, մինչև ցմեծն այն և աշխարհահոշակ արշաւնն Սկիւթաց ի կէս է դարու նախ քան զՔրիստոս . յորում կալան զամենայն արեւմտեան Ասիա :

Նոյն ժամանակապիւր Վրաց յանդիման աննէ մեզ իրրեւ 40 ամաւ զկնի հիւսիսականացն՝ զարեւելեայ արշաւանս, բայց ոչ զՍկիւթեացն, այլ զՎաղընջուց Պարսից զՓիշգատեան տուճին, որում և օտարք վկայեն, թէպէտ և յառասպելապատում ժամանակաց գէպս համարեալ է. այն է աշխարհակալութիւն գերահոշակ զիւցազին նոցա էրիստունայ, որ ըստ մեզ Հրուզեն . որպիք Ճլմշիտայ օրէնսպիւր թապաւորի նոցա, զոր մերժե ոչ և բոնապետեալ էր անուանին Աժգահակ Բիւրասպի, Չօհաք կամ Տահաք ըստ Պարսից, բիւրոց հեծելոց Արարացի առաջնորդ և զիւթ . զոր օգնութեամբ զարբին կառայ վանեալ հալածեաց Հրուզեն մինչև ի լեառն Դարաւրդ (Տէմաւլէնս), ուր և սպանեալ արկին ի վիճ մի մեծ ծծմբոյ. կամ ըստ առասպելաց Պարսից՝ արկեալ յայրս ինչ լերինն և կապեալ սղոնձի սարեօք՝ անդրի ահարկու ընդգէմ նորա զիւր պատկերն կացոյց, « յորմէ պակուցեալ » և հնազանդեալ կայ շղթայիցն, և ոչ զօրէ ելանն և ապականել զերկիր » : (Խորեն) : Այս Հրուզեն ասեն աշխարհակալութեամբ նուաճեաց մինչև ի կողմանս Ասորոց, և ի մեռանելն՝ Սելմայ կամ Սալմայ երկրորդի որդոյ իւրում ժառանգեցոյց զարեւմտեան Ասիա : Այդ համաձայնեալ սոցին անէ գնմանէ Վրացիքն Վրաց, « թէ կապեաց աղանդալք զիշխանն օձից (Աժգահակ) յերկաթս, զկոչեցեալ Բիւրասպ՝ յանքնակ լերինն Բայիտայ (Ռէ) աշխարհի » որպէս և զրեալ է ի մատեանս Պարսից : Սա արար ընդ հարկաւ զազգս բազումս, և տիրեաց ասան Պարսից, և առաքեաց զգօրապետին իւր (Արգամ անուն) ի ծննդոցն Ներքովթայ յերկիրն Վրաց . որ և եկեալ տերեաց զբազարս և զբերդս, և կոտորեաց զորս եզիտ ի Խազարաց, և տիրեաց երկրին : Սա շինեաց յեզր ծովուն զԴարուբանդ, որ է Փակեալ Դունն » : Յետ Արգամայ կացին այլ եւս չորք կողմեակալք, մինչև ցժիոր որդւոցն Հրուզենայ և սպանանել զիրեար, զոր ժամանակ զիւր Վրացիքն կոտորեն և Վիրք և Հայք զՊարսիկսն սահմանակալս . բայց միայն արեւելեան կողմանք կովկասայ և Աղուանից մեան ընդ իշխանութեամբ պարսկայնոյն : Թէպէտ և ժամանակ և յեղանակք իրացս անըստոյքք և առասպելք երեւին, այլ չեն ամենեւին անհիմն . սակայն պատմիչն (Վրաց) ըստ անոճ և անհմուտ զրուցաց Պարսից հուպ զհետ Հրուզենաց որդւոցն և զործոց կարպէ զգործս Քէլկաուուայ, զոր այժմ բննիչք

հազար ամառ կրսեր գտանեն և զթագաւորս Մարաց ճանաչեն ի նմա և ի յաջորդս նորուն:

Ստուգագոյն և աներկբայ դէպք և գործք մտրտից և յեղափոխութեան ազգաց յիշատակին ի Ս. Գիրս յելս ԺԷ գտրու կամ ի ոկիզբն կոյս ԺԶ գարու նախ քան զԲրիտանոս, յելս իորայեւկան ազգին յԵգիպտոսէ և ի մուսա յերկիր նախահարց իւրոց Աբրահամեանց՝ ի Պաղեստին, որ է ֆղշտացւոց երկիր, յորում սերունդք Քանանայ Քամեան տրոհեալք ի տոհմս և ի ցեղոս բնակէին մինչև ի սահմանս Ամաղեկայ և Եգիպտոսի. Մովսէս՝ և յետ նորա Յեսու վանեցին մի ըստ միոյն զազգս և զթագաւորս նոցա և բաժանեցին զերկիրն յորդիս իւրայելի. ապրեալքն ի կոտորածէ սոցա փախտական գնացին տուաւել մասամբ յափունս Ափրիկիոյ, և որպէս թուի և Արաբիոյ. ուրանոր թուի ինձ և Ազոտակ ապաւէն մի նոցա, զի է իսկ յարեւելեան ափունս աշխարհին և յեզերս կարմիր ծաղու երկիր համանուն. յորմէ զարձեալ ելեալ զիմեցին յարեւմուտս կոյս. և հաստաւ աեալք յեզերս Ափրիկիոյ՝ արձանացուցին յիշատակաւ գրոյ զփախուստ իւրեանց և զբնակութիւնն աստանոր, զոր և յաւուրս իւր ծածոթ ամենեցուն գոլ վկայէ խորենացի (Ա. ԻԱ) « և է այսպէս. ի Յեսուայ գողոյ » փախուցեալ մեք նախարարք Քանանացւոց, եկաք բնակել աստ. յորոց մի » և Քանանիդաս պատուականագոյն մեր՝ ի Հայս »: Յետին տողդ՝ որ մեզ կարեւորագոյն է, արձանագրին եթէ պատմագրին իցէ բան, և սրբան ստուգութիւն արձանին, յոր լեզու գրեալ և սրպէս, մեզ անծանօթ և անխնդիր իրք են, այլ զիպողագոյն այո է զի պատմիչս մեր աներկեւան տունէ զգալուստ Քանանիդայ ի Հայս, քանզի « Ստուգեալ հաւաստի գտաք, » ասէ, զսերունդս Գնթունեաց ի նմանէ (Քանանիդաս) ասանց հակասաւ » կոչեան յեայ. զայո և բարք արանց ազգին յայտնեն Քանանացի գոլ »: Եւ զի գուն ուրեք խորենացի այոպէս պնդութեամբ խօսի ի հաստատութիւն պատմութեանն՝ անհակասակ և մեզ ընդունելի երեւի, եթէ ոմն յաւագաց պրծելոցն յանխնայ սրոյն Յեսուայ՝ կամ և անուամբն իսկ կամ լսկ ազգուն Քանանացի (վասն այնորիկ Քանանիդաս կոչեցեալ) ուղիղ յԵփրատ կոյս զիմեալ, կամ նախ յարեւմուտս յԱփրիկէացւոց սահմանս, և անտուսա վերափոխեալ՝ եկն իւրայոյլք ոմամբք բնակեցաւ ի Հայս, բնդ սրոց գուցէ էք իսկ նորա յառաջն ծանօթութիւն, վաճառակցութեան աղագաւ կամ այլով իւրք: Եւ այս ասաջին գաղթական է օտարազգի, ոչ միայն լեզուաւ և տոհմիւ, այլ բնաւ իսկ նախասկիզբն ցեղիւ. քանզի ի Քամայ շտուաւիդաց էր, յամենեւին հեռացելոցն ի յարեւմանց և յարեւկան

ազանց. և նախօրինակ բազմաթիւ տոհմից և տանց որք ի զանազան ժամանակս և դարս հեռի և մօտ ժամանակօք՝ եկին ՚ի հեռաւոր և ՚ի մերձաւոր աշխարհաց և յարեցան ՚ի մերայինս, և խառնեալ եղեն մի ազգ և մի լեզու. զիրընկալք լինելով և յիշխողաց ազգիս և ՚ի ժողովրդենէն. որք ներէին և առանձինն ինչ կրօնից և օրինաց եկացն, մինչեւ յաճախ և յերկար ընդելութեամբ և բնակութեամբ՝ ՚ի հայկականն անդր համախառնէին, զբարս ինչ և զտիպս նախահարցն միայն ընդ սերնդեանն փոխաբերեալ ցղարս բովանդակ. որպէս և յետ 2000 ամաց գալստեանն Քանանիդեանց՝ տակաւին նշմարէ խորենացի զբարս Քանանացոց՝ ՚ի Գնթունիս. որք յետ Հայկազանց՝ հնագոյն ՚ի Հայս ճանաչին տոհմն և ազգապետութիւն, յոր պատիւ գրեցան յաւուրս կարգադրութեանց վաղարշակայ, Գերոսելի կոչմամբ, որ և զգեցուցանող արքայի Հայոց սահմանեաց զնախապատիւն կամ զպայազատ տոհմին՝ որ կոչէր Զեռես. անուն՝ որ ծեցածայնութեամբն գուշակէ զծագումն իւր:

Առ սովաւ ազգապետ կամ նախարար Հայոց ՍՈՒՐ ճանաչի ՚ի պատմրչաց մերոց (Յովհ. Կաթ. և վարդան), թէպէտ և Մ. խորենացի ոչ ցուցանէ զայս ստուգիւ. Մագիստրոս ըստ անուանն իմաստասիրէ զուս լինել գոռ մարտիկ և ահաւոր առ թշնամիս. իսկ առ ումնն ՚ի յետին պատմչաց Տորք գրի. — Սմա յաջորդ կարգի ՀԱԻԱՆԱԿ կամ Յոճակ. որում՝ ՎԱՇՏԱԿ, զոր Մագիստրոս վաշեակ ստուգաբանէ՝ չգիտեմ յ՞նչ միտս. և սմա ՀԱՅԿԱԿ Ա. բայց ինձ թուի և այլոց ընդ մէջ սոցա կացեալ, եթէ արդարեւ Սուր Եստուայ ժամանակակից իցէ և Հայկակս Բեւոքոսի (Բ), զի սա ըստ ժամանակագրական գաւազանաց նշանակի մեռեալ իրրեւ յամի 1404 նախ քան զՔրիստոս, և Հայկակայ մեռեալ առ նովաւ իսկ. և լինի միջոց ժամանակին իրրեւ 160 ամ, աւելի կամ պակաս, այսինքն է չորից ազգապետացն Սրոյ, Հաւանակի, վաշտակայ և Հայկակայ՝ պայազատեալ այնքան ամս, մին աւելի քան 40 ամ, որ ոչ շատ հաւանութեան է. — ԶՀայկակայ ասէ պատմիչն «ամբոխս իմն արարեալ անխորհուրդս, և մե.» ունել ՚ի նմին». որ յայտնապէս երեւի զինու զօրութեամբ ապստամբութիւն յինքնակալ թագաւորէն Ասորեստանեայց ՚ի Բեւոքոսէ, և մահ ՚ի կոտիւն. որոյ պատճառք թուին և Բեւոքոսի իսկ անխորհուրդ գործք կամ բռնութիւնք. յորոց սակս արդեօք և ինքն իսկ չարավախճան եղև, սպանեալ ՚ի Բալոստոնայ վերակացուէ պարտիզաց իւրոց, որ և առեալ զղուստը նորա Առոսսա յիւր կին՝ թագաւորեաց փոխանակ նորա: Զխարզ և իցէ այլոցիկ եղեալ՝ սսոյց թուի յայսմ ժամանակի հանդիպեալ փո-

փոխութեան իրիք կամ տրշաւանաց թշնամեաց ի Հայս. քանզի և այլ ոմն ժամանակագիր (Փրեկուլիփ . Բ. Ժ.) առ սովին Բեւըքոսի ժամանակաւ գրէ զՀայաստան նուաճեալ ի Կազմոնէ Փիւնիկեցոյ. թէպէտ և առասպելախառն են իրք Կազմոսի և աշխարհակալութիւնք, գուցէ թէ բնաւ և օտարասի ինչ իցէ նուաճումնդ այդ, և վրիպիցի ժամանակագիրն յանուանցն մերձաւորութենէ. քանզի հին ոմն պատմիչ (Աթենէ. ԺԳ. ԽԵ) ասէ զԿազմոսէ կառավար լիւնել արքային Փիւնիկեցոց և տոփել ի գուտան մի Հարմոնիա անուն և յափշտակել զնա. մի արդեօք Հարմոնիա ընդ Արմենիոյ շփոթիցի:

Ի Հայկական Ա որ առ (Բ) Բեւըքոսի՝ մինչև ի Զարմայր մեր նահապետ որ առ Տիւառամաւ Ասորեստանեայց, առ որովք պատերազմն Տրուպայ և առումն իլիոնի՝ մեաստան ազգապետք համարին Հայկազանցս իրր յ'200ամեայ ժամանակի ԺԳ և ԺԳ դարուցն նախ քան զԲրիտանոսս, և մարթ է սոսյդ համարել և զկարգ նահապետացս այսոցիկ, զի և բաժանեալ զժամանակ, նուազ քան զ'20 ամ միոյ միոյ ի նոցանէ անկտնի: Որոց առաջին յետ Հայկական կարգի ԱՄԲԱԿ կամ ՀԱՄԲԱԿ, «միշտ մա» նուկ պատանեակ», ըստ Մագիստրոսի իմաստարկութեան. յետ նորա ԱՌՆԱԿ զսրմէ նա ինչ ոչ սաուզաբանէ, այլ գիտելի է զի յայդ անուն թուի ճանաչել նախնեաց մերոց զհոգեհանն կամ զգրաւըն ասացեալ ի ռամկաց, յորմէ Առնակդ սաուզաբանի իբրև որ տանու, գրաւէ. այլ թէ յառաջ քան զնահապետս այս և եթէ յետոյ այս կարծիք հոգեհանին մտին ի Հայս, զայն ոչ գիտեմ:

Յետ սորա ՇԱԽԱՐՇ, զոր «ըստ պարսկականին, ասէ Մագիստրոսս, Շա» րիրաշ, միշտ ուրախ լմարզմանեալ». և նոր պատմահայրս Զամչեան զսա համարի շինող Շաւարշանայ որ յԱրտագն գաւառի. սոյն ինքն յետ Զարմայրի միւս եւս Շաւարշ կարգէ, վասն որոյ զսա զյաջորդս Ամբական՝ Ա համարի: Յետ սորա եկաց ազգապետ ՆՈՐԱՅՐ, «վասն զի նոր» արութիւն ցուցանէր», ըստ Մագիստրոսի, այլ ուր կամ յճյր վերայ, զայն չասէ ոք. բայց թուի սովորական նշանակութեամբ բառիցն անուանեալ, որպէս է և յունականդ Նէանդր:

ՎՍՏԱՄ. «սա մեծարու գօրացն վիհստամ կոչեցաւ». և յետ նորա ԿԱՐ «իբրև կարող բոյորին», ըստ իմաստակութեան Մագիստրոսի. որ քաջ զայս ասնէ որոշել զերկոսինդ. քանզի առ այլս ոմանս ի պատմչաց կամ ի գաղափարողաց միանգամայն գրի վաստակար կամ վաստակար իբրև մի մարդ, և գտանի իսկ առ Պարսիկս անուն վաստակար նաեւ յաւուրս Սասանեանց, իբրև պաշտաման իրիք կամ և պաշտօնէի հոգաբարձութեան

նշանակիչ. իսկ կար ասանձնակ անուն յաճախագոյն եւս, և ոչ միայն առ Հայո և Պարսիկս, այլ և առ Յոյնս իսկ վաղեմիս, զի այրպէս ասեն կոչէր որպին Փորոնեայ և թոռն ինաքոսի, յորմէ և կարիա աշխարհ մի Փորոնե Ասիոյ:

ԳՈՌԱԿ կամ Գոռակ, Գրակ, որ ըստ Մագիստրոսի « խիզախող ի մարտի » և մեծաձայն գոռս ունէր»:

ՀՐԱՆՏ կամ Հրանդ, որ և Հրատ, կամ Հրատն, և առ վարդանայ ՅՈՒԱՆ գրեալ:

ԸՆԶԱԿ կամ Ընձաք, « ընծայեալ ի բազմաց արքայից », ըստ Մագիստրոսի, գուցէ ի սորա անուանէ կոչուեմ կապուտկող լիբին յարեւմտեան հարաւային եզեր ծովուն Աղթամարայ՝ Ընձաքիսար, որ ոչ ուղիղ լծուի առ Ռուզանդայ գրեալ Ընձաքիսարս, բայց եթէ յարք բառէ ածանցիցի՝ որպէս և այլք նման նմին անուանք:

ԳՂԱԿ, « գեղոս բազումս կերտացեալ », ըստ Մագիստրոսի, բայց զրի առ ոմանս Գլակ, և վրիպակաւ առ ումեմ Գղակ:

ՀՕՐԱՅ կամ Հօրոյ, զոր Յովհ. Կաթ. և վարդան գրեն Հաւան:

Յայսմ ժամանակի 11 ազգապետացս գէպք ինչ նշանաւորք առանձինն ի Հայո ոչ ուրեք յիշին. այլ հանդերձ սահմանակցօքն աշխարհօք՝ ի սկզբան գարուն, գուցէ և յաւուրս իսկ Ամբակայ հանդիպի գործ մի մեծանշան ի վէպս հին ազանց, արշաւանք Լիբէացի աշխարհակալին, թագաւորին Եգիպտացոց մեծին Սեսոստրի, որպէս յաճախ սովորութեամբ կոչի, այլ ի բնիկ լեզուին Հասմեա Բ Մէյամուռ յորջորջի. որոյ գործք և պատերազմունք և արշաւանք ընդ մեծ մասն Ասիոյ մինչեւ ի սահմանս Եւրոպիոյ՝ յարձանաց իսկ նորա վկայեալ՝ ոչ օտարք ի ճշմարտութենէ ճանաչին և այժմու քննողաց բանասիրաց. զորոյ թողեալ մեր զառաջին գնացսն և զվարս, յիշեսցուք որ ինչ ի ճաշ մերոյ պատմութեանս. զի կամ առ ի սպառ սպուռ հալածել զմեացորդս Հիքսիոսն անուանելոց Հովուաց բնաւորաց Եգիպտոսի գամս աւելի քան 400, և առ ի խնդրել վրէժ մինչ ի հայրենիս անդ նոցին, որ թուին Սկիթիա, և կամ արբեցեալ յաղթութեամբքն յԵթովպիա և ջեռեալ աշխարհակալութեան ըղձիւք, գիտելով իսկ և զթուլութիւն Ասորեստանեայցն ինքնակալաց՝ ահեղ գումարտակօք 70 բիւրու զօրաց, աւելի կամ պակաս, յառաջեաց նա ընդ արեւելս յԱսիա, նուաճեաց կամ ի հարկի կայոյց զնոյն ինքն զՆինուէի և զԲաբելայ զտիեզերահրաման իշխողն, և զօժանդակօ նորա զՄարս և զՀայս, որոց անուանք իրրեւ նուաճելոց ազգաց զրոշմեալ կային ի մեհեանս Եգիպտոսի:

առաջուցն. ուրանոր ի թերէ՛ Գերմանիկոս յՕգոստեան գարու եա ընթեռնուլ քրմաց, և ընդ այլսն յիշէին և Հայք և Կապպադովկացիք և ամենայն Ասիա մինչև ի Բիթանիա և ի Լիւկիա, հանդերձ սակիւ հարկացն զոր արկ ի վերայ նոցին: Հնախոյզ ոմն պատմիչ (Պիանքինի. Լ.) ճգնի ցուցանել թէ յարշաւանս աշխարհակալին՝ Ասորեստանեայց ինքնակալն փութացաւ ապաւինիլ յօգնութիւն Հայոց, իբրև արանց մարտկաց և ամրագոյն երկրի բնակչաց. սակայն ոչ յաջողեաց նմա. այլ ասի յամանց (Պլին. ԼԳ. ԺԵ) ի Կովկաս և Սեսոսարի անյաջող եղեն վէնք և պարտեալ լինէլ ի թագաւորէն Կոզրեաց ի Սալուկայ կամ յԵզուբոզայ: Այլ որպէս զիարդ ինչ և ելք արշաւանին եղեն՝ այս յայտ է զի ոչ ընդերկար ինչ եղև Եգիպտացուց նախաձեռնութիւնն յԱսիա. այլ վաղվաղ հաստատեցաւ միապետութիւն Ասորեստանեայց:

Այլազգ իմն շահատակութիւնս սահգծարանն Յոյնք (Պլուտ. ի Կիմոն) զԻբեանց դիւցազանց յայս միջոց ժամանակի. յորոց հնագոյն ոմն Պիրսէոս՝ Արամոզդայ և Դանայեայ ծնունդ, գտտի թագաւորին Արգիացուց, ի վերայ այլոց նահատակութեանցն և Եթովպական մրցանացն՝ ասնն կռուեալ եւս ընդ Մարաց և ընդ Հայոց. այլ որպէսն մեզ չէ յայս և ոչ յուսալի յընդունելութիւն հաւատոց: Իսկ ժամանակ իրացս պատշաճի ի կէս ԺԴ գարու նախ քան զՔրիստոս:

Բայց ի վերջ կոյս նշանակեալ հատուածի ժամանակիս հանդիպի կատարեալ առաջին ստուգակերպ և մեծագոյն արշաւանք Յունաց յԱսիա կողմանս, Արզոհասարդացն ծովազնացութիւն ընդ Պոնտոս յափունս Կոլքիտեայ և յափշտակութիւն դիւցափառ Ոսկեայ գեղմանն, կամ ոսկեգիսակ խոյին մորթոյ, և կամ, որպէս հաւանելի է բանասիրաց և քննչաց, բովուցն սկիւոյ, որ ի վաղնջուց գարուց ծանուցեալք և պեղէին ի բնակչաց կամ հին յեկաց կողմանց խաղտեաց և Կոլքեաց կամ Եգերաց. թէպէտ և առասպելազարդք են վէպք և դէպք իրացն, այլ ոչ անհիմն ի ստուգութենէ իրիք, բոս արդեացս քննութեան, որք և ըստ արձանաց Պարոսի և այլոց յիշատակութեանց իբրև ի 1226 (այլք, 1263) ամի նախ քան զՔրիստոսի թուականութիւնն համարին զշահատակութիւնն զայն դիւցազանցն Յունաց. որք ոչ միայն ի Կոլքիտ՝ յաշխարհն զրացի, այլ և ի նայն իսկ ի Հայս յառաջեալ մասն՝ ի քնին կամ ի վտասակ բովուց Սպարոյ. և ոչ այսչափ միայն՝ այլ եթէ արժան իցէ հաւատալ Երատոսթենեայ ըստ Ստրաբոնի՝ (Ստր. Ա, Գ. ԺԱ. Գ.) գաղթականս եւս հաստատեաց անդ Յասոն աստճնորդ դնդին, այլ և յԵկեղեաց գաւառ, զորս Սիւպիւրիս

և Ակիլիսիոսի կոչէ, և յայտ է զի յայն ժամանակս ընդարձակագոյնք էին՝ իբրև զմի ի նահանգաց կամ յաշխարհացն Հայոց: Մարթ է յոմանց Յունաց բնակեալ անդստին յայնց ժամանակաց յեզերս կամ սակաւ մի և ի ներքս աշխարհիս Հայոց՝ ի շահաստան քաղաքս և ի խանութս բովուց . այլ ամենեւին իսկ անհաւան է՝ զոր յաւելուն ասել (Սար. ԺԱ. Գ. 8. ԺԱ. ԺԳ. 12.) եթէ մի յընկերաց Յասողի Արմենոս անուն յԱրմենոն քաղաք Թեսսալիոյ որ ընդ մէջ Փերայ և Լարիսայ, յիւր անուն կոչեաց զաշխարհս մեր, ըստ պատմելոյ Կիւրսիլայ Փարսալացոյ և Մեդիոսի Լարիսացոյ, ուղեկցաց Աղեքսանդրի Մեծի: Գարձեալ ատեն ի նոցանէ կոչեցեալ Երասիս զհայկականս մեր գետ բնիկ, վասն նմանութեան ընդ Պետիոսի՝ որ կոչէր Արաքս վասն հերձակաուր ատենելոյ (ἀπαράξαι) զՈվսա և յՈլիմպոսէ և հունն ի հովիտն Տեմպեայ գործելոյ. և զի և Երասիս գետ Հայաստանեայց իջեալ ատեն ի լերանց սփռէր ծառալէր ծովաքառտակ ի գաշտս՝ ոչ ուստեք ունելով ելս, Յասողի երաց նմա հուն անցի գնալոյ Թափելոյ ի ծոփն Կազրից, և այսպէս Թափեաց զԵրասիայ հովիտն ի ջուրց անտի՝ որք ընդ խոխոմս քարանց վազեալ անցաննն գնան յարեւելս կոյս: Այլ և ոմանց յԵնիան քաղաք Թեսսալիոյ ատեն բնակել յՈւտէացոց աշխարհի, և ոմանց առ ստորոտսյ Աբոս և Նիւար լերանց հարաւային կամ միջին Հայոց . դարձեալ և Թրակացոց ոմանց՝ անդր քան զՀայս վարեալ, զտեղի կալեալ ի լերինս սահմանաց Գուրանաց (Կորպուաց) և Մարաց, և Սարապարս կոչեցեալ, այսինքն է զԼիսահատս, վասն զի վայրենի և խժագոյն ունելով բարս՝ զանցորդսն ընդ լերինս իւրեանց կալեալ կառափնասէին: Եւ այսպէս յուղեկցաց անդ Յասողի ատեն սփռեալ բնակեալ ի Կորդիս, ի Հայս, ի Վիրս, յԱղուանս մինչև ի սահմանս Մարաց, և ի Կալական՝ զոր ընդ մէջ Հայոց և Աղիտրենի ցուցանէ լինել Սարաբոն, և մերձ ի Նինուէ. և յամենեսին ի սոսա ատեն Յասողի արձանս իմն կամ տաճարս կանգնեալ յիշատակաց, որք ընդ երկար գարս յիւր անուն յստոնականք կոչէին, և ի զկնի եկելոց տեարց աշխարհացն նորոգեալք եղեն բազում անգամ:

Արդ յայս ամենայն զրուցաց երկու ինչ հաւանութեան թուի մեզ, մի յունական եկաց ոմանց վաճառականութեան աղազաւ, յափանց Եգերաց միջակաուր աննելով զաշխարհս մեր մինչև ի Մարս և յՍտորեստան և ի Կազրից ծով գնացեալ. և այս ոչ մի անգամ միայն, այլ սկզբնաւորեալ ի Յասողիէ և անտի հետէ. և օրինակ իմն Գենուացոց ի Միջին գարս յառաջելով յԱսիա և կարաւանատունս կամ ամրոցս ապաւինի կանգնե-

լով, ըստ այնմ լինել և Յասոնեան շինուածոց և արձանաց: Միւս, ոմանց յեկեցն Յունաց հաստատել բնակութիւն ի Հայս, և թերեւս յիրեանց անուն կոչել զՀէնս ինչ և գաեղիս. այլ ոչ զողջոյն իսկ զաշխարհն մեր Արմենիա, և ոչ զգեաս՝ Երասխ. նա մանտուանդ գիպողագոյն համարիմ ի մերոյ աշխարհիս անուանց զթեհադացոց տեղիս և զմարդիկն յորջորջել՝ քան զմերս առ ի նոցանէ: Եւ ըստ այնմ յետ Հրէից՝ առաջին գաղութ ի Հայս լինի Հելլենացդ, ոչ այլով ինչ աղագաւ՝ բայց եթէ շահու օգտի. այլ եթէ արգարեւ ի գիւտ և ի խնդիր ոսկւոյ եկին՝ թուի թէ ոչ անծանօթ էր ի նոցանէ արուեստ բոլուց, կամ թէ ուսեալը ըստ բնիկ սրամտութեան իւրեանց՝ յաջողագոյնք գտան, և ազգաւ բնակեալ առ քրայիւքն՝ խառնեցան բնդ բնիկս տեղւոյն բնդ թաղախ և Հայս, յորոց խառնրոց կազմէր ազգն Հայս-թաղտեաց, Արմենո-թաղիւրք, որոց սերունդք թուին թալարքն բնակեալը բնդ մէջ Տրապիզոնի և Մանախայ Արծաթհանից քաղաքին կիսմիշխանէի. և շինեար վայրացն արգարեւ խառն իմն լսին հայեցի և յունական ձայնիւ: — Անուն հայախառն ազգին ի թաղտեաց արդեօք եթէ յարուեստէն ըստ Յունաց կոչեցաւ թաղիւրք, զի թաղիփս Χάλλυք նշանակէ երկաթ, ոչ գիտեմ ստուգի, զի Ստրաբոն և Պլուտարք թաղախ իսկ կոչեն զթաղիւրս. և առաջինն ասէ թէ թաղտիք ի սկզբան կոչէին թաղիւրք. այլ զի անունդ այդ կարի հին է, վկայ արձանանայ և հնագոյնն արտաքին մատենագրաց և պանծագոյն՝ Հոմերոս, Ալիս կոչելով զնոսին.

« Ռդիսս Հալիզոֆաց եւ Եպիստրոփ էին իշխանք.

» Տ'Ալիբեայ ի հեռուստ՝ ուստի ծընունդք են արծաթայ » . (Երեմ. Բ. 865)

և թէպէտ բազմապատիկ զտողիցս կարծիք են բանասիրաց, այլ յուրովից արդեաց հաւանութիւն է զթաղիւրս (կամ թաղտիս) իմանալ զԱլիբն՝ ուր ծնունդք արծաթոյն, իսկ Հալիզոֆ կամ Ալիզոն կոչել բնակչացն՝ թուեցաւ ոմանց՝ (Վիլ. Ս. Մարդէն. Փ. Ասիա Ա. 181. Բ. 396. 438) զի գաղթականք էին եկեալ յափանց Ալազանի գետոյ վրահայոց, և ոմն (Տիւպուա) զթաղիւրն իսկ անուն համարեցաւ ի կողրայ գաւառէ Հայոց կամ ի Դուգարաց աշխարհէ, որ ոչ կարի հեռի է ի հովտաց Ալազանն գետոյ, և ոչ ի բոլուց: Այսոքիկ թէպէտ հեռիք և թէպէտ մերձաւորք իցեն ստուգութեան, արդարացուցանեն զթաղտեացն և զՀայաթաղտեաց հնութիւն, և զվաստակ նոցա ի բովս արծաթոյ և այլոց մետաղաց, իսկ բանք քերդողաճօրն Հոմերի հրաւիրեն զմեզ առ այլ անսութիւն կարեւորագոյն եւս ի դէպս պատմութեան միւրոյ, ի գերահռչակ հանդէս հակակիւ մրցանաց

գիւցազանցն Հելլենաց և Ասիացուց ի ծագս արեւմտից Փոքր Ասիոյ, առ Տրովական քաղաքան, ուր և մերոյ ազգիս նահապետի եհաս գիմամորտիլ քաջացն Աքայեցուց:

Քանզի զՀօրոյ ազգապետ պայազատէ ԶԱՐՄԱՅՐ ի Հայս. զսա առէ Մ. Խորենացի, ոչ գիտեմ ուսալի ստուգեալ, լինել ի ժամանակի արեւել-րահոչակ պատերազմացն և կործանման Իլիոնի, և յառաջ քան զպարիսպսն տաննամեայ բախեալս՝ տապաստ անկեալ: Եթէ բնաւ իսկ մտայօզ պաճու-ճանք էին Հոմերոսի հագներգութիւնք, տակաւին տարփալի էր և մերազ-նեայցս գաանել ի հրաշահիւս տողան զանուն կամ զհետս ազգին և զազ-պապետին իւրեանց. և այս ըղձիւք ջեռեալ ոմանց և հետախոյզ եղեալ ինչորեն և ճգնին ճանաչել անդ զԶարմայր՝ ոճն ի Փորկիո յառաջնորդ Փոխպացուց, և ոճն յԱսկանիոսն աստուածազան իբրու յԱքքանազեանց վա-րիչ, և այլք ի վերոյիշեալսն յԱլիբեայ եկեալս. մանաւանդ զի Դիկ-տիւս հին պատմիչ կամ կարծեցեալն այնպէս՝ ասէ զՈգիոս և զԵպիո-ստոփ որդիս լինել Մինեայ արքայի Ալիզոնաց (Բ. 15). Թէպէտեւ զՓոխ-պացիս իմանայ յԱլիզոնս. բայց ոչ գնեն միս, զի Հոմերի ոչ միայն աշ-խարհագրութիւն չանցանէ անդր քան զԹաղաիս ընդ արեւելս (Թէպէտ և յիշէ նա զՄեմնոն), և անձանօթ է նմա Եփրատէս սահմանտհտան ընդ Փոքր Ասիա և ընդ Հայս, այլ և վիպասանեալն առ ի նմանէ գործ իլիա-կան մարտից ոչ ժամանէ ի գալուստ Զարմայրայ յօժրնգակ Պրիտմու. քանզի յիտ մահուան Հեկտորի քաջի և տարաբաղդ սրղւոյ նորս, որով աւարտին երգքն հոմերականք, զրուցեն հին պատմիչք տրովական մար-տիցն՝ զրեալ որդեկորոյս հօրն առ Տեւտամոս ինքնուկալ արքայ Ասորես-տանեայց, գուժելով զմահ մանկանցն և աղերսելով առաքել զօր ի Թիկունս օգնականութեան. և նա առաքէ զՄեմնոն²⁴⁰ զորդի Տիթոնեայ և զԱրշալուսոյ ըստ Հելլենաց առասպելաց, ըլիւրով միով Շօշացի (Պարսիկ) զօրու և բիւ-րով Եթովպացուղք, և 200 մարտիկ կառօք. այլ և նաւատորմաւ որոյ գլուխ կարգեաց զՓալաս գոճն. որոյ եկեալ և նախճիր մեծ գործեալ ի Յայնս, ընդ բազմաց ի գիւցազանց նոցին մենամարտեալ և վիրաւորեալ զնոսին, նաեւ զԱքիլլէս ինքնին ապա և ինքն ի սմանէ հարեալ մեռանի, (Դիկտ. Դ. Գ) կամ ըստ կիփալիոնի՝ «նենդ գործեալ սպանին Թիտալացիք» (Առ Եւսեբ. Բ. 134): Արդ ընդ սմա առէ պատմիչս մեր իբրեւ զօրավար հայկական գնդին եկեալ և զԶարմայր, զոր Թուեցաւ ոմանց՝ առաջնորդ նոցին իսկ առա-ցեւոց Եթովպացուցն լինել, իբրու զի և ի Հայս գոյր երկիր յանուն Քուշայ կամ Եթովպիոյ, որպէս ի ճոռս տեղւոյ Դրախտին յիշեցաք. և ինքն Մեմնոն՝

որոյ արժան էր սպիտակ լինել իբր Արշալուսոյ կամ Հիմերայ (տունջեան) որպէ՛, նա և գեղեցկագոյն քան զամենայն մարդ տսի, Սեաւ կոչի²⁴¹. բայց զի լի են առասպելեօք որ ինչ զՄեմնոնէ աւանդին, մանաւանդ զի բազում ինչ յոյժ վիպեն զմանէ յինքեանս ձգելով և արեւելեայք և Եգիպտացիք և Եթովպացիք և Ասորիք, և ամենայն ուրեք երեւեցուցանեն մեմնէիս, այսինքն մահարձանս Մեմնոնի, մեք շատ գրեցուք կարծել զնա եկեալ յարեւելից կողմանց Ասորեստանեայց՝ և առեալ գունդս գունդս զօրաց յաշխարհաց ընդ որ անցանէր, հասանելով և զբովանդակ Հայաստան, և ի կովկասական բարձանց ըստ Գիկատիւսեայ բանին (Գ. Գ) ի Տրոլս իջուցանելով բանակ մի մեծ, ընդ նմա նիզակակցեալ խաղայ « և մեր » Ջարմայր՝ ի ծառայութեան Ասորեստանեայց գալով (հանգոյն Տրովպացոց) » ընդ Եթովպիացի զօրուն, օգնական Պոթամու. և անդ ի քաջացն Ելլե- » նացոց վիրաւորեալ՝ մեռանի. այլ կամիմ յԱքիլեայ՝ և մի յայլ ու- » մեքէ ի քաջացն ». Գեղեցիկ տենչ, սր արզաւատէ զմեզ ընդ լուսթիւնն Հոմերի զմերոյ տղզէս և զագագայեաէ, զի եթէ ոչ բերդողաւայրն հանուրց՝ գոնեա մերս և քերդող և պատմահայր՝ այսպիսիս կամէր զասաջնորպս իւրոյ տղպին, և այսպիսիս նոցին գիմամարաս։ Եւ զի վիրաւորեայ մեռանի տսէ ի քաջացն Ելլենացոց՝ Թուի Թէ և աւանգութիւն վիպասանական կամ օրինակ ինչ մահուն Ջարմայրի պատմեալ կամ երգեալ էր ի նախնեաց անտի, յորոց ստուգեաց խորհնացի զերթ և զմահ նորին ի Տրոլս. և առ ի չգոյժ յոյժմուս յիշատակարանաց հնոց՝ բանասիրաց մերոց իղձք եղեն ստեղծարանել զբուսազս ի համար նախնայն իւրեանց. բայց ես ոչ կամէի համարձակել ումեք և ի պատմական ստուգութիւնս շարակարգել զայնտսիկ, որպէս առնեն Ջրպեա, Մարդէն, պէսպէս յօգելով վէպս իրրեւաներկբայ դէպս։

Դէպքս այս առաքման հայկական գնդի ի գրանէ ինքնակալին Ասորեստանեաց ի գործ մարտի՝ աներկբայ եւս կացուցանէ զյիտազայսն. զի որպէս և յայլոց ազգաց նուաճելոց՝ գունդ և ի Հայոց երթայր ամ ըստ ամէ ի գործ ծառայութեան և մարտի ի գունն ինքնակալին, և առաւել ի ժամանակս մարտի. զայսոսիկ Թուի ինձ նշանակել և մարգարէն Եղեկիէլ (ԼԲ. 30) « Անդ ամենայն իշխանք հիսուսոյ և ամենեքեան նոքա զօրաւարք Ասորեստանայն » . զի և ոչ այլոյ ժողովրդեան քան մերումս և կովկասայնոց զիպագաղոյն էր կոչիլ իշխանս հիւսիսոյ։

Յետ Ջարմայրի նահապեաք Հայոց շարակարգին ՇԱԽԱՐԵ Բ. (զսա Ջամչեան յիշէ)։ ՊԵՐՃ Ա. ԱՐՊՈՒՆ (ըստ զանազան գրութեանց Արքն, Ար-

բոյն, Արքայն)։ «Բնականագոյն զօրութեամբ», իմաստակեալ ի Մագիստրոսէ. Պերճ Բ. որ և ասի ժամանակակից գոլ Դաւթի մտրգարէի. յորայ աւուրս յառմանէն Իլիոնի լինին ամբ իրրու 140, աւելի կամ նուազ. և յայսքան ամս չորից միայն ազգապետաց կալ անհաւատարիմ թուի, մանաւանդ զի խորենացի և այլք ըստ նմանէ, յետ Զարմայրի գասնն զՊերճ, և մի լոկ Պերճ, և ասի սա ի Մի. Ալլրիվաննցոյ լինել ի ժամանակս Դաւթի. սակայն և նոյն ինքն ծանուցանէ Բագմակեաց զսա եղեալ, զուցէ թէ և զերկոցուն ժամանակս (զհօր և զԹոռին որպէս է զուշակել) ի մի հաւաքելով։ Որ զիարզ և է՝ վկայութիւն սորա զերկարակեցութենէ և Մագիստրոսի ասելն զսա ի Սանեան կամ Սիւնեան նահանգէ՝ պաճուճուէր և սէզ այր, ցուցանին զի ի նշանաւորաց ոմն էր Պերճ (Բ), և գործ ինչ երեւելի եցոյց յաւուրս ժամանակաց Թագաւորութեան Դաւթի, այլ ոչ ընդդէմ Դաւթի, որպէս կարծեաց ոմն յարաւքնոցն (Ժաքիէ Դազդիացի. ա. յԱսիակ. Օրագիր) զԱղրաազար Թագաւոր Սուբայ ընդ սրում մարտեաւ Դաւթի և յաղթեաց, լինել զնախարարն Մոփաց, և յերկար բանիւք ճգնի ցուցանել Մոփս զասացեալ Սուբ որ և Սիբաղ և այլ այսպիսի նման ձայնիւք կոչի առ մեզ և առ օտարս. սակայն ի հմտից և ի գիտնոց ճանաչի մասն Ասորուց երկրին ոչ հեռի ի Դամասկոսէ, և ըստ ոմանց (Րիզդէր) Գարաղ ի հիւսիսակողմն Ափրիկէի։

Յետ բազմակեացն Պերճի նահապետք Հայոց մինչև ի սկիզբն Թագաւորութեան Մարաց և Հայոց. յ200 և աւելի ամս՝ յիշատակին ԲԱԶՈՒԿ զոր Բզնունեան նահապետ կոչէ Մագիստրոս. ՀՈՅ (զուցէ զուղիմաստ խոյոյ, և հաւաստեալ) արմն հոյակապ փառահոյակ անուան. ՅՈՒՍԱԿ. յետ որոյ ըստ Զամչեան պատմահօր՝ կացեալ է ԱՄՐԱԿ Բ. — ԿԱՅՊԱԿ կամ Կրպակ կամ Կրպակն²⁴². ՍԿԱՅՈՐԴԻ «որ և հսկայ էր տեսեամբ» ըստ Մագիստրոսի. ոմանք ի վրչաց ըստ Մի. Ալլրիվաննցոյ մի անձն համարին զկայակ և Սկայորդի, և թերեւս յետին անունդ նշանակիցէ Յուսկայ որդի լինել զկայակ, և ի գաւազանագիրս ինչ չկայ բնաւ Սկայորդոյ անուն (Դ. 50. չիք և ի վարդան)։ Բայց յայսմ վարկի նուագագոյն եւս հանդիպի թիւ նահապետաց առ երկարութեամբ ժամանակին՝ որ ի Պերճայ ցՊարոյր, կամ ի Դաւթէ ցՍարգանարաղ, որոյ աղագաւ Զամչեան ոչ միայն երկուս ճանաչէ անձինս, այլ և բնդ մէջ երկոցուն կարգէ զերկուս այլս անյիշատակս ի խորենացոյ, այսինքն է զՓԱՌՆԱԻԱԶ Ա. և զՓԱՌՆԱԿ Բ. այլ մարթ է և յետ Պարուրի գասել զսոսա. քանզի և ի Պարուրէ որ առ Սարգանարաղաւ մինչև ի Սենեքերիմ՝ ոչ գտանի յիշատակեալ այլ

Նահապետ կամ թագաւոր ազգիս, և այսմ պատճառք թուին ինձ յարուցմունք ազգաց՝ ընդ որս և մերոյս՝ ընդդէմ Ասորեստանեայցն բռնակալաց, և ստէպ պատերազմունք, և ի կրկին զօրանալ պետացն՝ ջանալ ջնջել զյիշատակս ապստամբեցելոցն, այլ և զանուանս ի գիւնաց արքունեաց, և փոխանակ բնկաց ազգայնոց կողմնակալաց՝ կարգել վերակացուս Ասորեստանեայս կամ օտարս. զորս փոխադարձաբար և նախնիք մեր ոչ ընկալան ի դատակարգ Հայկազանցն նահապետաց, և ի բաց թողին զյիշատակ նոցին և զանուանս: Յայս միտս սիրեմ ասացեալ և Յովհ. Եղթոզդիկոսի մերոյ Պատմչի, վասն տռաջնոյ թագաւորի մերոյ, եթէ « Պա- » ռոյր անուն յազգէ Հայկայ՝ զանագգիսն ի բաց լքեալ հերքեալ, և զնա- » հապետութիւն ազգին իւրոյ վերոտին նորոգեալ՝ պայազատէր»: Եւ թէ որպէս այս՝ անսցուք այժմ աւատիկ:

Ժ Ե

ՔԱՅՔԱՅՈՒՄՆ ԻՆՔՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՈՐԽԱՆԵԱՅՑ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ

Ի Նինուսայ և այս րնգ դարս 10 կամ 12 լոնն ի սպառ ի հին պատմութիւնս յիշատակք մեծի տէրութեանն Ասորեստանեայց, ընդ նմին գողջիր և ամենայն արեւելիայց, մի միայն թողլով՝ ըստ Յունացն վիպագրաց յիշատակ անհամրոյր՝ զթուլութեան և զմեղկութեան վարուց, յորս զեգերեալ զանց առնէին զօգտակարօքն և զարիականիւք: Սակայն նոյն ինքն յերկար և միահեծան տեւողութիւն պետութեանն և նուաճումն զրեաթէ բուրումն արեւմտեայ Ասիոյ, ոչ արդարացուցանեն զայդ, այլ թէ պէտ և ի պերճութիւն և ի զեղիւթիւն հարեալ էին ինքնակալքն՝ այլ հարկ է թէ կամ ոչ ամենեքին և կամ ի ձեռն զօրավարաց ոչ սակաւ ջանահնար եղեն զինու զօրութեամբ ի հնազանդութեան պահել զհիւսիսայինսն և զարեւմտեայ ժողովուրդս՝ զժրագոյնսն քան զհարաւայինս. և զի գործք նոցին ոչ գտանին առ պատմիչս՝ այս ոչ ցուցանէ ամենեին ի դատարկութիւն հատեալ զնոսին. նա մանաւանդ մնացուածք բազմաքանդակ տաճարաց նոցին և սպարանից՝ զորս հետաքննութիւն դարուս ի լոյս հանէ ի հազարամեայ հողաթաւալ փլատակաց Նինուէի և սահմանացն՝ յայտ առնեն ոչ միայն զարուեստից բարգաւաճանս, այլ և զպատերազմական հրահանգաց և յաղթանակաց, քանզի բազում պատկերք վիմագրեալք տեսանին մարտկաց, և պարսելոց ազանց ձաւանք: Եւ եթէ ընկալցի ոք հաւատ տին զընթերցուածս բեւեռքանդակ արձանագրութեանց՝ լուիցէ ոչ սակաւ շահատակութիւնս թաղաւորաց, որոց անուանք ոչ գտանին ի կանոնս ժամանակագիր պատմաբանից Յունաց և համառօտողացն առ ի նոցունց նախնի հարց եկեղեցւոյ. և առաւել ի չորեսին դարս ժամանակի որ յառաջ քան զհոչակեալ բաժանումն միահեծան տէրութեանն՝ գտանեն հնախոյզ բեւեռարձանաց՝ զէպօ նշանաւոր զործոց մարտից. յորս բազում անգամ յիշին, ըստ նոցա, և սպստամբութիւնք նահապետաց Հայոց և վերտաին նուաճումն յինքնակալացն. այլ զի սակաւին բազում քննութեանց և

ստուգութեան կարօտին այսօրեկ, թողումք ապագայիցն ճշդել և կշռել և զարժանին հասնութեան ընդունել. բայց զմի միայն յիշեցից գէպ՝ որ եթէ ոչ մեծ ինչ ի գիտութիւն մերոյ ազգիս պատմութեան, սակայն ոչ սակաւ վարկ ընծայէ ընթերցուածոց բեւեռքանդակացն. քանզի բազում ամօք յառաջ ընթերցեալ էր ոմանց ի նոսին եթէ (Սալմանասար Դ.) ոմն թագաւոր ասէր կանգնեալ զպատկեր իւր առ պատկերօք հօր և հաւուն իւրոյ յայրի ուրեմն առ աղբերօք գետոյն Մոփաց կամ Սոսրանայ. և ահա յամին 1864 տնգդիացի հիւպատան Ամգայ (Դէյլըր) որ չէր ինչ տեղեակ այսպիսի իրաց և ընթերցուածոց, ի հետաքնին շրջագայութեան իւրում եգիտ ի հիւսիսակողմ Ամգայ ի քարայրի ուրեմն առ ակամբք գետոյն որ ցարպ Սոսրանէ կոչի և օժանդակէ զՏիգրիս, մանաւանդ թէ նորին իոկ աղբերացուցիչ գետ է, պատկերո երկուս ասորեստանեայ թագաւորաց հանդերձ բեւեռքանդակ, որ հաւատարմացոյց զառաջին և զբացտկայ ընթերցուածն: Առաջին կանգնող պատկերին, ըստ Օրբերդի, Թագաւորապար Ա է, 1130 ամօք յառաջ քան զթուական Փրկչին. իսկ արձանագրողն համարի Սալմանասար Դ իբր 800 ամաւ նախ քան զՔրիստոս որ նուաճեաց զՀայս: Անուանք թագաւորաց Սոսրեստանեայ զոր ընթեռնուն հնախոյզք՝ ծանօթ են ի Ս. Գիրս, որպէս և գործք պատերազմաց նոցին, սակայն ժամանակաւ յետնագոյնք են. իոկ յիշեալքդ աստանօր նոյն անուանք նոցին, եթէ ստոյգ և եթէ ոչ՝ բազում զարուք երիցագոյն ասին: Առաջին ամենայն թագաւորաց յիշեցելոց ի Ս. Գիրս Փուա կամ Փուլ է, զոր ոմանք նոյն համարին ընդ Թագաւորապարայ. արդ նախորդ և երիցագոյն քան զսա է Սարգանարան անուանի թուլութեամբ և արկածիւք, որ և Թոնոս կոնկոյնոս թուի իմն ծերանօք կամ առ նշաւակէ ինչ կոչեցեալ. առ որո՞վ բարձուան առաջնոյ հարստութեան Ասորեստանեայ: Սակայն և ոչ ի ժամանակ կարեւոր պիպացս միաբանին ժամանակագիրք. մինչդեռ հնագոյնք ի վերջ կոյս Թ զարու նախ քան զՔրիստոս գնեն զգա կամ ի սկիզբն ըին, այժմուս ի վայր եւս իջուցանեն, և ըստ այլ և այլ համարոյ նոցին առումն Նինուէի, բաժանումն միապետութեան և մերոյ ազգիս սկիզբն թագաւորութեան ընի մի յայտոցիկ ամաց նախ քան զՔրիստոս 797. 788. 771. 769. 759. 749. կալցուք մեք զառաջինն զ797 ըստ հին ժամանակագրաց և ըստ մերոյս Թ. Արժրուոյ և ըստ ոչ սակաւուց յարգեացս ընդ որս և Օրբերդ:

Արդ ի սկիզբն ը զարու նախ քան զՔրիստոս, յետ Ակրագանի թագաւորէր Ասորեստանեայ կոչեցեալք Թոն կոնկոյնս կամ Սարգանարալ,

մեղկագոյն և կնամարդի գոլով քան զամենայն թագաւորս, ըստ վիպագրացն բանի, կամ զի և էր իոկ այնպէս, և կամ զի նա ելոյժ զլրէժ նախ այլոցն, և ի գլուխ նորա կուտեցան ամենայն բարուրք բասրանաց. նստէր ասնն յապարանս իւր ընդ հոմանիս և ընդ հարճս անհոգացեալ յայլմէ ամենայնէ և միայն ցանկութեան և խրախճտնաց պարապելով, ի զօրավարս հաւատարիմս վստահացեալ զպահ պետութեանն. յորմէ թէպէտ և բազումք յիշխանաց ազգացն նուանելոց զկծէին, այլ չգտաւ ոք համարձակագոյն և խորագիտագոյն քան զնախարարն կամ զվերակացուն Մարաց Արրակ կամ վարրակ ըստ մերոյս պատմչաց. յորոց երիցագոյն խորենացի այնպէս ասէ. «Վարբակէս գաւառաւ Մեղացի, ի փոքրուէ կողմանց ծագաց գաւառի՞ն » ամրագունի... »:

Էին էին և այլոց մտրղից վերակացուք համախոհք ապստամբութեանն, որպէս Բեյնսիս, որ և միանգամայն քրմապետ էր Բարեկացոց աշխարհին, սակայն զլիաւորք գործոյն, որպէս մերս ցուցանէ վիպագիր և այլք, ասաջնորդք արիական ասհմիցն էին և լեառնորդեայք, Մարք և Հայք, նոցա վարբակէս զլուխ և վարիչ՝ մերոյս «Քաջն մեր և աշողակն Պտրոյր», ըստ կաթողիկոսի կոչման, Հայկազն և ի զարմէ նահապետաց, որդի Յուսակայ կամ Սկալորդույ, և զկծեալ յասորեստանիկ կողմնակալին բռնութենէ: Ի սոսա, ի Մարս և ի Հայս յարեցան և մերձակայ ժողովուրդք մինչև գումարել նոցա միահամուռ բանակ 400,000ոց արանց: Բայց ոչ բազմութիւն ինչ նոցա և ոչ յանդգնութիւնն կարաց վաղվաղակի յաջողել ի գլուխ ասանել զիրսն. կամ զի ընտելացեալք ընդ երկար ծառայութեամբ և ի դաւաճանաց մատնութեամբ՝ չէին անխէթք և անկասկածք, և կամ զի ոչ որպէս ասենն՝ ապիկար և անզօր ոք էր ինքնակալն Ասորեստանի, գուցէ բազմաձեռն քան զապստամբսն կարաց գումարել զիրեւ ամբոխս մարտեաց. որովք երկիցս և երիցս յաղթական իսկ գաւա և հալածեաց զնոսա. սակայն և համբուն ցրուել և վատնել ոչ կարաց. քանզի զողի ի բոլին եղեալ համախոհիցն՝ ձայն ետուն և հեռաւորաց ազանց և զօր ի թիկունս հասուցեալ յարեւելեան մարդից՝ խաղացին միւսանգամ, պատեցին բախեցին հարին զինքնակալն, և արկին ի մայր քաղաքաց տէրութեան իւրոյ ի մեծն Նինուէ. որ զի ոչ միայն ճոխութեամբ այլ և ամրութեամբ հզօր էր, զամս երկուս տեւեաց ժուժաց պաշարման. զի և չէր իսկ յայն ժամանակս զարգացեալ արուեստ քաղաքամարտութեան. մինչև հնարս գտեալ պաշարողացն, որպէս և յայլ զէպս ի հնումն, ի բաց գարձուցին ի քաղաքէ անախ զընթացս Տրպրիս գետոյ, և ընդ հուն նորին խուժեցին ի ներքս. ոչ զամաց միայն

այլ և զերկար դարուց վրէժս ստրկութեան լուծանել ի տիեզերակալ գոռողէն Ասիոյ. այլ նա վաղ իսկ իւրովի ճեպեցուցեալ էր զգատակնիք իւր, աշխարհահաշակ կոտորածին. հրաման տալով ի մի վայր կուտել յապարանսն զցանկալի և զմեծագին գանձս պետութեան, զանշունչ և զշնչաւոր օժանդակս զեղխութեանց շուայտութեանցն, զհարձս և զկանայս անգամ, և իբրև ի սպանդ և ի խարոյկ համաշխարհական պատրաստեալ փակեալ զնոսս անճողոպրելի, ապա և զինքն խառնեալ ի նոսին՝ տայր հուր արկանել, և նոյին միանգամայն ճարակել զմեծութիւն և զկեանս իւր, մոխիր ցուրտ թողով յաղթականացն յամենայն փառաց և արհաւրաց մեծի միահեծան տէրութեան աշխարհի. էւ եթէ արժան իցէ հաւատալ՝ անդրազոյն ինչ եւս քան զխարոյկն և զմահ զմտաւ ածեալ թողուլ յիւր յիշատակ, ինքնին տապանագիր յօրինելով, արժանի անբանական վարուցն զոր նմա ընծային, ասել իմե ցանցորդ և տեսող գերեզմանին, թէ « Ուսիր յինէն » ուտել ըմպել և խրախանալ, զի այլն ամենայն ընդունայն է ». որպէս թէ շիցէ ինչ այնպէս շուայտութիւն և զեղխութիւն. էւ թէպէտ այլք այլ ինչ ազգասն զառապանագիրդ, կամ թէ երկուս Սարգանարալս, և մէն միում պատշաճել զգրուածսն, սակայն այսոքիկ արտաքոյ մերոյս կացցեն խնդրոյ:

Համախոհիցն նիզակակցաց յայս գործ ոչ այնքան ուշ եղեալ էր ի բարձունք տիեզերասաստ պետութեան Ասորեստանեայց, որքան ի վրէժբանաւորացն և յազատութիւն իւրաքանչիւր ազգի և աշխարհի. վասն որոյ որպէս և խորհեալ էին արարին՝ զնահապետս իւրաքանչիւր աշխարհաց թագաւորական շքով կարգելով ի գլուխ նոցին. նա և նոցին իսկ Ասորեստանեայց ի նոյն ի նինուէ կարգեցին ոստիկան կամ նախարար, որպէս և այլոց. որք ի հպատակութեան յաղթականին կացեալ զառաջինն, ապա յեա իբր ամաց 28ից յաջողեցան անդրէն զբամբ ածել զմիապետութիւն զոր յինքն կալեալ էր վարբակէս և տարեալ տնկեալ յաշխարհ իւր ի Մարս. ընդ ձեռամբ ունելով որպէս զնինուէին, նոյն և զԲաբելացոցոց նախարարն Բելեսիս, և զմերոյ ազգիս նահապետ Պարոյր, առաջին ի Հայս, որպէս ասի, պսակազարդ ճոխացեալ, առաջին թագաւոր Հայոց եղեալ. և յետ հազարամեայ ժամանակի զորդիս Հայկայ յինքնուրոյն վարչութիւն հանեալ. ազգաւ և սերնդեամբ տիրելով և աւանդելով զաէրութիւնն. Բայց զի մերձաւոր էր մերս սահմանաւ քան զվարբակ աշխարհին Ասորեստանեայց, և մարթ էր դաւոյ և վրիժուց ինչ պատահել յայսմ կողմանէ՝ եթող վարբակ նիզակակցին իւրում գունդ օգնականի յիւրոց զօրաց. և եթէ արժան իցէ զթումայի մերոյ պատմչի բանսն աներկբայ ընդունել, ոչ

միայն զօրս ետ, այլ և «սպիհարկէ ի հարկաբարձութենէ և թագապատիւ» իշխանութեամբ մեծարեալ»: Զայսուիկ խորհրդածելով վիպահօր մերոյ յետ 1200 ամաց յայն ինչ զեռ բարձման մեծի Արշակունի հարստութեանն Հայոց՝ բաղձայր բնիկ Հայկազանցն փարազանց «ինչ այսօրիկ արք ի» մերոց թագաւորաց են սիրելիք և իմոյ արեան առուք և հաւտոտի հաւրազաւք. և սիրելի էր ինչ յայնժամ գալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն զուարճանալ» (Այլ 00. տեսութեամբն խրատնանալ), և յարգեացս ապրիլ վտանգից: «Բայց վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն թէ արդեօք և վիճակ»: Իսկ մեզ որ հեռագոյնք եւս ժամանակաւ գտանիմք յոգողէ բանիցս ի խորենացւոյ քան նա ի Պարուրայ, և յուրվագոյնս գիտեմք վտանգս պատահեալ ազգիս ի 14 դարս որ ընդ նորայն և ի մեր ժամանակս, զի՞նչ արդեօք մնայր ասել բանս, եթէ խորհրդածութեանց և ըղձից և ոչ պատմութեանց էր հանդէս գործոյս: Եւ ցաւէ իսկ յոյժ զի ի կարեւորագոյնս յայսմ միջոցի կերպարանաց ազգիս մերոյ՝ անդէն և անդ մթանայ վերբուտին պատմութիւնս, մանաւանդ թէ զժնդակ քան զառաջինն կեճիւն առնու, եթէ կամիցի ոք հետեւել խորենացւոյ:

Քանզի Պարուրայ յաջորդ անընդմէջ կարգէ զՀրաչեայ, և առ Նաբուքոդոնոսորիւ ասէ զնա լինել, որպէս և այլք ի պատմաց. և զի թագաւորդ Բաբելացոց կեայր ի սկիզբն Զ դարու նախ քան զՔրիստոս, ապա ընդ ժամանակ նորա և Հրաչէի և ընդ ժամանակ Պարուրայ և վարբակայ՝ է միջոց ամաց գէթ իբրեւ 150ից, յորս վարբակայ ընծային յաջորդք եօթն. իսկ զիմրդ Հայկազանցս և ոչ մի ոք: Եւ դարձեալ անճաշագոյն և խոսնակ եւս գտանեմք առ նմին վիպահօր՝ զԱսորգանայ զորուոյ Սենեքերիմայ ժամանակ՝ որ ի միջոցի անդ է Պարուրի և Նաբուքոդոնոսորի՝ պատշաճեցուցանէ Սկայորղոյ, զոր յառաջն հայր Պարուրայ ասաց լինել. և հարկ է կամ գրչաց ինչ սխալանս լինել այդանօր, կամ այլոյ ուրուք Սկայորղոյ լինել ընդունողին զեղբարս Ասորգանայ, կամ թէ և բնաւ ոչ Սկայորղոյ այլանուան ուրուք նահապետի կամ թագաւորի, զոր յետոյ ասեցուք. այլ եթէ այս և եթէ այն՝ հարկ է թէ ընդ մէջ Պարուրի և Հրաչէի ժամանակք բազումք անցին. և առ ի ընդ վայն ասացին սմանք (Եղ. Զմիւռն.) շատակեաց եղեալ զՊարուր, նա և «ամս հարիւր յերկարեալ» կամ այլ աւելի, մինչև ցՍենեքերիմ», որպէս ասէ ոմն. այլ հաւանաւորոյն է թէ յետ նորա կացին այլ թագաւորք Հայկազունք անյիշատակք մնացեալք ի խորենացւոյ, զուցէ և ի Մարիբասայ. և այս ոչ առ անշքու-

Թեան ինչ նոցին, այլ մանուաւնդ և կարի իսկ պայծառանշանն գոլոյ, ձեռներէցք յիշխանութիւն և յաշխարհակալութիւնս. զորոց անուանս առ նախանձու ջնջեցին ի գիւանաց միահեծան բանաւորք Բաբելոնի և Նինուէի, յորոց գիւանաց յետոյ ուրեմն Մարիբաս և Խորենացի առեալ կարգեցին զշարս մերոց ազգապետաց: Բայց զվրիպեալան ի սմանէ կանխաւ ցուցեալ և արձանագրեալ էր ասաջին հեղինակ Հայկական դպրութեանցս՝ Հոռվմէացին ազգաւ Ագաթանգեղ, և ըստ նմանէ այլք, յորոց և Սերէոս յէ գարու, որ հասոյց իսկ մեզ զյիշատակ և զանուանս նոցին թագակապ և հսպակապ արանց հնգեցուն: Բայց և այսոքիկ, զորոց ընդ հուպ կայ մեզ ճառել, երեւին կացեալ յետ Սենեքերիմայ մինչ ի Նաբուպազասար, յէ գարու նախ քան զՔրիստոս. իսկ ի կանխագոյն յՈւթերորդին՝ յորոյ ի օկզբան կամ ի մէջ կոյս թագաւորեացն Պարոյր, յետ սորա թուին կեցեալ յիշատակեալքն ի նորոյ Պատմահօրէս Չամչեանց, Փասեւազ Ա. և Փասեւակ Բ. և յետ սոցա թագաւորն ժամանակակից Սենեքերիմայ և ասպնջական որդոց նորին, զոր տեսաք ի վերոյլ «Սկստորդի քաջ մեր» նախնին» կոչեցեալ ի Խորենացոյ, և այլք յայլ անուն կոչեն. Ասողիկն և Սամուէլ ժամանակագիր առ Պարոյր ասեն եկեալ զնոսա. Վարդան՝ առ կայապակ՝ նոյն համարելով ընդ Սկստորդոյ, բայց ոչ միայն այսքան ի վայր իջուցանէ սա զժամանակս սորա՝ այլ և զնոյն ասէր պատկեալ ի վարբակայ՝ իբր ասաջին թագաւոր Հայոց. և դարձեալ ոչ ի սմանէ միայն ասպնջականեալ ասէ վասն Սենեքերիմեանցն այլ թէ «և պատուեցան եւս» ի Պարուրայ»: Այլ ո՞նք անանուն վարդապետ (Քարդական պատմութիւն Եսայեայ մարգարէի) Արտաշէս թագաւոր կոչէ զընկալուչ նոցին. և միւս ո՞նք ի յետնոց (Եղիա Չմիւռնիացի) վասն նոյն ինքն Պարուրի ասէ «որ է» Արտաշէզ»: Իսկ քան զԱսողիկ երիցագոյն պատմիչ Թովմա Արծրունի՝ որ տեղեկագոյնս պատմէ զԱսորեստանեայց և զհաւուց իւրոյ տոհմին՝ այսինքն է զորդուցն Սենեքերիմայ, ասէ զուս լինել «առ մերոքն Հարամայի» (յայլ օր. Արամ). և մեք զսա հաւանագոյն համարիմք. իսկ զԱրտաշէսդ կամ արդարեւ մակարդական անուն փառանիշ առաջնոյ թագաւորին մերոյ յետոյ ընծայեալ նմա, զի ոչ յառաջ քան զԱրշակունիս յիշի այլուր անունդ այդ, կամ թէ միոյ ի յաջորդաց Պարուրի:

Արդ յետ կործանման առաջնոյ ինքնակալութեան Ասորեստանեայց՝ և բաժանեալ ի չորս պետութիւնս, մինչեւ ի ժամանակս Սենեքերիմայ և Դիովիի գտանեմք միոյ միոյ կացեալ 5 կամ 6 թագաւորս. Բաբելացւոց՝ յետ Բելշոհայ (կամ նոյն ընդ նմին ըստ ոմանց) Նաբոնասար,

որոյ ասի սոււմարական կարգս ինչ հաստատեալ, և անսի թուական մի եւս, սկսեալ ի 26 օրէ փեպրուարի ամսեան 747 ամին նախ քան զՔրիստոս. և ըստ ումնն ի մերոց վարդապետաց (Ստ. Ռոշք. բառագիր) յանուն իւր կոչեալ զառաջին ամիս տարւոյն, յորմէ և մերս Նաւասարդ. բայց մեր հնագոյն եւս զպատճառ անուանս ցուցեալ է. իսկ եթէ նորոգութիւն ինչ կամ ուղղութիւն ըստ Նաբոնասարայ ընկալեալ իցէ և ի սոււմարն Հայկին, զայն չունիմ ասել կամ մերժել: Իսկ Ասորեստանեայց յետ 28 ամաց անիշխանութեան կամ սաորակարգ իշխանութեան՝ կացին հզօր թագաւորք Փուշ, Թազղաթփաղասար և Սալմանասար. որք անդրէն ի բունն առին զգահերիցութիւն և կալան աշխարհակալութեամբ, յառաջեցին ընդ արեւմուտս մինչեւ ի սահմանս Եգիպտոսի, նուաճելով զամենայն միջակացեալ ազգս և թագաւորութիւնս մանունս, ընդ որս և զՀրէիցն՝ զԵփրեմայն կամ զտասն ցեղին. զառաջինն իբր յօգնական և ի թիկունս հասանելով նոցա ընդգէմ թագաւորաց ոմանց Ասորաց, և ապա ընդ հարկաւ և ընդ լծով արկանելով զնոսա. հուսկ յետոյ և գերութեամբ վտարելով յերկրէ բնակութեան նոցին յաշխարհս հեռաւորս: Թազղաթփաղասար նախ իբր զ738 ամաւ նախ քան զՔրիստոս վարեաց ի Սամարիոյ կամ յԵփրեմէ բազմութիւն ամրոխի և բնակեցոյց « յԱսորեստանեայս, և բնակեց » ցոյց զնոսա յԱլաթ և յԱրոյր՝ զգետուլքն Գոյզանայ և զլերամբքն Մա » րաց »³⁴⁵ (Գ. Թագ. ԺԷ. 6), զոր Լատինն ի քաղաքս Մարաց ասէ. և թուի ըստ քննչաց երկիրն ընդ մէջ Մարաց և Հայոց, ի կողմանս Կորդուաց, ի Խալսկեանն անուանեալ զաւառ, սրանօր վարձեալ յետ իբր 20 ամի՝ յաջորդ նորա խաղացոյց Սարկին կամ Սաղմանասար որ և Նեմեսար ըստ գրոց Տուրքիթայ, զհասարակ գերութիւնն Սամարիոյ. և աստի երեւի միւսանգամ մեծազօր տէրութիւն թագաւորացն Ասորեստանեայց ի վերայ շրջակայիցն ազանց, և Հայոց և Մարաց, զի մինչեւ ի սահմանս նոցին վարեալ բնակեցոյց զպաղթականն Հրէից. և ոչ այսչափ միայն, այլ և ի նոցին սահմանաց հանեալ զբնիկսն փոխարնակեցոյց ի Սամարիա, որպէս վկայեն նոյն Ս. Գիրք. « Եւ ած արբայն Ասորեստանեայց ի Բարելոնէ և ի Քուլթայ և յԱ » յայ և յԵմաթայ և ի Սեփարուիմայ, և բնակեցան ի քաղաքս Սամա » րեայ փոխանակ որդոցն Խարայելի » (Գ. Թագ. ԺԷ. 24): Եկեացող այդոցիկ որ ի զանազան աշխարհաց տէրութեան Ասորեստանեայց՝ զլիաւորքն արք Քուլթայ, Թուին իմն ի Խուլթայ³⁴⁴ որ հարաւային սահման էր Հայոց մինչչեւ էր կոչեցեալ յանուն Սանասուն, և թուի սեմական գոլ յայնժամ բնակչացն, որոց երթեալ ընդ այլսն ի Սամարիա՝ տնկեցին անդ զհայրենի

զիս իւրեանց զԱնգեղ, ըստ մերս թարգմանութեան յԵթեմեանսնից, որ ըստ լատինաց և երբայականին Ներգել ըսի և կարծի հասն աքաղաղ կամ Հրատն մալարակ կամ հրոյ պաշտօն:

Յառաջ քան զգերութիւն Հրէից (Գ. Թագ. ԺԶ. 9) Թագդաթփազուար նուաճեալ զԲաբելոնս, զընակիչսն վարեալ էր ի գերութիւն ի Կիւրէն կամ ի Գիր ըստ երբայականին, զոր ոմանք (Մարդինի) ի կողմանս Մարաց համարեցան, այլք (Ռէննէլ) ի Կորճայս կամ Կարդուս, և յուրք (Միւլլէր. Նիպուր 134. 157) այժմ ի կողմանս Կուր գետոյ. ամենեքին ի սահմանո Հայոց Մեծաց, որ անդրագոյն մարզ էր յայնժամ Ասորեստանոյն ի հիւսիսոյ կողմանէ, և մինչև ցՍենեքերիմ անդրէն նուաճեալ տեսանի. և գուցէ յայս սակս յետ Պարուրայ ոչ յիշին յազգային պատմչաց՝ յաջորդք նորին:

Բայց առ Սենեքերիմու միւսանգամ յեղափոխեցան բաղդք ազգացն նուաճելոց կամ մարզից Ասորեստանի. մանաւանդ ի վաթարել բանակի նորա ի Պաղեստին և ի Պելուսիոն, և իրբև փախստական դառնալ՝ լքեալ զպաշարուած Երուսաղեմի (711 նախ քան զՔրիստոս): Եղեկիտո՝ որ յառաջ հարկս հարկանէր նմա, իսպառ թօթափեաց և զլուծն զայն: Բարելսն որ ապստամբեալ և նուաճեալ էր ի նմանէ սակաւ ամօք յառաջ՝ վերաստին ընդվզեաց, ի ձեռն Մարդոկեմպաղայ կամ Մարուղաք-Բարդանայ ըստ Գրոց, (Գ. Թագ.) այն որ առաքեաց խնդակիցս Եղեկիտայ և հազիւ ուրե՞ն հանդարտեաց ընդ ձեռամբ Ասորդանայ՝ իրբև տեղակալ կարգելոյ անգր ի հօրէն իւրմէ: Մարք որ յաւուրց անտի վարրակայ բազում այն էր զի ազատօրէն աղիկամի վարէին, թէ և ոչ միտարնութեամբ ամենայն աշխարհին, քան ծառայարար և ի հարկի, խրատեալք ի փասուէ անմիտարնութեան իւրեանց՝ հաւանութեամբ զլիսաւորացն կացուցին իւրեանց զլուի և առաջնորդ և թագակալ իշխան զկոչեցեալն Գիովկ (որոյ անուն թուի յԱժ Դահակն անուանէ զեղչեալ), որ շինեաց և ամրացոյց գեթնպարսպանն, մանաւանդ թէ գեթնիւրանգն Ահմատան կամ Ելբատան ի հարաւակողմն արեւելից աշխարհին Մեծի Մարաց: Պարսք որք թեր Մարաց և իբրև ի նոսին յարեալ բաղաքավարէին՝ կացուցին և նոքա ի նմին ժամանակի թագաւոր զԱքեմենէս կամ զՀաքամանիշ ոմն. յորմէ սերեցան Կիւրոս մեծն և Դարեհ վշտասպայ: Սենեքերիմ թէպէտ և եկեաց յետ ձախողակ դարձին յԵրուսաղեմէ՝ ժամանակս ինչ³⁴⁵, այլ ոչ կարաց միւսանգամ ի ծառայութեան հարկի կացուցանել զսոսա. նա և ոչ զՀայս, որպէս բանիս կարգ է ասել: Քանզի հայեցեալ ի գրացիս իւրեանց, ընդ որս բազում

մասամբք և կրօնիւք հազորգք էին, նաեւ յօտարս անգր, շիք երկբայել՝ թէ և ինքեանք զամուրս աւարտական լերանց արկին միւսանդամ անջրպես և պատուար զինուց Նինուէի. և յայնժամ երեւի գլուխ ամբառնալ և Հարամայ Հայկազոյ և տիրապետել միւսանդամ հանգոյն Պարուրի. մանաւանդ յես սպանմանն Սենեքերիմայ յորդուց իւրոց և գալստեանն սոցա ի Հայս:

Քանզի որպէս և Ս. Գիրք կրկնութեամբ իսկ յիշեն, Սենեքերիմ զառնացեալ ընդ կորուսա բազմաձեռն բանակին ընդ պարսպօք Երուսաղեմի և ընդ ամբարձումն ազանցն երբեմն հնազանդեցելոց, խտամբակօրէն վարէր ընդ պատանդն, ընդ գերիս և ընդ գաղթականս նոցին վաղ ուրեմն բնակեալս ի բուն յերկրի իւրում յԱսորիստանի, և որպէս Տօլթիթ վկայէ՝ նախճիր բազում գործէր և ի գերութեանն Հրէից, զորոց դիակունս թաղէր բարեպաշտն այն Նեփթաղիմացի, որ էր ընդ գերութեանն եկեալ ի Նինուէ. և պարպէր ի տուր և առ վաճառուց ընդ Մարս. բայց՝ որպէս և ինքնին ասէ (Ա. 18) ի վերջին ամս Սենեքերիմայ « ոչ հղև (նմա հնար) եթալ յերկիրն Մա » բաց ». յայտ է թէ վասն խռովութեանն եղելոյ ի մէջ երկոցուն աշխարհացն և կասկածանաց համախոհութեան: Եւ ոչ առ օտարս միայն, այլ թուի և առ տոհմայինսն և առ ընտանիս վայրենացեալ և գազանացեալ բանաւորին, վասն որոյ յաւուր միում « մինչդեռ երկիր պազանէր Նասրաքայ » կոոց իւրոց՝ Աղրամելէք և Սարասար որդիք նորա սպանին զնա սրով, » և ինքեանք գնացին փախտական ի Հայս ». (Ես. 15. 38. = Բ. Մնաց. 15. 21. = Դ. Թագ. ԺԹ. 37). կամ որպէս Տօլթիթ ասէ « ի » լերինս Հայոց » (Ա. 21): վարդապետ մի անանուն ի Պատմութեան Եսայիայ, ասէ. « Մտին երկու որդիքն ի տաճարն ծածկեալ զսուրն, և կա » ցեալ յաջմէ և յահեկէ. և նա ոչ ունէր կասկած յորդուց իւրոց. և » սպանին զՀայրն և ձգեցին զգլուխն առաջի կոոցն, և ասեն. Դու լեր » զմա զոհ. և ինքեանք փախտական գնացին ի Հայս առ թագաւորն Ար » տաշէս, և նա սիրով ընկալաւ զնսսա »:

Կարի նշանաւոր են այս դէպքք ի հին պատմութեան մերում, ոչ միայն զի և ի Գլուց սրբոց վկայեալ է, այլ զի և խառնուրդ իմն ընծայեցին եկքն այնոքիկ արքայագունք՝ ընդ հայկական սեռիս, և յարուցին երկուս կամ երիս մեծամեծ և նախակարգ նախարարութիւնս յաշխարհի մերում, զորոյ և զբաղաքական վարչութիւն յեղափոխեցին իմն յայնժամ, որպէս սերունդք նոցա յղկնիսն թելադիր և զօրավիգն լինելով յապատամբութիւն և յինքնազլխութիւն. որում վկայեն Յովսեպոս, և Ս. Հերոնիմոս յաւանդութենէ Հրէից, և մերս հին պատմիչ ²⁴⁶:

Վասն որոյ և արժան է ոչ առանց ըննութեան անցանել զնոքոք: Եւ նախ յիշեցուք զանուանսն. յորոց առաջինն Աղրամելեք որ յապաւամամբ գրի և Աղրամել (առ Խորենացոյ), նշանակէ ի սեմական լեզու տոհմին Թագաւորափառ կամ աստուածափառ, քանզի ըստ բնիկ ձայնին լսի Ասսար մելիք, և Ասսարդ աստուածական անուն էր առ Ասորեստանեայս. առ Աբիւ գենեայ կոչի Աղրամուզան, ծեքեալ ի Յունաց կամ ի Հայոց²⁴⁷: Եղբայր նորա Սարաթար, առ մեզ Սանասար կոչի, իբրև ի լծորդատառութենէ, քանզի և յայլ անուանս տեսանեմք զփոխադրութիւն Ն և Բ նայ տառից. ըստ բնիկ հնչման Թուի և Սարէսէր կոչեցեալն. այլ Աբիւգենոս աւելադրէ զոյգ նմին և զՆերգել անուն Ներգելա-Սարասար կոչելով, կամ ըսկ Ներգել, որ նշանակէր առ Ասորեստանեայս զգիտ հրատի կամ զհաւն առաւօտին: Ըստ Աբիւգենեայ պատմութեան հրեի իմն ոչ անդէն իսկզոյն յետ սպանման հօրն իւրեանց փախուցեալ եկեալ նոցա ի Հայս, այլ նախ փորձեալ և ի բունն առեալ զԹագաւորութիւն, և ընդ միմեանս իսկ մարտուցեալ. նա և Սանասարայ Թագաւորեալ՝ զոր Ներգելոս կոչէ, և սպանեալ յԱղրամելեքայ, որպէս Թուի ի Հայս, ուր տպաւիճեալն էր յամուրս Սիմ լերանց, ի Տաւրոսական պարուն, ի Թիկանց Տարօնոյ, ուր և պաշտպան կայր նմա ազգապետն Հայոց. բայց որդիք և արբանեակք նորա մնացին անդէն և սերեալ յազգ՝ կոչեցան Սանասուրք, որ յետոյ և մինչեւ ցայժմ համառօտիւ Սասունք կոչին, որպէս թէ Սանասարունի կամ Սարասարունիք: Սորք թէպէտ և ընդ հնագոյնս ի հայկական տոհմից խառնեալ և թուեալ՝ այլ ոչ յաճախ յառաջագէմք յաւազութիւնս, վասն համանման իմն անհարթ տեղոյ բնակութեանն իւրեանց և աղխասորոյր բարուցն, թէպէտեւ գորք ելով ի կողուի, և հանապազակիրք զինուց, այլ և հանճարեղք ի գործ պատերազմական արուեստից: Համառօտ աշխարհագիրք մեր և յիշատակողք զիսպոս, ասեն վասն սորա « Սանասար շինեաց զՍասուն ». իսկ պատմահայր մեր ասէ. զսա « յարեւմտից հարաւոյ աշխարհիս մերձ » ի սահմանս նորին Ասորեստանի բնակեցուցանէ Սկայորդի (Հարամա) » քաջ մեր նախնին... և ի նմանէ աճումն և բազմամարդութիւն լեալ, » լցին զՍիմն ասացեալ լեանն. իսկ որ պերճագոյնք ի նոցանէ և զլիսա » լորագոյնք՝ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ Թագաւորսն մեր » ցուցեալ՝ զրդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան աճուել ». յայտ է թէ զԱղձնեացն աշխարհի՛ որոյ գաւառ է Սասունք: « իսկ Արդամուզանն » յարեւելից հարաւոյ կողմանն բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն » (Մարիբաս) լինել զԱրծրունիս և զԳնունիս »²⁴⁸:

Բայց և ոչ Ալլարամելեք որ սպան զՍարասար՝ անպատուհաս մնաց. քանզի և Ասորդան ոչ համամայր եղբայր նորա (Աքսերդիս ըստ Աբի-զենեայ) հետամուտ եղև Վարձկան զօրականաց ամբոխիւ հայրասպանին և եղբայրասպանի, և որպէս թուի, ոչ փոքր գործ մարաի և ընդդիմութեան եգիտ ի Հայս. բայց յաղթող գտեալ՝ զհետ պնդեցաւ փախըստականին, եթէ արժան իցէ հաւատալ Աբիւզենեայ, և անոր քան զսահման աշխարհիս մերոյ հանեալ՝ սպան զնա ի քաղաքի ուրեմն որ Բիւզանդիոն գրի (առ Եւսեբեայ), և յոմանց (Նիխուր 180) Տրապիզոնդ կարծի: Աւանդէ Վարդապետ յիշատակող սուսերահար սպանման Սենեքերիմայ՝ զԱլլարամելէք գնացեալ յԱղուանս³⁴⁹, գուցէ արդեօք ի կրկնուամ փախըստեանն. բայց առանց հակառակութեան է Խորենացոյ վիպայութիւնն, զոր ստէպ և յերկար հաստատէ բնիկ տոհմին պատմիչ՝ Թովմաս Արծրունի: Յատուկ առն և տեղի բնակութեան նահապետիւ Արծրունեաց՝ եղև ի հարաւային արեւմտեան ծայր ծովուն Աղթամարայ, ի հովտի Թուխ գետոյ, որ և կոչեցաւ բնիկ գաւառ Աղձնեաց և յետոյ Հոյց կամ Խոյց. և երկորին անուանքդ՝ գաւառին և աշխարհին՝ որպէս և որ ցարդ համաձայնք լսին Խարզան և Խզու՝ վիպին օտար ի հայկականէս և Սեմական շեղուի կոչումն: Զպայազատութիւն սոհմի Ալլարամելեքայ, Արծրունեացն կոչեցելոց ի Հայս՝ մանրախուզիւ քննեալ Թումայի՝ շարակարգէ ի պատմութեանն, բայց զի յօրինակս գրոցն որ առ մեզ հասին պակասն բանք ի յիշատակէ աստի մինչև ի Տիգրանայ ժամանակս, զանխուլ մնան և գործք երկոցուն եղբարցն և զաւակաց նոցին, և բնակութեանն և շինութեան որ յԱղձնիս և որ անդրագոյն ի Գնունիս յարեւելից ծովուն Աղթամարայ, զսահմանօր Ամիոյ:

Հարամայ յաջորդեաց որդի նորա, որ թուի նոյն ինքն ԱՐՏԱՇԷՍ նախայիշեցեալ և վանատուր որդւոցն Սենեքերիմայ, վասն այնորիկ և թշնամութեամբ ընդ Ասորդանայ կեցեալ, և յաղթահարեալ ի սմանէ, թէ և ոչ իսպառ նուաճեալ և կապեալ յիշխանութենէ. զոր յաջորդ իւր և որպէս թուի որդի՝ ԶԱԵՆ, իսպառ զերծոյց ի բռնակալութենէ Ասորեստանոյն, և ի վերջ կոյս թագաւորութեան Ասորդանայ՝ ինքնազլուի թագաւորեաց Հայոց, իբրև 670 ամօք յառաջ քան զթուական Փրկչին: Եւ էր նա, ըստ հաւանութեան, թոնն Հարամայ³⁵⁰, կամ ի զարմէ նախնոյն մերոյ Արմենակայ, վիպեալ ի մնացորդաց պատմչն «այր զօրաւոր և կորովի աղեղամբ». որպիսիք ոմանք եղեն և յաջորդք իւր չորեքին, թուի թէ և ազգաւ սերեալք մի ըստ միովչէ, և զամս իբր 70 ոչ միայն ինքնօրէն աղիկամի տիրապետեալ Հայկազանցս, այլ և

նուսճեալ զշրջակայ ժողովուրդս, ընդդիմացեալ ձեռնբրիցութեան Մարաց և Ասորեսաանեայց, և բոս վիպասանին Մամիկոնեանց

< Այս հնգէքեանքս Իրոխտացեալ
> Ըզպատերազմ ազանց վանեալ > :

Եւ են սոքա յիս Զարեհի Արմոց, Սարհանգ կամ Սարաք, Շառաշ և Փոսեհասագ Բ. որոց և ոչ անուանք գտանին առ Խորենացոյ վասն նախասացեալ պատճառից . այլ ի հնագունէ եւս հետագօտ պատմչէ կամ ի նոյն ինքն յԱգաթանգեղայ, գտեալք և մեծաւ իմն շքով զրոշմեալք և հոչակեալք եղեն, վասն մեծամեծ և քաջանշան գործոց նոցին, որովք գերազանցեալ քան զամենայն նախնիս իւրեանց և զյեախնս ի Հայկազանց, համարեցան ընդ աշխարհակալս անուանիս. զորոց թէպէտ օտարք և նախանձոք ջանացան բնաջինջ առնել զանուն և զյիշատակ, այլ վիպասանք ազգին պահեալ հասուցին ցհազար ամ. մինչեւ յաւուրս մեծին Տրպատայ յարքունի դիւանին գտանել տտենապետի նորին Ագաթանգեղեայ, և հրամանաւ նորին զրոշմել զանուանս և զժամանակս նոցին հելլէն գրով ի վիմեղէն արձանի հանդէպ դրան արքունի տաճարին ապարանից Սանտարկոյ ի Մծբին քաղաքի. որ յետ ժամանակաց ոչ գիտեմ սասանութեամբ եթէ թշնամութեամբ կործանեալ հոլաթաւալ մնայր . իսկ թագաւորին Պարսից լուեալ ի համբաւոյ՝ տայր յուզել հանել զչքնաղ սիննս տաճարին և բերել ի դուն իւր . և անդ ի բրել՝ յայտնեցաւ և արձանն հանդերձ անուամբք քաջաց թագաւորացն Հայկազանց, և Պարթեւաց նոցին յաջորդաց²⁵¹ : Ի դէպ իսկ էր ժամանակն յաջողելոյ Հայկազանցս, քանզի Մարք ապստամբեալք յԱսորեսաանոյն՝ որպէս և առ Սարդանապալլաւ՝ եթէ ոչ զինուք՝ գէթ հաւանութեամբ կամաց ի թիկունս կային. Բարեյացիք և Ելամացիք յար ընդվզել հնարէին, և Ասորդան հագիւ կարէր ի ձեռն հաւատարիմ զօրավարացն նուսճել զնոսա . իսկ որդի նորա և յաջորդ Սամուկ կամ Ասամոզէս որ և Սաւոզոկիմ, վատթարագոյն քան զհայրն գտաւ և ապիկար, թագաւորեալ իբրեւ 21 ամ. առ որով թագաւորէր Հայոց յիս Զարեհի՝ ԱՐՄՊԳ. Բայց զի Խորենացի ի յաջորդս Տիգրանայ կարգէ յայտնուն անրնովմէջ Զարեհ և Արմոց թագաւորս, ոչ այնքան համանունս առաջնոյս կարծելի է, որքան զնոսին իսկ՝ տեղաշարժեալս և անդր մուծեալս . քանզի որպէս սասացաք, ի բուն կարգի սատ և ոչ զմի ի հնգեցուն յիշէ նա . ի հաստատեալ զահուց իւրաքանչիւր ազգաց երբեմն հպատակաց միոյ վեհագունի, ահարկուք իրերաց և խիթալիք այնուհետեւ լի-

նէին. և թուի յայս միջոց ժամանակի հին դաշնակցացն Մարաց և Հայոց բաղինեալ ընդ միմեանս պատերազմաւ, և մերոցս զառաջինն յազթող գտեալ և վանեալ զՄարս: Պատմիչն Վրաց խառն ի խուռն վարելով զժամանակս և զանուանս թագաւորաց, երևի զԴէռովկ կամ զյաջորդ նորա կոչել Քեկապոս (Քէյքաուս), յորմէ վտարանջին Հայք և Վիրք, և նա առաքէ ի վերայ նոցա զորդի իւր Փարաբորոտ (Փրաւորոտ), զոր հարեալ վկանդեալ Հայոց հալածեն յԱտրպատականէ. յետ ամաց, միւսանգամ գայ ի վերայ նոցա (Կի—աքաար) Քէյ—թոսրու, որդի Փարաբորոտի, որ յազթող գտանի, և շինէ յԱտրպապական տուն պաշտաման կրակի. այլ ի հեռանալ նորա Հայք և Վիրք հալածական առնեն անտի զգունդն (Մարա)—Պարսից, և գրաւեն զաշխարհն այն: Այս գէպք թուին յետ կիսայ է գարու նախ քան զՔրիստոս հանդիպեալ. յորում ժամանակի շփոթութիւն իմ տեսանի ի պատմութեան Ասորեստանեայց, և անմիաբանութիւն առ ժամանակագիրս. բազում անուանց թագաւորաց ի մէջ մտեալ ի սուղ ժամանակի, ոմանց այլ և այլ անձինս և ոմանց զմի և զնոյն բազմանուն համարել. այսպէս յետ Սամուկայ Սաւողոկիմայ, ասի թագաւորեալ եղբոր նորա, զոր ոմանք բնաւ անահուս կոչեն. այլք համարին զյաջորդ նորա կամ միանգամայն կոչեն Քինալտան, Ասարղանաբաղ, Նինոս Գ. և Նարուքսոնոսսր Ա. և ոմանք դարձեալ նոյն կամ յետ սորա ասեն կեցեալ զՍարակ առ 648 ամաւ նախ քան զՔրիստոս, զոր շատք հուսկ յետին թագաւոր Նինուէի գրեն. և զթագաւորութիւն Ասորեստանեայց ոմանք համարին գրաւեալ առ 625 ամաւ. այլք յայնմ ամի թագաւորեալ Սարաքայ, և թագաւորութեանն բնաբարձ լեալ յամի 606: Կալցուք ստոյգ զյետին թիւս, որպէս և յետ սակաւու հաստասեսցի ի պատմութենէ. և զյետին թագաւոր նորա եթէ Սարակ և թէ այլ ոք՝ թագաւորեալ զ625 ամաւ, և յառաջ քան զնա զ648 ամաւ. զՔինալտան: Բայց ի միջոցի անդ երկոցուն գտանի և Հայկազանցս թագաւոր համանուն երկրայելի թագաւորի այնմ Ասորեստանի, ՍԱՐԱԿ, կամ Սարկան, զուցէ լաւ եւս Շարակ կոչելի. որ թերեւս նոյն իսկ անձն է, և զինու զօրութեամբ բռնացեալ ի վերայ բռնացելոցն Ասիոյ, ի ժամանակի յորում Մարք և Բարեղացիք առ անին զբաղեալ էին. և աստի թերեւս շփոթութիւն մի ժամանակագրոց և վարանունն վասն Սարաքայ, զոր թէպէտ բազումք ասեն յետին թագաւոր Նինուէի, այլ է որ (Նիպուր) և բնաւ իսկ չյիշէ, և անանուն կարգէ զյետին թագաւորն որ եկաց անարգարար (յաման 625—606): Եւ հարկ է գործ մի մեծ և նշանաւոր ընդունել ի մերոցս աստի հոչակեալ թագա-

ւորաց զի այնպիսոյ արձանագրութեան արժանի լինէին, իբրև հոյակապ և արիագոյնք քան զամենայն Հայկազունս մինչև ի Թաղաւորութիւն Պարթևաց, արք պատերազմողք և վանողք ազանց:

Արդ զպատմեալդ ի վրաց պատմչէն գործս Մարաց ընդ Հայոց և վրաց՝ նոյն համարիմ ընդ յիշեալոն յարտաքնոցն պատերազմ՝ Մարաց ընդ Ասորեստանեայց, և պաշարումն Նինուէի ի Փրաւորտայ (Փարաբորտս վրացւոյն), զոր կամ ի ներքուստ պաշտպանէին և Հայք ընդ իշխանութեամբ Թագաւորին իւրեանց Սարակայ, կամ արտաքուստ դիմեալ անկեալ ի վերայ Մարաց՝ հարին զնոսա հարուածս մեծամեծս, և զԹագաւորն իսկ Փրաւորտ անզէն առ պարսպօքն սպանին, փախստական տարեալ վարեալ զմեացորդս բանակին մինչև ի բուն յաշխարհն Մարաց³³: Եւ լինէր այս յամի 634ի նախ քան զՔրիստոս: Ի վրէժինդրութիւն փութայր Կիւքսար (Քէյ-խոսրու) նորագումար խմբիւք, և մինչ ակն ունէր յաղթութեան կամ յամառեալ պատերազմի, ստիպէր յետս նահանջել ի յանկարծուց ինչ համբաւ ազգի բարբարոսի խուժելոյ յերկիր իւր: Եւ էր այն գերահռչակն ի պատմութեան հնում՝ հրոսակ Սկիւթացուց, որք զտմս իբր 30 ասնն ախրեցին ամենայն Ասիոյ՝ ի դրանց Հոնաց մինչև ի սահմանս Եգիպտոսի, ինքեանք հալածեալք ի համազգեաց Մազզթաց՝ հալածեցին նախ զԿիմիւրեանս բնակեալս ի Հիւսիսոյ Պոնտոս ծովու, և հետամուտ լեալ Թափեցին ի Փոքր Ասիա. անտուստ պատեալք զհարաւային ստորոտովք Կովկաս լեռանց, սփռեցան ի դաշտակողմանս Կուր գետոյ ի սահմանս Աղուանից, յորմէ և այսր զգեառօք անցեալ յՈւտի աշխարհ՝ մասն մի ճամբարին կալու զարձակածաւալ և զարգաւանդահող դաւառն՝ որ ի նոցին իսկ Սկիւթացն անուն յայնմ հետէ և առ յապա կոչեցաւ Շակաչէն, ըստ զկայութեան Սորաբոնի աշխարհագրի, և յայս անուն լսիւր ց'ը դար: Իսկ մեծ մասն ճամբարին յառաջ էանց ընդ արեւմուտս և ի հարաւ, կոխելով զՀայաստան աշխարհ. բայց թուի ոչ ընդ երկար թշնամութեամբ, այլ թերեւ և ի գէպ ժամանակի օժանդակս առեալ զնոսա Հայոց ընդդէմ զայրացեալ զօրուն Կիւքսարայ. որոյ լքեալ զպաշարումն Նինուէի և փութացեալ ընդ առաջ հարստացեալ թշնամեացն, և որպէս կարծի (Նիպուր) պատահեալ նոցա ի տարածութեան Մուղանն անապատին՝ հարաւ խորտակեցաւ ի նոցանէ. այլ խորպիտութեամբ սարջացեալ յանօգուտ կողույ և ի սպառօսպուտ բեկմանէ, խօսեցաւ ի հաշտութիւն, յանձն առեալ ընդ լծով մտանել առպատակացն և հարկս հարկանել խաքանի նոցա զամս 28, և այսպէս հեռացոյց զմասն մի հրոսուն ի սահմանաց իւրոց, և ընդ միւսոյն խաղա-

գլութեամբ վարեալ՝ արծարծէր զզօրս իւր և վառէր ի նոր հրահանգս կրթութեան, և վերստին ի կոխ կաքաւէր, առ փոքր փոքր յառաջեալ անցեալ ընդ հիւսիսի Հայոց՝ և մինեալ ի Փոքր Ախա, մարտ յարդարէր ընդ Ալիաղեայ Լիւդացն արքայի (615–610) որ յայնմ մարզէ աշխարհակալութեամբ հասեալ էր մինչև ի սահմանս Եփրատայ:

Յայն ժամանակս թո՛ւի տիրապետեալ մերազնեայցս ՇԱԽՇ յետ Սարակայ, և ոչ կարացեալ զզէմ ունել Կիւքսարայ, որ ոչ միայն զինուզօրութեամբ մրցէր այլ և հնարիմաց քաղաքագիտութեամբ. որով յետ հնգամեայ և յեղափոխ բաղդիւ մարտիցն ընդ Լիւդացուն՝ միջնորդութեամբ Երևիկեացոց արքային հաստատեալ ընդ նմա դաշն ուխտի հաշտութեան (609) յայնմ կողմանէ, և աստուստ յինքն յանկուցեալ զՆաբուրաւասար կուսակալ Բաբելոնի, և ընդ երկոցուն եւս խնամութեամբ մերձաւորեալ, զԱրիանէ զուսար Ալիաղեայ առեալ ի կնութինն որդւոյ իւրում Աժդահակայ, և զզուսար իւր Ամուհի կամ Զամուհի տուեալ ի կնութինն որդւոյ Բաբելացուն՝ այն է մեծն Նաբուբոդոնոսոր, և հաստ զթիկունսն արարեալ, այնուհետեւ նախ զՍկիւթական հրոսակն երարձ ջնջեաց, էր զոր դաւաճանութեամբ ի խնջոյս խողխողելով և էր զոր կոտորածով ի գաշտի և հալածելով ի սահմանացն. ապա դառնայր ի վերայ գոռ և անհաշտ թշնամեացն Ասորեստանեայց և Հայոց, յորոց վրիպեալ էր առ պարսպօք Նիւնուէի 25իւք ամօք յառաջ: Եւ համախմբեալ զզօրս իւրեանց երեցունց ազանց դաշնակցաց՝ Մարաց, Բարեւացւոց և Լիւդացւոց, հանդերձ այլովք ի նոսին յարեցելովք, վերադառնային գային ի պաշարումն մեծի տիեզերական քաղաքին, ուր ամփոփեալ էր յայնժամ երկրորդն Սարգանարազ, Սարակն այն կամ անանուն յետին արքայն երբեմն մեծի միահեծան ինքնակալութեան Ասիոյ. իսկ Հայոց յետ Շաւաշայ տիրէր յայնժամ ՓԱՆՆԱԻԱՋ որ և Նափու–Փուսնագ կոչեցեալ, կամ շփոթելով կամ խնամութեամբ ինչ ընդ սեմականացն:

Յերրորդում ամի պաշարմանն առաւ Նինուէ (606 նախ քան զՔրիստոս). յետին յաջորդն Նինուսի և Շամիրամայ՝ անանունն մանաւանդ թէ վաստանունն այն՝ Ասուրէտտիլիի կամ Սարաք, զօրէն առաջնոյն Սարգանարալլայ, ասեն, հրկէզ արար գանձն համօրէն տամբն. յաճինն նորա շիջաւ 1400ամեայ ինքնակալութիւն Ասորեստանեայց. և ի գլուխ ելին սպառնալիք մարդարէիցն, յորոց ասէր ոմն (Սոփոն. Բ. 13) ի բերանոյ Տեառն. « Զգեցից » զձեռն իմ ի վերայ հիւսիսոյ, և սատակեցից զԱսորեստանեայն, և եղից » զՆինուէ յապականութիւն, անջրդի իբրև զանապատ. և արածեցիցին ի

» միջի նորա հօտք և ամենայն գազանք երկրի, և գեանառիծք և ողնիք
 » ի յարկս նորա բնակեցեցն, և գազանք գոչեցեցն ի նկուղս նորա, և
 » սակուռք ի դրունս նորա, քանզի իբրև զմայր է բարձրութիւն նորա :
 » Այս քաղաքք վրիժագործ բնակեալ յուսով, որ ասէր ի սրտի իւրում,
 » եօ եմ, և ոչ եւս ոք իցէ յետ իմ. զիմրդ եղև յտպականութիւն ճարակ
 » գազանաց. ամենայն որ անցանիցէ ընդ նա՝ շչեցէ և շարժեցէ զզլուխ
 » իւր». լուաւ զայս յեկրատանս Մարաց և Տուբիա ծերացեալ ուր զա-
 » գարէրն ըստ խրատու հօրն, թէ «Հաւատամ ես, որպէս և խօսեցաւ Յու-
 » նան մարգարէ վասն Նինուէի՝ եթէ կործանեցի»... «և ուրախ եղև
 » Տուբիա մինչչև մեռեալ էր նորա՝ ի վերայ Նինուէի, փասս ետ գոհա-
 » նալով զԱստուծոյ». զի երարձ զապականիչն ազանց:

Զգեցաւ աստանօր ձեռն Տեանն և ի վերայ Հիւսիսագոյն պետութեան
 Հայկազանց նիզակակցաց Նինուէացւոցն. յետ աման և անշքութեան
 խրոխտացեալ մայրաքաղաքին՝ յաղթականքն դաշնաւորք յարձակեցան յԱ-
 ռարատեան աշխարհ. և վատթարեալ զյետինն Հնգեցուն ինքնագլուխ Հայ-
 կազանց՝ զՓանաւազ, որպէս թուի նախ դաշապին պատերազմաւ, ապա
 պաշարմամբ ի քաղաքի կամ յամրի ուրեմն, կալան զնա և գերի վարե-
 ցին ի Բաբելոն, ուր հաստատեաց գերկտորդ ինքնակալութիւն Բաբելական
 կամ զՔաղդէական Նաբուբադասար, ամաւ յառաջ քան զամհն լուծեալ
 զզրէժ երկոցուն ռիբրիմ թշնամեացն. և եթէ արժան իցէ իմաստասիրել
 ընդ վիպառանին՝ մերոյ

- < Ըզհայրականըն ղեն յեշեալ
- > Զոր ընդ Բելոյ Հայկն արարեալ.
- > Որպէս երբեք Նինոս խորհեալ,
- > Զի զքաջութեան համբան առեալ (ՂԱբամս)
- > Բայց թաղուցեալ կեղծաւորեալ...
- > Աստ թինաթափ սոցա եղեալ,
- > Զուր բարկութեանըն հրդեհեալ
- > Բազում ամօք զՀայք սոշորեալ >:

Վիպասանս համարի ի ձեռն Նաբուգոդոնոսորի ի զլուխ ելեալ իրացս, և
 էր իսկ նա արդարեւ զօրաւար փոխանակ հօր իւրոյ, որում և թագակից
 իսկ.

- < Նաբուգոդոնոսորն իշեեալ
- > ԶԱսքանագեան գունդըն կոշեալ,
- > Զժազն ի գլխոյ նոցա առեալ,
- > Փանաւազայ այս պատահեալ,
- > Ի Բաբելոն վախճան եկեալ >:

Բայց ոչ եթէ ի Բաբելոնի վախճան տոնալ կենացն և պետութեան, թուի թէ ի դիւրի եկաց Փաննաւազ յետ գերութեան. քանզի Հին պատմիչն ասէ միայն. «Այս Փաննաւազ հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն, և ասպ յայնմհետէ Բաբելացոց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեքսանդր Մակեդոնացի»: Այն զի և մեծն այն արքայ Բաբելոնի և մի մեծագոյն աշխարհակալաց՝ Նաբուգոդոնոսոր պայազատեալ ընդ հուպ զհայրն (604) յետ ոչ բազում ժամաց (593) ռիացաւ ընդ գաշնակցին և ընդ աներոյ իւրոյ Արփաքսաղայ Մարացն արքայի, և պատերազմաւ ընկճեալ կացոյց յերկրորդական կարգի²⁵³. Եւ աս այս թուի դէպ համարեալ զգիրքն Հայոց, զի մի յապօտամբութիւն մտարերիցն, և կարգեալ նոցա վերակացու և թագաւոր ընդ ձեռամբ իւրով զՀրվազէ ոմն, այսպէս կոչեցեալ «վասն տառել պայծառերես և բոցակնաւ» գոյն իմէ լինելոյ». (Խոր. Ա. ԻԳ) զոր տեսցուք ընդ հուպ նիդակակից նմին ի շահաատկութեանն նշանաւորի:

Բայց Փաննաւազայ որդի թէպէտ ոչ թաղաւորեաց, այլ ոչ և անշուք մեաց, զի տիրեաց արեւմտեայ հարաւոյ կողմանն Հայոց, ի Դ Հայքանդի, ասէ Հինն այն պատմիչ, Փաննաւազայ որպիս լեալ երկուս, Բագամ և Բագարամ, որ ծնաւ զԲիւրամ, և նա զԱսպատ: Եւ ինքն Բագարամ կոչեցաւ «և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբորոսացն» աստուած կոչեցին»: Եթէ ստոյգ իցեն ասացեալք և կամիցիմք միտարանել ընդ Խորենացոյ՝ զՊասքամ նախահայր տոհմին Անգեղ տանն²⁵⁴ հարկ է ըստ մերձաւորութեան անուան նոյն համարել ընդ Բագամայ (ի յաջորդս Տիգրանայ լսի և Բագամ թագաւոր Հայոց) կամ Բագարամայ. և զի կոչի նա, թո՛ղն Հայկակայ (յօրինակ ինչ Հայկայ), ասպ և զսա՝ հայր Փաննաւազայ: Խորենացի զսկզբնաւորութիւն տոհմի և տան Անգեղ 400 ամօք անագանէ, ի սկիզբն Արշակունեաց տէրութեան. այլ մարթ է միտարանել զարձեալ զպատմիչսն՝ վարկանելով և զՏորք այն ժամու նահապետ տոհմին՝ սերեալ ի նմին տանէ Բագարամայ կամ Պասքամայ, և ըստ օրինակի նահապետի տոհմին զիւցազնական կատարեալ գործս. բայց աստուածականն ընծայեալ պատիւն՝ զիպողագոյն եւս է հնագունին ժամանակաւ՝ Անգեղն Բագարամայ, զոր անկ է թուել ընդ սակաւուց ծանուցելոց բազմականոց Հայկականն Ոլիւմպեայ. և զի ոչ վայրապարումեք այսպիսի ընծայի պատիւ, հարկ է թէ և գործս զիւցազնականս կատարեալ իցէ նորա հանգոյն իմն Հերակլեայ և մերոյս վահագնի, կամ թէ քաջութիւնս արութեան գործեալ, ընդդիմանալով հետամախցն Մարաց և

Բաբելացւոց, և յամուրս անդ լերանց աշխարհին Գ Հայոց զազատութիւն իւր անկողոպուտ պահեալ, և ոչ խանարհեալ ընդ ձեռամբ Հրաշէի, իբրև կապտողի իւրոցն հայրենական իրաւանց, միանգամայն և ինքնիշխան պայտազատութեանն Հայոց, որով իբրև բարձր ի գլուխ պանծային յաւուրց Սննքերիմայ և այսր:

Համայն և այնպէս նուանմամբ իսկ ընդ ձեռամբ Նաբուգոդոնոսորի ոչ շատ գձձեցան Հայկազունք, որպէս ի վերդ նշանակեցի. զի թագն կորզեալ ի Փառնաւազայ տուաւ այլոյ ումեք. «Եւ զի արգարեւ, ասէ Խորենացի, » զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն, վկայէ և Երեմիա » մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. » Հրաման ասւր, առէ, Ալյորատեան թագաւորութեանն և Առքանազեան » գնդին): Եւ ըստ հաւաստելոյ քննչաց ի սոյն իսկ յամս թագաւորութեան Հրաշէի կամ պատերազմին Մարաց և Բաբելացւոց գրէր զայս աստուածաշունչ և հառաչաձայն մարգարէն, առ ի վրէժ իմն քինու գերութեան ազգին իւրոյ, և թագաւորութեան տան Յուզայ և վկանդման Երուսաղեմի, որ վազազոյն եւս ի գլուխ ելանելոց էր քան սպառնացեալն յիւրմէ բնաբարձ կործանումն Բաբելոնի. արդէն իսկ յամի նուանման Փառնաւազայ՝ համօրէն երկիրն Ասորաց անկեալ էր ընդ լծով Բաբելացւոց, հանդերձ թագաւորուն Յուզայ Սեգեկիայի, որոյ անհանճար և ասրածամ խորհուրդ ասպտամբութեան՝ նախ իւրում ինքեան գերութեան և կուրութեան եղև պատճառ, սպանմամբ որդւոցն, և յետ սակաւ ամաց (585 նախ քան զՔրիստոս) հրկիզութեան և կործանման բովանդակ աստուածախնամ այլ և աստուածալիք քաղաքին Երուսաղեմի, և աշխարհածանակ գերութեան Յուզայ և ամենայն Հրէաստանի: Յայսմ մեծի և ահեղ սպասարկութեան Նաբուգոդոնոսորի կամաց Աստուծոյ՝ ի վերայ ապերախտ ազգին ընտրելոյ, արբանեկէր նմա և մերս ազգապետ Հայկազն Հրաշէ, որպէս և յետ իբր ամաց 80ից մի ի յաջորդաց նորա աջակցէր Մարապարսացւոյն՝ յառուձն և յուեր Բաբելոնի:

Ոչ նիզակակցութեամբն միայն ընդ Բաբելացւոցն յայս գործ վաարանդութեան Հրէից՝ ի հանդէս ածէ զազս մեր, այլ և ասպնջականութեաքն ի նոցանց իսկ գերելոցն. յորոց զոմն մի ի պատուաւոր արանց, որ թերեւս զոհ ցասման Նաբուգոդոնոսորայ լինելոց էր, որպէս զայլսն զըմբռնեալսն ընդ Սեգեկիայ կամ զգերեալսն ի Նաբուգարոյանայ, Շամբաստ կամ Շամբաստուն, ինդրեաց Հրաշէ ի պարգելի մասին, տամբ կամ արամբք նորին զուցէ և այլովք յարեցելովք ի նոյնս, և ած բնակեցոյց յերկրիս Հայոց

ըստ արժանի մեծութեանն պատուով, յորմէ և սերեալքն ի նմին պատուի կացին, և առաւել եւս մեծարեցան առ Արշակունեօք, նոյն և յաւուրս քրիստոնէութեան ազգին առ յապա, և յանուն պայազատի տոհմին որ յաւուրս վաղարշակայ կեայր՝ կոչեցան Բագրատունիք, աւագութեամբ դասու և պաշտամանց ընդ առաջինս ի նախարարութեանց կացեալ, և ի վերջէ ուրեմն գահակալութեան եւս հասեալ և վերականգնեալ զթագաւորութիւն Հայաստանեայց, այլ և զվրաց, յորս և երկարեալ պայազատութեամբ հասին մօտագոյնս ի մերս դար, և կեան իսկ տակաւին ի սերնդոց նոցին և յազգէն, առաւելագոյն առ դրացիսն՝ քան ի բնիկ յաշխարհիս մերում, և ցարդ իսկ ի պատուի ազնուականութեան, որով թերեւս հնագոյնք իսկ են և նախնագոյնք քան զամենայն ազնուատոհմս և արիազունս ծանուցեալս գէթ յԵւրոպիա : Եւ զի այսքան մեծ և նշանաւոր եղեւ տոհմդ այդ առ հինսն մեր և առ նորս, բազում խնդիր և զոյց եղեալ է վասն սկզբնաւորութեան նորին և նախահաւուր : Վրացիք՝ թէ և յետնագոյն ասեն զգալուսս նոցա յերկիր իւրեանց, այլ յարքունի զալմէն Դաւթի պնդեն լինել զնահապետն՝ որպէս և ոմանք ի մերոցս . իսկ այլք անդստին իսկ յաւուրս թարգմանչաց մերոց կամ եւս յառաջ՝ ասէին ի Հայկայ սերնդոց լինել և զԲագրատունիդ, զոր բասրեալ մերժեաց Խորենացի, որպէս և վերագոյն ուրեմն նշանակեցաւ . իսկ ոմանք ընկալեալ ի Հրէից զծագումն՝ զտանէ Շամբայի զուցեցին լինել զնա որպի կոլլսամայ՝ զոր աւետարանագիրն յիշէ Ղուկաս, և է ԺԼ ի Դաւթայ և չորիւք ազգաւ նախերէց քան զԶօրաբարէլ : Առանց երկբայութեան է հրէական ծագումն տոհմիդ և բազում հաւանութեան ի Յուդայի ցեղէն լինել . իսկ տեղի բնակութեան նոցա ի Հայս, զառաջինն երեւի ի հիւսիս արեւմտից աշխարհիս լինել, ի Սպեր և ի կողմանս Խաղտեաց, ուրանօր յիշին և ի ժամանակս Արշակունեաց մերոց թագաւորաց : Ոչ հեռի ի սոցանէ ասեն հին պատմիչք³⁵⁵, յաջակողմն Պոնտոս ծովու բնակեցուցանել կամ վտարել Նաբուզոդոնոսորայ մասն ի գերութենէ կողմանց Լիբիոյ և եւրոպականն Իբերիոյ, թէպէտ և նոր քննիչք ոմանք (Նիպուր. 222) ոչ հաւանին այսմ :

Յետ Հրաչէի մինչեւ ի Տիգրանն Քաջ նահապետք և թագաւորք Հայկազանցս կացին՝ հինգ, թէպէտ վեց համարի Խորենացի, յաջորդ նմին եղեալ զՓառնասագ (Բ), որ ըստ իս է նախորդն և գերեալն ի Բաբելոն . ապա յետ Հրաչէի կարգեմ զՊԱՃՈՅՃ, յետ նորա ԿՈՒՆԱԿ, որ գրի և Կոռնակ և Կոռնակ, վասն որոյ Մագիստրոս ստուգարանէ Կոնակ, ի կուռն բառէ, դարձեալ գրի առ այլս և Կոսվնագ (Ուխտանէս), այլ և Կոյ-

նախ (Վարդան) : Յետ սորա ՓԱԻՈՍ կամ Փառոզ , որ « ըստ պարսկա-
 » կանին Բազմանի » նշանակէ ըստ Մագիստրոսի . առ Վարդանայ գրի Փա-
 վա : Յաջորդ սորա ՀԱՑԿԱԿ Բ . կամ Հայկակ Միսս , որում յաջորդէ
 ԵՐՈՒԱՆԻ (որդի նորա ըստ Չամչեանի) և Սակաւակեաց մականունեալ ,
 յայտ է թէ վասն կարճատեւ իշխանութեանն և արագաւլախճանի կենացն .
 բայց անունն յայտնապէս յարիական լեզուէ՝ պահեալ գտանի և ի հին
 բարբառ Բրետոնաց և Կելտաց , և նշանակէ վիշապ կամ դեւ : Ծանօթ է
 գաւառն Երուանդունիք ի Վասպուրական աշխարհի Հայոց , այլ ճահագոյն
 եւս թուի յանուն Արշակունւոյն Երուանդայ կոչեցեալ , քանզի զեզերէր նա
 երբեմն զսահմանօքս , հետամուտ լինելով Արտաշիսի Բ . բայց ծանօթագոյն
 եւս են արտաքնոց Երուանդ լերինք Մարաց , որ ի Զարասոպայ յառաջա-
 ցեալ ձգին , և ցարդ պահեն զանունն Էրվէնտ կամ Էրվէնտ : Ծանօթ էր
 Լատինաց հնոց և Երուանդ անուն ժողովուրդ , որոյ երկիր ցարդ իսկ կոչի
 Բէվանաբդ , երբեմն միջակացեալ մարդ Հայոց և Մարաց : Ուստի և իցեն
 եղեալ մարդիցդ և լերանց անունդ այդ , հնագոյն լսի այն ի թագաւորոս
 մեր Հայկազն , որ ոչ աննշան ոք այր թուի եղեալ և ի սակաւակեաց
 տէրութեանն :

Ոչ շատակեացք կամ երկարիշխանք ոմանք թուին և նախորդք նորա .
 քանզի աներկբայապէս մեռեալ էր նա յառաջ քան զԱժդահակ , որոյ վախ-
 ճան ստոյգ ժամանակագրութեամբ նշանակի 558—60 ամաւ յառաջ քան
 զթուական Փրկչին . արդ այն ամ է 28 կամ 30 ամանն Երուսաղեմի ,
 առ Հրաշէի . ապա յայտ միջոց երեսնից ամաց կացին հնգեքին յա-
 ջորդք նորա : Ընդ հակառակն՝ որդի նարին և յաջորդ՝ Տիգրան , երեւի կե-
 ցեալ կրկին նոյնքան ժամանակս , և փսխանակ հօրն երկարակեաց եղեալ .
 քանզի ի 20 ամին Դարեհի ասի վախճանեալ . յորմէ ի վեր ցմահ Աժ-
 դահակայ են ամք 60 , և զՏիգրան պատմութիւնն ցուցանէ ամօք եւս յա-
 ռաջ քան զայն թագաւորեալ : Քսենոփոն որ յիտ 100 ամի մահուանն Տի-
 գրանայ ճանապարհորդէր ի Հայս և բազում ինչ յօյէ զնմանէ ի վիպասանա-
 կան Կիրամարզին , յիշէ և զզործս հօր նորա առանց անուան , միայն Հայն
 կոչելով , իբրու թագաւոր Հայոց . թերեւս առ սակաւատեւ իշխանութեանն
 իսկ զանխուլ ի բազմաց մնացեալ անուանն . որով և անճահս իսկ վիպա-
 սանն ընծայեցուցանէ նմա գործս՝ երկար ժամանակի պատշաճս , որպէս
 կրկին անգամ ապստամբութիւնք նորա ի Մարաց , շինուածք բերդից ,
 մարտք ընդ Թաղտիաց , Տիգրանայ երթալն ի մարտ ի վերայ թշնամիաց հրա-
 մանաւ հօրն , և այլն . և այս ամենայն նոր իմն փաստս սան անհաւաստի

և քմազարդ բանահիւսութեան Բսենոփանի, առ որ կարգ պատմութեանս հարկ առնէ զկայ առնուլ և ի քնին մտանել. զի որպիսի և իցեն բանքն և վէպք՝ ոչ վարկպարագի և աննշան առն են զբոյցք, այլ և կարի հինք, և ոչ սակաւ կարեւոր իրաց նշանակք են ի նմա. նաեւ զլիաւոր զէպք պատմութեանն՝ որ և զլուխ գործոց մերոյ Տիգրանայ համարի, այսինքն ընկճումն Մարական գերիշխանութեան, կամ վախճանն Աժդահակայ. ոչ սակաւ ցոյցս հաւանութեան ընծայէ՝ և ի չմիարանելն իսկ ի վերին երեսս ընդ Երոզոտի և ընդ մերում պատմութեան. մանաւանդ զի մերձաւորագոյնս ուրեք գառնի նուիրական տառիցն Հրէից: Չիք թերեւս ինչ մի կարեւորագոյն ի հին պատմութեան, (որ առտանօր սկսանի մերկանալ զաւանդական քօղս՝ և ի ստուգութեան կերպարանս մտանել) որպէս զյաջորջորդութիւն ինքնակալութեան արեւելից՝ փոխանցելով ի Պարսս ի Մարաց անտի, որք յետ մահուն Եսթրուգոգանոսորի՝ յերեսնս գրուեալ էին զնախիշխանութիւնն. այլ և մի ի մթազոյն կամ ի դժուարակնճիտն զիպաց է այլ, վասն զանազանաձեւս աւանդելոյ զայն պատմչաց ոչ աննշանից և ոչ շատ հեռագունից ժամանակաւ, այլ և Ս. Գրոց նոցին զուզրնթացութիւն: Նշանաւոր է դարձեալ ժամանակն վասն հոյակապ արանցն հանդիսացելոց ի միում կամ ի մերձաւոր ժամանակի, և գրեաթէ ի նմին ասպարէսի, գործ ընդ իրեարս ունելով մարտից կամ հաշտից: Ի տասնեկի միում ամաց յառաջ քան զկէս Չ դարու նախ քան զՔրիստոս (565—558), գրեաթէ միանգամայն վարէին խրոխտարար գիշխանութիւն ազանց Եսթրուգոգանոսոր, Աժդահակ, Տիգրան, Կիւրոս և Կրեսոս²⁵⁶. առաջինն որ քաջութեամբք և մեծագործութեամբք հոշակեալ էր ընդ համօրէն աշխարհ, յափանց լիբիոյ մինչեւ ի Կովկաս և ի հերակլեան արձանս, և զմիապետութիւն տիեզերաց ունէր, յողթող կամ ահարկու ամենայն ազգաց, իբրեւ շունէր զոք ընդգիմակալ ի վերայ երկրի, յերկնաւորէն խրատեալ ահեղ իձն և նորօրինակ նշաւակութեամբ, զոր պատմեն Գիրք Դանիէլի. և զգօնացեալ յանսանձ գոսոզութենէն, հասեալ և ի ծայր ծերութեան և յեւս կենաց, սկսանէր ամփոփել իձն զճառագայթս բազմափայլ փառացն, և յետ 42 ամաց տիեզերակալութեան անհետանայր յասպարիզաց († 562 նախ քան զՔրիստոս), թողեալ զայն համարձակ հզօրագունին յետ իւր և փառասիրագոյն թագաւորի Մարաց, որ ոչ շատ կրտսեր ինչ քան զԲաբելոնացին տիօք և ժամանակօք թագաւորութեան, և ի սկզբան անդ իւրոյ տէրութեանն կոփեալ ի նմանէ՝ զգուշութեամբ կեայր, ական եզեալ բազդի կամ մահու (խնամելոյն) առ ի կորզելոյ զնախիշխանութիւնն որպէս և հարք իւր փորձեցին. և ուր

ուրեմն յաջողէր նմա այն վասն ապիկար և թուլամորթ անտեսութեան
 Եւբիմարոզգաքայ որուայ և յաջորդի մեծի թագաւորին Բաբելոնի, որ յեր-
 կրորդում ամի իշխանութեան կորուսանէր զայն հանդերձ կենօքն, և Նե-
 րիգալսարոսար թագաւորէր ըստ ձեռանէ գոռոզին Մարաց : Այլ և ոմա
 ընդ հուպ առ նմին հասանէր վախճան փառաց և կենաց, եղբրակոն օր-
 հասիւ զօր մնայ մեզ տեսանել ընդ հուպ . ի ձեռն երկոցուն, եւ քաջացն
 հանդիսացելոց և նիգակակցութեամբ մտերմաց՝ Տիգրանայ և Ելիւրոսի : Մմա
 յաջողէր երկայնամիտ վաստակօքն, մարդիւք և մարտիւք և ազգականու-
 թեամբն եւս՝ պայպատել մի ըստ միջէ զթագաւորութիւն Պարսից, Մա-
 րաց և Բաբելոնաց, և ի տոհմն իւր յաքեմենեան փոխել զմիապետութիւն
 Ասիոյ, անդրազոյնս եւս աշխարհակալեալ քան զՆաբուգոզոնոսար, առ որոյ
 թագաւորութեամբ ծնաւ, զարգացաւ, և հաս ի շափ, և էր իբրեւ ամաց 38
 ի մահու նորա . յառաջեալ ընդ արեւելս և հիւսիս առաւել քան զնախնի
 ստագապատում աշխարհակալս, և յարեմսուսս եւս ցոր վայր ոչ պատմի
 հաւաստեաւ տիրել Ասորեստանեայց . զի եհտո, եհար ելոյժ զթագաւորու-
 թիւն Լիւդիացոց, զոր ընդարձակեալ զօրէն գունակ հօր իւրոյ Ալիադեայ՝ և
 առաւել եւս բարդաւանեալ Երիւսսոսի՝ տիրէր մեծի մասին Փոքր Ասիոյ ճո-
 խութեամբ որպէս զմի յարեւելեան պերճաշուք թագաւորաց, այլ ի հզօ-
 րագունէն վատթարեալ պարտութեամբ և ձերբակալ լեալ անհետ լինէր
 դեռափայլ թագաւորութեամբ (547 նախ քան զՔրիստոս) յառաջ իսկ քան
 զիսպառ նուաճումն և կործանումն Բաբելոնի : Զուգածամանակ պայծառու-
 թեան սոցա, ափանտաես և գործակից, և միջասահման իմն նոցին տե-
 ղեաւ և հանուրց հիւսիսագոյն թագաւորէր Հայկազանցս Երուանդեան Տի-
 րիման Ա . որ նախ ողասարկութեամբ առ Նաբուգոզոնոսար որպէս և նախ-
 նիք իւր ի Հրաչեայ հետէ, խաղաղութեամբ ունէր զիշխանութիւն, և յե-
 ասոյ բարեկամութեամբ ընդ Ելիւրոսի կայր մնայր ի նմին և ոչ միայն տե-
 սազ լեալ կործանման այլոցն հզօր պետութեանց և հոյակապ քաղաքաց,
 Սարգիսիայ, Եփրատանայ և Բաբելոնի, այլ և վրիժահան նոցին, ընդ օծե-
 լոյն Տեառն Երայեայ (Ելիւրոսի) հրաւիրեալ և ինքն ի ձեռն Երեմիայ ի
 գործն մեծ : Աւանդութեանց ազգիս վկայք միաբան ընդ Քսենոփոնի յայտ-
 նապէս և այլք ի պատմչաց լուսութեամբ հաստատեն զսերտ գաշակցութիւն
 Հայկազնոյն ընդ բարեբաղդ պայպատին Պարսից, որ ի փոքրուէ և ի ծայրէ
 աշխարհէ անախ հարցն յառաջեալ կալաւ եկուլ իմն զաշխարհատարած
 զպետութիւնս արեւմտից (Երիւսսոսի) զարեւելից (Մարաց) և զհարաւայեոյն
 (Բաբելոնի), ոչ գրեթեալ հիւսիսայնումն այլ և օժանդակեալ իսկ ի նմանէ ի

Հայկազնեանն ասեմ պետութենէ. որ յանշրջին անդ Բարեկացոց և Մարաց վերստին թեկն ածեալ զազատ իշխանութեամբ՝ յորանայր հարստանայր որպէս յաւուրս հնգեցուն ինքնիշխան թագաւորացն որք յառաջ քան զՀրաչէն:

Առ արտաքին պատմիչս հազիւ իսկ նշմարի Տիգրան ի հանդիտի մեծիւ այսմ յեղափոխութեան Ասիոյ. որոյ որպէս զլիաւոր գործի կիրսան էր, նմա և ամենայն աջողութիւնք և գործառնութիւնք ընծային. և նա միայն ճանաչի զիւցազն թատերացս, և աշխարհակալ տիեզերահռչակ. որպէս և եղև իսկ ըստ այսմ մասին, և առաւել քան զՄարս բռնացեալ՝ զՊարսկաստան կացոյց ակն տիեզերաց և հրամանատու ազանց. մինչ գեո ի գաղտ իմն և ի հեռուսս ծագաց ծովու սակաւատոհմ՝ ազգք և պետք Յունաց միարանեալք և միահոմեալք անպատին պատրաստէին նմա զէնս զիմակալութեան և կործանման, որ եղև իսկ և կատարեցաւ յետ 200 ամաց: Բայց մերս սոհմական պատմութիւն՝ աստանօր ոչ հանգուրթէ կիրստի միայնում համագրուել զփառս յաղթանակացն, մանաւանդ զնուաճմանն Մարաց. հակառակորդին Բարեկացոց և զիւրային ազգին Հայկազանց. նախնիք մեր զուգապատիւ կիրստի նա և յառաջագէմ ի գործ մարտին Մարաց զթագաւորն իւրեանց զՏիգրան ծանհան, հռչակեցին և դրուատեցին զիպասանօրէն և զիւցազնական տաղիւք. որոց թէպէտ հազիւ յիշատակքն մնան, այլ բաւական և այնք են առ ի յայտ առնել, զի ոչ միայն սեփական կամ անձնամատոյց սիրոյ և հպարտութեան յաչաղանք էին Հայկազանց զիւցազնացուցանել զՏիգրան, այլ զի և էր իսկ արդիամբք արժանացեալ այնպիսեաց դրուատից և զովասանութեանց. լսէր տակաւին և զայնոսիկ յետ 1000 ամի անաչառ և ճշմարտասէր պատմահայր մեր Խորենացի, որ և ոչ զմի ոք յազգապետաց մերոց ոչ ի Հայկազանց և ոչ յԱրշակունեաց այնքան զովարանէ, մեծացուցանէ, և սիրելի և սիրալի ընծայեցուցանէ ըստ քաջութեան և ըստ քաղաքավարութեան հրահանգաց որպէս զԵրուանդեանս Տիգրան, և զրեաթէ մոռացեալ զիւր բարս և զոճ զհամասօտ և զհատու, յաճախ և բազում անգամ դարձադարձ առնէ ի ներքողեանն, մերթ (Ա. ԻԳ) կոչելով « Հուժկու, անուանի և յաղբող յնդ այլ աշխարհակալս ». մերթ (ԻԿ) « Ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն » այնոցիկ և ամենեցուն քաջ ». և ըստ այսմ մասին սիրէ կոչել (ԼԱ) զազգապետս մի « Հայկ՝ Արամ, Տիգրան. քանզի (ըստ իմ՝) քաջաց ազգք՝ » քաջքն. իսկ միջոցքն՝ որպէս զէպ ումեք թուիցի կոչել ». և դարձեալ ի յուշ ածեալ զհամանուանս նորին և զգերահռչակեալ ի նոսա զծանօթ ազգն

Հոռվմայեցւոց զթագաւորաց թագաւորն Տիգրան Արշակունի, առ ոչինչ իմն թուի համարել զամենայն մեծութիւն նորա, և յաւելեալ ի բանս իւր յենու յարի յառաջինս այս, և « Բագումբ անուանեալ Տիգրանք, ասէ, մի է » և միայնակ սա ի Հայկազանցս », հսչակելին յայս անուն, որպէս ի միջի Արամազդաց բազմաց մէն միայն գերսփառն աստուածոց. մինչեւ կոչել իսկ զնա (ԱԱ) « արդարեւ, բուն և առաջին Տիգրան » գուցէ այսու և ստուգաբանել իմն կամեալ զանունն « որ բոտ պարթեւին Մեծ և Մանր », լսի բոս Մագիստրոսի³⁵⁷. այլ երիցագոյն քան զյայտնութիւն պարթեւական լեզուին է ի սմա և յառաջ իոկ քան առ ամենայն օտարո ի մեզ ծանօթացեալ և սեփականագոյն մերազգեացս անունս այս Տիգրան³⁵⁸: Եւ դարձեալ առատացեալ ի բանսն հաւանութեամբ մտացն զոր ինչ և զայսմ Տիգրանայ բանք՝ քան զամենայն զիւր բանս պատմութեանն սիրելի ինքեան ասէ (ԱԱ), նոյնպէս կամի լինել « և քեզ ընթերցողիդ » տի նա և զարմանայ և յանհնարիցն իմն համարի եթէ « ռք ի ճշմարիտ արանց և որոց ի բարս արութեան և » խոհականութեան և սիրելութեան կայցեն սորա յիշատակօքն ոչ զուարճանցի, և յորդորիցի այսպիսի լինել այր, արանց կացեալ զլուխ»: Եւ կարգեալ թուեալ զունակ գունակ ազգս լաւութեանց և ուղղութեանց, զոր փռքը մի զկնի տեսցուք, համառօտս իմն բովանդակեալ զամենայն ծանուցանէ զանխլակի, թէ « Որպէս այրն, և գործք, սոյնպէս և զնմանէ բանք ». սր է ասել այր ազնիւ լեալ և արի, գործուք իսկ վկայեաց եցոյց թէ որպիսի ոք էր, և ըստ արժանի վարուցն և գործոց ասացան կամ գրեցան « զնմանէ բանք » արժանաւորք:

Եւ ո՞րք արդեօք իցեն բանքն և հեղինակք բանիցն, յորոց աղբերէ ասեալ յեղյեղէ ինքն խորենացին. — յայտ է թէ ոչ լոկ Մարիբաս, թէ և յերկար ինչ գրեալ էր սորա, որպէս զԱրայլ. այլ և Վիպասանքն Հայոց, որպէս և յիշէ նա ուրեմն (Ա. ԻԿ) թէ « զսրմէ ասէին ի հինսն մեր որք » բամբռամքն երգէին ». և այլուր (Լ.) վասն գերութեան Մարաց և զարմից նոցին Վիշապազունս կոչեցելոց, թէ « Յայանեն զայս ճշմարտապէս և թուե. » լեացն երգք, զոր պահեցին մարդիկ Գողթան »: Այլ և զսա ի նոցուն՝ սւրոյն վիպասանութիւն յօրինեալ և զիւցազնական իմն քերդուած ցուցանեն հին քերականք և մեկնիչք նոցին՝ ի սկիզբն հայիրէն զպրութեանց ի Դասրայ ումեմէ, ի փիլիսոփայէն, կամ գուցէ յերիցագունէ եւս յիշատակելոյ ի խորենացոյն բոս Դորդիայ և Բանանայ հնաւանդից, որ կսչէր Պասեւրագմե Մարաց և Հայոց. յորում զկնի հիւսեալ կայր և սղքն ի մահ Տիգրանուհեայ բոս իմաստից առաջին ողբերկակին՝ որ սղբաց զնա և վի-

պատանքն առաջինը հասուցին զբանս նորա մինչև յայդ Դաւիթ: Աներկ-
բայ կացուցանեն զայս ոչ միայն մեկնիչքն քերականի Համամ, Մագիստրոս
և Հնագոյնք և նորագոյնք քան զնոսա, այլ նաքին իսկ բանաստեղծական
բանք և բառք՝ որովք վարին ի բանս պատմութեան Տիգրանայ Խորենացի,
և յետ Հնգից ևս գարուց՝ Թովմա Արծրունի: Առ սմա (Ա. Ե) Բազ-
մախոհմն Կիրոս. որ և ընդ Տիգրանայ կոչի «յամենայնի համամանք,
» համակամք, միասիրաք, քաջախոհմք և բազմադրուատք»: Եւ բանն՝
«Զի մի քաջաորտագոյն Թուիցի Մարն քան զՀայկազնեանն»: Թող զման-
րապատում ինչ զէպս պատմութեանն, որպէս զԱրծրունեացն շահատակու-
թիւն ի մարտին: Եւ որ սիրալին է յառաջ քան զնոսա Հելլեն արձակ
վիպապատումն Քսենոփոն, թլպէտ ստոյգ թէպէտ և անստոյգ պատմաւըն
իցեն, զնոյն խոհեմութեան, սիրելութեան, արուորութեան և ընդ Կիրոսի
մտերմութեան բարս ընծայեցուցանէ Տիգրանայ զոր վիպասանքն Հայոց տան
նմա. և չիք ինձ երկապել զի թէ ոչ յերգոց հնագունիցն և վիպասանիցն
Հայոց, գէթ յաւանդութենէ ազգին լսէր Քսենոփոն զըրուտոս Տիգրանայ՝
յետ 10 ամի մահուն նորա անցանելով ընդ Հայս. սակայն զի իւր կամք
և տեսութիւնք ի Կիրոս միտեալ էին՝ զսա զիցազնացոյց յերկրեալ ըստ
գաղափարի գիտմանն զպատմութիւն, և մերումս Հայկազին զանժխտելին
չորհնաց կերպարանաց զգոնութիւն և լաւութիւն:

Արդ թէպէտ միաբանի յայտմ ընդ Քսենոփոն մերոցս պատմչաց, այլ
ի բուն զէպս գլխաւոր գործոցն, այսինքն նուաճման մարական պետութեան՝
անմարթ է միաբանել զնա ոչ ընդ մերոյս և ոչ ընդ այլոց տոհմակցաց
նորա պատմչաց, ընդ Երոզոտեայ, Իսոկրատայ, Դիոգորի, Ստրաբոնի
Յուստինոսի, և զոգջիր ամենայն հին պատերազմագրաց. որք ամենեքին
վկայեն զԱժդահակ գահընկէց լեալ ի Կիրոսէ, ըստ ոմանց կենագրաւ
իսկ, ըստ այլոց միայն յաղթահարեալ ի մարտի և ի գիպահոյ զրուեալ ի
կենաց. Քսենոփոն միայն համարի խաղաղութեամբ զնա վճարեալ ի գահուն
և պայազատեալ Կիւքսարայ որդոյ նորա. և թէպէտ ստոյգ է պայազա-
տութիւն սորա, և ի Դանիելի գրոց իսկ վկայեալ յորում կոչի սա Դարեհ
Մար կամ Աստիագեան³⁶⁶, այլ սա չնորհուկս իմն Կիրոսի՝ իբրու քեռի սորա
կայր նորա ի զուրի թագաւորութեան Մարաց, բայց գործք մարտից և
առաջնորդութեան ի ձեռն Պարսիցն կատարէին. և զի այսպէս երկոքին իսկ
միանգտմայն թագաւորէին՝ ըստ մեկնութեան տեսչեան Բաղաստորայ, վտան
այնորիկ և ի ճահագոյնս Մարապարոացի կոչէր այնր ժամանակի աշխար-
հակալ իշխանութեան Ասիոյ. ապա ուրեմն ոչ ստնտնէ ինչ մտերմութիւն

Կիւրոսի ընդ քեռւոյն առ տառելութեան նորա ընդ հաւուն (Աժդահակայ), զորոյ զառիթ է զարդասիւս հարկ է և մեզ յիշատակել սասորի առ ի քաջիկ ծանօթութիւն բնկիս մերոյ պատմութեան : Իսկ այս զոր ասացաքս շատ լիցի ի ցուցանել զի Քսենոփոն ի գլխաւոր կիտի կամ ի հանգուցի անդ իրացն անմիարան ընդ հասարակաց՝ ըստ կամաց և քմաց ստերիւրէ և ոչ յերկուրէ զպատմութիւն . և չեն ինչ զարմանք եթէ յանկարեւորագոյն գէպսն (որպիսի են որ զՀայոց թագաւարութենէ բանք) ամենեւին իսկ յօգուածոյս կարկատիցլ . նա և ի հիմն եւս բանիցն հեռի գտանիցի ի ճշմարտութենէ . ի ժամանակս ասեմ իրացն պատմեցելոց . քանզի առ Կիւրոսարու որդոյ Աժդահակայ վիպէ զպստամբելն Հայոց ի Մարաց թագաւորութեան հօրն Տիգրանայ , և Կիւրոսի նուաճեալ զնոսա և առեալ զՏիգրան զիւր վաղեմի ծանօթ՝ խողալ ի վերայ Բաբելացոց . յորում ի յեանում մասին տոբցն համառայնի ընդ արտաքնացն և ընդ ազգային մերոց պատմաց , իսկ քան յառաջնուի ամենեւին իսկ անմիարան և հիմնալինջ իմն թուի զմեր պատմութիւնս և զամենայն զվարկ և զգործ Տիգրանայ առնել , այսինքն է զմարտ նորա ընդ Աժդահակայ . զոր ժխտել՝ ոչ փոքր թուի քան թէ անհետ առնել զՏիգրան ի պատմութենէ Հայոց յորում այնքան մեծ անդի գրաւեալ է , և զոր ինքնին իսկ Քսենոփոն այլովք բանիքն օժանդակ հասեալ յիշատակաց ազգիս՝ պնդագոյնս կայկայեալ հաստատէ : Ապա ուրեմն համօրէն նիւթ և տակչք պիպաց Հելլենացոյն խառն են ի ստոյ և ի ստուգէ , իսկ հիւսածն և մանաւանդ զրոյցք ճարտարաբանք և ողորկք , հանգոյն իմն պղատոնտեանացն զրուցարանութեանց , թէպէտ և ուրեք յաղուակածն ցաղուաշն իսկ զիջեալ ասացուածս , պէթ ըստ մեզ՝ որոց չէ մարթ անզգայունս լինել ուր այդքան երկարօրէն և յայդքան հնութեան ճառք իցեն զմերոց նախնեաց Հայկազանց , և զսիրելագոյն մեզ ի նոցունց ընծայեցելոյ անձնլ զՏիգրանայ : Եւ այս իսկ հարկ դնէ մեզ յառաջ քան ի սաղոյն մատչել պատմութեան՝ զհիւսուած ատտիկեան Մեղուին յանդիման առնել համառօտիւ , ի քնին առեալ զհաւանականսն և զհաւաստիս :

Արդ համարի Քսենոփոն առ Կիւրոսարու և մերձ ի բարելոնական մարան , այսինքն ի բարձուիմն մեծի ինքնակալութեան առմամբ մայրաքաղաքին , թագաւորեալ ի Հայս հօրն Տիգրանայ , զոր ոչ յիշէ յանուանէ , այլ Հայկազոն կոչէ , և ապատամբել նորա ի Մարաց ի վարանջութեան այլոց եւս ազանց հպատակաց , յորոց սակի ելով և Հայոց՝ հարկ 50 տաղանդոյ հարկէին յԵրատտան : Ի զօրաժողով լինել Կիւրոսարայ ի վերայ Բաբելոնի՝

վաղաժաման լինի Կիւրոս յօժանդակ բեռւոյն, և մինչչե գումարեալ համաշխարհական բանակին՝ ձեռն արկանէ ի նուաճել զմերձաւորս Մարաց ապստամբեալս. յորս տառել խիթալիք էին Հայք: Առեալ գունդս զօրաց Մարաց և ի Պարսից՝ մխի ի Կիւրոս ի սահմանս Հայոց իբր որսոյ պատճառանօք, և խաղայ ելանէ ի լիրինս սահմանակից աշխարհին վասպուրականի. և գունդ մի հատուածեալ առաջէ զկողմամբք ուր թագաւորն Հայոց գտանիւր յայնմ ժամանակի յամարանոցս զեզելոլ, և ի շինուած ամրոցի ապաւինութեան յերեսաց թագաւորին Մարաց, յորմէ և յայլում նուագի ընդվզեալ և նուաճեալ խոստացեալ էր քակել զամուրսն և կալ ի հարկի: Խակ այժմիկ զգացեալ զյեղակարծոյն գալուստ Մարապարսիցն, փութայ թագաւորն մինչեւ ի հաւաքել զօրացն՝ զերծուցանել զտիկնայսն և զաղարծի մանկունսն յամուրս ուրեք վայրաց, և ինքն յայլ գէմ խուսէ ի լերինս. բայց մինչչեւ գումարեալ հայկական զօրուն գունդն զօրահատոյց արարեալ ի Կիւրոսէ ձերբակալ առնէ զտիկնայս արքունի և զՇաւարշ կրտսեր որդի թագաւորին, բանզի երէցն Տիգրան երթեալ էր ի գործ յաշխարհ հեօի. և ինքն Կիւրոս հասեալ ունի զստորոտս լերինն՝ յոր անկեալ էր թագաւորն. և յլէ պատգամ հնազանդութեան. որում հաւանի թագաւորն՝ ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան, թափուր գոլով ի զօրականէն: Ի բուն արկեալ գնա Կիւրոսի՝ կամի խրատել զատաստանաւ. և ի նոյն ժամա է և Տիգրան ի հեռաւոր հրկրէն և տեսնէ զվտանգ աշխարհին և ընդ հօրն և տանն ի գերութիւն վարեալ և զնորահարսն զամուսին իւր խանդակաթ. ընդ որս թէպէտ և ի խոր խոցեալ՝ ակն ունի և հնարի զփրկութիւն ի Կիւրոսէ, ընդ որում վաղ ուրեմն երբեմն ծանօթացեալ և մտերմացեալ իսկ էր, ի գալ ելանել նորա յորս զլերամբք Հայոց: Արդ ի պատ մատուցեալ Կիւրոսի՝ պարտաւորի Հայն իւրով իսկ խոստովանութեամբ՝ զմեղանս ապրստամբութեան և զուխտագանցութեան, ի ծառայութիւն և ի պատուհաս, և ապաբան լինի. յայնժամ ընդ մէջ անցանէ Տիգրան, սկսանի պայքարիլ զեղեցիկ բանիւք ընդ Կիւրոսի, որպէս զպիմախօսս Պղատոնի իմաստակացն, և ոչ ի չքմեղս լեալ զհօրն յանցուածս, օգտակարագոյն և իմաստասիրացոյն ցուցանէ յաղթողին զներեյն առ նուաճեալն, որոյ ի միտ առեալ իցէ զփնաս իւր և զգօնացեալ. և այնպիսի իսկ ասէ զհայր իւր եղեալ ի սակաւ յայնմ ժամանակի նուաճմանն քան յառաջին յօրացմանն: Հաճեալ Կիւրոսի ընդ իմաստուն բանս հայրասէր որւոյն զիջանի ի ներուճն՝ պահանջելով զսակ հարկին՝ զխափանեալն և զառաջիկայ ամին, և զօր արքային ի թիկունս բարեխոնական կուոյն. զոր առաւելաւն հանդերձ յօժարի հատուցա-

նել Հայն. այլ կիրրոս առնու միայն զհարկն պահանջեալ և 100 աաղանդ ի փոխ, և զկէս զօրացն Հայոց. այսինքն 4000 հեծելաց յուլթից անտի և 20000 հեանեակաց ի շորից բիւրուցն. որք եթէ սեփական գունդք էին թագաւորին ցուցանեն զմեծ զօրութիւն նորա, իսկ եթէ համօրէն Հայաստանի՝ սակաւք են: Ի վերայ այսոցիկ առ փորձ ինչ խնդրէ և փրկանս ի թագաւորէն վասն իւր և ընտանեացն, և նա խոստանայ տալ որչափ և ձեռն հասանիցէ. իսկ զՏիգրան հարցեալ վասն կնոջն՝ նա զանձն զլխովին ասէ մատնել ի փրկանս նորին: Որոյ փոխարէն նազաբանէ և կինն սիրային յորժամ յեա արձակմանն և դարձին հարցանէր զնա Տիգրան թէ որպիսի ինչ երեւէր նմա կիրրոս ըստ գեղոյն և վայելչութեան, և նա ասէր և բնաւ անգամ չնկատեալ իսկ զնա, իբրեւ ամենեւին պշուցեալ կայր յայն որ ասացն անձամբն լինել փրկանս իւր: Եւ այս զի սոցա նազաբանութիւնք, կամ Քսենոփոնեան հանճարաբանութիւնք՝ անցին ի կարգս առակաց, և յիշատակին ի հաւաքմունս գեղեցիկ ասից: Յետ այսց բանից պատմէ Քսենոփոն յառաջ խաղացեալ կիրրոսի իւրովք զնոջն և հայկականօք և յարձակեալ ի լերինս՝ ուր խաղտիք ամրացեալ ստէպ արշաւէին և նեղէին զՀայս. և նուաճեալ զնոսին՝ ստիպեաց ի դաշն խաղաղութեան ընդ Հայոց. և առ անկասկածութեան սոցին՝ հիմն արկ շինութեան բերդի մեծի և կացուցեալ ի նմանէ պահապան զոմն ի Մարաց, ինքն առեալ զհարկ և զգօրաբաժին Հայոց՝ Տիգրանաւ հանդերձ՝ դարձաւ ի Մարս առ կիաքսար:

Այսպիսի ինչ է համառօտութիւն սեթեւեթեալ երկար զլուցաց Քսենոփոնի, յորում ոչ միայն ժամանակն Տիգրանայ անճահ է ըստ վերոյ ցուցակութեանս, և եթէ եղեալ էր իսկ նման իմն զկպք ապաստմութեան Հայոց ի Մարաց՝ հարկ էր ի հնագոյն ժամանակս լինել յառաջ քան զտիրապետութիւն հնգեցուն աշխարհակալացն, կամ յառաջ քան զաւուրս Նաբուգոնոնոսորի՝ առ որով՝ Բաբելացոց և ոչ Մարաց ի դէպ էր հարկել Հայոց. իսկ յետ նորա մահուն՝ թէպէտ և զլուս ամրարձ Աժդահակ ձեռնբրիցութեամբ այլ ոչ զօրեաց արկանել և ի վերայ Հայոց, զՏիգրան գտեալ զիմակաց և զկիրրոս նմին համախոհ և համակամ. և մի քան զմի արուորագոյն ի մարտի և խոհականագոյն յառտնին և ի կենցաղական գործս:

Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

1. (էջ 1). Հ. Ղ. Աիշանի ծրագրին համեմատ՝ ներկայ գործս երկրորդ հատորը պիտի կազմէր Հայաստանի աշխարհագրութեան մը: Յետ անոր մէջ երկրին բնաշխօսական հանգամանքները դիտելու, հոս բնակիչներուն վրայ պիտի ճառէր: Գեղեցիկ ծրագիր, որուն երկրորդ մասը իրագործեց նախ, իբրև աւելի հետաքրքրական և ուսումնասիրելի: Հ. Աիշանի աշխարհագրական գրութիւնները բազմաթիւ են, բայց չենք գտներ անոնց մէջ այնպիսի մը՝ բաց ի, թերեւս, քաղաքական աշխարհագրութեան ետեւը զետեղուած Հայաստան գրաբար գրուածքէն, որ սահմանուած ըլլայ սկզբնաւորութիւն կազմելու սոյն երկասիրութեան: — Հոս ներկայացուած բոլոր ծանօթութիւնները Հ. Աիշանի կը պատկանին, երբ Ծ. Հրտ. ստորագրութիւնը չեն կրեր:

Ծ. Հրտ.

2. (էջ 2, տող 27). Իրաւունք ունէր Հ. Աիշան գանգատելու թէ սակաւ յիշատակարաններ և պատմագրութիւններ կան Հայաստանի մէջ, քանի որ, իր գրած ժամանակ, դեռ այնքան յառաջ գացած չէր Ուրարտագիտութիւնը:

Գիտեն ընթերցողք թէ վաճառ և իր շրջակայից մէջ և Արարատայ ստորոտը, սրբան թեւեազիր արձանագրութիւնք գտնուած են, որ կը ցուցնեն թէ Քրիստոսէ հազար տարիներ յառաջ կը բնակէր Հայաստանի մէջ Խաչրի անուամբ ժողովուրդ մը. իր հայրենիքը կ'անուանուէր Ուրարտու (Արարատ), իր մայրաքաղաքն էր Բիւայնա (Վան):

Ի սկզբան անընթեռնելի համարուեցան այդ արձանագրութիւնք՝ որ խորենացույ ժամանակէն սկսեալ՝ ամենուն զարմանքը կը շարժէին. « Հայեցուածն միայն զաւանայն ոք ի զարմանս ածէ » (Խոր. Ա. ԺԶ): Հայաստանի սահմաններուն մէջ կը թուի թէ շատ բեւեռազիր արձանագրութիւնք թաղուած կան. « Ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ նովին գրով յիշատակ ինչ հրամայէ » գրել, և ի բազում տեղիս՝ սահմանս նովին գրով հաստատէր » (Խոր. Ա. ԺԶ): Մորման գերմանացին հանեց նախ իր Entzifferung und Erklarung der armenischen Keilinschriften von Van, ուր ամէն բան հայերէնով մեկնել ուզեց, նոյնը պաշտպանեց, բայց տարբեր դրութեամբ և տարբեր մեկնութիւններով Յովսէփ Վ. Սանտաչանի իր « Les inscriptions cunéiformes urartiques » (Venise, 1900) մանրակրկիտ և ընդարձակ գործին մէջ. նոյն նիւթին վրայ աշխատած են գլխաւորապէս M. A. H. Sayce « The cuneiform inscriptions of Van » երկասիրութեամբ, գաղղիացին Լընդրման, որուն ուսումնասիրութիւնը թարգմանեց Հ. Մինաս Վ. Նուրիխան (Բազմավէպ, 1876, էջ 137, և այլն): Բուսաց մէջ Նիկոլսկի եղաւ որ Բեւեռազիր արձանագրութիւնք Անգրիկոսկաւում (Թրգմ. Խաչատուր Յովհաննիսեան, Ս. Ղազար, 1897) գործոյն մէջ ցցուց՝ թէ մեր Հայկազուն թագաւորներէն

չատեր՝ բեւեռագիր արձանագրութեանց մէջ ալ կը գտնուին, ինչպէս Մենուս, Արամէ, Արգիշտի (Արագած—Արմենակ) և այլն: Բայ ի Սանտալեան վ. էն, Հայոց մէջ ուրարտագիտութեամբ զբաղեցան Հիսարդիան էֆէնտի, Կարսպետ Բասմաչեան, (նախ Բազմավիպի մէջ, յետոյ իր խմբագրած Բա՛ւսուէր Թերթի մէջ):

Հ. Բ. Վ. Սարգսեան ալ ընդարձակօրէն համեմատած է ուրարտական արձանագրութեանց տեղեկութիւնները հայ աւանդութեան հետ. «Տեսութիւն Մարիբա» սեան աւանդութեան ըստ Մովսիսի Խորենացոյ» Բազմավէպ 1883, 1884, 1885:

Սակայն Ուրարտուի արձանագրութիւնք՝ փոխանակ հայ ազգի հնութիւնը հաստատելու, ըստ ոմանց՝ ցուցին թէ Հայաստան ամենէն առաջ ուրիշ կովկասեան ազգի մը հայրենիքն եղած էր, որովհետև արձանագրութեանց լեզուն՝ վրացերէնի ազգակից է. Խաղդիացոց աստուածները՝ հայկականներէն բոլորովին տարբեր են: Այսու հանդերձ դեռ կը գտնուին գիտնականներ՝ որ կը ջանան հայերէն խօսեցնել տալ այդ քարերուն, և յամենայն դէպս, Սյուրտու շնչուեցաւ այլ նորեկ գաղթականներուն (Հայերուն) հետ խառնուեցաւ, ապա թէ ոչ պիտի չկրնային ուրարտական աւանդութիւնները՝ Հայկազունեաց անուան տակ Հայոց մէջ ապրիլ:

Ե. ՀրՏ.

3. (յէջ 3, տող 5). «Պատուէր տուք յինէն Արարատեան գնդին և արքանա» գեան թագաւորութեանցն». Երեմիա, ԵԱ, 27:

Կարապետ Բասմաչեան (Բազմավէպ էջ 63, 1898) պաշտպանեց թէ սխալ է այս խօսքը Հայոց վրայ առնուլ. նա կը յիշէ թէ հոս, օտար թարգմանութեանց մէջ, Միկնի անունն ալ կայ. զայս պէտք է Հայ հասկնալ, իսկ Արարատեան գունդ «Ուրարտու» կը նշանակէր, ինչպէս Ասքանագեան թագաւորութիւնն՝ դրացի ուրիշ տէրութիւն մը: Սոյն հայ գիտնականին կարծեօք Արմէնիա միացումն է Ար (արատ) և Միկնի բառերուն. միկնիի ժողովուրդը Ուրմիոյ եզերքը կը բնակէր, և իր թագաւորներէն մին՝ կը ներկայանայ մեզ Յորայ գրքին մէջ, իբր միսթարիչ սոյն նահապետին:

Ե. ՀրՏ.

4. (յէջ 3, տող 17) «Ամենէն կատարեալ և ճոխ հին լեզուն Հնդկաց՝ այսօր» ոչ մայր, այլ քոյր ճանաչի զանդկին Պարսից և մեր հայկականին». Հ. Ալիշանի այս խօսքը բոլոր գիտնականներու կարծիքն է, և գրեթէ հիմն է արդի լեզուաբանութեան: Երազական է այժմ վիճել թէ արդի լեզուներէն որը եղած է արմատ և աղբիւր միւսներուն: Գիտնականք կ'ենթադրեն թէ ամենահին լեզու մը գոյութիւն ունէր, որ սկսած էր զաւառաբարբառներու բաժնուիլ, ինքը անհետացաւ, մինչ վերջինները իրենց գոյութիւնը պահեցին, նոր ստորաբաժանմանց ենթարկուելով: Մայր մ'էր որ կը մեռնէր, իր դստերքը թողով երկրիս վրայ: Ըստ այսմ սանսկրիտը, զէնտը, և հայերէնը քոյրեր են, թէ և անդրանկութեան պատիւը միշտ սանսկրիտին կը պատկանի արիական ճիւղին մէջ:

Հմտ. Բոբ. Համեմատական քերականութիւն, Մաքս Միւլլէր «Lectures on» the science of language» Փր. Միւլլէր «Grundriss der Sprachwissenschaft», Sayce «Principes of comparativ philology», Humboldt «Ueber die Verschiedenheit des menschlichen Sprachbaues» և այլն: Հ. Ալիշան զՀայաստան աշխարհաց կեդ-

րոն, միջադիր կը համարի. (տես յէջ 3, տող 22): Արդեօք ի՛նչ կը վկայութեան վրայ կը հիմնէ ասիկա: Մենք կը կարծենք թէ աւելի անձնական ենթադրութիւն մ'է, որովհետեւ եթէ ուրիշ փաստ մ'ունենար — Հայաստանի աշխարհագրական դիրքէն տարբեր — Հ. Ալիշան պիտի չյապաղէր զայն պարծանօք ի մէջ բերել ինչպէս ըրած է՝ ուրիշ կէտերու նկատմամբ: Սակայն կարելի եղաւ մեզ տեղ մը գտնել խորենացւոյ մէջ՝ որ նոյն կէտը անկնարկէ. «Ի Հայոց՝ որ ի միջոց աշխարհիս» (Բ Գիրք, Գ գլուխ, Տպ. 1865, յէջ 72):

Բայց ըստ մեզ հոս «աշխարհ» բառը երկրագունտ շնչանակեր, որչափ Հայաստան, և միջոց աշխարհիս՝ «Արարատ»: Արովհետեւ՝ Վաղարշակայ զօրք ժողովելու առթիւ՝ ի՛նչ հարկ կար ըսել՝ թէ Հայաստան աշխարհիս կեդրոնն է: Գիտուի նաեւ որ Բուզանդայ մէջ միջնաշխարհ բացատրութիւնը սովորական է Արարատայ համար. «Հասանէր ի միջնաշխարհն Հայոց՝ ի գաւառն Արարատու» — «Զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն պարսից ապականէին» (Բուզանդ, Գ): Հ. Ալիշանի բանաստեղծական համոզմունքը այսպիսի խօսքերէ ներշնչուած կ'երևայ. Երրակայ տեղագրութեան մէջ ալ Անին երգելով «աշխարհաց միջնակիտ» կը կոչէ զայն: Համեմատութեամբ Հնդկաստանի, Հայաստան աւելի արժանաւոր է անշուշտ այդպիսի կոչման մը:

Ի. Հրս.

5. (յէջ 4, տող 12) Բենիամ. Դուտել Եզոմ կ'անուանէ զՀայաստան Կիլիկեցւոց:

6. (յէջ 4, տող 18) Բարս՝ բարձր, տիլա՝ տեղի: Իսկ ըստ Պարսից շրջապատ ծատատունկ տեղի:

Պէտք է դիտել որ, ինչպէս կը գրեն Wetzer և Welte (Dictionnaire encyclopédique de la théologie catholique, tome XVII էջ 180), «le paradis était dans une situation extrêmement élevée sur une montagne dont le sommet s'élançait dans une région surnaturelle. Telle était l'opinion de S. Ephrem, de St. Basile, de S. Jean Damascène»:

Թէպէտ և լեռ մը, որչափ ալ բարձր ըլլայ, չի կրնար գերբնական աշխարհ մը մտնել, այնու հանդերձ սոյն կարծիքը կը զուգադիպի Հ. Ալիշանի ստուգաբանութեան:

Դրախտի վրայ գրած են Hardoin «De Situ Paradisi terrestris», Bochart «Geographia sacra», Michelet «Recherches sur la situation géographique du Paradis terrestre, Vienne, 1796. Schultess, «Le paradis terrestre, oéleste, historique et mythique» Zurich, 1821, և այլն: Հայոց մէջ՝ ինճիճեան «Հնախօսութիւն Հայաստանի» Հ. Մանուէլ Գաջունի «Հայաստանի աշխարհագրութիւն», «Արամայ» դրախտին տեղը» Բազմապէպ, 1843, Ա. 268:

Տէլիլ գերմանացին, որ Սուրբ Գիրքը բնաբանութեամբ բացատրել կ'ուզէր, Դրախտը Բարեւոյնի մէջ զետեղեց, որովհետեւ Եփրատ ու Տիգրիս արդէն Բարեւոյնի մէջ կը գտնուին, իսկ Շադ-Կի-արապը, կ'ըսէր նա, այն աղբիւրն է ուսկից դրախտի գետը կ'ելնէր: Եւ յիրաւի Շադ-էլ-արապ քիչ վերջ երկու մեծ ջրանցքներ կը յօրինէ, որ բարեւոյնական արձանագրութեանց մէջ Գեհնոն և Փիսոն անունը կը կրեն: Բաց ի ասկից, կ'ըսէ, Բարեւոյնի երկիրը, ուր մէկ սերմ երեքհարիւր կարող է յառաջ բերել, արժանի է, իր բեղնաւորութեանը համար, դրախտ ըլլալու:

Հմտ. այս մասին հետաքրքրական յօդուած մը Բագմակեպի մէջ, Թարգմա-
նուած նոյն գիտնականի մէկ գործէն. «Ո՛ւր էր երկրաւոր դրախտն» Բզմ. 1890,
Խը, 441:

Կ. ՀրՏ.

7. (յէջ 4, տող 20). Սակայն պէտք չէ զանց առնել, որ նախնիք մեր փոխա-
նակ Եղեմայ շատ հեղ Աղին կ'ըսեն դրախտին երկրին. արդ զանդիկ գիրք որ յետ
Մովսեսի գրոց հնագոյնք են այսպիսի խնդրոց համար՝ Հետեմ կամ Հետեմե կամ
Հեղենեկ կոչեն երկրիս առաջին բնակեալ և երանելի աշխարհը, զոր աւելի սովո-
րաբար կոչեն երիւնկ-վիճոյ կամ երեմեկոյ-վիճոյ, այսինքն վճիտ կամ սուրբ Խ-
րան երկիր. (Վահլ, Տիւպոս, Քանդու) այս առաջին Խրան կամ Էրէմէն (Տիւ-
պոս) հիմայ շատք ի գիտնոց անտարակուսաբար համարին զՀայաստան, ոմանք
զմասն մի նորա, այսինքն զԱլուան, որ է Սիւնիք, կամ զԱրարկատական, բայց
զսա ընդարձակագոյն առնլով: — Սէն-Մարդէն կ'ասէ. «Aeriémeno était incon-
testablement l'Arménie»

8. (յէջ 4, տող 29) Ըստ ոմանց մասնաւոր կերպով Արեւելք կ'անուանին ի
Գրոց աշխարհք Ասորեստանի, Քաղզէից, Հայոց և Պարթեւաց. (Պոտրան, Կալմէթ).
Եսայի, Խա, 2. «Ո՞ գարթոյց յԱրեւելից զԱրդարութիւն կամ զարդարն», կ'ըսէ
վասն Աբրահամու, որ կոչեցաւ յՈւրայ Քաղզէից-Կորդուաց: Նոյնպէս մոգքն Ա-
րեւելից ի բազմաց քաղզեայք կ'իմացուին: Մեր նախնեաց և նորոց մէջ սովորու-
թիւն է Արեւելից կամ Արեւելեան տուն անուամբ իմանալ զՄեծ Հայս: Bible de
Vence պարզապէս ասէ թէ Մովսէս Արեւելս կոչէ զՀայաստան: Օտար չէ սեպել
թէ Մովսէս հոս Արեւելք ըսելով՝ ոչ պարզապէս կողմ կ'իմանար, այլ զանուն
աշխարհին յորում էր Եղեմա. գրեթէ նոյնպէս անուանեց և իրեն ժամանակակից
հակամարգարէն Բաղասամ, որ կ'ըսէ իրեն համար թէ կանչուեցաւ ի Միջագետաց
ի լեռանցն Արեւելից, ուր էր իր ֆիքուր քաղաքը (Փիւլար, ընդ մէջ Լճէի և Հագ-
րոյ), զոր մեկնիք կ'իմանան ի Վերին Միջագետս, որ է ըսել Հայոց արեւմտեան
հարաւային սահմանն, և հաւանօրէն Մասիոս լերինք, Ամուլ սահմանն: — Արժան
է յիշել և զայս որ յազգաց բաժանման ըստ Մովսէսի (Կրնդ. Կ) Հայաստան ա-
րեւելագոյն աշխարհաց կարգն է, մասնաւոր թէ ամենէն արեւելեան հիւսիսային
աշխարհն է. Արգոնաւորդք, Հոմերոս, և ինչուան Եկադէոս՝ որ քիչ յառաջ է քան
զՀերոդոտ՝ Հայաստանէն անդին երկիր չէին ճանաչեր, որ իրենց համար վերջին
արեւելք կ'ըլլար: — Միով բանիւ, ի հին Ս. Գիրս Արեւելք կոչին ամենայն աշ-
խարհք՝ որ Եփրատ գետոյն ձախակողմն են և արդարեւ Հրէաստանի արեւելեան
դին կ'ըլլան:

9. (յէջ 6, տող 32). այդ անհաւանքն են Կալմէթ, Ուրնան, Պոտրան:

10. (յէջ 7, տող 10). Bible de Vence Եթովպիա համարի զՄիջագետս Երաս-
խայ և Կրի, ուր նախ բնակէին Սկիւթք:

11. (յէջ 7, տող 29). Սիւնիք բառը ըստ արդի լեզուագիտութեան հայերէն
սեռա բառին հետ աղերս չունի: Սիւնիք անունը կը զանեմք նաեւ ուրարտական
արձանագրութեանց մէջ Սուինիա ձեւով որ ճիշդ Սեւանի կը համապատասխանէ,
և ուրարտերէնի մէջ կը նշանակէ աւազան. հմտ. Նիկոլսիկ, Բեռնեագիր արձա-
նագրութիւնք Անգրիկովկասում, Թրգմ. Խաչատուր Յովհաննիսեանի, Ս. Ղազար
1897, յէջ 59, ուր կ'ըսէ. «Suinia կոչուած սկզբնական հասարակ անուն է «լիճ,

» անազան », բայց յետոյ կարող էր յատուկ անուն նշանակել և յատկապէս շիճ
 » կնօք-չայի: Այս կոչումն *Suinia* միանգամայն ծածկուած է Հայոց Սիւնիք ա-
 » նուամբ... ոչ թէ միայն ձայնակաւ, այլ և աշխարհագրական նշանակութեամբ
 » համապատասխանում է Սիւնիք անունին»:

Ջարմանալի է որ բիզանդացի պատմչաց քով ալ ճիշդ ուրարդական ձեւը կը
 գտնենք *Σοδάνα*, օրինակ իմն թեոփիլիակոսոս Սիմոկազայի մէջ, որ Մօրկայ կեն-
 ստագրութիւնը ընկող կը նկարագրէ Պարսից և Հռովմայեցոց մէջ տեղի ունեցած
 պատերազմները՝ Գանձակի և Սեւանի մօտ. «*Φέρε δὴ φέρε καὶ τὰ περὶ Σουανίαν τοῖς*
 » *Ῥωμαίους πρᾶχθένθα τοῖς τῆς ἱστορίας λυμῶσιν ἐπιφυτέσωμεν*» (յէջ 194): Յետ այս
 յոռաջարանին կը խօսի պատերազմին վրայ յիշելով զՍուանիս նաեւ յէջ 125,
 (քանի մ'անգամ), յէջ 154:

Ծ. Հրճ.

12. (յէջ 7, տող 30). Սի պիտի ըլլայ արմատ Սիւոյ, որպէս և ի թուրք լե-
 գու Սիան:

13. (յէջ 8, տող 6). Բայց մեծագոյն և յայտնագոյն նշան սեւանուն երկրիս՝
 անոր նշանագոյն և եզական մասն է Սեւան կզգին, յորմէ և Յոնն կոչեցեալ,
 որպէս և ծոնն Պարսկահայոց կապուտան. յորմէ գուշակուի և խորագոյն հնութիւն
 կզգուոյն և քնակութեանն, և հաւանօրէն խնդրեալ անունն ալ Սիւնեաց:

14. (յէջ 8, տող 9). Խոր. Բ, Ը: — Թէ և յետ Մովսէսի յաւուրս Յեսուայ
 ստէ խորօնեցի եկեալ գրանանացիս յերկրէ Գանանու ի Հայս:

15. (յէջ 8, տող 19). Մաններդ և Ռաւմէր փասիս համարին զԿրասիս:

16. (յէջ 8, տող 23). *Rubis*, կարմրագոյն ակունք մ'է, բերք Հնդկաստանի.
 այժմ ընդհանրապէս Ալին սուտակ բառի տեղ կարկենսն բառը համապատասխան
 կը դրուի անոր:

Ծ. Հրճ.

17. (յէջ 8, տող 33). Արգոնաւորդք գացին կողքիս Ոսկեգեղմը գտնալու հա-
 մար. այս զրոյցը, ըստ արդի գիտնականաց, ոսկեհանք մը կ'ակնարկէ:

Ծ. Հրճ.

18. (յէջ 8, տող 35). կամբալ, փառանգ, Բորոն սոկեհանքերը:

19. (յէջ 9, տող 5). Ռոզէն Միւլլէր համարի զկողքիս:

20. (յէջ 9, տող 13). — Դանսնակ; որ գաղղիերէն *malachite* կ'ըսուի, ընդ-
 հանրապէս կանաչ կ'ըլլայ և բիրեղային վիճակի մէջ, ոչ միշտ «ծովագոյն բիւրեղ»:

Ծ. Հրճ.

21. (յէջ 9, տող 17). կալմէթ, Պոշար, Պոտրան, Ռոմմէլ, Ռոպէն Միւլլէր,
Bible de Vence, Պիանգոյ, հին աշխարհացոյց վենետկոյ (1436), Դուռինայ հին
 աշխարհացոյց, Դուռնըֆոր, Պերթոյ, Ռաւմէր, Հանրին, Մոնիէ:

22. (յէջ 9, տող 28) Սոյն կոչումը, որուն տեղը չէ նշանակած Ալիշան, բայց
 որ Տօնական ճառընտիրէ մ'անունուած կ'երեւայ՝ հիմնուած է հիներուն այն հա-
 մոզման վրայ՝ թէ Գեհն և Նեղոս նոյն գետերն են, նկատելով մանաւանդ որ
 Նեղոս կը պատէ զԻթովպիա, թէպէտ և թովմա Արծրունի, Բէլայ վրայ խօսած
 ժամանակ Բաբելոնի ալ Երովպիս անունը կու տայ: «Եւ քանզի էր Բաբելոն

» վիճակեալ Սեմայ՝ և բռնազբօսութեամբ Ներբովթ յինքն գրաւէ, և հաստատէ անդ
» զթագաւորութիւնն Եթովպացոց» (Յէջ 6):

Ադ է պատճառը որ Հայաստանի մէջ դրախտի երեք գետերը միայն կը տեսնէ
մեր հեղինակը, անշուշտ մին՝ Եգիպտոսի թողլով:

Ծ. ՀԲՏ.

23. (յէջ 10, տող 8). Ըստ յոգունց կարծեաց ի կողմանս Տարօնոյ դրախտն:

24. (յէջ 11, տող 8). ԴուռնըՓոր, ձեմելլի, Քոխ, երեքն ալ ականատեսք տե-
ղեացն կու հաւանին որ կարնոյ կողմերն էր դրախտն, առաջինն էջմիածնայ-
սահմանն ալ մէջը կ'առնու, որ, իր ժամանակը, հիմակուանէն աւելի մշակեալ
կ'երեւայ:

25. (յէջ 11, տող 23). Քոխ, Բ, 371:

26. (յէջ 11, տող 25). Հ. Փիլիպ. կարմեղական ճանապարհորդէ յառաջին կէս
ժէզ դարու ի Հայս. լսեր էր թէ դրախտն դեռ Մասեաց հովիտներուն մէկուն մէջ
պահուած է յԱստուծոյ, անմնաս ի ցրտոյ և ի տապոյ: (Շարտէն):

27. (յէջ 11, տող 27). Յամին 1687 դէպ ի Քրդաստան ուղեւորած քննող ան-
ձինք պատմեն, թէ քրիստոնեայք երկրին յամասոս բացօթեայ լինէին ի Պինկէօլ,
որոյ հազար աղբերք հաւաքէին ի հովտին ի չորս տեղիս և գործէին չորս գետս
մեծամեծս, Եփրատ, Տիգրիս, Goézo և Chalich (Գայլ), որոց ջուրք բազում ան-
գամ խորասուզեալ ընդ երկրաւ, վերայայտնէին. դարձեալ ասէին անդ եղեալ ըզդ-
րախտն:

28. (յէջ 12, տող 5). Ըստ այսմ և մերս Վարդան. «Դրախտն որ կայ ընդ
» Արեւելս, յերկրի արմատացեալ, ի կատարս լեռինն բարձու, որ հաւասար է զըն-
» տին լուսնի, անծորրելի ուղղով, և անթաւամ սաղարթիւք»:

29. (յէջ 13, տող 9). Մխ. Այրիվանեցի յետ 42 աւուրց ստեղծմանն՝ ասէ զԱ-
դամ մուծեալ ի դրախտ:

30. (յէջ 13, տող 34). Թէ՛ Պիւֆֆոնի Ադամը և թէ՛ Միլտոնինը կը խօսին
զգայարանքներու առաջին բացման և առաջին տպաւորութեանը վրայ:

Միայն Միլտոնի Ադամը աւելի բանաստեղծ է և աւելի շնորհալի գոյներով
կը ներկայացնէ իր տեսածները. մինչ Պիւֆֆոնինը՝ աւելի գիտնական է: Մին դրախ-
տի մը վրայ կը խօսի, միւսը՝ մեր ճանչցած սովորական բնութեան վրայ: (Սոյն
հատուածները կարելի է ընթեոնուլ հայերէն թարգմանութեամբ ի Նրադկարադ
հատուածու, Վենետիկ, 1887, Ա. հտ. յէջ 20, և Բ հտ. 162):

Ծ. ՀԲՏ.

31. (յէջ 15, տող 3). Ինչպէս ըսինք 4^o ծանօթութեան մէջ, արդի լեզուագի-
տութեան դէմ պիտի ըլլար ո՛ր և է լեզու մը – ինչպէս որ զայն կը ճանչնանք հի-
մայ, նախամարդոյն ընծայել: Բառերու հնագոյն ձեւերը ամփոփուած չեն մաս-
նաւոր լեզուի մը մէջ, այլ դրուած այլեւայլ ազգերու քով, և լեզուաբանութիւնն
է որ զանոնք պիտի հաւաքէ, դասաւորէ, ըստ կարելւոյն նախնականը վերականգ-
նելու համար, որ անշուշտ շատ քիչ բառ կը պարունակէր, վասնզի բառերն ալ
զուգահեռաբար կ'աճին՝ մարդկային գաղափարներու հետ:

Ծ. ՀԲՏ.

32. (յէջ 15, տող 30). Արիստակէս Վրդ. յաղագս հաւակատեաց . « Աւուրս » իս (ասէ կացեալ) Ադամայ ի պատուէր Արարչին... Զայս աւանդութեամբ ի » բնախօս արանց լուայ, զոր և կարելոր համարեցայ ի տեղուջս գրով նշանակել . » քանզի կարի հաւատարիմ էր ասողն : — Զի՛նչ արդեօք տայր մեզ հաւատսիս :

Հին Տօնամակք, ոչ աւուրս, այլ ամս 40 ասեն կեցեալ ի դրախտին, և ոմանք 30 ամ ըստ կենաց Տեառն մերոյ :

33. (յէջ 21, տող 10). Եպիփանու սոյն գրութեան յունարէնն ալ հասած է մեզի. սա վերնագիրն ունի. « Ἀποκαλύψες τοῦ Ἀδάμ ». Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան ընդարձակ տեղեկութիւններ կու տայ իւր « Հին կտակարանի անվաւեր գրոց » ուսումնասիրութեան մէջ, համեմատելով զայն՝ ուրիշ Ալլաւգիոք կոչուած աստուածաշնչական վիպասանութեանց հետ, (տպ. վենետիկ, 1898) :

Ադամայ դրախտէն աքսորուիլը քրիստոնէութենէ առաջ եւս, հրէական շրջանին մէջ, գեղեցիկ զրոյցներու առիթ եղած էր, և թարգմանութեամբ ծաւալած գրեթէ ամէն ազգերու մէջ : Հայկականները, որ ժողովրդեան մէջ ալ դեռ շրջան կ'ընեն, այլ և այլ դարերու արտադրութիւնք են, Հ. Սարգիս Վ. Բովսեփեան հաւաքեց զանոնք Ս. Ղազարու ձեռագրաց մէջէն, և հրատարակեց հետագայ վերնագրով . « Թանգարան հին և նոր նախնեաց, Ա հտր. Անկանոն գիրք հին կտակարանաց, » վենետիկ, Ս. Ղազար, 1896 ». լատիներէնի մէջ Liber poenitentiae Adamae, յունարէնի մէջ Βίος Ἀδάμ տիտղոսը կը կրէ : Այդ զրոյցները գիտնական աշխարհի, մանաւանդ բողոքական շրջանակի համար, մեծ կարելորութիւն ունին, ըլլալով Աստուածաշնչի բնագրական քննութեանց համար յաճախ սքանչելի աղբիւրներ. անոր համար ալ շատ ուսումնասիրուած, օր. իմն, Հառնաքէն, Geschichte der altchristl. Litteratur, Leipzig, 1893, Հենրիկոս Գելցեր անուղղակի իւր Die byzant. Chronologie Leipz. 1885, Գիլման Das christliche Adambuch des morgenlandes, 1853, Տրուպա Der kampf Adams, և այլն (Տէս այս ամէն կէտերուն նկատմամբ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանի Ուսումնասիրութիւն անվաւեր գրոց ձիւն կտուկարանի էջ 8-65) :

Ծ. Հրս.

34. (յէջ 23, տող 11). Յերբայեցերէն Մարդն կ'ըսուի իշ, կինն իշլա. ըստ այսմ Պարսք զառաջին մարդն կոչեն Միշիա, զկինն Միշիուս, նման իմն ի լատինն՝ մարդն Վիլր, կինն Վիլրափօ : — Առ մեզ և առ արիականս Այր անուն սեփական մարդու և կտրճի. իսկ կինն՝ համանունութեամբ առն՝ Խրար կոչի. և այսմ կու յարմարի Ադամայ ըսածն. « Սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ » (եղար, իբր եղիսլ յասնէ) : Սկանտինաւեանք Աւք կոչին զառաջին մարդն, Խրկարա՛ զկինն :

35. (յէջ 23, տող 30). Թուական. Ստուգ. Ա. 322, է յայլ կարծիս. հաւանական աստ՝ փութով ընդ մերժիլն Ադամայ ապականել դրախտին և նմանել շրջակայ տեղեացն :

36. (յէջ 23, տող 35). Իգեկիէլ. լա, 8-9. զԱտրեստան նմանցնելով բարձր և մեծուղէչ նոճոյ մը, կ'ըսէ թէ « հախանձեցան ընդ նմա ամենայն ծառք դրախտին փափկութեան Աստուծոյ ». այնպէս կ'երեւցնէ թէ դրախտն դեռ չէն կայր. թէ և բանաստեղծութեամբ կրնայ անցեալ ժամանակէն ալ ներկայացնել :

37. (յէջ 34, տող 8). Միւ. Այրիվ. « Գրոբէական սուրն՝ որ պահէն զդրախտն՝

շանթիքդ է որ անկանի յերկնից յահ և յերկիւղ ամպարշտաց. իսկ գեղարգնա-
» ւոր և աշտէաւոր սերովբէքն՝ ընդ հեռանալն Արամայ ի դրախտէն՝ և նա վե-
» բացաւ »:

38. (յէջ 24, տող 23). Հ. Ինճիճեան եւս գրութիւն մ'ունի « Մնացորդք նշանաց
» Եղեմայ կամ տեղւոյ դրախտին » Հնախօս. Ա., 266: — Սոյն հօր մի և նոյն
նիւթի վրայ աւանդածները կարելի է գտնել նոյն Հեախ. 245-264:

Ծ. ՀրՏ.

39. (յէջ 25, տող 26). Սոումէ այսպէս կ'երգէ (Աստուածային վէպ, Ե).

Հովանաւոր փուռք Տիգրեայ, ո՛վ Հայաստան դու երկիր,
Զոր իւրացոյց Եւայն եղեալ առ Եղեմայ տարագիր:
Bords ombragés du Tigre, Arménie!
Pays qu' Eve adopta quand l' Eden l' out bannie.

40. (յէջ 25, տող 33). Այսպէս կը դնէ Bible de Vence:

41. (յէջ 25, տող 40). Փաւստոս Բուզանդ, խօսելով սոյն Եպիփանի վրայ
կ'ըսէ. (Գլ. ԻԵ. էջ 994). « Եպիփան, և էր սա ազգաւ յոյն և նստէր սա ի մեծի
» լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչեն աթոռ Նահատայ »:

Ծ. ՀրՏ.

Ընդ մէջ Եղեմայ և Նայիտայ հաւանօրէն դժուարագնաց, նեղ լեռնանցք մը
կամ կիրճ մը կայր և թերեւս հոն էր պահապանն հրատուր. յայտ ակնարկէ սըր-
բազան երգիչն մեր, « Սովաւ (խաչիւ) մտցուք ընդ նեղ դուռն անձծացեալ ճա-
» նապարհին, որում ցանկային երկրածին որդիք մարդկան »:

Ծ. ՀԵՂ.

42. (յէջ 26, տող 9). — Մխ. Այրիվանեցի « Յայլում ուրբաթու յանցեան
» նախաստեղծքն և ելին ի դրախտէն, և անկան ի Սէլան կղզին »:

43. (յէջ 26, տող 13). Անգղիացի մը երկու դար յառաջ:

44. (յէջ 26, տող 27). Ի պատմութեան միում թարգմանելոյ յԵրուսաղէմ ի
Սիմէոնէ հոգեւոր Տեառնէ գրի 18 ամ և 2 ամիս:

45. (յէջ 26, տող 32). « Յարարչութենէն զժամանակս ոչ ոք կարացցէ գիտել
» ի մարդկանէ, բայց միայն յարտաքսելոյն Արամայ ի դրախտէն »: Սարկաւազ
վարդապետ:

46. (յէջ 27, տող 8). Վարդապետ ոմն ասէ. « Եւա յերեսուն տարին մէկ
» փոր կու ծնէր ջուխտ. մէկն արու և մէկ աղջիկ »: Իսկ Մխ. Այրիվանեցի.
« Եւա երկու երկու ծնանէր, և ծնաւ 15 Ենուեդս »: Սա կ'ընծայէ 30 զաւակ, իսկ
առաջինն 60:

Ինչ որ Հ. Ալիշան հոս վարդապետ ոմն կոչէ է Պատմութիւն որդւոցն Սղա-
մայ կայսերի և Սլեյի (տպ. Ս. Ղազար. 1896, ի Հ. Սարգիս Յովսեփեանէ): Հ.
Բարսեղ Վ. Սարգսեան իւր Անվանի կոսկարանաց ուսումնասիրութեան մէջ կը
ցուցնէ թէ այդ աւանդութիւնը Յունաց և Ասորոց քով ալ կայ (Հմտ. Մեթո-
տիոս, Գլ. 3. Ապուլֆարած, Պտմ. Հարատութեանց, էջ 4, Եւզեքիոս Աղեքսանդ.

բացի, Տարեգր. Հո. Գ, էջ 15. ՄԻՔ. Ասորի ժամանակագրութիւն, Սինգեզոս և Կեղրենոս: Իսկ ի մերայնոց (համտ. բաց ի Մխիթար Արիվանեցիէն վարդան և Սամուէլ):

Ծ. ՀրՏ.

47. (յէջ 27, տող 12). վարդան, Մխիթար Արիվանեցի:

48. (յէջ 28, տող 23). Յառասպելայօզ վկայաբանութեան Յովսիմիոսի Ռափեւս կոչի հրեշտակն կամ ոգին՝ « որ ընդունէր զգոհն Աբելի, և իջեալ զիգէր » զսեղանն, առ ի պատրաստական շինելոյ զընծայսն իւր »:

Աւանդեն Հնդիկք թէ յառաջին դարուն մարդիկ մեծ պատարագ մը մատուցին Աստուծոյ, որ իջաւ յերկիր տեսնալու զայն. և թուի թէ այս պատարագն Աբելի էր:

49. (յէջ 29, տող 2). Եպիփան, նման այլոց աւանդողաց, այսպէս նկարագրէ. « Ատէ կայէն ցԱբել զուարթագին երեսօք » երթանք դաշտ զբոսնելու. Աբել կու խաբուի, որթատունկի մը քով կ'երթայ, իր դաժան եղբայրը զայն կու պատատէ ճիւղերով, և այսպէս կու դիւրացնէ մարդասպան գործը: Այսպէս կ'աւանդէ Եպիփան իւր Յադագս սպանման գործին մէջ, Գլուխ Ա:

50. (յէջ 29, տող 7). վարդան առ Հեթում:

51. (յէջ 29, տող 30). Ոմանք մեծագոյն նշան՝ զդողալն և երերալն իմանան. այլք զուտելն և զկտանալն, զգաղբելն և զհանգչիլ, զթմրիլն և զքնանալ:

Հայոց մէջ այնքան տարածուած էին կայէնի վրայ յերիւրուած զրոյցները՝ որ յիշատակարան կամ արձանագրութիւն գրողք, յաճախ իրենց կտակը շնչողները նզոված ժամանակ կը չարամաղթեն երերալ կայէնի պէս. « Եղիցի երիւրալ և » տատանեալ, որպէս կայէնի » կ'ըսէ, օրինակ իմն, 1233ին գրուած արձանագրութիւն մը որ կը գտնուի Գուգարաց կայան բերդին մօտ (տես սոյն բառը Բնչիւ. Բառ. յէջ 271, ուր զետեղուած է ամբողջ արձանագրութիւնը):

Ծ. ՀրՏ.

52. (յէջ 30, տող 4). Եթէ տեղ մը յարմարցնել պէտք է՝ որպէս Կալիսայ զԵրբոսն, Ենովքայ ալ յարմարցնենք զՂևի, մանաւանդ որ ի Թուրքաց երբեմն կու չուեր է Խանաք գալէսի: — Ծ. ՀնԵ:

Հ. Ալիշանի յիշած կոչումը կը գտնուի յէջ 6 վարդան պատմչի (վենետիկ, 1862) և բաւական մթին է. « Ղամէք խոստովանի կանանցն այր և երիտասարդ սպանեալ, զոր ասեն եղբարք արդարոյն Ենովքայ, և ոչ թէ զկայէն և զորդի նո » րա, զոր նման հօրն ասեն, զոր Աստուած ասաց՝ ոչ ումեք սպանանել զնա »:

Ծ. ՀրՏ.

53. (յէջ 30, տող 18). վարդան Պատմիչ ասէ աւանդել ոմանց՝ թէ այրն սպանեալ էր կայէն, և երիտասարդն՝ որդի նորա, բայց ըստ այլոց՝ սպանեալքն էին եղբարք արդարոյն Ենովքայ, զորոց կանայս էառ Ղամէք. իսկ կայէն նա խատալից եղեալ՝ մեռանի:

54. (յէջ 30, տող 25). Ոմանք զկայէն ապաշխարեալ և փրկեալ համարին, հասարակաց կարծիքն հակառակ է այդմ:

55. (յէջ 30, տող 27). Եպիփանեանն յետ 7 անգամ 7 տարւոյ (49) սպանուած համարի զկայէն ի կոյր Ղամէքայ:

56. (յէջ 31, տող 17). Եղ. Զմբուհիացի ասէ՛ ըստ Ափրիկանու, 85. Դամասկ. և Ինանոսի:

57. (յէջ 31, տող 19). Մահմետականք երկու որդի ալ կ'առասպելեն Ադամայ՝ Ապալհարեբ և Ռոքայել:

58. (յէջ 31, տող 27). Ըստ Մովսէս Խորոնեցւոյ. Ա. « Յօգնականութիւն կոչէ » զԱստուած »:

59. (յէջ 32, տող 10). Եւտիփիոս Տարեզր. առ Փաբրիկ. 241:

60. (յէջ 32, տող 23). Ոմանք համարեցան ի Քերրոն Պաղեստինոյ թաղեալ զԱդամ. վասն զի բանն Յետուայ ԺԴ. 15 « Անուն Քերրոնի էր յառաջ քաղաք » Աբրոկ. նա էր մայր քաղաքաց Ինակիմացն ». յայլ թարգմանութիւնս ասի. « անդ էր Ադամ առաջինն հսկայից »:

61. (յէջ 34, տող 12). Ոսկեփորիկ. « Ինան Սէթ զազգ իւր զԼերամբն յանդի- » ման դրախտին. իսկ Կայէն և ազգ իւր բնակեցաւ՝ ուր եղբայրասպանութիւնն » գործեցաւ »: Ըստ այսմ և Մեթոդիոս:

62. (յէջ 35, տող 7). Երևոյթայ ընծայուած երկասիրութիւնը հետագայ տիտ- ղոսը կը կրէ. « Ինովքայ արդարոյ տեսիլ ». երկու ձեռագիր միայն հասուցած են զայն մեզի. օրինակ մը Երուսաղեմի Ս. Յակոբայ վանքին մէջ, ուրիշ մը՝ Էջ- միածնայ մէջ (ձեռագիր թիւ 924):

Նոյնպէս կրկին հրատարակութիւն ունեցած է. նախ Ալարատ ամսաթերթի մէջ, 1894ին, երկրորդ Հ. Սարգիս Յովսեփեանցի հրատարակած թանգարանն ին և նոր նախնեաց գործին մէջ (վէնետիկ, 1896):

Երևոյթայ երկասիրութիւնը քննադատուած է Հ. Բարսեղ վ. Սարգիսեանէն Արևիկայի կոտակարանաց ուսումնասիրութեան մէջ (վէնետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 133):

Ծ. Հրս.

63. (յէջ 35, տող 16). Զայս աւանդէ Յովսեպոս. Խորեն. « Սորա երկուցն » յարձանագրութեանց ընդդէմ երկուց հանդերձելոցն, թէ որպէս ասէ Յովսեպոս, » թէպէտ և ուրն անյայտ ». (կամ « ուրաւում՝ յայտ է »):

64. (յէջ 35, տող 20). Վանական վարդապետի:

65. (յէջ 35, տող 33). Ոսկեփորիկ. « Սեթայ որդիքն փոքր էին, կարճամէջք » և կարճավիզք »:

66. (յէջ 37, տող 32). Թողլով գտարա՛այն կարծիս քաղդէական շրջանացս, յիշեցուք զհաւաստիս այսպէս իմանալոյ զամեն. Կալլիսթենէս ասէ զաստեղա- քննութենէ Քաղդէացւոց ցԱղեքսանդր 1903 ամ. Կալիգենէս 720,000 ամս ասէ, զորս փոխեալ յաւուրս լինին 1977 ամք, 68 ամ աւելի, և թուի ժամանակ գրու- թեան հեղինակին նոյնքան ամօք կրսեր քան զԿալլիսթենէս:

67. (յէջ 38, տող 7). Տէվիեօլ: — Նմանութիւն անուանց Ազովրոս և Ովրոս, Աղազ – Արոս և Աւէս և այլն:

68. (յէջ 38, տող 16). ԶԼոկոս յիշէ Ստեփ. Բիւզանդացի:

69. (յէջ 39, տող 20). Վասն զի յերկրորդ ամի շրհեղեղին 100 տարու էր, երբ ծնաւ զԱրփաքսադ: Դարձեալ Ս. Գիլք (Երնդ. Թ. 21) յասելն « Սեմայ... » եղբօրն Յաբեթի երիցու, Յաբեթի երիցութեանն վկայէ: Ըստ մերոց Յայսմա- ւուրաց (մայիս 17) Սեմ է անդրանիկ ծնեալ 100 տարի նախ քան զՇրհեղեղն.

Քամ ծննալ յետ 30 տարւոյ, և Յարեթի՛ այլ եւս երեսուն տարւոյ. որով ի մտանելն ի տապանն՝ յետին քառասնամեայ էր, Քամ 60 ամաց Սեմ՝ 100 ամաց: Քամայ կրսերութեանն ալ վկայէ Ս. Գիրք. Եննդ. Թ. 24:

70. (յէջ 39, տող 28). Ըստ Յունաց՝ Յապետ մի ի Տիտանանց ունէր կին գԱսիա:

71. (յէջ 41, տող 11). Շատ մեկնութիւնք և հաշիւք կան չափու տապանին, որ էր 300 կանգուն երկայն, 50 լայն՝ և 3) բարձր. արդ կանգունս այս, ըստ ոմանց է եգիպտական կանգուն. որով երկայնքն է 512՝ իտալական, 85՝ լայն, 51՝ բարձր. և բովանդակէ 42413 տակառաչափ. ընդարձակագոյն քան զՍ. Պետրոս տաճար Հռովմայ:

72. (յէջ 41, տող 20). Թովմ. Արծ. « Ոմանք ասեն ի Լաւոդիկիա փոքրացուց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի ասիական կոչի կողմ, և յոյժ անհաւատի են ասացեալքն. քանզի սուրբ Նահապետացն տասանց՝ բնաւ ոչ երբէք ումնք երեւի ասել ի միջերկրայս ունէր բնակութիւն, այլ ի հրամանէ Աստուծոյ՝ յանդիման դրախտին բնակելով ». Թովմ. Արծ. Ա դպր. Ա Գլ. 27 էջ (Ս. Պետրոսբուրգ, 1887):

Խոր. Աշխարհգ. « Կիւրոս (քաղաք փոխգիտոյ) այսինքն տեղի տապանին Նոյի » շինելոյ, եթէ առասպել է, և եթէ ճշմարիտ՝ ոչ գիտեմ »: Այսինքն Քիւրոս ըստ Յունաց, գաւար ըստ մեզ: Այս յիշատակ վաւերացնեն Ապամիա փոխգիտոյ քաղաքի հին կայսերական դրամքն, որոց վրայ տապանին պատկերը դրոշմեալ է:

73. (յէջ 41, տող 23). Ս. Գիրք ասէ ի Ժէ (ըստ մերումս Ին) աւուր Բ ամսոյն ցտկիզքն շրհեղեղի. ոմանք զամիսս իմանան Նոյի կենաց և ծնունդի օրէն հաշուելով. այլք Հրէից տարին, բայց ոմանք զքաղաքականն և ոմանք զսրբազանն. մեք կարծեմք զյետինս, այսինքն զսրբազանն որ սկսանի ի գարնային հասարակօրէին, ի 21 մարտի. ըստ նոր տօմ. որով մուտք Նոյի ի տապան լինի ի 27 ապրիլի. ըստ այսմ հաշուեմք և զայլ աւուրս դիպաց շրհեղեղին, որ ի թարգմանութեան մերում տեւեաց ամ մի ամբողջ, իսկ ըստ այլոց և ըստ մեզ 10 օր աւելի, այսինքն 375 օր մինչեւ յեւս ի տապանէն: Յայսմաւուրք յ17 մայիսի ասեն զտկիզքն շրհեղեղիս:

74. (յէջ 41, տող 25). Վասն Անաւդեայ աւանդէ ոմն ի մերոցս՝ թէ յաւարտել զշինութիւն տապանին՝ ի քուն մտաւ, և երբ արթնցաւ՝ արդէն ջուրն սկսեր էր ծածկել զերկիր՝ և տապանն հեռացեր. բարձր լերան մը վրայ ելաւ՝ և հոն խնդկեցաւ. և երբ Նոյ արձկեց զագուան՝ Անաւդեայ դիակն գտնելով՝ սկսաւ ուտել և չդարձաւ ի տապանն:

75. (յէջ 41, տող 29). Վարդան առ Հեթում. « Ժե կանգուն ջրոյն բարձրաւ » նալն քան զքուն լեռն բարձր, պատճառն այն էր զի հսկայքն այնչափ էին, » զի ծածկեցէ զնոսա »:

76. (յէջ 42, տող 13). Աբիդենոս 3 օր վերջը ասէ արձակել զագուան:

77. (յէջ 42, տող 33). Թէպէտ և դարձեալ տարախոհք ոմանք ինչուան ի Սկանտինաւիա, ի Հնդկիս, ի Չինս և նաեւ յԱմերիկ իջուցեր են տապանն: Իսկ մօտագոյն տեղերէ կանուանեն ոմանք զԵլպրուգ ի Կովկաս կամ ուրիշ լեռմը, զՍընճար Ասորոց, — Կելենիս ի Փոխգիա, Պոնտական լեռներ, ճանեաց աշխարհ, և այլն:

78. (յէջ 43, տող 9). ՅԱրարատ (Մասիս) ասեն Եղիշէ, Կալմէթ, Ս. Հերոնիմոս. Փիլսոսորդ Գ. ԽԸ:

— Յայտմ. Արեգ. «Նստաւ տապանն ի լերինն Արարատայ որ է Աւագ Մա-
» սիս. և այն գովութիւն և պարծանք է ազգիս Հայոց և աշխարհիս մերոյ: Եւ
» ոչ միայն տապան այլ և Բ գետքն, Տիգրիս և Եփրատէս»:

Թոմ. Արծ. «Տապանն յարեւելեայն ի միջոց աշխարհի, հանգեաւ ի լերինս
» Կորդուաց»:

— Տօն պատշաճ. «Նոյ, որոյ ասացաւ, Սա հանգուցէ զմեզ պատարագան որ
» արար ի սեղանն զոր շինեաց ի լեռանն Կորդուաց»:

79. (յէջ 43, տող 12). Բազմավէպ, Բերոսոս, Յովսեփոս: — Ոմանք զՆպատ
լեռան համարեցան յանուն Նոյի իբր Նոյապատ կոչած. և այլք զնոյն Լուպար
յիշեալ յԵպիփանէ. ըստ այսմ Նոյի Նախիջեւանն այլ կրնայ յարմարիլ Նաւիկայ
գեղջ, որ չէ շատ հեռի ի Նպատայ:

80. (յէջ 43, տող 17). Եղիշէ Մեկն ծննդ. «Արարատու լեռն ոմանք զԿոր-
» դուացն ասեն»: Այս սուրբ վարդապետս զանազանութիւն մ'ալ կ'ընէ. «Գոյ և
» ի Պաղեստինեայ և ի Դամիբոս Արարատ, այլ մերս Արարաթ լսի». Սիբիլական
մատենանն ի Փոռիգիս համարի զԱրարատ. և կարծի Մոնտանոսի Փոռիգացոյ հե-
րետիովտապետի հնարեալ զՍիբիլական տաղոդ գէթ զԱ և զԲ երգսն: Սարա-
րագ ասեն Բուզանդ, Կիւրեղ ի մեկն ծննդ. Բարսղի Հարցման, Խորոնեցի ի պոմ.
Հոփոս:

Տպագրական սխալմամբ Հ. Ալիշանի բնագրին մէջ Սարատայ անուր անունը
դրուած է, որ պիտի ըլլայ Սարարայ:

Նորայր Բուզանդացի շատ հանճարեղ կարծիք մը յայտնած է այս մասին. կ'ըսէ
նա թէ փոխանակ Ս. Գրոց հայ թարգմանութեան մէջ՝ «ի յերինն Արարատայ
» կարդալու՝ պէտք է ընթեռնուլ՝ ի լերին Սարարատայ», զոր Բուզանդ յիշատա-
կած է (յէջ 22, 24):

Ե. Հրս.

81. (յէջ 43, տող 27). Տնս Եպիփան. Հերետիկ. Ա. ա. 4 և 5 և Նիկ. Դամաս-
կացի: — Կեդրենոս, Բուզանդացի պատմիչը յետ սա տարտամ բացատրութիւնն
ընելու «τὰ ὄρη Ἄρ ρὰτ ἐν Παρθία τῆς Ἀρμενίας εἶναι, τινὲς δὲ φάσιν, ἐν Κελαιναίς
» τῆς Φρυγίας» (Անդ, յէջ 20). յէջ 21 կ'ըսէ. «Նոյ տնկեց այգի ի լեռնն Լուրան
» Հայաստանի», «Νῶε ἐφ' : εὐσεν ἀμπελῶνα ἐν ὄρε: Δουβάν τῆς Ἀρμενίας»:

Կ'երեւի թէ կամ Կեդրենոս Եպիփանէն առած է, կամ այսպիսի աւանդու-
թիւն մ'ալ կը գտնուէր հնոց քով, թէ և դժուարին է Հայաստանի մէջ Լուրան
անուամբ լեռ գտնել:

Ե. Հրս.

Միևիաւ այս՝ ըստ ոմանց է Մանաւագեան երկիրն, ըստ լատին թարգմանու-
թեան Սուրբ Գրոց. Պարիսն՝ ըստ ոմանց Վարսալ Բագրեւանդայ, ըստ այլոց Պա-
սիս ընթեռնիլի, լծորդ Մասեաց: Ոմանք ըստ յունին վարիս «նաւ» թարգմա-
նեն, և ոմանք կարծեն «բարձր»: — Ս. Ամբրոսիոս՝ կոչէ «Կուարատ», Փրե-
կուլին, Պոգաձիդ՝ «Ոկիլա», Յովսեփոս «Կերոն» յԱղիաբեն, Արատոս, ՅԿ.
Ոսկերբան, Աբիւղենոս՝ պարզապէս «Լերինք Հայոց»:

82. (յէջ 43, տող 29). Խոր. Աշխարհ. « Ձոր և կոստանդիանոս Անտիոքացի
 * ի քրիստոնէական տեղագրութեան ասէ յաղագս տապանին անցանելոյ յարեւել-
 » լեան երկրէն առ մեզ ի մէջ կոյս »: (Աշխարհացոյց, յէջ 589, տպ. 1865):

83. (յէջ 44, տող 19). Այս խնդիրներուն վրայ ընդարձակօրէն գրած է Սիմոն
 Վիկտոր գերմանացի շանդէս Ամսօրեայ 1901:

Թոփչեան նոյն գրութեան համառօտութիւնն ըրաւ Նոր Դարի մէջ, 1901,
 152-4:

Միւրաքան վ. 1901ի « շանդէս Ամսօրեայ »ի մէջ մանրամասն ուսումնասիրեց
 թէ որ լերան վրայ իջած էր Նոյայ տապանը:

Murad գերմանացի առանձին գործ մը նուիրեց սոյն խնդրին (որ թարգմա-
 նեցաւ նաեւ ի Ֆազմավկայ շանդիսարանի, 1902), հետագայ խորագրով. « Ararat
 und Masis », Heidelberg, 1901:

Ն. Ավիշան կ'ըսէ. « Այսչափ կարծեաց և զրուցաց միաբանութիւնն այս է նախ
 թէ տապանն և Նոյ իջան Հայոց երկիրը բարձր լերան մը վրայ. և երկրորդ որ
 այս լեռն կամ ձիւնալուռն ինչպէս Վարարտայ պարուն մէջ էր և կամ ի կոր-
 դուսն »:

Անհրաժեշտ չէ այս երկուքէն մէկը ընդունիլ, որովհետեւ երրորդ մեկնութիւն
 մ'ալ կայ. Արարատ բառը հոս յեռ յատկանշելու տեղ, կրնայ աշխարհ մը նշա-
 նակել. և « ի լեռինս Արարատայ » կարող ենք հասկնալ ի լեռինս Ուրարտուի: —
 Դիտենք թէ Ուրարտուի կեդրոն էր Վանը. Գրգուռ լերան աւանդութիւնը,
 այսպիսի մեկնութիւն մը չմոռարկենք, և դիտեմք գործած չե՞ն այն Սուրբ Հայերը
 որ պարզապէս « ի լեռինս Հայոց » կը դնէին: — Ընդհանրապէս այժմ Արարատ
 բառը այսպէս կը մեկնուի:

Ծ. ՀՐԱՏ.

84. (յէջ 44, տող 30). Անհոս ստուգաբանէ (Արարատ) յերասխայ, իբր Արա-
 քսատ: — Նիպուհ 416 զՈւրարատու ասէ ձայնափոխութեամբ եղեալ Արարատ:
 Տես զկնի վասն անուանց Հայաստանի:

85. (յէջ 44, տող 33). Առջին երկիր բնակութեան մարդկան զոր Ձանդիկը
 կոչէին Էրմէնէ — վէճոյ, առ նախնի շնդիկս ի սանսկրիտ կոչէր Արիա-Վարդգա և
 նշանակէր Արեաց երկիրը: (Ուիլսոն):

86. (յէջ 45, տող 11). Թէ և չեմք կրնար ստուգել Բատ կամ Արատ կոչումն:

Ն. Բարսեղ Վ. Սարգիսեան հմտալից յօդուածի մը մէջ որուն վերնագիրն է
 Տեսութիւն Մարիքասեան աւանդութեան ըստ Մովսիսի Խորենացոյ (Ֆազմավկայ
 1882, էջ 54, 111, 224, 308 դարձեալ 1883 յէջ 35, 123, 220, 315), Բատ
 մասնկի նշանակութիւնը գտած ըլլալ կարծէ:

« Արարատ բառն ընդհանուր առմամբ՝ երբայական և ասորի լեզուաց մէջ
 » անէժը, անէժը սասանման և կամ յոյս շնդուողի կը նշանակէ: Սակայն եթէ
 վերլուծելու ըլլանք՝ երեք մասն կ'ունենանք, և անոր արմատականն է Ար (Ar).
 որ յեռ կը նշանակէ՝ ճիշդ նշանակութեամբ, ա (a)՝ միացուցիչ է այն արմատակա-
 նին ընդ յատ (rad կամ rādha) մասնկան, որ արիական լեզուի աւելի կը վերա-
 բերի, քան երբայականի, և տուող կամ տիր կը նշանակէ, հետեւաբար Ար-ա-րատ
 կը նշանակէ յեռն Տեան: (Բզմ. 1883, էջ 133):

Նոյնը կ'ըսէ.

« Իսկ ըստ հայերէն կազմութեան լուծելով զԱրարատ բառն, անոր արմա- տականն կ'ըլլայ Արա, հայ նահապետի մը յատուկ անուն, և վերջնական մաս- նիկն ռատ, որ արիական լեզուաց մէջ՝ ինչպէս շատ, պատ, այնպէս ալ այս մաս- նիկն սեղ, բնակութիւն, արարք, և. դնչտ կը նշանակէ »:

Այս ամէն ստուգաբանութիւնները այնքան հաւանական չեն երեւիր, քանի որ Արարատ պարզապէս Ուրարտոյի այլաձեւումն է: Այս վերջինին վերլուծումը միայն՝ կարող է գոհացուցիչ ըլլալ: Արդեօք Ուր-արտո: անուան մէջ իրենց Արդ-ինի շաստուածոյն անունը կարող չե՞նք տեսնել (հետեւաբար Ուրարդու = Երկիր Արդ-ինի) ինչպէս որ Հայտիս շաստուած ալ՝ Խսարի-ացիք անունը յա- նաջ բերեր էր:

Խ. ՀԲՏ.

87. (յէջ 46, տող 4). Մասեաց բարձրութիւն հաւանական փաստ մ'ալ է տապա- նին ընկալուչ ըլլալու, բայց ոչ թէ բոլոր երկրիս բարձրագոյն կէտն էր, այլ և ոչ շրջակայ աշխարհաց մէջ բարձրագոյնն. վասն զի Ելպրուզ աւելի քան 91000 բարձր է քան զՄասիս, և Տէմաւէնտ ալ աւելի քան զԵլպրուզ:

88. (յէջ 46, տող 15). Clovijo ճանապարհորդ յամին 1404, Գալմարին կոչէ զա- նաջին քաղաքն բնակութեանն, մերձ յԱրարատ, փոխանակ Նախիջևանու. Ioh. Aventinus, Գեոք Ա, գլ. Գ. 8-9. Subsidentibus deinde aquis paulatim, navis ipsa recu- buit in vertice Gordai montis Majoris Armeniae. Siccatoque orbe egressus Noas (ita enim ille vocabatur) Deo sacrificavit et litavit. Urbem inde *Sagalbinam* cujus Pto- lomaeus quocumque meminit (juxta Araxim amnem Majoris Armeniae) condit, ubi cum filiis habitare caepit... Cum itaque Armenia oppleta esset hominibus, anno 101° id quod et Moses tradit si diligentius consulueris, (hoc anno Peleg natus est He- bro) posteaquam genus humanum in Armenia reparatum fuit, divisit ipse Noas terram, servatis antiquis nominibus (uti ante diluvium fuerat aquarum) in partes tres, Asiam etc.

Decimo deinde anno reversas in Armeniam Tuisconis (quem in Armenia genuerat) posteros adoptat, omnem haud dubie Italiae orbisque potiundi. Ipsum inde ex Armenia in Europam mittere constituit et parat. Quicquid intra Rhenum et Tanaïm amnes continens, eidem adsignat. Authores rerum Germaniam vocant et.

89. (յէջ 48, տող 13). Այդ անգղիացի ճանապարհորդն էր Sullivan:

90. (յէջ 48, տող 19). Դեռ նոր ատեններս ալ (1861) տեղացի շէյխ մը պատ- մեց որ ամենուն ծանօթ է հոն լեռը, և ամէն տարի ջրհեղեղի տօնայիշատակը կը կատարեն:

91. (յէջ 48, տող 6). Եամանակն անյայտ, ալ թուի ոչ յետ քան գ'է դար:

92. (յէջ 49, տող 9). Ի վարս Հարանց յիշի ծեր ոմն բնակեալ յաղբերն Ս. Ցա- կորայ, ալ զի յիշէ նա զՄաքենոց վանս որ յԸ դարու շինեալ ապա չէ շատ հին:

93. (յէջ 49, տող 15). Տրոթմուտ ֆրանկ վասն սպանութեանց ի թագաւո- րութեան Լոթարիոսէ և ի Պապէն Բենեդ. Գ. ստիպեցաւ յուխտաշրջութիւն, և յետ Պաղեստինեայ եկն և ի Հայս յուխտ տապանակիր լերինն յամին 855-7:

94. (յէջ 49, տող, 19). Երանելին Ողբերկոս ֆրանկիսկեան ի սկիզբն ԺԴ դա- րու անցանելով Արարատայ քովէն փափագէր ելանել ի քնին տապանին, ալ ոչ թողին ընկերակիցքն անելանելի ստելով զլեռունն:

Մանտըվիլ ի նոյն դարու, ասէ մինչեւ այն ատեն երեւար տապան. ի պայ-

ծառութեան օգոց, և բազումք ասէին երթեալ և մտեալ ի նմա. բայց ոչ հաւատայ վասն սառնապատ բարձրութեան լերինն:

95. (յէջ 50, տող 2). Բայմէր՝ Պաղեստին. — Բիրզեր:

96. (յէջ 50, տող 32). Վարդապետ ոճն մեր ասէ, վասն Նոյի ասացեալ. « Սա » հանգուցէ զմեզ պատարագուն որ արար ի սեղանն զոր շինեաց ի լեանն Կոր. » դուացն »: Այլ ոճն. « Նոյ օրհնեցաւ իւր որդւովքն ի լեանն Մասեաց, աստուած » ծային բերանոքն »:

97. (յէջ 51, տող 35). Ոչ միայն սեղան մը այլ և տաճար մը շինեցին Նոյեանք, ըստ Մեթոտիոսի, հոն, « հեռի իշխանութենէ իւրեանց մնացելոց ի ջրոյն »: Թուի իմանալ հեռի յերկրէն ուր բնակէին յառաջ քան զՋրհեղեղն:

98. (յէջ 53, տող 24). Գիտեմք զի կան և հնագոյն սիբիլայք. այլ զըուածքն որ արդ մնան՝ չեն հնագոյնք:

99. (յէջ 54, տող 21). Եպիփան. — Հռոնիոս — Գիրիւէր:

100. (յէջ 54, տող 26). Նոյնն և վասն տապանի տեղւոյ ասէ Սայի-Նոյայ կոչել Հայոց, զի այսպէս լսեց ի Գէորգայ վարդապետէ Հայոց:

101. (յէջ 55, տող 11). Շարտէն ի Քարթլ նահանգի վրաց ասէ փոքր աւան մի կայ Սամախէ անուն որ նշանակէ Երեք բերդ. շինեալ յերկից որդւոց Նոյի. որ անդ բնակեցաւ յելանել ի տապանէն: Սխալ է: Զի « խմէ » բառն և ոչ եթէ « իխէ »՝ բերդ նշանակէ:

102. (յէջ 55, տող 13). Genebrand, Bible de Vence.

103. (յէջ 55, տող 34). Ա. Մնաց. Ա. 52. « Իշխան Եղիսակամայ ». ի լատինն Թագաւորութեան ասի Ոլիպամա:

104. (յէջ 56, տող 3). Ըստ Աննիոսի 30 որդիք Նոյի յանուն մօրն Տիտեայ՝ կոչեցան Տիտանեանք:

105. (յէջ 56, տող 5). Ըստ Աննիոսի զԱրազա նկարէին իժակէս խառնեալ ընդ առն հեշտամոլի (Այր-իժ?). — Սանուտ. Թորչելոյ Արազա կոչէ զԱրամ որդի Սեմայ, և ի նմանէ ասէ զՀայոս:

106. (յէջ 56, տող 9). Ճիւտաս պատմիչ Բրիտանիոյ:

107. (յէջ 56, տող 32). Ի կէս Ժե դարու ի կուպլիոյ քաղաք Տոսկանայ գտան:

108. (յէջ 57, տող 30). Խոր. Ա. 2:

109. (յէջ 58, տող 20). Ի Լիբսեան շր. Խորոն. Ումիդաք գրի՝ փոխանակ Տորբանայ:

110. (յէջ 59, տող 4). Բոգ. Մե. Աբբ. զԱստղոնս դնէ յելից Իննակնեան վանից, ուր նշանակին աւերակք Տաղոնից. « Յորոյ (Տարբանայ) անուն և զգաւառն » այժմ ասնն անուանել Տարոն », Խոր. Ա. Աշխ. այսպէս ի Լիբսեան օրինակի, որ ուղղագոյն է քան զտպագիրն:

Դժուարին է ընդունիլ որ Աստղոնք Իննակնեան վանուց քով կը գտնուի, եթէ նոյն է անիկա Աստղերբերդի (Աստղոնից բերդ) հետ: Ընդհանրապէս սոյն անունը Աստղիկան բերդ կը ստուգաբանուի. (տես Գելցեր, Դիցաբանութիւն Հայոց, Թրգմ. Հ. Յովհաննէս վ. Թորոսեան, վեներիկ). Հ. Ալիշան սոյն խնդրոյն մասին ուրիշ տղ կ'ըսէ. « Աստղիկը պահած են Տարոնոյ կողմերում, ուր առաջ բնակէին » եղբարքն ալ. հոն է Աստղիկաբերդը կամ Աստղիկան յերդն, համառօտելով « Աղերբերդ կոչուած, զոր նոյն ինքն Աստղիկ շինել տուած է կ'ըսեն, իր Զրուան

» եղբոր ապահովութեան համար. յետոյ ի պատմական ժամանակս՝ Մովսէս բերդ
» կոչուեցաւ, և է յարեւելեան կողմս Մշոյ » (Հին հաւատք Հայոց, յէջ 280):

Նկատելով Տարօնի կրօնական երկիր մ'ըլլալը, — բոլոր մեհեանները Յաշտի-
շատի մէջ էին, — շատ հաւանական է Աստղիկան բերդ բացատրութիւնը. զայս կը
հաստատէ թերեւս Մովսէս գիւղի մերձակայութիւնը որ մոզ բաւը կը լսեցնէ,
եթէ այս անուան մէջ հարկ չէ տեսնել Բուզանդի յիշատակած Տարօնի Գովսէսի
գիւղը՝ ուսկից էր Ալիմբիա թագուհւոյն սպաննողը:

Ծ. Հրս.

111. (յէջ 59, տող 9). Նահանգին անուան երկրորդ մասն եթէ բերան է, ինչ-
պէս որ կըրնայ հաստատուիլ օրինակի մը մէջ փոխանակ Տուրուբերանի Չուրաս-
բերան գրուած ըլլալովն, սկզբնական ինդրեալ անուննիս կ'ըլլայ Տուր կամ
Տար. բայց երեւի թէ բ տառն մասն է Տարուր կամ Տարբ անուանց և երան կամ
արան՝ ածանցիկ մի:

112. (յէջ 59, տող 15). Այսպէս կ'անուանէ թովմա Արծրունի:

Հ. Ալիշան հոս կ'ակնարկէ թովմա Արծրունոյ հետեւեալ տեղին. (Գլուխ Ե,
յէջ 107) « Մերձ ի սահմանս Տարունոյ Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարօ-
» նոյ Բագարատ, վասն զի ունէր յայնժամ՝ զգլխաւորութիւն բարձրութիւն իշ-
» խանաց Հայոց »:

Կամ աւելի հաւանօրէն հետեւեալ խօսքը. « Զկողմանս Տարունոյ յինքն կոր-
» գեալ՝ թեկն յածէր բնաբանապէս ամիրայապետել ամուսնայն Հայոց: Զի և տուն
» Հայոց անուանեալ առաջին աստիճան զՏարօն » (Գլ. ԻԲ, էջ 236): Ինչպէս կը
տեսնուի Տարօն Բագարատայ պատճառաւ առաջին տուն կոչուեր է, ոչ թէ Ան-
մայ: Կիտուի որ թովմ. Արծր. նոյն իսկ արքայ կը կոչէ զայն. « Մեռաւ արքայն
» իշխան Տարօնոյ » (Գլուխ ԻԲ, յէջ 231) դարձեալ « իշխան Տարօնոյ, որ ասի
» Հայոց իշխան » (թովմ. Արծր. Ի յէջ 220): Ուստի վերոյիշեալ կոչումը՝ պար-
զապէս Տարօնի առժամանակեայ քաղաքական գերիշխանութիւնը կը ցուցնէ, և
Անմայ հետ վերաբերութիւն չունի:

Նշանակալից է որ Խորենացի Սեմէն սերած կը զնէ Տարօնի հնագոյն բնակիչ-
ները. արդ Գելցեր ալ Դեցաբասկոնդիւն Հայոց ուսումնասիրութեան մէջ, Աստղի-
կան պաշտամունքը զօրաւոր գտնելով ի Տարօն, ասորեստանեայ եղած կ'ենթադրէ
Տարօնի հնագոյն բնակչութիւնը, զոր Տիգրան Բ. քաղաքագիտօրէն հայացուցած
ըլլայ: Այսպէս Խորենացի և Գելցեր կը զուգահիսին սեմական ծագում տալով
հին Տարօնեցիներուն, բան մը որ կրնայ շնորհուիլ պատմական անձանօթ շրջան-
ներու, բայց ոչ Մամիկոնեանց համար, որ զուտ իրանական ցեղէն էին, ինչպէս
իրենց անուանց ստուգարանութիւնը, նկարագիրը, պատմական դէպքերը կը ցուց-
նեն: (Տես այս մասին Բուզանդի Մամիկոնեանեանի, Հ. Ն. Անդրիկեան, Վենե-
տիկ, 1904, յէջ 9-12):

Այնու հանդերձ սահմանակցութիւնը՝ կրնար զաղթականութեան կամ տիրա-
պետութեան պատճառ եղած ըլլալ, և հայ աւանդութիւնը յայտնապէս կը դաւա-
նի՝ թէ Սասունի բնակիչներ և Արծրունիք ասորի են ծագմամբ, Տուրքիայ վը-
կայութիւնը՝ « Եւ փախեան ի յերիւս Հայոց », ի լերինս Տարօնոյ հասկնալով:

Ծ. Հրս.

113. (յէջ 60, տող 15). Որ են Գորգի, Քանան և Դաւիթ:

114. (յէջ 60, տող 24). Զոր և հաստատէ շարունակութիւն բանից ընտրելազունին ի վերոյիշեալ հին մնացորդ պատմագրաց, թէ Հայկն յետ սպանման « դարձաւ ի տեղի իւր և չորաւ կալաւ զերկիրն Արարատայ... և ի ժամանակի » մահուան իւրոյ ետ գնա կալուած ժառանգութեան կազմեայ »:

115. (յէջ 61, տող 23). Աւանդարան վարդապետի մի աղաւաղ գրուածի մը մէջ ասէ. « Շինեցին որդիքն Նոյի շինուածս յերկիրն Տէրտամ, զոր անուանեցին Ռամն » ըստ անուանելոցն ի տապանէն անուանց ութից »: Ռամն անշուշտ է Քմն կամ Քմիս, իսկ երկրին անունն՝ որ աւելի կարեւոր է ի գիտութիւն՝ այսպէս մութ գրուած անծանօթ մնայ:

116. (յէջ 61, տող 35). Վարդան առ Հեթում. « Նոյի որդի մի այլ եմ լսել, » Մանիտոն անուն, որ եղև նմա զկնի ջրհեղեղին. և դուստր մի Աստղիկ անուն. » որ առ հայրենեօք զկողմ հարաւոյ »:

117. (յէջ 62, տող 3). Ընդ հակառակն Մեթոտիոս (զոր յիշէ այլուր Վարդան) ասէ. « զնաց բնակեցաւ յարեւելս ուստի արեգակն ելանէ »:

118. (յէջ 62, տող 6). Բայց ոմն ազատ հետեւող Մեթոտիոսի՝ Մանիտոնի գնացած երկիրը կոչէ Ովեայր կամ Ովեայ, և բնակութեան սահմանն տարածեալ » մինչև ի ծոփն որ կոչի Արեգաւսան »: Այս տեղն ալ ծոփն ալ անծանօթ են մեզ, բայց զի յետ զայս ասելու՝ յաւելու թէ ի ժամանակի ազգաց բաժանման ել Քանան և բնակեցաւ անդ, կրնայ Ս. Գրոց մէջ ծանօթ Քանանու երկիրն ըլլալ, որ է Պաղեստին, և ծոփն Միջերկրական:

119. (յէջ 62, տող 14): Մեթոտիոս յաւելու թէ յետ իբր 1800 ամաց ջրհեղեղի Սամսոն ոմն ելաւ հզօր յորդուց Մանիտոնի և տիրեց յԵփրատայ մինչև յԵստրագեն? եօթն քաղաքաց և զաւառաց և զնաց մինչև յԳ Հնդիկս. և շատ մարդ շարդեց յԻսմայելացոց. բայց յետ ժամանակի այս Իսմայելացիք ալ զատ ի զանազան աշխարհաց՝ կալան ի « Տիգրիսէ մինչև ի մուտս Թագաւորութեան Մանիտոնի »:

120. (յէջ 62, տող 24). « Եւ էառ Նեբրովթ յորդուցն Յաբեթի արուեստաւորս, » և յԻւրայոց անտի բազումս, և չոգաւ և շինեաց քաղաք անուամբ Մանիտոնի, » և խաղաղութիւն էր ի մէջ նոցա ». Վարդ. Մեկն. Ծննդ:

121. (յէջ 63, տող 1). Թովմա Արծրունի ասէ ընդ Եւսեբեայ վերին Հնդկաց միշտ Թագաւորեն կանայք, իբր զի դստեր Նոյի ժառանգութիւն էր այն:

Թովմա Արծրունւոյ խօսքը հետեւեալն է. (Ս. Պետերբուրգ, 1887, յէջ 18): « Յետ ջրհեղեղին՝ ոչ երեւի լինել դարձեալ որդիս նահապետին. իսկ աշխարհն վերին Հնդկաց՝ ասի լինել դստեր նորա:

Զոր Եւսեբի կեսարացի ասէ՝ ի սովորութենէ մինչև ցայսօր կին մարդ թագաւորէ ի վերայ աշխարհին Հնդկաց »:

Իսկ Հ. Ալիշանի « Իմանան զԱրաբիա » խօսքը՝ կ'ակնարկէ Վարդան պատմչի հետեւեալ տեղին. (Վենետիկ, յէջ 10). « Զերկիրն խնկաբեր որ կոչեցաւ Երջանիկ » Արաբիա, ետ Աստղկայ դստեր իւրոյ, ուստի եկն Տիգրինն Սաբայ, զի յայնմ » հետէ՝ կանայք ժառանգեն զնա »:

Ծ. Հրս.

122. (յէջ 63, տող 10). Միայն թէ կայ և հակառակ աւանդութիւն մը յազգիս վասն Աստղկան, որպէս թէ ընդ դիւաց խառնակելով՝ ծներ է զՅաւերժհարսունս:

Երբէք եղած չէ դար մը՝ ուր Աստղիկ համեստութեան աստուածուհի եղած ըլլայ: Նոյն իսկ իր անունը՝ շատ ազգաց մէջ իր անպարկեշտ դերը կը ցուցնէ: Արաբացիք զայն Քասայա կը կոչէին, որ կը նշանակէր «Օրիորդ ուռած ստինք» ներով» (Տես Le culte d'Aphrodite Anahita chez les Arabes du Paganisme, par E. Blochet, Paris, 1902). Նաևիտա բառը, որ Աստղիկ կը նշանակէր և որուն բացասականն էր Ա-նաևիդ, նոյնպէս կը նշանակէր «Օրիորդ ուռած ստինքն» ըրով», Ասորեստանեայք ալ՝ իրենց արձաններուն մէջ այսպէս ներկայացուցած են զԱստղիկ:

Ընդհակառակն ժամանակ եղած է, ուր Անահիտ «փոխանակ մայր ամենայն» զգաստութեանց» ըլլալու, «մայր ամենայն մեղաց» եղեր է: Ստրաբոն կը վըկայէ յայտնապէս թէ (XI, 532, նոյնպէս Լուկիանոս, Յաղագս սկզբանց ասորեստանեայց), թէ Հայեր իրենց դստերը ամուսնացնելէ յառաջ՝ Անահայ մեհենին կը նուիրէին, ուր անձնատուր կ'ըլլան ամենայն հաճոյից: Մ. Էմին անկարելի կը համարի զայս՝ նկատել տալով որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ երբէք այդպիսի սովորութիւն մ'ականարկած չէ, մինչդեռ եթէ զոյութիւն ունենար՝ անպատճառ պիտի հակառակ խօսէր:

Սակայն դիտելու է որ Տրդատայ ժամանակ՝ հայկական դիցաբանութիւն զոյութիւն չունէր, այլ՝ պարթևական դիցաբանութիւն, որ նախորդին տեղը զրաւած էր. Ազաթանգեղոս արդէն կ'ըսէ. Տրդատ «գիւր ազգին Արշակունեաց՝ զհայ» ընենացն պաշտամանց տեղիսն մեծարէր» (Ազաթ. 34 էջ):

Ուստի մեր կարծեք հայկական Անահիտը՝ Ափրոդիդ մըն էր, պարթևականը՝ Տիանա:

Մ. Հրս.

123. (յէջ 63, տող 20). Համարի դուտոր Բերոսի պատմչի Քաղզէացոյ. և յոմանց հնագոյն քան զնա:

Այդ Սիբիլայի մասին, որու վրայ կը խօսի Հ. Ալիշան, կարելի է կենսագրական (ենթադրական) տեղեկութիւններ գտնել՝ Fabriciusi Bibliotheca graeca XIV հատորին մէջ, ուր Բերոսոսի հատակտորներն ալ մէջ կը բերուին:

Մ. Հրս.

124. (յէջ 64, տող 34). Փիլաստրոս եպիսկոպոս Պրեշիոյ ի Դ դարու:

125. (յէջ 65, տող 4). Ըստ այսմ գրէ քերթող ոմն ի դիմաց Նոյի.

Tu supplex ora,

Tu protege,

Tuque labora.

126. (յէջ 65, տող 16). Ճեմնլի և Դաւեոնիէ:

127. (յէջ 65, տող 20). Յոհան կաթողիկոս ի յառաջաբանի Պատմութեանն:

128. (յէջ 70, տող 27). Քերովբէ ոմն մեր վարդապետ հին՝ յիշէ աւանդութեամբ (ի գալստեան ճառի) թէ Քամ ունէր և այլ որդի մի՝ Քվակ անուն, յորմէ եղն որդիք Գայի, Քաղա և Երեքոյ, որք շինեցին զհամանուն քաղաքսն ի Պաղեստին:

129. (յէջ 71, տող 7). Կամ գուցէ սերունդք Քամայ բոնաբնակք ի կողմանս

Գամրաց և անտի ի կզգին եկեալք կամ վարեալք գուցէ յԱրամայ հալածեալ Պայազիսն:

130. (յէջ 71, տող 14). Առ Աբրահամաւ յիշին փղշտացիք ուրեմ յառաջ քան զնա եկեալք:

131. (յէջ 71, տող 22). Ոմանք զկրետէ ասեն կափթորայ երկիր, և այլք զկապտոս կղզի Նիւղոսի. և պէտպէս մեկնեն զբանս Ս. Գրոց, ուր յիշին կափթոր կամ փղշտացիք:

132. (յէջ 71, տող 30). Բիւզանդացիք և Հայ պատմիչք ասեն Լիւկիա:

133. (յէջ 72, տող 19). Հուս ի կողմանս Լիբանանու կամ Դամասկոսի, որոյ և շինող ասի: Գաղնի ըստ Սիւնկելեայ հայր է Արմենեաց բայց ոչ զՀայս իմանայ աչտու անուամբ:

134. (յէջ 73, տող 33). Ջի պարտ է Թողանիմ ընթեռնու գոգանիմն Եբրայ. ի Եննդ. Թ. Գ. քանզի և Գողանիմ գրի ի Մնացորդսն. իսկ Ամրացին և ի Յուն. Թողնիմ ասէ:

135. (յէջ 74, տող 14). Ջորս այժմ տանիկք Քէօմիւր անուանեն:

136. (յէջ 74, տող 26). Մ. Նիպուր (135) ի բանի աստ զՄարս իմանայ յանուն Աքանազայ:

137. (յէջ 74, տող 33). Գտանին դրամք լուսնի դից փոխզագրակ, գրուածեմքս MHN AĒKANOE (լուսնի ասքանազեան):

Հ. Ալիշան Հիւն ձաւատք Հայոց գրութեան մէջ, (Վենետիկ, 1875 յէջ 101-102) ընդարձակորէն կը խօսի փոխզական սոյն աստուծոյն վրայ, դնելով նաեւ զպատկեր փոխզագրակ յուսնին:

Պոնտոսի և Վրաստանի մէջ փասնակ կը կոչուէր անձնաւորեալ յուսինք: (Տնտանդ, յէջ 102):

Ծ. Հրս.

138. (յէջ 75, տող 1). Վիվ. Ս. Մարդ. Ա. 170. Բենիամ. Գուտել. ասեն տեսեալ ի Դամասկոս զազդր հսկայի 9 թիզ (սպանիակ.) երկայն և զլայն, և արձանագիր գերեզմանին Ազքանազ Թագաւոր հզոր ի վերայ ամենայն երկրի:

139. (յէջ 75, յէջ 10). Ըստ այսմ և Թմանիք ութից Նոյեանց թուի ինձ կոչեցեալն ի մէնջ Տմորիք: Հմմտ. Սանեսան = Սարեսան:

140. (յէջ 75, տող 26). Hanvay. Beschreib. Persien. 19. (Պրոսէ Ա. 16):

141. (յէջ 76, տող 20). Ըստ Նիպուրայ և այժմեան անուն Պօհզանայ զնոյն արտաբերէ:

142. (յէջ 80, տող 14). Երկրորդ տոհմն Աֆղանաց Տայք կոչի (Ֆերրարիոյ):

143. (յէջ 81, տող 2). Վասն զի ուր ոմն ի հին պատմչաց մերոց ասէ վասն Ս. Մնարովայ թէ գիր հնարեց Աղուանից լեզուին, միւսն զնոյն բան ասէ վասն Գարգարացւոց:

144. (յէջ 85, տող 35). Աւանք՝ ի բազմաց գիտնոց յԱրիական ազինս դասին:

145. (յէջ 87, տող 4). Ստեփ. Բիւզ. Հոռոցացի ասէ:

Սոյն ինդորոյն վրայ հմմտ. Յովսէփ վ. Սանդալճեանի (Venise, 1900) Les inscriptions Cunéiformes urartiques գրքին հմտալից յառաջաբանը ուր յէջ XVII կը

խօսի Արմենոսի գաղթականութեան և յունական այլ և այլ տեղեկութեանց մասին՝ զոր տուած են Հայաստանի և հայ լեզուի ծագման վրայ:

Ծ. ՀրՏ.

146. (յէջ 87, տող 14). Ստրաբոն ԺԶ, ա. 25. Յուստինոս ԽԱ. Բ. 3:

Հայերու ծագման խնդիրը վերջին տարիներու մէջ՝ բոլորովին նոր կերպարանք առաւ:

Կախ այլ եւս անտարակուսելի կը համարուի թէ Հայեր՝ ի սկզբանէ ի վեր Հայաստանի մէջ բնակած չեն. որովհետեւ կը տեսնենք թէ հոն կը գտնուէր առաջ ուրարտու անուամբ ժողովուրդ մը, որ հայ չէր կրնար ըլլալ:

1. Վասն զի ինչպէս ըսինք 2^o ծանօթութեան մէջ, իր արձանագրութեանց մէջ գործածած լեզուն՝ հնդեւրոպական ըլլալու տեղ՝ կաւկասեան է, այսինքն վրացերէնի մօտ:

2. Գիցաբանութիւնը բոլորովին տարբեր է հայկականէն: Այս ճշմարտութեանց ապացուցումը թողով մասնագիտական գործերուն՝ զոր յիշեցինք վերոյիշեալ (2^o) ծանօթութեան մէջ, անցնինք տեսնելու՝ թէ ուսկից եկաւ հայ ժողովուրդը:

Հիմնուած Հերոդոտոսի սոյն խօսքին վրայ՝ թէ (VII, 73) « Հայերը՝ Փոխու » գացւոց գաղթականութիւն մ'են » եւրոպացի գիտնականք Փոխուգայէն եկած դրին զՀայեր:

Կարապետ Բասմաշեան Ուրմիոյ ափանց վրայ փնտռեց Հայոց նախնական հայրենիքը (Տե՛ս Բագմաճէպ 1898): Հոս միևնրի անուամբ ժողովուրդ մը կ'ապրէր. ասոնք յարձակեցան Արարատի (Ուրարդուի) վրայ, անոր յաղթեցին, զայն իրենց հետ ձուլեցին. Արարատ-միևնրի անունը կրճատուելով՝ Ար-միևնրա եղաւ:

Գերմանացի Եէնսէն նոր ենթադրութիւն մ'հանեց մէջտեղ, որ բոլոր աշխարհքիս մէջ մեծ աղմուկ հանեց: Ըստ այս հանճարեղ գերմանացւոյն՝ (հմմտ. Jensen, Hittiter und Armenier, Strassburg, 1898 էջ 17-18) Հայ ազգը նոյն է Հիտտիտ կամ Հատ կոչուած ժողովուրդեան հետ՝ որ Կապպադոկիա կը բնակէր, և որուն արձանագրութիւնները՝ միայն հայերէնով կարող են մեկնուիլ:

Օր. Հիտտիտեանք իրենց ազգին անունը ներկայացնելու համար՝ միշտ դաճակ մը կը նկարեն. դաճակը ինչ վերաբերութիւն կրնար ունենալ իրենց հետ:

Պէտք է յիշել, կ'ըսէ նա, հայերէն Հատ-անկ բառը. զայս դանակով մը կը յիշեցնէին անոնք՝ ազգին ձատ անունը նշանակելու համար:

Հատ բառը Հայի փոխուած է. որովհետեւ, կ'ըսէ նա, տ հայերէնի մէջ՝ յի կը փոխուի. օր. Pater = Հայր, Mater = Մայր, ըստ այսմ արձանագրութեանց Մtr վայրի հետ նոյն կը համարի:

Եէնսընի դրութիւնը դեռ ընդունուած չէ բոլոր գիտնականներէն, բայց շատ հաւանական է, դիտելով մանաւանդ դիցաբանական յարնչութիւնները. — օր. Հիտտիտներու « Սանդիս » աստուածը ինչ բան է, եթէ ոչ հայկական Շանթը:

Հայկ նահապետի խնդիրը անձուկ կերպով կապուած է մեր ազգի ծագման հետ: Ընդհանրապէս առասպելական անձնաւորութիւն մը կը համարուի նա, բայց մենք հաստատապէս կը հաւատանք թէ նա պատմական անձնաւորութիւն մ'է, զոր խորենացի հիցնել. ջանալով՝ անհաւատալի ըրեր է: (Հմմտ. սոյն նիւթին վրայ յօդուած մը ի Բագմաճէպի, 1904, Նոյեմբեր): Հայկ իրական է, վասն զի

1. Նոր գաղթականութիւնը, Ուրարտուն ջնջելու համար՝ պէտք էր վճռական պատերազմ մ'ընել, և այս իր մայրաքաղաքին վաճառ լճակին քով:

Արգ կը տեսնենք որ Հայկ ալ ճիշդ այս բանս կ'ընէ, հետեւաբար Հայկ ուրիշ բան չէ՝ բայց եթէ հատեան գաղթականութեան առաջնորդը, և թէ՛ ալ ոչ այլ ոք՝ բայց եթէ Ուրարդուի յետին թագաւորը:

2. Պատերազմի տեղագրութիւնը խորենացւոյ մէջ ըստ ամենայնի ենթադրել կու տայ կռիւ մը՝ գաղթականներու և վաճառ թագաւորին միջև:

3. Ջուանշէր վաճառ քով ընել տալու տեղ կռիւը՝ Այրարատի մէջ ընել կու տայ: Ուսկից յառաջ կու գար այս տարբերութիւնը: Ա'երեւի հայ երգիչներ Ուրարդացի անունն ալ յայտնապէս կը յիշէին՝ միջնադարեան պատմիչները տագնապի մէջ թողով:

4. Հայկ, եթէ յիշուած ըլլար, պէտք էր ենթադրուիլ: Եթէ իբր անձ ճշմարիտ է, իբրեւ անուն ալ եղած ըլլալ կրնանք հաստատել, որովհետեւ թէ Ս. Գրքի թարգմանիչներ և թէ Ագաթանգեղոս՝ Հայկ անունը կը ճանչնան, իբր ձևիւյ և քաջ որսորդի մը ներկայացուցիչ, և խորենացի դեռ իր պատմութիւնը չէր գրած:

Պիտի ըսուի թէ ինչ նշանակութիւն ունի Բելլայ ռազմական ճանապարհը, Բաբելոնէն Հայաստան: Ատիկա ոչ միայն բնական հետեւանք մ'էր Ս. Գրոց Բելլի վրայ տրուած տեղեկութեանց, այլ և ուրիշ պատմական եղելութիւն մը կ'ակնարկէ: Ոչորայտու դարերով Ասորեստանէն հետ պատերազմի մէջ էր, որոնք — ճիշդ Բելլայ շաւղով — կու գային Ուրարդուի քաղաքական անկախութեան և կրօնքին ապառնալու: Ուրեմն կրնանք ըսել թէ թէ՛, մինչ մէկ կողմէն Ոչորայտուի վերջին թագաւորը կը ներկայացնէ, միւս կողմէն կը ներկայացնէ նաեւ Ասորեստանի արշաւող ինքնակալները: Թէ այսպիսի նոյնացում մը կրնայ ըլլալ՝ կը ցուցնէ մեզ Մորիկ կայսեր դերը հայ աւանդութեան մէջ. սա Հայաստանի մէջ պատերազմող « հռովմայեցի » զօրավար մ'էր, և սակայն իր մէջ կը համառօտուին կայսրները՝ որ հայ էին ծագմամբ և Յունաց վրայ իշխեցին:

Ժամանակագրութիւնը ի հարկէ կը պակսի խորենացւոյ մէջ. նա զՀայկ Մաւնաւագէ, Արմենակի, եւ. յառաջ կը դնէ, մինչդեռ նա անոնցմէ վերջ պէտք է դրուի, իբրեւ ջնշող Ուրարդուի: Եւ խորենացի՝ Հայկայ հետ միայն այսպէս վարուած չէ. այսպէս Մաւնաւագը (805-800), Արմենակը (675-670) ժամանակակից կը դնէ. դեռ աւելին կայ. ասոնցմէ վերջ կը դնէ Արամը, որ ըստ վաճառ արձանագրութեանց թագաւորեց 860-843:

Քանի որ Հայկայ շրջան անուամբ հաշիւ մը եւս գոյութիւն ունի մեր մէջ, և տարուան երկոտասան ամիսները կը ներկայացուին իբր դատարը Հայկայ, կ'ենթադրենք որ Հայկ դիցաբանական էակի մ'ալ փոխուած, Տարին կը ներկայացնէր: — Օտար ազգաց մէջ կան Հայկայ նմանող դէմքեր, ինչպէս փինիկական (տես Հին Նաւատը Հայոց Հ. Ալիշանի) Ար-կնորը որ կադմոս անուամբ որդի ունէր, բայց անտեղի է զայն Մովսէս մարգարէի, Դանիէլի հետ համեմատել՝ ինչպէս ըրած էր Բագրատ Խաչատրեանց (Հանդէս Ամսօրեայ, 1904, մայիս):

Ըստ Պրօֆ. Ն. Մառի Հին Հայերը կաւկասեան ցեղ մ'էին, և վրաց այնչափ մօտ՝ որչափ այժմեան միկրէները: Ատով մեկնելու է վրացի լեւի և Նայրի լեւի այնչափ բառական նմանութիւնները, ուր յաճախ միակ տարբերութիւնը՝ յաւելուածոյ « ի » մ'է վրացերէնի մէջ, որ հայերէնի մէջ ալ գոյութիւն ունեցած պիտի ըլլայ, բայց յետոյ ընկած. օրինակ. Արծուի = Արծիւ, Արժանի = Արժան, պիտանի = անպիտան, պատասխանի = պատասխան:

Գիտելու է ըստ այսմ, որ Սահմի, Հոռի հայկական ամիսները՝ վրացերէնի մէջ՝ մէկ, երկու, երեք կը նշանակեն:

Ընդհանուր կարծիքը կ'ըսէ թէ, — ի բաց առեալ վրացիներունը, — այդ բառերը՝ հայերէնէ փոխառեալ են:

Մենք հոս դիտողութիւն մը պիտի ընենք, առ այժմ իբր ենթադրութիւն ներկայացնելով զայն:

Հերոդոտոս «Սափիր» կոչած է վրացիները: Զուանչէր և մեր միջին դարու պատմիչներ՝ բոլոր կովկասեան ազգաց նախահայրերը՝ Հայկայ կրտսեր եղբայրներ կը նշանակեն:

Արդ, եթէ Հայեր կապաղովկիայէն եկած են, կարելի չէ՞ այս աւանդութիւնը ի նկատի առնելով, նաեւ վրացիները նոյն տեղէն յառաջ եկած դնել:

Իթէ Հայերը Հատերն են, Հերոդոտոսի Սափիրներն ալ (= Վիրք) Խաւարացիները չեն: Գիտուի որ օտար ազգաց մէջ առ (հոովմայեցիս, օրինակ իմն, Պոմպէտէն սկսեալ) ի-քերացիներ կը կոչուին անոնք: Ուսկից Սափիր բառին վրայ այդ իի յաւելուածը. այս չի՞ ցուցներ թէ Սափիր՝ ի(սա)փիր նախնական ձեւն ունեցած է: (Եւ միթէ Քարրփիչի անունը չի՞ կրնար ու է կերպով կիլիկեան Քարրայ լերանց հետ յարնչութիւն ունենալ):

Պիտի առարկուի, թէ կովկաս մարդկութեան խանձարուրքն եղած է, ինչպէս կ'ըսուի ընդհանրապէս, և իր բնակիչներն ալ՝ անոր հնագոյն զաւակները: Նորագոյն հետազոտութիւնք կը հերքեն գիտական այս նախապաշարութիւնը և տարբեր կեդրոններ կը փնտռեն նախնական ազգերուն:

Ի վերայ այսր ամենայնի՝ մարդաբանական հետազոտութիւններն են, որ լոյս պիտի սփռեն այսպիսի խնդիրներու վրայ և ոչ եթէ անուանական քանի մը յարմարութիւններ: Զենք մոռնար նաեւ թէ Սափիրք, ըստ բազում գիտնականաց, Հոնաց ցեղէն ազգ մ'էր:

Ծ. ՀրՏ.

147. (յէջ 90, տող 1). Վասն այսորիկ ամենայն սիրով և պատուով մեծարելով զՀարս իմ ինճիհեան և Ազգերեան, որք այսպիսի փաստիւք կամէին ցուցանել զնախնորհութիւն հայ լեզուիս, և զորոց կարծիս հետեւողաբար հրատարակեցի երբեմն ի Բազմավէպ օրագրի (1844, էջ 332) անընդունակ և անբաւական ասեմ զայդ դրութիւն:

148. (յէջ 92, տող 6). Վկայեն իմն և Ս. Գիրք ազգակցութեան Հայոց և Փոխուցաց. զի Երեմիա զոյգ ընդ Արարատեան թագաւորութեանն յիշէ զԱքանագեանս, զոր հաւանին և Հրեայք և օտարք հայր լինել Փոխուցաց. և Եզեկիէլ (ԻՆ, 14) ի տանէ Թորգոմայ յիշէ բերեալ ի Տիւրոս շորիս զՓոխուց կամ զՀայս իմանալով:

149. (յէջ 92, տող 7). Արտոկմէս դստրայր Դարեհի:

150. (յէջ 92, տող 11). Սուղ ինչ զանազանէին ի տարագէ Պափղագոնաց: (Ստեփ. Բիւզ. = Եւստաթ. Մեկն Գ. Բեռիեկ. 694 տող):

151. (յէջ 92, տող 13). Տես ի Cramet. Anecd. Garec. Oxon. Գ. 257:

152. (յէջ 92, տող 17). Ի սկիզբն ք դարու Ն. Ք. ծովակալին Փոխուց զամս 5 կամ 25. Թուի յայնժամ չուել նոցա ի Սիկիլիա: Փոխուցացիք՝ երկշտոք վկային լինել, որով և նուաճեալ ի սահմանակցացն՝ անյայտ եղին. միտեալք ի վաստակ երկրի կամ ի խաշնարածութիւն և յարուեստս: Գոյ և յայսմ նմանութիւն ընդ

մերազնեայցս, որք թէ և պատերազմողք քան զնոսա, այլ ոչ պատերազմասէրք և իշխասէրք, վասն որոյ և հնազանդք կամ հարկատուք արեւելեան ինքնակալաց: — Արիստազոր Միլետացի Զ դարուք Ն. Ք. յաշխարհացոյց տախտակի նշանակեալ էր զՓիւզացիս խաշնաւէտս և հացաւէտս քան զամենայն ազինս. յետոյ ցուցանէր և զմերազնեայս նոյնպէս խաշնաւէտս: — Մորտդման ի յետին ամս ջանայր հայկական լեզուաւ մեկնել զարձանսն Փռիւզացիս:

153. (յէջ 92, տող 29). Վ. Սմիտհ յաշխարհագրական բառարանին Ա 621՝ փաստիւք ցուցանէ զայս: Ի սմին հաւանութեան են Հէէրըն. Ռոմմէլ. Ռընան. Քանդու:

154. (յէջ 93, տող 20). Հ. Փեզրոն զԱլմոն Բ Տիտանեան կոչէ, և ասէ ընդ եղբոր իւրոյ Դովասայ հարցկի ելեալ ի Հայոց աշխարհէ, որք կոչէին Սակք, և եկեալ նախ ի Կապպադովկիա ապա ի Փռիւզիա: Եւ իմաստասիրէ զայստսիկ ի Սանգոնեատոնի բանից:

155. (յէջ 94, տող 4). Զի Փռիւզք ի հնուժն տարածանէին յելից կուսէ ի Հայոց մինչեւ մերձ յարեւմտեան եզերս Փ. Ասիոյ, ուր սփռեցան ի նոցանէ տոհմք Տրու վաց, Մեւոնաց, Միւսացոց, եւն. և անցեալքն յԵւրոպէ ի Թրակիա, յԵմաթիա Քաղկիտէ, Ատտիկէ, Մակեդոնիա (ուր Պռիւզա քաղաք), ի Մեսիա, Պաննոնիա, Դաղմատիա անգամ, մինչեւ հոմանուն համարել զԴալմատն և զՓռիւզ: Եւ հնագոյն ազգ Փ. Ասիոյ ճանաչին. Ստրաբ. ԺԲ. Ը. Կ. Վէպք Փռիւզաց հնագոյնք են զՏրու վաց և զՄիւսացոց, նաեւ քան զօտարս իսկ. զի Եգիպտացիք որք պարծէին զլել զայլովք ի հնութեան՝ խոստովանէին զՓռիւզացիս հնագոյնս քան զինքեանս (Երոդ. Բ. Բ). առ այս պատմէ Երոդ. զփորձ Փսամտիկ Թագաւորի ի քննութիւն առաջնութեան ազգաց զձանօթ վէպ բացընկեցիկ վայրենասուն տղայոյ՝ ինքնաբերաբար Փռիւզացի ձայնիւ հաց խնդրել: Որքան և օտարոտի իցեն վէպքո՞ յայտ առնեն զվարկ նախնեաց զհնութենէ Փռիւզաց, և նովին զմերոյ Հայոց ազգիս յարընչու թիւն նոցին և քաջ եւս հնութիւն:

156. (յէջ 94, տող 10). Հելլէն անուն նշանակէ աղուտ, ճախնային (Մօրի. Ա. 38):

157. (յէջ 94, տող 13). Ըստ Էքզղաքայ Պելասգեանք ելին յափանց Տիգրիսի ի հարաւ. Հայոց: Մօրի. (Ա. 18) ոչ հաւանի, այլ ի Փ. Ասիոյ ասէ եկեալ զսա:

158. (յէջ 95, տող 10). Ամենայն գեղք Տրապիզոնի, Սամարուքսա, Կուխլա, Սաթարիա. Լաղոնա. Թոժ. Երինկալա. Ճօշերա. Երիկանոյ. Խոց. Աղրիտ. Երիվրիկա. Սեւերա. Կոռպի. Խամու. — Կիւմիւշխանէի և Մազզայ, Սեւերա. Խածաւերա. Խաւա. Փոփառա. Փոռզ. Սախնոյ. Աղամա. Զանոյ. Խորտոկոփ. Քոննասա. Աւուրսա. որոց շատին յետին ա կամ ոչ ձայնաւորները վերացնելով, աւելի զուտ հայկական անուանք մնան:

159. (յէջ 96, տող 5). Տ'Ոհսոն Էպուլք ասիմ. 205:

160. (յէջ 96, տող 8). Զոր կեղծահնար համարին ոմանք, և այլք ոչ. տես յՈհսոն, Ուղեւորութիւն Էպուլ Բասիմայ 210-12:

161. (յէջ 96, տող 22). Հոռնիոս ի Հայոց ասէ ծագեալ զՊաննոնացիս, որպէս զԳերմանացիս յԱւքանագեանց, զԼիւրիկեցիս ի Թիփաթենց:

162. (յէջ 97, տող 17). Նոյն Պրիկան զկելտացն համարէր առաջին լեզու, որով և զհայկական եւս առաւել:

163. (յէջ 97, տող 21). Ըստ ոմանց կելտք՝ յորոց իռլանտք (որք Էրին անուանեն զինքեանս) առաջին զաղթականք են Արեաց յԵւրոպա, անդրագոյնս քան

զայլս (Գերմանս, Յունալատինս, Սլաւս, և այլն) վարեալ յեզր արեւմտից Եւրոպայ: *Revue de deux Mondes*, 1884.

164. (յէջ 99, տող 31). Յայս կարծիս է և յլվարտ, որպէս ինքնին ասաց ցիտ (1864):

Պարսկագէտներ սոյն կարծիքէն են այժմ. որովհետեւ Ե. դարու ոսկեղենիկ կոչուած հայերէն լեզուն՝ իրեն ժամանակակից ունէր ի Պարսկաստան՝ գրագանտ, որուն ազդեցութիւնը այնչափ պէտք է կրէր՝ որքան արդի աշխարհաբարը՝ տանկերէնինը: « Հայերէնի գիտութիւնը շատ անգամ աւելի նպաստամատոյց կրնայ լինել բահլաւի և բազանտ գրութիւնները հասկնալու համար՝ քան » պարսկերէնի հնագոյն և նորագոյն ձեւերը », կ'ըսէ Փորթուզալ Փաշա իւր Եղիշէի քննադատութեան մէջ, յէջ 110:

Բազանտի մասին շատ ճոխ և հմտալից տեղեկութիւններ կարելի է գտնել սոյն Փաշայի վերոյիշեալ հոյակապ քննադատութեան (Շրիչէի վարդապետի վասն վարդանայ և Հայոց պատերազմին և քննադատութեան Միքայէլ Փաշայի Փորթուզալ, Վենետիկ, Ս. Ղազար 1903) Ներածութեան մէջ, ուր նոյն իսկ բազանտ լեզուով հետաքրքրական հատակոտորներ ի մէջ բերուած են:

Ծ. Հրս.

165. (յէջ 99, տող 34). Ողջոյն իսկ արիական ազգաց և պարսիկ լեզուին բնավայր համարին բազում գիտունք (Ս. Մարդէն, Աթմայէր) զԱռան աշխարհ Հայաստանի և զկողմանս Ատրպատականի, և անտի տարածեալ ձգեալ մինչև ի յ'Ինդոս: Այլք ընդհակառակն (որպէս *Revue de deux Mondes*, 1884) բնավայր ըզբակտրիս համարին և անտուտ ընդ հարաւակողմն կասպից գաղթեալ յարեւմուտս զամենայն արիական ազինս և լեզուս:

166. (յէջ 101, տող 10). Պերկման հաւանի Ատրաբոնայ:

Արդի լեզուագիտութեան առջև Ատրաբոնի կարծիքը անընդունելի կ'երեւի՝ հայր լեզուով և ցեղով ձևաբար պակաս է, և բոլորովին տարբեր սեմականէն: Այնու հանդերձ Ատրուոց մերձաւորութիւնը՝ առանց ազդեցութեան չմտաց: Այժմեան հայկական տիպարը կէս իրանեան է, կէս միջերկրականային (*mediterranean*), թե՛ և յաւելուածով մը սեմականի, ինչպէս կը հետեւի *Chantresh* և այլ մարդաբան ուղեւորաց դիտողութիւններէն: Հայեր կարնագանկերուէ կը վերաբերին: Ատրաբոն չափազանց հին է՝ մարդաբանական խնդիրի մը մէջ՝ հեղինակութիւն ունենալու համար:

Ծ. Հրս.

167. (յէջ 103, տող 22). Գարմատացիք դեռ եւս հայ ծագում ստանալու առիթը չեն ունեցած բանասիրական գրքերու մէջ: Նոյն իսկ Roberts Ellisի *The armenian origin of the Etruscans* (այլ *Etruscians*, ինչպէս չիտթմամբ նշանակուած է վերոյիշեալ տեղը) London, բնագրօսութեամբ լի տետրակ մ'է, թէ և շուեռացի գիտնական մ'եւս նոյն դրութիւնը պաշտպանել ջանաց իրմէ վերջ: Օրինակ, Փոխուզական *fanaktei* կ'ըսէ նա, հայերէն անտիտ բառն է (!) ուսկից կ'ելնէ, Անահիտ. այսպէս յունաց 'Αἰξ բառը (= Աստուած) ուրիշ բան չէ՝ բայց եթէ Հայոց նախ բառը. ինչ է Աստուած, եթէ ոչ առաջին յէակս! ինչպէս կը տեսնուի՝ Ռոպէրթ

էլիս անգլիական հանդարտութեամբ կը վարուի տառերու երկայնալուծն և յաւելնալուծն նկատմամբ, հակառակ արդի լեզուաբանական մանրակրկիտ ուշադրութեանց:

Ծ. ՀԻՏ.

168. (յէջ 109, տող 13). Այսպէս ստէ վիճեան Ս. Մարդէն ի պազալը սլաք-վէմի Սաղմանասարայ, որ իբր ի կէս Թ. դարու Ն. Բ. Գ.:

Արարատ ոչ թէ միանգամ, յաճախ յիշուած է ասորական բնեւագրանդակաց մէջ Ուրարդու անուամբ. հմմտ. Նիկոլսկի, Բենեագիր արձանագրութիւնք, Sandaldjian, *Les inscriptions cunéiformes urartiques* և ուրիշ ուսումնասիրութիւնք՝ զոր թուարկեցինք 2^o ծանօթութեան մէջ:

Ծ. ՀԻՏ.

169. (յէջ 109, տող 21). Շարաէն. Ա. 253. Հեթմոյ պատմչի ստէ այսպէս կոչել: Յիշէ և Boullage le Gouz ի մարզս Պարսից Aramnoh աշխարհ:

170. (յէջ 109, տող 32). վարդ. Մարաթ. Աղօթք ժե. « ԶՏուն Թորգոմայ » Ազբանագեան ի Հայկազնեայ՝ երկու գլխովքն անարատ պահեա »:

171. (յէջ 110, տող 17). Պիանքինի՝ յԱրգոնաւորդաց անուն կարծէ զանունք և զԱր-միկնի ստուգարանէ շեան Միկնեայց:

Արիթ ունեցանք արդէն ընդարձակօրէն սոյն կէտին և Բասմաշեանի կարծեաց վրայ խօսելու: Ըստ Jensenի Տաւրոս լեռանց մէջ բնակող մի առանձին ցեղ կար Արմէն անուամբ, որ իր անունն միւսներուն տուաւ՝ ինչպէս Ալամանները՝ Գերմաւնացւոց:

Յովհան Օձնեցոյ յիշատակարանի մը մէջ (1833, էջ 80) այսպէս կ'ըսուի. « Ես արուպս Գէորգ, որ ի Թիկունս լեռինս Արմէնի նստիմ ». եթէ այս անունը հին է, կրնայ թերեւս կարեւորութիւն մ'ունենալ:

Տպագրական սխալով մը Հ. Ալիշանի բնագրին մէջ մոռցուած է հոս՝ ծանօթութեան 171 թուանշանը, որ գործածուած է սակայն՝ յաջորդ ծանօթութեան համար, ուստի մենք ալ ստիպուած ենք կրկին 171 դնել և զանագանելու համար՝ վերջնոյս վրայ ք աւելցնել:

Ծ. ՀԻՏ.

171. բ. (յէջ 114, տող 24). Նոյն խորեն. ի Հռիփսիմ. ներքողի « Պայծառ » լուսով շրջափայլեալ ի տանս Թորգոմնայ »:

— Ժողով Շահապիվ. ի կէս Ե դարու. « Ամենայն խոտորնակ չարագործ աշխարհիս Հայոց ի մէջ Տանն Թորգոմնայ »:

— Սիմէոն վարդապետ, որ թուի Ասորի ի նոյն դարու կամ քիչ առաջ ու ետեւ. « Հսնելով առ ուղղադաւանսն՝ որ են ազգ Թորգոմեան »:

— Շարակ. « Բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ, որով բուսաւորեալ ցան ազգ որպիսց Թորգոմնայ »:

— Գանձար. « Թորգոմածին վկայն Գարեգին »:

— վարդան ներքող Լուս. « Տուն Թորգոմայ Թարգմանիչ մեծի խորհրդոյն լինէր »:

172. (յէջ 115, տող 22). Թովս իշխան Մեսովքայ և Թոբելայ, ըստ մեզ. ըստ Հրէից՝ իշխան Ռովսայ, Մեսովքայ են. Լատ. իշխան և առաջնորդ Մեսոքայ. զի Ռատ իբր. Գլուխ նշանակէ, և Թուի սխալ իմացեալ Հրէից, կամ ըստ Մ. Նիպուրայ Ռուս ըստ Արաբաց՝ նշանակէ գերասխ:

173. (յէջ 116, տող 7). Աղեքսանդրեան ժամանակագիր զԹորգոմ հայր ասէ վորատ կամ Բորատ ազգի Սկիւթացւոց: — կալմէդ յայս կարծիս է:

174. (յէջ 116, տող 18). Իւ Մատթէոս վարդապետ աշակերտ Գր. Տաթեւ. « Ի բռնակալութեան ազգին Թորգոմեան (յամի 1411) որ յետին գազան հանդի- » պեալ Գ. Փէլական »:

175. (յէջ 116, տող 34). Վրաց պատմութիւնն ալ զԹորգոմ դնէ ի Նոյէ, (ըստ վրացի բնագրին Պրոսէյի, զի հայ թարգմանութիւնն՝ ըստ հայ պատմչաց է) բայց բողոքովին տարբեր ազգաբնակութեամբ, զի ասէ զնա որդի Թարչի, որդւոյ Յաւանայ, որդւոյ Յաբեթի:

176. (յէջ 117, տող 24). Ըստ վրացի բնագրին և ոչ ըստ հայ թարգմանչին: Նման այսոր և Թաթարք ասեն Յաբեթ, Յանոս, Թուրք:

177. (յէջ 117, տող 26). Խազրաց թագաւորի նամակն զԹորգոմ անմիջապէս Յաբեթի որդի ըսէ:

178. (յէջ 117, տող 28). Թերեւս ոմանց դրած ֆոնիզացւոց ազգաբնութեամբ այլ՝ Գոմէր, Մանէս, Ահմոն, նշանակեն Գոմեր, Թորգոմ, Հայկն. և յայսմ միաբանին ըստ Ս. Գրոց Գ դնելով ի Յաբեթէ զԹորգոմ:

179. (յէջ 119, տող 18). Յովհ. կաթ. այլ այսպիսի դրութիւն մ'ունի. « Ըստ ազգաբնութեան Սեմայ զմեր՝ Յաբեթ կշռադատեալ գտանին մինչեւ ցԹոր- » գոմ և յսկզբան պայազատութեան որդւոյ նորա Հայկայ՝ ամբ 400 »: Մեզի աւելի ուչ կ'երեւի Հայկայ պայազատութիւնն:

180. (յէջ 122, տող 31). Տ. Բհտն, ճանապահորդութիւն 207: Նամակն Յովսէփ թագաւորի Խազրաց, հրատարակեցաւ նախ հոկտեմբեր յետ կիսոյ ժՁ դարու. Պուքրտորին լատին թարգմանութեամբ սպազրեաց յամին 1660. որ է յառաջ քան զձանօթութիւն վրաց և Հայոց պատմութեանց յԵրոսպա:

181. (յէջ 123, տող 31). Հոս պէտք չէ մոռնալ և զԹորգոմեոս գետն յիշեալ յԵպիփանայ (ի գիրս ականց), որոյ դիրքն թէ և ոչ որոշ նշանակի այլ կարծեմ կամ յերկրին Ամազոնաց, և կամ զԿովկասայինն թերեք, զոր վրաց պատմիչն Լուսկէ անուանէ:

182. (յէջ 127, տող 27). Ոս մասնիկն յունական վերջաւորութիւն է, և երեւի թէ հին պատմիչն ի յոյն կամ անկէ թարգմանեալ զբքէ առած է այդ անունը, ինչպէս նաեւ իր ազգապետին անունն այլ Քարթլ-ոս, կամ մերոյն թոռան անունն Կաղմ-ոս:

183. (յէջ 127, տող 35). Հայ անուամբ զանազան քաղաքք նշանակին ի Ս. Գիրս ինչուան Աբրահամու ատեն, ըստ Եբրայական բնագրին, որ ի մեր թարգմանութեան ըստ յունին փոխեալ են յԱնգէ, Գայի և Գեհ:

184. (յէջ 128, տող 35). Առ Յոյնս Հայկայ նման անունն մ'այլ է Հիակեհե կամ Ուրակ որով ճանաչուի հաւն Աթիլեայ, ծնեալ յԱրամազդայ և յԵրոսպայ կամ յԵգինեայ:

Կարելի չէ՝ այս առթիւ Հիակեհի տեղ՝ վա-նագըն Հայկայ հետ համեմա- տել. դիտուի որ Հնդկաց քով՝ վահագնի սովորական ձեւն է Ազնի: Եթէ ոչ իբր

հաւանականութիւն, զոնէ իբր երթադրութիւն մը կրնայ մտնել Հ. Ալիշանի մէջ բերած կարծիքներու հաւաքածոյքին մէջ:

Մ. Հրս.

185. (յէջ 129, տող 5). Չինաց առաջին թագաւոր կոչի Եսօ. Արեայք զնա- խամարդն և զնախահաւ իւրեանց կոչեն Այու, որ է Մանու (Մօրի Ա. 89):

186. (յէջ 129, տող 34). Սեբիոս, որ ի հնագունից պատմչաց քաղէ. (149, 51):

187. (յէջ 130, տող 35). Զբան Ս. Գրոց « Յերկրէն յայնմանէ Ասուր և շի- » նեաց զՆինուէ » ոմանք ընթեռնուն վասն Բելայ թէ յերկրէն յայնմանէ՝ ի Բա- բելոնէ ել յԱսուր, այսինքն յԱսորեստան և շինեաց են:

188. (յէջ 131, տող 5). Նման Մարիբասայ և Աբիւղենոս (առ Եւսեբ. Ա. 25):

189. (յէջ 134, տող 8. « Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որտորդ » հսկայն Բէլն տիտանեան, ճոխն շաստուածացեալ, որոյ հզօր զօրութեամբ և » սաստիկ յոյժ գեղ պարանոցի իւրոյ: Եւ էր իշխան ամենայն ազգաց որ սփռե- » ցան ի վերայ երեսաց ամենայն երկրի. որոց արարեալ առաջօք կախարդու- » թեամբ հնարս և հրամանս թագաւորական ամենայն ազգաց. և հպարտութեամբ » ամբարտաւանութեան իւրոյ կանգնեալ զպատկերս իւր, և ետ երկիր պազանել » իբրև Աստուծոյ, և զոհս մատուցանէ: Եւ վաղվաղակի կատարէին ամենայն » ազգք զհրաման նորա. բայց մի ոմն Հայկ անուն ոչ հնազանդեցաւ ի ծառա- » յութիւն նոցա. և ոչ կանգնէր ի տան իւրում զպատկեր նորա, և ոչ մեծարէր » զնա ստուածօրէն չքով »: (Սեբէոսի նախաբան):

190. (յէջ 134, տող 14). Խոր. Ա. Փ. « Հանդերձ որդւովք իւրովք և դստե- րօք, և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իբրև 30), և այլօք ընդոծ- նօք և եկովք յարեցելովք ի նա, և բոլոր աղխի:

191. (յէջ 134, տող 24). Վանակ. վարդապետ յ'13 Նաւասարդի ասէ զտարին, որ համեմատի ըստ Հայկայ շրջանի 2497-2500 ամաց:

192. (յէջ 135, տող 11). Վրաց հին Վախթանգ պատմիչն աւանդէ թէ ամե- նայն Թորգոմազունք՝ Հայկայ լեզուն կու խօսէին:

193. (յէջ 144, տող 3). « Խաբեցին դիւթքն և կախարդքն (զՆաբուք.) թէ » հայրն քո Բէլ Քանանացի ապստամբեալ յԱստուծոյ շինեաց զաշտարակն. և ի » բաժանել լեզուացն շաստուած անուանեցաւ. թաքուցանելով ի նմանէ՝ զտա- » րամահ լինել ի Հայկայ յարեթեան »:

194. (յէջ 148, տող 18). Σοταχὴ περίοδος ἑστ' αὐγυιῶδες κίχλος τὸ μενόμενος κωμ ὄνենεφωα, յանուն թագաւորին առ որով սկսաւ շրջան մի 1322. Ն. Ք. յա- ռաջ քան զայն 2782:

195. (յէջ 148, տող 20). Ստուգիւ արեգակնային տարին ոչ է 365 օր և 6 ժամ, այլ իբրև 365 օր 5 ժամ և 48. որով ըսել է որ անոր և շարժական տար- ւոյն զուգասկիզբը ոչ 1460-1 տարին հեղ մը կ'ըլլայ, այլ 1500 (կամ 1505) տա- րին հեղ մը. այս այլ ծանօթ էր Եգիպտացւոց և կոչէին Մեծ շրջան, կամ Դարձ Փիւնկի. զոր և յետոյ երեքի բաժնելով՝ ամէն 500 տարին մէկ դարձ մը սեպէին:

196. (յէջ 149, տող 13). Եգիպտացիք իբր զ'2800 ամաւ Ն. Ք. հաստատեցին զառաջին օր Թոթ ամսեան ընդ երեւման Շնկան. ըստ այսմ եթէ սկսան շրջան յ'2798 ամի՝ երկրորդ շրջան զոյգ կշիռ աւարտի ի 12րդ ամս Քրիստոսի:

197. (յէջ 151, տող 12). Եւ կոչումս Բարիթական ցուցանէ զի շատ հին է սկիզբնաւորութիւն հայկեան տումարիս յազգիս:

198. (յէջ 154, տող 4). Այս տողից մէկն այլ, զորոյ պատշաճ տեղը չկար-
ցանք գտնել՝ այս է. « Առ քաջն Հայկ յուտագրաբար գայ ասելով »:

Հոս Հ. Ալիշան ակնարկած է անշուշտ Ստեփանոսի Ռոշքեան կամենիցեայ բա-
ռագրոց մասին, ուր հատակոտորներ կը գտնուին հին կորսուած հեղինակներու
(հմտ. Հայկագեան քանագրոց յառաջարանը):

Ծ. Հրս.

199. (յէջ 154, տող 10). Թուի մասնաւոր մէկու մը համար ըսել, որոյ գրուա-
ծոց հետեւող երեւի Սեբիոսին քով եղածն:

200. (յէջ 154, տող 33). Կլինքա ռուս բանաստեղծին քերթուածն. Բագմ. Բ.:

Սարգիս Կլինքա ռուս բանաստեղծ մ'էր, Լազարեանց և Հայոց պատմութեան
ընտանեցած. գրած է երկու հայկական ոտանաւոր, մին Հայկի վրայ, միւսն ալ
Արդուարդի, տպուած Լազարեաններէն 1831ին. — հիացողն է Հայոց աշխարհին
և ազգութեան: Ահա նմոյշ մը.

Աշխարհ, կըրկին դու խանձարուրք հայրենի,
Նորափետուր մարդկան ազգի օթարան.
Ի քեզ թըռիչս առեալ հոգով կենդանի,
Ըզքո շընչել կամիմ ես զօդ հեշտական
Յորժամ երկիր շըրապարփակ ողողէր
Եւ սաստ կըրէր ըզմըրըրկեալ կոհակաց,
ՅԱրարատեանն ի գազաթունս անդ ի վեր,
Այն հրաշանեմ տապան իջեալ դադարեաց:
Անդ ընդ երկնիւք Հայաստանեայց գեղափայլ,
Նորոյ ուխտի շողաց նըշոյլ առաջին.
Անդ յէին սէր փարատեցաւ մէզ մըռայլ,
Մինչ պատուիրեաց՝ մարդկան, արիւնք մի՛ հեղցին:

Տես Բագմավեպ, 1844 յէջ 79:

Ծ. Հրս.

201. (յէջ 157, տող 16). Զսա իսկ կարծեմ այսպէս կոչէ՝ և ետքի ըսածս
հաստատէ վարդան վարդապետ Մարաթացի. « Որք անեցան ի Հայկականէն և
» կոչեցան Տուն Թորգոմայ, և ժողովուրդ և ցեղ և անուանակիր հօգր արքային
« Արմենիկայ ». եթէ և սա ըստ այլոց չիմանար զԱրամն, որոյ միայն զօրու-
թիւն ծանօթ է մեզ: (Եղ. Զմիւռն. ասէ Արմանեակս՝ որ է Արմատ և մեծութիւն):

Հայկագունեաց Արմենակն, ըստ նորագոյն քննութեանց, կը համապատաս-
խանէ Ուրարտացւոց Թագաւորութեան մետասաներորդ ինքնակալին, որ կը կո-
չուէր Էրիւնկնա, և Թագաւորեց 675–670: (հմտ. Sandaldjian, *Les inscriptions*
ounéiformes urartiques, introduction, p. XLVI):

Սակայն « Բեւեռագիր արձանագրութիւններ Անդրկովկասում » զրքի մէջ
(վենետիկ, 1897) իրկուսկի կ'ուզէ ցուցնել, թէ Ուրարդեան պատմութեան մէջ
Արմենակի համապատասխանողն է Արգիշտի: Վասն զի, կ'ըսէ նա, Արմենակ կը

կոչուէր նաեւ Արագած, ապա թէ ոչ լեռը պիտի չկրնար իր անունը կրել: Իսկ արդ Արագած անունն՝ Արգիշտի կը յիշեցնէ ուրեմն Արմենակ-Արագած հայկազուն թագաւորը նոյն է Ուրարդուի Արգիշտիի հետ. (էջ 40):

Ռուս գիտնականը չէ բացատրած լեզուաբանական պատճառը՝ որով Արգիշտի Արագած կրնայ ըլլալ: Մենք այսպէս կը մեկնենք. Արգիշտի հայկական Արգեստ ձեւը առածէ, իսկ Արգեստ՝ Արագած եղած, համտ. Չ-գետս և Չգածնուլ: Այբի յաւելուածն՝ առարկութիւն մը չկրնար ըլլալ. Ուրարդուի մէջ ալ Ա ակեցած է (Արարատ):

Քնականորաբար գրքիս մէջ գրուած ստուգաբանութիւն (Արմենակայ-ագած) լեզուաբանական ճշմարտութիւն մը չկրնար ըլլալ, որչափ յիշեցուցիչ՝ հիներու հետաքրքրական կարծիքներուն: Նիկիոսկիի վերոյիշեալ գրքի մէջ (Թրգմ. Խաւաւտուր Թով-Նաեհիանեց) ընթերցողք պիտի տեսնեն՝ թէ Խորենացի Հայկազանց պատմութեան մէջ ի՞նչպէս յաճախ արձագանգ կ'ըլլայ ուրարտական պատմութեան (համտ. Մենուաշի = Մանաւազ) ոչ հեղինակ առասպելներու, ինչպէս հռչակեցին ի սկզբան քանի մը անխոհեմ քննադատներ:

202. (յէջ 158, տող 9). Ինչո՞ւ կրկնութեամբ Խորխոռունիք, և ոչ Խոռունիք չէ յայտ:

Մ. ՀԵՂ.

Գարագաշեան իւր Հայոց քննական պատմութեան մէջ « Խորխոռունիք » անունը կ'ուզէ մեկնել karker-carog (բանտ) բառով, իբրև « բանտապահներ »: Շատ հաւանական է՝ թէ անոնք Ուրարտացեաց Մնացորդ մ'էին, քանի որ Մուևաւազ (= Մենուաշի)՝ իրենց նախահօր իբրև եղբայր կը նշանակուի. (Խոր. Ա. ԺԲ) բայց ստուգաբանութիւնը երկբայական է:

Հոս Խոր. կ'ըսէ. « Եւ ի սոցանէ ասն լեալ զնահապետութիւնս մանաւազեան » և զբնուեաց, և որդունի յանուանեալ »:

Կարծեմ թէ Ուրարտուի Ուրարտացեաց Urdahini (Ուրարտացի) բառն է, զոր Նիկիոսկի կը գտնէ բեւեռաքանդակ արձանագրութեանց մէջ, բայց մոռնալով զայն համեմատել Հայոց Ուրարտուի ցեղին հետ, որ կ'երեւի Ուրարտացեաց մի մեծ և հարազատ մնացորդն էր:

Մ. ՀԵՏ.

203. (յէջ 159, տող 1). Ի գահնամակին Արտաշրի և Ս. Սահակայ՝ առաջին է:

204. (յէջ 161, տող 31). Մի ի թագաւորաց եգիպտոսի ԺԸ հարստութեան կոչի Արմայիս, որ և Հաւստէս Բ, և համարի կեցեալ ԺԳ դար նախ քան գրքիստոս նոյն կամ եղբայր գու Սեսոստրի մեծի, և հալածեալ ի նմանէ, կոչի նա և Դանաուս:

205. (յէջ 162, տող 4). Աստի կարծի Brig կոչումն գաղղիական քաղաքաց, և Burg գերմանաց:

206. (յէջ 162, տող 33). Խոր. Արաստ գրէ, այլք Երաստ ասեն:

Թևոփիլակտոս Սիմոկատա իւր (բիւզանդական) Պատմութեանց Գ. գրքին մէջ (յէջ 125) կ'ըսէ. « τὸν Ἀραζην στρατοπεδῆσται ποταμόν, δὲ Ἐρας ἀποκαλοῦσιν οἱ βαρβαροί ». այս վերջին բարբարոս տիտղոսը Հայոց կը պատկանի անշուշտ որովհետեւ Թէոփիլակտոսի Երասն անշուշտ հայկական Երաս(ի)ը կ'անկնարկէ:

Մ. ՀԵՏ.

207. (յէջ 165, տող 10). Ի գահնամակի ԼԳ Գաչոցեան: Ի Կերսիսին Աշտու-
ցեան. նոյնք թուին:

208. (յէջ 166, տող 11). Ըստ աւանդութեան մեր հին պատմչաց մէկուն՝ ար-
դարեւ սեմական կ'ըլլայ անունը, եթէ, որպէս ասէ, Աբրահամու ընդոծնին թոռն
էր Փառտիս, որպէս յետոյ պիտի յիշենք:

209. (յէջ 166, տող 32). Զի այսպէս գրի յՕր. ինչ. « Թողեալ զՀարմա յԱր-
» մաւեր, հանդերձ որդւովք բնակել ». մինչ այլ Օր. « հանդերձ որովք բնակէրն ».

Թէ Գեղարքունի անունը Գեղամէն կ'ելնէ, շատ տարակուսական է այժմիկ.
Նիկոլսկի զայն գտնել կարծէ ուրարտական Kiehuni (տես էջ 51) անուան մէջ.
մենք կարծենք թէ լաւագոյն կ'ըլլար Arkukhuni (յէջ 55) անունն ալ ի մէջ բերել
և ըսել թէ Kiehuni-arkukhuni անուններու միացումով կազմուած է Գեղարքունի.
ապա թէ ոչ՝ արք յաւելուածը՝ անմեկնելի պիտի մնար:

Մ. Հրս.

210. (յէջ 169, տող 33). Ըստ Զամչեան պատմահօր Շրուանք իսկ որ ընդ
մէջ ողնաշարին կովկասայ և կասպից ծովու՝ կոչեցան յանուն Սիբուանայ որդ-
ւոյ Սիսակայ: Բայց ոչ գիտեմ ուստի՞ առեալ է զաւանդութիւնս այս:

Զամչեան անուանց նմանութենէն հետեցուցած է թէ Սիբուանի սերած պիտի
ըլլան:

Գալով Ալուանից, Albani, կրկին ժողովուրդներ կան՝ որ անոնց յաջորդ ըլ-
լալ կը թուին: 1°. Աթիսնէր, արիական ցեղէ, դեռ կը պահեն շատ սովորու-
թիւններ, քրիստոնէութենէ մնացած. կ'երեւի թէ Ալուանք վերջ ի վերջոյ մահ-
մետականացան մասամբ, ինչպէս հանդիպեցաւ կովկասու շատ քրիստոնեայ փո-
քրիկ ժողովուրդներու: Նոյն իսկ Վրաց մաս մը (կիրճի), Հայոց մաս մը (քեր-
տեր) նոյն ճակատագիրն ունեցան:

2°. Ալպանիացիք կամ ըստ իրենց անուանակոչութեան Սքիփերարի (արք
ժայռից): Գիտելու է որ Ալուանք Վրացի և այլ շրջակայ ազգերէն Ասան կը կո-
չուէին, անոր համար խորենացի այնքան հանճարեղաբար Ասան անուամբ նախա-
հայր մը կը դնէ անոնց՝ որ աղու բնաւորութիւն ունէր:

Արդ այս Ասան անունը չկայ Ասեանոս յորջորջման մէջ, ինչպէս Աղուանքը՝
Ալպանիացիի մէջ: Տարակոյս չկայ՝ թէ բարբարոսութեամբ իրարու կը հաւասա-
րին այս երկու ազգեր. այժմեան Ալպանիացիք ծանօթ են արդէն, իսկ հին Ա-
ղուանք՝ մարդագոհ ունէին, ինչպէս կ'ըսէ Մովսէս կաղանկատուացի: Եւրոպացի-
ներ՝ Պեղադեանէրք կ'ուզեն տեսնել այժմեան Ալպանիացիներուն մէջ, մինչդեռ
ուրիշներ գաղթականութիւն մը կը համարին զանոնք՝ Գոթաց, Ալանաց և այլոց
հետ Եւրոպա եկած: Նախ բնակեցան անոնք Ալփանիա գաւառի մէջ, անոր համար
Ալփանացիք ալ կոչուած են: (Տես այս վերջին կէտի մասին Բազմովեպ, 1847):

Մովսէս կաղանկատուացոյ (1860, Փարիզ, Կ. Վ. Շահնազարեան) հրատարա-
կութեան մէջ Շահնազարեան ընդարձակ ներածութիւն մը կը նուիրէ Ալուաններու
ազգաբնութեան: Եւրոպայի մէջ որչափ Alb սկզբնաւորութեամբ անուններ կան,
ըստ հմուտ Շահնազարեանի, Ալուանք բառէն յառաջ եկած են: Այնպէս որ Անգ-
ղիացիք ալ Ալուաններէն յառաջ կու գան - ոչ թէ միայն Ալպանիացիները, ինչպէս
ցարդ կը կարծուէր. -- Անգլիա՝ ի հնումս Albion չէ՞ր կոչուեր:

Մ. Հրս.

211. (յէջ 171, տող 20). Գր. Մագիստրոս ստուգաբանութեամբ թէ աւանդու-
թեամբ կ'ըսէ. « Ո՛ւր Հարմայն հոյակապ հիմնարկութիւնս ». աստի թուի, ըստ
Չամչեան պատմահօր, թէ Հարմա քարակոփ պարսպով պատած ըլլայ զԱրմաւիր,
և մեծագործ բնակութիւններ շինած հոն և դուրսը, որ մեզ անստոյգ է կ'երևի:

212. (յէջ 175, տող 6) Քնար ըստ Պարսից պատերազմ, գործ, սերմ:

Վերոյիշեալ բառի մասին կը խօսի նաև Փորթուզալ Փաշա Եղիշէի քննադա-
տութեան մէջ Գրպիկար բառի առթիւ (տպ. 1903, յէջ 252 ծնթ. 1):

Ծ. ՀրՏ.

213. (յէջ 175, տող 8). Մովսէս Կաղանկատուացի ասէ « Կախէ զպարանոցէն »:

214. (յէջ 177, տող 7). Գաղղ. պատմիչն որ գրեաց Hist. Delphinat. Lugdun-
1498. աւանդէ զԳոմերայ յետ խառնակութեան լեզուացն բնակեալ նախ ի Հայս,
ուստի ինքն կամ որդիք իւր անցին ի Փոխուզիա և ի Կապադոզիկիա, յորմէ սե-
րունդք նորա Ալմոն և Ուրանոս սփոռեցան ցեղերս Փ. Ասիոյ և անցին յԵւրոպէ:

215. (յէջ 177, տող 18). Այլ ոմն ի պատմաց մերոց գրէ թէ. « Հալածական
» առնելով ի միջերկրացն՝ զՊասախրայ ազտիշատեան արկանելով ի կղզի մի
» յԱսիա »:

216. (յէջ 178, տող 5). Գիտնալու է որ Արամայ ատեն և անկէ շատ ետքն
այս Կապադոզիկոյ գլխաւոր քաղաքն հիմակուանին տեղն չէ, այլ քիչ մը հեռու:

217. (յէջ 178, տող 10). Բազմահմուտն Ռոմմէլ (Հանրագիտ բռթ.) Ամովս
մարգարէին ըսածն (Թ. 7.) « Ո՛չ հանի զԱյլազգիս ի Գամրաց » ուր Լատինն
կ'աւելցընէ « և զԱսորիս ի Կիւրենեայ », կ'իմանայ մեր Արամայ քշած և բերած
զաղթականները:

218. (յէջ 180, տող 4). Յունական առասպելեաց մէջ կը յիշուի Ալմոն (A. :)
անուամբ չաստուած մը, կամ դիւցազն Սկիւթացի, որդի Մանէի կամ Փանէի, և
հայր Ուրանոսի և Դիդեայ (կամ Դոսոսայ) (Երկնի և երկրի): Ասոր համար ընդհա-
նուր պատմութիւն գրողաց մէկն կ'ըսէ թէ Հայաստանէն ելաւ եկաւ ի Կապադոզի-
կիա և իր անուամբ շինեց զԱլմոնիա. իրմէ վերջը իր որդին Ուրանոս տիրեց
Կապադոզիկաց և Հայոց. Ուրանոսի որդին ալ պապուն անուամբ Ալմոն ըսուե-
ցաւ. ասոնցմէ առաջ եկան Կապադոզիկաց թագաւորք: — Զգիտեմ ուսկից առած
է հեղինակդ այս գրոյցը, որ կը յիշեցընէ մեր Արամայ գործը. ժամանակին ալ
յարմար կու գայ. վասն զի 2025 տարի Ն. Ք. կը դնէ զԱլմոն:

219. (յէջ 180, տող 35). « Յերկարեալ ժամանակս լինել յարեւմուտս »: —
Խոր. Ա. ԺԵ. Այսպէս կ'իմանայ մեր Յոհ. Կաթողիկոս Պատմիչն այլ. « Ընդարձա-
» կեալ ասի հարստահարութեամբ բազմաւ զսահմանս Հայոց հասարակ ընդ չորս
» ոլորտս երկրի... Ոչ միայն զայս ոմանս դիւրադաւս այլ և զԿապադոզիկեցիս եւս
» բազում արիական քաջամարտութեամբ ընդ իւրեաւ նուաճեալ սեփականէր »:

Այսուանայ անձնաւորութիւնն ինչ պատմական արժէք ունի արդի քննադատու-
թեան առջեւ:

Գիտուի որ Ասորոց նախահայրն եւս Այամ է, (համտ. Եւսեբեայ Քրոնիկոնը,
և Ասորիք այլ իրենց նախահօր պատճառաւ Այամ կոչուած, ճիշդ ինչպէս Հայերը՝
Այմէն:

Այս նմանութիւնը տեսնելով քննադատներ իսկոյն փորձութիւն պիտի զգան
Խորենացին փոխառութեան մէջ զտնալու և ուրանալու հայ Այամի գոյութիւնը:

Սակայն Որարտագիտութիւնը հակառակ վճիռ կու տայ: Բաբելացոց Սալմանասար Բ.ի ժամանակ (860-825 Ն. Ք. Ք) կը գտնենք Վանայ մէջ Արամէ անուամբ Թագաւոր մը, որ անշուշտ հիմնադիրն եղաւ Aramalıh (= Արամաւոր) որ կը նշանակէ քաղաք Արամէի:

Սոյն Արամ կը Թագաւորէր 860-843 Ն. Ք. Ք. ըստ Սանտալինեանի: Կարող ենք զինքը պատմական իրական նախատիպարն ընդունել հայ Արամին, զոր բնականապէս չափազանց ճոխացուցեր է Խորենացի:

Ե. Հրս.

220. (յէջ 181, տող 30). Վասնզի Ս. Գրոց գրածն «Յերկրէն յայնմանէ ել
» Ասուր», լաւագոյն կը սեպուի կարդալ «Յերկրէն յայնմանէ (ի Սենարարաք)
» ել (Նեբրովթ) յԱսուր, և շինեաց զՆինուէ»: Ասուր կամ Աթուր որդի է Սեմայ,
որուն վիճակուած էր այս երկիրս. և իր անուամբ կոչեցաւ հոն շինուած մեծ
քաղաքն՝ որ յետոյ Նինոսի անուամբ կոչեցաւ Նինուէ: «Սա զքաղաքն Աթուր ըն-
» դարձակեալ՝ յանուն իւր կոչէ Նինուէ»: (Վարդան). Մովսէս Քրիստոսէ ԺԶ դար
առաջ կը յիշէ զՆինուէ՝ որ Նինոսի անունէն կոչուած է, յայտ է ուրեմն որ Նի-
նոս ալ իրմէ առաջ է, և ոչ եթէ իրմէ երկու երեք դար վերջը, ինչպէս ոմանք ի
զիտնոց հիմայ կ'ուզեն դնել. (որպէս Նիպուր). Վոլնէյ, Տոնու, Հէեբրին: Ոմանք
ընդհակառակն զՆինոս և զՇամիրամ դնեն ի իՅ դարու Ն. Ք.:

221. (յէջ 182, տող 34). Բերոս. Աննեան, Թէ և անհաւաստի, մարթի օժանդակել կարծեացս, զբուցիւքն որ զՍաբաթէոսէ՝ Սակայց առաջնորդէ որով զՀայս
իմանայ, և ի դէպ գան Արամայ հակառակութիւնք Սամբայ ընդ Նինոսի, զորոյ
չկարելով զդէմ ունել՝ խոյս տայ յեզերս Սարմատեան ծովուն (Պոնտոսի?) քաղա-
ւորեցնելով ի Հայս գորոյի իւր Բարզան:

222. (յէջ 184, տող 1). Խոր. Ա. ԺԳ. «Երկիրը կասկածանաց խարդաւանակ
» լինելոյ իւրոյ Թագաւորութեանն զայսպիսիս համարեալ իրագործութիւն (զվրէժ
» խնդրելն յԱրամայ) ծածկէ զչարութիւնն, և հրամայէ նմա զայն իշխանութիւն
» անկասկածաբար ունել »:

Կաղկ. Ա. «Զսա Նինոս անուանէ իւր երկրորդ, և համարձակութիւն տայ
» վարսակալ ածել մարգարտեայ, Թէպէտ և վերին աչք» : Նոյնպէս ասէ և
Սամ. Անեցի:

223. (յէջ 184, տող 31). Խոր. Ա. ԺԵ. «Բայց Թէպէտ և ոչ ի բուն մա-
» տեանն, սակայն որպէս Մար Իբաս կատինայ պատմէ, ի փոզունց ոմանց և
» աննշանից արանց ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի ար-
» քունեաց »:

224. (յէջ 185, տող 31). Ինչպէս ըստ զանազանից Բարձր նշան, Շամկատար
օձից, Սիւմի կամ Սամից ձիւտ, Ալլուսի, և այլն:

Հին պատմիչներ բոլորովին անհամաձայն են իրարու Շամիրամայ անձնաւոր-
ութեան մասին: Այնպէս որ կրնանք այլեւայլ Շամիրամին դնել:

1. Շամիրամ կին Նինոսի, 2000 տարի Ն. Ք. Ք. նա իր մամուսնոյն մահուանէն
վերջ ամուսնացաւ իր Նինուաս որդւոյն հետ, քառասուն երկու տարի Թագա-
ւորեց, Բաբելոնի մէջ մեծ շէնքեր շինեց, արշաւեց Հնդկաստան, յաղթուեցաւ, մե-
ռաւ: (Գիտողը Սիկիլիացի, Յուստինոս, առնելով կտեսիսա կնիտացիէն):

2. Շամիրամ, որ կ'ապրէր 1400ին (Բեբոսո):

3. Շամիրամ 800 Ն. Ք. Ք. (Հերոդոտ):

Շամիրամայ զրոյցին մէջ, կ'ըսէ Օփփէրթ արդի մեծ բարեւազէտը, խառնուած են Աստարտի և Տերգեստոյի զրոյցներ, ինչպէս իր ազանի կոչումն ալ կը ցուցնէ: Բայց պատմական անձ մը եղած կ'երևի Շամիրամ անունով. վասն զի բարեւական արձանագրութեանց մէջ կը գտնուի Քրիստոսէ 800 տարի առաջ, Հերոդոտի ըսածին պէս, Սամանուրատ անուամբ Թագուհի մը, կին Նինուէայի Ասասմիրարի (858-29). Ժամանակակից Ուրարտացւոց Արամիս (860-843) Լուտիպրիս (843-835) Սարիզուրիս Առաջին (835-820):

Հետեւաբար Արայի վրայ պատմուածները, ժամանակագրական տեսակէտով, պիտի յարմարէին Արա-միսին, դժբաղդաբար Սամանուրատ Թագուհւոյն անունը միայն մնացած է, և այլ ոչինչ:

Խորենացւոյ Շամիրամը ինչպէս յառաջ եկած է: Անշուշտ ծանօթ էին իրեն Դիոդորի և Յուստինոսի ի մէջ բերած զրոյցները. անոնք կ'առասպելին՝ Բարեւոնի շէնքերն և արձանագրութիւնք Շամիրամայ ընծայելով. Խորենացի ալ Հայաստանի մէջ եղածները իրեն կ'ընծայէ: Կը սխալի Գեղեր երբ կ'ըսէ. « Շամիրամայ զրոյցն ուրիշ բան չէր, բայց բնիկ արամէական ղիցախառն առասպել մի » (Հնտագոտոյրիւն հայ դիցաբանութեան, Թրգմ. Հ. Յովհաննէս Վ. Թորոսեան, էջ 90-91): Բայց մենք Խորենացւոյ Շամիրամին մէջ՝ ուրիշ անձ մը կը տեսնենք:

Քրիստոսէ 800 տարի առաջ Շամի-Ռաման (825-812) անուամբ մէկը կը Թագաւորէր Բարեւոնի վրայ. սա Ուրարտուի դաշնակից Նաիրիի երեսուն Թագաւորներու յաղթելով, պարտեալներու անուններն ու մայրաքաղաքները նշանակեց արձանագրութեան մը մէջ, զոր տես ԲՅՄՄ. Ա, էջ 29-31 տող 45, 64 սիւնակ:

Արդ մենք կ'ենթադրենք թէ հայ երգերու մէջ կը խօսուէր այդ Շամի-Ռամանայ արշաւանքի մասին: Խորենացի Շամ(ի)-րամ (ման) հասկցաւ զայն և օտար զրոյցները օգտի բերաւ՝ անոնցմէ պատմութիւնը ամբողջացնելու համար:

Դիտելու է որ Շամիրամ կրկին պատերազմ կու տայ նախ յԱրարատ, յետոյ ի Վան, երկուքն ալ յայտնապէս արձագանգ Ուրարտու և Բիայնա անուններու:

Մ. Հրս.

225. (յէջ 186, տող 8). Մեր հին պատմիչաց մէկը Արայի զեղեցկութեան համար կ'ըսէ, թէ « Ոչ գտանէր յայնմ ժամանակի նման նորա այր ոք ամենեւին » պատկերաճոխ »:

Հ. Ալիշանի յիշատակած այս հին պատմիչն է Սերէոս, Դպրութիւն Ա, էջ 5. (տպ. Ս. Պետերսբուրգ 1878):

Մ. Հրս.

226. (յէջ 186, տող 25). Կիստ կամ Կիստուն, արեւ, զունտ երկնից:

227. (յէջ 186, տող 28). Զայս յայտ առնէ Պատմիչն մեր վարար կոչելով զնա. ի սանսկրիտ լեզու վար-արոճա նշանակէ մեծապարտ: Յայս ակնարկէ և թովմ. Արծր. « Հայրստայից կոչելն զնա, միանգամայն և վազաշոտ և հրաւ » մանի բարուք ? »:

Վերոյիշեալ վարար բառը գործածողներն են Խորենացի, « Կին ոմն խոշորա-
» գեղ վարար » . Բ. 34 :

« Առնամուկի վաճառ և վարար » Մագ. : Դատ լաւ է Հ. Ալիշանի ստուգաբանու-
թիւնն, ինչպէս շատ անհաւանական հիներու կարծիքը՝ որ վարարը կը հասկնային
կին վաճառող՝ « որ վարի գհետ արուի » (Տես Հայկազն բառագիրք) :

Իսկ Թովմա Արծրունայ խօսքը կը գտնուի յէջ 7, ուր տարակուսական ընթեր-
ցուածը այսպէս տպուած է. « Հումանի բարուք » :

Ծ. Հրս.

228. (յէջ 187, տող 15). Ի՞նչ նշանակութեամբ յանուն Արայի այդպէս կո-
չուիլն՝ անստոյգ է. թէ և ոմանք արատ բառէն մեկնաբանեն, իբրև Արայի ա-
բատուելու, վիրաւորելու տեղն : Աւելի կ'ընտրէի պարսիկ Բէտ բառն՝ Արայի կո-
րովը. ոյժը նշանակելով :

Արարատի ստուգաբանութեան մասին տես մեր 86 ծանօթութիւնը :

Ծ. Հրս.

229. (յէջ 187, տող 16). Յոհ. կաթ. « Արայի գշինութիւն աշխարհի տնօրի-
» նեալ՝ յիւր անուն զբնակութեան իւրոյ վայրս կոչէր Արարատ » :

230. (յէջ 188, տող 5). Ըստ ձայնին առաւել թուի յանուն Արամայ այսպէս
կոչել գեղըս իբր Արամունիք, որպէս Տարօն և Յրօնք :

231. (յէջ 189, տող 14). « Ունի ի ծածուկ, և ոչ ումնք ի ծանօթից նորա
» ցուցանէ զնա » . (Սեբիոս) :

232. (յէջ 191, տող 6). Սեբիոս վկայէ. « Այսպէս հանէ համբաւ Արալեզաց
» տիկինն Դամիրամ » :

233. (յէջ 193, տող 27). Ըստ օրինակաց ինչ 12,000 և միւսն 6000 :

234. (յէջ 196, տող 35). Ինչուան հիմայ վանայ կողմը կը պատմեն թէ Ար-
տամնտի քով ծեր մը յափշտակեց Դամիրամին ուլունքները և փախչելով Գատուա-
նայ մօտ ձգեց ի ծոփն, որ ազատի աշխարհ անոր ըրած անզգամութիւններէն այն
ուլանց ձեռքով . (տ. Ուղեւոր. Հ. Կերսիսի) :

235. (յէջ 197, տող 5). Դամիրամայ վրայ պատմուածներէն մէկն այլ այս է
(Պլինին. Ը) օր մը մազերը շտկելու ատեն կը լսէ որ Սիրակք ապստամբեր են.
մէկէն խառնակ մազերովը կ'եննէ կը հանդարտեցնէ զանոնք. անոր համար իրեն
այն կերպարանքով արձան մը կը կանգնեն : Այս յիշեալ ազգն կամ Սարմատա-
ցոց և Պարթեւաց մէջ է, կամ վրկանաց քով և կամ մեր Դիրակը :

Մեր ազգային զրուցաց մէջ այլ կ'ըսեն թէ իրեն ուլունք յափշտակող ծերուն
ետեւէն վազելու ատեն՝ մազերուն մէջ մեծ քար մը դրեր ու պարսիքէ քարն ըն-
կեր է Արտամէտի մօտ փոսի մը մէջ, զոր և ինչուան հիմայ ցուցրենն :

236. (յէջ 198, տող 6). Մեր օրերս բանաստեղծ երէց մը Գաբ. Պատկան. մեր
հին նախնեաց ոճոյն նմանաբան երգով մը այս Յուսութուլանց այլաբան մեկնու-
թիւն մը կու տայ, որպէս թէ անոնցմէ ի վիզն և ի ծոց ձգած՝ իրեն կը քաշէր
երիտասարդաց սէրը, հանդերձ կախարդական զօրութեամբ .

Յուսութք յուլունսն Դամիրամայ .

Յուսութք ի ծոց արքայուհոյն

Սրբեն յաշաց զարտասուս ,

Զարտասուս վասն մահու Արայի.
 Տեսանեն զկարդոս ի գահի:
 Յուուիթք յուլունս արքայունայն
 Գործք ձեռաց Զրադաշտայ՝
 Կացուցանեն զընթացըս գետոց,
 Շիջուցանեն զթափ նետից նիզակաց,
 Կթեցուցանեն զսիրտըս քաջաց
 Ի սէր մատաղաւուրց թագունայն.
 Սրտացուցանեն զերիտասարդս
 Ի գեղ երեսաց Շամիրամայ:...

237. (յէջ 198, տող 30). Զոր օրինակք ոմանք Սոս անուանէր գրեն՝ բայց որոշակի կը կարդայ Մագիստրոս (Թղ. ԺԱ). « Սոսին յԱրմաւիր առ դրան ապա... » բանին արքունի, զոր Անուշաւանն պատուէր Արայեանն մանուկ, վասն որոյ « Սոսանուէրն կոչիւր »:

238. (յէջ 200, տող 14). Ի Մագիստ. և ի Մխիթ. Արիվ. զուգաթիւ գտանին (29) ի Յոհ. Կթ. 26. ի վարդան և յՈսկիփ. 24:

239. (յէջ 200, տող 16). Անուշաւանէն մինչեւ Տիգրան Ա. Հայաստանի բազմաթիւ իշխաններ թուարկած է Խորենացի. ասոնց զոյութիւնը շատ տարակուսական է՝ նկատելով որ ոչ ուրարտագիտութիւնը, ոչ օտար հեղինակներ կը հաստատեն զանիկա: Քսենոփոն կիւրաճարդի մէջ կը ներկայացնէ զՏիգրան Ա, իբր դաշնակից Կիւրոսի. ուրեմն Տիգրան Ա.ը կարող ենք նախահայր ընդունել իրական թագաւորներու:

Մ. ՀԻՏ.

240. (յէջ 216, տող 25). Գարեհ կամ Գարիոս միւս եւս հին պատմիչ Տրոփական մարտից (Գլ. ԺԵ) ընդ Մեմնոնի զօրավար մի եւս Եթովպացւոց յիշէ զՊերսէս:

Նախորդ էջին մէջ Հ. Ալիշան կը խօսի խաղիկաց վրայ, որ Յոյներէն չձև ալ կոչուած են:

Նորագոյն հետազօտութեանց համեմատ՝ խաղտիք հին Ուրարդացիներն էին, որ խաղիկացի կը կոչէին զիրենք՝ յանուն իրենց խաղի աստուծոյն: Երբ հայ ցեղը գերագօր եղաւ Հայաստանի մէջ՝ իրենք դէպ ի Արեւմուտք քշուեցան, տանելով հետերին իրենց լեզուն և սովորութիւնները: Երկաթագործ և պատերազմասէր ըլլալով, շատ նեղութիւն կը պատճառէին հայ երկրագործներուն. Քսենոփոն (կիւրաճարդի մէջ) կը ներկայացնէ զԿիւրոս իբր հաշտեցնող այդ երկու թշնամի ազգաց:

Սոյն կէտերու վրայ տես բաց ի Նիկոլսկիի, Սանտալճեանի (ուրարտական բառարան, յէջ 368-70) վերոյիշեալ երկասիրութիւններէն, Հիւպլճեանի « Հին հայ... » կական տեղեաց անունները » թարգմ. Հ. Ներսէհ Անդրիկեան, Բզմ. 1904, էջ 396, 509, և այլն:

Գիտուի որ Քաղիկացի անունը Քաւդիայ և Քոզէ ձեւերն առած է (Տես Հայկազեան բառագիրը): Ըստ այս լեզուաբանական երևոյթին՝ խաղիկացիք բառն ալ պէտք էր խաւդիայ, խօյի դառնալ:

Եւ յիրաւի քրդերէնի մէջ խօզի կը նշանակէ Աստուած. կարելի չէ՞ այս բառի մէջ խօզիի աստուծոյ անունը տեսնել: Պարսկական խօխտա, գերմաներէն Gott բառի գոյութիւնը չն՞ց ցուցնե՞ր՝ թէ հնագոյն ձեւ մը եղած ըլլայ հասարակաց մայր:

Ըստ Սանտալճեանի Haldish նախնական ձեւն էր Kas-dis (կայծ տուող, լուսաւորող), հմմտ. սանսկրիտ Kās = լոյս:

Ծ. ՀԲՏ.

241. (յէլ 217, տող 2). Սեւան, և Սիսակայ երկիրն, որոյ անուն յանկակից իմն լսի և Սուսեայ կամ Շոշեայ ուստի Մեծնոն եկն:

Վիրգիլ. Ա. Eosque acies et Nigri Memnonis arma.

Արտին Միլետացի՝ զոր ոմանք արբանեակ Հոմերի ասեն և այլք ի սկիզբն ոլում պիտղացն կեցեալ, արար զատ ի Տրոլականէն և զԹիոլպականն քերդուած, յուրում զՄեծնոնի քաջութիւնսն երգէր յետ մահունն Եկտորին:

242. (յէլ 218, տող 26). Պայպակ գրէ Ն. Պալեան:

Սկայրոյի՞ն որ կայպակի յաջորդեց, ըստ Լընորմանի, կը համապատասխանէ Արգիշտիսի. ինչպէս Հրաչեայ՝ Ուրասսի: Այս վերջնոյն անուամբ կոչուած գաւառը Ուրգանա կը համապատասխանէ Արածանիի (հմմտ. Ուրարդու = Արարատ), բայց թէ Ուրասս՝ « Հրաչեայի » շատ տարակուսական է: Դարձեալ տեսանք թէ Արգիշտի աւելի Արագածի կը համապատասխանէր:

Ծ. ՀԲՏ.

243. (յէլ 226, տող 20). Ըստ Բ. Մնաց. Ե. 26. « Ի քաղա և ի քարովր » առ Գետեգերբն Գովզանայ »: — Գովզան ըստ ոմանց Գըլլ-էօզէյն գետ Մարաց կամ Իրազայ, ըստ այլոց նոյն ինքն քարովր կամ Գովբար է, որ և Երասսի կոչեցեալ ի Յունաց, և է օժանդակ Եփրատայ բոլնեալ ի լեռանց Արձնեաց, և խաղալով ի Միջագետս: — Բայց քարովրս այս առ որով առաջին գերութիւնն Սամարացոց բնակեաց՝ է խարոյ գետ Զախուի օժանդակ Տիգրիսի, բոլնեալ ի հարաւային լեռնասահմանաց Հայոց: Բարձրաբերձ լեռինք կողմանցն Ճիւտի կոչեցեալք կարծեցան յոմանց յանունէ Հրէիցն (Եհնուտի) այսպէս կոչեցեալ, և բազմաց կարծիք են բնակչաց կողմանցն լինել ի սերնդոց անտի տասնեցուն ցեղից Իսրայէլացոց գերեկոց:

244. (յէլ 226), տող 33). Ըստ այլոց էին ի Պարսից, ի կոստէս գաւառէ Շոշայ. ըստ այլոց Փիւնիկեցիք էին ի սահմանաց Սիդոնի:

Մարդինի համարի զՍկիւքս բնակեալս առ Երասսաւ:

Սգալիճէր՝ զԽուրայիս կողքեաց. այլ ոչ կարծեմ ցայնվայր տիրապետեալ Ասորեստանեայց:

Տիգրնսըն (Ասիակ. Երգ. 1837) Գրութա համարի յիրագ կամ ի Բաբելոն: — Նիպուր՝ յելամ՝ որ է յարեւելս Բաբելացոցն:

245. (յէլ 227, տող 33). Ըստ Նիպուրայ եկեաց իբր ամս 10, և յայնմ ժամանակի երկրորդ անգամ զԲաբելոն, և ի ծովեզերս Կիլիկոյ խորտակեալ զնաւատորմն յելուզակաց Յունաց շինեաց զՏարսոն, որպէս պատմէ Աբիւղենոս: — Եւսեբ. Ա. 53: Բայց գիրք Տովբիթայ Ա. 24. ասեն ոչ աւելի քան զ'50 օր կեցեալ յետ դարձին Երուսաղեմէ:

246. (յէջ 228, տող 35). Առ Սեբէոսի, որ ասէ յետ սպանման Սենեքերի-մայ « ապա ապստամբեցին յԱսորոց թագաւորաց ծառայութենէ » :

247. (յէջ 229), տող 6). Կամ թէ Հայ թարգմանին այսպէս յեղաշրջեալ, որ վրիպանօք առ Խորենացոյ գրի Արգամոզան :

248. (յէջ 229, տող 35). Զնոյն հաստատէ Խոր. և այլուր Բ. Է. « Եւ են այս » երկու տունքս՝ ի զաւակէ Սենեքերիմայ, Արծրունիս և Գնունիս » :

249. (յէջ 230, տող 10). Ի պատերազմէ Եսայեայ յետ նախակարգեալ բանիցն « Եւ Սանասար շինեաց զՍասուն. և Անդրամնիէք գնաց յԱղուանս » :

250. (յէջ 230, տող 32). Սեբ. ասէ. « Էր նա որդի որդւոց Արամնիկայ », զոր համարիմ ուղղելի՛ Որդի որդւոյն Հարամայ կամ Արամայի, նուազականաւ կամ փաղաքօրէն Արամնեակ կոչեցելոյ : Եւ ըստ այսմ հայր նորա անանուն մարթի լինել Արտաշէսն կոչեցեալ յայլոց և նոյն ժամանակ Հարամայի յիշեցեալ :

Հ. Աիշան, Քրիստոսէ 600 տարի առաջ Հայոց իշխան եղած կը համարի զԱյր-տաշէս և Զարեհ՝. այս վերջինը կը գտնենք Սեբէոսի մէջ (յէջ 6) իսկ Արտաշէսը՝ ոչ Խորենացոյ մէջ կայ և ոչ ալ Սեբէոսի. և ըստ ընդհանուր աւանդական պատ-մագրութեան՝ Արտաշէս Ա. է այն՝ որ Յունաստանի վրայ արշաւեց :

Ուսկի՛ց այս տեղեկութիւնները ի մէջ կը բերէ Աիշան :

Քրիստոսէ գրեթէ 160 տարի առաջ Անտիոքոս Գ. Հայաստանի վրայ թագա-ւոր կը դնէր Արտաշիսս անուամբ նախարար մը, որ յետոյ Զարիադրէս (Զարեհ) իշխանին հետ միացած՝ ապստամբեցաւ Մակեդոնացիներէն Արտաշատ քաղաքը շինեց՝ Անիքաղայ ծրագրով, դաշնակցեցաւ Հռովմայեցոց հետ, և անկախ Հա-յաստան մը հիմնեց : (Սարաբոն ժԱ, ժԶ, 6 : Պրուտարքոս, ի վարս Լուկուլլեայ : Պոդիբոս ժամանակակից պատմիչ, ԻԶ, 6 : Ապպիանոս, Ատորականք, 46, 66, և այլն) :

Հ. Աիշան Սեբէոսի քով գտնելով Զարեհ՝ անունը, փորձած է օտար պատմիչ-ները հայ աւանդութեան հպատակեցնել, Արտաշիսսն ալ իրեն ժամանակակից ընելով, Քրիստոսէ վեց դար առաջ դնելով զիրենք, և փոխանակ Մակեդոնացոց՝ յԱսորեստանեայց ապստամբած դնելով զանոնք :

Մ. Հրս.

251. (յէջ 231, տող 22). Յիշատակ իրացս գտանի առ Սեբէոսի պատմչի, մա-նաւանդ թէ ի մատենին յորում և պատմութիւնն Հերակլի գրեալն ի նմանէ. քանզի այլոյ հնագունի պատմչի բանից հատուած թուի յիշատակն այն, և զուցէ Ղազարայ ֆարպեցոյ. զի սմա ընծայէ Սիմէոն Ապարանեցի ի ժԶ դարու յի-րումն վիպասանութեան Պահլաւունեաց և Մամիկոնեանից. և երկոցուն իսկ բանք թուեցուցանեն իմն զգործս հնգեցուն թագաւորացն ոչ Ազաթանգեղի ի Մարիբա-սայ առեալ, այլ մանաւանդ այլոյ ուրումն Մարաբայ Մծբնացոյ՝ փիլիսոփայի հանդիպեալ արձանին ի բերել անդ զփլած արքունի տաճարին հրամանաւ Պար-սից թագաւորին, որոյ ժամանակ ոչ յիշի, այլ թուի լինել ի վերջ կոյս Գ դարու կամ ի սկիզբն Եին, և զաղափարեալ զայն. և թողեալ առ աշակերտսն, յորոց եգիտ և էսո և խառնեաց ի հիւս պատմութեան Հայոց հեղինակ բանիցս, զոր որ-պէս ստացի՝ զնոյն ինքն Ղազար ֆարպեցի համարիմ :

Սեբէոսի առջև կցուած Հայոց պատմութիւնը քննական մեծ վէճերու առիթ

եղած է: Մարարաւ Մծորնացի (= Մծրնացի, վասն զի Մծորնացի՝ Մծուր-
նացիի սխալ ընթերցումը կը համարուի այժմ) կը համապատասխանէ Խոր. Մար
Աբաս Կատինային, որուն հետ կը զուգընթանայ, թէ և նոր և հետաքրքրական
յաւելուածներ ալ ընելով:

Յարդ կը համարուէր՝ թէ Սեբէոսի այդ յառաջաբանը փ դարու գործ պէտք
էր ըլլալ, վասն զի բաց ի Խորենացիէն կը ճանչնայ նաեւ զՍտեփանոս Տարո-
նեցի, որ անշուշտ Ասողիկն է: Սակայն Ստեփան Մալխասեան՝ Ասողիկի տեղ Ե.
դարու մէջ յիշատակուած Ստեփան Տարօնեցիին կ'ընդունի, ապացուցանելու հա-
մար Խորենացոյ հնութիւնը:

Վերայիշեալ կէտը՝ թէ Սեբէոսի և Խորենացոյ Մարարածները իրարու հետ
աղբրս ունին՝ տարակոյս չկայ: Վասն զի եթէ Խորենացոյնը՝ Մծուրնի արքու-
նական դիւանաց մէջէն հրամանաւ Վաղարշակայ կը գտնէ Հայոց Պատմութիւնը,
գորոյ Վաղարշակ « գմանս ինչ ի յարձանի հրամայէ դրոշմն » (Խոր. Բ. 21)
Սեբէոսի Ազաթանգեղոսն ալ կ'ըսէ. « Ես Ազաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ ար-
ձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ
քաջին Տրդատայ առեալ ի դիւանէ արքունի » (Սեբէոս 1):

Խորենացի տեսած կ'երեւի զԿեղծ - Սեբէոս, քանի որ կը յանձնարարէ չհաւա-
տալ Բագրատունիները Հայկէն առաջ եկած ըսողներուն: Ասոր մի որոշ նշան ալ
այն է՝ որ Կեղծ - Սեբէոս Խորենացոյ ազդեցութենէն ազատ, յաճախ կը շեղի
անկից:

Մենք կարծենք թէ Փաւստոս - Բուզանդայ մաս կը կազմէր այժմեան Կեղծ -
Սեբէոսը: Եւ այս բանս կ'ենթադրենք Բուզանդայ յառաջաբանին վրայ յեցած.
» հոս նա կ'ըսէ. « Ի քարոզութենէն Թաղէոսի առաքելոյ և նորուն յելից և ի
» մարտիրոսութենէն մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ
» հանգստեանն, և յառաքելասպան Սանատրկոյ արքային մինչեւ յակամայ հնա-
» զանդելն հաւատոցն, և ի նորուն հանգստեան արքային Տրդատայ զանցեալ իրացն
» զառաջնոցն զվարսն լաւացն, և որ զնոցուն հակառակ ընդդիմակաց, այն ունե-
» նայն ի ձեռն այրոցն գրեցան »:

Հոս թաղէի պատմութիւնը կամ Ղերուքնա կ'ակնարկուի:

« Բայց և մեք ի մերում աստ եղաք փոքր ի շատէ ի կարգի պատմութեան, ոչ
զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրաց կարգին:

Վլան զի է ինչ մեր պատմութիւն՝ որ ասայիկն է, և է ինչ՝ որ վերջին է,
իսկ որ միջին ինչ եղև՝ այն ի ձեռն այրոց գրիչ գրեցաւ:

Բայց զի մի՞ ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երեւեցի հուն մի, նշանա-
կեցաք. զոր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն
բովանդակութեան »:

Ո՛ւր է Բուզանդէն գրուած այդ պատմութիւնը որ Թաղէոսէն առաջ եղած ժա-
մանակներուն վրայ կը խօսէր, քանի որ նա « միջին » կը կոչէ ի ձեռն այրոց
գրուածը:

Այժմեան Բուզանդայ մէջ հետք մ'ալ չենք գտներ անոր: Տրդատէն կը սկսի
խօսիլ:

Ուրեթիւ բռնադատուած ենք Բուզանդայ ընծայելու Հայկական հին պատմու-
թիւն մը (և ճիշդ ասոր համար ալ Պրոկոպիոս Բուզանդացի պատմիչը հատակո-
տորներ կը բերէ Բուզանդէն հայկական պատմութիւն կոչելով զայն), որուն մէջ
Բուզանդ կը խօսէր.

1° Հայոց ծագմանէն մինչեւ Թադէոս Առաքեալ (= Է ինչ մեր պատմութիւն որ առաջին է) :

2° Իր այս գործին երկրորդ հատորը կը նկատէր զՎերուբնա և զԱգաթանգեղոս (= որ միջին ինչ եղև՝ այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ)

3° Իր գործին երրորդ հատորը կը նկատէր այժմեան Բուզանդարանը՝ զոր ձեռքերնիս ունինք : Անոր համար ալ Մրրոյոյ դպրութիւն վերնագրով կը սկսի : Այն բանասէրները՝ որ զՎերուբնա համարած են Բուզանդի Ա հտ. զԱգաթանգեղոս՝ Բ, և այժմեանը՝ Գ, ուշադրութիւն չեն դարձուցած, որ ըստ Բուզանդայ՝ իր առաջին հատորին հեղինակը՝ նոյն իսկ ինքն է, միջին մասը միայն այլոց է :

Փոխանակ Բուզանդայ ընծայելու կորսուած հին գրութիւն մը՝ կարող չե՞նք ըսել թէ այժմեան անտէր կեղծ - Սեբէոսը, որ ճիշտ նոյն ծրագիրն ունի, իրեն կը պատկանի :

Դիտուի որ կեղծ - Սեբէոսի Մարաբաս Մծուինացին քրիստոնեայ է, և հեղինակին ապրած ժամանակ կային նաեւ անոր աշակերտները, վասն զի կ'ըսէ. « Զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ գրուցաւ » կարգել » :

Կեղծ - Սեբէոսը ուրեմն ճանապարհորդած էր նաեւ ի Միջագետս. վասն զի Մար Աբասի պատմութենէն օգտուած ըլլալը ցուցնելու համար հարկ չէր սուտ մը հնարել - երեւակայական ճամբորդութիւն մը ի Միջագետս - այլ կը բաւէր ըսել թէ տեսած է անոր գիրքը :

Այս հանգամանքս նոր կուտան մ'է մեզ համար Բուզանդայ հետ կեղծ - Սեբէոսը նոյնացնելու. որովհետեւ Բուզանդի - ինչպէս արդի բանասիրութիւնը լուսոյ չափ անուրանալի ըրաւ - հայ խմբագրողն ոչ ոք է բայց եթէ կոյրիւն : Արդ գիտենք յիրաւի նոյն իսկ կորիւնէն, որ նա Միջագետք գնաց Ս. Մեսրոբայ ուրիշ աշակերտաց հետ. հոն շատ լաւ կրնար Մար Աբասի աշակերտաց հանդիպիլ, անոնց քով ասորական Հայոց Պատմութիւն մը գտնել :

Այս կէտս դեռ աւելի հաւանականութիւն կ'առնու երբ դիտենք որ յիրաւի Գ դարու մէջ ասորական մատենագրութիւնը կը ներկայացնէ մեզ Մար - Աբաս հեղինակ մը, աշակերտ Եփրեմի, որմէ կը յիշատակուին Մեկնութիւններ Աւետարանաց վրայ, Յօբի, և Սաղմոսաց, ինչ որ սրամիտ ասորիին արգելք մը պիտի չըլլար նաեւ իբրեւ Պատմագիր հանդիսանալու : Տես Rubens Duval, *Littérature Syriacque*, Paris, 1900, p. 76 : Ուրեմն կորիւն իբր աշակերտ Միջագետք գնացած ժամանակ (շուրջ 410ին) շատ լաւ կարող էր Մար Աբասի աշակերտներուն հանդիպիլ :

Եթէ աչքէ կորսնցնենք կորեան ճանապարհորդութիւնն ի Միջագետս, այլ եւս անմեկնելի կը մնայ ասորոց միջամտութիւնը հայկական պատմագրութեան ճիշտ սկզբնաւորած ժամանակ : Ինչո՞ւ, օրինակ իմն, յոյնի մը պիտի չընծայուէր կեղծ Հայոց պատմութիւն մը, ինչո՞ւ Մծբինի տեղ՝ Բիւզանդիոն կամ Աղեքսանդրիա պիտի չնշանակուէին :

Բայց երբ Ե. դարը ի նկատի կ'առնու՞ք՝ ամէն բան կը լուսաբանուի. այս ժամանակ Մծբնայ մէջ գիտական մեծ դպրոց մը կազմակերպուած էր, որուն ապագայ անդամներուն մէջ կը գտնենք Մար Աբաս Ա հայրապետ մը (536-552, հեղինակ բազմաթիւ գրուածոց, բնականաբար եկեղեցական տեսակէ (Duval, էջ 83) :

Ահա վաղարշակայ և Մծբնայ մէջ եղած աղերսի մեկնութիւնը :

Մինչև Ե. դար ոչ միայն եկեղեցւոյ, այլ և արքունեաց մէջ (ինչպէս Ղազար ալ կը վկայէ) ասորերէնը ամենամեծ ազդեցութիւն ունէր: Եւ եթէ հայ մանուկները մինչև Ասորիք կ'երթային ուսանելու համար, կարող չենք ենթադրել թէ Հայաստանի մեծ քաղաքները լի էին ասորի վարժապետներով և քարտուղարներով:

Ասորւոց այս դիրքը Հայոց նկատմամբ՝ մեզի կը մեկնէ թէ ինչպէս Ասորւոց քով կը գտնուին Դանիէլեան հայ նշանագիրները, և ոչ Հայոց քով: Հայ թագաւորներէն մին՝ հանգամանքներէն պիտի ներշնչուէր ապահովապէս՝ ասորի քարտուղարի մ'յանձնել որ իր ազգին ալ գիր շինէ: Անոնք իրենց երկիրը վերադարձած ժամանակ հետերնին կրնային տանել այսպիսի աշխատութիւններ:

Ինչ որ հայ այրուիքեցի համար ըսուեցաւ՝ կրնայ ճիշդ Հայոց պատմութեան համար ալ ըսուիլ: Երկար ժամանակ Հայաստան ապրող ասորի գիտնական մը, օրինակի համար, մանաւանդ հայ արքունեաց մէջ ապրող մը, կրնար յանձնարարութիւն ընդունիլ, կամ պարզապէս ուսումնական հետաքրքրութենէ շարժեալ, հետամուտ ըլլալ հայ ազգի պատմութեան մը, որ դար մը վերջ, Մծբնայ դիւանին մէջ, Հայու մը նայուածքին հանդիպէր:

Կ'ենթադրեմ, գրեթէ կը հաւատամ, թէ Ս. Մեսրոպայ աշակերտներ հայ այրուիքեցի հետ՝ Հայոց Պատմութիւնն ալ գտան Միջագետքի մէջ, և կորիւն եղաւ զայն թարգմանողը:

Կ. ՀրՏ.

252. (յէջ 233, տող 11). Ոմանք զայս համարին զպատմեալն ի գիրս զՅուդիթայ, զմարտ Նաբուզոդոնոսորայ ընդ Արփաքսատայ արքայի Մարաց, զպարտումն նորա ի դաշտին Ռազանայ, զըմբռնումն և յետոյ զսպանումն, զոր մարթ է ասել եզիալ առ պարսպօք Նիխուէի: Բայց այլք առ մեծաւ Նաբուզոդոնոսորիւ ասեն եղեալ զիրս, 40 և աւելի ամօք զկնի: Եւ տարակոյս մեծ է աստանօր ժամանակազրաց և մեկնաց վասն իրացս:

253. (յէջ 236, տող 9). Ոմանք աստանօր ասեն զիրս Յուդիթայ, զոր ի վերդ ծանուցար այլոց առ ֆինալտանաւ և կամ Նաբուզոդոնոսորիւ կարգել:

254. (յէջ 236, տող 21). Ընդ երկրայութեամբ համարիմ ոչ միայն զյիշատակ ծագման Անգեղ տան տոհմին, այլ և զանուանս նահապետացն, կամ լաւ եւս ասել զվերջայանք անուանցն զՄ տառ, որ ի հին երկաթագիրս շիթթի ընդ Տ տառի. և ըստ այսմ մարթ է ընթեռնուլ Բազատ, Բազարատ և Բիւրատ, ծանօթ անուանք հաւուց Բազրատունեաց տոհմին. զորմէ ասէ իսկ Խորենացի թէ ոմանք ի Հայկայ կարծեն սերեալ զնոսա, այլ յիմարութեան բանք են այդ անհաւատի մարդոց: Նոյն ինքն և զկոչումն Անգեղ ասէ ի Տորքայ սկսեալ՝ որ էր ի ժամանակս Վաղարշակայ Ա:

255. (յէջ 238, տող 26). Խորենացի (Բ. Ը.). Եւսեբիոս, Ստրաբոն, Աբիւղենոս, առեալ ի Մեգասթենեայ. զոր ի յիշատակի անդ բանին Խորեն. թարգմանօրէն Մեծագոր կոչէ և մակդիր համարի Նաբուզոդոնոսորայ:

256. (յէջ 240, տող 22). Նաբուգ. թագաւորէ. 604 Ն. Ք. 562:

Աժդահակ 596 – 560.

Կիւրոս Կոն. 599 – 530:

Տիգրան. Թգ. իբր 565 – 502.

Կրեսոս Թգ. 559 – 547:

257. (յէջ 241, տող 8). Վրլնէյ և Ար. Սասուզ. համարին ամանց ի Տէր կամ ի Թագաւոր բառից, յորմէ և ԳԵՂՐԱՆՈՍ, բռնաւոր. այլ դիպողագոյն էր այսմ ի Տիրանէ ամանցիլ քան ի Տիգրանէ:

258. (յէջ 243, տող 11). Առաջին պատմական անձն Տիգրան սա ճանաչի. իսկ առաջինն ի գիրս գրողմալ զսանին յԵրողոտեայ յիշեալ Տիգրանք երկու, մին (Է. ԿԲ) յաքեմնեան տոհմէ, միւս Պարսիկ լոկ անուանեալ և առաջնորդ 6 բիւր հետեալ կազորու. երկուքին եւս առ Քեղրսեալ, որոց և կեցեալք իսկ զաւուրս մանկու թեան իւրեանց ի յետին ամս մերոյն Տիգրանայ. իսկ զսա ինքն յանձնէ և յա նուանէ նախ առաջին յիշատակէ Քսենոփոն, և գրէ Եւրոպ. և Երողոտ:

259. (յէջ 244, տող 30). Աստիագէս որ Աժդահակն անուն է, ի Դանիէլ (ժԳ. Ի) եզեալ է վասն Կիւքսարայ որդւոյ նորա, որ այլուր ի նոյն գիրս Դարեն Մար կոչի. իսկ փոխանակ Աժդահակայ՝ Արշաւիր գրի անդ ըստ մերում Թարգմանու թեան և Ասուերոս ըստ Լատինաց: Չայս քաջ արժան է գիտել զի մի համարիցի թէ և Դանիէլ զԱժդահակայ ըստ Քսենոփոնի ասիցէ. « Եւ Թագաւոր Աստիագէս » յաւելաւ առ հարս իւր (Խաղաղութեամբ) և առ Կիւրոս պարսիկ զԹագաւորութիւն »:

260. (յէջ 247, տող 31). Յետ տեսնելու Հ. Ալիշանի գծած պատկերին մէջ՝ Տիգրան Ա. ը, այնպէս ինչպէս որ հայ և յունական աւանդութիւնը զայն կը ներկայացնէ, անցնինք նկատելու զայն այնպէս՝ ինչպէս որ է նորագոյն քննադատութեան առջեւ:

Քարտապշեան (Քննական պատմութիւն Ա, էջ 194) կը համարի թէ Խոր. ուրիշ բան ըրած չէ՝ բայց եթէ տեսնելով Հերոդոտոսի մէջ Տիգրան մը ընկեր կիւրոսի, սորա կատարած դերը Տիգրանին ընծայած է:

Իսկ յէջ 176, նոյն քննադատը կ'ըսէ. « Տիգրանայ և Աժդահակայ կոխը կ'անկարկէ ուրիշ հին առասպել մը, այն է Թրիդայի և Աժի-դահակայ առասպելն, »

« գոր թերեւս հին հայ երգիչք առած էին ի Զենտաւեստայ »:

Նայնպէս ըստ Խալաթեանցի՝ Տիգրանի առասպելը « Հերոդոտի պատմածի » ձևով շինած մի արուեստական պատմուածք է, վասն զի Տիգրանի ու Աժդահակի ու Հերոդոտի մէջ պատմուած կիւրոսի և Աժդահակի առասպելները նմանու թիւնն աչքի ընկնող է »:

Բայց աւելի իրաւունք ունէր Աբեղեան, որ Այրարատ հանգէսին մէջ (1900 Նոյեմբ. էջ 548) համակարծիք կ'ըլլար Գեղցերի (Պատմութիւն Հայոց, Վիեննա, տպ. 1887, էջ 81) Տիգրան Ա. ի պատմութեան մեծագոյն մասը վերագարձնելով Տիգրան Բ. ի, և այսպէս ազգային աւանդութիւնը հաշտեցնելով՝ օտար պատմագրութեան հետ:

Այսպէս Խոր. կ'աւանդէ թէ Տիգրան Ա. իւր Տիգրանուհի քոյրը Աժդահակայ կնութեան տուաւ, որոյ դէմ յետոյ պատերազմեցաւ:

Յիրաւի Տիգրան Բ եւս Մարաց Թագաւորին դէմ պատերազմեցաւ Եկբատանայ պարսպներուն քով և Մարաց Թագաւորին ապարանքն այրեց, որուն նա իւր դուստրը տուած էր կնութեան (Գիոն կասսիոս ԼԶ, 6. Իսիդոր Քարակացի, Գ. 6):

Գիտելու է՝ որ հոս տարբերութիւն մը կայ. Խորենացի զՏիգրանուհի քոյր արքային կ'անուանէ, օտար պատմագրութիւնը դուստր՝ որ յիրաւի փաստ ունի իրեն նոյն իսկ Տիգրամուտի անունը:

Խորենացոյ այս խօսքը, « զընդ լծով կացեալս » լծադիրս և հարկապահանջս » կացոյց », համառ տութիւն է Տիգրանայ Բ. ի աշխարհակալութեանց պատմու-

թեան: Տիգրանայ Արտաւազդ հայրը կը յաղթուի ի Պարթեւաց և արքայորդին պատանդի կ'երթայ: (Յուստինոս ԽԲ, 2, 12: Ստրաբոն ԺԱ, 14, 15: Գարձեալ Յուստինոս ԼԸ, 3):

Միհրդատ Պարթեւաց թագաւորն յանձն չառնուր զինքն արձակել և տալ «զա-»
 » թոռ ճարցն իւրոց, բայց տալով նմա թողուլ դաշամբ 70 գաւառ կամ հովիտս:
 » Հայն խոնարհեալ, բայց ոչ նուաճեալ, վկայէ յայտնապէս թէ Պարթեւք ոչ
 » երբէք նուաճեցին զՀայս » (Ստրաբոն ԺԶ, 1, 19):

Յետոյ Տիգրան Բ. կը յարձակի Պարթեւաց վրայ՝ վրէժն առնելու համար. կը գրաւէ 70 հովիտներէն կամ գաւառներէն զատ՝ նաեւ զՄիգդոնիա և զՈւռհայաստան (Ստրաբոն ԺԱ, 14, 15: Յուստինոս, Խ, 1):

Կովկասային ազգերը՝ Վիրք, Աղուանք, յետոյ Մարք, Կորդուացիք, Աքիա-
 բնք, Ասորիք, անոր կը հպատակին: (Ստրաբոն ԺԱ, 13, 2. Դիոն Կասսիոս,
 ԼԶ, 16, և այլն):

Տիգրան Ա. ի զօրաց բազմութիւնը, գանձուց ճոխութիւնը կը համապատաս-
 խանեն ճշդի Տիգրանայ Բ. ի մասին աւանդումներուն:

Տիգրան Ա. ի համար կ'ըսէ Խորենացի. «զՄարացն ի բաց բառնալով զիշխա-
 նութիւն և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեւ նուաճեալ հնազանդէր և
 զսահման մերոյ բնակութեանս ընդարձակեալ ի հինն մեր հատուցանէ յեզերս
 ծայրից բնակութեանց: Տիգրան Բ. յիրաւի երիցս տիրեց Կապադովկիոյ, Մա-
 ժաքայ, և ուրիշ 12 քաղաքաց բնակիչները փոխադրեց: Ալպպիանոս, Միհրդատ,
 1, 7: — Ստրաբոն. ԺԱ, 14, 15, ԺԲ, 2, 9: — Դիոն Կասսիոս, ԼԶ, 37: —
 Պլուտարքոս, Պոմպէոս, 28):

Տիգրան Ա. կ'անուանի «խաղաղութեան և շինութեան բերող, իւրով և մեղու
 զհասակս ամենեցուն պարարեալ»: Յիրաւի Ասորիք երբէք այնքան խաղաղութիւն
 չվայելեցին, կ'ըսէ Ալպպիանոս ասորի պատմագիրը, որքան Տիգրանայ 25ամեայ
 տիրապետութեան տակ:

Ի՞նչ պատճառաւ սակայն Տիգրան Ա. ի համար հասկցած է Խորենացի ինչ որ
 երգիչները Տիգրան Բ. ի համար կ'ըսէին: — Վասն զի, ըստ Խորենացոյ պատ-
 մական դրութեան, Տիգրան Բ. արշակունի մ'է. ի՞նչպէս նա պիտի մեկնէր ուրեմն
 Տիգրան Բ. ի հայասիրութիւնը որ, ինչպէս տեսանք, Պարթեւաց ռիւերիմ թշնա-
 մին էր: Այս հանգամանքէն ստիպուած՝ նա ձայկազն Տիգրան Ա. ի վրայ փոխա-
 դրած է երգչաց աւանդութիւնները:

Ի հարկէ, ինչպէս Քսենոփոն ալ կը վկայէ, Կիւրոսի ժամանակ կար Իշխան
 մը Հայոց՝ Տիգրան անուամբ: Բայց ոսկեզանգուր, աղբքեկ ծամերով, մեղոյ նա-
 յուածքով Տիգրանը, — գեղեցկութեան, բարութեան, ոյժի այդ զաղափարակա-
 նացումը, — ուրիշ ոչ ոք է ապահովապէս բայց եթէ Տիգրան Բ. երեք աշխարհնե-
 րու յաղթականը, «Ասիոյ հզօրագոյն թագաւորը» (ինչպէս վստահաբար կը կոչէր
 զայն Կիկերոն), մեծագոյն հայկազնը՝ որուն ծառայները մէկ մէկ թագաւոր էին:

ԻՐ. ՀՐՏ*.

* Մանգօրիքիւնք Հրատարակի ինչպէս նաեւ Յաւաջբան մատենիս գրուած են ի

Ց Ա Ն Կ

	Էջ
Յառաջաբան	5
Ա. Հայրենիք մեր սկզբնավայր մարդկութեան. դրախտն Ալէինայ	9
Բ. Յայգ. Արտադրախտիկ Նահապետք ի Հայաստան	20
Գ. Որդիք Աստուծոյ և որդիք մարդկան	33
Դ. Զրհեղեղ. Տապանն. Նոյ	40
Ե. Նոյեան ընտանիք՝ մինչեւ ի բաժանումն սերնդոցն	53
Զ. Բաժանումն ազգաց և լեզուաց. Հայաստան՝ վիճակ Յաբեթեանց մինչեւ ի Թորգոմ	66
Է. Երազումն հայ ազգի և լեզուի	79
Ը. Անուն մերոյ հայրենեաց	107
Թ. Թորգոմ — Տուն Թորգոմայ	114
Ժ. Հայկն	125
ԺԱ. Հայկազունք ցԱրամ. Արմենակ. Արամայիս. Ամասիա. Գեղամ. Հարմա.	155
ԺԲ. Արամ	172
ԺԳ. Արայն Գեղեցիկ. Շամիրամ. Արայեան Արայ (Կարդոս). Անուշաւան	185
ԺԴ. Հայկազունք կողմնակալք Ասորեստանեայց, մինչեւ ցԹագաւորութիւն Մարաց և Հայոց	199
ԺԵ. Քայրայումն ինքնակալութեան ասորեստանեայց և Թագաւորութիւն Հայ- կազանց	220

This book should be returned to
the Library on or before the last date
stamped below.

A fine is incurred by retaining it
beyond the specified time.

Please return promptly.

